

ԲԻԻԶԱՆԴԻ ԹՈՐԻԿԵԱՆ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ

ՄԱՐՄԵԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Սկիզբէն մինչեւ 1939 թուական

ՊԷՅՐՈՒԹ

1995



Վ Կ Ա Յ Ա Խ Օ Ս Ք

Վերնագիրը արդարացնող բոլոր տուեալները բովանդակող հրատարակութիւն մըն է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան պատմութիւնը համապարփակող այս պատմագիրքը:

Խորագիրը արդարացնող է, որովհետեւ այս գիրքը տքնաջան աշխատանքի, երկարաշունչ ուսումնասիրութիւններու եւ պրպրտումներու մէկ պտուղն է:

Խորագիրը արդարացնող է, որովհետեւ այս հրատարակութիւնը եօթը հատորներէ բաղկացած, Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը մինչեւ մեր օրերը ներկայացնելու միտող մեծածաւալ եւ պատմական ամբողջութիւն պարփակող գիրքերու շարք մը պիտի ըլլայ:

Վստահութեամբ կրնանք յայտարարել, որ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը բազմահատոր հրատարակութեամբ մը ներկայացնելու նման նախաձեռնութեան մը յանդգնութիւնը իր նախընթացը չունի մեր միութեան 75-ամեայ գործունէութեան ընթացքին:

Ինքնագոհութեամբ կը վկայենք, որ այս հրատարակութիւնը տասնամեակներու նուաճումներու հարազատ հայելին պիտի հանդիսանայ:

Ամենայն վստահութեամբ կրնանք հաստատել՝ որ եօթը հատորներու մէջ ծաւալած այս հրատարակութիւնը ամէն Հ.Մ.Ը.Մ.-ականի ինչու չէ՛ նաեւ ամէն հայու, տան գրադարանը ճոխացնող զարդը կրնայ դառնալ:

Բոլոր Հ.Մ.Ը.Մ.-ականներու եւ ամէն հայ անհատի կողմէ սպասուած հաստատիւր այս հատորին անխոնջ հեղինակին հասցէին Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը պահ մը իսկ չի վարանիր իր գնահատական խօսքը արձանագրելու, եւ վարձքդ կատար ըսելու:

Հ.Մ.Ը.Մ.-ի
Կեդրոնական Վարչութիւն

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հ.Մ.Ը.Մ.-ի պատմությունը գրելու գաղափարը շատ երկար ժամանակ է ի վեր զբաղեցուցած էր մեր միտքը, սակայն նկատի ունենալով գործին տարողությունը եւ աղբիւրներու համեմատաբար համեստ պաշարը, միշտ ալ զգուշացած էինք գործի ձեռնարկելէ:

Հ.Մ.Ը.Մ.-ի համագաղութային կառոյցի կազմութեան առընթեր՝ անգամ մը եւս առիթ ստեղծուեցաւ պատմութեան մասին մտածելու: Արդարեւ, մեր յաճախակի պրպտումները պատճառ դարձան հաստատելու, թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ական ամէն ձեւի հրատարակութիւն, պաշտօնաթերթ թէ արխիւային արձանագրութիւններ «Պատմութեան համար» ենթախորագրին տակ, նիւթ կը պարունակէին, հետագայ պատմաբանին թողելով անոր օգտագործումը:

Ծանօթ է, թէ մեր ասպարէզի բերմամբ մենք հեռու կը մնայինք նման ծրագրի մը իրականացումէն. այսուհանդերձ, Հ.Մ.Ը.Մ.-ի համագաղութային կառոյցի կազմութեան յաջորդող անդրանիկ Կեդրոնական Վարչութեան կազմին մեր մասնակցութիւնը, եւ յատկապէս այդ կազմին մէջ ատենադպրութեան պաշտօնին մեզի վստահուիլը, ուղղակի դրդապատճառներ եղան որպէսզի Հ.Մ.Ը.Մ.-ի պատմությունը գրելու մասին լրջօրէն մտածէինք եւ գործի ձեռնարկէինք:

Առաջին առիթի մեր ծրագիրը հրատարակեցինք Միութեան պաշտօնաթերթ՝ «ՄԱՐԶԻԿ» ամսաթերթի Դ. տարուայ բացառիկ թիւին (թիւ 1 եւ 2) մէջ տպուած մեր փոքր ակնարկով: Կը յուսայինք, որ այս ակնարկը կրնար արձագանգ մը ունենալ: Միւս կողմէ, մեր ծրագրին ծանօթ վերերան Հ.Մ. Ը.Մ.ականներ, ըլլայ ձեռնարկի կարեւորութեան գնահատանքով, ըլլայ նախապէս հրատարակուած յուշամատենաներու մէջ նկատուած սխալներու սրբագրութեան կամ պակասներու ամբողջացման յոյսով, անվերապահ քաջալերանք ցուցաբերեցին մեր ծրագրին, միաժամանակ խոստանալով կարելի աջակցութիւն:

Վերոյիշեալ պարագաներու թելադրանքով, ի վերջոյ, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան պատմությունը գրելու աշխատանքին որոշեցինք վերջնականապէս լծուիլ՝ 1980ական թուականներու կէսերուն: Առ այդ, մեր ծրագիրը յատուկ նամակներով յայտնեցինք յատկապէս այն հեղինակներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ական գրականութեան իրենց ծառայութիւնը բերած էին ամբողջական հատորներու խմբագրութեամբ թէ կարեւոր հրատարակութիւններու առիթի իրենց մասնակցութեամբ: Բոլոր անձնատրութիւններն ալ, Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ թէ այլք, ուրախութեամբ ողջունեցին մեր ծրագիրը,

բան մը՝ որ մեզ աշխատանքի մղելու յաւելեալ պատճառ դարձաւ:

Այս առթիւ, տեղից կը համարենք հո՛ւ արձանագրել անունները այն բոլոր անձնատրութիւններուն, որոնց բարոյական թէ գործնական նպաստը անգնահատելի կարեւորութիւն ունեցաւ մեր գործի յաջողութեան:

Արժ. Տէր Տիգրան Քհնյ. Խոյեան, Միացեալ Նահանգներ

Արժ. Տէր Շաւարշ Քհնյ. Մեհրապեան, Պուէնոս Այրէս — Արժանթին

Երէց Եղբ. Վազգէն Անդրէասեան, Փարիզ — Ֆրանսա

Երէց Եղբ. Կարպիս Տէր Մեսրոպեան, Միացեալ Նահանգներ

Պրն. Վաղենակ Միսքեան, Լիոն — Ֆրանսա

Երէց Եղբ. Սիմոն Թերնանեան, Թրիփոլի — Լիբանան

Եղբ. Բժիշկ Յարութիւն Գազանճեան (Յ. Գեղարդ), Փարիզ — Ֆրանսա

Եղբ. Բժիշկ Սուրէն Պայրամեան, Գահիրէ — Եգիպտոս

Եղբ. Դոկտ. Գրիգոր Շահինեան, Պէյրութ — Լիբանան

Պրն. Արտաշէս Տէր Խաչատուրեան, Պէյրութ — Լիբանան

Պրն. Տիրան Աղազարեան, Պէյրութ — Լիբանան:

Նոյնպէս, կ'ուզենք հոս արձանագրել անունները այն Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներուն, որոնք՝ իրաքանչիւրը իր Ծրջանի կամ Մասնաճիղի

բաժնի խմբագրութեան առթիւ՝ անուններու, տեղեկութիւններու, թուականներու թէ նկարներու հայթայթումով ամբողջացուցին մեր աղբիւրներու պակասները:

Եղբ. Զաւէն Սապունճեան-Սուրիա

Եղբ. Սուրէն Նազարեան-Սուրիա

Եղբ. Կարպիս Գույումճեան-Յունաստան

Եղբ. Վազգէն Տէր Ղուկասեան-Լիբանան

Եղբ. Անանիա Մահտեսեան-Կիպրոս:

Միաժամանակ, ներողամտութիւնը կը հայցենք նոյնքան յարգելի բոլոր այն անձնատրութիւններուն, որոնց անունները հոս յիշելու առիթը չունեցանք, եւ սակայն անոնց մնայուն քաջալերանքը մեր դժուարութիւնները յաղթահարելու բարոյական նեցուկ հանդիսացաւ:

Մեր վերջին՝ սակայն կարեւորագոյն երախտագիտութիւնը կ'արձանագրենք Հ.Մ.Ը.Մ.ի Պատուարժան Կեդրոնական Վարչութեան, որ ուրախութեամբ դիմաւորեց մեր նախաձեռնութեան իրականացումը, անոր՝ Միութեան բերելիք բարոյական նպաստի ամբողջական համոզումով:

Փակելէ առաջ մեր Յառաջաբանը, կ'ուզենք արձանագրել, թէ այս գործը կը նուիրենք մեր սիրելի ծնողքին՝ ԳԱՌՆԻԿ եւ ԱՐՇԱԼՈՅՍ ԹՈՐԻԿԵԱՆներուն յիշատակին: Անոնց բարոյական սկզբունքներու, ազգասիրութեան եւ ծառայասիրութեան համար նուիրումի թելադրանքները առաջնորդած են մեր քայլերը մեր կեանքի ընթացքին, մեր մանկութեան առաջին քայլերէն սկսեալ:

Բ. ԹՈՐԻԿԵԱՆ

Հատորի վերջաւորութեան ընթերցողը պիտի գտնէ գործնական թելադրանքներ ընթերցողին խորագրով մեր բացատրողականը, ուր յիշուած է հատորի մէջ օգտագործուած աղբիւրներու թուագրումի ձեւը:



ՇԱԻԱՐՇ ՔՐԻՍԵԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ Հ.Մ.Ը.Մ.-ի

Ա. ՄԱՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԹՕՆՔԷՆ ՄԻՆՉԵԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱ-Հ.Մ.Ը.Մ.-ԱԿԱՆ ՇՐՋԱՆ

- 1997 թվականի ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ
- ՔՐԻՍՏԵԱՆԻ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ՝ ԵԻՐՈՊԱ
- ՆԱԽԱ-Հ.Մ.Ը.Մ.-ԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ, ՄԱՐԶԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ
- «ՄԱՐՄՆԱՄԱՐԶ» ԱՄՍԱԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
- ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆՈՒՄՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ
- ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ՊՈԼՍՈՅ ԵՒ ԳԱԻԱՌԻ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԷՆ ՆԵՐՍ
- ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔ ԵՒ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ
- ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԵՐՈՒ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
- ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

19ԲԴ ԴԱՐՈՒ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

19րդ դարու հայ քաղաքական մտքի եւ հայ մշակոյթի զարթօնքը իր անջնջելի կրօնիքը դրաւ հետագայ տասնամեակներու՝ յատկապէս 20րդ դարու սկզբնական շրջանի ազգային նուաճումներուն վրայ:

Հայը՝ իր ստրուկի հոգեբանութիւնէն ազատագրող, զէնքի ուժով իր կամքը պարտադրող, հայ անհատականութիւնը զօրացնող եւ հայ պետականութիւն կազմակերպող նուաճումներուն փառապսակը պիտի հանդիսանար՝ 1918 Մայիս 28-ով յայտարարուած՝ Հայաստան Աշխարհի անկախացումը:

Այս զարթօնքը բնական էր, նաեւ, որ իր ազդեցութիւնը ունենար հայ ֆիզիքական զարգացման ու հայ դէմքերի կազմաւորման վրայ, յատկապէս ծառայելու համար ազգային մեր մարտնչումներուն:

Եւրոպան ու Նոր Աշխարհը՝ միեւնոյն ժամանակաշրջանին, կը բոլորէին մարզանքի կարեւորութիւնը շեշտող նոր մեթոտներու ստեղծման եւ մարզախաղերու զարգացումը կազմաւորող արագընթաց յառաջդիմութիւններու փուլեր: Անոնց պսակումը պիտի հանդիսանար Միջազգային Ողիմպիական Խաղերու նորագոյն շրջանի ծնունդը՝ 1896ին, հիմնադիր Պարոն Բիէռ Տը Բուպէրթէնի մտայղացումով:

Սակայն, հայ իրականութեան մէջ ֆիզիքական դաստիարակութեան կարեւորութիւնը շեշտուած էր այս թուականներէն շատ առաջ: Այսպէս, 18րդ դարու կէսերէն սկսեալ, հայ կրթական ծրագիրներու մասին կը հանդիպինք կարգ մը արձանագրութիւններու: 1746ին, Մխիթարեան առաջին վարժարանը՝ «Դպրատուն»ը կը բացուի Թրանսիլվանիոյ (Լեհաստան) Պաշպալով հայաբնակ քաղաքին մէջ: Հոն, ուսումնական ծրագրին մէջ, թատրոնի կող-

քին, «Առանձնական գործք եւ խաղք ըստ որոշեալ ժամու տեղի կ'ունենային»:

1840ին, Պոլսոյ մէջ հիմնուեցաւ Արամեան Կրթական Ընկերութիւնը: Անոր առաջին հրատարակութեան՝ «Նկարագիր Ուսմանց» (հեղինակ՝ Հ.Մ. Գարտաշեանց-Վիեննա, 1845) յառաջաբանին մէջ կը կարդանք. «Բազում դպրոցք հրահանգ գտանին եւ իցէ թէ ես քան զիս յաւելցուն, միայն թէ ի դիտաւորութիւն անդր դպրոցաց հասանիցի որ այն ինքն է ի ձեռն յօրինման անդամով յաճումն ողջոյն մարմնոյ ազգի նպաստ լինել»:

Պոլսոյ Ուսումնական Խորհուրդը, հիմնուած՝ 1853ին, իր զբաղումներուն նիւթ դարձուց ֆիզիքական դաստիարակութիւնը հայ վարժարաններէն ներս: Պոլիսը մարզադաշտերով չէր օժտուած եւ մարմնամարզի մասնագէտ ուսուցիչներ չունէր: Իր՝ 1886-87 տարեշրջանի տեղեկագրին մէջ Ուսումնական Խորհուրդը կը գրէ. «Ցաւ է խորհրդոյս որ բոլոր ի ճգանց հակառակ՝ անկարող եղաւ աշակերտաց մարմնամարզական պիտոյք հոգալ առ ի չգոյէ մարմնամարզի դասատուի մը: Ուստի բաւական համարեց հանգրստեան ժամերուն մէջ զանազան խաղերով զբաղեցնել զանոնք»:

1886ին, «Արեւելեան Մամուլ»ը կը գրէր. «Մարզն ու շարժելու միջավայրն անհրաժեշտ են կրթարանի մ'որ մատաղ սերունդը կ'հրահանգի, որ ֆիզիքական առողջապահութիւնը հիմնական մի պայման է իմացական զարգացման»:

1899-ի «Բիւրակն» ի մէջ կը կարդանք. «Դաստիարակութեան այդ գեղեցիկ գործը կարելի պիտի ըլլայ ձեռք բերել հետեւեալ երեք աշխատութիւններով.

1. Ֆիզիքական կրթութիւն
2. Իմացական կրթութիւն եւ
3. Բարոյական կրթութիւն:... մեր ուսուցիչները մտքերնուն չեն անցնէր բնաւ տղոց ֆիզիքական կրթութիւնը: Անցնէին իսկ, սիրտ ունեցա՞ծ են արդեօք խղճմտելու այս մասին, անկեղծ

միջոցներով հասնելու նպատակի մը: Ֆիզիքական կրթությունը՝ խորթ, անտեղի ու օտարոտի ստիպողականությամբ մը, հակակրեւի պայմանադրությամբ մը համեմատ դրուած է մեր նախակրթութեան ծրագրին մէջ»:

Վերոյիշեալ արձագանգներուն զուգընթաց, կային նաեւ զանազան մեկուսի շրջաններու մէջ, ուսուցչի մը կամ աշակերտներու նախաձեռնութեամբ կազմակերպուած շարժումներ, որոնք, երբեմն գաղտնի, երբեմն հրապարակաւ, մարտա-մարզական իրենց գործունէութեամբ՝ հայկական առաջին ապստամբութիւններու նախաքայլերը կը կազմէին, օրինակ՝ «Չարքաշական Ընկերութիւն»ը, հիմնուած՝ 1870 ին, Սասգիւղի Ներսէսեան Վարժարանին մէջ — [ԺԱ. 43], ինչպէս նաեւ մարզանքի կարեւորութիւնը նուիրագործող նախաձեռնութեանց նմուշներ կը կազմէին, օրինակ՝ Պաղտատի Սբ. Թարգմանչաց Վարժարանին մէջ, 1876ին, տնօրէն Միհրան Սվաճեանի գործունէութիւնը:

ՔՐԻՍՏԵԱՆԻ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄԸ՝ ԵՒՐՈՊԱ

Հինէն եկող այս մտահոգութիւններուն դիմաց՝ Պոլսահայ կեանքի յառաջադէմ ու կազմակերպուած երեւոյթները խոստմնալից հորիզոններ կը բանային նոր սերունդի հայրենանուէր դաստիարակներուն համար: Այս դաստիարակները, եւրոպական համալսարաններէ վկայուած, կը վերադառնային Պոլիս, նուիրուելու հայ երիտասարդութեան զարգացման:

Այս սերունդի ներկայացուցիչներ հանդիսացան.

Յովհաննէս Հինդլեան. Մանօթ դաստիարակ, հիմնադիր եւ տնօրէն՝ Նոր Դպրոցի: Առաջին քաջալերողներէն է եղած մարզական եւ սկաուտական շարժումներու տարածման հայ կրթական հաստատութիւններէ

ներս: Իր ճիգերով, մարզանքը, որպէս պարտաւորիչ նիւթ, կը հաստատուի Պոլսոյ վարժարաններէն ներս՝ Ազգային Իշխանութեան որոշումով: Իր յօդուածներով եւ դասախօսութիւններով սատարած է մարզանքի ծանօթացման եւ սկաուտութեան ժողովրդականացման:

Գրիգոր Յակոբեան. Թղթակցութեամբ հետեւած է Ֆրանսացի Փրոֆ. Տըպոնէի դասընթացներուն, լայն ծանօթութիւն ամբարելով այս մարզին մէջ: Իր ճիգերով կազմուեցան Պոլսոյ առաջին Ֆութպոլի եւ սկաուտական խումբերը:

Շաւարշ Քրիսեան. Աշակերտական շրջանէն յատուկ ձիրքերով օժտուած մարզիկ: Քաջալերուած իր շրջանակէն, 1906ին, կը մեկնի Փարիզ, ապա՝ Անգլիա, ուր կը մասնագիտանայ որպէս մարզանքի ուսուցիչ: 1909ին, կը վերադառնայ Պոլիս եւ կը պաշտօնավարէ հայ վարժարաններէ ներս՝ միաժամանակ նախաձեռնելով «ՄԱՐՄՆԱ-ՄԱՐՁ» ամսաթերթի հրատարակութեան: Կը կազմակերպէ Հայկական Առաջին Ողիմպիական Սաղերը եւ հաւաքոյթներով կը փորձէ մարզական մէկ եւ ընդհանուր միութեան դրօշի տակ միացնել բոլոր փոքր աղումներն ու մարզական խումբերը:

Վահան Զերագ. Ականաւոր ազգային գործիչ՝ Մինաս Զերագի եղբորորդին, շրջանաւարտ եւրոպական վարժարաններէ: Կատարեալ մարզիկ, անխոնջ հայրենասէր եւ մարզական շարժումի նուիրեալ ջատագով:

Գրիգոր Մերնանօֆ. Մասնագէտ մարզիչ, մարզական եւ սկաուտական խումբերու հիմնադիր եւ նուիրեալ գործիչ:

Եզնիկ Քաջունի. Աշխոյժ մարզասէր, Տորք աղումբի խանդավառ անդամներէն, եւ Շաւարշ Քրիսեանի մտերիմ գործակից:

Ասոնց կարգին՝ նաեւ բազմաթիւ ուրիշներ, որոնց մասին պիտի հանդիպինք

հետագայ էջերուն մէջ՝ իրենց յատուկ գործունէութեանց գլուխներուն տակ:

ՆԱԽԱ-Հ.Մ.Ը.Մ.-ԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ,
ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Մարզական կազմակերպուած նախաձեռնութիւններու շարքին, դարասկիզբէն մինչեւ Համաշխարհային Ա. Ընդհանուր Պատերազմի ծագումը, կարելի է արձանագրել հետեւեալ մարզական ակումբներու կամ կրթական հաստատութիւններու գոյութիւնը, որոնք, 1908ի Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ետք աւելի ազատօրէն գործելու պատեհութիւններ ունեցան, դժբախտաբար, կարճ ժամանակի մը համար: Ոմանք իրենց գոյութիւնը յաջողեցան պահել, պարբերական ելոյթներով, մինչեւ ընդհանուր պատերազմի աւարտը եւ հող պատրաստեցին Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան — [ԺԱ.46]:

Կը յիշենք միայն կարեւորագոյնները եւ ամենայատկանշական բնոյթ ներկայացնողները:

Ա. Պոլիս եւ շրջակայք

ՊԱԼԹԱ — ԼԻՄԱՆ (Վոսփոր) . Կազմուած՝ 1905էն սկսեալ, Ռոպերթ Գոլէճի աշակերտներուն, Պոյաճի Գիւղի եւ Ռումելի Հիսարի երիտասարդութեան մասնակցութեամբ, որոնց շարքին՝ Շաւարշ Քրիսեան, Գրիգոր Յակոբեան, Վարազ Փողարեան, Վարդգէս Աղաբեկեան, Լեւոն Յակոբեան եւ ուրիշներ: Կիրարկած է ֆութպոլ եւ Պոլսոյ ֆութպոլի մրցաշարքերուն Բ. ասոյցեանութեան է տիրացած:

ՍԿԻՒՏԱՐ. Կազմուած՝ 1906ին, Ռոպերթ Գոլէճի, Պարտիզակի Ամերիկեան Վարժարանի եւ Պէրպէրեան Վարժարանի աշակերտներու մասնակցութեամբ: Յիշա-

տակութեան արժանի մարզիկներն են՝ Էքսերճեան եւ Գոնտրաճեան: Ֆութպոլի այս խումբը, հակառակ իրեն յատուկ մարզադաշտ մը չունենալուն, յարատեւօրէն գործած է եւ օտար խումբերու դէմ մրցելով՝ լաւագոյն արդիւնքներ արձանագրած:

ՍԱՆԹՐԱԼ (Ղալաթիա). Պոլսոյ երիցագոյն ֆութպոլի խումբերէն մին՝ կազմուած Կեդրոնական Վարժարանի աշակերտներէն՝ Վահան Զերազի ճիգերով: Իր անդամներէն կը յիշուին՝ Եղիշէ Քաջունի, Հայկ Սեմէրճեան, Կարապետ Գազանճեան (Գանտիտ), Կոպեռնիկ եւ Արտաշէս Սեֆէրեաններ:

ՏՈՐՔ (Գում Գարու). 1908ին, Կեդրոնական Վարժարանի սաներուն կողմէ կազմուած ակումբ մը, նախաձեռնութեամբ՝ Վ.Զերազի, Եզնիկ եւ Եղիշէ Քաջունիներու, Վարազ Փողարեանի, Գաբրիէլ Մաճառեանի եւ այլոց: Նշանաւոր մարզիկներէն եղած են՝ Հայկ Ծօլօլեան, Լեւոն Յակոբեան, Տատ եւ Միջի Տատեաններ, Մկրտիչ Մալումեան, Հայկազ Աբէլեան, Զայրմայր Դերձակեան եւ ուրիշներ: Այս ակումբը, ֆութպոլի կողքին, կիրարկած է նաեւ՝ լող, ակումբի մը եւ արշաւանք: Նկատելի ուժգնութեամբ անոր անդամները հաւատարմօրէն փարած են աշխատանքի՝ լաւագոյն արդիւնքներ արձանագրելով միջակումբային կամ միջազգային մրցումներու ընթացքին: Ակումբը, որուն գործունէութիւնը կ'երկարի մինչեւ Առաջին Ընդհ. Պատերազմի նախօրեակը, ունեցած է նաեւ դաստիարակչական գործունէութիւն՝ դասախօսական շարքերու կազմակերպութեամբ:

ԱՐԱՔՍ (Բերա). Պոլսոյ նախապատերազմեան առաջին ակումբներէն մին, կազմուած՝ 1908ին: Ունեցած է յատուկ մարզադաշտ, եւ որպէս զօրաւոր խումբ, յաջողած է փայլուն արդիւնքներով ֆութպոլի մրցումներ ունենալ օտար խումբերու

դէմ: 1911ին, «Ռուսելի Լիկ»ի մրցաշարքին ախոյեանութեան տիրացաւ: ԱՐԱՔՍին մասնակցած են՝ այլոց շարքին՝ Օննիկ Ֆրենկեան, Գարեգին Դարբինեան, Հայկ Ճօլօլեան, Աստիկ Աստուրեան, Լեւոն Նաուլեան, Զայրմայր Դերձակեան, Վաղինակ եւ Արմենակ Սաչիկեան: ԱՐԱՔՍը կանոնաւորաբար մասնակցած է նաեւ Հայկական Ողիմպիականներու տարեկան ելոյթներուն: Իր մարզիկներէն կարեւոր արդիւնքներ արձանագրած են՝ Վաղարշակ Վարժապետեան (հեծելանիւ), Պօղոս Նասիպեան (միջակ վազքեր), Արմենակ Սաչիկեան (միջակ վազք): 1915էն ետք, ԱՐԱՔՍին միացան ՇԻՇԼԻ երիտասարդ մարզիկներ՝ աւելի զօրացնելով Ֆուլթայոլի եւ աթլետիկ մի կազմերը:

ԱՐՏԱԻԱԶԴ (Գուրուչեշմէ). Վահրամ Փափագեանի եւ Յակոբ Քրիսեանի նախաձեռնութեամբ՝ 1911ին կը հիմնուի ԱՐՏԱԻԱԶԴ ահումբը, որ հետագային իր մասնաճիւղը կ'ունենայ նաեւ Եէնի Գաբուլի մէջ: Նոյն տարին, իր մարզիկները առաջնութեան մրցանակներ կը շահին Հայկական Ողիմպիական մրցումներուն մէջ: Իր անդամներէն՝ Վահրամ Փափագեան Թուրքիան կը ներկայացնէ 1912ի Սթոքհոլմի միջազգային Ողիմպիականին: Աթլետիկ մի կողմէն կիրարկած է Ֆուլթայոլ եւ լող:

ԲՐՕԹԻ (Գնալը-Հայ Կղզի). Վահան Զերազի կողմէ կազմակերպուած այս Ֆուլթայոլի խումբը հաւատաւոր եւ յաջողակ Ֆուլթայոլիստներ տուած է, որոնց կարգին՝ Տիգրան Սոյեան, Զ. Մաճառեան, Լ. Պաքրճեան, Յովհաննէս Գորեան, Ե. Սաչատուրեան: Կղզիի վրայ, յատկապէս ամառնային շրջանին, լողն ու արշաւանքները մաս կազմած են այս խումբի գրաւումներուն:

ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ (Սկիւտար). Գառլօ Շահինեանի կողմէ հիմնուած եւ գլխաւորաբար Պէրպէրեան

Վարժարանի աշակերտութեան մասնակցութեամբ կազմուած ահումբ մը: Ունէր սեփական դաշտ, ուր Ֆուլթայոլի կողմէն կիրարկած է նաեւ թենիս եւ աթլետիկ: Հայկական Ողիմպիականներուն մասնակցելով ապահոված է պատուաբեր արդիւնքներ: ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ մաս կազմած են՝ Ներսէս Աստուածատուրեան, Մարտիկ Շիշմանեան, Հայկազուն Կոթողեան, Հրանտ Պարսամեան եւ ուրիշներ: 1915ին, պետական հրամանագրով ահումբը փակուեցաւ:

ՅԱՌԱԶԴԻՄԱԿԱՆ (Սկիւտար). Մշակութային ծրագրով հիմնուած այս միութիւնը, 1912էն սկսեալ կիրարկեց Ֆուլթայոլ, թենիս, պասքեթբոլ, աթլետիկ, որսորդութիւն եւ արշաւանք: Իրերայաջորդ վարչութեանց մաս կազմած են՝ Հայկ Ճիգմէճեան, Մկր Մկրեան, Արամ Նիկողոսեան, Գառլօ Շահինեան, Կարօ Ուշագլեան, Հայկ Յովակիմեան եւ Զարեհ Մեծատուրեան:

ՄԱՐԶԱՍԻՐԱՅ (Սկիւտար). Կրկին՝ Պէրպէրեանի սաներէն կազմուած խմբակցութիւն մը, նախաձեռնութեամբ՝ Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեանի եւ Արամ Նիկողոսեանի: Կիրարկած է Ֆուլթայոլ, պասքեթբոլ եւ աթլետիկ: Այս խումբը իր գոյութիւնը պահեց 1922էն ետք ալ:

ՏԻՏԱՆ (Մագրիգիւղ). Հիմնուած է 1909ին, Գրիգոր Մերճանօֆի կողմէ: Գործած է մինչեւ 1915: Մշակած է մարմնամարզ եւ մասնակցած է Հայկական Ողիմպիական խաղերուն:

ՎԱՀԱԳՆ (Սամաթիա). Հիմնուած է 1909ին, եւ մինչեւ 1915՝ կիրարկած է շուէտական մարզանք եւ Ֆուլթայոլ: Գլխաւոր քաջալերողն է Եղած Գրիգոր Մերճանօֆ: Մասնակցած է Հայկական Ողիմպիական խաղերուն:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱՐԱՆ (Սկիւտար). Հիմնուած՝ 1912ին, Մկր Մկրեանի կողմէ: Գործած է Գրիգոր Յակոբեանի

օժանդակութեամբ: Մշակած է մարմնամարզ, ավելեթիզմ եւ կուփամարտ:

ՄԱՍԻՍ (Գատրգիւղ). Հիմնուած՝ 1908ին, կիրարկած է ավելեթիզմ եւ ֆուլթպոլ՝ 1911ին տիրանալով «Ռուսելի Լիկ»ի մրցաշարքի ակոյեանութեան: Վարչութեանց մաս կազմած են՝ Թերճիմանեան, Տամլամայեան, Թիւթիւնճեան, Նախնիքեան, Ս. Գալենտէր:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Բերա). Շուէտական, գործիական մարզանքներու եւ ըմբշամարտի մէջ մասնագիտացած ակումբ մը, հիմնուած՝ 1910ին: Գլխաւոր մարզիչն էր Շաւարշ Քրիսեան: Պատասխանատուներ՝ Ալեքսանդր Խանճեան, Յ. Սավայեան եւ ուրիշներ: Լաւագոյն մարզիկներէն՝ Լեւոն Յակոբեան, Հայկ Ծօլօլեան, Հայկ եւ Արամ Մարտիկեան, Կարդոս Յարութիւնեան եւ Ըմբիշ Երուանդ:

Վերոյիշեալ՝ արական ակումբներուն եւ խումբերուն կողքին, Պոլսոյ մէջ կազմուեցան նաեւ իգական սեռի յատուկ ակումբներ: Յիշենք՝ Ժամանակագրական կարգով:

ԷՍԱՅԵԱՆ ՍԱՆՈՒՅ ՄԻՈՒԹԻՒՆ. Աղջկանց յատուկ ակումբներու անդրանիկը, հիմնուած՝ 1911ին, Շաւարշ Քրիսեանի ճիգերով՝ որպէս մշակութային եւ բարենպատակ միութեան մէկ ճիւղը: Մասնակցողներէն՝ Ազնիւ Կարապետեան, Ազնիւ Մերտինեան, Եւկիմէ Հաճեան, Զապէլ Համբիկեան եւ Կատարինէ Քիւրթներեան:

ԻԺԻ (ԱՌՈՂՁՈՒԹԻՒՆ). Հիմնուած՝ 1912ին՝ մարզասէր կարգ մը օրիորդներու մասնակցութեամբ, եւ իգական սեռի յատուկ մարզանքներու կիրարկման նպատակով:

ԵՌԱՆԴ. Նիկողոսեան Վարժարանի սանուհիներէն կազմուած միութիւն մը, հիմնուած՝ 1913ին: Մարզանքի ուսուցիչն էր Շաւարշ Քրիսեան

Բ. Գաւառ

Պոլսէն դուրս՝ Գաւառի մէջ եւս, հետըզհետէ, մարզական ակումբներ կազմուեցան — [ԺԱ.61]: Անոնց կը հանդիպինք յատկապէս այն կեդրոններուն մէջ, ուր Հ.Յ.Դ. կուսակցութիւնը կը գործէր, կամ նման նախաձեռնութիւններ կը քաջալերէր: Յիշենք կարեւորագոյնները՝ հպանցիկ տեղեկութիւններ տալով անոնց մասին:

ԱԹԼԱՍ (Իզմիթ). Հիմնուած՝ 1912ին, Հ.Յ.Դ. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ: Կիրարկած է ֆուլթպոլ, նշանառութիւն, սուսերամարտ, կուփամարտ եւ մարմնամարզ:

ԱՐԱՄԱՋԻ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Ատափագար). Տեղւոյն Հ.Յ.Դ.ի քաջալերանքով կազմուած ակումբ մը, որ յաջող մարզիկներու հոյլով մը Հայկական Գ. եւ Դ. Ողիմպիականներուն փայլուն արդիւնքներ արձանագրեց: Մարզիկներէն թըւենք՝ Սարգիս Թարիքեան, Բիւզանդ Փափագեան, Ստեփան Միսքճեան, Յովհաննէս Մուրատեան, Յակոբ Թերեան եւ Սարգիս Էրզեան:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Տիվրիկ). Կազմակերպուած՝ 1912ի սկիզբը՝ Հ.Յ.Դ.ի կողմէ, իր կեդրոնատեղիին մէջ: Մշակած է մարմնամարզ, ֆուլթպոլ եւ ավելեթիզմ:

ԱՐԾԻԻ (Սամսոն). Վեզիր Քէօբրիւի Հ.Յ.Դ. ակումբին մէջ կազմուած մարզական միութիւն մը, հիմնուած՝ 1913ին:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Կարին). Հիմնուած՝ 1912ին, մարմնի առողջութեան եւ ուժի ապահովութեամբ ազգային գոյութիւնը հաստատելու առաջադրանքով:

ՊԱՐԹԵԻ (Սերաստիա). Հիմնուած՝ 1911ին, մշակած է մարմնամարզ, կընփամարտ, վազքեր եւ ժիմնասթիք: Հիմնադիրներէն՝ Արմենակ Տամանեան:

ՍԻՍՈՒԱՆ (Տէօրթ Եոլ). Ֆոլթպոլի խումբերու կազմութեան եւ գործունէութեան մասնագիտացած ակումբ մը — [ԺԱ. 66]:

ՇԱԽԱՐՇԱՆ ԱԿՈՒՄԲ (Մարգուան). Անաթոլիա Գոլէճի աշակերտութեան կողմէ կազմուած այս ակումբը, 1908էն սկսեալ, իր մշակութային ճիւղին վրայ կ'աւելցնէ մարզական ճիւղը: Կը մշակէր ֆոլթպոլ եւ պէյզպոլ: Ընդհանուր պատերազմէն ետք, ՇԱԽԱՐՇԱՆը, որպէս ամերիկեան գոլէճի նախաձեռնութիւն, իր գործունէութեան վերսկսաւ եւ 1919-ի աշնան ի'սկ ազգային վերականգնումի հպարտառիթ ելոյթներ ունեցաւ — [Գ. 89]:

ՀԱՅ ՈՐՍՈՐԴԱՅ ԱԿՈՒՄԲ (ԻՉՄԻՐ). Կազմուած՝ 1910ին՝ Իզմիրի մէջ գործող չորս հայ մարզական խումբերու միացումով (Քնար, Վասպուրական, Վարդանեան եւ Սահակեան): Կազմակերպուած եւ ուրոյն ծրագիր-կանոնագրով առաջնորդը ընող միութիւն մը, որ, շրջան մը, 1000 անդամ կը հաշուէր իր շարքերուն մէջ: Մասնագիտական մակարդակի վրայ կիրարկած է ֆոլթպոլ, աթլետիզմ եւ նշանառութիւն:

Գ. Արտասահման

Արտասահմանի հայ գաղութներու մէջ եւս մարզական շարժումը տեղ գտած է ամէն անգամ որ բաւարար թիւով երիտասարդութիւն համախմբելու կարելիութիւնը ստեղծուած է: Այս ձեւով կազմուած են հետեւեալները:

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՃԱՌ (Ուեսթհայպըն). Հիմնուած՝ 1899ին: Ունեցած է բեղուն գործունէութիւն՝ նպաստելով հայերու ծանօթացման, ամերիկեան շրջանակներէ ներս: Մասնակցած է տեղական հանդիսութեանց՝ 300 տողանցողներով:

ՎԱՀԱԳՆ (Ֆիլիպէ-Պուկարիա). Ռոսսիոյ մ Զօրեանի հիմնած վարժարանի աշա-

կերտներէն՝ 1904ին կը կազմուի պուկարահայ առաջին մարզական միութիւնը: ՎԱՀԱԳՆի մարզիչն էր Գրիգոր Մերճանօֆ, որուն կը գործակցէին՝ Աշոտ Պատմաճեան, Ամբակում Դաւիթեան, Հրանտ Տէմիրգափլանեան, Յակոբ Շարապճեան, Յարութիւն Շահպազեան եւ Գրիգոր Գազազեան:

ԱՐԱՐԱՏ (Ռուսչուք-Պուկարիա). Հիմնուած է 1906ին, ծրագիր ունենալով մարզանքի կիրարկումը՝ իր ամենատարածուն միջոցներով:

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (Ուստր, Մ. Նահանգներ). 1911ին հիմնուած այս խումբը իր շուրջ հաւաքած է նոր կազմուող գաղութի երիտասարդութիւնը:

ԿԱՄՔ (Աղեքսանդրիա-Եգիպտոս). 1912ին, Շաւարշ Քրիսեանի քաջալերանքով եւ Պողոսեան Վարժարանի ուսուցիչ՝ Ստեփան Խանճեանի նախաձեռնութեամբ հիմնուած ակումբ մը, որ շուտով զարգացաւ եւ իր աթլետներու միջոցաւ խօսիլ տուաւ իր մասին:

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Ֆաւր-Մ. Նահանգներ). Հիմնուած՝ 1910ին:

ՏՈՐՔ (Գահիրէ-Եգիպտոս). Հիմնուած՝ 1912ին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՎԱՐԺԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Խարթում-Սուտան). Հիմնուած՝ 1913ին: Ակումբի անդամները, պետական քաջալերութեամբ, մասնագիտացած են զինավարժութեան մէջ — [Թ. 219]:

ԱՐԱՐԱՏ (Գահիրէ-Եգիպտոս). Հիմնուած՝ 1914ին, Աղեքսանդրիոյ ԿԱՄՔի նմանողութեամբ եւ մասամբ նոյն նախաձեռնողներու քաջալերանքով:

ԱՐԾԻԻ (Վառնա-Պուկարիա):

ԱՐԱՐԱՏ (Հալէպ-Սուրիա):

ՈՒՍՈՒՄ (Հալէպ-Սուրիա):

ԴԱՅԼԱՅԼԻԿ-ԱՐՇԱԼՈՅՍ (Բլովտիվ-Պուկարիա):

ՄԱՐԶԱՍԷՐ (Գահիրէ-Եգիպտոս):

Զանց կ'առնենք մանրամասն նկարագրութեամբ ներկայացնել Պոլսոյ եւ Գաւառի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնէն առաջ գործող բոլոր ակումբներու եւ խումբերու մասին տեղեկութիւններ: Սակայն, ցոյց տալու համար անոնց տարածուն բայց կեդրոնացումի կարօտող գոյութիւնը, կ'արձանագրենք անոնց ցանկը՝ թուելով իրենց մշակած մարզական ճիւղերը:

Ա. Պոլիս

ԱԴԱՄԱՆԴԱԳՈՐԾՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (Բերա-Ֆութպոլ)

ԱՀԱՐՈՆԵԱՆ (Պէշիկթաշ-Ֆութպոլ)

ԱՆԴՐԱՆԻԿ (Սկիւտար-Ֆութպոլ եւ ասթլէթիկ)

ԱՐԾԻԻ (Մագրիգիւղ)

ԱՐԾԻԻ (Ենի Գաբու-Ֆութպոլ)

ԱՐՏԱԻԱԶԴ (Ենի Գաբու-Ֆութպոլ)

ԳՈՒՄ ԳԱԲՈՒ (Ֆութպոլ)

ԷՍԱՅԵԱՆ (Բերա-Ֆութպոլ)

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ (Մագրիգիւղ)

ԺՈՂՈՎՈՒՐԴ (Սամաթիա)

ԿԱՅԾԱԿ (Սկիւտար-Ֆութպոլ)

ԿԻԼԻԿԻԱ (Գում Գաբու-Ֆութպոլ)

ՀԱՅ ԱԿՈՒՄԲ (Գատը Գիւղ)

ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ՄԻՈՒԹԻՒՆ (Շիշլի)

ՄԱԳՐԻ ՔԵՕՅ (Մագրիգիւղ-Ֆութպոլ)

ՄԽԻԹԱՐԵԱՆ (Գատը Գիւղ-Ֆութպոլ եւ մարմնամարզ)

ՄԱՍԼԱՔ (Շիշլի)

ՇԱՆԹ (Օրթագիւղ-Ֆութպոլ)

ՇԱՐԺՈՒՄ (Ենի Գաբու-Մարմնամարզ)

ՈՐԲԱՆՈՅ (Գում Գաբու-Ֆութպոլ)

ՍԱՆԹՐԱԼ (Ղալաթիա-Ֆութպոլ)

ՐԱՅՅԻ (Սկիւտար-մարմնամարզ եւ ֆութպոլ)

ՍԱՀԱԿԵԱՆ (Սամաթիա-Ֆութպոլ)

ՍԱՍՈՒՆ (Մագրիգիւղ-Ֆութպոլ)

ՍԱՍՈՒՆ (Պալաթ - ֆութպոլ)

ՎԱՐԱԶԴԱՏ (Սամաթիա)

ՏՈՐՔ (Պէշիկթաշ-Ֆութպոլ)

ՏՈՐՔ (Սկիւտար-Ֆութպոլ)

ՖՐԱԹԵՐՆԷԼ (Մագրիգիւղ-Ֆութպոլ)

Բ. Գաւառ

ԱՐԱՐԱՏ (Մանիսա)

ԱՐԾԻԻ (Պարտիզակ - ֆութպոլ եւ մարմնամարզ)

ԱՐԾԻԻ (Տրապիզոն)

ԱՐԾԻԻ (Վեգիւր Քէօբրիւ-Սամսոն-ֆութպոլ եւ ասթլէթիկ)

ԳԱՅԼ (Զենկիլէր)

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ (Վան)

ՎԻՇԱՊ (Օվաճըք-Ֆութպոլ)

ԺԱՅՈՒ (Երզնկա)

ՏԱՐՍՈՆ ԳՈԼԷՅՅ (Տարսոն)

ԽԱՆԴԱՎԱՌ (Պարտիզակ)

ՏԱՐՕՆ (Պարտիզակ)

ԿԵՍԱՐԻԱ (Կեսարիա)

ԶԱԻԱՐԵԱՆ (Կովտուն-Սեբաստիա-չուէտական մարզանք)

ՀԱՅ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (Երզնկա)

ՀԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ՄԱՐՄՆԱ-ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Այնթապ-Ֆութպոլ, ասթլէթիկ եւ մարմնամարզ)

ՄԱՍԵԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (Գոնիա-Ֆութպոլ)

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Ուրֆա-Ֆութպոլ)

ՄԻԱՅԵԱԼ ԱԿՈՒՄԲ (Հաճըն)

ՇԱՆԹ (Իզմիթ)

ԿԱՅԾԱԿ (Սամսոն)

ԱՐԱՔՍ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ (Իզմիթ)

ՎԱՐԴԱՆԵԱՆ (Իզմիւր)

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (Մերսին-Ֆութպոլ եւ մարմնամարզ)

ՎԱՐԱԶԴԱՏԵԱՆ (Սերաստիա-Ֆուլպուլ)

Տակաւին կարելի է յիշել արտասահմանի մէջ օրէ-օր բազմացող մարզական խումբերու կամ ակումբներու կազմութեանց ծրագիրներ, մեծ կամ փոքր յաջողութիւններով, ինչպիսին են՝ Օրտուի Ազգային Վարժարանի, Հապեշիստանի Հարար քաղաքի, Սոմալիի Ճիպուլի քաղաքի հայ երիտասարդներու սկսած շարժումները՝ Պոլսէն մեկնած մարզասէրներու նախաձեռնութեամբ — [Թ.215]:

Որպէս նախա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզական գործունէութիւն, հարկ է յիշել Պոլսոյ եւ Գաւառի մէջ գործող կրթական օտար հաստատութիւններու բերած օժանդակութիւնը ազգային մարզական շարժումին: Մասնագէտ ուսուցիչներու կամ մարմնակրթանքի կարեւորութիւնը գնահատող տնօրէնութեանց հետաքրքրութիւնները դրական արդիւնքներ տուին, ֆիզիքական դաստիարակութեան առաւելութիւնները ծանօթացընելով պատանի աշակերտութեան: Աշակերտական խումբերու կազմութիւնը, տարեկան մարզահանդէսներու կազմակերպումը, մրցումներու ճամբով ստեղծուող խանդավառ մթնոլորտը, դասախօսութեանց միջոցով փոխանցուող գիտութիւնը եւ այս կարգի նորագոյն մեթոտներու կիրարկումը, ապագայ երիտասարդութեան միտքն ու հոգին պատրաստեցին հետագայի յաջողագոյն արդիւնքներուն:

Այս գծով, առաջին հերթին, պէտք է յիշել ամերիկեան եւ եւրոպական գուէճներու շարքը, որոնք Պոլսոյ եւ Գաւառի տարածքին գործեցին տասնամեակներ շարունակ:

ՌՈՊԵՐԹ ԳՈՒԼԷՃ (Պոլիս)

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Պարտիզակ). Նշանաւոր մարզիկներէն՝ Մատթէոս Զարիֆեան

ԵՓՐԱՏ ԳՈՒԼԷՃ (Խարբերդ — Պասքեթպուլ)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԷՃ (Խարբերդ)
ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՒԼԷՃ (Խարբերդ-Ֆուլպուլ)

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՒԼԷՃ (Այնթապ)

Նոյնքան օգտակար դերակատարութիւն ունեցան Պոլսոյ եւ Գաւառի հայ կրթական հաստատութիւններէն՝

ՆՈՐ ԴՊՐՈՑ (Բանկալթի). Տնօրէն Յ. Հինդլեան եւ Մալաթեան-Ֆուլպուլ

ԷՍԱՅԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Բերա-Ֆուլպուլ)

ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Մարզիչ՝ Շաւարշ Քրիսեան)

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Գատը Գիւղ — Ֆուլպուլ)

ՈՐԲԱՆՈՑ (Գում Գաբու - մարզիչ՝ Գալուստ Արխանեան)

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Սկիւտար-Ֆուլպուլ եւ պասքեթպուլ) Փոխ - տնօրէն՝ Արամ Նիկողոսեան, մարզիչ՝ Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան

ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Սամաթիա)

ԱԶԳԱՅԻՆ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Զիլինկէր)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Եդեսիա - մարզիչ՝ Յակոբ Սերիկեան)

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Կարին-արդիական բարձրորակ մարզական ծրագրով, մասնագիտացած լողի եւ չմշկումի մէջ)

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Իզմիր)

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (Սիվրի Հիսար-մարմնամարզ)

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ» ԱՄՍԱԹԵՐԹԻ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վերոյիշեալ մարզական շարժումները, ակումբներու կազմակերպումը եւ վար-

ժարաններու ցոյց տուած հետաքրքրու-
թիւնը դէպի մարզանք, իրենց բարոյական
ուժը կը ստանային նաեւ ՄԱՐՄՆԱՄԱՐԶ
ամսաթերթի մէջ լոյս տեսնող քաջայերա-
կան յօդուածներէն:

Արդարեւ, 1911ի Փետրուարին, Շաւարշ
Քրիսեան կը յաջողի լոյս ընծայել այնքան
սպասուող եւ իր տեսակին մէջ եզակի հը-
րատարակութիւն մը՝ ՄԱՐՄՆԱՄԱՐԶ ամ-
սաթերթը: Իրեն անմիջական գործակից՝
Գրիգոր Յակոբեան՝ ձեռնարկին բարոյա-
կան քաջայերանքին կողքին կը բերէ նաեւ
իր նիւթական աջակցութիւնը: Քաջայերա-
կան նոյն կեցուածքը ցոյց կու տայ Յ.Ճ.
Սիրունին, օժանդակելով նաեւ առաջին թի-
ւերու խմբագրութեան: Մարզական հան-
դէսը ճամբայ կ'ելլէ չգաղթելու առաջա-
դրանքով — [Ա.1, Թ.1, Թ.21]:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶի արտօնատէր Շաւարշ
Քրիսեան նաեւ խմբագրապետ է եւ գլխաւոր
յօդուածագիր: Առաջին թիւին մէջ Քրիսեան
կը ստորագրէ խմբագրականի կողքին հինգ
յօդուածներ, ամբողջացնելով թերթի 32
էջերուն 23ը: Այս նախաձեռնութեան նե-
ցուկ կը հանդիսանան յօդուածագիրներ՝
Յովհաննէս Հինդլեան, Տօքթ. Գարանֆիլ-
եան, Արամ Նիկողոսեան, Լեւոն Յակոբ-
եան, որոնք առաջին օրէն սկսեալ անվերա-
պահօրէն կը բոլորուին խմբագրութեան
շուրջ: Թերթի վարչական տնօրէն-պատաս-
խանատուն է Կ.Ունճեան: Հետզհետէ, ամ-
սաթերթին որպէս աշխատակիցներ կ'օժան-
դակեն՝ Կարօ Ուշագլեան, Յակոբ Քրիս-
եան, Վահրամ Ս. Փափագեան, Յ. Տէր Յա-
կոբեան, Արծիւեան, Վահրամ Արծրունի,
Հմայեակ Յ. Չարդարեան, Ստեփան Խանճ-
եան, Հայկ Առաքելեան, Տ. Մարտիրոսեան,
Եզնիկ Քաջունի, Երուանդ Համբարձում-
եան, Տօքթ. Կ. Փաշայեան, Սարգիս Թա-
րիպեան, Արմաւենի ժամկոչեան, Տօքթ. Յ.
Աբրահամեան, Տօքթ. Մ. Ժամկոչեան եւ
ուրիշներ, թերթը վերածելով սիրուած ու
փնտուած հրատարակութեան մը:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ լոյս կը տեսնէ առա-
ջին տարին որպէս ամսաթերթ՝ 10 թիւերով՝
1911ի Փետրուարէն մինչեւ Նոյեմբեր,
իւրաքանչիւր թիւ 32 էջ: Յորդ թիւէն սկսեալ
ան կը կոչուի պատկերազարդ ամսաթերթ:
Ապա, ընթերցողներու փափաքին ընդառա-
ջելով, երկրորդ տարին կը վերածուի կի-
սամսեայ հանդէսի, 24 թիւերով՝ 1912ի
Յունուարէն մինչեւ Դեկտեմբեր: Առաջին 5
եւ վերջին 4 թիւերը 16ական էջ, թիւ 6էն
20ը՝ էջերու թիւը կը բարձրանայ 20ի:
ՄԱՐՄՆԱՄԱՐԶը կը կոչուի Օրկան Ազ-
գային Ֆիզիքական Վերածնութեան, ապա՝
Օրկան Ազգային Ֆիզիքական Կրթու-
թեան:

Երրորդ տարին լոյս կը տեսնէ 12 թիւ՝
20ական էջ, իսկ Չորրորդ տարին, որոշ
յապաղումէ ետք, 1914-ի Մայիսին եւ
Յունիսին միայն 2 թիւ՝ 32ական էջ:

Թերթը կը սպուի՝ Ա. Տարի թիւ 1 եւ
Բ. Տարի թիւ 1-6՝ տպարան Շանթ: Ա.
Տարի թիւ 2 եւ Բ. տարի թիւ 14-20՝
Տպարան Օ. Արզուման: Ա. Տարի թիւ 3-10՝
Տպարան Թիրեաքեան: Բ. Տարի թիւ 7-14
եւ 21-24՝ Տպարան Կ. Քէշիշեան Որդիք: Գ.
Տարին՝ Տպարան Գ. Պաղտատլեանով
սկսած՝ կ'աւարտէ Տպարան Արզումանով:
Դ. Տարին՝ Տպարան Ն.Կ. Պապիկեան:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶի պաշտօնական հաս-
ցէն՝ թիւ 6, Հալէպ Խան, Կալաթա, առաջին
տարիէն փոփոխութեան կ'ենթարկուի: Նախ
կը փոխուի նամակատուի թիւ 81ի, Կալա-
թա: Բ. եւ Գ. տարիներուն՝ 1912 եւ 1913՝
Եէնի Վոլթօ Խան, թիւ 19, Պահչէ Գաբու:
Դ տարին՝ Սեպուհեան Խան, թիւ 34, Չաք-
մաքճըլար:

Տպարաններու եւ խմբագրատան հաս-
ցէներու այս փոփոխութիւնները ցոյց կ'ու-
տան, որ հրատարակութիւնը նիւթական եւ
գործնական դժուարին պայմաններու տակ
է որ կ'իրականանայ, ինչպէս կը վկայեն
կարգ մը թիւերու մէջ երեւցող ազդա-

րարույթիւններ եւ խմբագրականներ — [Բ. 414, Թ. 224-Ներքին կողք]: Այսուհանդերձ, Համաշխարհային Ա. Ընդհ. Պատերազմն է որ պատճառ պիտի ըլլայ ՄԱՐՄՆԱՄԱՐՁի հրատարակութեան դադրեցման:

Մարմնամարզի խմբագրականները

ՄԱՐՄՆԱՄԱՐՁի առաքելութեան պատուանդանները, շատ բնականաբար, պիտի հանդիսանային անոր զանազան թիւերու առաջնորդող յօդուածները: Շաւարշ Քրիսեանի համար թերթի առաքելութեան զարգացումին գլխաւոր առանցքները կը կազմէին.

— Հայ անհատին բարոյական, մտային ու մանաւանդ ֆիզիքական զարգացումը, ի սպաս ազգային նպատակներու՝ յատկապէս հայկական վարժարաններու միջոցով

— Հայ մարզական խումբերու, հայկական ողիմպիականներու եւ Հայ Մարզական Ընդհանուր Միութեան մը կազմակերպումը

— Սկսուտական շարժումի որդեգրումը եւ անոր պատշաճեցումը հայկական իրողական վիճակին:

Այս նպատակներու ծառայութեան տեսլականով՝ ՄԱՐՄՆԱՄԱՐՁի խմբագրականները յաճախ կը շօշափեն վերոյիշեալ նիւթերը, զանազան տեսանկիւններէ դիտուած.

- «Մարզ»ու կերպաւորում [Ա. 1]
- Պարտաճանաչութիւն [Ա. 33]
- Հայկական ողիմպիականներու կազմակերպում [Ա. 65-Բ. 121, 161, 201]
- Հայկական ակումբներու կազմութիւն եւ կազմակերպում [Ա. 98-Բ. 1, 141]
- Մարզանքի ներմուծումը հայ վարժարաններէն ներս եւ պայքար անոր հակառակորդներուն դէմ [Ա. 129, 193, 225 Բ. 33, 49, 65, 261, 301]

— Հայ մարզիկի ծանօթացումը միջազգային բեմերու վրայ [Բ. 17, 241]

— Հայ կնոջ նպաստը առողջ սերունդներու կազմութեան [Բ. 101]

— Բացօթեայ կեանքի առողջապահական առաւելութիւնները [Բ. 281]

— Ազգային վերածնունդ մարզանքի ճամբով [Բ. 381]

— Հայ սկսուտական շարժման քաջալերանք [Թ. 41]

— Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան կազմութիւն [Բ. 221, 235, 346, Թ. 61-83]

Իսկ իւրաքանչիւր տարեվերջին՝ տարուայ իրականացումները թուող եւ թերթին՝ իր նպատակին ծառայած ըլլալու հաստատումը կատարող խմբագրականներ:

Մարմնամարզի մասնագիտական, բարոյագիտական, մարզաբժշկական, թարգմանական եւ այլ յօդուածները

Խմբագրականներու կողքին, հայ ազգային եւ ֆիզիքական զարթոնքին ծառայեցին ՄԱՐՄՆԱՄԱՐՁի մասնագիտական յօդուածները՝ իրենց մանրամասնուած բացատրականներով եւ գիտական վերլուծումներով: Այս նպատակի իրականացումը կը յատկանշուի մասնագէտ յօդուածագիրներու աշխատակցութեամբ:

Այսպէս՝
— Յովհաննէս Հինդլեան, տնօրէն եւ դաստիարակ, հայ պատանիի բարոյական կազմաւորման համար ստորագրած է բազմաթիւ յօդուածաշարքեր՝ հետեւեալ գլխաւոր նիւթերով. Ֆիզիքական դաստիարակութեան պակասը մեր դպրոցներէն ներս [Ա. 3], Բնախօսական-հոգեբանական հետազօտութիւններ եւ անոնց կիրառութիւնը մանկավարժութեան մէջ [Ա. 67, 100, 131, 162, 227, 259] Սեռային դաստիարակութիւն [Բ. 51-166] Հայ Պոյ Սքաւորներ [Բ. 203-222]: Ինչպէս նաեւ

Թարգմանական յօդուածներ. Առողջապահական կանոններ դպրոցականներուն համար [Բ.3, 35] Բժիշկ մօրեղբայրս ինչպէս սորվեցուց ինձի ծննդական գործարաններու յատուկ բաներ [Բ. 67, 83-103-123-143], Սքառուղը եւ իր կեանքին նպատակը [Թ.163]:

— *Լեւոն Յակոբեան, մարզիկ, իր անձնական փորձառութիւնէն.* Ինչպէս ուժովցայ [Ա.20], Լողալը [Ա.78]:

— *Տօքթ. Գարանֆիլեան, բժիշկ.* Լոգանքները առողջութեան տեսակետով [Ա.41], Ֆիզիքական դաստիարակութեան հարկը [Ա.46] Արիւնը եւ իր հիւանդութիւնները [Ա.138]—:

— *Յակոբ Քրիսեան, մարզիչ.* Մարմնամարզը մեր վարժարաններուն մէջ [Բ. 59,74, 358] Հայ տիկնանց ակումբ [Բ.115], Երեխան ինչպէս մեծցնելու է [Թ.26], Դպրոցական խաղեր [Բ. 151-170-229-243-271-354-409-437], Մարմնական պատիժը եւ իր հետեւանքները [Թ.14], Տղուն աշխատանքը ընտանիքին մէջ [Թ.37]:

— *Արամ Նիկողոսեան, դաստիարակ.* Մարզանքը ինչպէս ընելու է թոյլ կերպով թէ ճիգով [Ա.195], Դնդերներու աշխատութեան ազդեցութիւնը արեան շրջանին վրայ [Ա.265]:

— *Տօքթ Ե. Սիրամարգ (Ամերիկայէն).* Զինուոր Տղաք [Բ.290], Երիտասարդական Ընկերակցութեան դերը [Բ.356], Ժուժկայութիւն [Բ.375], Սակաւակերութիւն [Թ.56]:

Իսկ խմբագրապետ Շաւարշ Քրիսեանի գրիչը, իւրաքանչիւր թիւի մէջ, կը մնայ տիրական ներկայութիւն: Անկախ իր խմբագրականներուն ընդհանրական ձեւով շօշափած նիւթերէն, այլազան ու խորապէս մասնագիտական իր յօդուածները կարելի է դասաւորել գլխաւոր հինգ ճիւղերու տակ:

ա.- Մարզանքի եւ ֆիզիքական դաստիարակութեան օգտուները.

Մարմնամարզը եւ իր անհրաժեշտութիւնը [Ա.10]

Կիները եւ մարմնամարզը [Ա.13]

Մարմնամարզը եւ գործի մարդիկ [Ա.18]

Ֆիզիքական գործունէութիւնը եւ երկարակեցութիւնը [Ա.237]

Մարմնամարզին մեծ դերը [Ա.242]

Առօրեայ մարզանքին կարեւորութիւնը [Բ.19]

Հայ աղջկանց ֆիզիքական կրթութիւնը [Բ.44]

Առողջ մարդոց մարզանքը [Բ.60]

Ֆիզիքական դաստիարակութեան ազդեցութիւնը կեանքի գործողութեանց վրայ [Բ.263]

բ- Մարզանքի եւ մարզախաղերու կարեւորութիւնը հայ վարժարաններէն ներս. Կրթական ապակեդրոնացում եւ իր վնասները [Բ.6]

Մարմնամարզը հայ վարժարաններուն մէջ [Բ.346]

գ- Մարզական եւ սկաուտական շարժումներու կազմաւորում եւ կեդրոնացում մէկ ընդհանուր միութեան հովանիին տակ.

Հայ Մարմնամարզական Միութեան կատարելիք գործը [Բ.308]

Հայ Պօյ Սքառուղներու կազմութիւնը [Թ.11]

Հ.Մ.Ը.Միութիւնը եւ իր գործունէութիւնը [Թ.38]

դ- Ազգային գարթօնք եւ ազգային պաշտպանութիւն.

Ֆիզիքական կրթութեան բարձր նշանակութիւնը [Բ.292-314]

Ազգի մը ֆիզիքական ուժը ազգային պաշտպանութեան տեսակետով [Թ. 210]

ե- Մարզանքի բնախօսական մեքանիզմը եւ թեքնիք ուսուցում.

Մարմնամարզական դասընթացք [Ա. 22, 49,81,110,143,175]

Սեղմիրանը [Ա.43]

Ֆուրայօլը [Ա.76-149]

Մորթային շնչառութիւնը [Ա.170]

Մարգանքը եւ բժիշկները [Ա.202]

Յոգնութեան բնախօսութիւնը [Ա.270]

Պտուղներու դերը ուժի պահպանման մէջ [Բ.20]

Առողջութիւնը մարգանքի միջոցաւ [Բ.126]

Անձնական առողջապահութիւն [Բ.131]

Գործնական հրահանգներ Ֆիզիքական փորձերու ընտրութեան, ուսուցման եւ գործադրութեան մասին [Թ.3,23,43]

Մարգանքի մասնաւոր բնախօսութիւնը [Թ.197]:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ գործնական իրականացումները: Մարգանքի ակումբներու կազմութիւն, Հայկական ողիմպիականներ, Ընդհանուր միութեան ծրագիր եւ փորձեր, հրատարակչական:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ հրատարակութիւնը որպէս ամսաթերթ կամ երկշաբաթաթերթ, մասնագիտական հրապարակագրութեան իր դերը լիովին արդարացուց: Սակայն այդքանով չբաւականացաւ: Շաւարշ Քրիսեանի երազն էր՝ կեդրոնաձիգ գրաւչութեամբ իր շուրջ բոլորել մարզական շարժումներու պատասխանատուները, միասնաբար իրականացնելու համար գործնական քայլեր:

Նախապէս, ինքնին սկսուած էր արդէն բազմաթիւ ակումբներու խումբերու եւ խմբակցութիւններու կազմութիւնը Պոլսոյ եւ Գաւառի զանազան կեդրոններուն մէջ: ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ խմբագրատունը՝ հոն պատահող կամ կազմակերպուող հանդիպումներով կը ծառայէին այս ակումբներու եւ խումբերու թեքնիք զարգացումին — [Ա.65 Բ.121,161,201]: Այս իմաստով, քաջալերական շատ մը գրութիւններու կը հանդիպինք այս կամ այն ակումբի գործունէութեանց եւ յաջողութիւններու մասին — [Ա.61]: Մինչեւ իսկ անհատական մարզիկներու յառաջդիմութիւնները օրինակելի նմուշներու կը վերածուին: Այս կարգին

յատկանշական է ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ քաջալերական օժանդակութիւնները՝ թատերական ներկայացման մը յաջողութեան — [Բ.17 եւ այլք] որպէսզի մարզիկներ՝ Վահրամ Փափազեան եւ Մկրտիչ Մկրեան մասնակցին Սթոքհոլմի Միջազգային Ողիմպիական խաղերուն — [Բ.55] — եւ այս նպատակին համար պէտք եղած նիւթականը ապահովուի:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ խմբագրատան մէջ է որ կը կայանայ նաեւ Հայկական Առաջին Ողիմպիական խաղեր կազմակերպելու նպատակին յատուկ հաւաքոյթը — [Ա.89] — ու 1911ի Մայիսի 1ը կը հանդիսանայ համազգային մարզական ելոյթներու հիմնադրութեան օրը: ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ իր 1912 Մարտ 15 թիւով կը հրատարակէ այս ձեռնարկի նիւթական յաջողութեան պատկերը: Իսկ 1911 Մայիսի թիւը, բնականաբար, նուիրուած էր արդէն՝ իր խմբագրականով, պատկերազարդ նկարագրականով եւ թեքնիք արդիւնքներով, գրեթէ ամբողջութեամբ, վերոյիշեալ խաղերուն: «Մասնաւոր սկսուած է, ալ կանգ պէտք չէ՛ առնել», «ճամբան սկսուած է, ոճիր է կանգ առնել», այս տողերը կը բնորոշէին թերթին տեսլականը Հայկական Առաջին Ողիմպիական Խաղերուն կապակցաբար:

Մինչեւ 1914 թուականը, յաջորդական ողիմպիական խաղերը կը կայանան տարեկան յաջորդականութեամբ, որպէս գործադիր մասնախումբի նստավայր օգտագործելով ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ խմբագրատունը, եւ թերթի հետեւողական քաջալերական յօդուածներով կը ստանան ժողովրդական լայն տարածում:

Ասոնց կողքին, Քրիսեանի գլխաւոր երազը կը մնար՝ հիմնուած տեսնել եւրոպական առումով մեծ ու կազմակերպուած ակումբ մը՝ «Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն» անունով — [Ա.66]: Այս նպատակի իրականացման համար ան

առաջին Հայկական Ողիմպիականի յաջողութիւնը նախապայման կը նկատէ: Ձեռնարկը յաջողութեամբ կը պսակուի եւ առիթ կը հանդիսանայ Պոլսոյ եւ շրջակայքի հայկական ակումբները հրաւիրելու ընդհանուր հաւաքոյթի մը ՄԱՐՄՆԱՄԱՐԶի խմբագրատան մէջ — [Ա.188]: Այս հաւաքոյթի յաջողութեան համար Քրիսեան անդու կ'աշխատի եւ յաջորդական հրաւերներ կ'ուղղէ իր երազը իրականացած տեսնելու հեռանկարով — [Ա.290]: Հաւաքոյթներ կը նախատեսուին 29 Յուլիս, 1912ի եւ 19 Օգոստոս, 1912ի թուականներուն, որոնք սակայն չեն կայանար: Պալքանեան պատերազմի ստեղծած անստոյգ վիճակը արգելք կը հանդիսանայ անոնց յաջողութեան — [Բ. 412]: Սակայն Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան պատկերը հետզհետէ կ'ուրուագծուի Քրիսեանի եւ անոր գործակիցներու մտքին մէջ: Քրիսեան իր պատկերացումը յստակօրէն կ'արտայայտէ «Հայ Մարմնամարզական Միութեան Կատարելիք Գործը» [Բ.308] եւ Մարմնամարզը Հայ Վարժարաններուն մէջ, անոնց կատարելիք դերը Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան մէջ — [Բ.364] — յօդուածներով: Այս ճիգերը, ի վերջոյ, կը պսակուին յաջողութեամբ եւ կը նուիրագործուին՝ մարզական եւ սկաուտական շարժումները որպէս «Երկու Նոր Ուժեր» ներկայացնող խմբագրականի մը լոյս ընծայումով — [Թ.61]:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ իր վերոյիշեալ իրականացումներու սահմանն ալ կը շրջանցէ, երբ թերթը կը գործադրէ բոլորովին նոր տեսակի աշխատանք, այս անգամ հրատարակչական ասպարէզէն ներս: Այսպէս է որ Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեանի թարգմանական «Սերնդագործում եւ սեռային առողջաբանութիւն» (հեղինակ՝ HALL) գիրքը լոյս կը տեսնէ պրակային դրութեամբ՝ 1913ի սկիզբէն սկսեալ: Իսկ, պոյ սքաուտներու մասին գրքոյկ մը ձրիօրէն կը տրամադրուի

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»ի բաժանորդներուն — [Թ.16, 40] — Յունուար եւ Փետրուար ամիսներու թիւերով ծանուցուած:

Մարմնամարզի օժանդակութիւնները սկաուտական շարժումի ծանօթացումին եւ տարածման

Ինչպէս մարզականի պարագային, նոյնպէս սկաուտական շարժումին քաջալերող կը հանդիսանայ «ՄԱՐՄՆԱՄԱՐԶ» ամսաթերթ-երկշաբաթերթը: Սկիզբը վերապահ եւ զգոյշ — [Բ.26] — սկաուտական շարժումին մասին, հետզհետէ, աւելի ստոյգ ծանօթացումներ կը հաղորդէ Յովհաննէս Հինդլեանի յօդուածաշարքով — [Բ.163-203-222] — իսկ 1912ի կիսուն, Տ.Ե. Սիրամարգի յօդուածով՝ յստակ հրաւեր կ'ուղղէ Հայ դաստիարակներուն եւ դեկավարութեան՝ հիմնելու հայ պատանիներուն յատուկ սկաուտական շարժում, շեշտը դնելով անոր զինուորական եւ կարգապահական նկարագիրին վրայ — [Բ.290]: 1913ի սկիզբը, Քրիսեան աւելի շեշտակիօրէն կը գրէ՝ սկաուտական շարժումը վարժարաններու աշակերտութեանց ծանօթացնելու նպատակով եւ իր տեսիլքը անմիջականօրէն շօշափելի իրականացում ներկայացնելով — [Թ.11]: Նոյնպէս, 1913ի Փետրուարին, ՄԱՐՄՆԱՄԱՐԶի թիւին հետ որպէս նուէր Քրիսեան կը միացնէ պոյ սքաուտներու մասին գրքոյկ մը, որ իր տեսակին մէջ առաջինը ըլլալով, մեծապէս օգտակար կ'ըլլայ պատանիներու դաստիարակութեան՝ այս նոր մեթոտի կիրարկման գանազան շրջաններէ ներս: «Պոյ-սքաուտներ» անունով այս գրքոյկը հիմնապէս կը ծառայէ սկաուտական շարժումը ժողովրդականացնելու նպատակին:

Այս նպատակով նաեւ Քրիսեանի դասախօսական ելոյթները, Սկիւտարի հայ երիտասարդական շրջանակներուն մէջ, ան-

միջապէս կ'արդիւնաւորուին: Պոլսոյ մէջ սկաուտական շարժումի գործնական առաջին քայլերը կ'արձանագրուին նոյն թաղամասի Պէրպէրեան, Մեզպուրեան եւ Տայեան վարժարաններուն, ինչպէս նաեւ՝ Աղջկանց Ամերիկեան Վարժարանի աշակերտութեանց մասնակցութեամբ: ՄԱՐՄՆԱՄԱՐԶ կը շարունակէ իր առաքելութիւնը՝ 1913ի յաջորդական թիւերուն մէջ տալով «Հայ Պոյ Սքաուդին դպրոցը» վերնագրին տակ՝ 38 յօդուածներէ բաղկացող սկաուտական գործնական կանոնագրութիւն մը՝ կարելի բոլոր մանրամասնութիւններով — [Թ.34, 35] — եւ ներկայացնելով Սկիւտարի Հայ Սքաուդներու Առաջին Խումբի խմբանկարը պաշտօնական տարագով — [Թ.72]: Թերթը՝ 1913ի Ապրիլի թիւով կ'աւետէ Հայ Սքաուդներու առժամեայ տնօրէն ժողովի մը կազմութիւնը — [Թ.78] — իսկ տարեվերջի թիւով արձագանգ կը հանդիսանայ ներքին գաւառներէն՝ Զմշկածագի մէջ սկսուած սկաուտական «Տերսիմ Խումբ»ի կազմութեան մասին:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆՈՒՄՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ

1908ի սկիզբը, միջազգային սկաուտութեան հիմնադիր, անգլիացի զօրավար՝ Սըր Ռոպերթ Պէյտըն Փաուլ կը հրատարակէ իր հիմնած շարժումին նախագիծը կազմող «SCOUTING FOR BOYS» անուն գիրքը: Այս հրատարակութիւնը իր ստեղծած հետաքրքրութեամբ եւ միջազգային պատանեկան շրջանակներու մէջ յառաջացուցած խանդավառութեամբ պատճառ կ'ըլլայ որ Անգլիայէն ետք, հետզհետէ, Ամերիկայի եւ Եւրոպայի գանազան երկիրներուն մէջ սկաուտական կորիզներ կազմուին:

Սկաուտութիւնը յստակօրէն դաստիարակչական գոյգ ուղիներ կ'որգեզրէր. առաջին՝ պատանի սկաուտները վարժեցնել

դէպի բացօթեայ առողջ կեանք, պատրաստել զանոնք չարքաչ ու ճարտար կեանքի, ինքնաբաւ դառնալու առաջադրանքով, երկրորդ՝ զօրացնել պատանիին մէջ բարոյական սկզբունքներու ծանօթութիւնը, եւ այլասիրութեան կարեւորութեան գիտակցութեամբ հիմնել միջազգային եղբայրակցութիւն մը: Այս գոյգ նպատակներու իրագործման համար Անգլիայէն սկսեալ, հետըզհետէ, աշխարհի չորս ծագերուն կազմընցան սկաուտական խումբեր, պատրաստընցան տեսական ու գործնական ուսուցումներու համար դասագիրքեր, կազմակերպուեցան միջազգային ճամբաներ եւ աւելի ուշ կազմուեցաւ Սկաուտական Միջազգային Գրասենեակը:

Այնուհետեւ, իւրաքանչիւր երկիր իր ազգային նպատակներու իրագործման համար սկաուտական շարժման տուաւ համեմատական յատուկ կարեւորութիւն եւ իւրայատուկ գործնական ձեւեր, որոնք սակայն բոլորն ալ մնացին հիմնադիր Պէյտըն Փաուլի առաջադրած սկզբնական նպատակներու սահմաններուն մէջ:

Հայերն ալ, իրենց կարգին, իւրացուցին միջազգային այս շարժումը եւ արագօրէն տիրացան անոր ոգիի իսկական ըմբռնումին:

ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ՊՈԼՍՈՅ ԵՒ ԳԱԻԱՌԻ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԷՆ ՆԵՐՍ

16 Մարտ, 1913ին, Սկիւտարի Յառաջդիմասիրաց Միութեան սրահին մէջ, Շաւարշ Քրիսեան դասախօսութիւն մը կու տայ նոր հիմնուած սկաուտական շարժումին մասին: Այս խանդավառ ելոյթին որպէս արդիւնք՝ տեղւոյն վրայ կը կազմուի Տեղական Գործադիր Մարմին մը:

23 Մարտ, 1913ին, նոյն վայրին մէջ կը կազմուի Հայ Սկաուտիզմի առժամեայ



Սկիւտարի Հայ Մարմնամարզական ակումբի
Սկաուտական խմբանկար
Կեդրոնը՝ նստած՝ Գրիգոր Յակոբեան, 1914

տնօրէն ժողով, որուն մաս կը կազմեն՝ Տի-
կիններ՝ Նիկողոսեան, Բարսեղեան եւ Շէհ-
րիկեան եւ Պարոններ՝ Նիկողոսեան, Հին-
դըլեան, Տօքթ. Ուզունեան, Շաւարշ Քրիս-
եան, Գաւլօ Շահինեան, Լ. Թաշճեան, Մկր
Մկրեան, Վ. Թէքէեան եւ Սարգիս Մինաս-
եան: Այս ձեւով Հայ Սկաուտիզմը գործ-
նականապէս հիմնուած է 1913ի սկիզբը:

Արձանագրեցինք արդէն սկաուտական
չարժումի ծանօթացման համար ՄԱՐՄ-
ՆԱՄԱՐՁի յօդուածները, ու անոնց հեղի-
նակներուն բերած գործնական նպաստը:
Յիշենք միայն, Գրիգոր Յակոբեանի կող-
մէ սկսուած սկաուտական կորիզի մը գո-
յուլթիւնը՝ Սկիւտարի Հայ Մարմնամարզա-
րանի տղոցմէ կազմուած: Յովհաննէս
Հինդլեանի հիմնած Նոր Դպրոցի սկաուտա-
կան խումբերը եւ Հրատի սկաուտական
կազմերը, որոնք, 1913ի Յունիսին, առա-
ջին անգամ ըլլալով տողանցքով մասնակցե-
ցան Հայկական Գ. Ողիմպիականին՝ մեծ
խանդավառութիւն յառաջացնելով հան-
դիսատես բազմութեան մէջ: Յիշատակելի է
նաեւ, 1913ի վերամուտին, Չմշկածագի
մէջ, տնօրէն Ղազարոս Գուլյումճեանի նա-

խածեռնութիւնը՝ Հայոց Միացեալ Ընկե-
րութեան Չմշկածագ-Իւզպէք վարժարանի
սկաուտական խումբի կազմութիւնը: Այս
նախածեռնութիւնները սպասուած յառաջ-
դիմութիւնները չկրցան արձանագրել,
1914ի Ընդհ. Պատերազմի պատճառով:

1918ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեամբ
աւելի հիմնականօրէն սկիզբը դրուեցաւ
Հայ Սկաուտական Շարժումին եւ անոր
զարգացման՝ Պոլսոյ վարժարաններէն եւ
որբանոցներէն ներս: Սկաուտական խում-
բեր կազմուեցան գրեթէ բոլոր մասնա-
ծիւղերու կողքին: Շարժումը տարածուե-
ցաւ մինչեւ Իգմիր, Կիլիկիոյ շրջանի քա-
ղաքները՝ յատկապէս Ատանա եւ Տարսոն,
Եգիպտոսի՝ Գահիրէ, Աղեքսանդրիա եւ
Փոր Սաիտ քաղաքները — [Գ. 73, 74] —
եւ հետզհետէ հասաւ Մերձաւոր Արեւելքի
եւ Եւրոպայի հայահոծ գանազան գաղութ-
ները: Այս մասին հանգամանօրէն պիտի
անդրադառնանք իւրաքանչիւր երկրի կամ
քաղաքի մասնաճիւղային գործունէութեանց
առընթեր:

ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔ ԵՒ ՄԱՐՁԱԽԱՂԵՐ

Եթէ սկաուտութիւնը իր նախաքայլերը
կ'առնէր Պոլսոյ եւ Գաւառի մէջ, մարմ-
նակրթանքը, որպէս աւելի հին շարժում,
գոյուլթիւն ունէր ու կը զարգանար նոյն
շրջանակներուն մէջ:

Նախորդող բաժիններուն մէջ ծանօ-
թացանք նախա-Հ.Մ.Ը.Մ.-ական մարզա-
կան ակումբներու եւ մարզանքը քաջալերող
վարժարաններու: ՄԱՐՄՆԱՄԱՐՁ-ը իր
կարգին նպաստեց այս շարժումի տարած-
ման: Ան՝ քաջալերելով հայ պատանիի կա-
րողութիւնները անհատական մարզանք-
ներու կիրարկումով, հետզհետէ անոր մէջ
արթնցուց մրցակցութեան ազնիւ ոգին:
Մարզիկին ծանօթացուց ժամանակի (վազ-
քեր) եւ չափի (ոստումներ եւ արձակում-

ներ) դէմ պայքարելով մրցանիշեր հաստատելու կարելիութիւնները: Ապա կազմուեցան, մարզիկներու միացումով, օրուայ ժողովրդական մարզախաղերու (ֆութպոլ, Պասքեթպոլ, թենիս) կիրարկման մասնագիտացած խումբեր եւ ակումբներ: Այսպէս, օգտակարը հաճելիին միացնելով՝ քսաներորդ դարու յառաջդիմութեանց ծիրին մէջ, հայ երիտասարդին տեղաւորումը դարձուց օրուայ կարգախօս: Մասնագէտ մարզիչներ գործի լծուեցան: Ականաւոր դաստիարակներ քաջալերեցին մարմնակրթանքն ու մարզախաղերը:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԵՐՈՒ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Վերոյիշեալ զարգացումին պսակումը հանդիսացաւ համահայկական ողիմպիականներու կազմակերպումը՝ որպէս Քրիսեանի նախաձեռնող ոգիին արդիւնք:

Արդարեւ, 1911ի Մայիսի 1ին, առաջին ելոյթով հիմը կը դրուէր հայ Նաւասարդեան խաղերու նորագոյն շրջանի շարքին:

Այս առաջին խաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Պոլսոյ հայ մարզական բոլոր ակումբները եւ հայ վարժարանները: Օրուայ թագուհին էր Տիկին Մարթէն Յակոբեան: Պատուոյ օրիորդներ՝ Եւգինէ Պէշիկթաշեան եւ Սրբուհի Յակոբեան: Յայտագրին մաս կը կազմէին՝ աթլետիք մրցումներ՝ 100 եարտա վազք (մեծերու եւ փոքրերու բաժիններով), քառորդ մղոն, կէս մղոն եւ մէկ մղոն վազքեր, 100 եարտա արգելարչաւ, պարկարչաւ, արգելարչաւ եւ դրօշարչաւ: Արձակումներու բաժնին մէջ՝ գունդ նետել, սկաւառակ արձակել: Ոստումներէն՝ բարձրութիւն ցատկել, երկայնք ցատկել, ձողով բարձրութիւն ցատկել: Զուան քաշել եւ երկու մղոն հեծելարչաւ: Հանդիսութիւնը կը խանդավառէր Քնար նուագախումբը:

Դատական կազմին մասնակցեցան՝ Մարթէն Յակոբեան, Ժողէֆ Ազնաւուր, Էմմանուէլ Շնորհք, Յովհաննէս Սաւայեան, Արամ Նիկողոսեան, Գրիգոր Մերձանօֆ, Շաւարշ Քրիսեան, Արամ Գալենտէր, Լեւոն Յակոբեան եւ Գեղամ Ճշմարտախօս:

Երկու հազարի հասնող պոլսահայ հանդիսականներ ամբողջութեամբ լեցուցած էին Գատը Գիւղի Իւնիօն Քլիւպի մարզադաշտը. անոնց կարգին կը գտնուէր Իգմիրի Որսորդաց Ակումբի ներկայացուցիչ՝ Մկրտիչ Եանըբեան: Մամուլի ներկայացուցիչներուն յատկացուած էր առանձին բաժին:

Օրուայ մրցորդներէն յաջողագոյն արդիւնքներ արձանագրեցին՝ Ռոպերթ Գոլէճէն՝ Սարգիս Մկրեան եւ Մարտիրոս Գոլյումճեան, Արտաւազդ ակումբէն՝ Վահրամ Փափագեան եւ Տորքէն՝ Վարազ Փողարեան:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ խմբագրութեան նախաձեռնութիւնը եղող այս անդրանիկ ելոյթի կազմակերպութիւնը ստանձնած էր կարգադիր մասնախումբ մը, որուն մաս կը կազմէին՝ Շաւարշ Քրիսեան, Արամ Գալենտէր, Գէորգ Թերճիմանեան, Եղիշէ Քաջունի, Լեւոն Յակոբեան, Մկրտիչ Գոլյումճեան եւ Յովհաննէս Սաւայեան:

Թեքնիք արդիւնքներ — [Ա.117]:

Առաջին ողիմպիականի յաջողութիւնը արդէն կ'աւետէր յաջորդ տարուայ ելոյթը:

Արդարեւ, 3 Յունիս, 1912ի Կիրակին, նոյն մարզադաշտին վրայ հետեւեալ յայտագիրը գործադրուեցաւ.

Մարզիկներու ընդհանուր տողանցք՝ առաջնորդութեամբ Քնար նուագախումբին:

Մագրիգիւղի Տիտան եւ Սամաթիոյ Վահագ ակումբներու շուէտական մարզանքներ

Աթլեթիզմի հետեւեալ մրցումները.

Վազքեր՝ 100 եարտա, կէս մղոն, փոքրերու 100 եարտա, քառորդ մղոն, արգելարչաւ, մէկ մղոն եւ դրօշարչաւ:

Ոստումներ՝ կեցած երկայնութիւն ցատկել, ձողով բարձրութիւն ցատկել, երկայնք ցատկել, բարձրութիւն ցատկել, երեք քայլ ոստում:

Արձակումներ՝ Սկաւառակ նետել, գունտ նետել, նիզակարձակել:

Բուրգ եւ 2 մղոն հեծելարչաւ:

Ուղերուն մասնակցեցան Պոլսոյ հայ մարզական ակումբներու մեծամասնութիւնը:

Օրուայ թագուհին էր Տիկին Արուսեակ Ա. Հարենց, պատուոյ օրիորդներ՝ Արմինէ Մանուկեան եւ Վերոնիկ Մաղաբեան:

Առաջին տարուան կազմակերպիչ յանձնախումբը, նոյն կազմով, յաջողութեամբ գլուխ հանեց այս երկրորդ ելոյթը:

Հայկական Գ. Ողիմպիականը կայացաւ 16 Յունիս, 1913ին, նոյն մարզադաշտին վրայ: Որպէս նորութիւն նախորդներուն վրայ նկատի պէտք է առնել՝ հայ սկաուտներու մասնակցութիւնը այս խաղերուն: Հանդիսութիւնը կը վայելէր Պատրիարք Հօր հովանաւորութիւնը: Կազմակերպութիւնը վստահուած էր կարգադիր մասնախումբի մը, բաղկացած՝ Պարոններ Լեւոն Յակոբեանէ, Գ. Թէրճիմանեանէ, Ե. Քաջունիէ, Ժիրայր Խորասանճեանէ, Մկր Մկրեանէ, Շաւարշ Քրիսեանէ, Կ. Կիւլպէնկեանէ եւ Բ. Կէօզիւպէօյիւքեանէ: Դատական կազմին կը մասնակցէին՝ Պարոններ Գրիգոր Յակոբեան, Ժիրայր Խորասանճեան, Արամ Ազնաւուր, Բ. Կէօզիւպէօյիւքեան, Շ. Քրիսեան, Է. Շնորհք, Ա. Նիկողոսեան, Մկր Մկրեան, Կ. Կիւլպէնկեան, Ս. Թէրճիմանեան, Ա. Գաւանոզեան եւ Լ. Յակոբեան:

Հայկական Երրորդ Ողիմպիականը կը յատկանշուի Իզմիրի Որսորդաց Ակումբի

աթլեթներու մասնակցութեամբ: Տեղի ունեցաւ մարզիկներու եւ սկաուտներու ընդհատողանցք: Յայտագրին մաս կը կազմեն հետեւեալ մրցումները.

Վազքեր. 100 մեթր, 400 մ. 800մ. 1500մ. եւ դրօշարչաւ:

Ոստումներ. Կեցած երկայնք, ձողով բարձրութիւն, երկայնք, բարձրութիւն եւ 3 քայլ:

Արձակումներ. գունտ, նիզակ:

Նաեւ 5000 մեթր հեծելարչաւ:

Հանդէսի փակման խօսքը արտասանեց Կոմիտաս Վարդապետը որը անձամբ յանձնեց յաղթականներու մրցանակները — [Թ. 108]:

Սակայն զգալի նահանջ մը նկատելի է այս՝ երրորդ Ողիմպիականին մասնակցողներու կապակցաբար: Ելոյթը սպասուած խանդավառութիւնը չյառաջացուց: Օրուայ մթնոլորտային պայմանները եւս չնպաստեցին լրիւ յաջողութեան: Թէքնիք արդիւնքներ — [Թ. 109]:

Ողիմպիական խաղերու այս շարքին չորրորդը եւ վերջինը տեղի ունեցաւ 1 Յունիս 1914ին, կրկին Գատը գիւղի «Իւնիօն» Քլիւպի դաշտին վրայ: Հովանաւորութեամբ պատրիարք Սրբազան Հօր:

Ուղերու ցանկ՝ Վազքեր՝ 100մ. 400մ. 800մ. 1500մ. Ակումբային վազք (դրօշարչաւ) Ոստումներ՝ ուժով եւ առանց ուժի բարձրութիւն, ուժով եւ առանց ուժի երկայնք, Ձողով բարձրութիւն, երեք քայլ:

Արձակումներ՝ Սկաւառակ, Նիզակ, Երկաթ:

Հեծանիւի մրցում — [Ժ. 31]:

Կազմակերպիչ մասնախումբը տարուէ տարի զարգացող այս ելոյթներուն կը փորձէ աւելի լաւ արդիւնքներ ապահովել կազմակերպչական թէ թեքնիք տեսակէտէ:

Դժբախտաբար, Ա. Աշխարհամարտը պիտի գար վերջ դնել Հայկական Ողիմպիականներու այս շարքին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՁ

Միջազգային ողիմպիականներու զարթնումը իր ազդեցութիւնը կը գործէ նաեւ Միջին Արեւելքի երկիրներու մարզական կեանքին վրայ: Եգիպտոսը այս երկիրներու կարգին առաջին տեղը գրաւողը պիտի ըլլար: Այս ազդեցութիւնը իր ներգործութիւնը ունեցաւ նաեւ եգիպտահայ գաղութին վրայ: Առաջին խարխափումներէն ետք, առաջնակարգ մարզիկ եւ մարզանքի ուսուցիչ Ստեփան Խանճեանի վերադարձը՝ Լիոնի մարզական ակադէմիէն վկայեալ, յաւելեալ խթան մը եղաւ մարզական ակումբներու կազմութեան: Խանճեան մարզանքի ուսուցիչն էր Ալեքսանդրիոյ Պողոսեան Ազգային Երկսեռ վարժարանին: Ան յաջողած էր մարզական նորագոյն մեթոտները կիրարկելով՝ վարժարանի աշակերտութեան համար հրապարակային մարզահանդէսներ սարքել: 1912-ի տարեվերջի մարզահանդէսին բաղաւոր զուգադիպութեամբ ներկայ կը գտնուի Շաւարշ Քրիսեան որ մեկնած էր Եգիպտոս ամառնային արձակուրդի — [Բ.248,279,298]:

«ԿԱՄՔ» Հայ Մարզական Միութիւն եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութիւն

Այդ օրերուն պատրաստուող մարզական միութեան մը ծրագիրը Շաւարշ Քրիսեանի քաջալերանքով իրականութիւն կը դառնայ: Ստեփան Խանճեան կ'ըլլայ անոր նախաձեռնողը իսկ Բարսեղ Օհան-

եանի նիւթական եւ բարոյական զոհողութեանց եւ Կարօ Աշըքեանի ճիգերուն շնորհիւ կարելի կ'ըլլայ մարզադաշտ մը ապահովել: Ալեքսանդրիոյ «ԿԱՄՔ» մարզական միութիւնը հիմնուած էր: 1915-ին անոր կը կցուի նաեւ Հայ Հետազօտիչներու խմբակցութիւնը (սկառուտական շարժում):

«ԿԱՄՔ»ը կը գործէ մեծաքայլ յառաջդիմութեամբ մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմի սկզբնաւորութիւնը, որմէ ետք ներքին դժուարութիւններ պատճառ կ'ըլլան ժամանակաւոր բաժանումներու եւ միութեան տկարացման:

ԱՐԱՐԱՏ Հայ Մարմնամարզական Ակումբ Գահիրէ եւ Հայ Հետազօտիչներ.

Աղեքսանդրիոյ օրինակին հետեւելով, 1914-ին, Գահիրէի Գալուստեան Ազգային վարժարանի մէջ հաւաքուած հայ մարզասէրներու խմբակցութիւն մը հիմը կը դնէ Գահիրէի «Արարատ» հայ մարմնամարզական ակումբին որուն կը մասնակցին նաեւ 1913-ին հիմնուած Հայ Հետազօտիչներու կազմը, գլխաւորութեամբ՝ Ստեփան Ամիրայեանի: Գահիրէի «Արարատ»ին շուրջ կը հաւաքուին աւելի քան հարիւր սկառուտներ եւ եգիպտական եւ միջազգային մակարդակի վրայ յաջողած հայ մարզիկներ: Միութիւնը կը վայելէ եգիպտահայ գաղութի համակրանքն ու քաջալերանքը եւ կը գործէ յաջողութեամբ մինչեւ համաշխարհային Ա. պատերազմ:

Հ.Մ.Ը.Մ.-Ը ԻՐ ՍԱՂՄԻՆ ՄԷՋ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հ.Մ.Ը.Մ.-Ը ԻՐ ՍԱՂՄԻՆ ՄԷՋ

- ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆՈՒՄ
- ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ — ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆ — ՇԱԻԱՐՇ ՔՐԻՍԵԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ
- ԶԻՆԱԴԱԴԱՐ — ՏԱՐԱԳՐԵԱԼ ՀԱՅԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՊՈԼԻՍ — ՊՈԼՍՈՅ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ
- ՔՐԻՍԵԱՆԻ ԿՏԱԿԸ

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆՈՒՄ

1900ական թուականներու առաջին տասընհինգ տարիները յատկանշուեցան հայ ժողովրդական խաւերուն դէպի մարզանք եւ սկառտական շարժում արեւելումով: Երկար խօսուած ու գրուած էր հայ մարմնամարզական ընդհանուր միութեան մը կազմութեան մասին՝ Շաւարշ Քրիսեանի եւ իր գործակիցներու կողմէ: Կարելի է նոյնիսկ հաստատել, թէ հայ մարմնամարզի եւ մարզախաղերու ռահվիրաներուն պատկերացումը յստակ աշխատանքի էր լծած հաւատացեալ երիտասարդներու փաղանգ մը:

Պոլսոյ եւ շրջակայքի մէջ գործող մարզական ակումբներու եւ խումբերու կարեւոր մեծամասնութիւնը դրական կեցուած էր որդեգրած՝ համահայկական հաւաքով մը իրականութեան վերածելու Հ.Մ.Ը.Մ.-ի ծնունդը: Այս նպատակով, 8 Ապրիլ, 1911-ին կայացած Պոլսոյ ակումբներուն հաւաքը, որուն գլխաւոր օրակարգն էր հայկական ողիմպիական առաջին խաղերու կազմակերպումը, քայլ մը աւելի առաջ երթալով, կ'որոշէ մրցահանդէսին գոյանալիք հասոյթը յատկացնել «Հայ Մարմնամարզական Միութեան» մը հիմնադրութեան: Այս հաւաքին ներկայ կ'ըլլան հետեւեալ ակումբները. Պէշիկթաշի Ահարոնեան Ակումբը, Գում Գաբուի Ասպարէզ Լսարանը, Բերայի Արաքս Ակումբը, Բերայի Դաշնակցական Ակումբը, Բերայի էսայեան Սանուց Միութիւնը, Սամաթիոյ ժողովուրդ Լսարանը, Գատը Գիւղի ժողովրդական Ակումբը, Թոփ Գաբուի Կուկունեան Լսարանը, Գատը Գիւղի Հայ Ակումբը, Բերայի Հայ Երիտասարդաց Միութիւնը, Շիշլիի Հայ Երկսեռ Միութիւնը, Ռոպերթ Գուլէճի Հայ Ուսանողութիւնը, «Մարմնամարզ»ի խմբագրութիւնը, Գատը Գիւղի Մասեաց Ակումբը, Գուրուչեշմէի Մարմնամարզական Արտաւազդ

Ակումբը, Սկիւտարի Յառաջդիմական Միութիւնը, Ուսանողական Ինքնագարգացողական Միութիւնը, Սկիւտարի Րաֆֆի Միութիւնը եւ Գում Գաբուի Տորք Ակումբը — [Ա.89]:

Հայկական Ա. եւ Բ. Ողիմպիականները յաջորդաբար տեղի կ'ունենան, սակայն հայ մարմնամարզական միութեան մը հիմնադրութեան գործնական քայլը չէ առնուած:

Հակառակ երկիցս որոշուած թուականներուն, կային խմբակցութիւններ, որոնք իրենց ինքնուրոյն դիմագիծը պահելու, անկախ գործելու եւ ենթակայական վիճակի մը չմատնուելու մտահոգութեամբ չէին ընդառաջեր հրաւերներուն: Այսպէս էր որ նախատեսուած՝ 29 Յուլիս, 1912-ի եւ 19 Օգոստոս, 1912-ի հաւաքները ձախողեցան:

Քրիսեանի պատկերացումը ընդհանրական էր. ո՛չ մէկ հայ մարզական շարժում պէտք է դուրս մնար համայնական կառոյցի աղիւսակէն: ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ խումբագրատունը լայն բացած էր իր դռները կազմակերպուելու տրամադիր խմբակցութիւններուն առջեւ, անխտիր. ո՛չ մէկ վերապահութիւն հասկնալի կրնար ըլլալ՝ Քրիսեանի մտածողութեամբ: Ան եւրոպական առումով եւ նման կազմակերպութեամբ միութիւն մը կ'ուզէր իրականացած տեսնել: Առաջին համաժողովի հրաւերը յատուկ շրջաբերականով մը յղուած է Պոլսոյ բոլոր ակումբներուն եւ վարժարաններուն: Շրջաբերականին կըցուած են յատուկ հարցարաններ, անջատաբար, մարզական ակումբներու եւ վարժարաններու մասին՝ բնութային, ծրագրային եւ թուական բաժիններու տեղեկութիւններով — [Բ.219]: ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ մէջ լոյս կը տեսնէ նաեւ ժողովի օրակարգը — [Բ.235]:

Հայ մարմնամարզական միութեան կազմութեան օրակարգով գումարելի առա-

ըին ժողովին՝ 29 Յուլիս, 1912-ին, հրա-
ւիրուած ակումբներու եւ վարժարաններու
կարեւոր տոկոսի մը բացակայութեան
պատճառով համաժողովը կը յետաձգուի 1
Օգոստոսին, սակայն, կրկին ակումբներու,
վարժարաններու եւ մամուլի մէկ մասը
անտարբեր կը գտնուի: Քրիսեան հետեւ-
եալը կը գրէ երկրորդ յետաձգումէն ետք.

«Ըստ մեզ, բոլորովին սխալ է անպատճառ
յուսալ թէ կարելի է ամէն բան շարժել. անոնք
որոնք համաժողովի մը օգտակարութեանը հա-
մոզուած էին, արդէն պատասխանեցին, եւ բոլոր-
ովին անտեղի է միւս չի պատասխանող
ակումբներուն կամ վարժարաններուն եւ թերթե-
րուն քմահաճոյքին կապել գործ մը՝ որուն օգ-
տակարութիւնը եթէ ըմբռնէին, արդէն ցարդ
պատասխանած ըլլալով պատճառ չէին դառնար
անտեղի ձգձգումներու, որ վերջապէս սկսած է
գէշ ազդել հասարակութեան այն մասին վրայ՝
որ մեզէ գործունէութիւն եւ օգտակարութիւն
միայն կակնկալէ եւ իրաւամբ:

Հետեւաբար, առժամեայ մասնախումբը
պէտք է փութայ ժամ առաջ համաժողովը գու-
մարելու, հոգ չէ թէ փոքր թուով պատգամա-
ւորներու ներկայութեան, որոնք աւելի օգտակար
կրնան ըլլալ քան երեսակայական ամբողջութիւն
մը՝ որ չի գար եւ որ թերեւս ալ պատճառ ըլլայ
արդէն եղած թուոյն նուազելուն» — [Բ.300]:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ յաջորդ թիւին մէջ
Քրիսեան յօդուած մը կը ստորագրէ՝ «Հայ
Մարմնամարզական Միութեան Կատարելիք
Գործը» վերնագրով, ուր ազգային բոլոր
կառոյցները եւ պատասխանատու անձերը
գիտակցութեան կը հրաւիրէ, շեշտը դնելով
նախաձեռնուած միութեան կարեւորութեան
վրայ, եւ կը յայտնէ, թէ ինք «ձեռնարկած
է հիմնել հայ մարմնամարզական ընդ-
հանուր միութիւն մը», թուելով անոր նպա-
տակի հինգ կէտերը.

«Ա.— Ընդհանուր հայութեան մէջ ֆի-
զիքական դաստիարակութեան ճաշակը ար-
թընցնել եւ տարածել:

Բ.— Հետամուտ ըլլալ վարժարաններու մէջ
անոր դասաւանդութիւնը պարտաւորիչ դար-
ձընելու:

Գ.— Ընդհանուր հայութեան մէջ մարմնա-
մարզական ակումբներ կազմելու աշխատիլ:

Դ.— Տարեկան հայկական Ողիմպիական
Խաղեր կազմակերպել:

Ե.— Հայկական Ողիմպիական Խաղերուն
Լաւագոյնները Միջազգային Ողիմպիական Խա-
ղերուն ուղարկել — [Բ.311]:

Աւելին, «ՄԱՐՄՆԱՄԱՐՁ»ի Գ. տար-
ուայ թիւ 4ի խմբագրականով, Քրիսեան
կ'ուրուագծէ զայն՝ անուանելով «Հայ
Մարմնամարզական Ընդհ. Միութիւն եւ
Հայ Սքառուղներ» եւ զայն ներկայացնելով
որպէս «Երկու նոր ուժեր»ով սկսուած «Հայ
ցեղին բարոյական եւ ֆիզիքական ազ-
նըւացման աշխատելու» կոչուած շար-
ժում — [Բ.61]:

Նոյն թիւի էջ 78ի մէջ կը գտնենք «Հայ
սքառուղներու կազմակերպութեան առժամ-
եայ տնօրէն ժողովոյ» յայտարարութիւն մը
ուր տրուած են ժողովականներուն անուն-
ները եւ նստավայր ճշգրտած է ՄԱՐՄ-
ՆԱՄԱՐՁԻ խմբագրատունը — [Բ.78]: Իսկ
յաջորդ թիւ 5ի առաջնորդող յօդուածով
Քրիսեան նոյնիսկ կ'աւետէ Հ.Մ.Ը.Մ.ի
կազմութիւնը եւ անոր գործունէութիւնը
սահմանող առաջարկներ կը ներկայացնէ:
Իսկ էջ 86ի յայտարարութեամբ մը՝ Միութե-
ան անդամ արձանագրուելու հրաւեր մը
կ'ուղղէ — [Բ. 83-86]:

Հ.Մ.Ը.Մ.ը ՏԵՍԱԿԱՆՑՐԷՆ հիմնուած է:

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ — ԱՊՐԻԼԵԱՆ
ԵՂԵՌՆ — ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍԵԱՆԻ ՆԱՀԱՏԱ-
ԿՈՒԹԻՒՆԸ

Ներկայ էջերուն նպատակը չէ խօսիլ
Առաջին Համաշխարհային Պատերազմի մա-
սին: Սակայն նկատի ունենալով անոր

անմիջական եւ հիմնական ազդեցութիւնը Հ.Մ.Ը.Մ.-ի կազմութեան վրայ, հարկ է նշել, թէ ինչպէս հայ կեանքի բոլոր մարզերուն մէջ, նոյնպէս մարզական եւ սկառտական շարժումները ստիպողական կասեցման ենթարկուեցան: Գաւառը պարպուեցաւ հայութենէն, իսկ Պոլիսն ու շրջակայքը թատր դարձան իրենց պատեանին մէջ ապաստանած հայ ազգի զաւակներուն մեկուսացման եւ հայ շունչի սառեցման:

1915-ի Ապրիլեան Եղեռնը եւ հայ զանգրւածներու տաղահանումը մոռցնել տուաւ առօրեայի բոլոր մտահոգութիւնները, երբ թշնամի սպանդէն ազատած հատ ու կտոր հայորդիներ ինքզինքնին գտան Սուրիոյ եւ Միջագետքի անապատներուն մէջ ցրուած ու յաւէտ կորստեան դատապարտուած: Անոնցմէ բախտաւորները ինքզինքնին նետեցին եւրոպական ափերը կամ ուղղուեցան դէպի Ամերիկայի զանազան երկիրները:

Հ.Մ.Ը.Մ.-ի անփոխարինելի կորուստը պիտի ըլլար իր հիմնադիրին եղբրական նահատակութիւնը: Պոլսոյ հայ ընտրանիին շարքին Շաւարշ Քրիսեանն ալ Այաշի բանտը առաջնորդուեցաւ 1915-ի Ապրիլ 24-ի գիշերը:

Քրիսեան առնական ու քաջարի կեցողաճքով դիմագրաւեց իրեն դէմ եղած դաւադրութիւնը: Այաշի բանտի անտանելի պայմաններուն մէջ անգամ, անոր կազմակերպչական ոգին ու մարզանքի կարեւորութեան համոզումը, մինչեւ վերջին պահը զինք մղեցին դժբախտ ճակատագիրը դիմագրաւելու խիզախ կեցողաճքով: Բանտարկեալի զբօսանքի ժամերը Շաւարշ լեցուց մարզանքով, ու իր ութսուն բախտակիցներուն պահ մը մոռցնել տուաւ սպաննացող չարիքի նողկանքը — [ԿԵ.]:

Քրիսեանի «յանցանքն» էր՝ իր յօդուածներով հայ երիտասարդ սերունդը դէպի ազգային գիտակցութիւն, ֆիզիքա-

կան հզօրացում եւ մարզական ու սկառտական շարժումներ առաջնորդելը: Կատարեալ գիտակցութեամբ եւ սառն սրտով քաջագուն հայորդին ընդունեց հայ մարզիկի արեան մկրտութիւնը: Եղեռնի ճամբուն վրայ՝ նոյն ճատատարգին պիտի ենթարկուէին յայտնի մարզիկներ՝ Գալուստ Արխանեան, Հայկ Ծօլօլեան: Բազմահարիւր խոստմնալից երիտասարդ ուժեր, թրքական բանակի ծառայութեան միջոցին, դժուարին պայմաններու տակ իրենց ծաղիկ հասակները զոհեցին:

ԶԻՆԱԴԱԴԱՐ — ՏԱՐԱԳՐԵԱԼ ՀԱՅԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՊՈԼԻՍ-ՊՈԼՍՈՅ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ

1918-ի Նոյեմբեր 11-ին, Համաշխարհային Ա. Ընդհանուր Պատերազմը վերջ կը գտնէր յայտարարուած զինադադարով: Թուրքիա, իբր պարտուած պետութիւն, իր հողին վրայ պիտի ընդունէր դաշնակից յաղթական երկիրներէն՝ Ֆրանսական եւ անգլիական ուժեր: Այս երեւոյթը քաջալերական ապահովութիւն մը կը ներշնչէր պոլսահայութեան եւ աքսորէն վերապրող ու Պոլիս հաստատուող բազմութիւններուն, որոնք անորոշ ճակատագրի մը ճամբուն՝ իրենց ապրուստը կը հետապնդէին:

Բազմահազար հայեր տարագրեալներու կայաններու մէջ կեանք մը վարելու դժուարին օրերը կ'ապրէին. պոլսահայութիւնը իր պաշտօնական եւ ժողովրդական բոլոր միջոցներով կը փորձէր օգնութեան ձեռք երկարել իր դժբախտ հայրենակիցներուն:

Միւս կողմէ, Գաւառէն փոխադրուած տասնեակ հազարաւոր հայ որբեր՝ Պոլսոյ զանազան որբանոցներուն մէջ տեղաւորուած, կեանքի դէմ ամէնօրեայ գոյութեան պայքար կը մղէին: Ամէն կողմ՝ սնունդի, դեղորայքի, դարմանումի եւ զգեստաւոր-

ման հրամայականներուն առջեւ, պոլսահայու թիւերը անկարելին կը փորձէր յաջող-
 ցընել: Համաճարակներէ պաշտպանելու հա-
 մար պէտք էր պատուաստել այս դժուար
 պայմաններուն մէջ կայք հաստատած հա-
 յորդիները: Սնունդ ապահովելու համար
 միջոցներ պէտք էր փնտռել: Զմեռնային ե-
 դանակի դժուարութիւնները դիմագրաւե-
 լու համար պէտք էր զգեստաւորել ամէն կար-
 գի ու տարիքի պատսպարեալները: Նոյն-
 պէս, ցուրտի դէմ պաշտպանուելու համար
 միջոցներ պէտք էր խորհիլ: Տակաւին կը
 մնար գլխաւորը՝ դպրոցական տարիքի մա-
 նուկները հաւաքելով անոնց ուսումնական
 եւ դաստիարակչական կարիքները հոգալ:

Ահա այս անսահման կարիքներուն դի-
 մաց կը գտնուէին Գրիգոր Յակոբեան ու իր
 ընկերները՝ իւրաքանչիւրը իր կողմէ օգ-
 տակար գործ մը ընելու ճիգով կլանուած:

ՔՐԻՍՏԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Գրիգոր Յակոբեանի ու իր ընկերներու
 միտքը կը զբաղէր նաեւ նահատակ Շաւարշ
 Քրիսեանի բարոյական կտակով: Պատե-
 րազմը վերջ գտած էր, բայց անզուգական
 Շաւարշը չկար: Կա՛ր սակայն, անոր գոր-
 ծադրելի կտակը՝ հայ մարզական բոլոր
 շարժումները կեդրոնացնել մէկ եւ ընդ-
 հանուր միութեան դրօշին տակ: Այս կտակի
 կազմաւորման նպաստած էին նաեւ Գրիգոր
 Յակոբեան ու ընկերները, պատերազմէն ալ
 առաջ: Հիմա յուսատու օրերու նախա-
 տեսութեամբ, անոնք կը մտածէին՝ իւրա-
 քանչիւրը իր կարգին կազմակերպչական
 գործի լծուիլ: Նախապատերազմեան ղեկա-
 վար ընտրանիի բացակայութեան, նորերու
 առջեւ ասպարէզ կը բացուէր:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հ.Մ.Ը.Մ.-ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

- ՀԻՄՆԱԴՐ ՍԵՐՈՒՆԴ — ՀԻՄՆԱԴՐ ԱՆԴԱՄՆԵՐ
- Հ.Մ.Ը.Մ.-ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՔԹԸ — ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՆԵՐ, ՀՐԱԻԷՐ, ԹՈՒԱԿԱՆ, ՎԱՅՐ, ՆԵՐԿԱՆԵՐ
- ԱԶԳԱՅԻՆ ՎԱԻԵՐԱՑՈՒՄ — ԻՐԱԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ
- ԱՆՈՒՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ

ՀԻՄՆԱԴՐ ՍԵՐՈՒՆԴ — ՀԻՄՆԱԴՐ ԱՆԴԱՄՆԵՐ

Մինչ պոլսահայուլթիւնը կը վերակազմակերպուէր, անդին՝ Մայր Հայրենիքի հողին վրայ, շատ սեղմ սահմաններու մէջ, հայ պետականուլթիւնը օրհասական պայքար կը մղէր նորանկախ հայրենիքը հաստատ հիմերու վրայ դնելու առաջադրուլթեամբ: Ամէն օր քաջալերական լուրեր կը հասնէին հայրենիքէն: Հայ երիտասարդուլթիւնը հայրենիքի ծառայուլթեան կոչելու կարգախօսը օրուայ հրատապ հարցը կը մնար:

Այդ օրերուն, Գարեգին Նժդեհ կը գրէր. «Երբ կայ մարզական շարժում առանց մարզական մշակոյթի, քիչ բան արժէ այն սփորը որ գործ ունի դնդերների հետ միայն: Այս պատճառով ալ չի կարելի սփորի դեկավար լինել առանց ծանօթ լինելու կենսաբանութեան, հոգեբանութեան եւ մարդակազմութեան: Քանի դեռ կայ հայրենիքի պաշտպանութեան հարկադրանքը սփորը կը մնայ զօրաւոր եւ թրծուած սերունդների գոյութեան անհրաժեշտութիւնը... Արա միջոցով ազգերը ճգնում են ստեղծել կորովի քաջ եւ հայրենասէր երիտասարդութիւն»:

Ահա այս մթնոլորտին մէջ, նախապատերազմեան մարզանքի եւ սկաուտուլթեան վարիչներ Պոլսոյ կեանքը վերակազմակերպելու տազնապը կ'ապրին: Նախապատերազմական հանդիպումներ եւ կարծիքներու փոխանակուլթիւններ իրար կը յաջորդեն: Բոլորին մտքին մէջ «բան մը ընել»ու կարիքը կայ: Անոնք՝ Շաւարշ Քրիսեանի տեսիլքին ժառանգորդ՝ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադիր սերունդը կը կազմեն եւ կը կոչուին՝

Գրիգոր Յակոբեան. Ծանօթ մարզիկ, սկաուտապետ եւ մարզիչ: Քրիսեանի անմիջական գործակից: Հիմնադիր հայ Մարմնամարզարանի սկաուտուլթեան:

Յովհաննէս Հինդլեան. Համբաւաւոր դաստիարակ, տնօրէն: Սկաուտուլթեան գաղափարախօս:

Տիգրան Խոյեան. Հայ Կղզիի (Բրօթի) Ֆուլթպոլի խումբի մարզիկ: Վկայեալ թըրքական պետական սպայից վարժարանէն:

Հայկ Ճիգմէնեան. Նշանաւոր աթլետ, մարզասէր եւ կազմակերպչական առաքինուլթիւններով օժտուած գործիչ:

Գառլօ Շահինեան. Վկայեալ մարզիչ, հիմնադիր Հրատ մարզական ակումբին եւ սկաուտական խումբերուն:

Վահրամ Փափագեան. Երկար վազքերու ախոյեան եւ միացեալ ակումբի մը կազմուլթեան ջատագով:

Յ.Ճ.Սիրունի (Ճօլլեան). Համբաւաւոր հանրային դէմք եւ ազգային խանդավառ գործիչ:

Ժիրայր Խորասանեան. Լայն շրջանակի տէր, երիտասարդ մարզասէր:

Բիւզանդ Կեօզիպէոյիւբեան. Նշանաւոր մարզիկ, տնօրէն որբանոցներու կեդրոնական մարմնի:

Լեւոն Յակոբեան. Փայլուն մարզիկ եւ խանդավառ մարզասէր:

Հիմնադիր սերունդի այս հոյլին կը պատկանին նաեւ՝ Վահան Զերազ, Գրիգոր Մերձանօֆ, Եզնիկ Քաջունի, Եղիշէ Քաջունի, որոնք այդ օրերուն Պոլիսէն դուրս կը գտնուէին:

Մարտի 15, 1935

Ֆրանսիացիներ

Միտքի աղբյուրի մասին!

Հարգելի, արևը արևը մեր
 հայրենիքի մասին ասում է,
 և հարգանքով ասում է, որ
 մենք այնպես ենք:

10-րդ դարից հետո... իմ մտքի
 մասին չեմ կարողանում
 ասել, որ այն... անհայտ
 է, որ այն... անհայտ է,
 որ այն... անհայտ է, որ
 այն... անհայտ է, որ այն...
 անհայտ է, որ այն... անհայտ է,
 որ այն... անհայտ է, որ այն...
 անհայտ է, որ այն... անհայտ է,
 որ այն... անհայտ է, որ այն...
 անհայտ է, որ այն... անհայտ է,

Երբ մենք ասում ենք, որ մենք
 ենք հայեր, մենք ասում ենք,
 որ մենք հայեր ենք, որ մենք
 հայեր ենք, որ մենք հայեր ենք,
 որ մենք հայեր ենք, որ մենք
 հայեր ենք, որ մենք հայեր ենք,
 որ մենք հայեր ենք, որ մենք
 հայեր ենք, որ մենք հայեր ենք,

- 1. Մեր հայրենիքը
 - 2. Մեր հայրենիքը
 - 3. Մեր հայրենիքը
 - 4. Մեր հայրենիքը
 - 5. Մեր հայրենիքը
 - 6. Մեր հայրենիքը
 - 7. Մեր հայրենիքը
 - 8. Մեր հայրենիքը
- Մենք ասում ենք, որ մենք
 հայեր ենք, որ մենք հայեր ենք,
 որ մենք հայեր ենք, որ մենք
 հայեր ենք, որ մենք հայեր ենք,

Խոյեանի 15 Փետրուար 1935 թուականակիր ամսակէն
 հատուածներ: Նամակը՝ ուղղուած ֆրանսայի
 Հ.Մ.Ը.Մ.ի Երջանային Սկաուտ խմբապետ
 Փիրայր Մինթանճեանին, ի միջի այլոց կը յիշէ
 Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան արթի միտին
 Աերկայ գտնուած անձերու անունները:

Հ.Մ.Ը.Մ.-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՔԹԸ*
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ,
ՀՐԱԻԷՐ, ԹՈՒԱԿԱՆ, ՎԱՅՐ, ՆԵՐԿԱՆԵՐ

Դժուար է ժամանակագրական ճշգրիտ
չարքով արձանագրել նախապատրաստական
հանդիպումներու եւ ժողովներու ժապա-
ւէնը: Ահա թէ ինչ են արձանագրած այս
մասին հիմնադիր սերունդի անդամներէն
ոմանք:

«Խորհրդակցական ժողովը գումարուցաւ
որոշեալ օրը, 1918 Նոյեմբեր 16-ին Հինգշաբթի
երեկոյեան, Յակոբեան եղբայրներու գրասեն-
եակին մէջ, Վիթալի Խան, Պոլիս»: * — *Տիգրան
Խոյեան* — [ԺԳ. 30]:

«Առաջին անգամ գումարուցաւ 1 Նոյեմբեր
1918-ին, 9 հոգիի ներկայութիւնով...»: Հ.Մ.
Ը.Մ. — [Գ.7]:

«1918 Հոկտեմբերի վերջերուն Տիգրան
Խոյեանը եկաւ ինձի... եւ ըսաւ. «Հայկ, Գրիգոր
Յակոբեանն ալ համաձայն է որ հաւաքուինք մէկ
մը... ամէնէն կարճ միջոցին մէջ զիս իր մօտ կը
հրաւիրէր» — *Հայկ Ճիգմէճեան* — [ԺԱ. 93]:

«Հայկ Ծիգմէճեանի դրկուած այս տոմսին
տակ թուական չկար եւ ես չկրցայ ճշդել ճիշդ
օրը, միայն Նոյեմբերի մէջ ըլլալը կը յիշեմ»: —
Կարօ Ուշագլեան — [ԺԱ. 94]:

«Առաջին աշխատանքը բարեկամի մը հետ
ունեցանք մեր տունը... Նոյեմբեր 1-ին էր որ մեր
գրասենեակին մէջ տեղի ունեցաւ պատմական
նիստը»: — *Գրիգոր Յակոբեան* — [ԺԱ. 95]:

Վերոյիշեալ վկայութիւններու պաշտօ-
նական եւ հնագոյն արձանագրութիւնը,
Միութեան պաշտօնաթերթ՝ «Հայ Սկա-
ւուտ»-ի առաջին թիւին մէջ տրուած է.
«Գրիգոր Յակոբեանի նախաձեռնած, Հ.Մ.

Ը.Մ.-ի կազմութեան հիմնադիր ժողովը տեղի
կ'ունենայ 1 Նոյեմբեր 1918-ին, 9 հոգիներու
ներկայութեամբ» — [Գ.7]:

Ներկաներու մասին, ըստ բոլոր աղ-
բիւրներուն՝ ներկայ եղած են Գրիգոր Յա-
կոբեան, Հայկ Ճիգմէճեան եւ Լեւոն Յա-
կոբեան:

Ըստ Տիգրան Խոյեանի՝ վերոյիշեալ
երեքէն դուրս ներկայ եղած են նաեւ Տիգ-
րան Խոյեան, Ժիրայր Խորասանճեան,
Գառլօ Շահինեան, Յ.Ճ. Սիրունի եւ Վահ-
րամ Փափազեան: (Տե՛ս Խոյեանի նամակը
ուղղուած Մինթանճեանին):

Ըստ Վահրամ Փափազեանի՝ ներկայ
գտնուած են Գրիգոր Յակոբեան, Հայկ
Ճիգմէճեան, Լեւոն Յակոբեան, Վահրամ
Փափազեան, Վարազ Զուռնաճեան, Բիւ-
զանդ Կէօզիւպէօյիւքեան եւ Գրիգոր Մեր-
ճանօֆ — [ԺԴ. 27]:

Ինչպէս թուականի պարագային, ներ-
կաներու անունին շուրջ ալ յստակ տարբե-
րութիւններ կան, եւ կարելի է եզրակա-
ցնել, թէ տարբեր հաւաքոյթներու մասին է
խօսքը:

Կրկին, *Միութեան պաշտօնաթերթ*՝
«Հայ Սկաւուտ»ը որպէս ամենէն հին ու
հաւաստի աղբիւր նկատի առած, կ'եզ-
րակացուի որ հիմնադրութեան գործնա-
կան աքթին ներկայ գտնուած են Գրիգոր
Յակոբեան, Հայկ Ճիգմէճեան, Լեւոն Յա-
կոբեան, Տիգրան Խոյեան, Գառլօ Շահին-
եան, Վահրամ Փափազեան, Ժիրայր Խոր-
ասանճեան, Յ.Ճ. Սիրունի եւ իններորդ անձ
մը՝ որ կրնայ ըլլալ Վարազ Զուռնաճեան,
Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան կամ Գրիգոր
Մերճանօֆ:

* Մեր ստուգումներէն ի յայտ կու գայ թէ, 1918ի Նոյեմբեր 16ը Հինգշաբթի օր մը չէր, այլ՝ Ծաբաթ օր մը: 1918ի
Նոյեմբեր ամսուայ Հինգշաբթի օրերն են՝ 7, 14, 21 եւ 28:

Զանազան արձանագրութիւններու մէջ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան թուական նկատի առնուած Նոյեմբերի 16ը,
հաւանաբար կը վերաբերի Միութեան Անդրանիկ Ընդհանուր ժողովին որ տեղի ունեցած է 16 Նոյեմբեր 1919ին:
[Գ. 64]:

Այս նիստը Հ.Մ.Ը.Մ-ի ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
հիմնադրութեան աքթը կը համարուի:

ԱԶԳԱՅԻՆ ՎԱԻԵՐԱՑՈՒՄ — ԻՐԱԽԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Նորածին Հ.Մ.Ը.Մ.-ը հիմնապէս
մարզական եւ սկստական ասպարէզնե-
րուն պիտի ծառայէր: Այսուհանդերձ,
Պոլսոյ հայ իրականութիւնը, եղեռնէն ա-
զատած իր զանգուածներով, այլ կարիք-
ներու դէմ կը գտնուէր: Այդ պատճառով
ալ, հիմնադիրները իրենց առաջին ճիգերը
ուղղեցին դէպի որբախնամ, ընկերային եւ
բժշկական ծռայութեանց դաշտերը. համ-
ազգային մտահոգութիւններ՝ որոնց դար-
ման պիտի հասցնէին Հ.Մ.Ը.Մ-ի անդամ-
ները: Որպէսզի այս ծրագիրը ունենար
նաեւ Ազգային իշխանութեանց հաւանու-
թիւնը, Կեդրոնական Վարչութիւնը պաշտօ-
նական գիրով մը տեղեակ պահեց Պատ-
րիարքարանը՝ իր կազմութեան եւ նպա-
տակներու մասին, միաժամանակ հայցելով
իր վաւերացումը: 13 Դեկտեմբեր, 1918,
թուականը կրող իր պատասխանով, Պոլսոյ
Պատրիարքութիւնը, որուն իրաւասութեան
մէջ կ'իյնար, ըստ ազգային սահմանադրու-
թեան, հայ ազգային հարցերու վերին տնօ-
րինութիւնը, կը վաւերացնէ Հ.Մ.Ը.Մ.-ի
կազմութիւնը, յաջողութիւն մաղթելով
անոր աշխատանքներուն: Այս գիրը Միու-
թեան ԻՐԱԽԱԿԱՆ ճանաչումը պիտի դառ-
նար, նկատի ունենալով, որ Ազգային Սահ-
մանադրութեան երաշխաւորը թրքական
պետութիւնը ինքն իսկ էր, եւ հայ համայն-
քի վերաբերեալ պաշտօնական բոլոր կարգի
իրաւասութիւնները Պոլսոյ Պատրիարքու-
թեան կը պատկանէին:

ԱՆՈՒՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ

Նախորդ գլուխներու մէջ տեսանք, թէ
Քրիսեան արդէն յղացած եւ կանոնագրու-
թեամբ մըն ալ ծրագրած էր Հայ Մարմ-
նամարզական Ընդհանուր Միութեան մը
գաղափարը՝ Հ.Մ.Ը.Մ. անուանումով:

Միութեան հիմնադիրները անուն մը
ընտրելու դժուարութիւնը չունէին թէպէտ,
անոր նպատակներու բանաձեւումով հարկ
նկատեցին փոքր բարեփոխութիւն մը մըտ-
ցընել եւ «մարմնամարզական»-ը «մարմնա-
կրթական»-ով փոխարինել, յատկապէս այն
բացատրութեամբ, թէ՛ Ընդհանուր Միու-
թիւնը հայ մարզական միացեալ ազգամբ մը
չէր, այլ՝ անոր նպատակներուն մէջ կ'ամ-
փոփուէր յատկապէս հայ երիտասարդու-
թեան մարզադաստիարակչական բաժնին
ծառայելու հեռանկարը: «Մարմնամարզա-
կան» բառը բաւական չէր մեր իտեալը պար-
զելու համար, մեր որդեգրածը մարմնամարզը
չէր միայն, այլ՝ մարմնակրթութիւնը՝ իր լայն,
ամբողջական եւ բարերար իմաստով»: Այսպէս
կը գրէր Հայկ Ճիգմէճեան Հ.Մ.Ը.Մ-ի
հիմնադրութեան մասին իր յուշագրութեան
մէջ — [ԺԱ.96]: Այս բարեփոխութիւնը
կարեւոր էր նաեւ այն իմաստով, որ Միու-
թեան գործունէութեան ծրագրին գլխաւոր
մէկ մասը կը կազմէր սկստական շար-
ժումը, որուն դաստիարակչական-կրթական
իտէալներուն քաջածանօթ էին հիմնադիր-
ները:

Միութեան նպատակը յստակ էր բո-
լորին՝ «...Լայն եւ պարզ ծրագիրով մը սկսիլ
մարմնակրթանքի գործը եւ զայն մտցնել մաս-
նաւորապէս դպրոցներէ եւ հիմնելի որբանոց-
ներէն ներս»: Իսկ այս նպատակի իրագործ-
ման համար անոնք որոշեցին «խօսքէն
աւելի գործ ցոյց տալ առանց աղմուկի» —
[Ե.7]:

Բ. ՄԱՍ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ՄԻՆՉԵՒ ԱՌԱՋԻՆ
ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

- ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄ ԵՒ ՕԺԱՆԴԱԿ ԱՆԴԱՄՆԵՐ
- ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄ ԵՒ ՕԺԱՆԴԱԿ
ԱՆԴԱՄՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան ժողովներու շարքը եւ տիրող մթնոլորտը, որուն մէջ ան տեղի ունեցաւ, բաւարար են բացատրելու համար, թէ հիմնադիրները ինքնաբերաբար պիտի կազմէին Միութեան անդրանիկ Կեդրոնական Վարչութիւնը: Գործ կար կատարելիք եւ պաշտօնական ձեւականութիւնները մտահոգութեան նիւթ չէին կազմեր: Տակաւին՝ անդրանիկ կեդրոնական վարչութեան մը օրինաւորութիւնը պայմանաւորող վաւերացուած կանոնադրութիւն մըն ալ գոյութիւն չունէր: «Եօթը հոգի էինք միայն եւ մենք մեզ անուանեցինք Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն եւ Առյուծեւ եղանք առաջին կեդրոնական վարչութիւնը այդ Միութեան» — [ԺԳ. 36]: Այսպէս պիտի վկայէր աւելի ուշ, Տիգրան Խոյեան՝ առաջին Կեդրոնական Վարչութեան կազմին մասին, որը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը.

Գրիգոր Յակոբեան՝ ատենապետ
Տիգրան Խոյեան՝ ատենադպիր
Լեւոն Յակոբեան
Հայկ Ծիզմէճեան
Գառլօ Շահինեան
Վահրամ Փափագեան
Ժիրայր Խորասանճեան

«Տակաւին գանձ չուէինք որ գանձապահ ունենայինք...» — [ԺԳ. 36]:

Պաշտօնապէս ընտրուած առաջին կեդրոնական վարչութիւնը պիտի բխէր պատգամաւորական ընդհանուր ժողովէ մը, որուն կազմակերպումը տակաւին կանխահաս կը համարուէր: Մինչ այդ, գործին տարողութիւնն ու այլազանութիւնը, նաեւ զանազան շրջաններու վրայ բաժնուած անոր տարածքը՝ օժանդակ մարմիններու գործակցութիւնը պարտադիր կը դարձնէին:

Առ այդ, հիմնադիր վարչականները դիմեցին գաղափարակից փորձառու անհատներու գործակցութեան: Օժանդակ վարչականներու այս շարքին կը պատկանին՝ Յ.Ճ. Սիրունի, Գրիգոր Մերճանօֆ, Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան, Գրիգոր Ժօլօլեան, Արամ Նիկողոսեան, Վարազ Փողարեան եւ ուրիշներ: Անոնց մասնագիտական օժանդակութիւնները, իւրաքանչիւրը իր ճիւղին մէջ, ամէն գնահատանքէ վեր է:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Միութեան հիմնադրութեան աքթի յաջորդ օրն իսկ, Պոլսոյ հայատառ երեք թերթերու մէջ լոյս տեսաւ Հ.Մ.Ը.Մ.-ի կազմութեան լուրը աւետող հաղորդագրութիւն մը: Միաժամանակ, հիմնադիրները գոյգ ներկայացուցիչներով այցելութիւններ կազմակերպեցին Պոլսոյ հայաշատ թաղամասերուն մէջ՝ նիւթ ունենալով Միութեան նպատակը պարզել հայ երկսեռ երիտասարդ սերունդին:

Այսպէս, սկսելով՝ Սկիւտարի, Բերայի եւ Սամաթիոյ շրջաններէն, կիրակնօրեայ այցելութիւնները եւ զեկուցական հաւաքոյթները առիթներ ստեղծեցին տեղւոյն վրայ հիմնելու Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղեր եւ կատարելու անդամներու արձանագրութիւն: Տարին չբոլորած, կային արդէն շուրջ 25 մասնաճիւղեր, ուր կազմուեցան սկաուտական խումբեր: Հ.Մ.Ը.Մ.-ի կողմէ մարզիչներ տրամադրուեցան որբանոցներուն: Որբերու փոխադրութեան եւ տեղաւորման լայն բաժին բերուեցաւ: Ղալաթիոյ եւ Սկիւտարի մէջ հիմնուեցան ճրի դեղարաններ եւ շարժուն հիւանդանոց: Տարագրեալ հայոց կեդրոններու ծառայելու կոչուած այս ձեռնարկներու յաջողութեան՝ սկաուտներու դեղահաւաքումի ճիգերուն, նպաստեցին հայ եւ յոյն դեղարաններ եւ դեղապահեստի կեդրոններ: Բժշկական ծա-

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հ.Մ.Ը.Մ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

- Հ.Մ.Ը.Մ.-ի կեդրոնական վարչություն
կազմակերպության գործունեություն
- Սկանդինավյան գործունեություն
- Մարզական գործունեություն
- Տարեկան ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ
- ԶԱՀԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ, ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ, ՏՈՂԱՆՑՔ
- ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԱՆՕԹԱՑՈՒՄ ԵՒ ԵԼՈՅԹՆԵՐ
- ՆՇԱՆԱԲԱՆ, ՆՇԱՆԱԿ ԵՒ ՎԱՀԱՆ
- ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՀԱՅ ՍԿԱՌԻՏ
- ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
- ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԴԱԴԱՐ
- Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՒԾՈՒՄԷՆ ԵՏՔ

Հ.Մ.Ը.Մ.-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒ-
ԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷ-
ՈՒԹԻՒՆ

Հիմնադիր Կեդրոնական Վարչութիւնը իր առաջին եւ հիմնական մտահոգութիւնը դարձուց Միութեան գործունէութեան կազմակերպումը: Ամէն ինչ նոր էր, ու յաճախ գրաւոր ծրագրումներ կը պակսէին:

Յաջորդական Կեդրոնական Վարչութիւններ պարտադրուեցան շաբաթական զոյգ նիստերու վրայ բաժնել իրենց աշխատանքները: Այս նիստերուն առաջին շարքը կը տրամադրուէր ընդհանուր հարցերու քննութեան, մասնաճիւղերու վարչութեանց կազմի վաւերացման, պիւտճեկական, փոխյարաբերական միջազգային կապերու, հրապարակային ձեռնարկներու կազմակերպման, ստացուած նամակներու ընթերցումներուն եւ կատարուած աշխատանքներու զեկուցումներուն: Իսկ շաբաթական նիստերու երկրորդ շարքը ընդհանրապէս կը տրամադրուէր մասնաճիւղերէ եկած տեղեկագրերու ընթերցումին եւ շրջաններէն եկող այցելուներուն զեկուցումներուն:

Կեդրոնական վարչութեանց որոշումներուն դիւանային գործադրութիւնը վրստահուած էր կեդրոնի ընդհանուր քարտուղարութեան, իսկ այլ աշխատանքները կը տանէին կեդրոնական օժանդակ յանձնախումբերը: Այսպէս, կազմուած էին հետեւեալ կեդրոնական յանձնախումբերը եւ ենթալանձնախումբերը.

- 1.— Սկաուտական կեդրոնական յանձնախումբ
- 2.— Սկաուտական կեդրոնական ենթալանձնախումբ
- 3.— Շուէտական մարզանքի կեդրոնական յանձնախումբ
- 4.— Աթլետիկ մի կեդրոնական յանձնախումբ

5.— Ֆութպոլի կեդրոնական յանձնախումբ

6.— Փրոփականտի կեդրոնական յանձնախումբ:

Տարեկան ընդհանուր ողիմպիականներու առթիւ կեանքի կը կոչուէին նաեւ գործադիր կեդրոնական յանձնախումբեր՝ զանազան ենթաբաժանումներով:

Մասնաճիւղերու գործունէութեանց հսկողութիւնը կը կատարուէր քննիչ-դասախօսներու միջոցաւ, որոնք զոյգ առաքելութիւններով այցելութիւններ կու տային որբանոցներուն ու մասնաճիւղերուն՝ դասախօսելով կազմակերպչական, ազգային, մարզական, սկաուտական կամ այլ նիւթերու մասին. միաժամանակ, քննութեան կ'ենթարկէին նոյն վայրերու գործունէութիւնը, տոմարները եւ դիւանային դասաւորումները:

Կեդրոնական Վարչութիւնը իր որոշումները մասնաճիւղերուն կը հաղորդէր շրջաբերականներով: Այս շրջաբերականները պարագայաբար կը շօշափեն թեքնիք գիտելիքներու նիւթերը՝ մարզական կամ սկաուտական, նկատի ունենալով որ հայերէն յստակ դասագրքեր գոյութիւն չունէին տակաւին:

Պոլսոյ մարզական ակումբներու եւ որբանոցներու գրեթէ ամբողջութիւնը դարձած էին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր, սակայն կային տակաւին մի քանի պարագաներ, որոնց միացումը յատուկ աշխատանքի կը կարօտէր: Այսպիսի օրինակ մըն է հայ Մարմնամարզարանը (կարեւոր ակումբ մը) որուն ղեկավարներէն եղած էր Գրիգոր Յակոբեան, բայց տակաւին մինչեւ 1922-ի սկիզբը յիշեալ ակումբին միացումը չէր իրագործուած:

Կար նաեւ նոր մասնաճիւղեր կազմելու պարագան: Հ.Մ.Ը.Մ.ի հմայքը օրէ-օր կը ծաւալէր եւ Պոլսոյ հայաչատ զանազան թաղամասերուն մէջ նոր մասնաճիւղեր

հիմնելու կարելիութիւններ կը ստեղծուէին: Այս կարգի մասնաճիւղեր եղան Արմաշը, Մալկարան, Ռոստոսթոն, Պրուսան եւայլն, իսկ որբանոցները՝ ամբողջութեամբ, յատկապէս Գուլէլիի կեդրոնական որբանոցը:

Թուրքիոյ մէջ, զինադադարէն ետք, Իզմիրի ակումբը իր գործունէութեան վերսկսած էր աւելի կազմակերպուած եւ ծաւալուն ձեւով, սկսած էր մարզականին կողքին որդեգրելով նաեւ մշակութային եւ գեղարուեստական բաժիններ: Սակայն մարզական ճիւղը կը մնար ակումբի գործունէութեան գլխաւոր առանցքը: Առ այդ, Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութիւնը եւ Իզմիրի հայ մարզական ակումբները փոխադարձ հետաքրքրութիւններ ունէին: Իզմիրէն մարզիկներ մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան ընդհանուր ողիմպիական խաղերուն աթլետիզմի ճիւղին մէջ: Ֆութպոլի խումբն ալ հրաւիրուեցաւ մասնակցելու համահայկական ֆութպոլի մրցաշարքերուն, սակայն վերջին պահուն դժուարութիւններ արգելք հանդիսացան անոնց ներկայութեան:

Իզմիրի Հայ Պոյ Սկսուածներու Միութիւնը 9 Յունուար, 1922-էն սկսեալ, պաշտօնապէս միացաւ Հ.Մ.Ը.Մ.-ին: Այս միացման համար ալ սկիզբէն տարուած աշխատանքներուն պսակումը կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի լիազօր պատուիրակ՝ Թադէոս Մեծատուրեանի այցելութիւնը Իզմիր, ուր կը ստորագրուի միացման յատուկ համաձայնագիր: Կեդրոնական Վարչութեան որոշումով Իզմիր կը դառնայ Յոնիական շրջանի կեդրոն — [Դ. 206]:

Ներքին կազմակերպութեան եւ մասնաճիւղերու ցանցի կազմութեան կողքին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը տանի յարաբերական բեղուն աշխատանք: Վարչութեան ներկայացուցիչները՝ Գրիգոր Յակոբեան, Ժիրայր Խորասանճեան եւ Ար-

տաշէս Գաւանոզեան մաս կը կազմեն Պոլսոյ Միջ-Սկսուածական ժողովին (թուրք, հայ, յոյն, ռուս, հրեայ) կարեւոր օժանդակութիւն բերելով անոր ձեռնարկներուն (տողանցք, բանակում, եւայլն):

Հ.Մ.Ը.Մ.-ի կողմէ՝ Հայ Սկսուածական Միութեան անունով կապ կը հաստատուի սկսուածութեան հիմնադիր ժենեւրալ Ռ. Պէյտըն Փաուլի եւ Լոնտոնի միջազգային սկսուածական ճամբարին մասնակցող ազգերու պետերուն եւ խմբապետներուն հետ, անոնց ծանօթացնելով հայ սկսուածութիւնը:

Կեդրոնական Վարչութիւնը յատուկ նամակներով կապ կը հաստատէ Պոլսոյ հայ չորս կուսակցութիւններուն հետ, խնդրելով անոնցմէ, որ 18 տարեկանէն վար պատանիները չընդունուին իրենց շարքերէն ներս, չխաչաձեւելու համար Հ.Մ.Ը.Մ.ի սկսուածական գործունէութիւնը: Ս.Դ.Հ. Կուսակցութեան Պոլսոյ շրջանի գործադիր մարմինը, Հ.Յ.Դ. Պոլսոյ կեդրոնական կոմիտէն, Ազատական Կուսակցութեան Պոլսոյ նահանգային վարչութիւնը եւ Հայ Ռամկավար Կուսակցութեան Կ. Պոլսոյ շրջանային վարչութիւնը դրական գրութիւններով կը պատասխանեն սոյն խընդրանքին, միաժամանակ դրուատելով Հ.Մ.Ը.Մ.-ի գործունէութիւնը — [Դ. 47-48]:

Գործունէութեան այս սկզբնական շրջանը, Միութեան կառուցային կազմաւորման կողքին, նաեւ բարոյական կազմաւորման շրջանը պիտի դառնար: Այս իմաստով յաջորդական Կեդրոնական Վարչութիւնները իրենց նիստերուն նիւթ դարձուցին մասնաճիւղերու գործունէութեանց հսկողութիւնը: Մասնաճիւղերուն թելադրուեցաւ նախանձախնդիր ըլլալ հրապարակային ձեռնարկներու առթիւ ելոյթներու որակին եւ չբաւարարուող չխնամուած ելոյթներով: Նիւթական վճարումները իբրեւ խայծ ծառայեցնելով, մարզիկները չքաջալերել

արհեստավարժութեան եւ պահել Միութեան՝ զոհողութիւններու վրայ հիմնուելով նպատակները իրագործելու անշահախնդիր նկարագիրը: Այս նպատակով՝ «Հ.Մ.Ը.Մ.-ը եւ Փրոֆէսիօնելութիւնը» պաշտօնական յայտարարութեամբ Կեդրոնական Վարչութիւնը արգելեց մրցումներ կատարել խումբերու դէմ, որոնց շարքերուն արհեստավարժ խաղացողներ մաս կը կազմեն — [Դ.301]:

Կեդրոնական վարչութիւններու գործունէութեան նիւթական բաժինը միշտ ալ տկար եղաւ: Անդամավճարներէ գոյացած գումարները կարիքին մէկ աննշան տոկոսը կը կազմէին: Հետեւաբար, պարբերական հանգանակութիւններով Միութեան պիւտճէն կը փորձուէր հաւասարակշռել: Յատկանշական են որք սկաուտներու զգեստաւորման նպատակով կազմակերպուած գոգարտաբաշխումները, որոնք արժանացան հայ թէ օտար մամուլի, ինչպէս նաեւ ժողովրդական լայն քաջալերանքին: Սկաուտական հանգանակիչ խմբակներ դիմեցին ժողովուրդին՝ Հայաստանի սկաուտներուն համար հագուստներ եւ դրամ հաւաքելու համար: Գոյացած արդիւնքը Հայաստանի Օգնութեան Մարմնի (ՀՕՄ) միջոցով պիտի ուղարկուէր հայրենիք:

Իսկ նիւթական գործունէութեան հրսկողութեան համար հաշուական հետեւեալ ձեւը որդեգրուած էր. մասնաճիւղերը իրենց մուտքերու եւ «առաջարկ անդամակցութեան» թուղթերու պատճէնը կ'ուղարկէին Կեդրոնի համարակալութեան՝ առ ի քննութիւն:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան գործունէութեան իրականացումներուն մեծագոյնը պիտի ըլլար Մայր Հայրենիքի կառավարութեան կոչին անսալով, սկաուտ-մարզիչ պատուիրակութիւն մը դրկել՝ Հայաստանի մէջ սկաուտական շարժումի զարգացման եւ կատարելագործումին

նպատակով: Այս մասին պիտի անդրադառնանք «Առաքելութիւններ» յատուկ գլուխին տակ:

Կազմակերպչական գործունէութեանց այս բաժինը կը փակենք նշելով, որ հիմնադիր Կեդրոնական Վարչութեան մնայուն ճիգը եղաւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի կազմակերպումը: Այս շարքին առաջինը կայացաւ 16 Նոյեմբեր, 1919-ին:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՆԵՐ

Պոլսոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գործունէութիւնը երկու ճիւղերու կը բաժնուի. որբանոցներէ ներս գործունէութիւն եւ մասնաճիւղային գործունէութիւն:

Գաւառներէն տեղահանուած ու Պոլիս վերադարձող հազարաւոր որբերը ազգային մարմիններու միջոցով տեղաւորուեցան որբանոցներու մէջ: Սկիզբը բաժնուած Պէյլերպէյի, Ետի Գուլէի, Խասգիւղի, Առնաւուտ Գիւղի, Գարակէօզեանի, Արամեան, Պեզազեան, Մխիթարեան եւ այլ հաստատութեանց մէջ՝ Գուլէիի կեդրոնական որբանոցի կազմութեամբ Հ.Մ.Ը.Մ.-ի ըսկաուտական շարժումը որբանոցային շրջանակներէ ներս աւելի կարեւորութիւն ստացաւ եւ հիմնականօրէն կազմակերպուեցաւ:

Սկաուտութիւնը դարձաւ որբանոցներու, վարժարաններու եւ թաղային մասնաճիւղերու խումբերուն դաստիարակչական առաքելութեան առանցքը: Սկաուտական գիտելիքները, իրենց ստեղծած հետաքրքրութեամբ եւ գործնական օգտակարութեամբ, պատանիներու զարգացման նըպաստեցին:

Սկաուտական դաւանանքի յօդուածները, յատկապէս ընտանիքէ զուրկ հայ մանուկներուն, բարոյական դաստիարակութեան որպէս հիմ ծառայեցին ու հե-

տըզհետէ հասնող երիտասարդ սերունդ մը կազմաւորեցին: Սկառուտական տարազի զգեստաւորումը, որպէս կարգապահական արտաքին երեւոյթ՝ կեանքին նոր բացուող հոգիները ներշնչեցին, զինուորական ու մարտական ոգի արթնցուցին անոնց մէջ: Օրէ-օր բազմացող սկառուտական խումբերը ակամայ մրցակցութիւն ստեղծեցին ու բարի նախանձով մը առաջնորդեցին բոլորը: Հ.Մ.Ը.Մ.-ական խմբապետներ վարիչներ ու առաջնորդներ անցան գործի գլուխ: Ամէն ոք խանդավառ աշխատունակութեամբ կը փորձէր գերազանցել միւսը: Սկառուտական արշաւներ, տեսարժան կամ պատմական վայրերու այցելութիւններ, սկառուտական յատուկ դասախօսութիւններ կը զբաղեցնէին սկառուտները, միանգամայն նպաստելով անոնց զարգացման:

Այս կարգի չորս ընդհանուր արշաւներ կազմակերպուեցան Սկառուտական Կեդրոնական Յանձնախումբի կողմէ, 1919-1920 տարեշրջաններուն՝ հետեւեալ շարքով. Վէլի էֆէնտի, Գայիշ Տաղ, Չամլըճա եւ վերջինը 11 Յուլիս, 1920-ին՝ Քեաղըտհանէ, ուր արշաւանքի մասնակցող ընդհանուր խումբը նախապէս երեք բաժիններու բաժնուած՝ Բերա, Պէշիկթաշ եւ Ոսագիւղ, Շաբաթ գիշեր եկեղեցիներու շրջափակերուն մէջ մնալէ ետք, Կիրակի առաւօտ վերջին երկուքը Բերայի կազմը պիտի պաշարէին, որ նախապէս հասած պիտի ըլլար Քեաղըտհանէի հովիտը: Բնական է, որ այս ծրագիրը վերջին պահուն միայն՝ գոց պահարաններով հրահանգուած էր երեք խումբերու խմբապետներուն:

Սկառուտական յատուկ դասախօսական շարքեր կազմակերպուեցան Սկառուտական Կեդրոնական Յանձնախումբի կողմէ: Կեդրոնի սկառուտ խմբապետներ, Սկառուտական Կեդրոնական Յանձնախումբի կամ Կեդրոնական Վարչութեան անդամներ յաջորդաբար ստանձնեցին այս կարեւոր պարտակա-

նութիւնները, այցելելով որբանոցներն ու մասնաճիւղերը՝ սկառուտական եւ մարզական թեքնիք նիւթերու շուրջ դասախօսելու համար:

17 Ապրիլ, 1920ին, տեղի ունեցան սկառուտական ընդհանուր քննութիւններ՝ Սկիւտարի, Բերա-Շիշլիի, Գատը Գիւղի, Գում Գաբուի եւ Գուլէլիի կեդրոնական որբանոցներու սկառուտական յատուկ շարքերուն:

Պէոյիւք Տերէի ընդհանուր ցուցահանդէս-ճամբարը

Մասնաճիւղերու սկառուտական ելոյթները համադրելու եւ հաւաքական մեծ բանակումի մը իրականացման նպատակով՝ Սկառուտական Կեդրոնական Ոորհուրդը կազմակերպեց աստիճանաւորներու յատուկ երկու նախապատրաստական բանակումներ:

Առաջինը տեղի ունեցաւ 1 եւ 2 Յուլիս, 1922-ին, 320 աստիճանաւորներու մասնակցութեամբ, Մագրի Գիւղի Վելի էֆէնտի դաշտին վրայ: Երկօրեայ այս բանակումը իրագործուեցաւ խմբապետական թեքնիք յանձնախումբի մը կազմակերպութեամբ: Այս յանձնախումբի անդամներն էին Արա Տօմինեան, Մկրտիչ Մալումեան, Լեւոն Սարուխան եւ Լեւոն Գազանճեան: Բանակող աստիճանաւորներուն տրուեցան թեքնիք յատուկ դասախօսութիւններ՝ հետեւեալ ձեւով.

Արա Տօմինեան՝ բանակումի կրակ, փայտէ կամուրջի շինութիւն

Մկրտիչ Մալումեան՝ սկառուտական երգեր ու պարեր, ջուանով կամուրջի շինութիւն

Օննիկ Գովան՝ Ոարոյկի շուրջ պատմուածք

Լեւոն Գազանճեան՝ դրօշակի արարողութիւն եւ աղօթք



Գրիգոր Յակոբեան հրահանգներ կու տայ
Այ. խմբապետներուն՝ Պոլիս, 1920

Հայկ Ճիզմէճեան՝ ցուցահանդէս, ճամբարի ծրագիր եւ նախապատրաստական աշխատանքներ:

Երկրորդը տեղի ունեցաւ 29 եւ 30 Յուլիս, 1922-ին, Պէօյիւբ Տերէի «Նեկտարի» պարտէզին մէջ, ղեկավարութեամբ Արշակ Յակոբեանի՝ բանակումի պետ, Օննիկ Ֆրէնկեանի՝ բանակատեղիի պետ եւ Լեւոն Սարուսանի՝ բանակումի պետի օգնական:

Թեքնիք աշխատանքներուն հսկեցին եւ դասախօսեցին՝ Ալահվերտի եւ Լեւոն Սարուսան՝ խմբերգներ, վրաններու յարդարում եւ դրօշախօսութիւն

Արշակ Յակոբեան՝ աղօթք, դրօշակի արարողութիւն, հետախուզական խաղեր

Արա Տօմինեան՝ հիւղակի շինութիւն: Մկրտիչ Մալումեան՝ ջուանէ կամուրջի շինութիւն (չարունակութիւն)

Լեւոն Գազանճեան՝ խոհանոցի եւ ճեմիչի շինութիւն:

Եղան՝ մարզանք, խմբային դրութեամբ ճաշեր, փողահարներու փորձ, նախնական դարմանումի փորձ եւ առողջապահական կազմածներու քննութիւն, ցուցահանդէս, ճամբարի համար կարեւոր գոյքերու նախատեսութիւն — [Դ.362]:

Այս գոյգ նախապատրաստական բանա-



Պոլսոյ հիմնադիր սերունդի սկաուտ մարզիչներ, սկաուտական տախտակէ կամուրջի մը վրայ
Ջախէն աջ՝ Հայկ Ծիզմէնեան, Օննիկ Գոպան, Ֆրենկեան եւ Արտաշէս Ալահվերտի 1 եւ 2 Յուլիս 1922-ի
Վելի Էֆէնտիի աստիճանատրական բանակումին առթիւ նկարուած

կումները մեծ յաջողութեամբ պսակուեցան եւ քաջալերեցին ընդհանուր ցուցահանդէս-ճամբարը, որ տեղի ունեցաւ 8-էն 11 Սեպտեմբեր, 1922-ին, Պէոյիւք Տերէի մէջ: Չորս օրերու վրայ երկարող այս ընդհանուր բանակումի պետն էր Արշակ Յակոբեան, իսկ բանակատեղիի պետը՝ Մկրտիչ Մալումեան եւ ընդհանուր հսկիչը՝ Ներսէս Սերոբեան:

Հինգշաբթի առաւօտէն սկսեալ, բանակավայրը հետզհետէ կեանք ստացաւ: Առաջին հասնողը եղաւ Բերայի մասնաճիւղի կազմը, որուն հետեւեցան՝ Գարա-

կէօզեան, Պէյլերպէյ, Սկիւտար, Մազրի Գիւղ, Օրթա Գիւղ եւ Պէշիկթաշ 8 Սեպտեմբերին հասան որբանոցներու խումբերը, որոնց 1922-ի միջ-որբանոցային աթլէթիք մրցումները տեղի ունեցան յաջորդ օրը, նոյն վայրին մէջ:

Ցուցահանդէս-ճամբարի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Շաբաթ, 9 Սեպտեմբերին, կէսօրէ ետք ժամը երեքին, ընդհանուր տողանցքով մը, մասնակցութեամբ 3000 սկաուտներու, մարզիկներու եւ պաշտօնատար ղատաւորներու, որմէ ետք տեղի ունեցաւ ցուցահանդէսի բացումը, ուր ի

յայտ կու գային իւրաքանչիւր մասնաճիւղի ձեռային աշխատանքներու արդիւնքները՝ կամուրջներ, հիւղակներ, խոհանոցներ, ճաշարաններ, տաղաւարներ եւայլն:

Գիշերը տեղի կ'ունենայ խարուկահանդէս: Լուսավառ կրակի բոցերուն շուրջ կը կատարուին խաղեր, երգեր եւ պատմութիւններ՝ ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան, սկաուտական կեդրոնական յանձնախումբի եւ մասնաճիւղերու վարչութեանց անդամներուն, որմէ ետք հսկայ բանակավայրը կը մտնէ քուն:

Կիրակի, 10 Սեպտեմբերին, կեանքը կը վերսկսի բանակավայրէն ներս: Դրօշակի արարողութենէն ետք, հետզհետէ, կ'ընդունուին ծնողներ եւ հիւրեր, որոնք կ'այցելեն ձեռային աշխատանքներու տաղաւարները, մինչ խոհանոցներուն մէջ կը պատրաստուի կէսօրուայ ճաշը:

Կէսօրէ ետք կը հասնին պաշտօնական հիւրերը: Ժամը 2.30-ին, կը սկսի ընդհանուր տողանցք ի պատիւ հիւրերուն որմէ ետք՝ ցուցահանդէս, վրանի այցելութիւն եւ պաշտօնական խօսքերու փոխանակում: Միջազգային սկաուտութեան պետ Պէյտըն Փաուլի անունով խօսք կ'առնէ Պրն. Պերի եւ անոր նամակը կը յանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան: Խօսք կ'առնէ նաեւ գնդապետ Մաքսուէլ՝ Պոլսոյ միջազգային սկաուտական պետ, եւ մեծ դրուատիքով կ'արտայայտուի Հ.Մ.Ը.Մ.ի մասին՝ որպէս սկաուտութիւնը կատարելագործող կազմակերպութիւն:

Հիւրերու մեկնումէն ետք, չարաղէտ լուրեր կը հասնին՝ Իզմիր քաղաքի քրիստոնէութեան դէմ թրքական բարբարոսութիւններու մասին: Այս տեղեկութիւնները ճամբարի պատասխանատուները զգուշութեան կը հրաւիրեն: Թուրք խուժանը հրացանաձգութիւններով ցոյց մը կը սարքէ բանակատեղիին մօտ: Բանակումի խըմ-

բապետութիւնը, կանխելու համար ամէն հաւանականութիւն, անգլիական զօրքը իրենց պաշտպանութեան կը հրաւիրէ: Սկաուտները կը մտնեն քուն: Պատասխանատուները կը հսկեն մինչեւ լոյս:

Երկուշաբթի, մինչեւ կէսօր, բանակատեղին քանդուած է: Սկաուտները իրենց գոյքերով կը վերադառնան իրենց կեդրոնները: Մեծ խանդավառութեամբ սկսուած եւ կատարեալ յաջողութեամբ պսակուած այս ցուցահանդէս-ճամբարը կը փակուի տխուր մթնոլորտի մէջ:

Ընդհանուր այս գործունէութիւնէն դուրս, սկաուտական գործունէութեան գրչխաւոր բաժինը կը տարուէր մասնաճիւղերէ ներս, իւրաքանչիւրը իրեն յատուկ միջոցներով եւ պայմաններու տակ: Ոմանք՝ թաղային, ուրիշներ՝ որբանոցներէ ներս կազմակերպուած շարժումներով: Թուենք գլխաւորները:

Մագրիգիւղի մասնաճիւղը

Ունեցած է սկաուտական կազմակերպուած խումբ: Բանակումներու միջոցով իր սկաուտները վարժեցուցած է չարքաշ կեանք վարելու: Հրապարակային հանդիսութիւններով՝ նիւթապէս եւ բարոյապէս օժանդակած է որբախնամ հաստատութիւններուն — [Գ.96]: Իր վարիչներէն յիշատակելի է Հայկազն Պ. Աբէլեանը — [Գ.309]:

Պալթա-Լիման

Վոսփորի շրջանի զօրաւորագոյն սկաուտական կազմ ունեցող մասնաճիւղը: Հ.Մ.Ը.Մ.ի կազմութենէն ետք, Պալթա-Լիմանը առաջին խումբը կ'ըլլայ, որ 9 նոյեմբեր, 1919-ին, հրապարակային պաշտօնական հանդիսութեամբ մը՝ սկաուտական անդրանիկ երգման արարողութիւնը կը սարքէ:

Բերա-Շիշի

Պոլսոյ թիւ 2 մասնաճիւղը, կազմուած՝ Բերայի եւ Շիշիի զոյգ ակումբներու միացումով, 28 Մարտ, 1920-ին: Սկսուողական առաջին խումբեր կազմակերպող մասնաճիւղ: 25 Ապրիլ, 1920-ին, կը կազմակերպէ սկսուողական իր հունձքի երդման արարողութիւնը: Նոյն առթիւ տեղի կ'ունենայ աստիճաններու տուչութիւն: Իր տեսակին մէջ առաջին հանդիսացող այս տուչութեան առթիւ խմբապետի աստիճան կը ստանայ Արա Տօմինեան:

Գատը Գիւղ

Սկսուողական թեքնիք պատրաստութեամբ կազմուած մասնաճիւղ մը: Յաճախակի արշաւներով եւ ձեռային աշխատանքներով ելոյթներ ունեցած է: Մասնաճիւղի ղեկավարներէն կը յիշուի Պետրոս Թիւթիւնճեանը:

Ետի Գուլէի (Սբ. Փրկիչ) որբանոցի մասնաճիւղ

450 որբեր պատսպարող մասնաճիւղ մը, որու սկսուողական գործունէութեան օժանդակած է Օննիկ Եազմաճեան: Ամէն Շաբաթ օրերը, ան կը մարզէր որբերը եւ սկսուողական արշաւներ կը կազմակերպէր չարքաշ կեանքի վարժութեան ենթարկելով զիրենք: Սկսուողներու կռնակի պայուսակը քարերով լեցնել կու տար, որպէսզի անոնք ծանր կշռեն: Այս արշաւանքներու ընթացքին ազգային եւ յեղափոխական երգերը որբերու հոգիները կը թրծէին հայրենասիրական զգացումներով: Մասնաճիւղը զինադադարի առաջին տարեդարձին առի-

թով, 11 Նոյեմբեր, 1919-ին, որբանոցին մօտակայ՝ Ֆրանսական զինուորական կայանին առջեւ տողանցք մը կը կազմակերպէ արժանանալով բարձրաստիճան սպաներու հիացման ու քաջալերանքին: 1920-ի Չատկըլայ եկեղեցական արարողութիւններէն ետք, մասնաճիւղի սկսուողները նորընծայի երդումը կու տան:

Եսայեան որբանոց — Բերա

Սկսուողական շարժումին օժանդակած է Ժիրայր Մինթանճեան, 1912-էն սկսեալ:



Բերայի Եսայեան որբանոցի սկսուողներու անդրանիկ խոստման արարողութիւնը՝ 1920-ին

Գարակէօգեան Որբանոց — Շիշի

Այս մասնաճիւղի շարժումը վարած են, մինչեւ յատուկ սկսուող խորհուրդի մը կազմուելը՝ 1922-ին, յաջորդաբար՝ Վազգէն Անդրէասեան, Լեւոն Սարուխան եւ Մկրտիչ Մալումեան՝ տնօրէն Արամ Նիկողոսեանի քաջալերանքով:

Արամեան որբանոց — Գատը Գիւղ

Ներսէս Օհանեան հսկած է սկսուող-

կան շարժումին, որուն թեքնիք բաժինը ստանձնած են Մկրտիչ Մալումեան եւ Օննիկ Դարբինեան, մինչեւ Բ. կարգի պատրաստութիւնը:

Առնաւուտ Գիւղ

Տնօրինութեամբ՝ Վարդգէս Քաջունիի: Սկառտական գետնի վրայ, այս մասնաճիւղը մասնագիտացած է ձեռային աշխատանքներու զարգացումով, խմբապետութեամբ՝ Ներսէս Սերոբեանի եւ Նազարեանի:

Պեգազեան որբանոց-Մագրի գիւղ

Մինչեւ յատուկ սկառտ խորհուրդի մը կազմութիւնը, շարժումը վարած է Քերովբէ Ժպտունին:

Պալաթի մասնաճիւղ

Հրապարակային ելոյթներով եւ դասախօսութիւններով գործունեայ մասնաճիւղ մը:

Գում Գաբուի մասնաճիւղ

Նոյնպէս, դասախօսական շարքերով մարզանքն ու սկառտութիւնը հանրութեան ծանօթացնող եւ աշխատանքի մղող մասնաճիւղ մը — [Գ.32]:

Գուլէլիի կեդրոնական որբանոց

Վերոյիշեալ որբանոցներէն՝ Նտի Գուլէի, Գարակէօզեանի, Նսայեանի եւ Խասգիւղի փակումով, 1920-ի գարնան, կը կազմուի Գուլէլիի կեդրոնական որբանոցը:

Պոլսոյ անգլիական զինուորական հրամանատարութեան կարգադրութեամբ՝

Գուլէլիի պետական սպայից վարժարանի ընդարձակ շէնքերն ու կազմածները կը փոխանցուին հայ որբերուն: Թուրքերուն կը հրահանգուի այս հսկայածաւալ եւ գեղեցիկ շէնքեր պարունակող հաստատութիւնը՝ ուր կայացած ժողովներուն ընթացքին նիւթուած էր հայասպանութեան ծրագիրը, 12 ժամէն պարպել եւ փոխանցել հայերուն: Անմիջապէս, Նտի Գուլէի 450 որբերը կը փոխադրուին Գուլէլի: Սակայն պետական այս զիջումը ժողովրդական վըրդովում կը յառաջացնէ եւ թուրք դրացի բազմութիւնը կը փորձէ վերագրաւել Գուլէլիի սպայից վարժարանը: Հայ մարտիկներ, որոնք կանխաւ տեղեակ պահուած էին ժողովրդական այս տրամադրութեան մասին, կը յաջողին ճարպիկօրէն ձախողցնել երկիցս փորձուած յարձակողականները, հսկայ վնասներու ենթարկելով ըմբոստացած խուժանը: Թուրքերը փորձած էին խանգարել սպայից վարժարանի բոլոր կազմածները եւ նոյնիսկ տապալել դրօշակի հսկայ ձողը: Որբերուն առաջին գործը կ'ըլլայ՝ այդ ձողը ամրացնելէ ետք հոն բարձրացնել հսկայական մեծութեամբ հայկական Նուագոյնը:

Միւս որբանոցներու պատսպարեալներու փոխադրութեամբ, Գուլէլիի կեդրոնական որբանոցը կ'ունենայ 1500ի հասնող աշակերտութիւն, որոնք ամբողջութեամբ կը հետեւին սկառտական ծրագրուած աշխատանքի՝ Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեանի քաջալերանքով:

Սկառտական ամէն կարգի գործունէութիւն՝ արշաւներ, բանակումներ, մասնագիտական գիտելիքներու զարգացում, դասախօսական հաւաքոյթներ՝ սկառտական թեքնիք եւ ազգային հայրենասիրական նիւթերու շուրջ, տեւականօրէն կը զարգացնեն կեդրոնական որբանոցի պատըսպարեալները, անոնցմէ պատրաստելով առողջ եւ յանձնառու սերունդ մը:

Հ.Մ.Ը.Մ.ի սկսողական շարժումը Պոլսոյ մէջ պիտի շարունակուէր մինչեւ 1922-ի աշնան, երբ Միութեան գործունէութեան դադրեցման զուգահեռ, հայ որբանոցներու պատսպարեալները պիտի փոխադրուէին Յունաստանի զանազան շրջանները եւ կղզիները, հազիւ հիմ դնող գործունէութիւն մը անգամ մը եւս արմատախիլ ընելով եւ տարագրութեան դժուարին պայմաններուն ենթարկելով:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.՝ իբր էպէս մարզական կազմակերպութիւն, իր աշխատանքի գլխաւոր բաժինը բնականաբար կեդրոնացուց մարմնամարզի եւ մարզախաղերու կիրարկման վրայ, գործելով մասնաճիւղային եւ վարժարանային զոյգ շրջանակներուն մէջ:

Մարզական զանազան կեդրոնական յանձնախումբերը պարտականութիւն վերցուցին՝ իւրաքանչիւրը իր մասնագիտութեան մէջ, կեդրոնական վարչութիւններու գլխաւորութեամբ՝ մարզական շարժումը ստեղծել, զարգացնել եւ արդիականացնել:

Համաձայն Պոլսոյ թաղերուն մէջ գործող մասնաճիւղերու նախասիրութիւններուն եւ որդեգրած մարզաճիւղերուն, նախաձեռնուեցաւ անոնց զարգացումին թեքնիք յատուկ դասախօսութիւններու կազմակերպումով: Կեդրոնական յանձնախումբերու անդամները մասնաճիւղերու անդամակցութեան հանգամանքով, մարզումի թէ խումբերու կազմերուն մասնակցութեամբ, մեծ դերակատարութիւն ունեցան: Կազմակերպուեցան միջ-մասնաճիւղային եւ միջ-ակումբային մրցումներ ու մրցաշարքեր, որոնք ժողովրդական լայն խաւերու հետաքրքրութիւնը շարժեցին եւ կազմակերպութեան շուրջ համակրանքի եւ քաջալերանքի ալիքներ յառաջացուցին: Զօրաւոր

մրցակից խումբերու դէմ ելոյթներու պարագային՝ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերէն կազմուած հաւաքականներ ստեղծուեցան կամ մասնաճիւղերու խումբերը զօրացուեցան հայկական խումբերու հմայքը աւելի շեշտելով օտար շրջանակներու մէջ:

Յատուկ խնամքի արժանացաւ որբանոցներէ ներս մարզական գործունէութեան կազմակերպումն ու հսկողութիւնը: Մարզական յանձնախումբերը վարժարաններուն եւ որբանոցներուն սիրայօժար կերպով մարզիչներ տրամադրեցին: Անոնք պարտականութիւն վերցուցին այս հաստատութիւններու ֆիզիքական դաստիարակութեան բաժինը իրագործել: Ամէնօրեայ շուէտական մարզանքները առաւօտեան դասապահերէն առաջ, աթլետիք փորձերը իրենց նախնական դրութեամբ, որպէս պատանիի ֆիզիքական պատրաստութիւն՝ վազքերով, ոստումներով, եւ արձակումներով, ապագայ մարզիկի առողջ մարմիններու կազմութեան նպաստեցին: Նոյնպէս, Պոլսոյ ծովեզերեայ դիրքէն օգտուելով, ծովային ամէնօրեայ լողանքները որբերու մաքրութեան եւ բարեձեւ կազմերու տիրանալուն առիթներ կը ստեղծէին:

Մարզական գործունէութեան զարկ տուաւ նաեւ վարժարաններու եւ որբանոցներու ճրիաբար տրամադրուած գոյքերը, ինչը ընթացիկ պիտոճէներու պայմաններուն մէջ՝ հաստատութիւնները պիտի չյաջողէին իրականացնել:

Մարզական կեդրոնական յանձնախումբերը համոզուած էին, թէ Հ.Մ.Ը.Մ.ի ապագայի յաջողագոյն մարզիկները ի յայտ պիտի գային աշակերտական միջավայրերէն: Այս նպատակով ալ, ամէն ճիգ ի գործ դրուեցաւ լաւագոյնս յաջողցնելու վարժարանային մարզական եւ մարմնակրթական դաստիարակութիւնը: Կազմուեցան միջ-դասարանային խումբեր եւ վարժարանային հաւաքականներ, միջ-վարժա-

րանային մրցումներու մասնակցութեան համար:

Մարզական գործունէութեան յստակ պատկերացումին համար ստորեւ կու տանք Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու կողմէ կիրարկուող մարզական ճիւղերու միջ-ակումբային կամ միջ-մասնաճիւղային մրցաշարքերու եւ բարեկամական մրցումներու շարք մը արձանագրութիւններ:

Ֆութպոլ — 1919-ի մրցումներ

2 Նոյ.	Գատը Գիւղ — Մազապի	1-0
30 Նոյ.	Մազրի Գիւղ — Ֆրանսական զինուորական խումբ	0-1
30 Նոյ.	Գատը Գիւղ — Նէա Եէնիա	2-2
30 Նոյ.	Գում Գաբու — Ֆրանսացի զինուորներ	1-0
7 Դեկտ.	Մազրի Գիւղ — Թուրք զլիւս	2-0
21 Դեկտ.	Հ.Մ.Ը.Մ. — Ֆենէր Պահչէ	1-1

1920-ի եղանակ

7 Փետր.	Սկիւտար — Գատը Գիւղ	3-1
8 Փետր.	Հայ Կղզի — Գատը Գիւղ	4-0
22 Փետր.	Հայ Կղզի — Շիւլի	4-4
29 Փետր.	Գում Գաբու — Վոսփոր, Իրաւարար՝ Տ. Խոյեան	2-1
29 Փետր.	Հայ Կղզի-Սամաթիա, Իրաւարար՝ Ե. Խաչատուրեան	3-0
14 Մարտ	Գում-Գաբու-Սկիւտար, Իրաւարար՝ Օ. Ֆրէնկեան	3-1
21 Մարտ	Հայ Կղզի-Մազրի գիւղ, Իրաւարար Օ. Ֆրէնկեան	1-0
21 Մարտ	Բերա-Շիւլի-Գատը Գիւղ, Իրաւարար Ժ. Արսլանեան	4-0
28 Մարտ	Հայ Կղզի-Վոսփոր, Իրաւարար՝ Օ. Ֆրէնկեան	7-1
	Բերա-Շիւլի-Սկիւտար, Իրաւարար՝ Կ. Ասլանեան	5-0
4 Ապրիլ	Մազրի Գիւղ-Սամաթիա	2-0
18 Ապրիլ	Վոսփոր-Մազրի Գիւղ	2-0
25 Ապրիլ	Հայ Կղզի-Գում Գաբու, Իրաւարար՝ Ե. Խաչատուրեան	1-1
25 Ապրիլ	Ռոյըլ Սքօչ Ֆիւլիլթըրզ-Բերա-Շիւլի	3-1
2 Մայիս	Բերա Շիւլի-Գում Գաբու, Իրաւարար՝ Տ. Խոյեան	3-0

2 Մայիս	Գատը Գիւղ-Վոսփոր, Իրաւարար՝ Ժ. Արսլանեան	3-0
9 Մայիս	Խասգիւղ (Արծիւ), Հ.Մ.Ը.Մ Պալաթ	3-0
16 Մայիս	Գատը Գիւղ-Սամաթիա, Իրաւարար՝ Ժ. Եսայեան	5-0
23 Մայիս	Գատը Գիւղ-Ֆրանսական 122-րդ տիվիզիոն	2-1
2 Մայիս	Բերա-Շիւլի-Վոսփոր, Իրաւարար՝ Ա. Կուրտիկեան	5-1
6 Յունիս	Բերա-Շիւլի-Ֆրանսական խումբ Մազրի Գիւղ	3-0
6 Յունիս	Գում Գաբու-Սամաթիա, Իրաւարար՝ Ս. Պապիկեան	2-1
6 Սեպտ.	Իզմիր-Բերա-Շիւլի Իրաւարար՝ Ե. Խաչատուրեան	1-0
26 Սեպտ.	Հայկական հաւաքական-Ալթուն Օրտու	2-1
3 Հոկտ.	Հ.Մ.Ը.Մ-ի հաւաքական-Իրլանտական զինուորական խումբ	1-0
31 Հոկտ.	Էնօսիս (յոյն.)-Սկիւտար	1-0
12 Դեկտ.	Օրտինէնս (անգլ.)-Գում Գաբու	0-2

1920 տարուան ֆութպոլի մրցումներու այս ժապաւէնը ցոյց կու տայ, թէ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու տասնեակ մը կազմերը յարատեւօրէն մրցախաղը մշակած են եւ պաշտօնական ելոյթներով հրապարակ ելած:

1921-ի եղանակին յաճախակիօրէն կը հանդիպինք Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու հաւաքական խումբ կազմերու ելոյթներուն միջ-ակումբային մրցումներու մասնակցութեամբ:

17 Ապրիլ	Հ.Մ.Ը.Մ.-Հիւալ	0-0
22 Ապրիլ	Հ.Մ.Ը.Մ.-Հիւալ	2-0
24 Ապրիլ	Հ.Մ.Ը.Մ.-Ֆենէր Պահչէ	1-1
29 Մայիս	Հ.Մ.Ը.Մ.-Կալաթա Սերայ	1-2
16 Յունիս	Պէյլերպէյ որբ.-Գուլէլիի կեղր.որբ.	2-0
24 Յունիս	Պրուսա սկ.-Հելէն ծով. զին. խումբ	3-0
31 Յունիս	Պրուսա սկ.-Յոյն սկաուտներ	2-1

1921ի Հ.Մ.Ը.Մ-ի միջ-մասնաճիւղային ախոյեանութեան մրցաշարքը աւելի

կանոնաւոր կերպով կը կազմակերպուի եւ յատուկ դրութեամբ առիթ կը տրուի բոլոր մասնաճիւղերուն ախոյեանութեան տիտղոսին հասնելու:

Թեքնիք արդիւնքները՝

- 9 Հոկտ. 1921 Պէշիկթաշ-Մազրի Գիւղ, 0-0
Իրաւարար՝ Աստիկ Պաղտասարեան
- 9 Հոկտ. 1921 Վոսփոր-Սամաթիա, 1-1
Իրաւարար ժիւլէր Եսայեան
- 16 Հոկտ. 1921 Պէշիկթաշ-Մազրի գիւղ Առաջինը յաղթական երկրորդի բացակայութեան
- 23 Հոկտ. 1921 Իզմիր-Գատը Գիւղ, 1-1
Իրաւարար՝ Վահրամ Տօլապճեան
- 23 Հոկտ. Պէշիկթաշ-Վոսփոր, 1-1
Իրաւարար՝ Վարազ Փողարեան
- 30 Հոկտ. 1921 Պէշիկթաշ-Վոսփոր, 2-0
Իրաւարար՝ Օննիկ Ֆրէնկեան
- 6 Նոյ. 1921 Պէշիկթաշ-Իզմիր Չեղեալ՝ ուշացման եւ խումբէն դուրս խաղացողներու մասնակցութեան պատճառով:
- 13 Նոյ. 1921 Պէշիկթաշ-Իզմիր, 1-0
Իրաւարար՝ Վահրամ Տօլապճեան
- 20 Նոյ. 1921 Գում Գարու-Պէշիկթաշ, 2-0
Իրաւարար՝ Վարազ Փողարեան
- 27 Նոյ. Բերա-Շիշլի-Գատը Գիւղ, 1-0
Իրաւարար՝ Օ. Ֆրէնկեան
- 4 Դեկտ. 1921 Բերա-Շիշլի-Գում Գարու 1-1
- 11 Դեկտ. 1921 Բերա-Շիշլի-Գում Գարու 2-0

Բերա-Շիշլի՝ Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային ախոյեան:

Այս մրցաշարքը, որպէս հետաքրքրական նորութիւն, ախոյեանութեան տիտղոսին կողքին ունէր «Օրինամարզութեան դրօշակներ», որոնց տիրանալու համար նրկատի կ'առնուին հետեւեալ կէտերը.

Օրինակաւոր խաղարկութիւն՝	առաւելագոյնը	20 կէտ
Յարատեւութիւն՝	առաւելագոյնը	15 կէտ
Կարգապահութիւն՝	առաւելագոյնը	15 կէտ
Կոկիկութիւն՝	առաւելագոյնը	5 կէտ
Քաղաքավարութիւն՝	առաւելագոյնը	5 կէտ

Այս պայմաններու գործադրութեամբ մրցաշարքի երեք լաւագոյն կազմերը հանդիսացան՝ Պէշիկթաշ, Սամաթիա եւ Գում-

Գարու, եւ տիրացան Օրինամարզութեան դրօշակներու: Իսկ Բերա-Շիշլին ախոյեանութեան բաժակը ապահովեց: Նկատելի է, որ ախոյեան մասնաճիւղը նաեւ այլ մարզերու մէջ իր յաջողութիւններով լաւապէս կազմակերպուած եւ ղեկավարուող մասնաճիւղ մըն էր, ատենապետութեամբ՝ Լ. Ճգնաւորեանի եւ ատենադպրութեամբ՝ Յ. Թիւթիւնճեանի:

Աթլետիզմ

Աթլետիզմի կիրարկումը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մնայուն հոգածութեան առարկան դարձաւ: Եւրոպական առումով, կատարեալ կազմակերպութեամբ մրցումներ եւ ողիմպիական հանդէսներ կազմակերպուեցան: Դժբախտաբար դաշտերու, եւ գործիքներու անտրամադրելիութիւնը չէին արդարացնէր կազմակերպիչներուն յոյսերը:

Այս ճիւղի մրցումներէն յիշենք 1920-ի՝ ընդհանուր ողիմպիականի մասնակցութեան համար գտումի մրցումները.

25 Յուլիս (Սկիւտար), մասնակցութեամբ՝ Սկիւտարի, Գատը Գիւղի եւ Հայ կղզիի մասնաճիւղերուն:

Օրուայ թագուհի՝ Օրդ. Մելինէ Վահան:

Օրուայ ախոյեաններ՝ Սուրէն Անդրիասեան (Սկիւտար) եւ Սարգիս Գալուստեան (Գատը Գիւղ):

Յայտագիրին մաս կազմած են՝ 50 մ, 800 մ, 200 մ, 1500 մ, 400 մ եւ 3000 մ վազքեր

Սկաւառակի, նիզակի եւ գունտի արձակում

Ուժով եւ կեցած երկայնք ցատկել

Ուժով եւ կեցած բարձրութիւն ցատկել

Ձողով բարձրութիւն ցատկել

3 քայլ ոստում

Դրօշարշաւ եւ 10.000 մ հեծելանիւ

Իսկ կրտսերներու բաժնին մէջ՝ 200 մ եւ 50 մ վազքեր:

1920-ի զտումի միւս խաղերուն համար հետեւեալ բաժանումները նկատի առնուեցան.

Բերա-Շիշլիի մասնաճիւղի զտումի մրցումները

Գում Գարուի մասնաճիւղի զտումի մրցումները

Վոսփորի շրջանի զտումի մրցումները, մասնակցութեամբ Պէշիկթաշ, Օրթագիւղ, Վոսփոր եւ Պալթա Լիմանի մասնաճիւղերուն:

Մագրիգիւղի մասնաճիւղի զտումի մրցումները

Խասգիւղի շրջանի զտումի մրցումները, մասնակցութեամբ՝ Խասգիւղի եւ Պալթի մասնաճիւղերուն, առ ի պատրաստութիւն 1920-ի միջ-մասնաճիւղային Բ. ընդհանուր խաղերուն:

1921-ի ամրան կը սկսին մասնաճիւղային զտումի հետեւեալ խաղերը.

26 Յուլիս 1921. Գուլէլիի կեդրոնական որբանոցի աթլետիկ խաղեր

Յայտագիրը կազմուած էր, ըստ տարիքի՝ երեք դասակարգերու վրայ բաժնուած դրութեամբ.

Փոքրերու դասակարգի մրցումները եղան՝ 50մ, 100մ, 200մ, 400մ, պարկարշաւ, բարձրութիւն ցատկել, դրօշարշաւ եւ պարանաձգութիւն:

Միջակներու դասակարգ՝ 50մ, 100մ, 200մ, 400մ, 800մ վազք, բարձրութիւն, երկայնք, դրօշարշաւ եւ պարանաձգութիւն:

Մեծերու դասակարգ՝ 100մ, 400մ, 800մ, 1500մ, 4 X 100մ դրօշարշաւ, բարձրութիւն, երկայնք, ձողով բարձրութիւն, երեք քայլ ոստում, գունտ նետել, սկաւառակ արձակել, պարանաձգութիւն:

Օրուայ ախոյեաններ հանդիսացան.

Փոքրեր՝ Արիս Հաճի Արսլանեան

Միջակներ՝ Սուրէն Պարոնաւագեան
Մեծեր՝ Ներսէս Մանուկեան եւ Կարապետ Քիւբելեան:

Տեղի ունեցաւ ընդհանուր տողանցք որբանոցի նուագախումբի առաջնորդութեամբ:

31 Յուլիս 1921. Մագրիգիւղի մասնաճիւղ

Օրուայ թագուհին էր Օրդ. Վերժին Ժամկոչեան

Յայտագիրին մաս կը կազմէին՝ 50մ, 100մ, 400մ, 800մ, 1500մ, 3000մ վազքեր, գունտ նետել, երկայնք ցատկել (կեցած եւ ուժով), բարձրութիւն ցատկել (կեցած եւ ուժով) եւ երեք քայլ ոստում:

Օրուայ ախոյեան հանդիսացաւ Յարութիւն Բեքմէզեան:

7 Օգոստոս 1921. Սկիւտարի մասնաճիւղ

Խաղերը հովանաւորեցին՝ Տիկ. Տօքթ. Մաթիլտ Ճելալ եւ պատուոյ օրիորդներ՝ Վերժին Զաքըճեան եւ Երջանիկ Իսկենտէրեան:

Օրուայ հանդիսութեանց մասնակցեցան՝ Րաֆֆի Յառաջդիմական ակումբի նուագախումբը, Պէյլերպէյի որբանոցի սաները՝ բուրքերով եւ չափական մարզանքներով:

Փոքրերու բաժնի մրցումներն էին՝ 50մ, 200մ, 400մ վազքեր:

Աղջիկ սկառտներու (կայտ) բաժնի մրցումներ՝ 50մ, 200մ, 400մ վազքեր.

Մեծերու բաժնի մրցումներ՝ 50մ, 200մ, 400մ, 800մ, 1500մ վազքեր, գունտ նետել, սկաւառակ արձակել, երկայնք ցատկել, բարձրութիւն ցատկել, երեք քայլ ոստում, ձողով բարձրութիւն, քրօս քաունթրի եւ 10քմ. հեծելարշաւ:

Օրուայ ախոյեան՝ Սուրէն Անդրէասեան:

7 Օգոստոս 1921. Վոսփորի մասնաճիւղ (Առնաւուտ գիւղի դաշտ)

Նախագահութեամբ՝ Գ.Ծ. Վարդ. Իրանոսեանի:

Օրուայ թագուհի՝ Օր. Ա. Նաւասարդեան եւ Պատուոյ Օրիորդներ Ն. Խանճեան եւ Ա. Ճիլալեան:

Խաղերու բժիշկ՝ Տօքթ. Ս. Կարապետեան:

Յայտագրին մաս կը կազմէին՝ 50մ, 200մ, 400մ, 800մ, 1500մ, 3000մ վազքեր (3000մ վազքը դատական կազմի եւ օրուայ բժիշկին կողմէ արգելուեցաւ նկատի ունե-



Միջ-որբանոցային մրցումներու պարգևատրում

նալով մրցորդներու Ֆիզիքական վիճակը), դրօշարչաւ, բարձրութիւն, կեցած եւ ուժով երկայնք ցատկել, երեք քայլ ցատկել, ձողով բարձրութիւն, գունտ նետել, քար նետել, սկաւառակ նետել, նիզակ նետել, 50մ. պարկարչաւ, 10,000 մ. հեծելանիւ:

Օրուայ ախոյեան՝ Հրաչեայ Գալֆայեան:

Նկատառելի է, թէ այս խաղերու ընթացքին Վոսփորի մասնաճիւղի մարզիկները 7 մրցումներու մէջ մասնաճիւղի կամ համահայկական մրցանիշերը բարելաւած են:

14 Օգոստոս 1921. Սամաթիայի մասնաճիւղ (Սկիւտարի դաշտ)

Յայտագրին մաս կը կազմեն հետեւեալ մրցումները.

Վազքեր՝ 50մ, 400մ, 800մ, 1500մ եւ 3000մ:

Արձակումներ՝ գունտ, սկաւառակ եւ նիզակ:

Ոստումներ՝ բարձրութիւն, երկայնք, երեք քայլ եւ ձող:

Օրուայ ախոյեան հանդիսացաւ Ս. Վէլէտեան:

21 Օգոստոս 1921. Բերա-Շիշլիի մասնաճիւղ (Բերայի մարգադաշտ)

Յայտագրին մաս կը կազմեն հետեւեալ մրցումները.

Վազքեր՝ 100մ, 200մ, 400մ, 800մ, 1500մ, 5000մ, 100մ պարկարչաւ, 200մ փոքրեր:

Ոստումներ՝ բարձրութիւն, երկայնք, ձող, երեք քայլ:

Արձակումներ՝ նիզակ, սկաւառակ, քար նետել:

Ուշագրաւ է, թէ այս խաղերու ընթացքին մասնաճիւղի 13 մրցանիշերը բարելաւուած են:

Օրուայ ախոյեան՝ Գաբրիէլ Քէշիշեան:

4 Սեպտեմբեր 1921. Գում Գաբուի մասնաճիւղ Բերայի մասնաճիւղի դաշտին վրայ

Յայտագիր՝

Վազքեր՝ 100մ, 200մ, 400մ, 3000մ:

Արձակումներ՝ սկաւառակ, գունտ, նիզակ:

Ոստումներ՝ երկայնք, բարձրութիւն, երեք քայլ, ձող, կեցած երկայնք:

Փոքրեր՝ 100մ, 100մ պարկարչաւ, բարձրութիւն եւ երկայնք:

Հ.Մ.Ը.Մ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

1921-ի վերոյիշեալ մասնաճիւղային խաղերէն կարելի է կազմել արդիւնքներու բաղադատական հետեւեալ տախտակը: Վազքերու պարագային, երկվայրկեաններու կոտորակները մեր կողմէ 100րդ-ի վերածուած են: Օրին՝ արդիւնքները արձանագրուած են 1/5րդ դրուժեամբ:

Մրցում	Գուլէլի	Մազրի-գիւղ	Սկիւտար	Վոսփոր	Սամաթիա	Բերա Շիշի	Գուլ Գաբու	Լաւագոյն
50մ		7`20	6`20	7`20	7`20			6`20 Սկիւտար
100մ	12`80	12`40				12`60	12`90	12`40 Մազրիգիւղ
200մ			26`80	35`		26`60	29`80	26`60 Բերա Շիշի
400մ	1`4`60	1`1`50	1`2`80	1`4`40	1`5`	59`20	1`5`40	59`20 Բերա Շիշի
800մ	2`32`	2`29`40	2`34`	2`38`20	2`34`	2`15`60		2`15`60 Բերա Շիշի
1500մ	5`16`	4`59`80	4`43`20	5`42`60	5`25`	4`44`		4`43`20 Սկիւտար
3000մ		12`8`20			11`26`	11`11`80	11`11`80	Գուլ Գաբու
Գունս 7,250 քկ.	7,96մ	9,27մ	9,30մ	10,76մ	7,90մ	10,59մ	8,85մ	10,76մ Վոսփոր
Սակաւառակ	18,00մ		27,10մ	33,06մ	20,69մ	29,61մ	25,71մ	331,06մ Վոսփոր
Նիզակ			32,80մ	47,12մ	31,40մ	34,52մ	27,36մ	47,12մ Վոսփոր
Բարձրութիւն	1,30մ	1,44մ	1,48մ	1,56մ	1,36մ	1,43մ	1,55մ	1,56մ Վոսփոր
Երկայնք	4,74մ	5,35մ	5,36մ	6,13մ	4,97մ	5,61մ	5,17մ	6,13մ Վոսփոր
Ձող	2,19մ		2,38մ	2,55մ	2,43մ	2,62մ	2,57մ	2,62մ Բերա Շիշի
3 Գայլ	9,90մ	10,93մ	12,57մ	11,96մ	11,23մ	12,16մ	10,58մ	12,73մ Վոսփոր

Բաղադատական այս տախտակէն ի յայտ կուգայ, որ Բերա-Շիշին՝ վազքերու, իսկ Վոսփորը արձակումներու եւ ոստումներու մէջ տիրապետող են եղած է:

Վերոյիշեալ մասնաճիւղային խաղերու աւարտին, Կեդրոնական Վարչութիւնը կը կազմակերպէ տարեկան Ողիմպիական Երկրորդ ընդհանուր խաղերը:

Հ.Մ.Ը.Մ-ի մարզիկները կը մասնակցին նաեւ Պոլսոյ Միջազգային Աթլետիկ մրցումներուն՝ 2-4 Յունիս, 1922-ին, Թաքսիմի «Սթատիոմ»-ին մէջ: Այս մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերին եւրոպացի մարզիկներու, YMCA-ի, հայերու, հրեաներու, թուրքերու, յոյներու եւ ռուսներու խումբերը: Կազմակերպիչ մարմինին՝ Հ.Մ.Ը.Մ-ի կողմէ մասնակցեցան Վահրամ Փափագեան եւ Լեւոն Յակոբեան: Օժանդակ մարմին՝ Գրիգոր Ճօլօլեան, Շահան Կիւրճեան եւ Արարատ Քրիսեան: Տընտեսական յանձնախումբի մարմին՝ Օննիկ Ֆրէնկեան, Տոմսերու քննիչ մարմին՝ Արամ Կեսարեան: Ընդհանուր դատաւոր-

ներէն՝ Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան: Դատաւորներ՝ Գրիգոր Ճօլօլեան, Լեւոն Յակոբեան եւ Ժիրայր Սմբատեան: Յայտարարողներէն՝ Ժիրայր Խորասանճեան: Քարտուղար՝ Պօղոս Շապոյեան: Բժշկական մարմին՝ Տօքթ. Սալբի:

Հ.Մ.Ը.Մ-ի աթլետներու արձանագրած արդիւնքներէն ոմանք կարելի կ'ըլլար բաղադատել միջազգային արդիւնքներու հետ, եւ քաջալերական գտնել Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկներու ճիգերը:

Ֆուլթոնի եւ աթլետիկ միջոցներ, Հ.Մ.Ը.Մ-ի գանազան մասնաճիւղերը կիրարկած են մարզական այլ ճիւղեր՝ համեմատաբար նուազ տարողութեամբ:

Թեմիս

Թեմիսի ճիւղը մշակած է Սկիւտարի մասնաճիւղը որ ունեցած է թեմիսի յատուկ մարզադաշտ, 1920-ի գարունէն սկսեալ:

Լողորդութիւն

Պոլսոյ ծովեզերեայ դիրքը նպաստած

է, որ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը մշակեն նաեւ այս ճիւղը: Դժբախտաբար, օրինական լողաւազաններ չեն գտնուած: Մրցումները կայացած են բաց ծովուն մէջ:

1919-ին, կազմակերպուած է (Օգոստոս 17) միջ-մասնաճիւղային առաջին ընդհանուր մրցումները, Հայ Կղզիի (Բրոթի) մէջ — [Գ.117]:

Հ.Մ.Ը.Մ-ի լողալու տարեկան Բ. ընդհանուր մրցումները կայացած են 31 Յուլիս 1921ին, Ճատը Պոսթանի ծովափը — [Դ.139]:

6 Օգոստոս, 1922-ին, տեղի ունեցան լողալու տարեկան վերջին մրցումները — [Դ.365-366]:

ՏԱՐԵԿԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գործունէութիւնը հրապարակային իր արտայայտութիւնը ունեցաւ տարեկան ողիմպիական մրցումներու եւ հայկական ընդհանուր ողիմպիական խաղերու կազմակերպութեամբ: Այս զոյգ անուանումներու միակ տարբերութիւնը այն էր որ Սկիւտարի Հայ Մարմնամարզարանը՝ որուն Հ.Մ.Ը.Մ.ին միանալու պայմանները տակաւին քննութեան առարկայ կը մնային, 1920-ի ողիմպիական խաղերուն, իր մասնակցութիւնը բերաւ եւ խաղերը ունեցան համահայկական մակդիրը: Նոյնը պատահեցաւ 1922-ի խաղերուն, ուր Հ.Մ.Ը.Մ.ի Պոլսոյ 30 մասնաճիւղերու կողքին իրենց մասնակցութիւնը բերին Պուլկարիոյ Ֆիլիպէի մասնաճիւղը, ինչպէս նաեւ Ատափագարի, Իգմիրի եւ Իգմիթի հայ ակումբներու ներկայացուցիչները:

Ժամանազրական շարքով, ուրեմն Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան առաջին միջ-մասնաճիւղային ելոյթը տեղի ունեցաւ 31 Օգոստոս,

1919-ին, Գատը Գիւղի Իւնիօն Քլիպի դաշտին վրայ, Չաւէն Ս. Պատրիարքի նախագահութեամբ, եւ հետեւեալ յայտագրով. Վազքեր՝ 100մ, 400մ, 800մ, 1500մ, 3000մ, 4 X 100 դրօշարչաւ:

Արձակումներ՝ գունտ, սկաւառակ, նիզակ, քար:

Հեծելանիւ: Մրցումներուն հսկեցին հետեւեալ պաշտօնատարները.

Հաշտարար դատաւոր՝ Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան:

Ժամ բռնող՝ Լեւոն Յակոբեան եւ Ժիրայր Խորասանճեան:

Ոստում եւ արձակումներ՝ Ս. Գաւանդեան, Ա. Սալմասեան, Շնորհք, Գ. Մանուկեան, Ն. Ճելալեան:

Յայտարարողներ՝ Ժ. Խորասանճեան:

Արձանագրող՝ Հայկ Ճիզմէճեան:

Խաղերու ընթացքին բարելաւուեցան հետեւեալ մրցանիշները — [Գ.114-117].

100մ. վազք՝ Նուպար Արապեան՝ 12՝՝20

Գունտ նետել՝ Արամ Աբէլեան՝ 12,12մ.

Սկաւառակ նետել՝ Արամ Աբէլեան՝ 35,87մ.

Նիզակ նետել՝ Վարազ Փողարեան՝ 44,45մ.

Կեցած բարձր ցատկել՝ Գաբրիէլ Քէշիշեան՝ 1,265մ.

400մ. վազք՝ Գրիգոր Ճօլօլեան՝ 58՝՝80:

Շարքին երկրորդը, որ կոչուեցաւ Համահայկական Ընդհանուր Ողիմպիական խաղեր, տեղի ունեցաւ 5 Սեպտեմբեր, 1920-ին, Գատը Գիւղի Իւնիօն Քլիպի դաշտին վրայ, նախագահութեամբ՝ Պոլսոյ Պատրիարք Ամեն. Չաւէն Արքեպիսկոպոսի: Այս կարեւոր ելոյթին ամբողջական յաջողութեան համար կազմուեցաւ կարգադիր յանձնախումբ մը բաղկացած հետեւեալ-

ներէն. Արամ Գարակէօզեան, Գեղամ Մանուկեան, Զարեհ Խորասանճեան, Արտաշէս Ֆնտրքլեան, Գրիգոր Յակոբեան, Լեւոն Թօփալեան, Մելիք Ղազարոսեան:

Աթլեթիզմի խաղերու յայտագիրն էր. Վազքեր՝ 100մ, 400մ, 800մ, 3000մ, եւ 4 X 100մ դրօշարշաւ:

Ոստումներ՝ կեցած բարձրութիւն, երկայնք, ձող, կեցած երկայնք, բարձրութիւն:

Արձակումներ՝ գունտ, սկաւառակ, նիզակ, քար:

Եղան նաեւ 5000մ՝ հեծելանիւի մրցում եւ սկաուտներու արգելարշաւ:

Թեքնիք յանձնախումբերուն մաս կազմեցին հետեւեալները.

Հաշտարար դատաւոր՝ Բիւզանդ կէօզիւպէօյիւքեան:

Արձանագրող՝ Հայկ Ճիզմէճեան:

Յայտարարող՝ Լեւոն Յակոբեան:

Վազքերու ճամբայ հանող՝ Գրիգոր Յակոբեան:

Ժամ բռնողներ՝ Գրիգոր Մերճանօֆ, Ժիրայր Խորասանճեան, Ա. Ալաւերտի:

Վազքերու եւ ոստումներու դատաւորներ՝ Մ. Յ. Շնորհք, Պ. Շապոյեան, Բիւզանդ կէօզիւպէօյիւքեան, Օննիկ Ֆրենկեան, Յ. Խուպեսերեան, Լ. Ճգնաւորեան, Ժ. Սմբատեան,

Վազքերու շրջաններու հսկիչներ՝ հայ սկաուտներ:

Օրուայ բժիշկներ՝ Տօքթ. Ս. Ուզունեան եւ Տօքթ. Անտրէ Վահրամ:

Աթլեթիզմի մրցումներու ընթացքին, հայկական հետեւեալ մրցանիշերը բարելաւուեցան՝ հետեւեալ արդիւնքներով.

- 100մ. վազք՝ Նուպար Ճէլալեան 11՝՝60
- 400մ. վազք՝ Նուպար Ճէլալեան 55՝՝20
- 3000մ. վազք՝ Աշոտ Մամիկոնեան 10՝՝51՝՝
- Կեցած բարձրութիւն ցատկել Գ. Քէշիշեան՝ 1,29մ
- Երկայնք ցատկել՝ Կ. Փանոսեան՝ 5,98մ

Կեցած երկայնք ցատկել՝ 306,5սմ
Քար նետել՝ Ս. Մկրեան՝ 16,25մ
Օրուայ ախոյեան հանդիսացաւ Նուպար Ճէլալեանը:

Շաւարշ Քրիսեանի նախաձեռնութեամբ, 1911-ին սկսուած եւ Համաշխարհային Ընդհանուր Պատերազմին պատճառաւ դադրած շարքը այս ձեւով վերակենդանացաւ:

Շարքին երրորդը՝ Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան Բ. ընդհանուր Ողիմպիական մրցումները տեղի ունեցան 2 Հոկտեմբեր, 1921-ին — [Դ.141-142]:

Պոլսոյ մէջ չորրորդ եւ վերջին խաղերը եւ Հայկական Ընդհանուր Ողիմպիականը, տեղի ունեցան 27 Օգոստոս, 1922-ին, Գատը Գիւղի Իւնիօն Քլիւպի դաշտին վրայ — [Դ.365]:

ԶԱՀԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ, ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ, ՏՈՂԱՆՑՔ

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական հրապարակային ելոյթներու շարքին յատուկ տեղ կը գրաւեն ազգային ու միջազգային տարեդարձներու առթիւ կատարուած ջահագնացութիւններն ու սողանցքները, որոնց առաջինները, որպէս աննախընթաց ելոյթներ, հայ թէ օտար շրջանակներու բանաւոր թէ գրաւոր գնահատանքին արժանացան:

Հազիւ մէկ տարուայ գործունէութիւն ունեցող՝ Հ.Մ.Ը.Մ.ը Պոլսոյ հանրութեան ներկայացաւ 1919-ի Յուլիս 14-ին, Փրանսական Ազգային Տօնին առթիւ կազմակերպուած ջահագնացութեամբ:

Այս նպատակին համար կեդրոնական վարչութիւնը 1000 թրքական ոսկի փոխառութեամբ, կատարեալ ձեւով զգեստաւորեց 200-ի մօտ սկաուտներ: Քնար նուագախումբի առաջնորդութեամբ, ջահերով եւ հայկական Եռագոյներով, սկաուտներու կա-

նոնաւոր շարքերը անցան Բերայի ակումբէն՝ Թաքսիմի հրապարակ, Յունական հիւպատոսարան, Թոքաթլեան պանդոկ, Փրանսական հիւպատոսարան, ուր փոխանակուեցան շնորհաւորական ճառեր եւ ծաղկեփունջեր: Ապա՝ ջահագնացները վերադարձան հայ եւ օտար խանդավառ բազմութեան մը կողմէ շրջապատուած՝ Կալաթա Սերայէն՝ Հայոց Պատրիարքարան, Փրանսական հիւանդանոց եւ վերադարձան Հայ Մարմնամարզարան, ուր սկաուտները պիտի գիշերէին: Զահագնացութեան ամբողջ ընթացքին, նուազախումբը բազմաթիւ անգամներ հընչեցուց Փրանսական «Մարսէյէզը», «Մշակ Բանուոր», «Լուսին Չկայ», «Բամբ Որոտան» եղանակները: Եղան հրավառութիւններ, եւ հայ տանիքներէ ծաղիկներ տեղացին սկաուտական շարքերուն վրայ: Հայ թէ օտար՝ անակնկալի եկած հայ սկաուտներու այս ելոյթէն՝ հիացման ու քաջալերական արտայայտութիւններով վկայ եղան հայ պատանութեան վերածնունդին:

1920-ի Մայիս 28-ին, Հայաստանի անկախութեան Բ. տարեդարձին առիթով տեղի ունեցաւ յատուկ տօնախմբութիւն եւ փառահեղ տողանցք: Սբ. Փրկիչ հիւանդանոցի պարտէզները դրօշազարդուած՝ Փրանսական, անգլիական, յունական, ամերիկեան, իտալական ու յատկապէս հայկական Եռագոյններով, ելեկտրական լուսաւոր լամբերով, տօնական բացառիկ երեւոյթ մը կը պարզէին: Ետի Գուլէի որբանոցի սկաուտները ստանձնած էին պարտէզներու հսկողութիւնը: Հոն կը հասնին հետզհետէ հայ ժողովուրդի բոլոր խաւերը մեծով եւ պրզտիկով: Հետզհետէ կը հասնին Պոլսոյ չորս նուազախումբերը՝ Քնար՝ 120 նուազող, Նոր Այգ՝ 120 նուազող, Մասիս եւ Բաֆֆի Յառաջդիմական՝ 100ական նուազող: Այս նուազախումբերը միացեալ մէկ խմբավարի հըրահանգով կը հնչեցնէին ազգային եղանակներ եւ քայլերգներ, խանդավառելով

ներկաները: Ժողովուրդը ուրախ եւ յուզիչ տեսարաններու առիթ կը ստեղծէ: Ամէն կողմ՝ ողջագուրում, երգ ու պար: Հայերուն կը միանայ նաեւ յոյն բազմութիւնը, քաջալերական բացականչութիւններով:

Ապա, ընդհանուր խմբապետին հրահանգին վրայ եւ միացեալ նուազախումբի առաջնորդութեամբ, որուն առջեւէն կ'ընթանայ հսկայական հայկական Եռագոյն դրօշը, Ետի Գուլէի որբանոցի 450 հոգինոց սկաուտական խումբը կը յառաջանայ դէպի Պոլսոյ եւրոպական ափը, կատարեալ ու համաչափ քայլերով: Բազմահոծ հայ, յոյն եւ օտար բազմութիւնը տողանցողներուն կողքերէն կը հետեւի անոնց, զիրենք նկատելով անկախ Հայաստանի բանակի մը կորիզը: Թուրքերը չեն հաւատար իրենց աչքերուն՝ ի տես հայ ժողովուրդի վերածննդեան: Տողանցողները կը հասնին Թաքսիմի հրապարակը, ուր պարտէզները եւս դրօշազարդուած են եւ դիւթիչ տեսարան մը կը պարզեն: Ժողովուրդը տօնական զգեստաւորումով տողանցքը կը շարունակէ մինչեւ առաւօտեան ժամերը: Սկաուտները կը հիւրասիրուին հայ մեծահարուստներու կողմէ: Առաւօտեան, սկաուտները տողանցքով կրկին կը վերադառնան Ետի Գուլէի որբանոցը: Յաջորդ օրը հանգստեան կը տրամադրուի:

1920-ի Յուլիսի 20-ին, Պոլսոյ միջազգային սկաուտական գրասենեակի նախաձեռնութեամբ, կատարուեցաւ սկաուտական ընդհանուր տողանցք: Մասնակցեցան Պոլսոյ սկաուտական բոլոր խմբաւորումները: Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները իրենց կատարեալ տողանցումով ընդհանուրին հիացումին արժանացան: Պոլսոյ մամուլը մանրամասնօրէն անդրադարձաւ այս ելոյթին մասին: Ընդհանուր տողանցքը նկարուեցաւ եւ շարժապատկերի միջոցաւ ցուցադրուեցաւ: Հայկական Եռագոյնը կրկին ի պատուի էր այդ օրը:

Այս տողանցքը եւս եկաւ փաստելու հայ սկաուտներու կենսունակութիւնն ու կազմակերպութեան խօսիլ տուաւ Հ.Մ.Ը.Մ.ի մասին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԱՆՕԹԱՑՈՒՄ ԵՒ ԵԼՈՅԹՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գործունէութիւնը իր տարողութեամբ եւ որակով, պաշտօնական առիթներով կատարուած ջահագնացութիւնները ու տողանցքները, ինչպէս նաեւ անոր ներկայացուցիչներու օգտակար ու դրական մասնակցութիւնները Պոլսոյ ընդհանրական սկաուտական կեանքին, առիթներ ստեղծեցին միութեան միջազգային ծանօթացման:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութիւնը՝ Կեդրոնական Վարչութիւն թէ՛ Սկաուտական Կեդրոնական Վերին Մարմին, առիթ չփախցուցին կազմակերպութիւնը ներկայացնելու միջազգային գրասենեակներուն ու պետերուն:

Այսպէս, մէկ տարուայ գործունէութեան աւարտին, սկաուտութեան հիմնադիր Զօր. Պէյտըն Փաուլը ռեզոլուած նամակով մը հայ սկաուտութեան յաջողութիւններու արձագանքը հաղորդեցին անոր՝ խնդրելով որ Անգլիոյ սկաուտական ղեկավարութիւնը ծանօթանայ իրենց եւ ամէն ձեւով գորավիզ կանգնի հայ սկաուտութեան ելոյթներու յաջողութեան, եւ պաշտպանէ հայուն նուիրական դատը — [Գ.18]:

Դեկտեմբեր, 1919-ին, իր Ամերիկա մեկնումին առթիւ, Իզմիրի հայ սկաուտներու գործակից եւ կազմակերպիչ՝ ամերիկացի Պրն. Նիոլման, խանդավառուած այս յաջողութիւններէն, կը խոստանայ Ամերիկայի մէջ ծանօթացնել հայը եւ հայ սկաուտական կազմակերպութիւնը — [Գ.71]:

Յուլիս - Օգոստոս, 1920-ի Լոնտոնի սկաուտական միջազգային ճամբարի առի-

թով, միջազգային ընդհանուր պետին, սկաուտ խմբապետներուն եւ մասնակցող սկաուտներուն ռեզոլուած գոյգ գրութիւններով, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարժման քարտուղարութիւնը եւ «Հայ Սկաուտ» պաշտօնաթերթի խմբագրութիւնը իրենց յաջողութեան մաղթանքը կը յղեն: Անոնք ցաւ կը յայտնեն, որ հայ սկաուտները անձնապէս պիտի չկրնան մասնակցիլ միջազգային ճամբարին: Փոխարէնը, ճամբարի ձեռնարկին աշխատանքներու հաւաքածոյին կ'ուղարկեն իրենց ձեռագործերէն մաս մը, Հ.Մ.Ը.Մ.ը ծանօթացնելու համար միջազգային շրջանակներուն — [Գ.266-268]:

20 Յունիս, 1920-ի Պոլսոյ միջազգային սկաուտական տողանցքին կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները: Այդ առթիւ, Պոլսոյ միջազգային սկաուտութեան կազմակերպութեան, նախագահ Զօր. Մաքսուէլ շնորհաւորական գիրով մը կը դրուատէ հայ սկաուտներու մասնակցութիւնը սոյն տողանցքին՝ իր խնդակցութեան միացնելով ամերիկացի գորավար Սըր Հենրի Ուիլսընի եւ իր տիկնոջ բարեմաղթութիւնները — [Գ.283]:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Խորասանճեանի ռեզոլուած՝ Լոնտոն, 8 Յունիս, 1921 թուակիր նամակով, սկաուտութեան հիմնադիր Զօր. Պէյտըն Փաուլ գովեստով կը խօսի հայ սկաուտներու մասին: Պէյտըն Փաուլ՝ Պոլսոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն մասին՝ Քաբիթէն Թեսկըրի տեղեկագրութեան վրայ կը յենի իր վկայութեան համար — [Գ.35]:

ՆՇԱՆԱԲԱՆ, ՆՇԱՆԱԿ ԵՒ ՎԱՀԱՆ

«ԲԱՐՁՐԱՅԻՐ, ԲԱՐՁՐԱՅՈՒՐ»ի ծնունդը

Պոլսոյ մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը անվերապահ ժողովրդականութեան արժանացաւ առաջին ելոյթներէն սկսեալ:

Ղեկավարութիւնը, լուր գործունէութեան կողքին, կը ծրագրէր Միութիւնը ծանօթացնել այլ միջոցներով: Կազմակերպութեան փրօփականտը պէտք էր առաջ տանիլ օրուայ կարելի միջոցներով: Այսպէս է որ գործունէութեան սկզբնաւորութիւնէն տարի մը ետք, Հ.Մ.Ը.Մ.ը կ'ունենար իր պաշտօնաթերթը՝ «ՀԱՅ ՍԿԱՌԻՏ»ը:

Նոյն օրերուն կը մտածուէր Հ.Մ.Ը.Մ.ը բնորոշող նշանաբան մը ունենալ: Այս պրպտումներուն արդիւնքը պիտի ըլլար, Միութեան նշանաբան «ԲԱՐՁՐԱՅԻՐ, ԲԱՐՁՐԱՅՈՒՐ»ի ծնունդը: Թուարանագէտ եւ դաստիարակ Պետրոս Ատրունին՝ հեղինակը պիտի ըլլար այս նշանաբանին* որ շուտով լայն ընդունելութիւն գտաւ ղեկավարութեան, շարքերուն, ժողովուրդին այլեւ միջազգային դէմքերու մօտ — [ԺԳ.63]:

ՆՇԱՆԱԿԻ Պատրաստութիւն

ԲԱՐՁՐԱՅԻՐ, ԲԱՐՁՐԱՅՈՒՐ ոգեւորիչ նշանաբանը՝ յատուկ նշանակով, տեղ պիտի գտնէր իւրաքանչիւր սկաուտի գլխարկին ու գօտիին վրայ եւ պիտի հրապարակուէր Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր ձեւի հրատարակութեանց, նամակաթուղթերու, անդամատետրերու, որմագղներու եւ ամէն ձեւի տպագրութեանց առիթներով:

Նշանակը գծեց Ստեփան Ակայեանը: Շրջանակաձեւ նշանակի կեդրոնը կ'երեւին զոյգ Մասիսները, որոնց մէջտեղէն կը



ծագի արեւը: Լեռներու ստորոտէն եւ Արարատեան դաշտի մէջով կը հոսի Արաքս (Երասխ) գետը: Շրջանակին շուրջ եւ արտաքին շրջանակի մը մէջ արձանագրուած եւ վերի կողմը ԲԱՐՁՐԱՅԻՐ իսկ վարի կողմը ԲԱՐՁՐԱՅՈՒՐ բառերը:

Նշանակի պատրաստութիւնը իրագործումն է հիմնադիր անդամ Հայկ Ծիգմեճեանի հօր՝ արուեստագէտ արծաթագործ Նիկողոս Յ. Ծիգմեճեանի: Այս նշանակով առաջին հերթին պատրաստուեցան երեք գօտիներ, որոնցմէ իւրաքանչիւրը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը նուիրեց՝ Զաւէն Ս. Պատրիարքին, Պետրոս Ատրունիին* եւ ուսուցչապետ՝ Լեւոն Թաշճեանին — [ԼԲ/Բացառիկ. 23]:

* Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ՝ «Նաւասարդ»ի 1954ի Նոյեմբեր—Դեկտեմբեր միացեալ թիւին մէջ, Զիթունիին իր 25 Հոկտեմբեր 1954 թուականակիր յօդուածով կը յայտնէ թէ ինքն է Հ.Մ.Ը.Մ.ի Աշանաբանի հեղինակը — [ԼԱ/ 18-19-22]: Այս հարցը, օրին, երկար բանավէճի տուն տուած է: Ֆրանսայի Իվրի քաղաքէն Հ.Մ.Ը.Մ.ական Ա. Կապեմց, այս մասին իր մէկ նամակով կը վկայէ, թէ իր պաշտպան՝ Պետրոս Ատրունին է Աշանաբանի հեղինակը եւ որպէս փաստ հարց կ'ուսուայ Զիթունիին թէ ինչու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ձեռագործ Աշանակով առաջին երեք գօտիներէն մէկը իրեն չէ յանձնած այլ՝ որպէս երախտագիտական արտայայտութիւն, զայն նուիրած է Պետրոս Ատրունիին: Զիթունիին այս մասին անտեղեակ կը թուի ըլլալ ըստ նոյն նամակին:



Հ.Մ.Ը.Մ.ի Վահանը

Նախքան նշանակի իրագործումը, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութիւնը որդեգրած էր արդէն Հ.Մ.Ը.Մ.ի վահանը՝ Միութեան անուան չորս սկզբնական տառերու արձանագրութեամբ: Այս վահանը տեղ գտաւ մասնաճիւղերու դրօշակներուն վրայ եւ մարզական զգեստներու կուրծքին:

Առաջին անգամ վահանը կը հանդիպինք պաշտօնաթերթ ՀԱՅ ՍԿԱՌԻՏի առաջին թիւին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան առաջին միջ-մասնաճիւղային խաղերուն առթիւ, մարզիկներու կուրծքին գետեղուած: Վահանը տպուած է նաեւ ՀԱՅ ՍԿԱՌԻՏ ի առաջին տարուայ չորրորդ թիւի կողքին վրայ:

Նշանակը առաջին անգամ կը հանդիպինք նոյն թերթի առաջին տարուայ հինգերորդ՝ 1 Յունուար 1920ի թիւի կողքին վրայ: Կարելի է ենթադրել, թէ նշանաբանի գիւտը եւ նշանակի պատրաստութիւնը իրագործուած են 1919 ամրան եղանակի վերջաւորութեան կամ աշնան սկիզբը:

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ «ՀԱՅ ՍԿԱՌԻՏ»

Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը ունեցաւ արագ ծաւալում եւ Միութեան գաղափարականի տարածումը նպաստեց անոր յաջողութեան: Պոլսոյ հայ մամուլը զանազան առիթներով գովեստի արտայայտութիւններ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական թէ սկաուտական ելոյթներուն մասին: Սակայն այս սիւնակները բաւարար չէին ընդհանուր գործունէութեան մասին ամբողջական գաղափար մը տալու հայ զանգուածներուն:

Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութիւնը մէկ տարուայ գործունէութենէ ետք, ձեռնարկեց իր պաշտօնաթերթի՝ «Հայ Սկաուտ»ի հրատարակութեան, որպէս քարոզչական աշխատանքի կեդրոնական օրկան:

«Հայ Սկաուտ»ի առաջին թիւը լոյս տեսաւ 25 Հոկտեմբեր, 1919-ին՝ որպէս կիսամսեայ հանդէս՝ Մայր հայրենիքին ուղղուած ողջոյնով մը, որով պաշտօնաթերթը կը հաստատէր՝ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական եւ սկաուտական կազմակերպութիւն ըլլալու կողքին, հայ ազգի գերագոյն նպատակներուն ծառայութեան լծուած ըլլալը:

Առաջին տարին թերթը կանոնաւորաբար շարունակեց լոյս տեսնել ամէն ամսու 1-ին եւ 16-ին, 16-ական էջ բովանդակութեամբ՝ մինչեւ 16 Յուլիս, 1920, որմէ ետք 1920 տարին ամբողջացուց չորս զոյգ թիւերով (17-18, 19-20, 21-22, 23-24), իւրաքանչիւրը 24 էջ բովանդակութեամբ: Ապա, հինգ ամսուայ դադարէ մը ետք կրկին սկսաւ լոյս տեսնել 1 Յունիս, 1921-էն սկսեալ, կիսամսեայ դրուութեամբ մինչեւ Հոկտեմբեր 1921 որմէ ետք՝ թիւ 9, 10, 11 եւ 12ը ամսաթերթի վերածուեցան, 1 Փետրուարին վերադառնալու համար 16 էջնոց կիսամսեայ դրութեան, մինչեւ Յուլիսի սկիզբը: 27 Օգոստոս, 1922-ին, յատուկ թիւով վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ.ի

առաջին պաշտօնաթերթի հրատարակութիւնը՝ շուրջ եռամեայ ժամանակաշրջանի մը վրայ երկարելով:

«Հայ Սկաուտ»ի արտօնատէրն էր Գառլօ Շահինեան, վարիչ խմբագիրը՝ Կարօ Պ. Ուշագլեան. Պատասխանատու տնօրէնը՝ Հրաչեայ Տէր Ներսէսեան, իսկ տպարանը՝ Օ. Արզուման, մինչեւ Բ. տարի թիւ 5 ապա՝ Կ. Քէշիշեան որդի Բ. տարի թիւ 6-էն սկսեալ:

«Հայ Սկաուտ»ի բովանդակութիւնը

Որպէս սկաուտական եւ մարզական կազմակերպութեան պաշտօնաթերթ, «Հայ Սկաուտ»ի բովանդակութեան ծրագիրը տրուած է առաջին թիւով — [Գ.14]:

Այս ընդհանուր ծրագիրը գործնականին մէջ կը ներկայանայ հետեւեալ դասակարգումով.

- Խմբագրական
- Սկաուտական բաժին
- Մարզական բաժին
- Միութենական լուրեր

Խմբագրականներ

«Հայ Սկաուտ»-ի խմբագրականները կ'ընդգրկեն երկու գլխաւոր նիւթեր. մարզական եւ սկաուտական շարժումներու կարեւորութիւն եւ ազգային գաղափարասուսուցիչութիւն:

Առաջին տարեշրջանի կարեւորագոյն խմբագրականները այս գոյգ բաժանումներուն տակ հետեւեալներն են.

Մարզական եւ սկաուտական շարժումներու կարեւորութիւն՝

- Մեր գաղափարականը — [Գ.1]:
- Աւելի լուրջ վերաբերիմք — [Գ.17]:
- Գործը ինքնին պարտադրիչ է — [Գ.33]:

— Հ.Մ.Ը.Մ. իբր միութեան գօտի — [Գ.49]:

— Մէկ ծրագրի շուրջ միանանք — [Գ.153]:

— Կը յիշեցնենք իրենց պարտականութիւնը մամուլին եւ մեր առաջնորդող դասակարգին — [Գ.217]:

— Մարմինի տօնը — [Գ.313]:

Ազգային գաղափարասուսուցիչութիւն՝

— Պաշտպան քաղուկներ պատրաստենք — [Գ.65]:

— Նոր վտանգներու դէմ — [Գ.81]:

— Վնարեցէք ձեր պարտքը հայ բանակին — [Գ.121]:

— Պարտականութեան գլուխ — [Գ.169]:

— Քեզի կ'սպասեն — [Գ.234]:

— Դէպի երկիր — [Գ.289]:

— Սկաուտ — [Գ.337]:

Երկրորդ տարեշրջանի թիւերը խմբագրականի բաժինը զանց կ'առնեն եւ թերթին առաջին էջերը կը գրաւեն՝ Հ.Մ.Ը.Մ.ի կամ միջազգային սկաուտական թէ մարզական գործունէութենէ առնուած նկարներ, շարժումը ջատագովող կարճ արձանագրութիւններով:

«Հայ Սկաուտ»ի աշխատակիցները

Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթին մնայուն կերպով կ'աշխատակցին մասնագէտ եւ մտաւորական Հ.Մ.Ը.Մ.-ականներ: Անոնց կարգին պէտք է յիշել հետեւեալները:

Կարօ Ուշագլեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնի քարտուղար՝ գրեթէ բոլոր թիւերուն մէջ ստորագրած է մէկ կամ մէկէ աւելի յօդուածներ՝ առհասարակ մարզանքի եւ յատկապէս աթլետիզմի վերաբերեալ նիւթերու մասին, Հ.Մ.Ը.Մ.ական թէ միջազգային բաժիններով: Նկարագրած է մարզական ելոյթներ՝ անոնց արդիւնքներու մասին վերլուծական բաժիններով:

Վարագ (Վարագ Փողարեան)՝ Հ.Մ. Ը.Մ.ի Կեդրոնի Ֆուլթպոլի սիւներէն: Գրած է յօդուածաշարք՝ Ֆուլթպոլի թեքնիք ուսուցման վերաբերեալ:

Յովհաննէս Հինդլեան՝ ինքնագիր թէ թարգմանական իր յօդուածներով միշտ ներկայ է ծանօթացնելու ու զարգացնելու համար սկաուտական շարժումն ու անոր գաղափարախօսութիւնը: Իր յօդուածներով մնայուն կապ կը հաստատէ Պէյտըն Փաուլեան եւ Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտական շարժումներու միջեւ:

Տօքթ. Ս. Ուզունեան՝ մարզանքի եւ մարզիկի ֆիզիքական դաստիարակութեան հետ կապ ունեցող բժշկական մասնագիտական յօդուածներու շարք մը ստորագրած է «Հայ Սկաուտ»ի գոյգ տարեշրջաններու թիւերուն մէջ:

Արշակ Յակոբեան՝ սկաուտական թեքնիք նիւթեր:

Յակոբ Քրիսեան՝ Հ.Մ.Ը.Մ.-ական գաղափարախօսութիւն:

Վերոյիշեալ ցանկի աշխատակիցներու սերունդին պատկանող այլ Հ.Մ.Ը.Մ.ականներ, թէեւ նուազ տարողութեամբ, օժանդակած են պաշտօնաթերթին յարատեւման, իրենց մասնագիտութեան յատուկ յօդուածներով: Ասոնց շարքին.

Գրիգոր Յակոբեան՝ մարզական եւ սկաուտական

Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան

Հայկ Ճիզմէճեան

Գառլօ Շահինեան՝ աթլետիք ուսուցում

Գրիգոր Մերճանօֆ՝ մարզանքի օգուտները

Գրիգոր Ծօլօլեան՝ պասքեթպոլ:

Գալառի եւ արտասահմանի թղթակցութիւնը կատարած են հետեւեալ յօդուածագիրները.

Զաւէն Յարէթեան — Իզմիր

Պիմէն եւ Գեղամ Խաչիսաչեան — Մարսէյ

Ստեփան Ամիրայեան — Գահիրէ

Ստեփան Խանճեան եւ Գ. Զօպանեան — Ադեքսանդրիա

Համազասպ Փանոսեան — Մերսին

Եդուարդ Ոսկերիչեան — Կիլիկիա

Վահան Զերագ — Հայաստան

Պարբերաբար եւ իրենց մասնագիտութեան յատուկ յօդուածներ ունին՝ Զիթունի, Ա. Թէոդիկ, Ք. Ժպտունի (սկաուտական թեքնիք ուսուցում), Պ. Շապոյեան, Վ. Նորհատեան (հեծելարշաւ), Երուանդ Իւթիւճեան, Սիսակ Նալպանտեան (Յուշեր անցեալէն), Գաբրիէլ Քէշիչեան, անասնաբոյժներ՝ Տօքթ. Մինաս Աւետիսեան, Եր. Ա. Մանուկեան, հողագէտ՝ Կոպեռնիկ Թանտրճեան, սկաուտ խմբապետներ կամ աստիճանաւորներ՝ Արա Տօմինեան, Օննիկ Գովան, Մկրտիչ Մալումեան, Հայկազ Աբէլեան, Օննիկ Մելիքսեթեան, Պիմէն Սահաթճեան:

Ամբողջացնելու համար յօդուածագիրներու այս ցանկը, յիշեցնենք նաեւ՝ Շրջիկ, Ճանիկ, Քաջագատ, Ֆլօրա Անահիտ, Տօքթ. Գ. Ա. Սուրեան, Մ. Զարիֆեան, Արտաշէս Գալփաքճեան, Խոսրով Ներսէսեան, Ներսէս Աստուածատուրեան, Պիմէն Պէօրէքճեան, Եդուարդ Խաչատուրեան, Սիմոն Շմաւոնեան, Գառլօ Պետրոսեան, Օշին Քիւչիւքեան, Պ. Ճերմակեան, Տօքթ. Եդ. Շահպազ եւ ուրիշներ:

«Հայ Սկաուտ»ի աշխատակիցներու, թղթակիցներու եւ յօդուածագիրներու այս լայն ցանցը ինքնաբերաբար կը ցուցաբերէ թերթի հանդէպ ստեղծուած հետաքրքրութիւնը:

Որպէս Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ, «Հայ Սկաուտ»ը ունէր նաեւ տեղեկագրական նիւթեր, ժողովական օրակարգերու ամփոփումներ, եւ վարչական ազդեր: Թերթի պատկերազարդ բովանդակութիւնը նիւթերը

աւելի հետաքրքրական դարձնելու կը ծառայէին: Կայ նաեւ առեւտրական ծանուցումներու բաժինը, որ մամուլի նիւթական զօրացման ծառայած է միշտ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի հրատարակչական գործունէութիւնը Պոլսոյ մէջ, եղաւ շատ համեստ: Պոլիսը այդ ժամանակաշրջանին ունէր հրատարակչական, հրապարակագրային եւ մամուլի լայն կարելիութիւններ, բայց տակաւին մանուկ կազմակերպութիւնը՝ այլապէս կլանուած կազմակերպչական եւ թեքնիք աշխատանքներով, ունեցաւ մարզական եւ սկաուտական սեղմ կարելիութիւններ:

Այս բաժինին տակ կ'արձանագրենք.

Ֆուտպոլի գիրքը

Հեղինակ՝ Վարազ. Ֆուտպոլի օրէնքներու նկարագարդ բացատրողական հրատարակութիւն մը, որ անհատական ձեռնարկ ըլլալով հանդերձ ուղղուած է Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլիստներուն եւ Միութեան բարոյական հովանաւորութիւնը կը վայելէ:

Հայ Սկաուտիկ Օրինագիրքը

Սկաուտական շարժումի յայտագիր-ծրագիր այս գրքոյկը հրատարակութիւնն է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԴԱԴԱՐ

Երբ այնքան փայլուն եւ խոստմնալից կերպով Պոլսոյ մէջ կը զարգանար Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը, անդին, քաղաքական բեմին վրայ, Թուրքիոյ քեմալական ապստամբութիւնն ու իշխանութեան տիրացումը կը դժուարացնէին հայկական կեանքի բոլոր երեւոյթները: Պոլսոյ հայութիւնը, հետզհետէ, կ'ապաստանէր Յունաստան կամ այլ եւրոպական երկիրներ: Ղեկավար Հ.Մ.Ը.Մ.-ականներ յանկարծակիօրէն կը ստիպուէին թողնուլ Պոլիսը: Հայերուն համար հորիզոնը հետզհետէ կը մթազնէր:

Տեսանք արդէն Հ.Մ.Ը.Մ.ի հրապարակային մեծագոյն ելոյթի՝ Պէօյիւք Տերէի 8-11 Սեպտեմբեր, 1922-ի ցուցահանդէս-բանակումի տխուր վախճանը: Այս դժուարին կացութեան առջեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, 16 Սեպտեմբեր, 1922-ին, կը գումարէ իր վերջին ժողովը եւ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը դադրած եւ կազմակերպութիւնը լուծուած կը յայտարարէ Թուրքիոյ սահմաններէն ներս:

2 Հոկտեմբեր, 1922-ին, Սիրքէճի կայարանի պարտէզը գումարուած՝ բացառիկ պատգամաւորական ժողովի մը ընթացքին, վերոյիշեալ որոշումը պաշտօնապէս կը փոխանցուի մասնաճիւղերուն — [ԺԱ.189]:

Հ.Մ.Ը.Մ.ի ԼՈՒԾՈՒՄԷՆ ԵՏՔ

Քեմալական վարչակարգի հաստատումէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու ժառանգորդ՝ մարզական որոշ շարժում մը արձանագրուեցաւ յատկապէս վարժարանային շրջանակներէ ներս:

Այս կարգի շարժումներէն ամէնէն կարեւորները հետեւեալները հանդիսացան. Շիշի (Նոր Շիշի)՝ Օննիկ Ֆրենքեանի քաջալերանքով եւ Ալեքսան Մկրտիչեանի գործակցութեամբ կազմուած ֆուտպոլի ակումբ մը, որ, 1924-էն սկսեալ թուրք մամուլին մէջ խօսիլ տուաւ իր մասին: Այս ակումբի յաջողութիւնները առիթ ստեղծեցին որ կազմուին ուրիշ խումբեր ալ Պոլսոյ զանազան թաղերուն մէջ.

Շիշի (Նոր Շիշի)՝ Օննիկ Ֆրենքեանի քաջալերանքով եւ Ալեքսան Մկրտիչեանի գործակցութեամբ կազմուած ֆուտպոլի ակումբ մը, որ, 1924-էն սկսեալ թուրք մամուլին մէջ խօսիլ տուաւ իր մասին: Այս ակումբի յաջողութիւնները առիթ ստեղծեցին որ կազմուին ուրիշ խումբեր ալ Պոլսոյ զանազան թաղերուն մէջ.

Շիշի (Նոր Շիշի)՝ Օննիկ Ֆրենքեանի քաջալերանքով եւ Ալեքսան Մկրտիչեանի գործակցութեամբ կազմուած ֆուտպոլի ակումբ մը, որ, 1924-էն սկսեալ թուրք մամուլին մէջ խօսիլ տուաւ իր մասին: Այս ակումբի յաջողութիւնները առիթ ստեղծեցին որ կազմուին ուրիշ խումբեր ալ Պոլսոյ զանազան թաղերուն մէջ.

Ունճեան ակումբ՝ Գատը Գիւղ
Սահակեան՝ Սամաթիա
Պէգճեան՝ Գում Գարու
Հայ Մարմնամարզական՝ Մագրիգիւղ
Եսայեան՝ Բերա
Պէրպէրեան՝ Սկիւտար
Վիշապ՝ Վոսփոր
Շանթ՝ Օրթագիւղ:

Վերոյիշեալ խումբերը իրարու միջեւ
մրցաշարքեր կազմակերպելով կը յաջողին
Ֆութպոլի հետաքրքրական եղանակներ
բոլորել:

1927-ին, անոնք կը յաջողցնեն պոլ-

սահայ դպրոցականներու առաջին ողիմպի-
ականը, սակայն անոնց կեանքը կ'ըլլայ
կարճ: Ոմանք շուտով կը լուծուին: Տոկա-
ցողներէն ուրիշներ կը միանան Նոր Շիշի
ակումբին: Վերջինս, հետզհետէ զօրանա-
լով, 1928-ին կը հաշուէ շուրջ 300 անդամ:
Ֆութպոլի կողքին Նոր Շիշին կ'ունենայ
պասքեթպոլի եւ վոլիպոլի խումբեր: Մար-
զիչ Արթօ Գալփաքճեան կը հսկէ շուէտա-
կան մարզանքներու մշակումին: Ակումբը
կ'ունենայ իր ֆութպոլի դաշտը Սթատիոմի
մէջ, որուն կողքին կը կառուցէ սրահ եւ
սենեակներ: Անջատ մնացող խումբերը
կ'ունենան շատ համեստ գործունէութիւն:



1. Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտական պատուիրակություն մը կ'այցելէ ՎԱՀԱՆ ԶԵՐԱԶԻ բնակարանը: Զախէն-աջ չորրորդէն սկսեալ Վազգէն Անդրեասեան, ՏՈՐՔԻ մարզիկներէն Գորեան, Չերազի քոյրը՝ Ծաքէ, մայրը՝ Իսկունի եւ Ծորն Մարտիկեան: 2. Սկաուտներու բանակում Հայ Կղզիի (Գնալը) մէջ: 3. 1919 Յուլիս 14ի ընդհանուր տողանցք: 4. Ետի Գուլէի որբանոցի սկաուտները կը տողանցեն: 5. Գատը Գիւղի սկաուտները արշաւի ընթացքին: 6. Պոլսոյ առաջին մասնաճիւղի սկաուտները արշաւանքի ընթացքին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հ.Մ.Ը.Մ.-Ը ԹՈՒՐԳԻՈՅ ԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

- ՏԱՐՏԱՆԷԼ
- ՄԱԼԿԱՐԱ
- ՌՈՏՈՍԹՕ
- ԻԶՄԻԹ
- ԱՏԱՓԱԶԱՐ

- ԻԶՄԻՐ
- ԿԻԼԻԿԻԱ
- ՊԱԹՈՒՄ
- ՔԷՕԹԱՀԻԱ
- ՊՐՈՒՍԱ

Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղերը հիմնադրութեան յաջորդ օրերէն սկսեալ, լայնածաւալ ընդունելութիւն գտան Պոլսոյ բոլոր թաղամասերուն մէջ: Անոնք նոյն յաջողութիւնը արձանագրեցին նաեւ Պոլսոյ մօտակայ շրջաններուն մէջ: Հետզհետէ մասնաճիւղեր հիմնուեցան հետեւեալ շրջաններուն մէջ, արձանագրելով յաջող գործունէութիւն:

ՏԱՐՏԱՆԷԼ

Տարտանէլի սկառտական շարժումը նախաձեռնութիւնն է Ագրիպաս Թորոսեանի, որ ընդհանուր պատերազմին, որպէս ծովային զինուոր, մաս կը կազմէր թրքական բանակին: Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան եւ զարգացման ընթացքը կը խանդավառէ զինքը, Տարտանէլի մէջ հիմնելու մասնաճիւղ մը, եւ 1920-ի ամրան սկսած շարժումը շուտով իր շուրջ կը հաւաքէ յիսունի մօտ սկառտներ: Հաւաքոյթները տեղի կ'ունենան ազգային վարժարանի բակին մէջ:

29 Սեպտեմբեր, 1920-ին, տեղի կ'ունենայ սկառտներու երդման արարողութիւն պաշտօնական հանդիսութեամբ: Ելոյթը մեծապէս կը խանդավառէ քաղաքի հայութիւնը եւ յատկապէս ծնողական շրջանակը:

Ագրիպաս Թորոսեանին, որպէս սկառտ խմբապետներ, կ'օժանդակեն Գրիգոր Սիրան Թորոսեան եւ Գագիկ Ղազէրեան: Մասնաճիւղը իր գործունէութիւնը կը շարունակէ մինչեւ 1922-ի աշնան:

ՄԱԼԿԱՐԱ

Նախապատերազմեան շրջանէն մարզանքի հանդէպ հետաքրքրութիւն ունեցող

շրջան մը, ուր Մամիկոնեան վարժարանի վերի դասարաններու աշակերտները յատուկ մարզանքի սրահի մը մէջ կախօրրանի վրայ դասեր կը ստանային:

1920-ին, Հ.Մ.Ը.Մ.-ի հմայքը կը հասնի նաեւ հոս եւ Արամայիս Բանիկեանի քաջալերանքով կը հիմնուի Մալկարայի մասնաճիւղը, Մամիկոնեան վարժարանի մէջ տեղի ունեցած հաւաքոյթի մը ընթացքին:

Սկառտական խումբի կազմութեան կ'օժանդակեն Օ. Բանիկեան եւ Յակոբ Նշանեան, որ այս մարզին մէջ փորձառութիւն ձեռք ձգած էր Պուլկարիոյ Ֆիլիպէ քաղաքին մէջ իր ունեցած գործունէութեամբ: Գիշերային մարզանքները կը շարունակուին վարժարանի յատուկ սրահին մէջ աւելի քան 30 մարզիկներու մասնակցութեամբ: Սերտ գործակցութիւն կը ստեղծուի մօտակայ Ռոտոսթոյի մասնաճիւղին հետ: Մասնաճիւղի անդրանիկ վարչութեան ատենապետն էր Յարութիւն Փորեաճեան՝ հետագային՝ Թադէոս Քհնյ. — [ԺԱ.145]: Հիմնադիր անդամներէն կը յիշուին Վահան Յարութիւնեան եւ Կարազ Խոշիկեան:

ՌՈՏՈՍԹՕ

Մարմարայի ծովափի այս մասնաճիւղը իր գործունէութեան թափը ստացաւ յատկապէս եւրոպական գրաւումէն ետք:

1918-ին, Ռոտոսթոյի մէջ սկսած էր գործել Արարատ Ֆուլթպոլի խումբը՝ որպէս մէկ ճիւղը «Արարատ» լսարան-ընթերցարանին: Այս խումբը յաղթական ելոյթներ ունեցաւ տեղւոյն թուրք խումբի դէմ մրցումներու ընթացքին: Հետագային այս խումբը փոխանցուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղին:

Սկառտական գործունէութեան գաղափարը երեւան եկաւ երբ Գուճ Գարուի մաս-

նաճիւղի սկաուտները եւ Սամաթիոյ մասնաճիւղի Քնար նուագախումբը ուխտաւորներու ընկերակցութեամբ այցելեցին Ռոտոսթոյի Սբ. Թագաւոր եկեղեցին՝ անոր անուան տօնակատարութեան առթիւ: Մեծ խանդավառութիւն ստեղծուեցաւ տեղւոյն հայութեան մէջ:

1920-21 տարեշրջանին, տեղւոյն Յովհաննէսեան վարժարանի տնօրէն՝ Հրանդ Տէր Անդրէասեան յանձն առաւ աշակերտութեան մարզանքի դասերը եւ Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական կազմի խմբապետութիւնը, ձեռնբերեցութեամբ վարելով այս երկու պաշտօնները:

29 Մայիս, 1921-ին, տեղի ունեցաւ երդման արարողութիւն՝ նախագահութեամբ Տէր Խորէն Աւագ Քահանայի եւ ներկայութեամբ յոյն հրամանատարին: 1921 եւ 1922 տարիները Ռոտոսթոյի սկաուտական գործունէութեան փառքի շրջանները հանդիսացան: Խումբը կազմակերպեց բանակումներ եւ արշաւներ, որոնցմէ նշանաւոր է՝ 52 քմ. ճամբայ կտրելով Մալկարայի մասնաճիւղին տրուած այցելութիւնը:

ԻԶՄԻԹ

1919-ի աշունէն սկսեալ Իզմիթի մասնաճիւղը կը սկսի պաշտօնապէս գործել: Կը կազմուի Ֆուլթպուլի խումբ, որ արագ յառաջդիմութեամբ կը յաջողի 1920-ի միջմասնաճիւղային մրցաշարքի ծիրին մէջ 1-0 արդիւնքով յաղթել նշանաւոր Բերա-Շիշիի մասնաճիւղի կազմին — [Գ.334]: Մարզական ճիւղին մէջ Ֆուլթպուլը կը մնայ գլխաւորը:

ԱՏԱՓԱԶԱՐ

Ատափազարի մասնաճիւղը իր առաքելութեան գիտակցութեամբ նախաձեռնարկ կ'ըլլայ մարզանքի կիրարկումը տեղւոյն

վարժարաններէն ներս մտցնելու: Իրենց կարգին, չրջանի չորս վարժարանները գիտակցութեամբ կը քաջալերեն մարզական շարժումը ու վարժարաններէն ներս կը կազմակերպեն սկաուտական խումբեր, որոնց ամբողջութիւնը կը դառնայ մասնաճիւղի սկաուտական կազմը:

Պատասխանատուներու այս հետաքրքրութիւնը կը խանդավառէ նաեւ չրջանի պատանեկութիւնը, որոնք շուէտական մարզանքներու կողքին կը կիրարկեն նաեւ ֆուլթպուլ եւ աթլետիզմ, եւ իրենց մասնակցութիւնը կը բերեն հայկական առաջին ողիմպիականին:

Մասնաճիւղը մարզանքի կողքին կը կազմակերպէ ընկերային հաւաքոյթներ՝ անդամներու բարոյական դաստիարակութեան մեծապէս նպաստելով:

ԻԶՄԻՐ

Իզմիրը Թուրքիոյ մէջ ամենահին մարզական շարժում ունեցող չրջանը կրնայ համարուիլ: Ծանօթ է որ 1890-ական թուականներուն, Իզմիրի հայ մարզիկները օտար աղումքներու մէջ աչքառու արդիւնքներու հասած են:

Շրջանի հայ մարզական շարժումը իրողապէս սկսաւ դարասկիզբին, երբ Եւրոպայէն մարզանքի փրոֆէսէօրի տիտղոսով Իզմիր վերադարձաւ էլմասեանը ու Մեսրոպեան վարժարանի մարզանքի դասաւանդութիւնները ստանձնեց: Գաղութը գուրկ էր մարզական յատուկ կառոյցներէ: Էլմասեանի գրաւոր թէ բանաւոր քարոզչութիւնը յայտնաբերեցին բարերարներ, որոնց նիւթական ներդրումներով կարելի եղաւ տիպար մարզարան մը կազմակերպել: Վարժարանէն հետզհետէ հասան մարզուած պատանիներ: Էլմասեան իր գործունէութիւնը տարածեց նաեւ չրջանաւարտ երիտասարդներու չրջանակէն ներս եւ կիրակնօրեայ ու գիշերային դասընթացներով

չուտով կազմուեցան մասնագիտացած մարզիկներ եւ խումբեր: 1901-ի տարեվերջի մարզահանդէսը յաւելեալ առիթ մը եղաւ ժողովրդական լայն խաւերը խանդավառելու, երբ հարիւրէ աւելի մարզիկներ, Իզմիրի հայ գաղութին համար աննախընթաց ելոյթ մը ունեցան:

Էլմասեան իր գործունէութիւնը շարունակեց մինչեւ 1905 թուականը: Իր աշակերտները հիմնեցին Մեսրոպեան միութիւնը՝ զուտ մարզական ծրագրով:

1910-ին, Մեսրոպեանի մարզական դասընթացքները վստահուեցան նախկին ախոյեան՝ Պ. Մելիքեանին, որ նորագոյն մեթոտներով շարունակեց էլմասեանի սկսած գործը, յատկապէս շուէտական մարզանքներու կիրարկումով: Դժբախտաբար, Մելիքեանի մեթոտները անբաւարար էին ժամանակաշրջանի մարզական արագ յառաջդիմութեանց հետ քայլ պահելու: Մարզախաղերը հետզհետէ տեղ կը գրաւէին մարզական կեանքէն ներս՝ դասական մեթոտներու փոխարէն: Այսպէսով, երիտասարդներու հետաքրքրութիւնը պակսեցաւ եւ Մեսրոպեան միութիւնն ալ լուծուեցաւ:

Մինչ այդ, հայ մարզիկները, որոնք յունական խումբերու մէջ յաջողագոյն արդիւնքներու հասած էին, 1908-ի պետական հարուածէն ետք կազմեցին «Հայ Մարմնակրթական Ակումբ» մը՝ որ տեսակ մը վերակազմութիւնը պիտի ըլլար էլմասեանի կազմած «Ֆութպոլի Միութիւն»ին: Կային նաեւ՝ Քնար, Վարդանեան, եւ Սահակեան ֆութպոլի խումբերը: Այս վերջինները, միանալով, կազմած էին «Հայ Որսորդաց Ակումբ»ը: 1910-ին, Մկրտիչ Եանրգեանի նախաձեռնութեամբ եւ չորս խումբերու միջեւ մրցաշարքի մը արդիւնքին լոյսին տակ, Միութիւնը ունեցաւ ներկայացուցչական խումբ մը, ծանօթ՝ «Հայ Ակումբ» անունով: Վերջինս, շուտով ունեցաւ շուրջ 600

անդամներ, ծրագիր-կանոնագիր, եւ օգտագործելով դաշտի ու մարզարանի իր կառելիութիւնները, 26 Մարտ, 1912-ին յաջողեցաւ Իզմիրի 1911-12 եղանակի բաժակի ախոյեանութիւնը ապահովել: Այս յաջողութիւնը յաւելեալ առիթ մը եղաւ Հայ Որսորդաց Ակումբի զարգացման: Ան, 1912-ի վերջաւորութեան, կը հաշուէր շուրջ 1000 գործօն անդամ — [ԺԱ.75]: 1913-ին, համբաւաւոր այս խումբը ելոյթներ ունեցաւ Պոլսոյ մէջ, նաեւ պատուաբեր արդիւնքներ արձանագրելով տեղւոյն հայ եւ թուրք խումբերուն դէմ:

Ֆութպոլի կողքին Հայ Ակումբի մարզիկները յաջողութեամբ կիրարկած են նաեւ մարմնամարզ, նշանառութիւն եւ յատկապէս՝ աթլետիզմ: Վերջին ճիւղի յաջողագոյն ներկայացուցիչներ հանդիսացան՝ Գէորգ Յարէթեան (100 մետր եւ երկայնք ցատկել), Կ. Յովհաննէսեան (բարձրութիւն եւ երեք քայլ), Գ. Շաքարեան (սկաւառակ արձակել) եւ Ա. Ֆրնտգբլեան (400 մ.):

Հայ Որսորդաց Ակումբի գործունէութիւնն ալ սառեցաւ առժամաբար, 1914-ին, եւ դադրեցաւ ամբողջ պատերազմի ընթացքին:

1919-էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.-ի ղեկավարութիւնը հետաքրքրութիւն ցոյց տուաւ Իզմիրի հայ մարզական շարժումի նկատմամբ: «Հայ Սկաուտ»ը առանցքը պիտի հանդիսանար այս կապերուն: Իզմիրէն՝ սկաուտ խմբապետ Զաւէն Յարէթեան մեծ հետաքրքրութեամբ եւ կանոնաւոր թղթակցութեամբ տեղեակ պահեց տեղւոյն գործունէութեան մասին:

Իզմիրի յաջողագոյն կազմը կը մնայ ֆութպոլի խումբը՝ «Հայ Ակումբ» անունով: Ան կը մասնակցի տեղւոյն յոյն եւ եւրոպական նաւազներու խումբերու դէմ մրցումներու՝ պատուաբեր արդիւնքներով: Խումբի խաղացողներէն Յարէթեան եղ-

բայրներ եւ Համբարձում Կիւտէնեան յաճախ կը հրաւիրուին յունական խումբի կազմը զօրացնելու: 1920-ի եղանակին, Հայ Ակումբի խումբը Իզմիրի միջ-ակումբային ախոյեանական մրցաշարքին երկրորդ դիրքը կը գրաւէ: Երթուղարձի դրուածամբ այս մրցաշարքը մեծ խանդավառութիւն կը ստեղծէ հայ զանգուածներու մօտ:

Իզմիրի շրջանի հայ խումբերը իրենց Ա. եւ Բ. դասակարգի կազմերով կը կազմակերպեն նաեւ ներքին մրցաշարքեր, որոնց կը մասնակցին Իզմիրէն՝ Վասպուրական եւ Քնար ակումբները միացած, Գարաթաշէն՝ Վարդանեան ակումբը եւ Գօրտէլէոյի Կիլիկեան ակումբը:

Մարզական մնացեալ ճիւղերէն նկատառելի արդիւնքներ կ'արձանագրուին աթլետիզմի մէջ միայն, ուր լաւագոյն արդիւնքներու հասած է Կարապետ Շահինեան՝ բարձրութիւն (1,60մ.), երկայնք (6,55 մ.), եւ 3 քայլ ոստումներու, նաեւ 200 մետր վազքի մէջ (25 երկվայրկեան):

Իզմիրի Հայ Սկաուտներու Միութիւնը ունեցած է սկաուտական զանազան դասակարգի բանակներ:

Քաջաց բանակ՝ կազմուած ազգային կեդրոնական որբանոցի որբերէն՝ 90 անդամներով:

Ա. բանակ՝ Գարաթաշի շրջանէն՝ 20 սկաուտներով:

Շրդ բանակ՝ Էօտեմիշի շրջանէն՝ 35 սկաուտներով: Սկաուտական խումբը ունէր իր օրկանը՝ «Պատրաստ» անունով:

Միութեան ղեկավար մարմինը 1921 տարեշրջանին կը բաղկանար հետեւեալներէն.

Տիրան Աշնան՝ Ատենապետ

Յ. Ահարոնեան՝ Բ. ատենապետ

Վահան Պալապանեան՝ Ատենադպիր

Բարունակ Ալնագեան՝ Գանձապահ

Դանիէլ Դանիէլեան Լեւոն Գպրըզեան՝

եւ Յովհաննէս Մաթիկեան՝ Խորհրդականներ

Մկրտիչ Եանըզեան՝ Ընդհանուր խմբապետ:

Սկաուտական միութեան յաջող գործունէութիւնը ամբողջապէս կ'արժանանայ Պոլսոյ Հ.Մ.Ը.Մ.-ի կեդրոնին քաջալերանքին: Իր կարգին, Իզմիրի Սկաուտական միութեան ղեկավարները կը փափաքէին Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտներու խումբ մըն ալ ունենալ Իզմիրի մէջ, սակայն ոմանք դէմ կ'արտայայտուէին Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտութեան ազգայնական նկարագրին: Գովեստով կ'արտայայտուէին Հ.Մ.Ը.Մ.-ի նշանաբանին՝ «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր»-ի մասին, սակայն կ'ուզէին անբաժան մնալ Պէյտըն Փաուլի միջազգային շարժումէն, «Միշտ Պատրաստ» նշանաբանով, տեսակ մը կամուրջ Հ.Մ.Ը.Մ.-ի եւ Պէյտըն Փաուլի միջեւ: Անգլիացի հիմնադիրին ներկայացուցած էին «Հայ Սկաուտ»-ի օրինակներէն մին, ուր իր նկարը կ'երեւար, եւ վերջինս հիացմունքով արտայայտուած էր այս հրատարակութեան եւ հայ սկաուտներու մասին:

Այսուհանդերձ, հեռաւորութիւնը կը մնար նոյնը եւ գործակցութեան փորձերը խօսքի սահմաններուն մէջ: Պէտք էր սպասել մինչեւ 1922-ի սկիզբը, երբ Հ.Մ.Ը.Մ.-ի կեդրոնական Վարչութեան լիազօրանդամ Թորոս Մեծատուրեան, Իզմիր տրուած այցելութեամբ մը, յաջողեցաւ միացման համաձայնագիր մը կնքել Հ.Մ.Ը.Մ.-ի եւ Իզմիրի Հայ Սկաուտական Միութեան միջեւ — [Դ.186 եւ 206]: Այս ձեւով Իզմիրը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Յոնիական շրջանի կեդրոն:

Իզմիրի մարզական եւ սկաուտական շարժումը, որպէս Հ.Մ.Ը.Մ.-ի մաս կազմող գործունէութիւն, շատ կարճ կեանք պիտի ունենար: Վրայ հասաւ Իզմիրի եղեռնը եւ քաղաքի քրիստոնէութեան դէմ

գործուած վայրագ ջարդը վերջ պիտի դնէր նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի գործունէութեան: Նոյն պատճառով էր նաեւ, որ Պոլսոյ կեդրոնը պաշտօնապէս դադրեցուց Միութեան գործունէութիւնը Օսմանեան կայսրութեան սահմաններէն ներս:

Իզմիրի Հ.Մ.Ը.Մ.-ական ղեկավարութիւնը ցրուեցաւ աշխարհի չորս հովերուն՝ Եւրոպայի եւ Ամերիկայի զանազան երկիրները: Անոնցմէ՝ Յարէթեան եղբայրները հաստատուեցան Յունաստան, ուր անմիջապէս զարգացուցին Հ.Մ.Ը.Մ.-ական մարզական գործունէութիւն:

ԿԻԼԻԿԻԱ

Կիլիկիոյ շրջանին մէջ հայ մարզական եւ սկաուտական շարժումները ծաւալած են հետեւեալ վայրերուն մէջ. Ատանա, Մերսին, Տարսոն, Տէօրթ Եոլ: Ընդհանուր պատերազմի վերջաւորութենէն ետք, Կիլիկիա կը վերադառնան աւելի քան 250 հազար հայեր եւ կը զետեղուին իրենց թողած կեդրոններուն, յատկապէս Ատանայի մէջ:

Շրջանին մէջ լոյս տեսնող օրաթերթը՝ «Կիլիկիա», մարզական եւ սկաուտական շարժումին մղում տալու նպատակով իր՝ 2 Մարտ, 1919-ի թիւով եւ «Հայ Նոր Սերունդի մարմնակրթութիւնը» վերնագրով յօդուած մը կը հրատարակէ, ուր կ'առաջարկէ կազմակերպել Հայ Մարմնակրթական Միութիւն մը: Այս ծրագիրը շուտով իրականութիւն կը դառնայ Արիամարտ Մարմնակրթական Միութեան հիմնադրութեամբ:

Շրջանին մէջ գործող բոլոր հայ կըրթական հաստատութիւնները դպրոցներէն ներս կը քաջալերեն մարզական եւ սկաուտական շարժումները: Ատանայի Աբգարեան վարժարանը գեղեցիկ նախաձեռնութիւնը կ'ունենայ մարզանքի դասընթացքներուն համար Պոլիսէն հրաւիրելու

նշանաւոր մարզիկ ու բանաստեղծ, Հ.Մ.Ը.Մ.-ական Մատթէոս Զարիֆեանը:

26 Նոյեմբեր, 1919, թուակիր նամակով, Արիամարտի ընդհանուր խմբապետ Միքայէլ Իշլէմէճեան, որ Հայաստանէն վերադարձած սպայ մըն էր, կապ կը հաստատէ Պոլսոյ կեդրոնին հետ եւ ուղղութիւն կը խնդրէ սկաուտական շարժումը աւելի ապահով հիմերու վրայ դնելու նպատակով, եւ կը յայտնէ Կիլիկիոյ բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ մասնաճիւղեր հիմնելու ծրագիրը:

Կիլիկիա վերադարձող զանգուածներու շարքին, Փոր Սաիտի Հ.Մ.Ը.Մ.-ի որբանոցի սկաուտները, իրենց պետին՝ Համազասպ Փանոսեանի (կրկին զինուորական սպայ մը) առաջնորդութեամբ կը հաստատուին Մերսին: Համազասպ Փանոսեանն ալ, 19 Դեկտեմբեր, 1919, թուակիր նամակով մը կապ կը հաստատէ Հ.Մ.Ը.Մ.-ի կեդրոնին հետ, դրուատելով սկաուտական գործունէութիւնը, գործակցութեան տրամադրութիւն յայտնաբերելով:

Իր կարգին, Տարսոնի մասնաճիւղի վարչութեան դիւանը՝ ատենապետ Հ.Յ. Յակոբեան եւ ատենադպիր Յ. Ա. Չաքմաքճեան, 24 Նոյեմբեր, 1919, թուակիր նամակով Պոլսոյ Հ.Մ.Ը.Մ.-ի կեդրոնին կը յայտնէ իր վերակազմութիւնը եւ կը խնդրէ սկաուտական գրականութիւն եւ «Հայ Սկաուտ»ի առաքում:

Հետզհետէ, Կիլիկիոյ շրջանները կը հասնին նոր ուժեր, ինչպէս՝ Արմէնակ Տէլլալեան՝ Եգիպտոսէն, լեգէոնական Յակոբ Յակոբեան՝ զինավարժութեան մասնագէտ եւ ուրիշներ:

Ատանայի մէջ այդ օրերուն կը գործէին Արիամարտ Մարմնակրթական Միութիւնը եւ Կիլիկիա Հայկական Ֆութպոլի խումբը: Պոլսոյ կեդրոնի հաւանութեամբ կը կազմուի Հ.Մ.Ը.Մ.-ի առժամեայ յանձնախումբ մը, Ատանայի մէջ: 14 Հոկ-



1920-ի Ատանայի Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտ աստիճանատրական կազմը ակումբին առջև նկարուած: Վերի շարք ձախէն երկրորդը՝ Քերոբ Առաքելեան, երրորդը՝ Երուանդ Նահապետեան, դրօշակակիրը՝ Պետրոս Գայեան: Վարի շարք ձախէն երրորդը՝ Ռուբէն Մափիսաքալեան, չորրորդը՝ Յակոբ Յակոբեան, հինգերորդը՝ Բիւզանդ Մխասանտիքեան, վեցերորդը՝ Յակոբ Աւագեան, եօթներորդը՝ Վաղարշակ Գոնտուրաճեան: Գետինը նստած՝ ակումբի պահակը՝ Լեւոնեան«թիբ»

տեմբեր, 1919-ի կոչով, այս յանձնախումբը հրաւէր կ'ուղղէ Կիլիկիոյ հայութեան՝ իրենց զաւակները յանձնելու Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական շարժումին: 14 նոյեմբեր, 1919-ին, կ'ընտրուի Կիլիկիոյ Հ.Մ.Ը.Մ.-ի Շրջանային Վարչութիւնը: Ատանայի «Նոր Գիւղ» շրջանի վրանաբնակ

հայերը, որբանոցներու եւ վարժարաններու աշակերտութիւնը մեծ խանդավառութեամբ կը խտացնեն սկաուտական շարքերը: Սկաուտական խորհուրդը կը վարէ Եսայի Պզտիկեանը: Սկաուտ խմբապետներն են՝ Միքայէլ Իշլեմէճեան, Արմենակ Տելլալեան, Յակոբ Յակոբեան, Բիւզանդ

Մխսաւետիքեան: Աստիճանաւորներն են՝ Երուանդ Գասապեան, Վաղարշակ Գոնտուրաճեան, Յակոբ Աւագեան, Համբարձում Քերթմէնեան, Կարապետ Քերթմէնեան, Յակոբ Ճըռեան, Պետրոս Գայայեան, Պետէլեան: Որբանոցի խմբապետ՝ Երուանդ Ատրունի, իսկ փոխ-խմբապետներ՝ Յակոբ Բանճարեան, Գարեգին Գէորգեան եւ ուրիշներ:

Սկառտներու թիւը շուտով կ'անցնի 400-ը: Խումբը կ'ունենայ իր 66 հոգիէ բաղկացած նուագախումբը: Արենուշներու խումբեր կը կազմուին՝ կանխելով նոյնիսկ Պոլսոյ արենուշական շարժումը:

28 Մարտ, 1920-ին, Հ.Մ.Ը.Մ-ի նորընտիր Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ շրջանի սկառտներու անդրանիկ երգման արարողութիւնը, Աբգարեան վարժարանի բակին մէջ: Հանդիսութիւնը կը հովանաւորէ Հայաստանի պատուիրակութեան ներկայացուցիչ Միհրան Տամատեանը՝ որ ազգայնաշունչ մթնոլորտի մէջ ներկաները կը խանդավառէ նորանկախ Հայաստանի եւ անոր խորհրդանիշ՝ Եռագոյն դրօշակի ներբողանքով: Խօսք կ'անեն նաեւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Կ. Աստուածատուրեան եւ Վ. Արծրունի:

Սկառտական երգման երկրորդ արարողութիւնը տեղի ունեցաւ 9 Մայիս, 1920-ին, Հայ Կաթոլիկ Առաջնորդարանի բակին մէջ, ներկայութեամբ նոյն պաշտօնական հիւրերուն: Երրորդը՝ 31 Յուլիս, 1921ին:

Սկառտական շարժումի կողքին կը ծաւալի նաեւ մարզականը: Կիլիկիա Ֆուլթպոլի ակումբի, Հայ Արիներու եւ որբանոցի Ֆուլթպոլի խումբերը յաջող ելոյթներ կ'ունենան տեղւոյն թուրք եւ յոյն կազմերուն դէմ: Պասքէթպոլը կը կիրարկուի որբանոցի խումբերուն կողմէ: Կը մշակուի նաեւ աթլէթիզմի ճիւղը՝ վազքերու, արձակում-

ներու եւ ոստումներու բաժիններով: Որբանոցի ամբողջ աշակերտութիւնը, բաժնւած՝ կարմիր եւ դեղին երկու խումբերու, մրցակցութեան առիթ ստեղծելով, աւելի կենդանի ու հետաքրքրական կը դարձնեն մարզական ելոյթները:

Ինչպէս Թուրքիոյ այլ վայրերուն մէջ, Կիլիկիոյ շրջանի՝ հայերէ պարպումը արագօրէն վերջ պիտի դնէր այս խոստմնալից գործունէութեան: Կիլիկիոյ, յատկապէս Ատանայի Հ.Մ.Ը.Մ.-ական հունձքի ներկայացուցիչներ պիտի ըլլային աստիճանաւորներ՝ Գասապար, Քերոբ եւ Յարութիւն Առաքելեան եղբայրները, Պետրոս եւ Լեւոն Գայեան եղբայրներ, որոնք հետագային, Յունաստանի, Մեքսիկայի եւ Միացեալ Նահանգներու մէջ Հ.Մ.Ը.Մ.-ական շարժում ստեղծեցին, կամ գոյութիւն ունեցող շարժումներուն իրենց կարեւոր նպաստը բերին: Նոյն պատուաբեր ծառայութեան պիտի լծուէին Հ.Մ.Ը.Մ.-ականներու այլ փաղանգներ մերձաւոր արեւելեան այլ մասնաճիւղերու մէջ:

ՊԱԹՈՒՄ

1920-ի Յուլիս 30-ին, Պոլիսէն Հայաստան մեկնող պաշտօնական եռանդամ առաքելութիւնը կը հասնի Պաթում, ուր 10 օրեր մնալու կը ստիպուի: Այդ առիթէն օգտուելով, Հ.Մ.Ը.Մ.-ական խմբապետները կապ կը հաստատեն տեղւոյն հայ սկառտներուն հետ, որոնք կը գործէին ռուս սկառտներու կազմերուն մէջ: Անոնք խորհուրդ կու տան հայ սկառտներուն կազմելու առանձին հայ խումբեր եւ ազգային դաստիարակութեամբ զարգացնելու հայ սկառտները — [Գ.306]:

Առաջարկէն գործի անցնելով, եւ Պաթումի ազգային Միութեան նախագահ Մնտօեանի օժանդակութեամբ, կը հիմնուի Պաթումի Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղը առայ-



1919-ին Ատանայի սկաուտներու ընդհ. հաւաքոյթ՝ Հայ Կաթողիկէ Վարժարանի բակը
 Աստած սկաուտական տարազով, խորհուրդի անդամներ,
 ձախէն երկրորդը՝ Իշլեմէճեան, դրօշակակիրը Բիզանդ Մխասեփեան

ժրմ գուտ սկաուտական՝ 20 հոգինոց խումբով — [ԺԳ.90]:

Պաթումի Հ.Մ.Ը.Մ.-ի գործունէութեան շարունակութեան մասին տեղեկագրական աղբիւրներ կը պակսին: Ենթադրաբար կարելի է եզրակացնել, թէ խորհրդային կարգերու հաստատումով վերջ գտած ըլլայ անոր գործունէութիւնը:

ՔԷՕԹԱՀԻԱ

Կեդրոնական Թուրքիոյ հայաշատ այս կեդրոնն ալ ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ, որուն մասին, ղժբախտաբար, յատուկ տեղեկութիւններ կը պակսին:

ՊՐՈՒՍԱ

Պոլիսէն դուրս, Գաւառի մէջ գործող

յիշատակելի վերջին մասնաճիւղը պիտի ըլլայ Պրուսայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը — [Դ.40]:

Հիմնուած՝ 1921ի Մայիսին, Պրուսայի սկաուտական եւ մարզական գործունէութիւնները շատ արագ ծաւալում կը ստանան: Մասնաճիւղի անդամները, գլխաւորաբար արհեստաւոր պատանիներ ու երիտասարդներ, կը բոլորուին սկաուտական խումբին շուրջ: Նիւթական անցուկ պայմանները տարազաւորման դժուարութիւններ կը ստեղծեն: Խումբը կ'ունենայ միօրեայ արշաւներ — [Դ.42]:

Ֆուլթպոլի խումբը 1921ի ամրան կ'ունենայ յաղթական ելոյթներ, տեղւոյն յոյն գաղութի զինուորական եւ սկաուտական կազմերուն դէմ, յաղթական արդիւնքներով — [Դ.77]:

Գ. ՄԱՍ

Հ.Մ.Ը.Մ.-ի ՏԱՐԱԾՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ՀԻՄՆՈՒՄԷՆ ՄԻՆՉԵԻ

ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան պատմութեան մէկ նոր փուլը կը սկսի իր տարածումով՝ Պոլսոյ կեդրոնէն մեկնելով՝ դէպի աշխարհի չորս ծագերը: Արդարեւ, երիտասարդ եւ ղեկավար Հ.Մ.Ը.Մ.ականներ, որոնք Համաշխարհային Առաջին Պատերազմի վերջաւորութեան՝ ապահովութեան թէ շահաբեր աշխատանքի փնտռտուքով հեռացան Օսմանեան Կայսրութեան սահմաններէն դէպի Նոր Աշխարհի ու Եւրոպայի երկիրները, իրենց հետ տարին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիրները եւ ազգային ինքնուրոյն կազմակերպութիւն ունենալու գաղափարը: Հիւրընկալ երկիրները, որոնց յետպատերազմեան վերականգնումի ճիգերը մարզանքի ու մարզախաղերու նկատմամբ նպաստաւոր վիճակներ կը պարզէին, իրենց կարգին, բարեբեր միջավայրեր կը հանդիսանային եկուոր երիտասարդութեան համար:

Ահա այս պայմաններու նպաստաւոր զուգադիպութիւնն էր, որ մեծապէս օգտակար պիտի դառնար Հ.Մ.Ը.Մ.ի վերընձիւղման, յառաջադէմ այն երկիրներուն մէջ՝ որպիսիք էին Ամերիկայի Միացեալ Նահանգներն ու Ֆրանսան, թուելու համար միայն այս երկուքը զոյգ երկրամասերուն մէջ:

Միւս կողմէ, Մերձաւոր Արեւելքի այն երկիրները, ուր տեղահանուած հայութեան զանգուածներ հաստատուած էին, որբախնամ թէ ազգապահպանումի անմիջական միջոցներու ստեղծումով, Մարմնակրթական Միութեան նպատակներուն իրականացման արդիւնաբեր միջավայրեր հանդիսացան:

Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան այս մասը պիտի ընդգրկէ, ուրեմն, հիմնումէն մինչեւ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի սկզբնաւորութեան ժամանակաշրջանը: Այս

միջոցին, արագ կերպով, եւ ժամանակագրական այս շարքով Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր հիմնուեցան հետեւեալ երկիրներուն մէջ.

Ամերիկայի Միացեալ Նահանգներ

Ֆրանսա

Պուլկարիա

Ռումանիա

Յունաստան

Պելճիքա

Աւստրիա

Լիբանան

Սուրիա

Կիպրոս

Արժանթին

Պրագիլ

Ուրուկուէյ

Մեքսիքա

Պաղեստին

Յորդանան

Իրաք

Պարսկաստան


Եգիպտոս

Վերջինս, երիցագոյնը ըլլալով հանդերձ, 1937ին միայն դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ: Իսկ Գահիրէի ԱՐԱՐԱՏը եւ Աղեքսանդրիոյ ԿԱՄՔը Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին միացան աւելի ուշ:


Ներկայ՝ Գ. ՄԱՍին մէջ պիտի գտնենք նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի տարածման ժամանակակից այլ շարժումներ, որոնք պաշտօնապէս ընդհանուր կառոյցին չմիանալով հանդերձ, իրենց նպատակակից եւ գաղափարակից դիմագիծով Միութեան գործունէութեան զուգահեռ ընթացք որդեգրեցին, ըլլան անոնք նոր հաստատուած վայրերու մէջ՝ ինչպիսին էր Հնդկաստանի հայ գաղութը, թէ աւելի հին վայրերու մէջ ինչպէս՝ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ



- ՆԻԻ ԵՈՐՔ
- ՈՒԵՍԹ ՀՈՊՈՔԸՆ
- ԻԻՆԻՈՆ ՍԻԹԻ
- ԱՍԹՈՐԻԱ
- ԳԵՄՏԸՆ
- ԲԱԹԵՐՍՈՆ
- ՖԻԼԱՏԵԼՖԻԱ
- ՊՈՍԹԸՆ
- ԲՐՈՎԻՏԵՆՍ
- ԳԱԼԻՖՈՐՆԻԱ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆԻԹԻԻՆ



ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՄԻԱՑԵԱԼ

ՆԱՀԱՆԳՆԵՐ

Ման Ֆրանսիսո

ԲԱԼԻՓՈՐՆԻԱ

Լոս Անձելոս

Պոսթոն

Բրուկլինս
Նիւ Եորք

Հոպքոլդն

Ֆիլատելֆա

Գամտէն

Բաթէրտոն

ԱՏՂԱՆՏԵԱՆ

ՈՎԿԻԱՆՈՍ

ՆԻԻ ԵՈՐՔ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու մեծագոյն ոստանը՝ Նիւ Եորք իր աշխարհագրական դիրքով, հաղորդակցութեան ձեռնտու պայմաններով, աշխատանքի կարելիութիւններով եւ հին գաղութ մը ըլլալու հանգամանքով Հ.Մ.Ը.Մ.ի տարածման առաջին կայանը հանդիսացաւ:

Արդարեւ, 1921ի Փետրուարի 7ին, Նիւ Եորքի մասնաճիւղի հիմնադրութեան կը նախաձեռնեն Պոլսոյ մասնաճիւղերու նախկին անդամներէն՝ Մամաս Խուպեսէրեան, Օննիկ Քեմանճեան եւ Յակոբ Գարապէկեան որոնց շուրջ հաւաքուած մարզասէրներու խումբը կ'ընտրէ մասնաճիւղի անդրանիկ Վարչութիւնը՝ ատենապետութեամբ Տօքթ. Ն. Պայընտրեանի — [ԺԱ. 252]:

Ապրիլին, նոր ուժերու միացումով կը կազմուի երկրորդ վարչութիւն մը՝ կրկին Տօքթ. Պայընտրեանի ատենապետութեամբ, եւ մասնակցութեամբ՝ Գարրիէլ Մաճառեանի, Արշաւիր Հիւսնեանի, Մամաս Խուպեսէրեանի, Օննիկ Քեմանճեանի եւ Տիգրան Խոյեանի, վերջինին վստահելով մարզական ընդհանուր պատասխանատուութիւնը — [ԺԳ. 156]: Այս կազմը իր եռանդուն գործունէութեամբ ամերիկահայ գաղութին լայնօրէն կը ծանօթացնէ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակները, իր շուրջ հաւաքելով խանդավառ երիտասարդութիւն մը:

Ֆուլթոնի առաջին խումբը, խմբապետութեամբ Տիգրան Խոյեանի, իր փորձերը կը կատարէ Վոն Գորտլէնտ Բարքի դաշտերուն վրայ, ուր հայերու հետաքրքիր բազմութիւն մը կը քաջալերէր հայկական խումբի մրցումները: Նոյն վայրին մէջ կը կատարուին նաեւ աթլետիկ միջոցները:

1921ի Դեկտեմբերին, խումբի զօրացումով Հ.Մ.Ը.Մ.ը մաս կը կազմէ Ֆուլթոնի Մեթրոփոլիթըն Լիկին, որուն կը մասնակցին զանազան ազգերէ 16 տարբեր խումբեր: Շնորհիւ իր կազմակերպու-

ածութեան եւ թեքնիք կարողութեան, խումբը կը դասուի երկրորդ՝ անպարտելի ախոյեան Try Connel Celtic-ի դէմ աւարտական մրցումին 3-1 արդիւնքով պարտուելէ ետք:

Մասնաճիւղի մարզական գործունէութիւնը զարգանալով, հետզհետէ կը կիրարկուին շուէտական մարզանքներ եւ ըմբշամարտ, հայոց եկեղեցւոյ սրահին մէջ, առաջնորդութեամբ Արշաւիր Հիւսնեանի:

Ֆուլթոնի կողքին կը կազմուին պասթօնային եւ թենիսի խումբեր: 1922-ի Մարտ 18-ին, մասնաճիւղը մարզահանդէս մը կը սարքէ, ուր ներկայ կը գտնուին Բարգէն Եպիսկոպոս եւ անկախ Հայաստանի նախկին դեսպան՝ Գարեգին Բաստրմաճեան:

1922-ի աշնան մասնաճիւղը կը կազմակերպէ աթլետիկ միջոցներ իր անդրանիկ ելոյթը Պրուքլինի մէջ, մասնակցութեամբ՝ Ուեսթ Հոպքընի մասնաճիւղի եւ Նիւ Ճրգիի Փիրամիտ ակումբի մարզիկներուն: Աթլետիկ միջոցները կը կրկնուին յաջորդ տարիներուն աւելի ճոխ յայտագիրներով: 1923-էն սկսեալ, անոնց կազմակերպութիւնը կը ստանձնէ Ամերիկայի Շրջանային կեդրոնը:

Միացեալ Նահանգներու անդրանիկ մասնաճիւղի այս յաջողութիւնը վարակիչ կը դառնայ, եւ Նիւ Եորքի արուարձաններուն մէջ հետզհետէ կը կազմուին Հ.Մ.Ը.Մ.-ի այլ մասնաճիւղեր:

ՈՒԵՍԹ ՀՈՊՈՔԸՆ

Այս մասնաճիւղը, 1922-էն սկսեալ, մօտակայ Նիւ Եորքի հետ կ'ունենայ ֆուլթոնի եւ աթլետիկ միջոցներ: Դժբախտաբար, անոր կեանքը համեմատաբար կարճ պիտի ըլլար եւ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան քսանամեակին՝ Միացեալ Նահանգներու մէջ գործող մասնաճիւղերու ցանկէն պիտի բացակայէր:

ԻՆՏԻՈՆ ՍԻԹԻ

Իւնիոն Սիթիի Հ.Մ.Ը.Մ.-ը, հիմնադրւած՝ 1922-ին, Նիւ Եորքի արուարձաններու կարեւորագոյն մասնաճիւղն է: Ունեցած է Ֆուլթոնի բեղուն գործունէութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղերու շարքին գրաւելով պատուոյ դիրքեր: Մասնաճիւղի մղիչ ուժը հանդիսացած է Միհրան Նազաչեան, որուն միացած են իր երեք եղբայրները՝ Ֆուլթոնի խումբին յարձակողական գիծը զօրացնելով:

Մասնաճիւղը մշակած է պասքեթպոլ եւ թենիս՝ միշտ լաւագոյն արդիւնքներով, ինչպէս նաեւ մարմնամարզ եւ աթլետիզմ:

Անդամներուն թուական պատկերով ալ, Իւնիոն Սիթին կը գրաւէ առաջին դիրքը, 1938-ին՝ 50 անդամ: 1938-ին վարչութեան ատենապետն էր Յ. Ստամպոլեան:

ԱՍԹՈՐԻԱ

Զօրաւոր խումբեր ունեցող մասնաճիւղ մը, հիմնուած նախկիններուն նման՝ 1922-ին: Լաւագոյն արդիւնքներ արձանագրած է պասքեթպոլի մէջ միջ-մասնաճիւղային խաղերուն՝ յաճախ հանդիսանալով Բ. ախոյեան:

1938-ին կը հաշուէր 20 անդամ: Ատենապետն էր Բ. Զաբուլեան:

ԳԵՄՏԸՆ

Ֆիլատելֆիոյ մօտակայ փոքրիկ աւանի մը մասնաճիւղը, որ մշակած է ֆուլթոն, պէյզպոլ, պասքեթպոլ եւ թենիս: Մասնաճիւղի մարզիկներէն՝ Քարիքեան Ամերիկայի Բենսիլվանիա նահանգի թենիսի ախոյեանութեան տիրացած է:

ԲԱԹԵՐՍՈՆ

Նիւ Եորքի արուարձաններէն՝ Բաթերսոնի հայերը եւս ունեցած են Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը: Բաթերսոնի Հ.Մ.Ը.Մ.-ը, 1923էն սկսեալ, կիրարկած է ֆուլթոն, պասքեթպոլ եւ աթլետիզմ: 1938-ին վարչութեան ատենապետն էր Պ. Ճղրայէլեան:

ՖԻԼԱՏԵԼՖԻԱ

Շրջանի երկրորդ կարեւորագոյն մասնաճիւղը: 1922-ի իր հիմնադրութեան օրերէն սկսեալ իր շուրջ հաւաքած է 50-ի մօտ անդամ: Կիրարկած է ֆուլթոն, պասքեթպոլ, աթլետիզմ, շուէտական եւ այլ մարզանքներ: Մասնակցած է ամերիկահայ ողիմպիականներուն: Սերտ գործակցութիւն մշակած է մօտակայ Գեմտընի մասնաճիւղին հետ: Մասնաճիւղը մրցակից հանդիսացած է Իւնիոն Սիթիի Հ.Մ.Ը.Մ.ին, որուն տրուած յաճախակի այցելութիւնները խանդավառած են զոյգ խումբերու յաջողութիւնները: 1928, Փետրուարի 11-ի մըրցումներուն Ֆիլատելֆիա պասքեթպոլի խաղին պարտութեան մատնեց Իւնիոն Սիթին 35-14, իսկ ֆուլթոնի մէջ՝ 1-0 արդիւնքով:

1933-ին, մասնաճիւղը կը ստանձնէ Ամերիկահայ 7-րդ Ողիմպիական խաղերու կազմակերպութիւնը, որոնց շարքը 5 տարիէ ի վեր դադրած էր: Կը կազմակերպէ մրցահանդէսներ, հաւաքոյթներ եւ մեծապէս կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ.ի դէմ բացուած պայքարներու ջլատման:

1934-ին, Ամերիկայի Մ. Նահանգներու շրջանի պատգամաւորականի իր մասնակցութիւնը կ'ըլլայ փոթորկալից: Կեդրոնի օրուայ ղեկավարութիւնը կը մերժէ ճանչնալ մասնաճիւղը որպէս Հ.Մ.Ը.Մ.-ի միակողմանի, զայն ամբաստանելով որպէս կուսակցական եւ հատուածական գործունէութիւն:

ունեցող շրջան, եւ կը պահանջէ անոր լուծումը: Մասնաճիւղը, իր կարգին, կը մերժէ ճանչնալ Նիւ Եորքի կեդրոնի հեղինակութիւնը եւ Մ. Նահանգներու այդ պատգամաւորականէն սկսեալ կը գործէ ինքնանկախ՝ Տ. Խոյեանի եւ իր գործակիցներու մղումով:

Մասնաճիւղի խումբը մաս կը կազմէ Բենսիլվանիա նահանգի Ֆուլպուրի լիկին:

Պահ մը մասնաճիւղի գործունէութիւնը տկարացած է եւ գրեթէ դադրած: Բ. Աշխարհամարտի նախօրեակին, վերակազմութեան օրերուն, ան կը հաշուէր 15 անդամ: Վարչութեան ատենապետն էր Պ. Պետրոսեան: Մասնաճիւղէն ներս ուշագրաւ գործունէութիւն ունեցած են՝ Չարեհ Կրկեան, Վահրամ եւ Գառնիկ Քեչկէկեաններ, Մանկիկեան, Էլվանեան եւ ուրիշներ:

ՊՈՍԹԸՆ

Պոսթընի հայահոծ գաղութն ալ, Նիւ Եորքին հետեւելով, 1920-ական թուականներուն սկիզբէն ունեցաւ իր մասնաճիւղը: Դժբախտաբար Հ.Մ.Ը.Մ.-ի շարժումի հետաքրքրութիւնը նուազ վարակիչ արդիւնք տուաւ Պոսթընի մէջ: Մասնաճիւղը ունեցաւ իր ֆուլպուրի խումբը, որուն սկզբնական խանդավառութիւնը տեւապէս նոյնը չսընաց:

1923ի ամրան, Տիգրան Խոյեան* այցելեց մասնաճիւղին որուն գործունէութիւնը գրեթէ դադրած, էր եւ «Հայրենիք»

օրաթերթին մէջ տուած իր գրութիւններով ու դասախօսութիւններով, կրկին կեանքի կոչեց մասնաճիւղի գործունէութիւնը: Կորիզ մը վերակազմակերպուեցաւ քարտուղար Չարեհ Սուրեանի ջանքերով: Այս վերակազմութիւնն ալ, որպէս Հ.Մ.Ը.Մ.-ի տիպար մասնաճիւղ, երկար կեանք չունեցաւ:

Միացեալ Նահանգներու Շրջանի պատգամաւորական ժողովը, ինչպէս պիտի տեսնենք աւելի ուշ, չնպաստեց մասնաճիւղի գործունէութեան զարգացման: Բ. Աշխարհամարտի նախօրեակին Պոսթընի մասնաճիւղը կազմալուծուած էր արդէն:

ԲՐՈՎԻՏԵՆՍ

1923-ին հիմնուած՝ Փրովիտենսի մասնաճիւղի կեանքն ալ Պոսթընի նմանողութեամբ ընթացաւ: Տիգրան Խոյեան, 1925-ին այցելեց շրջանը, զարկ տալու համար ըսկըսուած գործունէութեան: Դժբախտաբար, արդիւնքը դրական չեղաւ եւ մասնաճիւղի գործունէութիւնը կարճատեւ եղաւ — [ԺԳ. 183]:

ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

Գալիֆորնիոյ մասնաճիւղի գործունէութեան մասին լայն տեղեկութիւններ յայտնող աղբիւրները կը պակսին: Յիշենք միայն որ 1926 Սեպտ. 12-ին, տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.-ը հրապարակային իր առաջին

* Տիգրան Խոյեան, «Նահատակ Յեղի Անմահներ» հատորին մէջ, կը գրէ, թէ 1932-ին այցելած է Նիւ Եորքի մօտակայ հայահոծ քաղաքներ, նոր մասնաճիւղեր հիմնելու ծրագրով — [ԺԱ. 169]:

Մեր ենթադրութեամբ, այս թուականը 1923 պէտք է ըլլայ: Սխալը կրնայ տպագրական ըլլալ: Այս ենթադրութեան հիմ կը ծառայեն.

1) Նոյն հատորին մէջ յիշուած այցելութիւն մը՝ 1925-ին Փրովիտենս, «հիմնուած մասնաճիւղը կենդանի պահելու համար» — [ԺԱ. 183]:

2) Խոյեան շէր կրնար մինչեւ 1932 թուականը սպասել Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր հիմնելու մասին, նոր միայն մտածելու համար, երբ 1921-էն ի վեր, Նիւ Եորքի մէջ, ան լծուած էր այդ աշխատանքին:

Ելոյթը կը կազմակերպէ մրցահանդէս-պարահանդէսով մը: Մրցահանդէսը, որ կը բաղկանար ֆուլթայոլի մրցումէ եւ աթլետիկ միջոցի խաղերէ, կը ղեկավարուի Նիւ Եորքի Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Մ. Խուպեսերեանի եւ Տ. Խոյեանի կողմէ: Ելոյթի կազմակերպութեան կը նպաստեն Կ. Թաշճեան եւ Ա. Իսկենտէրեան: Այս մրցահանդէսը սկզբունքով պատրաստութիւնը պիտի ըլլար Գալիֆորնիոյ մասնաճիւղին՝ Ամերիկահայ Դ. Ողիմպիական խաղերու մասնակցութեան, որուն համար թրւական նախատեսուած էր 26 Սեպտեմբեր, 1926-ը: Սակայն խումբերը Նիւ Եորք չկրցան գտնուիլ որոշուած թուականին:

Մասնաճիւղի գործունէութիւնը, առհասարակ, եղած է անկայուն: Հայրենակցական եւ այլ մարզական խմբակցութիւններ առիթ չեն տուած Հ.Մ.Ը.Մ.-ի խումբերու ուրոյն գործունէութեան — [Ի/9-10.15]:

*
* *

Միացեալ Նահանգներու՝ վերոյիշեալ մասնաճիւղերու վերակազմութեանց մասին պիտի հանդիպինք յաջորդող հատորներուն մէջ:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ամերիկահայ Առաջին Ողիմպիականներուն կազմակերպութեան նախաձեռնեց Նիւ Եորքի մասնաճիւղը:

Խաղերը տեղի ունեցան 1922-ի Սեպտեմբերի առաջին շաբաթը, Պրուքլին քաղաքի Ulmer Park-ի դաշտին վրայ: Խաղերուն մասնակցեցան Նիւ Եորքի եւ Ուեսթ Հոպոքընի մասնաճիւղերը, ինչպէս նաեւ՝ Նիւ Ճրզիէն Փիրամիտ մարզական ակումբի հայ մարզիկները: Խաղերու ընդհանուր դատաւորն էր Հայկ Սարաֆեան: Հանդիսութիւնը հովանաւորեց Օրուայ Թագուհի՝ Տիկին Արաքս Զարիֆեան — [ԺԳ. 161]:

Յաջորդող տարիներուն ամերիկահայ ողիմպիականներու կազմակերպութիւնը ձեռք առաւ շրջանի Կեդրոնական Վարչութիւնը, որ զանոնք իրականացուց հետեւեալ շարքով.

Ամերիկահայ Բ. ընդհանուր ողիմպիականներ՝ 10 Օգոստոս, 1924ին՝ նոյն վայրին մէջ — [ԺԳ.177]:

Ամերիկահայ Գ. ընդհանուր ողիմպիականները՝ 30 Օգոստոս, 1925ին՝ Պրուքլին — [Ի/2.14]:

Ամերիկահայ Դ. ողիմպիականները՝ 26 Սեպտեմբեր, 1926ին՝ Պրուքլին — [ԻԲ/7.11]:

Ամերիկահայ Ե. ողիմպիականները տեղի ունեցան 11 Սեպտեմբեր, 1927-ին, Ասթորիայի մէջ — [ԻԳ.76]:

Ամերիկահայ Զ. ողիմպիականները տեղի ունեցան 1928-ին: Ապա, հինգ տարուայ ակամայ դադարէ մը ետք, տեղի կ'ունենան Ամերիկահայ Է. ողիմպիականները, 1933-ին, նախաձեռնութեամբ Ֆիլատելֆիոյ մասնաճիւղին, որ իր փայլուն օրերը կ'ապրէր:




ՖՐԱՆՍԱ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՖՐԱՆՍԱ

- ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ
- ՓԱՐԻԶ
- ԱԼՖՈՐՎԻԼ
- ԺՈՒԱՆՎԻԼ
- ԱՆԿԻԷՆ
- ԻԹԱԼԻ
- ՊՈՒԱ ԳՈԼՈՄՊ
- ՇԱԻԻԼ
- ՊԵԼՎԻԼ
- ՍԵՎՐԱՆ
- ՍԵՆԹՈՒԷՆ
- ՌՈՆԻ
- ՌԵՆՍԻ
- ՍԱՐՍԷԼ
- ԱՆԻԷՌ

- ՎԻԼԻԷ ԼԸ ՊԷԼ
- ՎԵՆՍԷՆ
- ԿՈՆԷՍ
- ՄԱՐՍԷՅ
- ԼԻՈՆ
- ՏԵՍԻՆ
- ՎԱԼԱՆՍ
- ԿՐԸՆՈՊԼ
- ՍԵՆԹ ԷԹԻԷՆ
- ԷՔՍ ԱՆ ՓՐՈՎԱՆՍ
- ՆԻՍ
- ԹՈՒԼՈՆ
- ՌՈՄԱՆ
- ՍԷՆ ՇԱՄՈՆ
- ՎԻԷՆ
- ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՕ



ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի շրջանի կազմութիւնը, Պոլսոյ կեդրոնի գործունէութեան օրերուն, արտասահմանի մէջ առաջին եւ կարեւորագոյն իրականացումը կը համարուի:

Արդարեւ Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ 16 Յունիս, 1920ի թիւ 16 համարով կը տեղեկացուի Փարիզի մասնաճիւղի կազմութիւնը եւ կեդրոնական Վարչութեան 7 Յունիս 1920ի նիստի ընթացքին՝ անոր վաւերացումը — [Գ.264]: Այդ թուականէն՝ Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը բազմաթիւ վերիվայրումներ արձանագրած է: Շատ արագ եւ քաջալերական յաջողութիւններուն, մասնաճիւղերու մարզական եւ սկստական խումբերու կազմութիւններուն, յաճախ յաջորդած են երկարատեւ դադարներ եւ անգործունէութեան ժամանակաշրջաններ:

Շրջանային կազմակերպչական գործունէութիւն

Փարիզը, որպէս երիցագոյն մասնաճիւղ, բնականաբար քաջալերողը պիտի ըլլար Ֆրանսայի տարածքին եւ յատկապէս մայրաքաղաքի հսկայական արուարձանային ցանցին մէջ իրականացող նախաձեռնութիւններուն:

Դեռ, 1920ական թուականներու սկիզբը, Ռիւ Տը Կրընելի մէկ սրահին մէջ, Փարիզ նոր հաստատուած նախկին Հ.Մ.Ը.Մ.ականները կը փորձեն կեդրոնական Վարչութիւն մը կազմել արուարձաններու մէջ գործող խումբերու մասնակցութեամբ: Փորձը կը ձախողի — [ԻԲ/1.11]:

1926ին, Պատգամաւորական առաջին ժողովը կը կազմէ Շրջանային Վարչութիւն ատենապետութեամբ՝ Տոքթ. Լ. Գրիգորեանի: Անոր գլխաւոր գործունէութեան

ճիւղը կ'ըլլայ ֆուլթպոլը — [ԺԱ.161]: 1927ին, այս կազմին հրաժարելուն պատճառով, կազմուեցաւ երկրորդ Շրջանային Վարչութիւն մը՝ մասնակցութեամբ հետեւեալներուն. Աթոք Կեվրէկ, Տոքթ. Իզմիրլեան, Տոքթ. Խանչէր, Նշան Սերքոյեան, Ս. Ճեպպար եւ Արա Արեւեան: Այս վարչութիւնը յաջողեցաւ կազմակերպել տարեկան մրցահանդէսներ եւ միջ-մասնաճիւղային ֆուլթպոլի մրցաշարքեր:

16 Սեպտեմբեր, 1927ին, Փարիզի մէջ գումարուեցաւ Արեւմտեան Եւրոպայի Շրջանային Պատգամաւորական ժողովը, նախաձեռնութեամբ Փարիզի եւ Մարսիլիոյ մասնաճիւղերուն — [ԻԳ.60]: Այս ժողովի նպատակն էր՝ Հ.Մ.Ը.Մ.ին միացնել անջատ գործող Հայ Օգնութեան Կոմիտէի եօթը մարզական միութիւնները: Նախաձեռնութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ: Ժողովի աւարտին ընտրուեցաւ Արեւմտեան Եւրոպայի Շրջանային Վարչութիւն հետեւեալ ձեւով. Հրանտ Ճեվահիրճեան, Բօլ Համբարձումեան, Սեդրակ Քարեան, Քերովբէ Ժպտունի, Կարօ Ուշագլեան, Հայկազն Աբէլեան եւ Մկրտիչ Մալումեան: Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի միացաւ նաեւ Փարիզի Հայ Մարզական Միութիւնը:

Դժբախտաբար, այս վարչութեան կեանքը եղաւ կարճատեւ, վարչական անդամներու ոմանց հրաժարումով եւ փոխարինումներով: Այս վարչութեան անդամակցած են նաեւ Վ. Հարիկեան եւ Պ. Էսմէրեան, վերջինս ատենապետի պաշտօնով: Յաջորդական կազմերը յաջողեցան կազմակերպել Փարիզի եւ Շրջակայքի ֆուլթպոլի միջ-մասնաճիւղային մրցաշարքեր եւ աթլետիկ մրցումներ, սակայն կառուցային գործունէութիւնը մնաց տկար:

Այսպէս, շուրջ երկու տարուայ անջատ գործունէութիւնէ ետք, 23 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր, 1929ի նստաշրջանով Փարիզի շրջանի միջ-մասնաճիւղային ժողովը ընտ-

րեց Փարիզի Շրջանային Վարչութիւն՝ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Ներսէս Օհանեան

Փոխ-ատենապետ՝ Գառնիկ Յովհաննէսեան

Քարտուղար՝ Հմայեակ Մատթէոսեան

Գանձապահ՝ Համբարձում Զահրեճեան

Հաշուապահ՝ Սարգիս Զահճեպպարեան

Սորհրդականներ՝ Գրիգոր Յակոբեան, Գառլո Պետրոսեան, Սաչիկ Գասպարեան եւ Կարօ Ուշագլեան — [Ե.72]:

Այս կազմի գլխաւոր գործերը եղան՝ Սկաուտական շարքերու խտացում եւ կազմակերպում, միջ-մասնաճիւղային ֆուլթպոլի մրցաշարքի կազմակերպութիւն ու, մանաւանդ, ՀԱՅ ՍԿԱՈՒՏ պաշտօնաթերթի վերահրատարակութիւն՝ որպէս շարունակութիւնը Պոլսոյ մէջ դադրած հրատարակութեան: Շրջանային վարչութեան նստավայրի հասցէն էր 1 Rue Saulnier, Փարիզի Թրդ թաղամաս:

ՀԱՅ ՍԿԱՈՒՏի վերահրատարակութիւնը յուսատու առիթ մը եղաւ որպէսզի բոլոր գաղութներէն առաջարկներ գան՝ Փարիզը ընդհանուր կեդրոնի վերածելու: Պահ մը այս կեդրոնը պիտի ստանձնէր Ֆրանսայի Շրջանի կազմակերպութեան դերը, բայց անոր կեանքը եղաւ կարճ:

1933ին, ընտրուեցաւ Ֆրանսայի Շրջանային Վարչութիւն՝ նախագահութեամբ Առաքել Զաքրեանի, որուն միամեայ գործունէութիւնը պիտի բաղխէր տնտեսական բացառիկ դժուարութիւններու:

1934ի սկիզբը, Ֆրանսայի պատգամաւորական ժողովի Մայր Դիւանի նախագահ Ներսէս Օհանեան եւ Ազգային Պետ Գրիգոր Յակոբեան Շրջանային Վարչութիւն մը կազմելու գործը վստահեցան Վազգէն Անդրէասեանին: Նախ կազմուեցաւ սկաուտական վերին մարմին՝ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Վազգէն Անդրէասեան

Ատենադպիր՝ Օննիկ Եազմաճեան

Գանձապահ՝ Միհրան Քիւրքճեան

Շրջանային սկաուտական փոխ-խմբապետ՝ Ժիրայր Մինթանճեան

Սորհրդական՝ Օննիկ Դարբինեան:

Ներսէս Օհանեանի, Գրիգոր Յակոբեանի եւ Գառնիկ Յովհաննէսեանի ճիգերով կազմակերպուեցաւ նաեւ պատգամաւորական ժողով, որմէ ընտրուեցաւ Ֆրանսայի Շրջանային վարչութիւն՝ բաղկացած հետեւեալներէն.

Ատենապետ՝ Առաքել Զաքրեան

Փոխ-ատենապետ՝ Սահակ Տէր Թովմասեան

Ատենադպիր՝ Վազգէն Անդրէասեան

Փոխ-ատենադպիր՝ Փափազեան

Գանձապահ՝ Սապրիկեան

Սորհրդականներ՝ Մկրտիչ Մալումեան, Մ. Քիւրքճեան, Էլմայեան, Ասատուրեան, Սարաֆեան:

ՓԱՐԻԶ

Կազմակերպչական եւ մարզական գործունէութիւն

1920ին, մասնաճիւղի կազմութեան աւընթեր, ֆուլթպոլի անդրանիկ խումբը Նոյեմբեր ամսուայ ընթացքին կը յաջողի երեք յաղթանակներ արձանագրել՝ Սէն Մորի, Գարկանի եւ Պրընուայի խումբերուն դէմ — [Գ.360]: Այս արդիւնքներէն քաջալերուած, 1921ի Յունուարէն սկսեալ, կազմը կը մասնակցի պաշտօնական մրցումներու եւ իւրաքանչիւր կիրակի մրցում մը կ'ունենայ Ֆրանսական խումբերու դէմ — [Դ.31]: Ֆուլթպոլի եղանակին կը յաջորդեն աթլետիկ միջոցները, որոնց ընթացքին նորակազմ մասնաճիւղի մարզիկները պատուարներ արդիւնքներ կ'արձանագրեն, որուայ Ֆրանսական մրցանիշերուն հետ բաղդատարար:

1922ի եղանակին, կրկին ֆուլթպուլի ճիւղն է, որ հետաքրքրութեան գլխաւոր առարկան կը մնայ: Մասնաճիւղի ատենապետ՝ Հարիկեան, գանձապահ՝ Չարիֆեան եւ անդամ՝ Նաչատուրեան ամբողջութեամբ կը փարին ֆուլթպուլի խումբի զարգացման աշխատանքին: Յիշատակութեան արժանի են ֆուլթպուլիստներ՝ Մինթանճեան, Տերվիչեան, Սեմէրճեան, Միքայէլեան եւ Չարիֆեան: Աթլեթիզմը կու գայ երկրորդ կարգի վրայ, եւ մասնաճիւղը կը հրաւիրէ ֆրանսական խումբերու մաս կազմող հայ աթլեթները, միանալու Հ.Մ.Ը.Մ.ի խումբին:

1923ի Սեպտեմբեր 23ին, տեղի կ'ունենայ մասնաճիւղի առաջին հրապարակային մրցահանդէսը: Օրուայ ախոյեան կը հանդիսանայ Պերճ Չագրճեան՝ չորս առաջնութիւններով: Այս ելոյթը աւանդական պիտի դառնար, կրկնուելու համար ամէն տարի, նոյն եղանակին: Տարեկան Բ. Մըրցահանդէսը կը կայանայ 29 Յունիս, 1924ին, նախագահութեամբ՝ Գաբրիէլ Նորատունկեանի: Օրուայ թագուհին է Տիկին Էսմերեան: Մարզիկ ժիրայր Ոթիկեան, այս խաղերու ընթացքին կը յաջողի բարելաւել գունտ նետելու հայկական մրցանիշը՝ 12,8 մեթրով:

9 Օգոստոս, 1925ին, կը սարքուին տարեկան երրորդ խաղերը, որոնց ընթացքին Յ. Մամիկոնեան ձողով բարձրութիւն ցատկելու հայկական մրցանիշը կը բարելաւէ՝ 3,20 մեթրով: Նոյն մարզիկը տարեկան Դ. Մրցահանդէսին, Սեպտեմբեր 1926, կը հանդիսանայ օրուայ ախոյեան՝ չորս առաջնութիւններով:

1925 եւ 1926 տարեշրջաններու ֆուլթպուլի կազմը իր յաղթանակներով երկար խօսիլ կու տայ իր մասին: 1926ի ամրան, «Ճերմակ Սատանաներ» մակդիրը կը տրուի Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթպուլի խումբին: Անոնք կը յաջողին պարտութեան մատնել

ֆրանսայի երիցս ախոյեան ՌեՏ ՍԹԱՐ խումբը — [ԻԲ /2.16]: Մասնաճիւղի կազմը, ի նպաստ Շիրակի աղէտեալներուն, ֆուլթպուլի մրցում մը կը կազմակերպէ Գորինթիէն Տը Փարի խումբին դէմ: Յատուկ արձանագրութեան արժանի է վեց մարզիկներէ բաղկացող խումբերով՝ միջազգային մրցաշարքին իր մասնակցութիւնը, ուր Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի կազմը կը տիրանայ ախոյեանութեան: Ուումբին մաս կը կազմեն՝ Հ. Գանթարճեան, Ս. Կարապետեան, Կ. Կարապետեան, Ասատուր Պաղտասարեան՝ խմբապետ, Օ. Գրիգորեան, Վիթալի, Գամէր Գույումճեան, Մկրտիչ Մկրտիչեան, Վ. Տէվեճեան՝ բերդապահ, Ռուբէն Շահմիրեան՝ յետսապահ, Շահան, Մ. Ասատուրեան, Կ. Արծիւեան, Հ. Սուպիսեան, Ս. Սուպեսէրեան, պահեստ՝ Մ. Ասատուրեան եւ Հ. Պիւլպիւլեան: Այս նըշանաւոր անուններու շարքէն դուրս կը մընան տակաւին շատ մը խաղացողներ որոնք գանազան պատճառներով չեն միանար, Հ.Մ.Ը.Մ.ի կազմին եւ կը շարունակեն հինէն մնացած Իւնիոն Սթորթիւ անունով հայկական խումբին իրենց մասնակցութիւնը բերել: Զգալի բաժանում մը կը տիրէ հին եւ նոր (Պոլսէն հասնող) վարչականներու մտայնութեանց միջեւ — [ԻԲ/12.11]:

1927ի սկզբնաւորութիւնը տկար գործունէութիւն մը կը յայտնաբերէ: Վարչութիւնը կը հրաժարի ու կը փոխարինուի նորով: Սեպտեմբեր 18ին կարելի կ'ըլլայ վերակազմակերպել տարեկան մրցահանդէս, ուր կը հրաւիրուի Իտալիոյ Թորինօ քաղաքէն Յակոբ Թաշճեան: Վերջինս կը յաջողի նիզակ արձակելու Հ.Մ.Ը.Մ.ի մրցանիշը բարելաւել 50,03 մեթր արձակումով. ազգ. մրցանիշ: Ֆուլթպուլի խումբը կրկին խօսիլ կու տայ իր մասին երբ Մարսէյ փոխադրուելով՝ 2-1 արդիւնքով միայն պարտութիւն մը կը կրէ ֆրանսայի ախո-

յեան Օլիմփիք Տը Մարսէյ խումբէն — [ԻԳ.61]: Խումբը նաեւ յաղթանակներ կ'արձանագրէ՝ Neuilly sur Marneի, Toursի, Sables d'Olonի եւ այլ խումբերու դէմ:

1928էն սկսեալ խումբի պատասխանատուութիւնը կը յանձնուի Մկրտիչ Մալումեանին, որուն փորձառու ցուցմունքներով եւ անջատ գործող հայ խումբերու խաղացողներու միացումով, Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի կազմը տարուէ տարի յաւելեալ հռչակի կը տիրանայ: Խաղացողները կը դառնան աւելի ինքնավստահ եւ իրերայաջորդ խումբերը՝ աւելի փորձառու: Խումբի պահեստի կազմը կը տիրանայ Պէզօն Աթլետիք Քլիւպի կազմակերպած մրցաշարքի բաժակին: Մրցումներ կ'ունենայ Փարիզէն դուրս շրջաններու մէջ: Խումբը կը մասնակցի 1928ի, 1929ի եւ 1931ի միջ-մասնաճիւղային մրցումներուն, եւ 1930ին կը տիրանայ «Ապագայ» թերթի կազմակերպած մրցաշարքի բաժակին:

1930ի Հոկտեմբեր 12ի Կիրակին խումբը ինքզինքը կը գերազանցէ, երբ 12-1 արդիւնքով պարտութեան կը մատնէ «Սթատ Ֆրանսէ»ի պահեստի խումբը: Սթատ Ֆրանսէ ահումբը այդ տարին թեկնածու էր Ֆրանսայի Բաժակի ախոյեանութեան տիտղոսին:

28 Սեպտեմբեր, 1930ին, խումբը կը մասնակցի նաեւ Փարիզի եւ Շրջակայքի Միջ-մասնաճիւղային տարեկան Մարզատօնին, որու ընթացքին կը կատարուին նաեւ աթլետիք մրցումներ:

1932-1933 տարեշրջանը կրկին կազմալուծուած պատկեր մը կը ներկայացնէ, եւ 1934ը կ'ըլլայ վերակազմակերպման շրջան: Ֆուլթոնի յատուկ յանձնախումբի ատենապետ կը նշանակուի Մկրտիչ Մալումեան եւ ատենադպիր՝ Վրթանէս Փափազեան: Ֆուլթոնի խումբերու խաղացողները Հ.Մ.Ը.Մ.ի կանանդամներու հանգամանքով կը մասնակցին մասնաճիւղի

անդամական ընդհանուր ժողովներուն: Փարիզի կեդրոնական եւ շրջակայքի թաղամասերը կը կազմակերպեն Ֆուլթոնի եօթը խումբեր, որոնց գործունէութիւնը կը շարունակուի մինչեւ 1939ի Համաշխարհային Պատերազմի նախօրեակը:

Աթլետիզմի ճիւղը նուազ բախտաւոր արդէն դադրած էր գործելէ տարիներ առաջ:

Փարիզի մասնաճիւղը իր հիմնադրութիւնէն սկսեալ, որպէս նստավայր, հաստատուած է Յրդ թաղամասի հայաչատ թաղերուն մէջ: Նախ՝ Rue Saulnier ապա՝ Rue de Treviso եւ վերջապէս՝ Rue Bleue:

Որպէս հասութարեր ձեռնարկ մասնաճիւղը կը կազմակերպէ պարահանդէսներ, որոնց, համակիր բազմութիւններ, իրենց քաջալերական մասնակցութիւնը կը բերեն տեւաբար:

Փարիզի կեդրոնի եւ արուարձաններու սկաուտական գործունէութիւն

Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գործունէութիւնը կը սկսի մարզականէն աւելի ուշ: Փարիզի կեդրոնին շուրջ համադրուած աշխատանքի կարիքը սկիզբէն զգալի կը դառնայ: Սակայն արուարձաններու հեռաւորութիւնները պատճառ կ'ըլլան որ հայաբնակ շրջաններ առանձնապէս ունենան իրենց սկաուտական կազմերը:

1923էն սկսեալ, Փարիզ կը հասնին Պոլսոյ նախկին սկաուտ խմբապետներ, որոնք գործի գլուխ կ'անցնին եւ կը կազմեն Փարիզի մասնաճիւղի սկաուտական խումբը: 1924ին, խումբը կը վարէ Արտաշէս Պերպէրեան: Խումբը իր արշաւներով կը զարգացնէ սկաուտներու թեքնիք եւ ազգային դաստիարակութիւնը — [ԺԱ.160]: Մերթ ընդ մերթ, անջատ կամ միացեալ ձեւով, Փարիզի եւ արուարձաններու սկա-

ուտական խումբերը քառամեակ մը գործեցին յաջողութեամբ:

1928ի ամրան, Հ.Մ.Ը.Մ.ի խումբը հրաւիրուեցաւ Լոնսոն՝ բանակումի: Խումբի ղեկավարութիւնը վստահուած էր Արտաշէս Պերպէրեանին, որ վերջին պահուն չկրցաւ մասնակցիլ այս բանակումին՝ իր կնոջ մահուան պատճառով: Խումբը մեկնեցաւ Անգլիա, ուրկէ վերադարձին, մերժեց ենթարկուիլ Փարիզի վարչութեան ցուցմունքներուն եւ բաժնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.էն:

(Այս մասին պիտի անդրադառնանք Հ.Մ.Ը.Մ.էն ճիւղաւորումներ յատուկ հատորին մէջ):

Այս բաժանումը հարուած մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսայի սկաուտական շարժումին: Հ.Մ.Ը.Մ.ի հաւատացեալ խմբապետներ կրկին լծուեցան խումբերու վերակազմութեան աշխատանքին: Նախ, կազմակերպուեցաւ Շրջանային Պատգամաւորական ժողով, որմէ ընտրուեցաւ Ֆրանսայի Շրջանային Վարչութիւն՝ նախագահութեամբ Ներսէս Օհանեանի: Սկաուտական խումբեր վերակազմուեցան հետեւեալ արուարձաններուն մէջ. Անկիէն, Ալֆորվիլ, Առնուվիլ Լէ Կոնէս, Անիէռ, Պելվիլ, Պուա Գուլոմպ, Իթալի, Իսի Լէ Մուլինո, Ժուանվիլ, Ռոնի, Ռենսի, Սեվրան, Սարսէլ, Վենսէն, Վիլիէ Լը Պէլ եւ Շավիլ սկաուտական շարքերու ընդհանուր թիւը հասցնելով 500ի: Այս խումբերու միացեալ գործունէութիւնը մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ ժողովրդական շրջանակներէ ներս:

1929ի Օգոստոս ամսուն, տեղի ունեցաւ Սթեյլա Բլաժի միամսեայ բանակումը՝ մասնակցութեամբ 50 սկաուտներու: Սեպտեմբեր 15ին՝ մեծ արշաւ դէպի Անտիյիի անտառը: 1929ի Հոկտեմբերին, կազմակերպուեցաւ Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի կայտերու շարժումը, 30 արեւուշներու մասնակցութեամբ:

1930ի Փետրուար 20ին, կը կազմակերպուի ձմեռնային մէկ շաբթուայ բանակում: Ապրիլ 26ին, թիւ 167755 արտունագրով Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կազմակերպութիւնը, որպէս անջատ կազմակերպութիւն, կը ճանչցուի Ֆրանսական պետութեան կողմէ: Այդ օրերուն Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերու ընդհանուր պատկերը հետեւեալն էր.

Փարիզ եւ շրջակայք	250
Մարսէլ	120
Վիէն	35
Տեսին	30

Մնացեալ շրջանները համեմատաբար փոքր թիւով կազմուած խմբակներ ունէին:

1930ի Յունիսի 1ին կը կազմակերպուի հրապարակային մեծ հանդիսութիւն Petit Journal-ի սրահին մէջ, նախագահութեամբ Գրիգոր Յակոբեանի եւ ներկայութեամբ Ֆրանսացի պաշտօնատարներու: Թիւով 200 սկաուտներ կը մասնակցին այս հանդիսութեան, ուր տեղի կ'ունենայ սկաուտական եւ մարզական ճոխ յայտագիր, կ'ըլլան կարեւոր նուիրատուութիւններ — [Ե.138]:

Փարիզի եւ շրջակայքի սկաուտական շարքերը խտանալով կը պարզէին հետեւեալ պատկերը. 152 սկաուտ, 49 գայլիկ եւ 24 կայտ: Այս խանդավառ գործունէութիւնը կը շարունակուի 7էն 9 Յունիսի միջխմբային բանակումով, մասնակցութեամբ՝ 46 երէցութեան թեկնածու սկաուտներու: Անոնք կը ներկայացնէին Ալֆորվիլի, Սարսէլի եւ Անկէնի մասնաճիւղերը: Բանակումի հերթապահն է փոխ-խմբապետ Պերճ Շատանեան — [Ե.40]: 12-14 Յուլիսի Ֆրանսայի Ազգային Տօնին առթիւ կը կազմակերպուի ցուցահանդէս-բանակում Մէտտոնի անտառին մէջ: Օգոստոսին Շրջանային Վարչութիւնը կրկին կը կազմակերպէ միամսեայ բանակում՝ Մանչի ծովափը, Սթեյլա Փլաժի մէջ: Բանակումը կը վա-

րէ Հայկազ Աբէլեան: Մասնաճիւղի աստիճանաւորներէն Մ. Սահակեան եւ Ս. Սերոբեան կը մասնակցին Cappy-ի միջազգային սկստական դպրոցի դասընթացներուն: Տարեվերջին, Փարիզի եւ Շրջաններու սկստական աստիճանաւորական կազմը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Շրջանային խմբապետ՝ Հայկազ Աբէլեան

Խմբապետներ՝ Սերոբ Սերոբեան — Սարսէլ

Կ. Կարապետեան — Պուա Գոլումպ

Օ. Լորէնեան — Սեվրան

Փոխ-խմբապետներ՝ Մ. Սահակեան — Պուա Գոլումպ

Պ. Դաւիթեան — Ալֆորվիլ

Գայլիկներու վարիչ՝ Վալանթին Սարաճեան — Պելվիլ

Զարեհ Ղարիպեան — Սենթ Ուէն

Երէցներու խմբապետ՝ Վահէ Մանուկեան — Անկիէն

Խորհրդատու խմբապետ՝ Արտաշէս Պերպէրեան

Կայտերու խմբապետուհի՝ Օր. Ընքապապեան:

Մինչեւ 1934, սկստական շարժումը կը յառաջդիմէ գանազան վերիվայրումներով: Յաճախ, սկստական պատասխանատուներ Շրջանային Վարչութեան ներքին դժուարութիւնները պէտք է հարթեն՝ գործի բարւոք ընթացքին համար:

1934ի Սեպտեմբեր 10ին, կը գումարուի Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ի սկստական 12րդ ներկայացուցչական Համագումարը, մասնակցութեամբ Փարիզի եւ անոր ութը ենթաշրջաններու, ինչպէս նաեւ Լիոնի, Մարսէլի եւ Նիսի ու անոնց հինգ ենթաշրջաններու ներկայացուցիչներուն: Կը բացակային Սէն Մօրիս, Տեսին, Վալանս, Սենթ Էթիէն, Կրկնոպլ, եւ կայտերու կազմերուն ներկայացուցիչները: Շրջանային



Փարիզի Հ.Մ.Ը.Մ.-ի սկստուներու բանակումին առթի խմբակար Նիսի հայոց Սր. Աստուածածին Մատուռին առջեւ 1932

Վարչութեան ներկայացուցիչը բացակայ է հիւանդութեան պատճառով:

Լսելէ ետք գործադիր վերին մարմնոյ տեղեկագիրը, համագումարը կ'առնէ կարեւոր որոշումներ եւ Շրջանային Ընդհանուր պետ կը վերընտրէ Ժիրայր Մինթանճեանը: Վերջինս, իր կարգին, կը նշանակէ իր գործակիցները յանձին Սերոբ Սերոբեանի՝ Շրջանային պետ եւ գանձապահ եւ Վահան Բէրէսթէճեանի՝ Շրջանային փոխ-խմբապետ եւ քարտուղար: Գործադիր վերին մարմնոյ կազմը կ'ամբողջացուի հետեւեալ աստիճանաւորներով. Հայկ Մերկերեան, Ստեփան Սահակեան, Վահէ Մանուկեան, Սամուէլ Ներկարարեան, Արա

Շիրինեան, Ստեփան Սանթուրեան, իսկ Մարտէյի շրջանէն՝ Մկրտիչ Փափագեան եւ Ն. Նշանեան: Նստավայրի հասցէն է՝ 55 Rue de Meaux, Փարիզ:

Գործադիր Վերին Մարմնի նիւթական նախահաշիւի եկամուտը պիտի ապահովեն շրջանները՝ իրենց եկամուտներու 10% ի փոխանցումով: Դժբախտաբար, այս փոխանցումները կ'ուշանան եւ կ'արգելակեն աշխատանքներու բնական ընթացքը: Սկաուտական Վերին Մարմինը, որ յաջս պետութեան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարժումին արտօնատէրն է, կը դիմէ Ֆրանսայի Սկաուտական Կեդրոնական Գրասենեակին՝ խնդրելով անոր ճանաչումը:

Նիւթական եւ վարչական դժուարութիւններ պատճառ կը դառնան որ Փարիզի եւ Շրջաններու սկաուտական գործունէութիւնը առաւելաբար սրահներու մէջ՝ հրապարակային ելոյթներով արտայայտուի: Այսպէս, 1935ի Մարտ 24ին, Փարիզի խումբը ցերեկոյթ մը կը կազմակերպէ Theatre Renée Maubel-ի մէջ, սկաուտական կենդանի պատկեր եւ թատերական ողբերգութիւն յայտագրով: Մայիսի 12ին, Փարիզի եւ Շրջաններու սկաուտական միաւորներու տարեկան ելոյթը տեղի կ'ունենայ Petit Journal-ի սրահին մէջ: Այս ձեւով շարունակուող գործունէութիւնը չկրցաւ միութենական կառոյցը զօրացնել եւ բաւարարուեցաւ իր գոյութիւնը միայն պահելով հետեւեալ վայրերուն մէջ.

Ալֆորվիլ՝ հաւաքավայր եկեղեցւոյ կից սրահը	13	սկաուտ	18	գայլիկ
Փարիզ Կեդրոն՝	20	-	9	-
Շավիլ՝	4	-	2	-
Պուա Գոլումպ՝	3	-	4	-
Վիթրի Շուազի՝ հաւաքավայր դպրոցին սրահը	4	-	6	-
Ռենսի	1	-	4	-

Աստիճանաւորական ցանցը եւ հաւաքավայրերը կը մնան անբաւարար: Սահ-



Fête Annuelle des Scouts Arméniens

Dimanche 12 Mai 1935 à 14 h.
Salle du PETIT JOURNAL
21 Rue Cadet Paris

Հ. Մ. Ը. Մ. Ի

ԱԼՖՈՐՎԻԼ, ԻՔԱԼԻ, ԿՈՆԷՍ, ՇԱԻԼ
ՇՈՒԱԶԻ ԼԸ ՌՈՒԱՅ, ՊՈՒ-ԳՈԼՈՄՊ
ՌԷՆՍԻ, ՎԵՆՍԷՆ ՓԱՐԻԶԻ

ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ

ԿԱՅՏԵՐՈՒ, ԿԱՅԼԻԿՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԵՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ

12 Մայիս 1935 կիրակի ժամը 14 ին



Imp. du GLOBE 60. Rue de Provence PARIS.

մանափակ տարողութեամբ արշաւներու կողքին, արձանագրութեան արժանի կը մնան տարեկան ընդհանուր բանակումները՝ հետեւեալ շարքով.

Օգոստոս 1935՝ Քարքերան

Օգոստոս 1936՝ Նիս

Օգոստոս 1937՝ Սէն Ժորիոյ

Օգոստոս 1938՝ Նիս

1939ի Օգոստոսին, Կրընոպլի մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի նախապատերազմեան սկաուտական պատգամաւորական վերջին ժողովը:

Այս ժողովէն ընտրուած Գործադիր Մարմինը շուտով անգործունէութեան մատնուեցաւ: Աշնան Համաշխարհային Բ. Պատերազմը ծագեցաւ եւ Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդութիւնը ցիրուցան եղաւ մայրաքաղաքին ու նահանգներուն միջեւ:

Փարիզի ենթաշրջաններու մասնաճիւղերը ունեցած են շատ անհաւասար գործունէութիւն: Անոնց կազմաւորումն ու զարգացումը միշտ ալ ենթակայ է եղած շրջանի, թաղամասի կամ արուարձանի հայ բնակչութեան թիւին եւ կենսունակութեան: Ոմանք կազմութիւնէն ետք, միայն անուանական գոյութիւն մը պահած են, անորոշ ժամանակով: Ուրիշներ, իրենց կառուցային ուժով, հիմնական բաժին վերցուցած են Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի կողքին իրենց բերած վաստակով:

Փարիզի ենթաշրջանի մասնաճիւղերը թիւով 20ի մօտ են:

Յիշենք անոնց անունները՝ արձանագրելով կարեւորագոյններուն գործունէութեանց գլխաւոր փուլերը:

ԱԼՖՈՐՎԻԼ [Ե.140]

Հիմնուած է 1929ին:

Անդրանիկ Վարչութեան մաս կազմած են՝ Պ. Քուրուեան, Ս. Նօտարեան, Խ. Քումրուեան, Ղ. Իշխանեան եւ Ժ. Մինթանճեան:

Սկառտական խումբի գործունէութեան կողքին մշակած է ֆուլթպոլ:

1929, Դեկտեմբեր 28ին, թաղապետութեան սրահին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղի առաջին հրապարակային հանդէսը սկառտական յայտագրով, քայլերգ, ներկայացում, արտասանութիւն եւայլն — [Ե.72]:

Մասնակցած է 1930ի Յուլիս 14ի ցուցահանդէս բանակումին, ուր վկայեալ սկառտ՝ Հայկ Մերկերեան կը ստանայ փոխ-խմբապետի աստիճան — [Ե.143]:

1939ի վիճակագրութեամբ՝ ունի 13 սկառտ եւ 18 գայլիկ: Թաղականութիւնը մնայուն կերպով խումբին տրամադրած է եկեղեցւոյ կից սրահ մը — [ԺԱ.171]:

ԺՈՒԱՆՎԻԼ

Նախապէս հիմնուած մասնաճիւղը կը վերակազմուի 1929 թուականի վերջաւորութեան:

Կիրարկած է գլխաւորաբար ֆուլթպոլի ճիւղը:

Վարչական անդամներէն կը յիշուի Սուրէն Գալենտէրեան — [Ե.72]:

ԱՆԿԻԷՆ

Հիմնուած է 1929ի ամրան:

Անդրանիկ Վարչութեան մաս կազմած են՝ Ա. Ինճիճիեան, Վ. Վարդանօֆ, Հ. Մատթէոսեան, Ա. Սարգիսեան, Ս. Կիւպոլեան, Ն. Սերոբեան, եւ Յ. Մալխասեան:

Ն. Սերոբեան կը վարէ սկառտական խումբը, իսկ Յ. Մալխասեան՝ ֆուլթպոլի կազմը: Մասնաճիւղը կը յառաջդիմէ արագօրէն՝ շնորհիւ շրջանի մէջ գործող կարող անձնաւորութիւններու:

Նոյեմբեր 30ի հրապարակային պարահանդէսի ելոյթով մասնաճիւղը, որպէս կազմակերպչական տիպար, ֆրանսական շրջանակներու կողմէ կը ներկայացուի հանրութեան:

1930ի Յունուար 5ին՝ խթման գիշերը՝ մասնաճիւղը կրկին կը ներկայանայ ժողովուրդին, սկառտական յայտագրով: Ոսք կը տրուի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Մկրտիչ Մալումեանին:

Սկառտական խումբը, սկիզբէն սկըսեալ վարած է Ն. Սերոբեան, մասնաճիւղի թեքնիք մակարդակը բարձրացնելով նախանձելի մակարդակի:

Մասնաճիւղի գործունէութիւնը շարունակուած է մինչեւ Բ. Աշխարհամարտի սկիզբը:

ՊՈՒԱ ԳՈԼՈՄՊ

Սկզբնական թուականներէն սկսեալ, Պուա Գոլոմպի մասնաճիւղը գործած է սկաուտական եւ ֆուլթպոլի ճիւղերով:

Մասնակցած է Փարիզի եւ Շրջակայքի սկաուտական շրջանային գործունէութեան:

Ֆուլթպոլի միջ-մասնաճիւղային հանդիպումներուն իր խումբը միշտ ներկայ եղած է: Ունեցած է նաեւ հրապարակային ելոյթներ՝ ազգային թէ սկաուտական թեմաներով, իր շուրջ բոլորելով շրջանի հայ հասարակութիւնը:

Մինչեւ 1928 թուական երկարող գործունէութեան այս ընթացքը, պահ մը կանգ առաւ: Սկաուտական բաժինը իր թափը պիտի վերագտնէր 1930էն սկսեալ: Փորձառու խմբապետի մը բացակայութիւնը զգալիօրէն վնասեց նա՛եւ այս ընթացքի զարգացման:

ԻԹԱԼԻ

Փարիզի կեդրոնին շատ մօտակայ այս մասնաճիւղը ունեցած է ֆուլթպոլի զօրաւոր կազմ, եւ ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան օրերէն սկսեալ, յաջող ելոյթներով Միութեան ծանօթացումին սատարած է ֆրանսական շրջանակներէ ներս:

ՌՈՆԻ

Փարիզի ենթաշրջաններուն շարքին պատկանող այս մասնաճիւղը հիմնուած է 1927ին:

Զաւէն Օհաննէսեանի հրաւերին ընդառաջելով, Երեքշաբթի, 18 Յուլիս 1927ին, ի մի հաւաքուելով Ռոնի գիւղի 11 հայ երիտասարդներ, ներկայութեամբ Փարիզի քաղաքամէջի Հ.Մ.Ը.Մ.ի գործօն անդամներէն Օննիկ Դարբինեանի, կ'որոշեն հիմնել տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը: Ռոնին

նաեւ մասնաճիւղը պիտի ըլլար շրջակայքի 11 այլ գիւղերուն, ինչպիսին են՝ Բլէզանսը, Ռենսին, Փերրէօն, Նուազին, Վիլըմոմպլը, Կանյին, Ֆոնթընէ Սու Պուան, Եւայլն, ուր հայ երիտասարդներ կը գտնուէին:

Օննիկ Դարբինեան Հ.Մ.Ը.Մ.ի նպատակն ու գործելակերպը պարզելէ ետք, ժողովը կը նշանակէ Սարգիս Ճեպարեանն ու Զաւէն Յովհաննէսեանը, որոնք, Առժամեայ Մարմնի հանգամանքով, ժողովի պիտի հրաւիրէին այլ երիտասարդներ՝ անդամագրուելու եւ լայն հաւաքոյթով մը ընտրելու համար մասնաճիւղի անդրանիկ վարչութիւնը: Տեղւոյն վրայ կ'որոշուի Յուլիս 31ի Կիրակին՝ այս ծրագրուած ժողովի որպէս ժամկէտ: Միաժամանակ, այս հաւաքոյթի եւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութեան մասին պաշտօնապէս կը տեղեկացնեն Փարիզի մասնաճիւղին եւ կը խնդրեն գրեական պիտոյքներ:

Յուլիս 23ի Կիրակին, Ռոնիի ֆուլթպոլի խումբը արդէն իսկ բարեկամական խաղ մը կը կազմակերպէ տեղական խումբի մը դէմ:

Որոշուած թուականին անդամակցողներու թիւը օրինական 25ի սահմանը հասած ըլլալով, Ռոնիի մասնաճիւղը պաշտօնապէս անդամ կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին: Անդամական Ընդհանուր ժողովի դիւանին մաս կը կազմեն՝ Ատենապետ՝ Նշան Սերքոյեան եւ Ատենադպիր՝ Ա. Թահմիզեան:

Յետ առաջարկներու քննութեան, տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդրանիկ վարչութեան ընտրութիւն՝ բաղկացած հետեւեալներէն. Սարգիս Ճեպարեան, Մինթանճեան, Միհրան Սարրեան, Ժ. Գաշեան, Ա. Բամպուքճեան, Զաւէն Յովհաննէսեան եւ Հ. Որբերեան:

Առաջին օրերէն սկսեալ, Ռոնիի մասնաճիւղը կը յաջողի իրագործել իր հիմ-



Ռոնի Սու Պուս մասնաճիւղի ֆութպոլի խումբը՝ 1926-ին

նադրութեան օրերուն ծրագրած աշխատանքները՝ մարզական, սկաուտական թէ ազգային գետիններու վրայ: Յատկապէս կազմակերպչական տեսակէտէ՝ մասնաճիւղի իրագործումները, որպէս Փարիզի մասնաճիւղի ենթաշրջան, կ'ըլլան շատ յաջող: Ֆութպոլի խումբը կը մասնակցի Շրջանային Վարչութեան կազմակերպած մրցաշարքերուն:

Որպէս նախաձեռնութիւն յիշատակութեան արժանի են, 1927ին, մասնաճիւղի պատրաստել տուած Հ.Մ.Ը.Մ.ի եռագոյն նշանակներ, որոնք կը դրուին քոյր մասնաճիւղերու տրամադրութեան տակ: Կարգապահական տեսակէտէ, վարչութեան տնօ-

րինումները տիպար դիրքի կը հասցնեն Ռոնիի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը: Մասնաճիւղի պատգամաւորներ՝ Գ. Պետրոսեան եւ Հ. Որբերեան մասնակցած են Փարիզի եւ Շրջակայքի մասնաճիւղերու Պատգամաւորական ժողովին, 1929ին:

Դժբախտաբար, Ռոնիի մասնաճիւղի կեանքը կարճ պիտի ըլլար: 1932ին, մեկնումներու պատճառով մասնաճիւղը պիտի դադրէր գործելէ:

*
* *

Փարիզի շրջակայ մասնաճիւղերու ցանցին մաս կը կազմեն նաեւ.

Մասնաճիւղ	Հիմնադրութեան թուական	Գործունէութեան ճիւղ
Իսի Լէ Մուլինո		սկսուածութիւն եւ Ֆուլթոլ
Շավիլ		սկսուածութիւն
Պելվիլ		սկսուածութիւն, փոխ-խմբապետ՝ Ստեփան Սահակեան
Սելրան	1929	
Սենթ Ուէն		Սկսուածութիւն
Սարսէլ	1925	Սկսուածութիւն
Անիէո	1929	
Վենսէն		
Վիլիէ Լը Պէլ	1930	
Կոնէս	1930	
Շուազի Լը Ռուա		

Դժբախտաբար, այս ցանկի մասնաճիւղերու մասին մեր արխիւները չեն արտօներ ճշգրիտ արձանագրութիւններ, գիտնալով հանդերձ որ անոնցմէ ոմանք ունեցած են երկար ու գնահատման արժանի գործունէութիւն:

ՄԱՐՍԷՅ

Հիմնում եւ կազմակերպչական գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Մարսէյի մասնաճիւղը Ֆրանսայի ամենակենսունակ մասնաճիւղը եղած է: 6 Յուլիս, 1924ին, Յարութիւն Պողոսեանի այցելութիւնէն սկսեալ, կը սկսին նախապատրաստական հաւաքներ: Պոլիսի նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ Վազգէն Անդրէասեան, Սուքիաս Սուքիասեան, Վահրամ Ասլանեան, Մկրտիչ Փափագեան եւ Օննիկ Սարաֆեան, Օգոստոս 21ին, պաշտօնապէս կը հիմնեն Մարսէյի մասնաճիւղը: Շուտով անոնց շուրջ կը հաւաքուին երիտասարդ անդամներ, ընդհանուր թիւը բարձրացնելով 35ի:

Սեպտեմբեր 28ին, մասնաճիւղը կը

կազմակերպէ իր առաջին հրապարակային ելոյթը, ուր խօսք կ'առնեն Պոլսոյ նախկին սկսուած խմբապետներէն՝ Մկրտիչ Մալումեան եւ Օննիկ Եազմաճեան: Հետզհետէ, նոր ուժեր կը միանան մասնաճիւղի շարքերուն, որուն սակայն կը պակսէր հաւաքավայր-մարզարան մը: Այս նպատակով մասնաճիւղի անդամները իրենց միջոցներով կ'ապահովեն ձմեռնային մարզարան մը, ուր կը սկսին յաճախել 75ի հասած մասնաճիւղի անդամները: Ֆուլթոլի փորձերը կը կատարուին Պուլվար Օտտոյի մէջտեղի դաշտին վրայ:

1925ի Մարտ 10ին, մասնաճիւղը կը կազմակերպէ իր առաջին մարզական ելոյթը, Սեպաստոբոլ հրապարակի մարզադաշտին մէջ: Հանդիսութիւնը կը պսակուի մեծ յաջողութեամբ: Թիւով 100ի շուրջ անդամները կ'ընտրեն առաջին վարչութիւնը՝ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Մկրտիչ Մալումեան
Փոխ-Ատենապետ՝ Սուքիաս Սուքիասեան

Ատենադպիր՝ Զարեհ Վարդանեան
Գանձապահ՝ Խաչիկ Համբարձումեան
Խորհրդական՝ Արմենակ Խրիմեան

Նորակազմ Վարչութեան առաջին գործը կ'ըլլայ Միութեան պետական ճանաչման ապահովումը: Թիւ 4410 եւ 2 Ապրիլ 1925 թուականակիր պաշտօնագրով, Հ.Մ.Ը.Մ.ի Մարսէյի մասնաճիւղը կը ստանայ իր արտօնագիրը: Այնուհետեւ մասնաճիւղը կ'անդամակցի ֆրանսայի զանազան մարզական դաշնակցութիւններուն.

Թիւ 4442 պաշտօնագրով՝ Ֆուլթոլի դաշնակցութեան

Թիւ 7863 պաշտօնագրով՝ Աթլէթիզմի դաշնակցութեան

Թիւ 2814 պաշտօնագրով՝ Լուդորդութեան դաշնակցութեան

Թիւ 4847 պաշտօնագրով՝ Հեծելարշաւի դաշնակցութեան:

Վարչութիւնը մասնաճիւղի պատուոյ նախագահ կը նշանակէ Պրն. Յակոբ Կարապետեանը եւ պատուոյ անդամուհի՝ Օր. Հռիփսիմէ Յովակիմեանը, որոնց նիւթական եւ բարոյական աջակցութիւնները մեծապէս կը սատարեն մասնաճիւղի յառաջդիմութեան: Կը վարձուի մարզադաշտ մը Մոնֆէրոնի թաղամասին մէջ, եւ կը սկսի ֆութպոլի, աթլետիզմի, հեծելարշաւի եւ լողի խումբերու կազմութիւնը: Միաժամանակ կը կազմուի մասնաճիւղի սկաուտական խումբը:

1925ի Յուլիսին, մասնաճիւղը կը կազմակերպէ պաշտօնական իր առաջին մարզական ելոյթը, հսկողութեամբ Փրանսայի աթլետիզմի ֆետերասիոնին: Տեղի կ'ունենայ ընդհանուր տողանցք, աթլետիզմի եւ հեծելարշաւի մրցումներ: Մարզական այս ելոյթը մասնաճիւղին շուրջ կը հաւաքէ Մարսիլիոյ հայութեան գրեթէ ամբողջութիւնը եւ կը սատարէ անոր լայն ծանօթացման Փրանսական շրջանակներու կողմէ:

Այնուհետեւ, մասնաճիւղի յաջողութիւնները կը ծաւալին մեծաքայլ: Անդամներու թիւը կը հասնի 200ի:

Մասնաճիւղի հիմնադրութեան առաջին տարեդարձին առթիւ կը սարքուի պաշտօնական թէյասեղան՝ ներկայութեամբ Մարսիլիոյ Կաթողիկոսական Պատուիրակ Պալաքեան Սրբազանի եւ հայ աւագանիին: Ներկաները քաջալերական արտայայտութիւններով կը շնորհաւորեն Մարսիլիոյ Հ.Մ.Ը.Մ.ի յաջողութիւնները: Մասնաճիւղի գործադիր վարչութեան կողքին կը կազմուի Պատուոյ Վարչութիւն մը, հետեւեալ կազմով.

Նախագահ՝ Արամ Թիւրապեան
 Փոխ-Նախագահ՝ Տօքթ. Քեչեան
 Ատենադպիր՝ Արսէն Երէցեան
 Գանձապահ՝ Միհրան Տէրտէրեան
 Խորհրդական՝ Յակոբ Կարապետեան
 Պատուիրակ՝ Վահագն Սաաթեան

Թեքնիք վարիչ՝ Մկրտիչ Մալումեան:

Եռամսեայ արդիւնաւոր գործունէութիւնէ ետք, Պատուոյ Վարչութիւնէն հրաժարած Արամ Թիւրապեանը կը փոխարինուի Յովհաննէս Սաաթեանով, իսկ Յակոբ Կարապետեանը՝ Հայկազուն Գուլումճեանով:

1926ի սկիզբը կը կազմակերպուի մասնաճիւղի իգական բաժինը, Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի, շուրջ 75 աշակերտուհիներու մասնակցութեամբ եւ աթլետիզմի ու պասքեթպոլի կիրարկումով: Իգական բաժինն ալ կը ստանայ պետական ճանաչում՝ թիւ 304 եւ 13 Փետրուար 1926 թուականակիր պաշտօնագրով:

1926ի Ապրիլին, մասնաճիւղի յաջող մարզիկներուն ի պատիւ կը կազմակերպուի մրցանակաբաշխութեան հանդէս: Մարզիկներու զարգացման համար կը կազմակերպուի դասախօսական շարք: Տօքթ. Քեչեան կը հսկէ մարզիկներու առողջապահութեան հերթական քննութիւններով: 1926ին, մասնաճիւղը կը հաշուէ շուրջ 300 անդամ: Կը վարձուի Սեպաստոբոլ հրապարակի Park Des Sports-ը՝ տարեկան 5000 Փրանք վարձքով: Փակ մարզարանի գործունէութիւնը կը շարունակուի ըստ առաջնոյն: Երկուշաբթի երեկոները տեղի կ'ունենան մարզական թեքնիք դասախօսութիւններ, Զորեքշաբթի երեկոները՝ սկաուտական եւ առողջապահական, իսկ Ուրբաթ երեկոները՝ մարզական եւ կազմակերպչական — [ԽԴ. 1-19]:

Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.ը իր սեփական դաշտը կը սարքէ 1930ին:

Դաշտի պաշտօնական բացումը կը կատարուի 26 Սեպտեմբերին — [Ե.176]: Մարզական ճիւղը կը զարգանայ, մինչ սկաուտութիւնը ենթակայ է Հ.Մ.Ը.Մ.- Հայ Արի հակամարտութեան եւ կը յետադիմէ, կարող խմբապետներու բացակայութեան պատճառով:

1934 Յունիս 9ին, անդամական ընդհա-

նուր ժողովի կողմէ կ'ընտրուի մասնաճիւղի նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Յովհաննէս Պաղջեճեան

Ատենադպիր՝ Մարտիրոս Անթոյեան

Գանձապահ՝ Յակոբ Գէորգեան

Խորհրդականներ՝ Մկրտիչ Փափազեան եւ Բիւզանդ Բաթիլեան:

Աթլեթիք յանձնախումբի անդամներն են՝ Յարութիւն Տէր Մինասեան, Վարդգէս Քեչեճեան եւ Պօղոս: Ֆութպոլի յանձնախումբին մաս կը կազմեն՝ Հայկ Արզումանեան, Կարապետ Թոմասեան, Կարապետ Տարագճեան, Վարդան Քիւրեղեան եւ Թորգոմ:

Մարզական գործունէութիւն

Ֆութպոլ

Ֆութպոլը կը դառնայ մասնաճիւղի մարզական գործունէութեան գլխաւոր առանցքը: Պաշտօնական առաջին խումբին մաս կը կազմեն՝ Հայրապետ Գասապեան, Սիմոն Շեհրիկեան, Հրանդ Աթթարեան, Վահան Շամլեան, Յակոբ Նորհատեան, Տիգրան Փափազեան, Անդրանիկ Քեթիպճեան, Անդրանիկ Գուշակեան: Խումբին խմբապետ կը նշանակուի Ժիրայր Տէրտէրեան իսկ պատասխանատու վարիչ՝ Մկրտիչ Մալումեան:

1925-26 եղանակին, մասնաճիւղի առաջին խումբը կը մասնակցի Փրանսայի ախոյեանական մրցաշարքին: Քառասունը-, մէկ հանդիպումներու արդիւնքը կ'ըլլայ՝ 33 յաղթանակ, 5 պարտութիւն եւ 3 հաւասարութիւն: Այս պատուաբեր արդիւնքը ֆութպոլի կազմի յառաջխաղացքը պաշտօնապէս կը նուիրագործէ: Երկրորդ խումբը նոյնպէս կ'արձանագրէ յաջող գործունէութիւն:

1925, Մարտ 10ին, մասնաճիւղը կը կազմակերպէ հրապարակային մարզական

հանդիսութիւն Փարք Տէ Սբորի մէջ: Օրուայ գլխաւոր մրցումը կ'ըլլայ 5000 մեթր վազքը՝ 15 մարզիկներու մասնակցութեամբ: Առաջին կը հանդիսանայ Ստեփան Մոմճեան:

22 Օգոստոս, 1926ին, տեղի կ'ունենայ վարչութեան կազմակերպած Մարզական Միջազգային Մրցումներու փակման հանդիսութիւնը: Օրուայ Թագուհին է Տիկին Հ. Գուլյումճեան, պատուոյ օրիորդներ՝ Ա. Փափազեան եւ Ա. Պուպլի: Այս ելոյթը իր շուրջ կը բոլորէ Մարտիլիոյ հայութեան ընտրանին եւ մարզասէր հասարակութիւնը:

1927 տարուան Առաջին խումբին մաս կը կազմեն. Ժ. Տէրտէրեան՝ խմբապետ, Յ. Նորհատեան, Ա. Փափազեան, Ա. Քիպրիթճեան, Ա. Գուշակեան, Հ. Գասապեան, Բուլէֆ, Ահրիկեան, Հ. Աթթարեան, Հ. Համբարձումեան, Յ. Տէմիրճեան եւ Վ. Շամլեան:

1927-ի Յուլիս 17ին, մասնաճիւղը կը կազմակերպէ մարզահանդէս՝ Մարտէյի զանազան ակումբներու մարզիկներուն մասնակցութեամբ: Կը կատարուին ռիթմիք մարզանքներ, աթլեթիզմ եւ մրցանակաբաշխութիւն: Օրուայ Թագուհին է Տիկին Զ. Կիւլպէնկեան: Թեքնիք արդիւնքները աւելի քան քաջալերական են: Հ.Մ.Ը.Մ. կը խլէ առաջնութիւնը՝ 31 կէտերով: Անոր կը յաջորդեն Օլիմբիք Տը Մարտէյ՝ 25 եւ Յունական խումբը՝ 15 կէտերով: Մասնաճիւղը կը հաշուէ աւելի քան 70 երկսեռ աթլետ — [ԻԳ.40]:

Ֆութպոլի կազմը իր յաջողութիւնները շարունակելով, սկիզբի՝ չորրորդ դասակարգի իր դիրքը տարուէ տարի կը բարելաւէ: 1929-30 տարեշրջանին, ան կը բարձրանայ երկրորդ դասակարգ: Միջանկեալ, կը կազմակերպուին պահեստի, կրտսերներու, միջակներու եւ փոքրերու զանազան խումբերը՝ թիւով եօթը: Իւրաքանչիւրը կը մասնակցի իր դասակարգի հա-

մապատասխան Ֆրանսայի ակոյեանութեանց մրցումներուն: Առաջին խումբը կը մասնակցի նաեւ հարաւային Ֆրանսայի զօրաւորագոյն խումբերուն կազմակերպած մրցաշարքերուն եւ բարեկամական մրցումներուն:

1930-31 տարեշրջանին, խումբը կը բարձրանայ Ա. դասակարգի եւ կը մասնակցի Ֆրանսայի ակոյեանութեան մրցաշարքին:

Ֆուլթպոլի խումբերու յաջողութիւնները կը քաջալերեն իրերայաջորդ վարչութիւնները, որպէսզի նիւթական կարեւորներդրումներով Հ.Մ.Ը.Մ. Մարսէյի անունը միշտ բարձր պահեն, միաժամանակ զարգացնելով խաղացողներու թեքնիք կարողութիւնները: Ա. խումբի ձեռք բերած յաջող արդիւնքները կը կրկնուին կրտսերներու պարագային: Վերջինս, Օլիմպիք Տը Մարսէյի նման զօրաւոր կազմերու հետ իր դասակարգին մէջ հաւասար կը դասուի — [Ե.202]:

Աթլետիզմ

Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գործունէութեան երկրորդ առանցքը կը կազմէ ավելեթիզմը: 1925ի Յուլիսէն սկսեալ, տեղի կ'ունենան մասնաճիւղի ներքին ակոյեանութեան մրցումները: Մասնաճիւղի մարզիկներէն՝ Ժիրայր Տէրտէրեան կը հանդիսանայ օրուայ ակոյեան: Յայտագրին մաս կը կազմեն՝ կարճ եւ երկար վազքեր, արձակումներ եւ ոստումներ: Սեպտեմբերին, մասնաճիւղը կը կազմակերպէ մրցումներ՝ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Club Athlétique de Marseille-ի ավելեթներու մասնակցութեամբ: Այս խաղերու ընթացքին Ժիրայր Խթիկեան կը բարելաւէ հարաւային Ֆրանսայի գունտ նետելու մրցանիշը՝ 12,21 մետրով:

1926ի ամրան, Հ.Մ.Ը.Մ.ի ավելեթիզմի բաժինը շատ լայն գործունէութիւն կ'ունենայ: 6 Յունիսին, մասնաճիւղը կը կազ-

մակերպէ Grand Prix Arménien d'Athlétisme՝ Ֆրանսացի, իտալացի, սպանացի եւ հայ՝ 195 ավելեթներու մասնակցութեամբ: Ապա՝ Championat Etranger՝ սպանացի, հայ, յոյն, իտալացի, գուլիցերիացի եւ պելճիքացիներու մասնակցութեամբ: Հայերը կը տանին ջախջախիչ յաղթանակ: Յուլիսի 4ին, մասնաճիւղի ներքին ակոյեանութիւններն են՝ հոս կը բարելաւուին 9 մրցանիշեր: Օգոստոս 22ին, կը կայանայ տարուայ պաշտօնական մեծագոյն մարզահանդէսը, հովանաւորութեամբ Մարսիլիոյ քաղաքապետին եւ մասնակցութեամբ Փարիզէն ու Նիսէն հրաւիրուած հայ մարզիկներու: Նոյն օրը տեղի կ'ունենայ Tour de Marseille վազքի մրցումը, Հ.Մ.Ը.Մ.ի դաշտին վրայ:

Այսպէս, ավելեթիզմի ճիւղը կը շարունակէ իր գործունէութիւնը, ժամանակի ընթացքին տեղի տալով ի նպաստ ֆուլթպոլին:

Կոփամարտ

Այս ճիւղի սկիզբի խանդավառ գործունէութեան շուտով վերջ կը տրուի, երբ մասնաճիւղի ղեկավարութիւնը կ'անդրադառնայ որ Հ.Մ.Ը.Մ.ի կոփամարտիկները արհեստավարժ դառնալու ճամբան կը բռնեն:

Հեծելարշաւ

Հեծելարշաւի ճիւղը, նոյնպէս, սահմանափակ գործունէութիւն է ունեցած, ի բաց առեալ Հ.Մ.Ը.Մ.ական Սեպուհ Մանտրոյեանի յաջողութիւններէն՝ որ 1925ի Փարիզի ողիմպիականին կը շահի մրցումի առաջնութիւնը: Նոյն մարզիկը մասնաճիւղի մասին խօսիլ կու տայ, ֆրանսացիներու կազմակերպած զանազան մրցումներու ընթացքին պատուաբեր արդիւնքներ ապահովելով: Արհեստավարժութիւնը հոս եւս կը սահմանափակէ այս ճիւղի զարգացումը:

Սկաուտական գործունեություն

Մարզականին հետ բաղդատելով՝ Մարսիլիոյ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գործունեությունը կը մնայ համեստ:

Հիմնադրութեան յաջորդող տարիներու խանդավառ աճը բնական համեմատութեամբ չի յառաջդիմէր: Սկիզբի՝ թիւով 24 հոգինոց սկաուտական կազմը, նիւթական դժուարին պայմաններու պատճառով կը կաղայ: Ամառնային արշաւանքներէն ու բանակումներէն ետք սկաուտական գործունեությունը կը դադրի, եւ փոքր սկաուտները, ձմեռնային եղանակին, կը հետեւին ֆուլպոլի կրտսերներու խումբերուն: Այս երկուութիւնը պատճառ կը դառնայ սկաուտական շարժման տկարացման: Սկիզբը սկաուտական խումբը վարած է Պոլսոյ Գուլէի Որբանոցի սկաուտներէն՝ Անդրանիկ Այանեան — [ԽԴ. 35]:

12 Փետրուար, 1928ին, 16 նորընծայ սկաուտներ, որպէս կնքահայրեր, կը մասնակցին Շաթօ Տը Ֆլէօրի եկեղեցւոյ օժման արարողութեան, ձեռամբ Պալաքեան Եպիսկոպոսի:

1 Յունիս, 1930ին, խումբը տուաւ հրապարակային սկաուտական հանդէս, ռուսական վարժարանի սրահին մէջ՝ Camp Victor Hugo: Խումբի 50 սկաուտները ներկայացուցին մարզանքներ, բուրգեր, կենդանի պատկերներ: Հանդէսը փակուեցաւ Եկաւեան ընտանիքի թէյասեղանով: Խումբի պատասխանատուն էր վարիչ առաջնորդ՝ Պերճ Ֆարհատեան:

Սեպտեմբերի 6ին, երկօրեայ բանակում մը կը կատարուի դէպի Կարտան, ուր տեղւոյն հայութիւնը ջերմ ընդունելութիւն մը կը ցուցաբերէ խումբին հանդէպ: Շաբաթ գիշեր, մօտակայ անտառին մէջ սարքուած բանակավայրին սահմաններէն ներս կը կատարուի խարուկահանդէս: Յաջորդօրը, խումբը ներկայ կ'ըլլայ Սբ. Պատա-

րագին: Կիրակի յետմիջօրէին, տեղւոյն Հ.Յ.Դ. աղումբին մէջ տեղի կ'ունենայ սկաուտական հանդէս: Խօսք կ'առնեն՝ սկաուտական յանձնախումբի անդամ Մկրտիչ Փափագեան եւ Մարսէյի Կաթողիկոսական Պատուիրակ Պալաքեան Սրբազան: Սկաուտները կը կատարեն մարզանքներ, կենդանի պատկեր, երգ, կատակերգութիւն: Կը կատարուի աստիճաններու տուչութիւն:

Վարիչ առաջնորդ՝ Վահան Ֆէսճեան
Փոխ-առաջնորդ՝ Գեղամ Պողոսեան եւ Երուանդ Օհանեան

Փոխ-վեցեակապետ՝ Անդրանիկ Յակոբեան, Աշոտ Վարդանեան եւ Պողոսիկ Եկաւեան — [Ե.156]:

Դժբախտաբար, սկաուտական գործունեությունն այս թափը կը դադրին, կարող խմբապետներու բացակայութեան պատճառով: Նաեւ, գործի գլուխ գտնուող անձերը օրինական ձեւով կապ չեն պահէր Փարիզի Սկաուտական Վերին Մարմնին հետ, եւ կը թերանան անոր հրահանգներու գործարութեան մէջ:

Մարսէյի եւ Շրջակայքի՝ Պօմոն, Սէն Լու եւ Սենթ Մարկրիթ գիւղերու սկաուտներու ընդհանուր թիւը միայն 65 հոգի է: Այս թիւը կրնար մինչեւ իսկ տասնապատկուիլ եթէ հետաքրքիր եւ թեքնիքօրէն պատրաստուած պատասխանատուներ գտնուէին:

Մասնաճիւղի սկաուտական գործունեությունը, 1939ի Ընդհանուր Պատերազմի նախօրեակին, անուանական գոյութիւն մը միայն կը պարզէր:

ԼԻՈՆ

Լիոնի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը հիմնըւած է 1924ին՝ գործունեությունն առանցք ունենալով հայ երիտասարդներէ կազմուած ֆուլպոլի խումբ մը — [Ե.172]: 1925ին, կը հիմնուի նաեւ սկաուտական շարժումը՝

ղեկավարութեամբ Յարութիւն Բեքմէզեանի — [ԺԱ.178]: Մասնաճիւղը մաս կը կազմէ ֆուլթպոլի եւ աթլետիզմի Ֆետերասիոններուն: Դժբախտաբար, անյաղթահարելի կարգ մը դժուարութիւններ, յատկապէս սեփական դաշտի մը չգոյութիւնը, մեծապէս կը վնասէ սկսուած աշխատանքին: Պատասխանատուները կը ստիպուին խումբի արտօնագիրը ապահովել CLUB SPORTIF LYONNAIS-ի անունով, նկատի ունենալով որ վերջնոյս դաշտին վրայ կը կատարուին փորձերն ու մրցումները: Հակառակ այս դժուարութիւններուն, 1925ի ֆուլթպոլի եղանակէն սկսեալ, կազմը կը յաջողի յաղթանակներ ապահովել քաղաքի լաւագոյն խումբերէն՝ S.G. COUZON A-ի դէմ՝ 3-2 արդիւնքով: Ֆուլթպոլի խումբին մէջ կը փայլին Պասմաճեան, Համբարձումեան, Նուպար եւ ուրիշներ — [ԻԸ/2.15]:

Դժուարութիւններու կարգին նկատելի է պատասխանատուներու յուսախարութիւնը այն իրողութեան առջեւ՝ որ հայ ֆուլթպոլիստներ կը շարունակեն մնալ տեղական խումբերու շարքերէն ներս եւ չեն գար միանալու Հ.Մ.Ը.Մ.ի կազմին: Այս պայմաններու տակ գործելն ու յառաջդիմելը կը մնան խնդրական՝ յուսահատութեան մատնելով պատասխանատուները: Յաջորդական վարչութիւնները չեն յաջողիր ոտքի կանգնել գոտի հայերէ կազմուած ֆուլթպոլի խումբ մը: Տակաւին, 1930ի վերջաւորութեան, կացութիւնը կը մնայ նոյնը: Օրուայ Վարչութիւնը կազմուած է հետեւալներէն.

- Ատենապետ՝ Ե. Սալմաստեան
- Փոխ-Ատենապետ՝ Ա. Պալեան
- Բարտուղար՝ Յ. Սիւզմէճեան
- Գանձապահ՝ Ա. Գապայեան
- Մարզական վարիչ՝ Գ. Պերպէրեան
- Խորհրդական՝ Ն. Փորթուքալեան:

Մտահոգութիւնները եւս կը մնան նոյնները եւ ճիգեր ի գործ կը դրուին սեփական դաշտ մը ունենալու եւ հայ ֆուլթ-

պոլիստները Հ.Մ.Ը.Մ.ի խումբին շուրջ համախմբելու: 1933-34 տարեշրջանին, խումբը կը մասնակցի իր դասակարգի նահանգային ախոյեանական մրցումներուն: Արդիւնք՝ 1 յաղթանակ, 1 հաւասարութիւն եւ 4 պարտութիւն:

Կազմակերպչական տեսակէտէ՝ Փարիզի կեդրոնին հետ կապերը կը պահուին, սակայն գործնականօրէն մասնաճիւղը կը մնայ լուսանցքի վրայ: 1934ի Շրջանային ժողովին Լիոնի ներկայացուցիչը կը նշանակուի Փարիզէն, յանձին՝ Ժիրայր Մինթանճեանի:

Մինչեւ Բ. Աշխարհամարտի սկիզբը մասնաճիւղը կը գոյատեւէ շատ սահմանափակ գործունէութեամբ:

ՏԵՍԻՆ

Լիոնի մօտակայ արուարձաններէն է Տեսինը, ուր Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը հիմնրած է Լիոնի հետ, եւ անոր նման ալ ունեցած է կազմակերպուելու եւ հաստատուելու դժուարութիւններ:

Կիրարկած է ֆուլթպոլ եւ ունեցած է սկստական խումբ:

Ժամանակի ընթացքին, Տեսինի եւ Լիոնի մասնաճիւղերը միացած են՝ չկարենալով յաղթահարել նոյնանման դժուարութիւնները, եւ մէջ ընդ մէջ գործած են միասնաբար:

1938ին, սկստական կազմը կը հաշուէ շուրջ 30 անդամ, սակայն կարող խումբապետի մը չգոյութիւնը կը վնասէ անոր գործունէութեան յարատեւման:

ՎԱԼԱՆՍ

1920ական թուականներու սկիզբը, Ֆրանսայի Վալանս քաղաքին մէջ հայեր կայք կը հաստատեն, կազմելով ստուար թիւ մը եւ գրաւելով քաղաքի գլխաւոր թա-

ղամասերէն մին: Մարզական շարժումը շուտով տեղ կը գտնէ նորակազմ գաղութէն ներս:

1925ին, Պոլսոյ Գուլէլիի Որբանոցէն՝ Կօշկակարեանի ջանքերով կը կազմուի Ֆուլթպոլի խումբ մը, ինչպէս նաեւ սկառտական խումբի մը կորիզը: Հայկական այս ակումբի անդամներու թիւը շուտով կը հասնի 50ի: Ֆուլթպոլի խումբը, 1925-26 տարեշրջանէն սկսեալ, մաս կը կազմէ հարաւային Ֆրանսայի Ֆուլթպոլի ֆետերասիոնին՝ մասնակցելով ակոյնեանական մրցումներուն: Դժբախտաբար, եղանակի փակումէն ետք խումբը կը քայքայուի: Շուտով, նախկին երկու Հ.Մ.Ը.Մ.ականներ, որոնք կը խաղային Ֆրանսական խումբերէ, կուգան միանալ հայկական կազմին եւ 1926ի Օգոստոսէն սկսեալ, որպէս Հ.Մ.Ը.Մ.ի Վալանսի մասնաճիւղ, կը ձեռնարկեն գործունէութեան:

1926-27 տարեշրջանին, մասնաճիւղը ունէր Ֆուլթպոլի զոյգ խումբեր, որոնցմէ առաջինը՝ շրջանի ակոյնեանութեան շարքին կը հասնի աւարտական հանգրուանին: Յաջորդ եղանակին Ա. խումբը կը շարունակէ իր յաջող ընթացքը, սակայն Բ. կազմը կը քայքայուի:

Ֆուլթպոլի կողքին, Վալանսի Հ.Մ.Ը.Մ.ը կիրարկած է հեծելանիւի ճիւղը: 1926ին, մասնաճիւղի կազմակերպած առաջին մրցումին յաղթական կը հանդիսանայ Յ. Գապայեան՝ 36 քմ. տարածութեան մրցումը 1 ժամէն աւարտելով: Երկրորդ մրցումին, 58 քմ. տարածութեան վրայ, յաղթանակը կ'ապահովէ Հայկազ Յովհաննէսեան՝ 1 ժամ 38 վայրկեանով: 1927-ին, 56 քմ. տարածութեան մրցումը, կրկին կը շահի Հայկազ Յովհաննէսեանը՝ 1 ժամ 33 վայրկեանով:

Վալանսի մասնաճիւղի սկառտական գործունէութիւնը, սկսուած 1927ին, կարճ դադարէ մը ետք, կրկին կը վերակազմուի

1928ի Մայիսին՝ Պ. Պայեանի ճիգերով: Գայլիկներէ եւ սկառտներէ բաղկացող այս շարժումը, սկիզբէն մինչեւ 1939 կ'ունենայ բաւական աշխուժ գործունէութիւն: Արշաւներ եւ բանակումներ կը կազմակերպուին դէպի մօտակայ շրջաններ, եւ այցելութիւններ՝ դրացի մասնաճիւղերուն, ինչպէս՝ Տեսին եւ Լիոն: Գայլիկներու պատասխանատու խմբապետուհին է Օր. Տ. Տուրբալս — [2.32]:

ԿՐԸՆՈՊԼ

Կրընոպլը, հարաւային Ֆրանսայի Ալպեան լեռներուն կողին քաղաք մըն է՝ ուր հայեր, 1920ական թուականներէն սկսեալ, կայք հաստատած են որպէս ճարտարուեստական ճիւղերու բանուորներ:

1928ին, Կրընոպլի մէջ հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին: Խումբ մը մարզասէր երիտասարդներ, Ապրիլ 22ին հաւաքուելով կը կատարեն այս հիմնադրութիւնը, եւ անմիջապէս կը ձեռնարկեն Ֆուլթպոլի խումբի մը կազմութեան: 1928ի ընթացքին խումբը կ'ունենայ կարգ մը բարեկամական մրցումներ տեղական խումբերու դէմ:

1929ին, խումբի խաղացողներէն մէկ մասին քաղաքէն մեկնումը պատճառ կը դառնայ խումբի կազմալուծման: Սակայն մասնաճիւղի ակումբները կը շարունակեն մշակել իրենց ճիւղը, մասնակցելով զանազան մրցումներու եւ շրջանի ֆրանսական ակումբներու կազմակերպած մարզահանդէսներուն:

Մասնաճիւղը մաս կազմած է Ֆրանսայի Ֆուլթպոլի եւ ակումբի դաշնակցութիւններուն: Աթլետներէն նշանաւոր է՝ բարձրութիւն ցատկելու ակոյնեան Վազգէն Միսքճեան, որուն յաջողութիւնները զայն դարձուցած են փնտուռած մրցակից մը:




Կրընոպլի Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի խումբը՝ 1932-ին

Յաջորդական վարչութիւնները ամէն միջոց կը գործադրեն, աթլետիզմի ճիւղի զարգացման եւ ֆրանսահայ նոր մրցանիշերու ապահովման համար — [Ե.117]:

8 Յունիս, 1930ին, մասնաճիւղի աթլետներէն ժիրայր Խթիկեան կը յաջողի հաստատել գունտ նետելու՝ Հ.Մ.Ը.Մ.ի մրցանիշ մը, Ալպեան շրջանի աթլետիք մրցահանդէսի մը ընթացքին, գունտը արձակելով 13,15 մետր հեռաւորութեամբ: Ֆրանսացի մրցակիցներու շարքին, ժիրայր Խթիկեանի գունտ նետելու ճիւղին մէջ ունեցած յաջորդական յաջողութիւնները զայն եւս կը դարձնեն փնտռուած մրցակից մը — [Ե.151]:

Դժբախտաբար, յաջողակ աթլետներուն երկայնութիւնը ժամանակի ընթացքին կը պակսի, եւ Բ. Ընդհանուր Պատերազմի նախօրեակին մասնաճիւղը գործնապէս գոյութիւն ունենալէ կը դադրի:

Կազմակերպչական տեսակէտէ՝ մասնաճիւղը եղած է հաստատուն, եւ Ֆրանսայի միջ-մասնաճիւղային սկաուտական սեմինարներ եւ շրջանային կարգ մը ժողովներ հիւրընկալած է շրջանէն ներս: Այս ժամանակաշրջանի, Ֆրանսայի սկաուտական պատգամաւորական վերջին ժողովը կը կայանայ Կրընոպլի մէջ, 1939ի Օգոստոսին:



Ժիրայր Խթիկեան՝ Հ.Մ.Ը.Մ.-ի գունտ Անտելու ախոյեան

ունեցած է Հ.Մ.Ը.Մ.-ի ֆուլթպոլի խումբ, որ կարճ ժամանակի գործունէութիւնէ ետք դադրած է՝ չկարենալով յաղթահարել նոյնանման դժուարութիւններ:

ՆԻՍ

Ֆրանսայի Շրջանի կազմութեան առաջին օրերուն հետ հարաւային ծովեզերեայ Նիս քաղաքն ալ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի իր մասնաճիւղը:

Մասնաճիւղի կազմութեան իրենց կարելոր բաժինը բերած են Լեոն Գուլանճեան եւ Իբրանոսեան — [ԺԱ.180]:

Որպէս գործունէութեան առանցք, Նիսը ունեցած է ֆուլթպոլի խումբ եւ սկաուտութիւն: Սակայն ներքին անհասկացողութիւններ, իրերայաջորդ դեկավարներու միջեւ փոխանցումներու թերացում եւ այլք, պատճառ դարձած են որ գործը երկար ժամանակ կաղայ, յատկապէս սկաուտական բաժնին մէջ:

Սկաուտական խումբը զանազան առիթներով կը մասնակցի Շրջանային Սկաուտական Ոորհուրդի կազմակերպած միջմասնաճիւղային բանակումներուն: 1938ին, սկաուտական կազմի թիւը շուրջ 30 է:

ԹՈՒԼՈՆ

Թուլոնի Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղը հիմնուած է 1934ին:

Հիմնադիր առժամեայ վարչութիւնը անմիջապէս կապ կը պահէ Փարիզի կեդրոնին հետ, ընդունուելու համար Հ.Մ.Ը.Մ.-ի ընտանիքէն ներս եւ ստանալու համար անոր հրահանգները:

Մասնաճիւղը այնուհետեւ իր գործունէութիւնը կեդրոնացուցած է սկաուտական շարժման վրայ, ապահովելով յաջող արդիւնքներ:

ՍԵՆԹ ԷԹԻԷՆ

Կեդրոնական Ֆրանսայի ճարտարարուեստական մէկ այլ կեդրոնն է Սենթ Էթիէն քաղաքը, ուր հայ երիտասարդներ կազմած են Հ.Մ.Ը.Մ.-ի ֆուլթպոլի խումբ մը: Դժբախտաբար, նիւթականի եւ մարդուժի պակասը այս խումբի գործունէութիւնը սահմանափակած է, եւ կարճ ժամանակ մը ետք խումբը գործնապէս դադրած է գոյութիւն ունենալէ:

ԷՔՍ ԱՆ ՓՐՈՎԱՆՍ

Կրճնոպլի եւ Սենթ Էթիէնի նմանութեամբ, Էքս Ան Փրովանսն ալ պահ մը

1938ի տեղեկագրին համաձայն խումբը կը բաղկանայ երեսունի մօտ գայլիկներէ եւ սկառտներէ — [ԼԲ.37]:

ՌՈՄԱՆ

1930ի Սեպտեմբերին հիմը կը դրուի Ռոմանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին, նպատակ ունենալով իր շուրջ հաւաքել քաղաքի երիտասարդ ու մարզասէր հայութիւնը:

Ռոմանի մասնաճիւղը կիրարկած է ֆուլթպոլ:

Իր գործունէութեանց արդիւնքները առ հասարակ համեստ են եղած:

ՎԻԷՆ

Կեդրոնական Ֆրանսայի Վիէն քաղաքին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը հիմնուած է 25 Մայիս, 1924ին, նախաձեռնութեամբ կարգ մը երիտասարդներու, որոնցմէ յիշատակելի են՝ Ծաղիկեան, Փափագեան, Նաքաչեան, Մեսրոպ Դանիէլեան — [Ե.135]:

Հայաշատ այս քաղաքի երիտասարդութիւնը շուտով կը բոլորուի սկսուած աշխատանքին շուրջ, կազմելու համար ֆուլթպոլի խումբ մը: Խումբը, իր առաջին ելոյթներով, ազգային հպարտանքի առիթներ կը ստեղծէ իր տիպար խաղարկութեամբ: Խումբը կը վաւերացուի Ֆրանսական ֆետերասիոնին կողմէ՝ որպէս Ռոն նահանգի չորրորդ դասակարգի խումբ — [Ե.118]:

Խումբի յաջորդական յաջողութիւնները զինքը կ'առաջնորդեն՝ 1930ին տիրանալու իր նահանգի չորրորդ դասակարգի ախոյեանութեան տիտղոսին եւ բաժակին: Նոյն տարուայ Յունիսի 10ին, Վիէնի եւ շրջակայքի ֆուլթպոլի 10 հայ խումբեր, որոնց կարգին Տեսինի մասնաճիւղի գոյգ

խումբերը, միօրեայ մրցաշարք մը կը կազմակերպեն: Մրցաշարքը կ'աւարտի Վիէնի յաղթանակով — [Ե.150]: 1931ի եղանակին, կրկին իր նահանգի ախոյեանութեան գծով Վիէնի խումբը կը հասնի աւարտականի դիրքին, 18 խումբերու դէմ մրցումներ ունենալէ ետք:

Որպէս մօտակայ մասնաճիւղեր՝ Կրընոպլը եւ Վիէնը իրար հետ կ'ունենան յաճախակի հանդիպումներ:

1934ին, իր նահանգի ախոյեանութեան շարքին, մասնաճիւղի խումբը կը գրաւէ երկրորդ դիրքը: Խումբի յաջողութիւնները կ'երկարին մինչեւ 1937 թուականը որմէ ետք, հետզհետէ տկարանալով խումբը կը լուծուի: Վարչութիւնը կը յանգի այն եզրակացութեան, թէ՛ մեծածախս ու դժուարին ճիգերով պահուող ֆուլթպոլի խումբի փոխարէն նախնտրելի է զարկ տալ սկառտական շարժումին:

Ֆուլթպոլի կողքին մասնաճիւղը ունեցած է աթլետներ, որոնք ամառնային եղանակին կը մրցին շրջակայքի հայ ակումբներու խումբերուն դէմ՝ արձանագրելով յարատեւ յաղթանակներ: Մասնաճիւղի մարզիկները, 1926ին կը մասնակցին Մարսիլիոյ մասնաճիւղի կազմակերպած միջազգային խաղերուն:

1931էն սկսեալ, Վիէնի Հ.Մ.Ը.Մ.ը ունեցած է նաեւ գայլիկներու խմբակ մը — [Զ.61]: 1936ին, կազմուած է նաեւ սկառտական խումբը: 1937ին, Սկառտական Խորհուրդի անդամներն են. Ատենապետ՝ Հայր Կ. Տէրմոյեան (նախկին Մխիթարեան վարդապետ), Յակոբ Մաթոսեան, Հայկ Լուսարարեան, Լեւոն Քէշիշեան, Արսէն Կարապետեան: 1938ին, այս կազմին վրայ կ'աւելնայ Ներսէս Խաչիկեան եւ 1939ին՝ Ս. Գալուստեան: Սկառտ պատասխանատուներէն կը յիշուին՝ խմբապետ Ս. Սնդրեան եւ Արսէն Կարապետեան:



1. Փարիզի եւ շրջակայքի մասնաճիւղերու սկստութեան ընդհանուր հաւաքոյթ: 2. Չախէն աջ Քերովքէ Ժպտունի եւ Վազգէն Անդրեասեան Թենիսմէնի տարազով: 3. Միջ-մասնաճիւղային արեւիզմի խաղերու դատական կազմ ձախէն աջ Վազգէն Անդրեասեան, 2րդ Մ. Մալումեան 7րդ. Գ. Յակոբեան 9րդ. Գալո Շահինեան ... 4. Միջ մասնաճիւղային ֆութպոլի մարզանքի աւարտին խաղեր: 5-6. Տեսարաններ միջ-մասնաճիւղային արեւիզիք խաղերու վազքերու մրցումներէն:




1. Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի խումբը իր պատասխանատուներով: 2. Մարսելյի Հ.Մ.Ը.Մ.ի արևերները տողանցքի կը պատրաստուին: 3. Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի արևերները 200մ. վազքի մեկնումին: 4. Մարսելյի Հ.Մ.Ը.Մ.ի հեծելանաւարդները մեկնումի պահուն: 5. 1924-ի մարզահանդէսին Փարիզի արևերները կը տողանցեն: 6. Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ակտիւեան կազմը: 7. Հ.Մ.Ը.Մ.ի Բ. եւ Սթաւ Ֆրանսէ Բ. խումբերը մրցումէն առաջ: 8. Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի պահեստի խումբը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

- ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ
- ՍՈՑԻԱ
- ԲԼՈՎՏԻՎ — ՖԻԼԻՊԷ
- ՌՈՒՍՉՈՒՔ — ՌՈՒՍԷ
- ՎԱՌՆԱ
- ՍԼԻՎԷՆ
- ՊՈՒՐԿԱԶ
- ԹԱԹԱՐ ՊԱԶԱՐՃԸՔ
- ԱՅԹՈՍ
- ՍԹԱՐԱ ԶԱԿՈՐԱ
- ՆՈՎԱ ԶԱԿՈՐԱ
- ՇՈՒՄԷՆ
- ԽԱՍՔՈՎՕ
- ՊՈՐԻՍՈՎԿՐԱՏ
- ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ
- ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



Հ Ա Յ Կ Ա Ս Տ Ա Ն

ԻՆՆՍՆՈՒՅ

ՎԱՊՈՒՐԱԿ

ՍՈՓԻԱ

ՍԼԻՎԵՆ

ԱՅԹՈՍ

ՆՈՎԱ ԶԱԿՈՐԱ
ՍԹԱՐԱ ԶԱԿՈՐԱՅ

ՊԵՏԱԿԱՎԱՆ

ՊԱՂԱՐՄՆՆՔ

ԲԼՈՎՏԻՎ

ՊԻՍԱԳՐՎՈ

Ս Ե Ն

Ծ Ո Վ

ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ
ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

Պոլսոյ մօտակայ հնագոյն շրջանը, ուր
Հ.Մ.Ը.Մ.ը ոտք դրաւ արտասահմանի մէջ,
Պուլկարիոյ Շրջանն է իր անդրանիկ մաս-
նաճիւղ՝ Վառնայով:

Արդարեւ, 1920ի ամրան սկիզբը, Հ.Մ.
Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը վաւե-
րացուց Վառնայի մասնաճիւղի կազմու-
թիւնը, եւ այսպիսով սկսաւ Պուլկարիոյ
մէջ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը:

Հետզհետէ, Պուլկարիոյ հայաչատ քա-
ղաքները կազմեցին իրենց մասնաճիւղերը՝
ժամանակագրական հետեւեալ կարգով.

- Վառնա 1920ին
- Բլովտիվ 1921ին
- Ռուսչուք 1921ին
- Սոֆիա 1922ին
- Սլիվէն 1923ին
- Պուրկազ 1924ին
- Թաթար Պազարճըք 1924ին
- Սթարա Զակորա 1924ին
- Շումէն 1925ին
- Խասքովա 1925ին
- Այթոս 1930ին
- Պորխսովկրատ

26 Հոկտեմբեր, 1924ին, Բլովտիվի
մասնաճիւղի հրաւերով եւ Պուլկարիոյ ութը
մասնաճիւղերու մասնակցութեամբ կայա-
ցած անդրանիկ Շրջանային ժողովը հիմը
կը դնէ Պուլկարիոյ Հ.Մ.Ը.Մ.ի շրջանային
գործունէութեան: Ժողովին մասնակցող
մասնաճիւղերն էին՝ Ռուսչուք, Սլիվէն,
Պուրկազ, Սոֆիա, Վառնա, Թաթար Պա-
զարճըք, Սթարա Զակորա, եւ Բլովտիվ,
որուն՝ այդ օրերուն միացած էր նոյն
քաղաքի ՇԱՆԹ մարզական միութիւնը:
Ժողովը տեղի կ'ունենայ Բլովտիվի Ազգա-
յին Խորհրդարանի դահլիճին մէջ, նա-
խագահութեամբ Կարօ Ղազարոսեանի եւ

քարտուղարութեամբ Հայկունի Քիրիշեանի
եւ Թորգոմ Հեքիմեանի:

Ժողովը, մշակելէ ետք տարեկան գոր-
ծունէութեան ծրագիրը, կ'ընտրէ Շրջանա-
յին Վարչութիւն՝ հետեւեալ կազմով:

- Ատենապետ՝ Տոքթ. Թոմաս Թոմասեան
- Ատենադպիր՝ Կարօ Ղազարոսեան
- Գանձապահ՝ Մինաս Միքայէլեան

Անդամներ՝ Թագուր Թագուրեան, Կա-
րապետ Ղ. Փափազեան, Ներսէս Աստուա-
ծատուրեան եւ Հայկունի Քիրիշեան —
[ԻԱ. 3.5]:

Նոյն ժողովը կ'ընտրէ նաեւ զոյգ
պատգամաւորներ, յանձին Լեւոն Գազանճ-
եանի եւ Մ. Աստարճեանի որպէս Պուլ-
կարիոյ Շրջանի ներկայացուցիչներ՝ Հ.Մ.
Ը.Մ.ի Ընդհանուր Ժողովին: Ժողովին
կողմէ մշակուած Պուլկարիոյ Շրջանի ներ-
քին կանոնադրութիւնը, 10 Փետրուար,
1925ին, պետական վաւերացում կը ստա-
նայ:

1924-1934 տասնամեակին Շրջանային
Վարչութեան նստավայր կը մնայ Բլովտի-
վը: Յաջորդական կազմերուն կ'ատենապե-
տեն նաեւ՝ Կարօ Ղազարոսեան, Յ. Մալ-
խասեան եւ Ներսէս Աստուածատուրեան:
1935-36 տարեշրջանին նստավայրը կը փո-
խադրուի Սոֆիա: Շրջանային Վարչութեան
ատենապետն է Թ. Սեդրակեան: 1935-36
տարեշրջանին նստավայրը կը վերադառ-
նայ Բլովտիվ, ատենապետութեամբ՝ Կարօ
Ղազարոսեանի: 1936ի Յուլիսէն սկսեալ,
Շրջանային Վարչութեան նստավայր կը
դառնայ Վառնան: Շրջանային Վարչու-
թեան կազմն է.

- Ատենապետ՝ Տոքթ. Պերճ Հաճոյեան
- Փոխ ատենապետ՝ Արշակ Զագէեան
- Ատենադպիր՝ Կարօ Զիվիճեան
- Գանձապահ՝ Բարթող Մինասեան
- Մարզական պատասխանատու՝ Յովսէփ
Նրեմեան:

Այս կազմը կը մնայ նոյնը՝ նաեւ 1937-38 տարեշրջանին համար — [ԺԱ.193]:

1926էն սկսեալ կը կազմակերպուին միջ-մասնաճիւղային մրցահանդէսներ՝ Պուկ-կարահայ Նաւասարդեան Խաղեր՝ հետեւեալ շարքով.

Բլովտիվի մէջ՝ 1926-1927-1928-1930-1931-1932-1934 տարիներուն:

Սոֆիայի մէջ՝ 1929ին, իսկ Վառնայի մէջ՝ 1936ին: Այս մրցահանդէսները կազմակերպչական եւ թեքնիք արդիւնքներու տեսակէտներէն կ'ըլլան տիպար ելոյթներ, յայտնաբերելով ախոյեան մարզիկներ, ինչպէս՝ Յովսէփ Երեմեան, Հրայր Սրայեան, Եփրատ Յակոբեան եւ ուրիշներ, որոնք տիրացած են վերոյիշեալ տարեկան մրցահանդէսներուն օրուայ ախոյեանութիւններուն, միաժամանակ հաստատելով ազգային մրցանիշեր աթլետիկ մարզին մէջ:

Շրջանային Վարչութիւնները կը կազմակերպեն նաեւ միջ-մասնաճիւղային ֆուտպոլի մրցաշարքեր: 1930ի մրցաշարքին կը մասնակցին Պուրկազի, Սլիվէնի եւ Բլովտիվի մասնաճիւղերը:

Իր կարգին սկաուտական գործունէութիւնը կը ստանայ ծաւալ եւ տարածում:

Պուկկարիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն սկաուտական բաժինները, հաւաքաբար մաս կը կազմեն Պուկկարիոյ պետական իշխանութեան կողմէ հովանաւորուող դաշնակցութեան: Շրջանային գործադիր մարմինը կը համադրէ անոնց գործունէութիւնը, կազմակերպելով սկաուտական համագումարներ: Մասնաճիւղերու սկաուտական խումբերու մասնակցութեամբ կը կազմակերպուին միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակումներ: Այսպէս.

1933ի ընդհ. բանակումը Պուրկազի մէջ:

1934, Օգոստոս 5-13՝ Պոյգօվոյի անտառներուն մէջ. ընդհ. պետ՝ աւագ խումբապետ Պողոս Գանթարեան, օժանդակու-

թեամբ՝ խմբապետներ Սիմոն Ճամճեանի եւ Զաւէն Փափազեանի եւ վարիչ առաջնորդներ Յ. Պաճաքեանի եւ Պ. Փափազեանի:

1935ի Օգոստոս 18-28՝ Սօֆիայի մէջ, ուր խումբերը իրենց մասնակցութիւնը կը բերեն պուկար վեթերան Եավարոֆի յուշարձանի բացման հանդիսութեան եւ Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադիր Քրիստափոր Միքայէլեանի մահուան երեսնամեակի նշումին:

Իսկ 1937ի Օգոստոս 18-30ին՝ Վառնայի մէջ — [ԺԱ.195]:

ՍՈՑԻԱ

Պուկկարիոյ մայրաքաղաք՝ Սոֆիայի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին տարիներու խարխափումներէն ետք մասնաճիւղի առաջին մրցահանդէսն էր՝ որ 6 Սեպտեմբեր, 1925ին, Միութեան գործունէութեան մասին լայն խաւերու ծանօթացումին առիթը ստեղծեց:

Այդ օրը, սկաուտական եւ մարզական միօրեայ ելոյթները եկան փաստելու, թէ Հ.Մ.Ը.Մ.ը այն կազմակերպութիւնն է, որուն միջոցաւ Սոֆիայի հայ երիտասարդութիւնը կրնայ մեծապէս ծառայել ազգային, մարզական ու բարոյական զարգացումներուն:

Առաւօտուն, սկաուտական խումբը, քաղաքին պողոտաներուն մէջ տողանցելէ ետք, եկեղեցւոյ բակին մէջ կատարեց սկաուտական երգման արարողութեան հանդիսութիւն եւ դրօշակի օրհնութիւն, ձեռամբ Տէր Խորէն Քահանային: Ապա կատարուեցաւ աստիճաններու տուչութիւն: Կէսօրէ ետք, սկաուտներու առաջնորդութեամբ եւ զինուորական նուագախումբի մասնակցութեամբ, մարզադաշտին վրայ տողանցեցին մասնաճիւղի 60 մարզիկներն ու սկաուտները, որմէ ետք տեղի ունեցան

աթլեթիք մրցումներ՝ հետեւեալ բաժիններով:

Վազքեր՝ 100, 800 եւ 1500 մեթր:

Ոստումներ՝ բարձրութիւն, երկայնք եւ 3 քայլ:

Արձակումներ՝ գունտ եւ սկաւառակ:

Եղան նաեւ պարկարչաւ եւ դրօշարչաւ ու մրցահանդէսը փակուեցաւ տեղական Պեժանից խումբին դէմ ֆութպոլի մրցումով:

Օրուայ թագուհին էր Տիկին Տիգրանուհի Ռումեան, պատուոյ օրիորդներ՝ Աննիկ Յովհաննէսօֆ եւ Ք. Պօյաճեան: Աթլեթիզմի խաղերուն, օրուայ ախոյեան հանդիսացաւ Աշոտ Շաքարեան:

Այնուհետեւ, Սոֆիայի մասնաճիւղի գործունէութեան շուրջ բոլորուեցաւ քաղաքի հայ հասարակութիւնը: Մարզիկներու եւ սկաուտներու շարքերը հետզհետէ կարեւորութիւն ստացան: 1925ի աշնան մասնաճիւղը կը հաշուէր 86 անդամ՝ հետեւեալ բաժանումներով. Օժանդակ՝ 20, Մարզիկ՝ 28, Սկաուտ՝ 38, որոնցմէ 5ը՝ աստիճանաւորներ:

Մինչեւ տարեվերջ ֆութպոլի խումբը զգալի յառաջդիմութիւն արձանագրեց: 8 Դեկտեմբեր, 1925ին, Ս.Ք. Թիչա պուկար զօրաւոր կազմին դէմ, մրցումը աւարտեցաւ 2-2 հաւասարութեամբ:

13 Դեկտեմբեր, 1925ին, մասնաճիւղը կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի օրուայ տօնակատարութիւն, որուն ընթացքին խօսք կ'առնեն Մեսրոպեան Ճեմարանի, Հ.Յ.Դ.ի եւ Ս.Դ.Հ.Կ.ի ներկայացուցիչները՝ վերառնելով Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան կարեւորութիւնը — [Ի/7.25]:

1929ի Օգոստոս 28ին, մասնաճիւղը կը կազմակերպէ Պուկարահայ Դ. Նաւասարդեան Ուղերը, նախագահութեամբ Զօրավար Լազարօֆի: Օրուայ թագուհին է՝ Տիկ. Ղուկասեան, պատուոյ օրիորդներ՝ Հ. Յովհաննէան եւ Ա. Փափագեան: Մասնաճիւղի

մարզիկներէն՝ Տ. Զաքարեան 800 եւ 1500 մեթր վազքերու ախոյեան կը հանդիսանայ, իսկ մասնաճիւղը կը գրաւէ ընդհանուր դասաւորման երրորդ դիրքը — [Ե.18]:

1930ի Յունուար 7ին, Սոֆիայի մէջ կը կայանայ Պուկարիոյ Շրջանային Ընդհ. Ժողովը, ուր Շրջանային Վարչութեան անդամ կ'ընտրուին մասնաճիւղէն հինգ անդամներ:

Մինչ մասնաճիւղի գործունէութիւնը օրէ-օր կը զարգանայ, 1930ի գարնան կարգ մը ներքին անհասկացողութիւններ պահ մը կը կասեցնեն յառաջխաղացքը եւ մասնաճիւղի ուժերը կը բաժնուին երկուքի. մին կը մերժէ հնազանդիլ Շրջանային Վարչութեան հրահանգներուն եւ կը կապուի պուկարական տեղացի խումբերու — [Ե. 206]—, իսկ երկրորդը կը մնայ հաւատարիմ Միութեան նուիրապետական կարգին ու կը շարունակէ իր յառաջդիմութիւնները կազմակերպչական, մարզական եւ սկաուտական գետիններուն վրայ, մինչեւ 1939, մնալով քաղաքի լաւագոյն մարզական ակումբներէն մէկը եւ արժանանալով հայ եւ օտար զանգրւածներու գնահատանքին:

1938ի տեղեկագրով մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն էր 135:

ԲԼՈՎՏԻՎ (ՅԻԼԻՊԷ)

Բլովտիվ՝ (կամ Յիլիպէ) Պուկարիոյ երկրորդ մեծագոյն քաղաքը, վաղ ժամանակէն սկսեալ եղած է հայ հաւաքականութեան կեդրոնը Պուկարիոյ մէջ: Այդ հանգամանքով ալ Բլովտիվը, 1924ին, օճախը պիտի դառնար Պուկարիոյ Հ.Մ. Ը.Մ.ի շրջանային գործունէութեան կազմակերպումին:

Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութիւնը Բլովտիվի մէջ կը կայանայ 1921ին, եւ կը վաւերացուի Պուկարիոյ կեդրոնէն: Հայ երիտասարդութիւնը շուտով կը միանայ

մասնաճիւղի շարքերուն: 1925ին, անդամներուն թիւը 200էն վեր է, հետեւեալ ենթաբաժանումներով.

Մարզիկներ՝ 64 աթլետ եւ 14 ֆուտպոլիստ

Սկաուտներ՝ 61 սկաուտ եւ 17 գայլիկ

Օժանդակ անդամներ՝ 47:

Մարզական ճիւղի գործունէութիւնը շուտով ուշագրաւ կը դառնայ նաեւ տեղացի շրջանակներուն մօտ, եւ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի առաջին կազմը կը մասնակցի Ֆետերասիոնի կազմակերպած Գ. դասակարգի մրցաշարքերուն: 1925-1926 տարեշրջանին, խումբը կը բարձրանայ Բ. դասակարգ: Մասնաճիւղը կը կազմակերպէ նաեւ միջքաղաքային մրցումներ:

1930ին, խումբը կը բարձրանայ Ա. դասակարգ: Ֆուտպոլի ճիւղին մէջ յայտնի անուններ են՝ Պետրոս Գազանճեան (Բլովտիվի հաւաքականի երբեմնի յառաջապահ), Թորգոմ Գալբաքճեան (ֆուտպոլի խումբի տարիներու խմբապետ), Հրայր Սրապեան, Երուանդ Քէպապճեան եւ Յ. Արիմեան:

Մասնաճիւղի աթլետները ախոյեանական մրցումներուն առաջնակարգ դիրքեր կը գրաւեն: 1930ի գարնան, Ֆետերասիոնի կազմակերպած ջահարշաւի մրցումին ախոյեան կը հանդիսանայ Հ. Սրապեան:

Բլովտիվի մասնաճիւղը կ'ըլլայ նաեւ Պուլկարիոյ Շրջանի միջ-մասնաճիւղային առաջին մրցահանդէսի կազմակերպող մասնաճիւղը՝ նախաձեռնութեամբ Շրջանային Վարչութեան, 28 եւ 29 Օգոստոս, 1926ին:



Փլովտիվի մասնաճիւղի սկաուտական ընդհ. կազմը 1930-ին:

Մասնաճիւղի խումբը կը շահի ֆուլթայոլի ակտիւանութիւնը, դրօշարշաւի մրցումը, եւ կը հանդիսանայ ակտիւան մասնաճիւղ:

Սկաուտական շարքերը կազմութեան օրէն սկսեալ կը հետեւին մասնագիտական զարգացման՝ կարգերու յատուկ գիտելիքներու ամբարումով ի պատրաստութիւն հետագայ քննութեանց:

1929ին, Ա. կարգի 7 թեկնածուները յաջողութեամբ կ'անցնեն իրենց քննութիւնները: Սկաուտական խորհուրդը իր կարգին կը կազմակերպէ ձեռնարկին աշխատանքներու ցուցահանդէս:

1930ին, Սբ. Զատիկուայ առիթով կը կազմակերպուի նորընծաներու խոստումի եւ Բ. կարգի թեկնածուներու երդման արարողութիւն՝ քաղաքի պուլկար սկաուտ պետ, հարիւրապետ Կոստանդինովի ներկայութեան: Սկաուտական շարքերու թիւը արդէն բարձրացած է 120ի: Սկաուտական շարժումը կը վարեն՝ խմբապետներ՝ Պօղոս Քանթարճեան եւ Մարտիկ Տողրամաճեան, փոխ-խմբապետ՝ Հրայր Սրապեան, իսկ աւելի ուշ՝ Թորգոմ Գալբաքճեան:

Կազմակերպչական գետնի վրայ, մասնաճիւղը ունի եռուն գործունէութիւն: 13 Դեկտեմբեր, 1926ին, մասնաճիւղը կը սարքէ Հ.Մ.Ը.Մ.ի Օրուայ տօնակատարութիւն: Առաւօտուն, Երուանդ Եպիսկոպոս Փերտահճեան Սբ. Պատարագ կը մատուցանէ եւ քարոզով կը ջատագովէ հայ իրականութեան մէջ մարգական շարժման օգուտները: Յետմիջօրէին, «Հայ Ակումբ»ի մէջ տեղի կ'ունենայ հրապարակային հանդիսութիւն, աննախընթաց բազմութեան մը ներկայութեան: Տեղի կ'ունենայ գեղարուեստական բաժին: Օրուայ պատգամը կը փոխանցէ Կարօ Ղազարոսեան:

Բլովտիվի մասնաճիւղի գործունէութիւնները կը շարունակուին նոյն թափով՝ մինչեւ Համաշխարհային Բ. Աշխարհամարտի սկիզբը, նորանոր նուաճումներով,

եւ շրջանային գործունէութեան առաւելագոյն մասնակցութեամբ:

ՌՈՒՍՉՈՒՔ (ՌՈՒՍԷ)

Պուկարիոյ Շրջանի երրորդ մասնաճիւղը՝ Ռուսչուքը հիմնուած է 1921ին եւ վաւերացուած՝ Պոլսոյ կեդրոնին կողմէ — [Դ.16]:

Հիմնադրութեան առընթեր, մասնաճիւղի սկաուտները տեղ կը գրաւեն գաղութի ազգային գործունէութեան մէջ: 25 Յունիս, 1921ին, անոնք կը կազմակերպեն գրական եւ մարզական երեկոյթ՝ ի նպաստ չքաւոր սկաուտներու զգեստաւորման: Երեկոյթը կատարեալ յաջողութեամբ կը պըսակուի — [Դ.77]:

Կառուցային զօրաւոր կազմով, այս մասնաճիւղն ալ միւսներուն նման՝ 1924էն սկսեալ իր կարեւոր բաժինը կը բերէ շրջանային գործունէութեան, իր 60 անդամներով, ֆուլթայոլի խումբով եւ սկաուտական 3 խմբակներով:

Վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալներէն.

Ատենապետ՝ Վարդան Վարդանեան
Ատենադպիր՝ Մուշեղ Հայրապետեան

Գանձապահ՝ Հայկ Ս.
Խորհրդականներ՝ Գէորգ Սամուէլեան եւ Օ. Քեչեան

Սկաուտական աստիճանաւորական կազմը կը բաղկանայ հետեւեալներէն.

Խմբապետ՝ Մուշեղ Հայրապետեան
Վարիչ առաջնորդ՝ Լեւոն Յակոբեան
Առաջնորդներ՝ Ն. Խրիստամեան եւ Հրաչ Տողրամաճեան:

Ֆուլթայոլի խումբը կը վարէ Վահրամ Զուլիկեան — [ԻԱ/2.3]:

14 Հոկտեմբեր, 1925ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը, 56 անդամներու ներկայութեան, կ'ընտրէ նոր

Վարչութիւն, յանձին եղբայրներ՝ Գրիգոր Մինասեանի՝ ատենապետ, Ժիրայր Աթթարեանի, Յարութիւն Մուշեղեանի, Ալեքսան Զիրֆինեանի եւ Միքայէլ Անտոնեանի՝ ատենադպիր: Աթլեթիք խմբապետն է Յակոբ Շահպագեան, իսկ սկաուտ խմբապետը՝ Մուշեղ Հայրապետեան: Մասնաճիւղի քըննիչ մարմնի անդամ կ'ընտրուին՝ Ալեքսան Ալեքսանեան, Վարդան Վարդանեան եւ Կարո Պասմաճեան:

Նորընտիր վարչութիւնը նոր թափով կը լծուի աշխատանքի, մարզական եւ սկաուտական գործունէութեան կից կազմակերպելով հրապարակային հասութարեր ձեռնարկներ:

12 Դեկտեմբեր, 1925ի երեկոյեան մասնաճիւղը կը կազմակերպէ «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուայ տօնախմբութիւն, ուր խօսք կ'առնէ մասնաճիւղի ատենադպիր Միքայէլ Անտոնեան: Կը գործադրուի գեղարուեստական բաժին:

Կիրակի, 13 Դեկտեմբերին, Ստեփաննոս Արք. Յովակիմեան, յաւարտ Սբ. պատարագի, նահատակ մարզիկներու յիշատակին հոգեհանգստեան պաշտօնին կը նախագահէ:

29 Յունուար, 1926ին, յետ Բ. կարգի քննութիւններուն, մասնաճիւղի հետեւեալ սկաուտներն ու կայտերը առաջնորդի աստիճան կը ստանան. Զապէլ Խանճեան, Արաքսի Կարապետեան, Տիրան Փափագեան եւ Գէորգ Մինասեան: Մասնաճիւղը կը հաշուէ 25 օժանդակ անդամ, 87 սկաուտ եւ աթլեթիք խումբ մը: Ֆութպոլի խումբը վերակազմութեան մէջ է: 1926ին, սկաուտական խումբի խմբապետ կը նշանակուի Սարգիս Խորէնեանը: Յունիսին, 45 սկաուտներ եւ կայտեր զոյգ արշաւներ կը կազմակերպեն՝ թեքնիք ուսուցման եւ Բ. կարգի գիտելիքներու նիւթերով:

31 Դեկտեմբեր, 1927ին, մասնաճիւղը կը կատարէ «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուայ տօնա-

խմբութիւն: Զգալի է որ Հ.Մ.Ը.Մ.ը Ռուսչուքի հայ գաղութի ամենէն կենսունակ կազմակերպութիւնն է:

22 Յունուար, 1928ին, Մեսրոպեան Ազգային Վարժարանի սրահին մէջ մասնաճիւղը հանդիսութիւն մը կը կազմակերպէ, որուն ընթացքին խօսք կ'առնէ վարչութեան ատենադպիր Արտաշէս Պերպէրեան: Հրապարակային այս հանդիսութիւնը կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներու ծանօթացման հանգամանք: Յայտագրին մաս կը կազմէ գեղարուեստական բաժին, որմէ ետք տեղի կ'ունենայ խրախմբանք: Մասնաճիւղը կը պատրաստուի Յունիս ամսուայ ընթացքին տօնակատարելու Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տասնամեակը:

16 Փետրուար, 1930ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կը մշակէ գործունէութեան նոր ուղեգիծ եւ կ'ընտրէ նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով. Ս. Կարժարեան, Ս. Թաղէոսեան, Ն. Զաքըրեան, Ժիրայր Յովնանեան, Ս. Պօյաճեան, սկաուտ խմբապետ՝ Ն. Խրիստամեան, մարզական խմբապետ Կ. Թաղէոսեան: Հաշուեքննիչ յանձնախումբի անդամներ կ'ընտրուին՝ Պարթեւ Զաքրեան, Վաղարշ Ասատուրեան եւ Լեւոն Զրաքեան — [Ե. 118]:

Մասնաճիւղը իր գործունէութիւնը կը շարունակէ անխափան, սկաուտական եւ մարզական զոյգ ճիւղերով: Տնտեսական դժուարութիւններ երբեմն կը սանձեն հրապարակային յանդիսութիւններ: Ռուսչուք միշտ ներկայ է Շրջանային Վարչութեան կողմէ կազմակերպուած տարեկան մարզական հանդէսներուն եւ միջ-մասնաճիւղային սկաուտական բանակումներուն: Այսուհանդերձ անդամներու թիւը կը մնայ սահմանափակ. 1938ին, ան կը հաշուէ 80 անդամ: Սկաուտական շարժումը կը մնայ տիրապետող, խմբապետութեամբ՝ Վաղարշակ Ասատուրեանի:

Ռուսչուքի մասնաճիւղը, 1925-26 տարեշրջանին հրատարակած է «Հայ Սկաուտ» անունով ներքին թերթ մը, մասնաճիւղի գործունէութեան շուրջ նիւթերով:

ՎԱՌՆԱ

Հ.Մ.Ը.Մ.ի Վառնայի մասնաճիւղը Պուլկարիոյ Շրջանի ամենահին մասնաճիւղն է, հիմնուած՝ 1920ին սկիզբը եւ վաւերացուած՝ Պոլսոյ կեդրոնին կողմէ — [Գ.264]: Մասնաճիւղի սկաուտներու մարզիչը՝ Մ.Գ. Աստարճեան, 25 Փետրուար, 1920 թուականին կը գրէ.

«Ամէն միջոց կը գործադրենք մեր շարքերը պատանհներով խտացելու: Կ'աշխատինք անոնց բարոյական եւ ֆիզիքական զարգացման:

«Շքեղ երեկոյթ մը, սարքուած՝ Հայ Երիտասարդաց Ինքնազարգացման Միութեան կողմէ, Վառնայի սկաուտները առաջին անգամ ըլլալով այս երեկոյթին հրապարակ իջան՝ շուտական մարզանքներով եւ ջանքերով: Նորութիւն մըն էր Վառնայի հայութեան համար: Անդրանիկ քայլերնիս մեծ քաջալերանք գտաւ: Սկաուտներուն թիր այդ երեկոյթէն ետք բարձրացաւ» — [Խ.72]:

Վառնայի մասնաճիւղի գործունէութեան մասին, մինչեւ 1924 թուական, ստոյգ տեղեկութիւններ կը պակսին:

1924ին, Պուլկարիոյ Շրջանի կազմակերպութիւնէն ետք, Վառնայի մասնաճիւղի գործունէութիւնը յստակօրէն կ'աճի, յատկապէս աթլետիզմի բաժնին մէջ: 1925ին, մասնաճիւղը կը հաշուէր 25 աթլետ, 30 ֆուլպուլիստ, 61 սկաուտ՝ զանազան բաժանումներով եւ 17 օժանդակ անդամ:

1925ի Յունիսի 7ին, մասնաճիւղի անդամական ընդհ. ժողովը կ'ընտրէ նոր Վարչութիւն մը՝ բաղկացած հետեւեալներէն.

- Ատենապետ՝ Յ. Գոստիքեան
- Ատենադպիր՝ Ռուբէն Միհրանեան

Գանձապահ՝ Մկրտիչ Աստարճեան
Աթլետիք խմբապետ՝ Սարգիս Մկրտիչեան

Սկաուտ խմբապետ՝ Լեւոն Խազորթեան:

Վարչութիւնը գործի ձեռնարկելով կը յաջողցնէ ֆուլպուլի խումբի կազմութիւնը, կը կազմակերպէ հասութաբեր վիճակահանութիւն, եւ մասնաճիւղի գործունէութիւնը նոր թափ մը կը ստանայ:

Օգոստոս 28ին, կը կազմակերպուի մասնաճիւղի անդրանիկ ողիմպիական մրցումները՝ նախագահութեամբ Շրջ. Վարչութեան Ատենապետ՝ Տոքթ. Թոմաս Թոմասեանի: Օրուայ Թագուհին է Օր. Եսթեր Ամիրխանեանց: Տեղի կ'ունենան՝ 50մ., 100մ., 400մ. 800մ. 1500մ. վազքեր, գունտ նետել, բարձրութիւն, երկայնք եւ 3 քայլ ոստումներ, շուէտական մարզանքներ եւ խաղեր: Կը մասնակցին 24 մարզիկներ եւ սկաուտներու խումբը: Օրուայ ախոյեան կը հանդիսանայ Կ. Տէր Խաչերեան — [Ի/ 2. 18]:

Վառնայի մասնաճիւղէն՝ Յովսէփ Երեմեան, 1927էն սկսեալ, նկատառելի արդիւնքներ կ'արձանագրէ աթլետիզմի մէջ՝ տիրանալով Պուլկարահայ յաջորդող բոլոր մրցահանդէսներու օրուայ ախոյեանի տիտղոսին եւ բազմիցս բարելաւելով Հ.Մ.Ը.Մ.ի աթլետիզմի մրցանիշեր՝ 100մ. վազքի, երկայնք, բարձրութիւն եւ 3 քայլ ոստումներուն մէջ: Երեմեան տիրացած է նաեւ Վառնայի տեղական թենիսի ախոյեանութեան:

1934ին եւ 1936ին, Վառնայի մասնաճիւղի ֆուլպուլի խումբը Պուլկարիոյ Շրջանի ծրագրէ եւ ջրգ մրցահանդէսներուն կը խլէ օրուայ ախոյեանութիւնները, տիրանալով «ՄԵՄՆ ՏԻԳՐԱՆ» բաժակին:

Վառնայի մասնաճիւղի սկաուտական գործունէութիւնը կ'ընթանայ մարզականին առընթեր: 1925ի վերջաւորութեան, սկաուտ-

տական շարքերը կը հաշուեն 30 գայլիկ, 44 արի, 17 արենուչ աստիճանաւորական կարեւոր ցանցով մը՝ 2 խմբապետ, 2 փոխխմբապետ, 10 առաջնորդ, 8 փոխ առաջնորդ, 1 աքելլա, 1 փոխ-աքելլա — [ԻԸ/4.7]:

Գայլիկներու խումբը կը վարեն աքելլա՝ Օննիկ էնկիպարեան եւ փոխ-աքելլա՝ Մուշեղ Կուտսուզեան [Ի/5-6.7]:

1936էն սկսեալ, Վառնայի մասնաճիւղի կազմակերպչական գործունէութիւնը աւելի կը զօրանայ: Մասնաճիւղը կը ստանձնէ Պուլկարիոյ Շրջանի Զրդ Մրցահանդէսի կազմակերպութիւնը՝ 1936, Օգոստոս 28-30 եւ սկառտական Զրդ ընդհ. բանակումը՝ 1937, Օգոստոս 18-30:

1936ին, Պուլկարիոյ Շրջանային Վարչութեան նստավայրը կը փոխադրուի Վառնա:

1938ին, ընդհանուր սկառտապետի պաշտօնը կը վարէ Եղուարդ Համբիկեան, առաջնորդ՝ Վահրամ Ծերունեան: Սկառտական շարքերը կը հաշուեն 70 հոգի:

ՍԼԻՎԷՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Սլիվէնի մասնաճիւղը հիմնուած է 1923ին, նախկին «Արաքս» մարզական ակումբի անդամներու կողմէ, որոնք կու գային Պոլսոյ մօտակայ՝ Պուրսայէն, Պանտրմայէն եւ Ռոտոսթոյէն (Թեքիրտաղ):

Շուտով, մասնաճիւղի գործունէութիւնը կը տարածուի մարզական եւ սկառտական զոյգ ճիւղերուն վրայ, իր շուրջ հաւաքելով մօտ 85 անդամներ: 1924էն սկսեալ, ան անդամ է պուլկարական մարզական դաշնակցութեան:

Մարզական գործունէութեան համար, 1925էն սկսեալ, մասնաճիւղը կ'օգտագործէ Թաղական Խորհուրդի տրամադրած՝ եկեղեցւոյ շրջափակը: Նոյն տարին, շրջանային խմբապետ Հայկունի Քիրիշեանի

այցելութիւնը կը խթանէ եւ թեքնիքօրէն կը զարգացնէ մասնաճիւղի գործունէութիւնը: Ֆուլպոլի ճիւղը ունի երկու խումբ, որոնցմէ երկրորդը յաղթական ելոյթներ կ'ունենայ իր դասակարգի՝ Թրակիա եւ Սամսոն խումբերուն դէմ մրցելով:

1926ի Օգոստոս 28 եւ 29ին, ֆուլպոլի եւ աթլետիկ միջոցառումները կը մասնակցին Պուլկարահայ Ա. Տարեկան Մրցահանդէսին: Ֆուլպոլի խումբը իր մասնակցութիւնը կը բերէ միջ-մասնաճիւղային բոլոր մրցաշարքերուն:

1930ին, մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը կը հասնի 100ի: Ժամանակի ընթացքին աթլետիկ միջոցառումները կը տկարանայ եւ Բ. Աշխարհամարտի նախօրեակին ֆուլպոլը կը մնայ մարզական գլխաւոր ճիւղը:

Սկառտական բաժնին մէջ, 1925ին, սկառտական խումբի ընդհանուր թիւը կը հասնի 25 նորագիրներու, որոնց զգեստաւորման համար մասնաճիւղը ճիգ չի խնայեր: Սկառտական խումբը տարիներ շարունակ կը վարէ Լեւոն Զիլինկիրեան: 1927ի տկարացումէն ետք, 1929ին, սկառտական գործունէութիւնը կրկին թափ կը ստանայ: Սլիվէնի մասնաճիւղի սկառտական խումբը բացի 1935ի ընդհ. բանակումէն, իր մասնակցութիւնը բերած է Պուլկարիոյ միջ-մասնաճիւղային բոլոր բանակումներուն: 1932ին, Սլիվէնի մօտակայ շրջանին մէջ կազմակերպուած ընդհ. բանակումին, մասնաճիւղը կը բերէ իր լայն օժանդակութիւնը: Խումբը ներկայ կ'ըլլայ ազգային տօնակատարութիւններուն: Մասնաճիւղի երէցներու նախաձեռնութեամբ՝ լոյս կը տեսնէ «Հայ Արի» խմորատիպ երկշաբաթեթիւթը:

1938ին, մասնաճիւղի սկառտական գործունէութիւնը կը վարեն՝ Շրջանային խմբապետ Մարկոս Մարկոսեան եւ աւագ խմբապետուհի Վէրժին Փափազեան:

ՊՈՒՐԿԱԶ

Հ.Մ.Ը.Մ.ի Պուրկազի մասնաճիւղը հիմնուած է 1924ին, Պուլսոյ եւ շրջակայքի քաղաքներէն ներգաղթող երիտասարդներու մասնակցութեամբ:

Սկիզբը, ա՛ն կը կոչուէր «ՄԱՍԻՍ» Մարզական Միութիւն, կիրարկելով միայն ֆութպոլի ճիւղը: 1924ի Հոկտեմբեր 26ին, առաջին պատգամաւորականէն սկսեալ, ՄԱՍԻՍը կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ:

Այս փոքր գաղութի երիտասարդութիւնը շուտով կը բոլորուի մասնաճիւղին շուրջ, անդամներու թիւը 1929ին բարձրացնելով 120ի, եւ գործելով մարզական եւ

սկաուտական բաժիններով: Պուրկազի անգլիացի հիւպատոսը կը քաջալերէ մասնաճիւղի ճիգերը, ստանձնելով մարզական դաստիարակութեան բաժինը: Մարզական խմբապետ կը նշանակուի Միհրան Գալֆայեանը:

Սկաուտական բաժինը կը վարէ Պուլսոյ սկաուտ խմբապետներէն՝ Սիմոն Թերճանեանը, որուն առաջին գործը կ'ըլլայ աստիճանաւորական ցանց մը պատրաստել: Սկաուտական տիպար խումբի մը կազմութիւնը, շուրջ 70 հոգիներու մասնակցութեամբ, պատճառ կ'ըլլայ որ հարաւային Պուրկարիոյ սկաուտական ազգային խմբապետ Գնդապետ Տիմիթրիէֆ գայն որպէս օրինակելի ներկայացնէ տեղացի սկաուտական



Պուրկազի սկաուտներու դրօշակի օրհնութիւն՝ 1925-ին, ձեռամբ Ստեփանոս Արք. Յովակիմեանին Կեդրոնը՝ սկաուտ խմբապետ Սիմոն Թերճանեան



Պուրկազի մանաճիղի աթլետիզմի խումբը՝ 1925-ի Նոյեմբերի անդրանիկ մրցահանդեսին

խումբերուն — [ՀԴ]: Խումբը, 1925ի աշնան, կը կազմակերպէ նորընծաներու Երզման Արարողութիւն եւ Դրօշակի Օրհնութիւն՝ նախագահութեամբ Ստեփաննոս Արք. Յովակիմեանի: Այս առթիւ Տիկ. Վարդուհի Մ. Դանիէլեան 600 Լեւայի նուիրատուութեամբ կը քաջալերէ սկաուտական շարժումը, որ շուտով կ'ունենայ նաեւ իգական բաժին: 1928էն սկսեալ, սկաուտական խումբը կը վարէ Միհրան Գալֆայեան:

Սկաուտները յաճախ այցելութիւններ կուտան Սլիվէնի եւ Շումէնի մասնաճիւղերուն, իսկ 1929ի Օգոստոս 27-31ին, Ֆիլիպէի մասնաճիւղին՝ չորս օրուայ բանակումին ընթացքին — [Ե.38]:

Խումբը կը կազմակերպէ ձեռային աշխատանքներու ցուցահանդէսներ:

1926ի Պուլկարիոյ Շրջանային Առաջին

Մրցահանդէսին Պուրկազի աթլետները կը յաջողին տիրանալ յաղթանակի մետալներու. Գ. Թիւթիւնճեան՝ 200 մ. վազք, Ս. Գորիտեան՝ գունտ նետել, եւ Հ. Գալֆայեան՝ նիզակ արձակել: Պուլկարիոյ աթլետիք խմբապետ Հայկունի Քիրիշեանի այցը Պուրկազի մասնաճիւղին մեծապէս կը նպաստէ մարզիկներու թեքնիք յառաջդիմութեան: 1928ին, Պուրկազի մասնաճիւղը կ'ունենայ իր սեփական մարզադաշտը:

1929ի ամրան, Ֆուլթպուլի խումբը մաս կը կազմէ Պուլկարիոյ ֆետերասինոնին, եւ բարեկամական հանդիպումներ կը կազմակերպէ տեղացի խումբերուն դէմ: 1930էն սկսեալ, աթլետիք գործունէութիւնը եւս թափ կը ստանայ: Մասնաճիւղը Մարտ 23ին կը կազմակերպէ 3000 մեթր քրոս քաունթրիի մրցում մը:

1930ի ամառը բացառիկ յաջողութիւններու առիթ մը կ'ըլլայ: Յուլիս 11ին, սկաուտական խումբը բանակում մը կը կազմակերպէ Այթոս քաղաքին մէջ: Այս բանակումը առիթ մը կ'ըլլայ որ Այթոսի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը կորիզը կազմուի տեղւոյն վրայ: Յուլիս 27ին, Վարդավառի տօնին առթիւ, մասնաճիւղի սկաուտական կազմերը քաղաքին մէջ կը տողանցեն, քաղաքային նուագախումբի առաջնորդութեամբ: Ապա, Որսորդներու Պարտէզին մէջ տեղի կ'ունենայ դաշտահանդէս՝ մարզական եւ սկաուտական յայտագիրներով: Հանդիսութեան ներկայ կը գտնուի Ֆիլիպէի Մխիթարեան Վարժարանի տնօրէն Սահակ Վրդ. Կոզեան, որ ազգայնաշունչ ճառով մը վեր կ'առնէ Հ.Մ.Ը.Մ.ի դերին կարեւորութիւնը հայ իրականութեան մէջ: Կոզեան վարդապետ նոյն ձեւի ելոյթ մը կ'ունենայ նաեւ Յուլիս 28ին, Զկովորիստներու սրահին մէջ, ընտրեալ բազմութեան մը ներկայութեան — [Ե.171]:

Օգոստոս 17ին, Ֆուլթոնի խումբը կը մրցի Սլիվէնի մասնաճիւղի կազմին դէմ: Շրջանային Վարչութեան կողմէ կազմակերպուած մրցաշարքի ծիրին մէջ կատարուող այս մրցումը կը վերջանայ 1-1 հաւասար արդիւնքով — [Ե.201]: Մասնաճիւղի Ֆուլթոնի խումբը 1931-32 տարեշրջանին կը դառնայ միջ-մասնաճիւղային մրցաշարքի ախոյեան:

1934ին, մասնաճիւղի անդամներու թիւը կը բարձրանայ 140ի: Սկաուտական կազմը կը հաշուէ 33 գայլիկ, 19 սկաուտ, 10 երէց, 18 պարիկ եւ 16 արեւուշ: Մասնաճիւղը կը ստանձնէ միջ-մասնաճիւղային սկաուտական բանակումի կազմակերպութիւնը:

Նոյնպէս, 1934ին, մասնաճիւղի աթլետները կ'ունենան յաջող ելոյթներ, եւ կէտերու առաւելութեամբ կ'ապահովեն Պուր-

կազի նահանգային ախոյեանի տիտղոսը — [Զ.76]:

Ընթացիկ գործունէութեան առընթեր, Պուրկազի մասնաճիւղը կ'ունենայ նաեւ մշակութային գործունէութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի օրուայ կամ այլ առիթներով սարքելով հրապարակային հասութեաբեր ձեռնարկներ:

Մասնաճիւղի գործունէութիւնը նոյն ընթացքով կը շարունակուի մինչեւ Բ. Ընդհանուր Պատերազմի սկիզբը: Սկաուտական գործունէութիւնը կը շարունակէ վարել Շրջ. Նմբապետ Միհրան Գալֆայեան օժանդակութեամբ փոխ-խմբապետ Գրիգոր Խ. Զիլինկիրեանի եւ վարիչ առաջնորդ Գրիգոր Փոստաճեանի — [ՀԴ]:

Պուրկազի մասնաճիւղէն՝ Գրիգոր Զիլինկիրեան մնայուն թղթակցութիւն կը պահէ Փարիզի մէջ հրատարակուող «Հայ Սկաուտ» պաշտօնաթերթին հետ, Պուրկարիոյ մասնաճիւղերուն եւ յատկապէս Պուրկազի գործունէութեան մասին արձագանգելով անոր սիւնակներէն:

ԹԱԹԱՐ ՊԱԶԱՐՃԸՔ

Պուրկարիոյ՝ 1924ի շրջանային կազմակերպումի օրերու մասնաճիւղերէն է նաեւ Թաթար Պազարճըքի մասնաճիւղը, որպէս շրջանի 7րդ մասնաճիւղ:

Մասնաճիւղը, 15 ամսուայ լուռ գործունէութիւնէն ետք, իր առաջին ելոյթը կը կազմակերպէ 13 Դեկտեմբեր, 1925ին, Հ.Մ.Ը.Մ.ի Օրուայ տօնակատարութեամբ: Հանդէսը տեղի կ'ունենայ Ազգային Վարժարանի սրահին մէջ, աննախընթաց բազմութեան մը ներկայութեան: Մարզական եւ գեղարուեստական բաժիններու կարգին, օրուայ պատգամը կը փոխանցէ վարչութեան ատենադպիր Յարութիւն Ուրբաթեան, նիւթ՝ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակն ու ոգին — [Ի/8.27]:

1926ի Ապրիլ 4ին, Սբ. Զատիկուայ պատարագէն ետք, եկեղեցւոյ բակին մէջ տեղի կ'ունենայ 24 նորընծայ արիներու երգման արարողութիւնը, նախագահութեամբ Պսակ Քհնյ. Տօնիկեանի: Հանդիսութեան ներկայ կը գտնուին պուկար սկառտներ, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի սկառտներուն միանալով քաղաքի թաղերուն մէջ երգելով տողանցք մը կը կատարեն — [Ի/8.14]:

Մասնաճիւղի գործունէութեան գլխաւոր առանցքը կը մնայ սկառտիզմը: 1929ի վերջաւորութեան, անդամներու ընդհանուր թիւն է 40: Վարչութեան կողքին կը գործէ Սկառտական Խորհուրդը: Շարաթական հաւաքոյթները կը կատարուին կանոնաւորաբար: Ամառնային եղանակին, արշաւներէն եւ բանակումներէն ետք, տարեվերջի կաղանդի տօնակատարութիւնը փրօփականտի ելոյթ մը կը հանդիսանայ մասնաճիւղին համար: Տեղի կ'ունենան կենդանի պատկեր, զաւեչտ, երգեր ու պարեր, զինուորական նուագախումբի մասնակցութեամբ:

14 Յունուար, 1930ին, անդամական ընդհ. ժողովը կ'ընտրէ մասնաճիւղի նոր վարչական կազմ՝ բաղկացած հետեւեալներէն. Արտաշէս Փափագեան, Ազնիւ Ուզունեան, Օննիկ Միքայէլեան, Ստեփան Պօյաճեան եւ Մինաս Մինասեան: Նորընտիր վարչութիւնը կ'ունենայ յատուկ հաւաքատեղի՝ Ֆիլիպէի մասնաճիւղէն՝ Ներսէս Աստուածատուրեանի նուիրատուութեամբ — [Ե.81]:

Տարիներու ընթացքին սկառտական թեքնիք պատրաստութիւնը եւ կազմակերպութիւնը շարքերու խտացումով կը զօրանայ:

1934ին, Վարչութեան մաս կը կազմեն՝ Կարապետ Թագաւորեան, Մինաս Մինասեան, Օննիկ Միքայէլեան, Թագաւոր Թագաւորեան եւ Վարդան Գումրուեան:

Պուկարիոյ գաղութի համեմատաբար փոքր այս հաւաքականութեան մէջ, բնականաբար, մասնաճիւղի թուական պատկերն

ալ կը մնայ համեստ. 1938ին՝ 50 անդամ: Բայց Թաթար Պազարճըքի սկառտական կազմը կը մնայ կազմակերպուածութեան տիպար մը եւ հայապահպանումի ապաւէն մը — [Զ.75]:

ՍԹԱՐԱ ԶԱԿՈՐԱ

Պուկարիոյ մասնաճիւղերու հիմնադրութեան կարգով, այս չորրորդ մասնաճիւղի գործունէութեան մասին մանրամասնութիւններ, դժբախտաբար, կը պակսին, հակառակ այն իրողութեան որ շրջանային գործունէութեան ծիրին մէջ, Սթարա Զակորայի մասնաճիւղը միշտ ալ յիշատակութեան արժանացած է որպէս ներկայութիւն: Սակայն մասնաճիւղի գործընթացը եղած է պարբերական:

Սթարա Զակորան գործած է գլխաւորաբար սկառտական ճիւղով, յատկապէս՝ 1927էն սկսեալ աւելի մնայուն կերպով: 1930ին, մասնաճիւղը կը հաշուէր 25 գործօն եւ 10 օժանդակ անդամներ: Վարչական կազմին մասնակցած է Գրիգոր Փափագեան: Սկառտ խմբապետն է Կ.Ղ. Հաննէսեան, որուն ճիգերով մասնաճիւղը կ'ունենայ սկառտական եւ գեղարուեստական յայտագիրներով հրապարակային ելոյթներ — [Ե.127, Ե. 206]:

Մասնաճիւղի անդամներու յաճախակի տեղափոխութիւնները եւ մեկնումները պատճառ եղած են որ անոր գոյութիւնը տկարանայ, եւ 1938ի Քսանամեակի Յուշամատեանի տեղեկութեանց մէջ ան որպէս կազմալուծուած մասնաճիւղ կը ներկայանայ — [ԺԱ.194]:

ՇՈՒՄԷՆ

Պուկարիոյ Շումէն քաղաքի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը Շրջանի կազմութիւնէն ետք կազմուած մասնաճիւղ մըն է:

1925ի ամրան, մասնաճիւղը ունէր առժամեայ վարչութիւն մը, որ կը գործէր սկաուտական եւ մարզական ճիւղերով: Մասնաճիւղի գործունէութեան շուրջ կը բոլորուին ծնողներ եւ վարժարանի ուսուցիչներ, Սկաուտական կազմը կը բաղկանայ երկու խմբակներէ: Մարզական բաժնին կը մասնակցին 17 հոգի — [ԻԶ/2.6]:

Հոկտեմբերին տեղի կ'ունենայ մասնաճիւղի աստիճանաւորներու երդման արարողութիւն եւ դրօշակի օրհնութիւն: Եկեղեցւոյ մէջ խօսք կ'առնէ Տօքթ. Յովհաննէս Մանուկեան՝ բացատրելով Հ.Մ.Ը.Մ.ի եւ սկաուտիզմի նպատակները: Հաւաքոյթը կ'աւարտի սկաուտներու եւ հիւր խումբերու տողանցքով — [ԻԸ/5.17]:

Մասնաճիւղը կը նպաստէ ազգային նպատակներու արժեւորման, կը կազմակերպէ դաստիարակչական դասախօսութիւններ, 13 Փետրուար 1926ին, կը սարքէ հրապարակային հանդիսութիւն, խօսք կ'առնէ մասնաճիւղի վարչութեան ատենապետ՝ Պօղոս Եփրեմեան: Տեղի կ'ունենան երգեր, մարզանքներ եւ կենդանի պատկեր: Հանդիսութեան եկամուտը կը յատկացուի Ազգային Վարժարանի դպրոցական գոյքերու ֆոնտին:

25 Ապրիլ, 1926ին, յետ քննութեան տեղի կ'ունենայ 15 արիներու երդման արարողութիւնը: Խմբապետներու կողքին, քննիչ յանձնախումբին կը մասնակցին՝ Վահան Շամտաճեան, Պարոյր Ոսկերիչեան եւ Տօքթ. Յովհաննէս Մանուկեան: Մայիս 3ին, խումբը կը կատարէ 31 քմ. երկարութեամբ արշաւ մը շրջակայ գիւղերուն մէջ:

Շումէնի մասնաճիւղի գործունէութիւնը այնուհետեւ կը յառաջդիմէ մեծաքայլ, գլխաւորաբար սկաուտական ճիւղի զարգացումով:

1938ին, մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն էր 50:

ԽԱՍՔՈՎՈ

Պուլկարիոյ հարաւային շրջանի Խասքովոյի մասնաճիւղը հիմնուած է 1925ի սկիզբը, իր շուրջ հաւաքելով հայկական գաղութի մարզասէրներու կարեւոր թիւ մը: Մասնաճիւղի առաջին ելոյթը կ'ըլլայ Վարդանանցի Տօնին առթիւ սարքուած հանդիսութիւնը՝ ի նպաստ տեղւոյն վարժարանին: Մարզական ընթացիկ գործունէութեան կողքին, մասնաճիւղի վարչութիւնը շաբաթական դասախօսական շարքով կը նպաստէ անդամներու դաստիարակութեան:

1926ին, անդամներու ընդհանուր թիւն էր 33, որոնցմէ 11ը մաս կը կազմէին սկաուտական խումբին: Սահմանափակ կարելիութիւններ ունեցող այս մասնաճիւղի յաջողութիւններուն կը նպաստեն Պուլկարիոյ քոյր մասնաճիւղերու եւ ղեկավար անդամներու այցելութիւնները:

Մասնաճիւղը, իր կարգ մը նուիրեալ անդամներու ճիգերուն շնորհիւ, կը մնայ կանգուն եւ իր ուժերուն համեմատ կը մասնակցի Պուլկարիոյ Հ.Մ.Ը.Մ.ի շրջանային գործունէութեան: Մարզական գործունէութիւնը համեմատաբար կը գերազանցէ սկաուտականը:

Խասքովոյի մասնաճիւղի գործունէութիւնն ալ վերջ պիտի գտնէր Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմին պատճառով:

ԱՅԹՈՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Այթոսի մասնաճիւղի հիմնումը ուղղակի արդիւնքն է՝ Պուլկարի մասնաճիւղին կողմէ 12 Յուլիս, 1930ին, շրջանին մէջ կազմակերպուած բանակումին:

Արդարեւ, այդ բանակումի առթած խանդավառութիւնը խթան կը հանդիսանայ որ 25 անդամներ տեղւոյն վրայ հիմնեն Այթոսի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը: Շուտով

այս թիւը կը բարձրանայ 40ի: Այթոսը կ'ունենայ մարզական խումբ եւ սկաուտական շարժումին մասնակցող գայլիկներու խմբակ մը: Դժբախտաբար, կարող եւ մնայուն ուժեր, ինչպէս նաեւ նիւթական լայն միջոցներ կը պակսին, այս փոքրաթիւ գաղութի մասնաճիւղի գործունէութեան համար:

Մասնաճիւղի պարբերական գործունէութեան մասին տեղեկութիւններ կը պակսին: Յստակ է միայն, որ Այթոսի մասնաճիւղի գոյութիւնն ալ եղած է կարճատեւ: 1938ին կատարուած՝ Պուլկարիոյ Շրջանի ցանկագրութեան մէջ Այթոսի մասնաճիւղի անունը չի յիշուիր:

ՊՈՐԻՍՈՎԿՐԱՏ

Պորիսովկրատի մասնաճիւղին մասին յիշատակութիւններու հազիւ մի քանի անգամ կը հանդիպինք օրուայ մամուլին մէջ: Այս իրողութիւնը ցոյց կուտայ թէ մասնաճիւղի կազմութեան եւ յաջողութեան փորձը լրիւ չէ յաջողած: Հետեւաբար ստոյգ տեղեկութիւններ կարելի չէ արձանագրել Պուլկարիոյ շրջանի այս վերջին մասնաճիւղի մասին:

ՀՐԱՏԱՐԱԿՁԱԿԱՆ

Պուլկարիոյ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան այս գլուխը կը փակենք՝ հրատարակչական իրականացումներու արձանագրութեամբ:

Արտասահմանի մէջ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ Շրջանը, Ռումանիոյ հետ, առաջիններէն կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ական գրականութիւն մշակելու եւ պաշտօնաթերթ հրատարակելու տեսակէտէն: Այս իրականացման ոգին կը հանդիսանայ Բլովտիվի մասնաճիւղի անդամներէն եւ Պուլկարիոյ Շրջանային Վարչութեան երկարամեայ անդամ

եւ ատենապետ՝ Կարօ Ղազարոսեան (Կարօ Մեհեան):

1925ի Սեպտեմբերէն սկսեալ լոյս կը տեսնէ Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ ՄԱՐԶԻԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ, 20 էջերու ճոխ բովանդակութեամբ, ուր կը գտնենք Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը ջատագովող խմբագրական մը, մարզադաստիարակչական բաժին, տեղեկութիւններ՝ զանազան Շրջաններու Հ.Մ.Ը.Մ.ական գործունէութեան մասին, սկաուտական եւ մարզական թեքնիք ուսուցում եւ միջազգային մարզական լուրեր:

Պաշտօնաթերթի արտօնատէրն է Տօքթ. Թումաս Թումասեան, խմբագիր՝ Կարօ Ղազարոսեան, վարչական պատասխանատու՝ Թորգոմ Հեքիմեան: Թերթը կը տպուի Սոֆիայի ՀԱՅ ԳԻՐ տպարանին մէջ: Թերթին կ'աշխատակցին, Պուլկարիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու թղթակիցներուն կողքին՝ ղեկավար անդամներ, մարզանքի եւ սկաուտիզմի մասնագէտներ, բժիշկներ եւ դաստիարակներ: Թուենք անոնցմէ՝ Տօքթ. Թումաս Թումասեան՝ Պուլկարիոյ անդրանիկ Շրջանային Վարչութեան ատենապետ, սկաուտիզմի մասնագէտներ եւ խմբապետներ՝ Արտաշէս Սարգիսեան, Ն. Խանճեան, Մ.Գ. Աստարճեան, Լ. Գազանճեան: Մարզանքի մասնագէտներ եւ մարզիչներ՝ Հայկունի Քիրիշեան, ՀՈՔԷ, Լիպարիտ: Ընդհանուր յօդուածագիրներ՝ Թագուր Խ. Թագուրեան, Թ. Բժշկունի, Ս. Հինդլեան: Արտասահմանէն՝ Ֆրանսա՝ Գրիգոր Ճօլօլեան, Դիտող, Խ. Վարդանեան, Սուրիա՝ Սուրէն Բաբախեան, Ամերիկա՝ Համակիր, Ռումանիա՝ Յ. Ապագեան, Յունաստան՝ Պ. Գազագեան:

ՄԱՐԶԻԿի արագ տարածումը եւ ջերմ ընդունելութիւնը գրաւականներ են անոր յաջողութեան: Շուտով, գործիչներու ցանց մը կը կազմուի հրատարակութեան շուրջ, Պուլկարիոյ եւ արտասահմանի մէջ:

Հատավաճառի գինն է 5 Լեվա:

ՄԱՐՁԻԿը լոյս կը տեսնէ 4 թիւ, ապա՝ Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Շրջաններու խորհրդաժողովի որոշումով, 1 Յունուար 1926ի թիւ 5-6էն սկսեալ, կը շարունակուի «Հ.Մ.Ը.Մ.» անունով՝ պատասխանատուներու նոյն կազմի հսկողութեամբ:

«Հ.Մ.Ը.Մ.» պաշտօնաթերթի մասին կ'անդրադառնանք ներկայ հատորի՝ Ե. ՄԱՍի Երկրորդ Գլուխին տակ:

Պաշտօնաթերթի կողքին, Պուլկարիոյ Շրջանը ունեցած է խմորատիպ թերթ մը՝ ՊԱՀԱԿ, հրատարակութիւն Բլովտիվի մասնաճիւղի սկաուտական կազմին: 1927էն


սկսեալ այս խմորատիպը շարունակուած է մինչեւ 1936: Նոյնպէս, ՀԱՅ ՍԿԱՌԻՏ հրատարակուած 1925-26ին, Ռուսչուքի մասնաճիւղի կողմէ:

Բացի պարբերականներէ, Պուլկարիոյ Շրջանը 1931ին հրատարակած է նաեւ «Գայլիկին գիրքը» անունով՝ գայլիկութեան թեքնիք ուսուցման յատուկ գրքոյկ մը: Գրքոյկը Պուլկարիայէն դուրս՝ արտասահմանի մէջ եւս տարածուելով յաջող ընդունելութիւն կը գտնէ, ծառայելով բոլոր շրջաններու Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտիզմի յառաջացման:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՌՈՒՄԱՆԻԱ

- ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՊՈՒՔՐԷՇ
- ԳՈՆՍԹԱՆՅԱ
- ՍԻԼԻՍԹՐԷ
- ՊԱԶԱՐՃԸՔ
- ԿԱԼԱՑ
- ԿԵՌԼԱ
- ՍԹՐՈՒՆԿԱ
- ՔԻՇՆԵԻ
- ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



Ս Ե Ի
Ծ Ո Վ

ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Ռուսմանիոյ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ական գործունէութեան առաջին արձագանգը կու գայ 1922-ի Փետրուարէն սկսեալ՝ Պուքրէշի մասնաճիւղի հիմնադրութեան աքթով — [ԻԱ. 18]:

Հետեւաբար, Ռուսմանիոյ շրջանը Պուսէն դուրս՝ Նիւ-Եորքէն, Փարիզէն եւ Վառնայէն ետք չորրորդն է, որ Հ.Մ.Ը.Մ.ական շարժումը որդեգրած է: Պուքրէշի օրինակը վարակիչ կ'ըլլայ եւ 12 Յունիս, 1922ին, Պուքրէշի սկաուտական պատուիրակութեան մը նախաձեռնող այցելութեամբ՝ կը կազմուի նաեւ Սիլիսթրէի մասնաճիւղը: Պատուիրակութեան մաս կը կազմեն Յակոբ Թոքաթլեան, Յ. Պզտիկեան եւ Արսէն Սայեան: Յուլիսի 22-ին կը հիմնուի Գոնսթանցայի մասնաճիւղը: Նոյն ամսըան 26ին՝ Պազարճըքի մասնաճիւղը: 1923ի Մայիսին կը կազմուի Սթրուակայի հայ որբանոցի մասնաճիւղը: Այս ձեւով Ռուսմանիոյ մասնաճիւղերու թիւը կը բարձրանայ հինգի:

1923-ի Սեպտեմբեր 30-ին, Պուքրէշի մասնաճիւղի նախաձեռնութեամբ, կը գումարուի Ռուսմանիոյ Շրջանի անդրանիկ ներկայացուցչական ժողովը: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն՝ Յ.Ճ. Սիրունի (Յակոբ Ճօլօլեան) եւ Տօքթ. Սալբի, մղիչ ուժը կը հանդիսանան այս կազմակերպչական աշխատանքին:

Ժողովին կը մասնակցին Պուքրէշի, Սիլիսթրէի, Գոնսթանցայի եւ Պազարճըքի մասնաճիւղերու ներկայացուցիչները: Արտասահմանեան այս առաջին Շրջանային ներկայացուցչական ժողովով սկիզբը կը դրուի Եւրոպայի մէջ գործող՝ Ֆրանսայի, Պուլկարիոյ եւ Յունաստանի Շրջանային կառոյցներու շարքին:

ՇՐՋ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ռուսմանիոյ Շրջանային Առաջին Ներկայացուցչական ժողովէն կ'ընտրուի եօթը հոգիէ կազմուած Շրջանային Վարչութիւն մը: Անոնցմէ հետեւեալ հինգը միայն կը մնան գործի գլուխ, կազմելով իրենց դիւանը՝ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Տօքթ. Սալբի (Արամ Մ.Սահակեան)

Ատենադպիր՝ Շ. Կիւրճեան

Գանձապահ՝ Վահէ Տիրատուրեան

Հաշուապահ՝ Յ.Գ. Աթանասեան

Անդամ՝ Յ. Ճ. Սիրունի:

Վերոյիշեալ կազմի միամեայ գործունէութեան աւարտին, 1924ի Օգոստոս 15էն 18-ին, Գոնսթանցայի մէջ կը գումարուի Բ. ներկայացուցչական ժողովը, նախագահութեամբ Ճիվան Ալթունեանի եւ քարտուղարութեամբ Օննիկ Սեղբոսեանի: Ժողովի օրակարգերն են՝

— Ընթերցում եւ քննութիւն նախորդ տարեշրջանի գործունէութեան տեղեկագրին

— Սկաուտական Բ. Ընդհ. բանակում եւ Սկաուտական դաստիարակութիւն

— Մարզական՝ Ռուսմանահայ Բ. Ողիմպիական Խաղեր, աթլետիք դաստիարակութիւն, մարմնակրթանք վարժարաններէն ներս

— Դաստիարակչական՝ Հ.Մ.Ը.Մ.ական ոգի, կարգապահութիւն, Ռուսմանահայ Որբանոց, Հ.Մ.Ը.Մ. եւ օտար մարզիկներ

— Կազմակերպչական՝ Մասնաճիւղեր, Սկաուտական Շրջանային Յանձնախումբ, Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհ. Կեդրոն

— Հրատարակչական՝ Արի Տեղեկատու
— Հաշուական՝ Հաշուեքննիչ մնայուն յանձնախումբ, նախահաշիւ

— Շրջ. Վարչութեան ընտրութիւն եւ փակում:

Շրջանային Վարչութիւնը կ'ընտրուի
հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Յ.Ճ. Սիրունի

Ատենադպիր՝ Յակոբ Նշանեան

Գանձապահ՝ Վահէ Տիրատուրեան

Անդամներ՝ Տօքթ. Սալբի, Վահան Ալ-
թունեան, Օ. Մանիսալեան եւ Ղ. Ղա-
զարեան:

Վերջին երկուքը չեն մասնակցիր աշխա-
տանքներուն, իսկ Վահան Ալթունեան ժա-
մանակաշրջանի աւարտէն առաջ կը հրա-
ժարի: Շրջանային Վարչութիւնը իր կազմը
կ'ամբողջացնէ աշխատանքի հրաւիրելով
հետեւեալները. Մկրտիչ Մարտիկեան, Վահ-
րամ Միսաքեան, Արամ Յարութիւնեան,
Օննիկ Սինանեան եւ Պօղոս Տէրմէնճեան:
Իսկ հաշուապահութեան պատուակալ պաշ-
տօնը կը վարէ Ս. Խաչունի — [ԻԵ. /8.1]:

1925ի Յուլիսի 15էն 18ին, Պուքրէշի մէջ
կը կայանայ Շրջանային Գ. Ներկայացուց-
չական Ժողովը, որմէ կ'ընտրուի Գ. Շրջա-
նային Վարչութեան հետեւեալ կազմը.

Ատենապետ՝ Յ.Ճ. Սիրունի

Ատենադպիր՝ Շ. Կիւրճեան

Անդամներ՝ Պօղոս Տէյրմէնճեան, Գ.
Հաճի Արթինեան եւ Օննիկ Սինանեան:

1926 Սեպտ. 5էն 7-ին, Դ. Շրջանային
Ներկայացուցչական Ժողովէն կ'ընտրուի
նոր Շրջանային Վարչութիւն հետեւեալ
ձեւով.

Ատենապետ՝ Յ.Ճ. Սիրունի

Ատենադպիր՝ Համազասպ Փիրանեան

Գանձապահ՝ Արտ. Թ. Թովմասեան

Անդամներ՝ Գ. Քեստանեան, Օննիկ
Սինանեան, Գ. Հաճի Արթինեան եւ Յակոբ
Պատիկեան:

Շրջ. Վարչութիւնը, զգալով մարգա-
ղաշտերու կարեւորութիւնը, մասնաճիւ-
ղերու գործունէութեան յաջող ընթացքին
համար կը հաստատէ մարգաղաշտերու յա-
տուկ անձեռնմխելի ֆոնտ մը, որ տարիէ
տարի կ'աւելնայ:



Խմբանկար Ռումանիոյ

11-րդ Շրջանային Ժողովի պատգամատրուներու

Նոյն մտահոգութեամբ՝ մասնաճիւղե-
րուն ալ կը թելադրուի հաստատել մար-
գաղաշտի ֆոնտեր — [ԻԲ/7.8]:

2 Նոյ. 1930ին, Տրդ Շրջանային Պատ-
գամաւորական Ժողով — [Ե.204]:

26 եւ 27 Դեկտեմբեր, 1933ին, տեղի
կ'ունենայ Ռումանիոյ 11րդ Շրջանային
Ժողովը ներկայութեամբ Շրջանային Վար-
չութեան, Պուքրէշի, Պագարճըքի, Սիլիսթ-
րէի եւ Կալացի պատգամաւորներուն:

Ժողովին կը նախագահէին Տօքթ. Սալ-
բի եւ Հմ. Չարդարեան, ատենադպիրներ՝
Ա. Սայեան եւ Ն. Գազազեան:

Ժողովը, լսելէ ետք Շրջ. Վարչութեան
եւ մասնաճիւղերու գործունէութեանց տե-
ղեկագրերը, շրջանի ընդհանուր գործու-
նէութիւնը բանաձեւեց որպէս անբաւա-
րար՝ ծրագրելով յառաջիկայ տարեշրջանը
նկատել վերակազմութեան շրջան, հրահան-
գելով Շրջանային Վարչութեան եւ մասնա-
ճիւղերու վարչութեանց բացառիկ ճիգեր
թափել, Հ.Մ.Ը.Մ.ին վերադարձնելու հա-
մար իր նախկին կենսունակութիւնը —
[ԿԸ/1.11]:

Ժողովը բանաձեւեց նաեւ հետեւեալ
որոշումները.

1. Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ մըշ-
տարծարծ պահել հայ ոգին եւ հայ աւան-
դութիւնները

2. Յարգել տալ Հ.Մ.Ը.Մ.ի եւ կանոնադրով պարտադիր հռչակուած ազգային տօները

3. Նոր սերունդին բացատրել հայ ժողովուրդի մշակութային եւ ազատագրական ճիգերը զայն հաղորդ պահելու համար ազգային իտէալներուն

4. Զարկ տալ հայրենագիտութեան եւ տեղեակ պահել հայ ժողովուրդի ստեղծագործ ճիգերուն

5. Հետամուտ ըլլալ հայ լեզուի ուսուցման եւ հայ գրական դէմքերու ծանօթացման:

Շրջանային ժողովը վաւերացուց նաեւ Ռումանիոյ Շրջանի ներքին կանոնադրութիւնը եւ ծրագրեց գործունէութեան հետեւեալ նախագիծը.

— Մասնակցիլ յառաջիկայ տարուայ ուումանական ճէմպօրիին

— 1934ին կազմակերպել Շրջանային ողիմպիական խաղեր

— 12րդ Շրջանային ժողովը գումարել 1935ի Զատկին Պուքրէշի մէջ

— Զնջել Շրջանային գործունէութեան համար մասնաճիւղերու յետնեալ պարտքերը եւ զերծ պահել յառաջիկայի պարտաւորութիւններէ

— Շրջ. վարչութիւնը մէկ չորրորդ համեմատութեամբ պարտի մասնակցիլ յառաջիկայ միջ-մասնաճիւղային ֆուլթպուլի մրցաշարքի ծախսերուն

— Զարկ տալ մասնաճիւղերէ ներս շուէտական ռիթմիք մարզանքներու ընդհանրացման

— Պուքրէշի մասնաճիւղի սեփական շէնքի մը տիրացման մասնակից դարձնել Շրջանային վարչութիւնը նիւթական եւ բարոյական պարտաւորութիւններով:

Ռումանիոյ նորընտիր Շրջանային վարչութեան մաս կը կազմեն՝ Ատենապետ՝ Յ.Ճ. Սիրունի

Փոխ-Ատենապետ՝ Տօքթ. Սըմսարեան
Գանձապետ՝ Արտ. Թոմասեան
Ատենադպիր՝ Կարապետ Փոլատեան
Խորհրդականներ՝ Գ. Հաճի Արթինեան, Պերճ Կարապետեան եւ Յակոբ Պըզտիկեան:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ռումանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին Ողիմպիական մրցումները տեղի կ'ունենան երկու հանգրուանով. 20 Յուլիս 1924ին, Պուքրէշի մէջ եւ 17 Օգոստոսին, Գոնսթանցայի մէջ: Տեղի ունեցան լողի, աթլետիկայի եւ ֆուլթպուլի մրցումներ: Օրուան ախոյեան հանդիսացաւ Յարութիւն Ապագեան, իսկ ախոյեան մասնաճիւղը՝ Պուքրէշ, որ կը շահի ֆուլթպուլի մրցաշարքը: Դրօշարշաւի մրցումը կը շահի Գոնսթանցան, որ կը հանդիսանայ երկրորդ: Գ. դիրքը կը գրաւէ Սիլիստրէն, իսկ Դ. դիրքը կը գրաւէ Պազարճըքը — [ԻԵ/1.5]:

Ողիմպիական Բ. Խաղերը կը կայանան կրկին Պուքրէշի մէջ 19 Յուլիս, 1925ին: Յայտագրին մաս կը կազմեն աթլետիկայ եւ ֆուլթպուլ: Աթլետիկայի մրցումներու հաշտարար դատաւորն է Գրիգոր Յակոբեան, իսկ դաշտի վրայ Շրջանային վարչութեան ներկայացուցիչ՝ Յ.Ճ. Սիրունի: Ֆուլթպուլի մրցումին կը մասնակցին Պուքրէշ եւ Գոնսթանցա: Գոնսթանցան կը յայտարարուի յաղթական: Աթլետիք մրցումներուն դասաւորումն է Պուքրէշ՝ 43 կէտ, Կալաց 20 կէտ, Գոնսթանցա՝ 15 կէտ: Օրուան ախոյեան կը հանդիսանայ Կալացի մասնաճիւղէն՝ Վահրամ Մերճանեան: Խաղերուն առընթեր, տեղի կ'ունենան մասնաճիւղերու անդամներուն ծանօթացման հաւաքոյթներ եւ խրախմանքներ — [ԻԶ/1.2]: 1924-25 տարեշրջանի ֆուլթպուլի ախոյեանութեան մրցաշարքի եզրափակիչ մրցումը տեղի

կ'ունենայ 30 Օգոստոս, 1925-ին: Գոնըսթանցան՝ 3-0 յաղթելով Պազարճըքին, կը դառնայ Ռումանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի անոյեան:

4 Սեպտ., 1926-ին, կը կայանան Գ. Ողիմպիական խաղերը (Պուլքրէշ): Հանդիսութեանց օրուան թագուհին է Տիկ. Ա. Մանիսալեան, պատուոյ օրդ.՝ Թիմուրեան: Մրցումներու օրուան անոյեան՝ Մովսէս Շլուկեան (Պուլքրէշ): Անոյեան մասնաճիւղ՝ Պուլքրէշ, 60 կէտ: Այս երրորդ Ողիմպիական խաղերը արդէն ցոյց կու տան Ռումանիոյ մասնաճիւղերու մարզիկներուն թեքնիք յառաջդիմութիւնները: Հոս է որ նախկին տարիներուն արձանագրուած անթիւթիք 10 մրցանիշեր կը բարելաւուին: Տեղի կ'ունենայ ընդհանուր տողանցք:

Ռումանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային մրցումներու այս շարքը կը շարունակուի ամէն տարի, նոր թափով եւ նոր յառաջդիմութիւններով:

Ե. Ողիմպիական խաղերը տեղի կ'ունենան Սեպտ. 1928-ին, Պուլքրէշ, իսկ ծովային մրցումները՝ ամրան, Գոնսթանցայի մէջ — [ԻԳ.72]:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ռումանիոյ Շրջանի Միջ-մասնաճիւղային Ընդհ. Բանակումներու շարքը կը սկսի 10 Օգոստոս, 1923-ին, կազմակերպական Ա. Ընդհ. Բանակումով եւ մասնակցութեամբ՝ Պուլքրէշի, Սիլիսթրէի, Գոնսթանցայի եւ Պազարճըքի մասնաճիւղերու սկաուտներուն:

Յաջորդական ընդհանուր բանակումները տեղի կ'ունենան հետեւեալ շարքով. Բ. Ընդհ. Բանակում Գոնսթանցայի մէջ 4-18 Օգոստոս, 1924: Կը մասնակցին Պուլքրէշի, Սիլիսթրէի եւ Գոնսթանցայի խումբերը:

Գ. Ընդհ. Բանակում՝ 10-25 Օգոստոս, 1925, Պուլքրէշի մէջ: Կը մասնակցին Պուլքրէշ եւ Պազարճըք:

ՊՈՒՔՐԷՇ

1920ի սկիզբը, Պուլքրէշի Ազգ. վարժարանի մարզանքի ուսուցիչ՝ Երուանդ Սմարեանի հիմնած աշակերտներու սկաուտական խումբին վրայ հիմնուելով, 1921-էն սկսեալ, Պուլքրէշի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութիւնը ընթացքի մէջ է: Արդարեւ, գաղութի հայ մարզական սաղմային շարժումը իբր հիմ ծառայեցնելով, 1922-էն սկսեալ, Պոլսոյ կեդրոնէն այցելու կամ մնայուն կերպով հաստատուած Հ.Մ.Ը.Մ.ականներ կը քաջալերեն մարզական եւ սկաուտական գործունէութիւնը: 1922ի Փետրուար 22ին, նախաձեռնութեամբ Գ. Քեստանեանի, Արսէն Սայեանի, Յակոբ Պատիկեանի եւ Կ. Փոլատեանի, տեղի կ'ունենայ մասնաճիւղի պաշտօնական հիմնադրութիւնը:

Նոյն շրջանին, Պոլսոյ կեդրոնը կը վաւերացնէ Պուլքրէշի 34րդ մասնաճիւղի կազմութիւնը: Մայիսի 21-ին, հրապարակային հանդիսութեան մը ընթացքին տեղի կ'ունենայ մասնաճիւղի նորընծայ սկաուտներու քննութիւնը, պաշտօնական անձնաւորութիւններու ներկայութեան — [Դ.327]: Այդ թուականէն սկսեալ սկաուտական գործունէութիւնը կը զարգանայ անխափան եւ օրինաւոր կանոնաւորութեամբ: 14 Սեպտեմբեր, 1924ին, տեղի կ'ունենայ նորընծաներու այլ խումբի մը քննութիւնները: 1924ին, կը կազմուի գայլիկներու վոհմակը, որուն առաջին աքելլան կ'ըլլայ Յ. Միրիճանեանը: Մինչեւ 1925-ի սկիզբը խումբը կը վարէ Յ. Պատիկեան որմէ ետք պաշտօնը կը փոխանցուի Գ. Նազաչեանին: Ձեռային աշխատանքներու ցուցադրութիւնը մեծ խանդավառութիւն կը ստեղծէ մասնաճիւղի

սկառուտական գործունեությունների շուրջ՝ դառնալով տարեկան աւանդական ձեռնարկ եւ նիւթական եկամուտի աղբիւր:

1926ին, գայլիկներու եւ սկառուտներու կողքին կը կազմուի նաեւ երէցներու խումբը եւ աղջիկ սկառուտներու «Ձիւնածաղիկ» խմբակը: 12 Յունիս, 1927ին, տեղի կ'ունենայ Բ. կարգի 15 սկառուտներու քննութիւնը — [ԻԲ/11.12.6]:

1927ի ամրան եղանակը կ'արձանագրէ սկառուտական բեղուն գործունեությունները՝ 10 արշաւներով եւ ազգային, եկեղեցական ու պետական պաշտօնական ելույթներու մասնակցութեամբ: Սկառուտական շարքերը տակաւ կը խտանան: Կայտերու խումբի խնամքը կը հոգայ, կայտերու յատուկ յանձնարարութեամբ: Երէց սկառուտներու խնամքը կը վարէ Յովսէփ Ապագեան — [ԻԳ.41]: 1928ի սկիզբէն սկսեալ, բաժնի խմբապետութիւնը կը վստահուի Մովսէս Շլուկեանին:

Մասնաճիւղի կազմակերպչական աշխատանքները, իրենց կարգին, կը զարգանան կանոնադրային կանոնաւորութեամբ: Տարեկան անդամական ընդհանուր ժողովները կը քննեն աւարտող շրջանի գործունեությունները եւ կ'ընտրեն նոր վարչութիւն: 1925ի Օգոստոս 2ի անդամական ընդհ. ժողովը՝ 70 անդամներու ներկայութեան կը կատարէ նոր վարչութեան ընտրութիւն, որու կազմին մէջ կ'ընտրեն սկառուտ եւ մարզիկ մէկական ներկայացուցիչներ: Կազմը կը բաղկանայ հետեւեալներէն.

- Ատենապետ՝ Աթանասեան
- Ատենադպիր՝ Գ. Իսպիրեան
- Գանձապահ՝ Կ. Ասլանեան, Գ. Քեստանեան
- Մարզական պատասխանատու՝ Զ. Սարունի

Սկառուտ Պետ՝ Մովսէս Շլուկեան, Յ. Պատիկեան եւ Օ. Փիրումեան:

Այս կազմը իր շրջանը չաւարտած կը հրաժարի եւ 25 Հոկտ. 1925ի անդամական

ընդհ. ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն: Վարչութիւնը կը կատարէ աշխատանքներու բաժանումը՝ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Գ. Քեստանեան
- Ատենադպիր՝ Յ. Փիրանեան
- Գանձապահ՝ Հ. Պարտիզպանեան
- Մարզական պատասխանատու՝ Յ. Ապագեան
- Սկառուտական պատասխանատու՝ Մ. Շլուկեան
- Գոյքերու պատասխանատու՝ Օ. Գէորգեան

Անդամ՝ Յ. Պատիկեան:

Այս կազմին խորհրդակցական ձայնով կը մասնակցին Ս. Խաչունի եւ Լ. Յակոբեան: Նորակազմ վարչութիւնը տենդագին կը լծուի աշխատանքի եւ իր ընթացիկ գործունեությունների կողքին, 1925ի Դեկտ. 7ին, կը կատարէ մասնաճիւղի սեփական աւուրման բացման հանդիսությունը: Կատու խմբակի առաջնորդ՝ Կարապետ Լեւոն Պալլճեան (հետագային՝ Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց) այս առթիւ կը վարձատրուի ինքնահոս գրիչով մը, առ ի գնահատանք իր խմբակի տիպար գործունեությունների:

19 Սեպտեմբեր, 1926ին, Մասնաճիւղի Անդամական Ընդհ. ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն, որու անդամներէն երկուքի հրաժարականով կազմը կ'ամբողջացուի եւ կը ներկայանայ հետեւեալ ձեւով.

- Յ. Նշանեան, Յ. Նալպանտեան, Յ. Փիրանեան, Լ. Յակոբեան, Հ. Ունճեան, Ս. Սանոսեան եւ Յ. Պատիկեան, մնայուն հաշուեքննիչներ՝ Զ. Սարունի եւ Յ. Ապագեան: 1926ին, մասնաճիւղի մարզական գործունեությունների վրայ կ'աւելցուի հեծելանիւի ճիւղը:

1927ի Հոկտեմբերին, հին աւուրման փակումով, վարչութիւնը թաղականութեան կիսաշէն մէկ սենեակը իր հաշույն ամբողջացնելով, 11 Դեկտեմբերին, տեղի կ'ունեն

նայ նոր ակումբի բացման հանդիսութիւն եւ Հ.Մ.Ը.Մ.ի Օրուան տօնակատարութիւն, նախագահութեամբ Գ. Ղազարեանի: Առաւօտեան, եկեղեցական արարողութեան եւ հոգեհանգստեան կը նախագահէ Յուսիկ Նպիսկոպոս, եկեղեցական հանդիսութեան խօսք կ'առնեն՝ Գ. Քեստանեան, Յ.Ճ. Սիրունի, Հայր Մ. Պոտուրեան եւ Պրն. Արտաշէս Թոմասեան: Կէսօրէ ետք կը կազմակերպուի մասնաճիւղի անդամներու եւ համակիրներու յատուկ մտերմիկ թէյ-յասեղան — [ԻԳ.104, ԻԳ. 111]: Խօսք կ'առնէ նաեւ մասնաճիւղի պատուոյ նախագահ, հայազգի նախկին նախարար՝ Գրիգոր Թրանքու Նաչ: Նոր ակումբին մէջ Վարչութիւնը կը կազմակերպէ սկաուտական եւ մարզական նիւթերու շուրջ դասասուսական շարքեր, երեք ամսուան վրայ երկարող ծրագրով, Կիրակի եւ Հինգշաբթի երեկոնները:

Մասնաճիւղի երէց սկաուտներու փառանգը կը սկսի հրատարակել խմորատիպ ամսաթերթ մը՝ «Պետը»: Իսկ սկաուտները՝ այլ թերթ մը «Սլաք» անունով:

Մասնաճիւղը, աւանդական ձեւով, ամէն տարուան Նոյեմբեր ամսուան ընթացքին կը տօնէ «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ը հրապարակային պաշտօնական հանդիսութեամբ: Պուրէշի մասնաճիւղը որպէս Ռուսմանիոյ անդրանիկ մասնաճիւղ, իր գործունէութեան առաջին օրերուն, եւ իր լիազօր ներկայացուցիչներու միջոցաւ, կը նպաստէ Գոնսթանցայի, Սիլիսթրէի, Պազարճըքի եւ Սթրուսկայի մասնաճիւղերու հիմնադրութեան:

Մասնաճիւղը միշտ ներկայ եղած է Շրջանի սկաուտական ընդհանուր բանակումներուն եւ կարեւոր դերը բերած Շրջանային Պատգամաւորական Ժողովներուն: Մարզական բաժնի մէջ եւս Ռուսմանիոյ մէջ միջ-մասնաճիւղային Ողիմպիական հանդիսութիւններուն իր մասնակցութիւնը ե-

ղած է մնայուն: Մասնաճիւղի անդամներէն նշանաւոր մարզիկներ եղած են՝ Յ. Ապագեան, Մովսէս Շլուկեան եւ ուրիշներ:

Պուրէշի մասնաճիւղի գործունէութիւնը կը շարունակուի նոյն թափով՝ մինչեւ 1939ի Համաշխարհային Բ. Պատերազմ, որմէ ետք գաղութի կառոյցին հետ նաեւ մասնաճիւղի տկարացումով գործունէութիւնը կը դադրի:

ԳՈՆՍԹԱՆՑԱ

Հ.Մ.Ը.Մ.ի Գոնսթանցայի մասնաճիւղը հիմնուած է 22 Յուլիս, 1922ին, Պուրէշի մասնաճիւղէն Հ.Մ.Ը.Մ.ականներու օժանդակութեամբ եւ Գոնսթանցայի մէջ գործող Արծիւ մարզական ակումբի Ֆուլպոլի խումբերու միացումով: Շուտով, մասնաճիւղի գործունէութիւնը կեդրոնական տեղ կը գրաւէ քաղաքի ազգային կեանքէն ներս եւ 1924ի Ապրիլ 14-ին, մասնաճիւղին կը միանայ նաեւ Բագրատ մարզական միութիւնը:

1924ի աշնան, մասնաճիւղի Անդամական Ընդհ. Ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն՝ բաղկացած հետեւեալներէն.

Ատենապետ՝ Ա. Շարաֆեան

Ատենադպիր եւ գոյքապահ՝ Սարգիս Սեղբոսեան

Գանձապահ՝ Հրանդ Տէր Օհանեան

Անդամներ՝ Պօղոս Տէյիրմէնճեան, Տըրդատ Թէրգեան, Կարպիս Կարապետեան եւ Վազգէն Մարտիրոսեան:

Վարչութեան կողքին կը կազմուի նաեւ ակումբի յանձնախումբ՝ անդամակցութեամբ Օննիկ Սեղբոսեանի, Վազգէն Մարտիրոսեանի, Կարպիս Կարապետեանի եւ Ասլանի: Սկաուտական խումբը կը վարէ խմբապետ Վազգէն Մարտիրոսեան:

Սկիզբի ֆուլպոլի եւ ակումբի ճիւղերուն վրայ շուտով կու գայ աւելնալ նաեւ

լողորդութեան ճիւղը, օգտուելով քաղաքի ծովեզերեայ ըլլալու հանգամանքէն:

Մասնաճիւղը յաճախակիօրէն միջ-մասնաճիւղային խաղերու ախոյեանութիւններուն կը տիրանայ:

1925ին, մասնաճիւղը պաշտօնապէս մաս կը կազմէ ռումանական մարզական ֆետերասիոնին:

Մասնաճիւղի գործունէութիւնը, ըլլալով հանդերձ թուականօրէն համեստ, միշտ ալ յուսատու է եղած եւ յարատեւօրէն շարունակած է իր առաքելութիւնը՝ մինչեւ Բ. Աշխարհամարտի սկիզբը:

Սկստուական գործունէութիւն

Գոնսթանցայի մասնաճիւղի սկստական գործունէութիւնը կը սկսի մասնաճիւղի կազմութեան հետ, ու կը շարունակուի հետզհետէ տարածուելով եւ սկստական շարքերուն մէջ ներառելով «Հայկազեան» վարժարանի երկսեռ աշակերտութիւնը:

26 Փետրուար, 1925ին, Վարդանանց Տօնին առթիւ տեղի ունեցող սկստական երդման արարողութիւնը կը ստանայ բացառիկ հանդիսաւորութիւն, նախագահութեամբ՝ Հայաստանի Հանրապետութեան նախկին պատուակալ հիւպատոս՝ Ժ. Ալթունեանի, որ նաեւ մասնաճիւղի պատուակալ նախագահն էր: 36 երկսեռ նորընծաներ այդ առթիւ կու տան իրենց սկստական երդումը:

1929ի վերջաւորութեան սկստական կազմը կը բաղկանայ 6 գայլիկներէ եւ 24 սկստներէ: Շրջանը կը տառապի մասնագէտ խմբապետի պակասէն:

Գոնսթանցայի աշխարհագրական դիրքը եւ բնութեան պայմանները ձեռնտու կ'ըլլան, որպէսզի Շրջանային բանակումներն ու մարզախաղերը մասնաճիւղի շրջանին մէջ կայանան: Հոս է որ կը կայանան Ռու-

մանիոյ Շրջանային Ա. եւ Բ. ընդհ. բանակումները:

ՍԻԼԻՍԹՐԷ

Սիլիսթրէի մասնաճիւղը հիմնուած է Կիրակի, 18 Յունիս, 1922-ին: Այս հիմնադրութեան նախաձեռնողը եղած է Պուքրէշի մասնաճիւղը: Պուքրէշի վարչութիւնը սկստական յատուկ առաքելութիւն մը ուղարկած է Սիլիսթրէ՝ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնելու ծրագրով: Առաքելութեան մաս կազմած են Յակոբ Թօգաթըլեան, Յակոբ Պատիկեան եւ Արսէն Սայեան: Առաքելութիւնը յաջողած է տեղւոյն Հայ Ընթերցասիրաց Միութեան գործակցութեամբ գումարել մասնաճիւղի հիմնադիր ժողովը, որուն հրաւիրած են նաեւ Սիլիսթրէի հայ երիտասարդութիւնը: Ծանօթանալէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն, ներկաները տեղւոյն վրայ ընտրած են առժամեայ վարչութիւն մը եւ արձանագրած 30 սկստական թեկնածուներ:

Վարչութեան առաջին տարուայ գործունէութիւնը կը հանդիպի շատ մը խոչընդոտներու, սակայն աշխատանքը չի դադարիր: Վարչութեան ատենապետ Ս. Փափագեան «համեստ բայց արդիւնաւոր աշխատանք» մը կատարած ըլլալու բաւարարութեամբ կը ներկայացնէ իր հրաժարականը: 2 Օգոստոս, 1923-ին, Անդամական Ընդհանուր Ժողովը կ'ընտրէ նոր Վարչութիւն՝ բաղկացած հետեւեալներէն.

Թ. Պետրոսեան, Ս. Սարգիսեան, Ծերոն Պազալեան, Տ. Պապիկեան, Օ. Յակոբեան, Կ. Զոլաքեան եւ Վ. Կէմիճեան:

Այս վարչութեան գործունէութիւնը կ'ըլլայ աւելի արդիւնաւոր սկստական եւ մարզական զոյգ ճիւղերու զարգացումով: 1925ին Սիլիսթրէի մասնաճիւղն ալ մաս կը կազմէ Ռումանիոյ մարզական ֆետերասիոնին:

Սկառուական գործունեություն

Միլիտարի մասնաճիւղի սկառուական խումբը, 10 Օգոստոս, 1923ին, կը մասնակցի Ռուսմանիոյ Շրջանի Ա. Ընդհ. բանակումին, Գոնսթանցայի մէջ: 1924-ի Բ. Ընդհանուր բանակումին եւս մասնաճիւղի խումբը իր մասնակցութիւնը կը բերէ, բայց աւելի կազմակերպուած ձեւով: Այնուհետեւ մասնաճիւղի սկառուական գործունէութիւնը կը շարունակուի անխափան:

ՊԱԶԱՐՉԸՔ (չչփոթել Պուկարիոյ Թաթար-Պազարճըք մասնաճիւղին հետ)

Պազարճըքի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութեան նախաձեռնած է Ռուսմանիոյ շրջանի երիցագոյն մասնաճիւղի՝ Պուքրէշի վարչութիւնը: 26 Յուլիս, 1922ին, յատուկ առաքելութիւն մը ուղարկուած է Պազարճըք՝ տեղւոյն մէջ գործող Փայլակ մարզական միութեան հետ համախորհուրդ կազմելու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ: Առաքելութիւնը պսակուած է յաջողութեամբ:

Պազարճըքի մասնաճիւղի գործունէութիւնը կը սկսի սկառուական եւ մարզական գոյգ ճիւղերու կիրարկումով:

Հիմնադրութիւնէն տարի մը չանցած, սկառուական շարժումը կ'ունենայ զգալի յառաջդիմութիւն, եւ խումբը 10 Օգոստոս, 1923ին, իր մասնակցութիւնը կը բերէ Ռուսմանիոյ շրջանի Առաջին Ընդհ. Բանակումին: Այնուհետեւ, առանց ընդհատումի, Պազարճըքի մասնաճիւղը մասնակցած է շրջանային բոլոր ընդհանուր բանակումներուն:

1924ի Ապրիլ 14-ին, մասնաճիւղի Փայլակ ֆութպոլի խումբը կը տիրանայ Ռուսմանիոյ Բ. դասակարգի ախոյեանութեան:

1925ի Յուլիսին, Պազարճըքն ալ միւս մասնաճիւղերու շարքին կ'անդամակցի Ռուսմանիոյ մարզական ֆետերասիոնին: Ֆութպոլը մասնաճիւղի մարզական գոր-

ծունէութեան գլխաւոր առանցքը կը կազմէ: Ա. խումբը միջ-մասնաճիւղային մրցահանդէսներու կողքին կը մասնակցի նաեւ տեղւոյն մէջ կազմակերպուած բաժակի մրցաշարքերուն, գրաւելով պատուաւոր դիրքեր:

1924-25 տարեշրջանի Վարչութիւնը կ'ընտրուի 31 Օգոստոս, 1924ին, հետեւեալ կազմով. ատենապետ՝ Ե. Սրապիոնեան, ատենադպիր՝ Կ. Նուրիճանեան, գանձապահ՝ Հ. Աղամեան, գանձիչ՝ Օ. Պողոսեան, սկառուական պատասխանատու՝ Խ. Քերփիչեան եւ փոխ-անդամ՝ Կ. Դաւիթեան:

ԿԱԼԱՅ

Ռուսմանիոյ Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, 2 Մարտ, 1925ին, տեղի կ'ունենայ Կալացի մասնաճիւղի հիմնադրութիւնը: Հաւաքոյթին ներկայ կը գտնուի Շրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչ՝ Տօքթ. Սալբի:

Մասնաճիւղը անմիջապէս կը լծուի աշխատանքի եւ իր մասնակցութիւնը կը բերէ Յուլիս 19ի Ռուսմանահայ Բ. Ողիմպիականին: Մասնաճիւղի անդամներէն Վահրամ Մերճանեան կը յաջողի այս խաղերուն օրուան ախոյեանութիւնը ապահովել, աթլետիք խաղերուն մէջ 2 ոսկի եւ 1 արծաթ մետալներ ապահովելով: Այս յաջողութիւնը իր բարերար արդիւնքը կ'ունենայ մասնաճիւղի ընդհանուր յառաջդիմութեան վրայ:

Կալացի մասնաճիւղը, Ռուսմանիոյ այլ մասնաճիւղերու կարգին, 1925ի Յուլիսին կը դառնայ Ռուսմանիոյ մարզական ֆետերասիոնի անդամ:

Նոյն տարուան Հոկտեմբերի 4ին, Կալացի մասնաճիւղը կը կազմակերպէ իր ներքին աթլետիք խաղերու ախոյեանութիւնը: Ասիկա Ռուսմանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան շարքին նախընթաց մը կը կազմէ:

Օրուան ախոյեան կը հանդիսանայ Յարութիւն Պետոյեան՝ հինգ առաջնութիւնով: 1926ի ամրան, նոյն ախոյեանութիւնները կը կրկնուին, բարելաւելով մասնաճիւղի աթլեթներու թեքնիք արդիւնքները:

13 Յունիս, 1926ին, աթլեթները կը մասնակցին Կալացի մէջ տեղի ունեցող աթլեթիզմի միջազգային մրցահանդէսին, ձեռք բերելով շատ պատուարեր արդիւնքներ:

Ոսկի մետալի կ'արժանանան Մ. Մըկըրեան (գունտ նետել) եւ Յ. Պետոյեան (ձողով բարձր ցատկել), իսկ արծաթ մետալի կ'արժանան Վ. Արզոյեան (ձող) եւ Ս. Ուաշխաչեան (բարձրութիւն ցատկել):

Այնուհետեւ, Կալացի մասնաճիւղի աթլեթները միշտ մասնակցած են Ռուսմանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային խաղերուն, ապահովելով լաւագոյն արդիւնքներ եւ հաստատելով նոր մրցանիշեր:

ՍԹՐՈՒՆԿԱ

1923-ի Մայիսէն սկսեալ, Սթրուսկայի որբանոցին մէջ կը սկսի գործել Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կորիզ մը, մարզանքի ուսուցիչ Յ. Թօգաթլեանի ջանքերով:

Հ.Մ.Ը.Մ.ի Ռուսմանիոյ Շրջ. Ժողովի թելադրութեամբ, 1924ի ամառուան եղանանէն սկսեալ Շրջանային Վարչութիւնը կը նախաձեռնէ Սթրուսկայի մասնաճիւղի պաշտօնական կազմութեան: Այս կազմութեան ենթահողը պիտի ըլլար միայն տեղւոյն ազգային որբանոցի աշակերտութիւնը: Այս պաշտօնը կը վստահուի որբանոցի ուսուցիչներէն՝ Նշան Մականեանին:

Ամբողջ տարի մը գործելէ ետք, 1925ի Սբ. Զատիկուան օրերը առիթ եղան Սթրուսկայի մասնաճիւղի պաշտօնական բացումին:

Այս բացման հանդիսութեանց ներկայ եղան Ռուսմանիոյ Շրջանային Վարչութեան ատենադպիր Յակոբ Նշանեան եւ սկաու-

տական կեդրոնական յանձնախումբի անդամ Յ. Պզտիկեան, ինչպէս նաեւ Պուքրէշի մասնաճիւղէն 15 հոգինոց սկաուտական խումբ մը: Պուքրէշէն ժամանող առաքելութիւնը խանդավառութեամբ ընդունուեցաւ Սթրուսկայի որբանոցի աշակերտութեան կողմէ: Նոյն օրը տեղի ունեցաւ դասախօսութիւն, նիւթ՝ սկաուտական երդման կարեւորութիւնը, դասախօս՝ Տնօրէն Պրն. Սրենց: Գիշերը տեղի ունեցաւ յատուկ խրատներ: Երկուշաբթի առաւօտ տեղի ունեցաւ մասնաճիւղի բացման պաշտօնական հանդիսութիւնը, նախագահութեամբ որբանոցի տնօրէնին եւ ներկայութեամբ ուսմէն լրագրողներու: Պաշտօնական խօսքը արտասանեց Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Յ. Նշանեան, որ մասնաճիւղի դրօշակը յանձնեց խմբապետ Ն. Մականեանին: Բացման այս պաշտօնական բաժինէն ետք տեղի ունեցաւ նորընծաներու քննութիւն եւ Շրջանային Վարչութեան կողմէ նուէր բերուած սկաուտական զգեստներու բաշխում: Նոյն օրը տեղի ունեցաւ ֆութպոլի մրցում՝ Պուքրէշի եւ Սթրուսկայի սկաուտական խումբերուն միջեւ: Երեքշաբթի տեղի ունեցաւ սկաուտական արշաւ, Պուքրէշի սկաուտներու մասնակցութեամբ:

Սթրուսկայի մասնաճիւղի գործունէութիւնը այս ձեւով կը սկսի յարատեւելու, յաջողութեան բոլոր տուեալներով: Ուսուցչական կազմ եւ որբեր ամբողջութեամբ կը լծուին մասնաճիւղի գործունէութեան:

Ֆութպոլի խումբը տեղական խումբերու հետ բարեկամական մրցումներ կը կազմակերպէ, յաղթական արդիւնքներով — [ԻԵ/7.6]:

Սկաուտական խումբերը կը կազմակերպեն արշաւներ եւ բանակումներ, Օրձլէնի եւ Ռոմանի մօտակայ շրջաններուն մէջ, խանդավառելով հայ եւ օտար հասարակութիւնները — [ԻԶ/2.4]:

Մասնաճիւղի գործունէութիւնը, կեդրոնացած՝ Ազգ. Որբանոցի սահմաններուն մէջ, ինքնաբերաբար պիտի դադրէր նոյն որբանոցի փակումով՝ 1928 տարուան ընթացքին:

ԿԵՌԼԱ

Կեռլան՝ Թրանսիլվանիոյ անցեալի պատմական հայաքաղաքը, որպէս հայկական հաւաքականութիւն, փոքր նշանակութիւն մը ունէր 1920ական թուականներուն: Ան կը կազմէր երբեմնի Անի քաղաքի անկումէն ետք 800 տարիներու ընթացքին տեղափոխուած հայութեան մնացորդացը, անցնելով Խրիմէն Լեհաստան, Մոլտավիա, Կարպաթներ եւ Թրանսիլվանիա — [ԻԵ/6.1]:

Այսուհանդերձ, Ռուսմանիոյ Շրջանային Վարչութեան ճիգերը ապարդիւն չմնացին, երբ ան յատուկ առաքելութեամբ քաղաքը այցելեց, Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը հոն եւս տարածելու նպատակով: Առաքելութիւնը Պուքրէշէն մեկնեցաւ 17 Ապրիլ 1925-ին, մասնակցութեամբ՝ 18 սկառտներու, 18 մարզիկներու եւ 13 օժանդակ անդամներու գլխաւորութեամբ

Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Յ.Ճ.Սիրունիի:

Առաքելութեան մաս կը կազմէին նաեւ սկառտական վարիչ առաջնորդ Մովսէս Շլուկեան

Շրջանային աթլետիք յանձնախումբի անդամներ՝ Յ. Ապագեան, Կ. Ասլանեան, Շ. Կիւրճեան, Օ. Սինանեան եւ Պօղոս Տէիրմէնճեան

Պուքրէշի Ազգ. վարժարանի Տնօրէն, Ա. Տիրացեան եւ Քեմանչիստ Ռուբէն: Այս առաքելութեան յաջողութեան նիւթապէս օժանդակեց Ռուսմանիոյ Հայկական Միութիւնը: Սբ. Զատիկուան տօնական օրերուն զուգահիւսով այս չորս օրուան շրջապտոյտի

ընթացքին, Պուքրէշի Ֆուլթպոլի խումբը մրցում մը ունեցաւ Կեռլայի «Սփարթա»ի դէմ: Տեղի ունեցան հիւրասիրութիւններ, բարի գալուստի մաղթանքներ, ճաշկերոյթներ եւ Զատիկուան տօնին առթիւ՝ Սբ. Պատարագ:

19 Ապրիլի երեկոյեան, Տօքթ. Փափ Կիւսթավի բնակարանին մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով մը, ուր որոշուեցաւ կազմուած յայտարարել Կեռլայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը: Առժամեայ վարչութեան անդամ նշանակուեցան՝ Տօքթ. Փափ Կիւսթավ, Տօքթ. Փոնկրաց Էրնէս, Պաթրին Նիքօլաուս, Նովաք Նիքօլաուս, Օննիկ Թումայեան, Այան Եօաքիմ եւ Բլաչինթար Կէրէս: Շրջանային Վարչութիւնը որբանոցի սաներու մասնակցութեամբ սկառտական խումբեր կազմելու նպատակին համար նուիրեց 2000 լէյ եւ հանդերձանքի կերպաս — [ԻԵ/6.5]:

Կեռլայի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան այս առիթէն ետք, մասնաճիւղի գոյութեան եւ գործունէութեան մասին տեղեկութիւններ կը պակսին:

ՔԻՇՆԵԻ (ՔԻՇԻՆՕ)

Թրանսիլվանիոյ Քիշնեւ քաղաքն ալ, վաղ ժամանակներէն գաղթած հայ փոքր գաղութ մը ունէր 1920ական թուականներուն — [ԻԼ/3.16]:

Ռուսմանիոյ Շրջանային Վարչութեան մէկ այլ նախաձեռնութիւնն է Քիշնեւի մասնաճիւղի հիմնադրութիւնը: Այս նպատակով մարզական առաքելութիւն մը կազմուեցաւ՝ բաղկացած Գոնսթանցայի եւ Պուքրէշի Ֆուլթպոլի խումբերէն, որոնք 3 Հոկտեմբեր 1925ին մեկնեցան Քիշնեւ, տեղւոյն Sporting եւ Vitiaru խումբերուն դէմ բարեկամական մրցումներ ունենալու: Այս մրցումներուն առթիւ Քիշնեւի հայութիւնը խանդավառ օրեր ապրեցաւ եւ

հաւաքուելով առաջնորդարանի սրահին մէջ, կատարեց տեղւոյն մասնաճիւղի հիմնադրութիւնը: Քիչնեւը այսպիսով կը դառնար Ռումանիոյ Շրջանի Ց-րդ մասնաճիւղը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամբողջացնելու համար Ռումանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան բաժինը, հարկ է արձանագրել հրատարակչական այն լայն գործունէութիւնը որ շրջանը ունեցած է իր հիմնումէն մինչեւ Բ. Աշխարհամարտի սկիզբը:

«Արի» Տեղեկատու

Ռումանիոյ Շրջանային Վարչութեան նախաձեռնութիւնը հանդիսացող այս հրատարակութիւնը Պոլիսէն ետք առաջին կանոնաւորաբար լոյս տեսնող հրատարակութիւնը պիտի ըլլար: «Արի»ն լոյս կը տեսնէ 1924-ի Փետրուարէն սկսեալ, որպէս «Տեղեկատու Հ.Մ.Ը.Մ.ի Ռումանիոյ Շրջանի», սակայն իր բովանդակութեան մաս կը կազմեն նաեւ արտասահմանի մէջ գործող բոլոր շրջաններու եւ մասնաճիւղերու մասին տեղեկութիւններ, երբեմն իրենց յետին մանրամասնութիւններով:

Առաջին տարին «Արի» լոյս կը տեսնէր 7 թիւ՝ 1 Փետրուար 1924-1 Սեպտեմբեր 1924, երկրորդ տարին՝ 8 թիւ՝ Սեպտեմբեր 1924-Օգոստոս 1925, Գ. տարին՝ 4 թիւ՝ Օգոստոս 1925-Դեկտեմբեր 1925, որմէ ետք «Արի» որպէս կանոնաւոր հրատարակութիւն կը դադրի լոյս տեսնելէ, եւ համաձայն Ռումանիոյ եւ Պուլկարիոյ շրջաններու Նոյեմբեր 1925ի խորհրդաժողովի որոշման, միանալով Պուլկարիոյ «Մարգիկ»ին կը սկսի լոյս տեսնել Ֆիլիպէի մէջ, որպէս զոյգ շրջաններու պաշտօնաթերթը՝ Հ.Մ.Ը.Մ. անուան տակ, 1926ի Յունուար 1էն սկսեալ:

«Արի»ի հրատարակութեան ոգին կը հանդիսանայ Յ.Ճ.Սիրունին, որ մեծ հաւատքով կը լծուի Պուլքրէշի մասնաճիւղի եւ Ռումանիոյ շրջանի գործունէութեան՝ յիշելով 1918ի հիմնադրութեան օրերուն իր բերած կարեւոր ներդրումը Հ.Մ.Ը.Մ.ի կազմաւորման ընթացքին — [ԻԱ.1]:

«Արի»ի արտօնատէրն է Յարութիւն Գ. Աթանասեան: Թերթը կը տպուի Մասիս տպարանին մէջ, Cartez Romanesca իւրաքանչիւր թիւ 8 էջ բովանդակութեամբ, հատվածառի գին՝ 5 լէյ:

Որպէս տեղեկատու դադրելէն ետք «Արի»ին կը հանդիպինք որպէս տարեկան բացառիկ հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Ռումանիոյ շրջանի, որուն առաջինը՝ նըւիրուած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան Ցրդ տարեդարձին, լոյս կը տեսնէ 14 Նոյեմբեր, 1926 թուականով: Իսկ 1934 Յունիսի թիւով «Արի»ն կրկին կը սկսի վերահրատարակուիլ, որպէս նոր շրջանի առաջին թիւը:

Սկառուտական խմորատիպեր

«Մեր թերթը». Պուլքրէշի մասնաճիւղի խմորատիպ այս թերթը լոյս կը տեսնէ 1926-ի Նոյեմբերէն սկսեալ, որպէս Ա. եւ Բ. սկառուտական խումբերու նախաձեռնութիւն:

«Պետը». 1927էն սկսեալ, այս խմորատիպը նախաձեռնութիւնն է Պուլքրէշի մասնաճիւղի երէց սկառուտներուն:

«Սլաք». կրկին՝ 1927ին սկսած խմորատիպ մը, նախաձեռնութեամբ Պուլքրէշի մասնաճիւղի սկառուտական կազմին:

ԱՅԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռումանիոյ Շրջանային Վարչութիւնը 1925ին, լոյս կ'ընծայէ Հ.Մ.Ը.Մ.ի «Կանոն-

նագիր»ը եւ զայն տարածելու համար արտասահմանի մասնաճիւղերուն տրամադրութեան տակ կը դնէ:

Այս շարքին կը պատկանին՝ «Ուղեցոյց Արիին» Ա. հատոր՝ նորընծաներու գիտելիքներու յատուկ գիրքը եւ «Ուղեցոյց Արիին» Բ. հատոր՝ Բ. կարգի սկաուտ-

ներու գիտելիքներու յատուկ գիրքը, երկուքն ալ տպուած 1926ին:

Ռուսմանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնն ալ կը շարունակուի անխափան՝ մինչեւ Բ. Աշխարհամարտ, որմէ ետք կը դադրի նոր վարչակարգերու հաստատումով:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

- ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻԻՆ
- ՖԻՔՍ—ԱԹԷՆՔ
- ԳՈՔԻՆԻԱ
- ԼԻՔԱԶՄԱ
- ՍԻՆԿՐՈՒ
- ՍԵԼԱՆԻԿ
- ՔՍԱՆԹԻ
- ԳԱՆՏԻԱ
- ԼԱՐԻԱՍ


- ՌԵԹԻՄՆՕ
- ՏՐԱՄԱ
- ԳԱՎԱԼԱ
- ՆԷՕ ՖԱԼԻՐՈՆ
- Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՅԼ
ԽՄԲԱԻՈՐՈՒՄՆԵՐ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻԻՆ
- ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»



Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա

ԷԳԵԱԿԱՆ ԾՈՎ

ՄԻՋԵՐԱԴԱԿԱՆ ԾՈՎ



ՆՐԷՄԵ
ՆՂԳԻ

ՌԷՇԻՄՆՈՒ
ԿՐԱՅԼԻՈՒՆ

ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանի կազմութիւնը ուղղակի հետեւեալն է Պոլսոյ կեդրոնի գործունէութեան դադրեցման, իրականացած՝ Պոլսոյ, Իզմիրի եւ Կիլիկիոյ մասնաճիւղերէն Յունաստան հաստատուած Հ.Մ.Ը.Մ.ականներու միջոցաւ եւ, յատկապէս, Պոլսոյ որբանոցներէն Յունաստան հաստատուող որբերու զանգուածային տեղափոխութեամբ:

Զանգուածային այս տեղափոխութիւնը իրականացած է զոյգ առաքելութիւններով. առաջինը՝ դէպի Քորֆու եւ Սիրա կղզիներ, երկրորդը՝ դէպի հիւսիսային Յունաստան՝ Թրակիոյ եւ Մակեդոնիոյ ծովային ափերէն թափանցումով՝ դէպի երկրի ներքնամասերը: Զոյգ առաքելութեանց գործունէութեան մանրամասնութեանց մասին պիտի տեղեկագրենք յատուկ գլուխի տակ:

ՖԻՔՍ—ԱԹԷՆՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղ որակումով պէտք է հասկնալ՝ մայրաքաղաքի կեդրոնի ամենամօտակայ՝ Ֆիքսի հայաբնակ վրանաքաղաքը, ուր, 1922-ի աշունէն սկսեալ, հետզհետէ կայք հաստատեցին Պոլիսէն, Իզմիրէն եւ Ատանայէն հասնող հայ գաղթականներ, խուսափելով Քեմալական շարժումի արհաւիրքներէն: Ներկայիս այս շրջանը կը կոչուի Նէոս Գոզմոս:

ՍԿՈՒՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒՄ

Ֆիքսի հայ գաղթականներին մէջ եկուոր Հ.Մ.Ը.Մ.ականներ, գլխաւորութեամբ Ներսէս Մ. Մանուկեանի, 26 նոյեմբեր 1922էն սկսեալ, նախաձեռնեցին մասնաճիւղի անդրանիկ սկսողական խումբի կազմութեան: Խումբի զգեստաւորման նպաստեցին յունահայ վաճառականներ՝ Օհանեանի քաջալերանքով: Շարժումին բարոյական օժանդակութիւն բերին՝ Արամ Կայծակ, Գաբրիէլ Լազեան, Գ. Մարգարեան, Ա. Գափլանեան եւ Հ. Տումանեան: Տարի մը չբոլորած, կազմուեցաւ սկսողական երկրորդ խումբ մը եւ փողահարներու խմբակ մը Պետրոս եւ Լեւոն Գայեաններու եւ Գ. Գուլումեանի ջանքերով: Ֆիքսի սկսողական խումբերու անդամներէն յիշենք՝ Յ. Պաղտիկեան, Յ. Մանուկեան, Տ. Խրիմեան, Ա. Տէօվլէթեան, Ս. Պարոնաւազեան, Ա. Եօթնեղբայրեան, Կ. Գուլամանեան, Վ. Շահինեան, Թ. Թաթուլեան, Գ. Թալասըլեան, Հաճի Պողոսեան, Ե. Զիլկունեան, Մ. Սեթեան, Ա. Փարաճեան, Ա. Կիրակոսեան, Գ. Պետիկեան, Ա. Կարապետեան, Ն. Սայեան, Խ. Շատարեւեան, Յ. Սիմիտեան, Տ. Գասապեան, Ղազարեան եղբայրներ, Ե. Թօրումեան, Տիլսիզեան, Մնացականեան, Նահապետեան եւ ուրիշներ, որոնք սկսողական ելոյթներով խանդավառեցին սկսուած շարժումը եւ շրջանի հայ եւ յոյն բնակչութեան հոգածութեան արժանացան:

Մասնաճիւղի սկսողական խումբերը մասնակցեցան հայ ազգային տօնակատարութեանց, ինչպէս նաեւ յունական անկախութեան տարեդարձի տողանցքներուն, պաշտօնական շրջանակներուն մէջ մեծ համակրանք ստեղծելով իրենց շուրջ:

Երկամեայ այս գործունէութիւնը իր շուրջ յաջողեցաւ հաւաքել Ֆիքսի հայ գաղթականների պատանիներու գրեթէ ամբողջութիւնը — [42.6-7.]:

1924ի Օգոստոսին, հիւսիսային Յունաստանէն Աթէնք կը ժամանէ Շրջանային խմբապետ՝ Մկրտիչ Մալումեան, որ Պոլսոյ կեդրոնէն Յունաստան ղրկուած առաքելութեան ղեկավարներէն էր եւ եկած էր մայրաքաղաքէն՝ Նիր Իսթ Րիլիֆի կողմէ պաշտօնական օժանդակութիւն ապահովելու

հիւսիսային Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ական շարժումներուն մասնակից որբերուն:

Մկրտիչ Մալուճեանի ներկայութիւնը կազմակերպչական իր նպաստը կը բերէ Աթէնքի շրջակայ բոլոր մասնաճիւղերուն:

1925ին, Օննիկ Եազմաճեան, որ Փարիզէն Կիպրոս կը մեկնէր սկաուտական խումբերու կազմութեան նպատակով, կը մասնակցի մասնաճիւղի աշխատանքներուն՝ իր հմտութեամբ մեծապէս նպաստելով թեքնիք եւ կազմակերպչական ծրագիրներուն: Եազմաճեան կու տայ դասախօսութիւններ:

1926ի Հոկտեմբեր 24ին, Աթէնքի եւ Բիրէայի սկաուտական բոլոր խումբերը արշաւ մը կատարեցին դէպի Օմորֆի էքլիսիայի դաշտը: Այս արշաւին մասնակցեցան Ֆիքսի եւ Սինկրուի մասնաճիւղերէն 40 սկաուտներ, գլխաւորութեամբ՝ Լեւոն Գայեանի:

1934ին, մասնաճիւղի պատուոյ նախագահ՝ Արամ Կայծակ, յունական բանակի պահեստի սպայի իր հանգամանքով, կը յաջողի 150 սկաուտներ տարազաւորել եւ սկաուտական շարժումին նոր թափ ապահովել:

1935ին, մասնաճիւղի սկաուտ խմբապետութիւնը կը վստահուի Լեւոն Գայեանի, իսկ աստիճանաւորական կազմը կը ներկայացնեն՝ Մանուկ Գրիգորեան՝ փոխ-խմբապետ եւ Երուանդ Աբոսթոլեան՝ վարիչ-առաջնորդ:

1936ին, պետական որոշումով, Յունաստանի սկաուտական բոլոր շարժումները կը փոխարինուին «ՆէՈԼէԱ» երիտասարդութիւն անուն շարժումով, ուստի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը կ'որդեգրէ սահմանափակ ներքին գործունէութիւն:

1937ին, Ֆիքսի մասնաճիւղին կը միանայ Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանի մէջ գործող եւ Յովհաննէս Մ.Վ. Կամսարականի ճիգերով կազմուած սկաուտական խումբը, որ հիմնուած էր 1934ին, եւ կը

գործէր որպէս յունական 26րդ անջատ խումբ:

1938ին, սկաուտական խումբը կը հաշուէ 45 անդամ: Աստիճանաւորական կազմը կը բաղկանայ հետեւեալներէն. խմբապետ՝ Լեւոն Գայեան, փոխ-խմբապետ՝ Մանուկ Գրիգորեան, վարիչ-առաջնորդ՝ Երուանդ Աբոսթոլեան: Խումբը, որ յոյն սկաուտական կեդրոնին կողմէ ճանչցուած է որպէս 23րդ խումբ, իր մասնակցութիւնը կը բերէ ազգային եւ պետական բոլոր հանդիսութիւններուն:

Կազմակերպչական եւ մարզական գործունէութիւն

Թուրքիոյ քաղաքներէն հասնող հայ երիտասարդութիւնը, Ֆիքսի գաղթակայանին մէջ հաստատուելէ ետք կազմեց թաղային ֆուլթպոլի զանազան խումբեր՝ համեստ գործունէութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կորիզը սկսաւ պաշտօնապէս կազմակերպուիլ, 1924ի Օգոստոսէն սկսեալ:

1925ին, անդրանիկ վարչութիւնը կը բաղկանար հետեւեալներէն.

- Զ. Զաքարեան՝ ատենապետ
- Մ. Մանուկեան՝ ատենադպիր
- Հ. Տումանեան՝ գանձապահ
- Պ. Նաճարեան՝ ֆուլթպոլի խմբապետ
- Ն. Մանուկեան՝ ակումբի խմբապետ
- Լ. Գայեան՝ սկաուտական խմբապետ:

1925ի Օգոստոսին, մասնաճիւղը կ'ունենայ իր առաջին հրապարակային հանդիսութիւնը, որմէ ետք հետզհետէ կը կազմակերպուին երգման հանդիսութիւններ, արշաւներ, բանակումներ, հանգանակութիւններ եւ մարզական ելոյթներ: Մասնաճիւղի շուրջ համախմբուած անդամներու թիւը կը հասնի 150ի:

1925-26 տարեշրջանին, ֆուլթպոլի խումբը կը մասնակցի միջ-մասնաճիւղային մրցաշարքին, տիրանալով ակոյեանութեան

բաժակին, 1926 Օգոստոս 15ին կայացած՝ Գոքինիոյ մասնաճիւղին դէմ կատարած մրցումով, որ թէեւ հաւասար արդիւնքով կը վերջանայ, սակայն, մրցաշարքի կէտերու առաւելութիւնը կ'երթայ Ֆիքսի խումբին:

1926ի Սեպտեմբերին, հեծելանիւի խումբը կը մասնակցի միջ-մասնաճիւղային մրցումներուն: Մասնաճիւղի հեծելանաւորներէն Համբիկ Տարչինեան կը շահի 1000 մ.ի առաջնութիւնը, իսկ 15 քմ. մրցումին՝ երկրորդ կը հանդիսանայ:

Նոյն տարուան Հ.Մ.Ը.Մ.ի յունահայ ողիմպիականներու շրջագիծին մէջ մասնաճիւղի լողորդները կը մասնակցին մրցումներուն:

Ֆուլթոնի խումբերը յաճախակի մրցումներ կ'ունենան տեղացի խումբերու դէմ: Ա. խումբը կը յաղթէ յունական Աքիլլէս խումբին (5-0), կը պարտուի ախոյեան Բանաթինայիքոսէն (2-0): Ան կը մասնակցի նաեւ Աթէնքի՝ 1926-27 տարեշրջանի ախոյեանութեանց մրցաշարքին, իբր առաջին խմբակցութեան մաս կազմող խումբ:

1926, Հոկտեմբեր 2ին, եկեղեցւոյ բակին մէջ կատարուած բանակումով մը կը սկսի մասնաճիւղի հիմնադրութեան Բ. տարեդարձի հանդիսութիւնը: Յաջորդ օրը, Կիրակի, հրապարակային հանդիսութեան խօսք կ'առնեն Ա. Կայծակ եւ Ս. Տամլամայեան: Տեղւոյն վրայ կը կատարուի Ֆուլթոնի խումբի մետալներու եւ սկառտներու աստիճաններու տուչութիւն — [ԻԲ/7.15]:

1926ի վերջաւորութեան, մասնաճիւղը կ'օժտուի յատուկ գրադարանով, որուն ճոխացման ի նպաստ վիճակահանութիւն մը կը կազմակերպուի եւ նուէրներ կը հաւաքուին:

1927ի Նոր Տարուան առթիւ կը կազմակերպուի ներքին երեկոյթ, անդամներու

եւ համակիրներու համար: Սկառտները կը ներկայացնեն զաւելտ մը եւ գեղարուեստական բաժին, արժանանալով ընդհանուր գնահատանքի եւ նախորդ տարիներու վրայ ձեռք բերուած յատուկ յառաջդիմութիւններու արձանագրութեան:

1928ին, մասնաճիւղին կը միանայ Տալուորիկ Ֆուլթոնի խումբը, որ իր յաղթական ելոյթներով իր մասին խօսիլ կու տար յոյն շրջանակներէ ներս:

1928ի Փետրուարին, Օր. Ռ. Գարակէօզեան, Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Նոր Սերունդ»ին ուղղուած նամակով մը կը տեղեկացնէ, թէ տասնեակ մը օրիորդներու մասնակցութեամբ պատրաստելու վրայ է մարզիչներու հոյլ մը, որոնք հետագային պիտի գործեն Հ.Մ.Ը.Մ.ի զանազան մարզերուն մէջ աղջկանց խումբեր յառաջացնելով: Այս նախաձեռնութիւնը բարի նախանձ մը հրահրելու կը միտի՝ տղոց կազմերը զգաստացնելու համար: Մասնաճիւղը կ'որդեգրէ աղջկանց խումբի այս նախաձեռնութիւնը:

Նոյն տարին, աթլետիզմի խումբին պատասխանատու կը նշանակուի Համօ Մեհրապեան, որուն ամբողջական աթլետի տիպարը, աթլետիզմի ճիւղը զարգացնելու կ'առաջնորդէ մասնաճիւղի յաջող մարզիկները:

Հետզհետէ, հրամայական կը դառնայ սեփական մարզադաշտ մը ունենալու կարիքը: Այդ մէկն ալ կ'ապահովուի՝ քառօնկի յոյն գործարանատիրոջ մը տրամադրած հողամասէն դաշտի մը յարդարումով: 1929-1930 տարեշրջանին, մարզիկները իրենց ձեռքերով կը յարդարեն հողամասը եւ կը շինեն վազքուղի, ցատկելու փոս եւայլն: Կը նախատեսուի, նաեւ, հանդիսականներու համար թրիպիւնի բաժին մը — [ՀԱ.136]: Ֆիքսի մասնաճիւղի Ֆուլթոնի խումբը՝ առհասարակ աւելի զօրաւոր կը տիրապետէ այս ճիւղի հանդիպումներու

րուն, քոյր մասնաճիւղերու խումբերուն դէմ: Սակայն մարզական այլ ճիւղերը տեղաբայլի մէջ են:

Մասնաճիւղի մարզադաշտի պաշտօնական բացման առիթով կը կազմակերպուին Նաւասարդեան խաղեր: Վրայ կը հասնին 1930ական տարիներու տնտեսական միջազգային դժուարին տարիները: Մասնաճիւղի անդամներու յաճախակի տեղափոխութիւնն ու արտագաղթը կը տկարացնէ առաջին տարիներու խանդավառ գործունէութիւնը: Այսուհանդերձ, Ֆիքսի մասնաճիւղը, որպէս Յունաստանի շրջանի անդրանիկ մասնաճիւղ, իր մնայուն մասնակցութիւնը կը բերէ Յունաստանի շրջանի միացեալ գործունէութեան:

ԳՈՔԻՆԻԱ

Մարզական եւ կազմակերպչական գործունէութիւն

1924ին, կը կազմուի շրջանի Բ. մասնաճիւղը՝ մայրաքաղաքի նաւահանգիստ Բիրէայի մօտակայ Գոքինիայի հայկական գաղթականներին մէջ: 1925ին, մասնաճիւղի անդրանիկ վարչութեան մաս կը կազմեն՝

- Հ. Գումրուեան՝ ատենապետ
- Գ. Պաղճեան՝ ատենադպիր
- Ա. Կէօքճեան՝ գանձապահ
- Լ. Քիւփէլեան՝ կնքապահ
- Հ. Ամուխանեան՝ հաշուապահ եւ Հ. Սեթեան՝ սկաուտական խմբապետ:

Միամեայ գործունէութեան աւարտին, շրջանի կաթողիկէներու դաշտին վրայ, յատուկ հանդիսութեամբ մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան առաջին տարեդարձը: Հիմնադրութեան Բ. տարեդարձը կը տօնախմբուի 3 Հոկտեմբեր, 1926ին: Հ.Մ.Ը.Մ.ի եւ մասնաճիւղի գործունէութեան մասին խօսք կ'առնեն՝ Ա. Յակոբեան, Տօքթ. Գ. Էօտէմիչլեան, Տօքթ. Ե. Արչակունի եւ Պրն. Ս. Նիկողոսեան: Տեղի

կ'ունենայ տողանցք, խաղեր եւ մրցանակաբաշխութիւն:

Մարզական գլխաւոր ճիւղը, բնականաբար, Ֆութպոլը պիտի ըլլար: Մասնաճիւղի Ֆութպոլի խումբի ընդհանուր խմբապետութիւնը կը վստահուի Հայկ Տէտէեանի, որ հմտութեամբ կը վարէ զայն եւ կը մշակէ մասնաճիւղի բոլոր խումբերը: Ա. խումբի խմբապետ կ'ընտրուի Լորիս Սողոմոնեան: Մասնաճիւղի Ա. եւ Բ. խումբերը կ'ունենան յաճախակի մրցումներ: 9 Յունուար, 1927ին, Ա. խումբը կը մրցի Տոքսա յունական խումբին դէմ, որուն կը յաղթէ 3-1 արդիւնքով: Բ. խումբը՝ 1-0 արդիւնքով պարտութեան կը մատնէ յունական Ամենա խումբը: 5 Յունիս, 1927ին, Ա. խումբը՝ 6-1 արդիւնքով պարտութեան կը մատնէ տեղական Էֆէսթոս կազմը: Այս յաղթանակները մեծապէս կը քաջալերեն մասնաճիւղի մարզական գործունէութիւնը: Միջ-մասնաճիւղային մրցաշարքերուն, Գոքինիան միշտ մասնակցած է յաջող արդիւնքներով:

Գոքինիոյ մասնաճիւղը, սկաուտական եւ մարզական գործունէութեանց կողքին, տարած է նաեւ մշակութային գործունէութիւն: Այս կարգի առաջին թատերական ելոյթը տեղի կ'ունենայ 25 Յունիս, 1926ին, Շիրվանգադէի «Պատուի համար» թատերախաղով:

Սկաուտական գործունէութիւն

Գոքինիոյ մասնաճիւղի սկաուտական շարժման նախաձեռնողները եղան Յակոբ Աւագեան եւ Գասպար ու Յարութիւն Առաքելեան եղբայրները:

1925ին, սկաուտական կազմը օգտուելով Օննիկ Նազմաճեանի ներկայութենէն, իր գործունէութիւնը կը զարգացնէ թեքնիք գետնի վրայ: Արչաւներ եւ բանակումներ կը դառնան յաճախակի: 1927ին, միջ-մասնաճիւղային՝ դէպի Տաֆնի կազմակերպը-

լած արշաւին, Գոքինիոյ մասնաճիւղը պատրաստ վիճակով կը մասնակցի առանձին: Խումբը կը վարեն Յակոբ Աւագեան, Նիկոս Նիկոսեան եւ Տ. Աւագեան: Արշաւանքին կը մասնակցի մասնաճիւղի վարչականներէն Ս. Նիկողոսեան: Գիշերային այս արշաւանքը բանակավայր կը հասնի ուշ գիշերին: Գիշերուան բանակավայրի դէմ եղած «յարձակումը» պահակներուն կողմէ ի դերեւ կը հանուի: Սկաուտ առաջնորդներու յատուկ, միջ-մասնաճիւղային երկրորդ բանակումին, 25 Յունիս 1927ին, Գոքինիոյ մասնաճիւղի աստիճանաւորական կազմը իր մասնակցութիւնը կը բերէ: Խումբը կը կատարէ արշաւներ 6 Նոյեմբերին՝ Տաֆնի, 13 Նոյեմբերին՝ Այավարվառա, 26 Դեկտեմբերին՝ Սքարամանկահետախուզական, մարզական եւ սկաուտական թեքնիք յայտագիրներով: Ընդհանուր հաւաքոյթներ կը կատարուին Ազգային վարժարանի սրահին մէջ:

Գոքինիոյ խումբը կը մասնակցի նաեւ յունական սկաուտական կեդրոնի աշխատանքներուն: Մասնաճիւղի սկաուտներէն խմբակ մը, 9 Հոկտեմբեր, 1927ին, կը մասնակցի յունական սկաուտական գրասենեակի կազմակերպած նաւագնացութեան՝ դէպի Փանէոմէնի: Հայկ Տէտէեանի գլխաւորութեամբ, այս խմբակը կը մասնակցի տեղւոյն վրայ կազմակերպուած աթլետիք խաղերուն եւ լողորդութեան մրցումներուն: 23 Հոկտեմբերին, Նաւարենի ծովամարտին հարիւրամեակին նուիրուած տողանցքին, հայ սկաուտները կը մասնակցին 37 հոգիով:

Սկաուտները կը մասնակցին նաեւ յոյն եւ հայ ազգային եւ եկեղեցական հանդիսութիւններուն՝ 1 Յունուար, 1928ին, Ազգային վարժարանի սրահին մէջ, իսկ 6/7 Յունուար, 1928ին Յունական Խաչի Մկրտութեան պաշտօնական արարողութեան, զինուորական եւ պետական պաշտօնատար-

ներու կողքին: Նոյն ամսուան ընթացքին տեղի կ'ունենայ սկաուտներու երդման արարողութեան հանդէսը: Բ. Աշխարհամարտի նախօրեակին, սկաուտական կազմը կը բաղկանայ 35 անդամներէ, խմբապետութեամբ՝ Եղուարդ Սափրիչեանի:

ԼԻԲԱՉՄԱ

Աթէնքի Շրջանային Վարչութեան հակաչուին ենթակայ երրորդ մասնաճիւղն է Լիբազման: Հիմնուած՝ 1924ի Հոկտեմբերին, այս մասնաճիւղն ալ կը կազմակերպուի մարզական եւ սկաուտական զոյգ գործունէութեամբ:

Անդրանիկ վարչութեան մաս կը կազմեն՝ Կ. Մոմզերեան՝ ատենապետ, Լ. Չէքիճեան՝ փոխ-ատենապետ, Յ. Սիմոնեան՝ ատենադպիր, Դ. Թորոսեան՝ գանձապահ եւ Յ. Առաքելեան՝ գոյքապահ — [ԻԵ/5.5]:

1 Նոյեմբեր, 1925ին, տեղի կ'ունենայ մասնաճիւղի սկաուտական երդման արարողութիւնը, նախագահութեամբ Շրջանային վարչութեան գանձապահ՝ Պատուելի Աճեմեանի: Վերջինս, խօսք առնելով, բացատրած է Հ.Մ.Ը.Մ.ի նպատակները, խանդավառելով ներկայ ժողովուրդը — [Ի/7.27]:

17 Հոկտեմբեր, 1926ին, կը տօնակատարուի մասնաճիւղի հիմնադրութեան Բ. տարեդարձը: Սկաուտները կը ներկայացնեն զաւելի եւ մարզանքներ: Խօսք կ'առնեն՝ Շրջանային Վարչութեան ատենապետ Ա. Պետրոսեան, Պատուելի Աճեմեան եւ Վերապատուելի Կ. Սթամպուլեան:

1927էն սկսեալ մասնաճիւղի աթլետիկ միջոցները կ'արձանագրէ զգալի յառաջդիմութիւն, եւ յունական պատանեկան աթլետիք մրցումներուն ընթացքին կ'ապահովէ դրօշարչաւի մրցումին առաջնութիւնը: Յիշատակելի են աթլետ Գպրըզլեանի յաջողութիւնները: Մասնաճիւղի մարզիկները կը մշակեն մարզական «քլասիք» ճիւղեր եւ հեծելարշաւ:

ՍԻՆԿՐՈՒ

Սինկրուի մասնաճիւղը, Աթէնքի կեդրոնին մօտակայ չորրորդ մասնաճիւղն է, հիմնուած 1924ին, տեղւոյն գաղթականի երիտասարդներու մասնակցութեամբ:

Առաջին վարչութեան կազմը ունէր հետեւեալ պատկերը.

Ատենապետ՝ Պ. Աճէմեան

Ատենադպիր՝ Պ. Գասպարեան

Գանձապահ եւ սկաուտական խմբապետ՝ Ա. Գասապեան

Ֆուլթպոլ՝ Ս. Գէորգեան

Աթլէթիզմ՝ Ա. Քէօրաճեան

Խորհրդական՝ Ա. Պէգիքճեան:

1925 Նոյեմբերին, մասնաճիւղը կը կազմակերպէ սկաուտական երդման արարողութիւն: Խմբապետ Պետրոս Գայեանի ճիգերով, սոյն հանդէսը կ'ունենայ կատարեալ յաջողութիւն: Մասնաճիւղի սկաուտները կը մասնակցին Յունաստանի սկաուտական ընդհանուր ճամբարին:

Ֆուլթպոլի եւ աթլէթիզմի կողքին, մասնաճիւղը կը կիրարկէ հեծելանաւորութեան ճիւղը: 5 Սեպտեմբեր, 1926ին, մասնաճիւղի հեծելանաւորներէն Արտաշէս Քէօրհաճեան կը շահի միջ-մասնաճիւղային՝ 15 քմ. հեծելարշաւի մրցման առաջնութիւնը: 1927էն սկսեալ, մասնաճիւղի ֆուլթպոլի խումբը նաեւ կ'ունենայ կենսունակ գործունէութիւն:

3 Հոկտեմբեր, 1926ին, տեղի կ'ունենայ մասնաճիւղի Բ. տարեդարձի հանդիսութիւն՝ սկաուտական խաղերով եւ տողանցքով: 9 Յունիս, 1927ին, սկաուտական խումբը կը մասնակցի դէպի Կեսարիանի արշաւանքին, ուր կը կատարեն մարզանք եւ սկաուտական խաղեր:

25 Դեկտեմբեր, 1927ին, տեղի կ'ունենայ սկաուտական երդման արարողութիւն՝ եկեղեցւոյ մէջ: Երդման կը մասնակցին՝ վարիչ Պերճ Ֆերհատեան, Վ. Բապուճ-

եան, Բ. Գալուստեան, Ղազարոս Պետրոսեան, Յ. Յարութիւնեան, Պ. Գոճամանեան, Պ. Փաքարեան, Խ. Թիւֆենկճեան, Պ. Խոչարեան, Տ. Փափազեան եւ Գ. Պոյաճեան:

1929ին, արտագաղթն ու տնտեսական անձուկ կացութիւնը մասնաճիւղի գործունէութիւնը կը տկարացնեն: Պէտք է սպասել մինչեւ 1934, որպէսզի մասնաճիւղը վերակազմութեան շրջան մը սկսի: Սկաուտական աշխատանքները կը վստահուին Արամ Գասապեանին:

ՍԵԼԱՆԻԿ

Հիւսիսային Յունաստանի գլխաւոր քաղաքը, ուր 5 Նոյեմբեր, 1925ին, խումբ մը հայ երիտասարդներ, բաղկացած Պոլիսէն փոխադրուած նախկին Հ.Մ.Ը.Մ.-ականներէ, Ազգային Վարժարանի սրահին մէջ հաւաքուելով, պաշտօնապէս կը հիմնեն Սելանիկի մասնաճիւղը: Տեղւոյն վրայ, գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրուի վարչութիւն մը հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Վարդգէս Մանաչեան

Ատենադպիր՝ Համազասպ Մեհրապեան

Գանձապահ՝ Պաղտասար Գազազեան

Փոխ-ատենադպիր՝ Պետրոս Մորճիկեան

Խորհրդական՝ Կարապետ Ահարոնեան

— [ԻԸ/4.14]:

Սկաուտ խմբապետ կը նշանակուի Ազգային վարժարանի տնօրէն՝ Ասատուր Մակարեանը:

Սելանիկի կեդրոնը կ'ունենայ նաեւ երեք ենթամասնաճիւղեր. Պէշ-Չինար, Հարման Քէօյ եւ Խարիլաոս, որոնք ուղղակիօրէն կապուած են մասնաճիւղին, սակայն հեռաւորութիւնները նկատի ունենալով, առանձին հաւաքոյթներու առիթ կը ստեղծեն: Իւրաքանչիւր մասնաճիւղ շուրջ 40ական սկաուտներ կը հաշուէ: Սելանիկի մասնաճիւղի սկաուտապետ կը նշանակուի վարժարանի տնօրէն՝ Ասատուր Մակար-

եանը: Դասախօսական եւ այլ հանդիսութեանց առիթներով, աշխատանքին կը նըպաստեն Միհրան Փափազեան, Գէորգ Փափազեան, Յակոբ Սիմոնի, Կարօ Գէորգեան եւ ուրիշներ: Սկառուտական շարքերուն մէջ գործած են Խորէն Լուսիկեան, Դանիէլ Դանիէլեան, Սուրէն Ճենազեան, Աղաբեկ Թաշճեան, Շահնուր Շահրիկեան եւ ուրիշներ: Մարզական աշխատանքներուն կ'օժանդակէ Համազասպ Մեհրապեան: Աթլետները կը մարզուին «Իրաքլիոն»ի դաշտին վրայ:

25 Մարտ, 1926ի, հէլլէն Անկախութեան Տօնին առթիւ, յոյն սկառուտական պատուիրակութեան հետ, Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտներն ալ կը մեկնին Աթէնք՝ «Ավերոֆ» սթատիոնին մէջ մեծ շուքով նշելու այդ պատմական օրը: Սկառուտական խումբերը կը կազմակերպեն Ծննդեան գիշերուան «Աւետիս»ի այցելութիւններ:

1928-29 տարեշրջանին վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Վահրամ Արշաւիր: Վարչութիւնը կ'ունենայ արդիւնաբեր գործունէութիւն — [ՀԱ. 102-122]: Սկառուտական շարժումը համեմատաբար կը տկարանայ, սակայն մարզականը տակաւ կը յառաջդիմէ:

5 Հոկտեմբեր, 1930ին, կը կազմակերպուի մասնաճիւղի հրապարակային տարեկան առաջին մարզատօնը, նախագահութեամբ Պ. Պարծանքեանի, Օրուան թագուհի՝ Տիկ. Մարօ Պարծանքեան, պատուոյ օրիորդներ՝ Մենծիկեան եւ Ռուբինեան: Հանդէսը կը բացուի մարզիկներու ընդհանուր տողանցքով: Մրցումներու վերջաւորութեան խօսք կ'առնէ Շաւարշ Միսաքեան, ներբողելով Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը: Տեղի կ'ունենայ մրցանակաբաշխութիւն: Այս մրցատօները կը դառնան աւանդական, մեծ խանդավառութիւն ստեղծելով տեղւոյն հայ հասարակութեան մօտ:

1930ական թուականներու սկիզբը, սկա-

ռուտական շարքերը կրկին կը վերակազմուին եւ կը ճանչցուին յունական կեդրոնէն: Այս ժամանակաշրջանին խմբապետութիւնը կը վարեն Հրանդ Պարոնեան եւ Արշաւիր Ճամճեան: 1934ին, մասնաճիւղի կազմը կը հաշուէ 40 սկառուտ եւ 50 մարզիկ: Ֆուտպոլի «Արաքս» խումբը կ'այցելէ Գավալայի մասնաճիւղին: Մասնաճիւղի անդամներէն ժան Հանըմօղլու այս տարեշրջանին փայլուն արդիւնքներ կ'արձանագրէ եւ կը յաջողի պարտութեան մատնել Սելանիկի թենիսի նախկին ախոյեաններէն՝ զօրաւոր մարզիկ Ֆանիքլը:

5 Յունիս, 1934ին, կը կազմակերպուի տարեկան 5րդ մարզատօնը, մասնակցութեամբ 120 մարզիկներու: Հանդիսութեան ներկայ կը գտնուին՝ ոստիկան Գնդ. Պ. Կիսերլիս եւ Քաղաքապետ Կ. Մանոս, որ քաջալերական խօսքերով ելոյթ կ'ունենայ եւ նիւթական օժանդակութիւն կը խոստանայ: Նոյնպէս, սկառուտներու կողմէ կը կազմակերպուի «Ծնողներու Օր»։ Խօսք կ'առնեն վարժարանի տնօրէն՝ Կ. Գազանճեան եւ Թրակիոյ եւ Մակեդոնիոյ սկառուտական ընդհանուր պետ՝ Ֆիլիբիտիս: 14 Յուլիս, 1934ին, կը վերսկսի սկառուտական բանակումներու շարքը: Այս մնայուն բանակումը, բանակողներու իրերայաջորդ փոփոխութեամբ, կը տեւէ մինչեւ Օգոստոսի վերջաւորութիւնը, հաւաքաբար 100 Հ.Մ.Ը.Մ.ականներու մասնակցութեամբ: Բանակավայրի ընդհանուր պատասխանատուն է Դ. Դանիէլեան — [Զ.123]:

1938ին, սկառուտական խումբը կը հաշուէ 70 անդամ: Աստիճանաւորական կազմը կը հաշուէ 1 խմբապետ, 1 փոխ խմբապետ եւ 4 առաջնորդ: Սելանիկի Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական կազմը, որպէս շրջանի տիպար խումբ, նկատի առնուած է յոյն կեդրոնին կողմէ եւ մեծապէս գնահատուած՝ հայ հասարակութեան քաջալերանքներով:

ՔՍԱՆԹԻ

Սելանիկի մօտակայ փոքր աւան մը, ուր Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը շատ սահմանափակ գործունէութիւն մը ունեցած է՝ գրեթէ միայն անուանական գոյութեամբ: Շրջանին մէջ գործած է առաւելաբար Հ.Մ.Կայծ միութիւնը, հիմնուած՝ 1924ին, նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներու կողմէ, որոնցմէ կը յիշուին Հ. Պասմաճեանի եւ Օ. Թահթաճեանի անունները: «Կայծ»ի անթլեթներէն Գ. Մելեքեան արգելարչաւի եւ ձողով բարձրութեան մէջ գոհացուցիչ արդիւնքներ արձանագրած է: Դժբախտաբար, մնայուն մարզիչ մը չգտնուելուն, Քսանթիի Հ.Մ.Ը.Մ.ականներու փորձը շատ կարճ կեանք մը միայն ունեցած է, մինչեւ 1930ական թուականներու սկիզբը: Հայ մարզիկներու յաջող արդիւնքները, առաւելաբար յունական խումբերու կազմերէն ներս եղած են:

ԳԱՆՏԻԱ

Այժմու Կրէտէ կղզիի Գանտիա քաղաքին մէջ, 13 Դեկտեմբեր, 1927ին, պատմական Սբ. Կարապետ եկեղեցւոյ (կառուցուած՝ 1646ին) բակին մէջ հաւաքուելով՝ Արամ Գասպարեան, Աւետ Պարծանքեան, Գէորգ Մատանեան, Գրիգոր Մեսելճեան, Խաչիկ Աղպատեան, Նուպար Տէօքմէճեան, Սեդրակ Փափազեան, Յակոբ Միւրմիւզեան, Յովակիմ Յովակիմեան, Յակոբ Անդրէասեան, Նուպար Գափալճեան եւ Յ. Մեսելճեան պաշտօնական ուխտով մը հիմը կը դնեն Կրէտէ կղզիի նաւահանգիստ՝ Գանտիա քաղաքի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին: Տեղւոյն վրայ, ներկաները կը ստորագրեն անդամակցութիւն յանձնարարագիրներ՝ վճարելով 25ական տրախմի իբր մուտքի տուրք եւ ամսական 10 տրախմի անդամավճարի դրութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ի

գաղափարականին նուիրեալ այս հաւատաւորները կ'ընտրեն նաեւ մասնաճիւղի անդրանիկ Վարչութիւնը՝ հետեւեալ կազմով. ատենապետ՝ Արամ Գասպարեան, ատենադպիր՝ Գրիգոր Մեսելճեան, գանձապետ՝ Աւետ Պարծանքեան, գոյքապահ՝ Խաչիկ Աղպատեան, փոխ-ատենապետ՝ Գէորգ Մատանեան: Հիմնադրութեան այս աքթի արձանագրութիւնը կը յղուի Յունաստանի Շրջանային Վարչութեան, որ իր կարգին Գանտիոյ մասնաճիւղը կ'ընդունի իբր Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքի անդամ:

Մասնաճիւղը կ'ունենայ գլխաւորաբար մարզական գործունէութիւն, ֆութպոլի խումբով եւ անթլեթիզմի կազմով:

Գանտիոյ մասնաճիւղի գործունէութեան՝ պահ մը օժանդակած է միութեան հիմնադիրներէն Վահրամ Ս. Փափազեան:

ԼԱՐԻԱՍ

Յունաստանի քաղաքներէն՝ ուր կարճ ժամանակի մը համար գործած է Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը: Այլ փոքր մասնաճիւղերու կարգին Լարիասի հայ գաղութի անդամներու տեղափոխութիւնը պատճառ կը դառնայ տեղւոյն կազմի գործունէութեան զարեցման:

ՌԵԹԻՄՆՕ

Կրէտէ կղզիի մէկ այլ քաղաքի մասնաճիւղը: 1923էն սկսեալ ունեցած է սահմանափակ գործունէութիւն, ենթարկուելով վերոյիշեալ մասնաճիւղերու ճակատագրին:

ՏՐԱՄԱ

Պոլսէն Յունաստան ուղեւորուած Հ.Մ.Ը.Մ.ի զոյգ առաքելութիւններէն մէկուն անդամ որբերէն կազմուած փոքր գաղութին՝ հիւսիսային Յունաստանի մասնա-



Տրամայի Հ.Մ.Ը.Մ.ի սկսուողական խումբը
ձախին՝ միակ գալուիկը Արշակ Գամպուրեան

ճիւղերէն է Տրամայի Հ.Մ.Ը.Մ.ը: Մասնա-
ճիւղը պաշտօնապէս հիմնուած է 1930ի
ամրան, վարչութեան ատենապետութիւնը
վարած է Տօքթ. Օհանեան:

Տրամայի մասնաճիւղի մարզական գոր-
ծունէութիւնը եղած է սահմանափակ: Տա-

կաւին 1923ին, Պոլսոյ նախկին որբ սկա-
ռտները պատանեկան իրենց միջոցներով
կը վերյիշեցնեն Պոլսոյ երբեմնի սկա-
ռտական շարժումները, սակայն փորձը կը
մնայ իր սաղմին մէջ՝ նիւթականի եւ վարիչ
անհատներու չգոյութեան պատճառով:



Տրամայի Հ.Մ.Ը.Մ.ի սկսուողները վարչական
կազմին հետ՝ բնութեան ծոցին մէջ

ԳԱՎԱԼԱ

Տրամայի մօտակայ հիւսիսային Յու-
նաստանի այս մասնաճիւղն ալ հիմնուած է
1930ի ամրան: Անդրանիկ վարչական կազ-
մը կը բաղկանար հետեւեալներէն. ատե-
նապետ՝ Գրիգոր Պօղոսեան, ատենադպիր՝
Յ. Սրմաքեղեան, գանձապահ՝ Ե. Թորոս-
եան, խորհրդականներ՝ Վ. Մկրտիչեան,
Մ. Թիւթիւնճեան, Մ. Ճերմակեան եւ Գ.
Դերձակեան:

Մարզականի կողքին, Գավալայի մասնաճիւղը յաջողած է ունենալ սկաուտական գործունէութիւն՝ մինչեւ 1935 տարին:

ՆԷՕ ՖԱԼԻՐՕ

Աթէնքի եւ Բիրէայի միջեւ գտնուող մասնաճիւղ մը, որ սկզբնաւորութեան ունեցած է խանդավառ գործունէութիւն: Մասնաճիւղի մարզիկներէն Վահան Պոզիկեան տիրացած է 1930ի միջ-մասնաճիւղային մարզական խաղերու օրուան ախոյեանութեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՅԼ ԽՄԲԱԻՈՐՈՒՄՆԵՐ

Գորֆու, Սիրա կղզիներ, Սերէզ, Վոլօ, Միտիլլի, Գալամաթա: Վերոյիշեալ վայրերուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու կազմութեան սաղմերը երեւան կուգան շատ կանուխ, որբերու Պոլիսէն Յունաստան փոխադրութեան օրերուն: Անոնց գործունէութիւնը, կառուցային իմաստով աննշան է եղած, սակայն այս անունները կ'արձանագրենք ամբողջացնելու համար Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ական շրջանակներու ցանկը: Այս վայրերու Հ.Մ.Ը.Մ.ական խումբերը ունեցած են կարեւոր յաջողութիւններ, իրենց անհատ մարզիկներու ճիգերով:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Կազմակերպչական

Յունաստանի մասնաճիւղերու կառուցային կազմաւորումը կը սկսի 1924ին ստեղծուած Շրջանային Վարչութեան գործունէութեամբ:

Յունաստանի Շրջանի կազմաւորման առաջին նախաձեռնողը կը հանդիսանայ Մկրտիչ Մալումեանը, որ իր գործիչի եւ

սկաուտ խմբապետի զոյգ հանգամանքներով, հիւսիսային Յունաստանէն կը հաստատուի Աթէնք եւ 1924ի Օգոստոսին կը կազմէ սկաուտական կեդրոնական յանձնախումբ մը, իսկ Հոկտեմբերին՝ Յունաստանի անդրանիկ Շրջանային Վարչութիւնը՝ պատուոյ նախագահութեամբ Յարութիւն Գըլընճեանի հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Առաքել Պետրոսեան
Փոխ-ատենապետ՝ Արամ Յովհաննէսեան

Ատենադպիր՝ Ահարոն Եսայեան
Փոխ-ատենադպիր՝ Սեդրակ Նիկողոսեան

Գանձապահ՝ Պատուելի Յովհաննէս Աճեմեան

Մարզական պատասխանատու՝ Գէորգ Յաբէթեան

Սկաուտական ներկայացուցիչներ՝ Հայկ Տէտէեան եւ Պետրոս Գայեան:

Շրջանային Վարչութեան առաջին գործը կ'ըլլայ կազմել մասնաճիւղերու վարչութիւններ եւ համադրել անոնց աշխատանքը: Հետզհետէ կը կազմուին Ֆիքսի, Սինկրուի, Գոքինիայի եւ Լիբազմայի մասնաճիւղերու վարչութիւնները: 1926ին, շրջանային, կազմակերպչական ժամանակաշրջանին կը միանայ նաեւ Սելանիկի մասնաճիւղը, այսպիսով Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ականներու ընդհանուր թիւը 500ի կը հասնի: Առաջին հերթին Շրջանային Վարչութիւնը հսկեց մասնաճիւղերու սկաուտական խումբերու կազմութեան, ապա՝ ֆուլպոլի խումբերու կազմութեան:

1926ի Հոկտեմբեր ամսուան ընթացքին, Շրջանային Վարչութիւնը հովանաւորեց Յունաստանի մասնաճիւղերու գործունէութեան երկրորդ տարեդարձի հանդիսութիւնները: Շրջանային Վարչութեան անդամները իրենց ներկայութեամբ եւ խօսքերով քաջալերեցին մասնաճիւղերու գոր-

ծունէութիւնները եւ ժողովուրդը մեծ թիւով մասնակցեցաւ այս հանդիսութեանց:

2 Հոկտեմբեր, 1927ին, Աթէնքի հայոց եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Յունաստանի առաջին Շրջանային Պատգամաւորական Ժողովը, մասնակցութեամբ՝ Ֆիքսի, Աթէնքի, Գոգինիայի, Լիբազմայի եւ Սինկրուի մասնաճիւղերուն 36 լիազօր պատգամաւորներուն:

Լսելէ ետք հրաժարեալ Շրջանային Վարչութեան եռամեայ գործունէութեան տեղեկագիրը, ժողովը զայն վաւերացուց եւ ընտրեց Յունաստանի առաջին ընտրեալ Շրջանային Վարչութիւնը՝ հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Ստեփան Տամլամայեան
- Փոխ-ատենապետ՝ Վ. Թօփալեան
- Ատենադպիր՝ Վ. Գազանճեան
- Փոխ-ատենադպիր՝ Ա. Գափլանեան
- Գանձապետ՝ Պատուելի Յովհաննէս Աճեմեան

Անդամներ՝ Վ. Գպրըզլեան, Գ. Փափագեան

Աւագ խմբապետներ՝ Հայկ Տէտէեան եւ Լեւոն Գայեան:

Նորընտիր Շրջանային Վարչութեան պարտականութիւն յանձնուեցաւ շուտով իրականացնել Սելանիկի եւ այլ քաղաքներու մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ներու միացումը Շրջանային Վարչութեան:

Ժողովը ընտրեց նաեւ Յունաստանի Շրջանի Պատուոյ անդամ՝ յանձին Ա. Պետրոսեանի:

Իր կարգին, Շրջանային Վարչութիւնը օժանդակ յանձնախումբերու անդամներ նշանակեց հետեւեալները.

Ֆուլթալի Յանձնախումբ՝ Վ. Թօփալեան, Գէորգ Յարէթեան, Համբարձում Կիւտենեան, Գ. Գասպարեան եւ Վ. Գպրըզլեան:

Սկաուտական Յանձնախումբ՝ Ստեփան Տամլամայեան, Հայկ Տէտէեան եւ Պետրոս Գայեան:

13 Հոկտեմբեր, 1929ին, կը գումարուի Յունաստանի Պատգամաւորական Գ. Ժողովը: Սոյն ժողովին կ'ընտրուի նոր Շրջանային Վարչութիւն՝ հետեւեալ կազմով. Պատուելի Յ. Աճեմեան, Ս. Ճեվահիր, Մ. Փափագեան, Պ. Գայեան, Ա. Տէր Յակոբեան, Տ. Ալիքսանեան, Պ. Սարգիսեան: Այս կազմին, իբր խորհրդական կը հրաւիրուին Ս. Տամլամայեան եւ Հ. Տէտէեան: Աթէնքի եւ Բիրէայի չորս մասնաճիւղերուն աթլետիք մարզիչ կը նշանակուի Կ. Շահինեան — [Ե.102]:

2 Նոյեմբեր, 1930ին, Աթէնքի հայոց Առաջնորդարանի սրահին մէջ կը գումարուի Յունաստանի 5րդ Պատգամաւորական Ժողովը, մասնակցութեամբ՝ Գոգինիայի, Լիբազմայի, Ֆիքսի, Նէօ Ֆալիրոյի, Ռեթիմնայի, Գանտիայի, Սելանիկի, Տրամայի եւ Գավալայի մասնաճիւղերու պատգամաւորներուն: Յունաստանի Կ. Վարչութիւնը կը կարդայ իր միամեայ գործունէութեան նիւթական եւ բարոյական տեղեկագրերը: Տարեկան մուտք՝ 42000 տրախմի, ելք՝ 37000: Այս ժողովէն կ'ընտրուի նոր Շրջանային Վարչութիւն՝ մասնակցութեամբ Մ. Յարէթեանի, Յ. Փափագեանի, Յ. Կիւրիւնեանի, Կ. Շահինեանի եւ Պ. Սարգիսեանի — [Ե.204]:

1934ին, կը կազմուի Հ.Մ.Ը.Մ.ի վերակազմիչ յանձնախումբ մը, որուն անդամակցած են Գէորգ Փափագեան, Համբարձում Կիւտենեան եւ Կարօ Շահինեան:

Մարզական գործունէութիւն

Յունաստանի Շրջանային Վարչութեան մարզական գործունէութիւնը կը կեդրոնանայ աթլետիզմի, ֆուլթալի, հեծելանիւի եւ լողի ճիւղերուն շուրջ եւ կ'ամբողջանայ յունահայ ողիմպիական հանդէսներու կազմակերպութեամբ: Ֆուլթալի ճիւղին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը կը

մասնակցի Յունաստանի 1925ի ախոյեանութեան բաժակի մրցումներուն: Խումբը կը բաղկանայ հետեւեալներէն. բերդապահ՝ Հայկ Տէտէեան, յետսապահներ՝ Գէորգ Յարէթեան եւ Խորէն Ահարոնեան, միջնապահ՝ Համբարձում Կիւտէնեան, Արտաշէս Գոլանճեան եւ Յարութիւն Գպրըզըլեան, յառաջապահներ՝ Մանուկ Թիւթիւնճեան, Հայկազուն Սեթեան, Զարեհ Մինասեան, Մկրտիչ Յարէթեան եւ Մուրատ — [ԻԱ/4.6]:

11 Ապրիլ, 1926ին, կը սկսի Շրջանային Վարչութեան մարզական յանձնաժողովի կազմակերպած միջ-մասնաճիւղային ֆուլպոլի մրցաշարքը, մասնակցութեամբ՝ Ֆիքսի, Գոքինիայի, Սինկրուի եւ Լիբազմայի մասնաճիւղերու կազմերուն: Դատական մարմինը կը բաղկանայ Գ. Յարէթեանէ, Է. Սարաֆեանէ, Ս. Տամլամայեանէ եւ Ա. Յակոբեանէ:

Մրցաշարքը կը շարունակուի 9 Մայիսին, 13 Յունիսին եւ 27 Յունիսին: Ախոյեանութեան մրցումը տեղի կ'ունենայ 15 Օգոստոսին: Ֆիքսի մասնաճիւղը կը տիրանայ բաժակին, կէտերու առաւելութեամբ: Տիպար խումբի դրօշակը կը ստանայ Սինկրուի մասնաճիւղը — [ԻԲ/1/2/5/6]: Հ.Մ.Ը.Մ.ի խառն խումբը մրցումներ կ'ունենայ յոյն եւ ռուս խառն խումբերու դէմ՝ յաղթական արդիւնքներով:

1927ի ֆուլպոլի եղանակին Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլպոլի խումբը մաս կը կազմէ Աթէնքի Ա. դասակարգի խումբերու շարքին: Այս դասաւորումը խթան կը հանդիսանայ ներկայացուցչական խումբի վերակազմութեան եւ կանոնաւոր փորձերուն: Կը կազմուի ֆուլպոլի յատուկ յանձնախումբ՝ մասնակցութեամբ հետեւեալներուն. Վ. Թօփալեան, Յ. Փափազեան, Վ. Գպրըզըլեան, Յ. Զաքրեան եւ Ս. Տամլամայեան: Կրկին կը կազմակերպուի միջ-մասնաճիւղային ֆուլպոլի մրցաշարք:

Հեծելանիւի ճիւղի զարգացման համար, Շրջանային Վարչութեան մարզական յանձնաժողովը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային մրցումներ: 5 Սեպտեմբեր, 1926ին, կը կատարուին զոյգ մրցումներ՝ 1000 մեթր եւ 15000 մեթր ճամբու վրայ: Մրցումին կը մասնակցին Ֆիքսի, Սինկրուի եւ Լիբազմայի մասնաճիւղի հեծելանորդները: 1000 մեթրի առաջին կը հանդիսանայ Համբիկ Տարչինեան (Ֆիքս), իսկ 15000 մեթրին՝ Ա. Քէօրհաճեան (Սինկրու):

Վերոյիշեալ մրցումները մաս կը կազմէին միջ-մասնաճիւղային տարեկան ողիմպիական խաղերու յայտագրին:

Նոյն յայտագրին մաս կազմող լուղորդութեան մրցումներ տեղի ունեցան յաջորդ Կիրակի, 12 Սեպտեմբեր, 1926ին: Յայտագրին մաս կը կազմէին հետեւեալ մրցումները.

100 մ. ազատ լող

200 մ. ազատ լող

400 մ. ազատ լող

800 մ. ազատ լող

Յոյն մարմնակրթական ֆետերասիոնի անդամ Օ. Ֆուսթանօս եւ ծովային զինւորներ նպաստեցին վերոյիշեալ մրցումներու յաջողութեան:

Միջ-մասնաճիւղային տարեկան մրցումները, մարզական բոլոր ճիւղերով, գործադրուեցան բաւարար յաջողութեամբ, 1926էն սկսեալ: 21 Օգոստոս, 1930ի միջ-մասնաճիւղային խաղերը կատարուեցան յատուկ հանդիսաւորութեամբ, հովանաւորութեամբ՝ Ազգային Կեդրոնական վարչութեան, նախագահութեամբ՝ Առաքել Պետրոսեանի եւ օրուան թագուհի՝ Տիկ. Արաքսի Յարէթեանի:

1929ին, կազմակերպուեցաւ յունահայ Ա. Ողիմպիականը, մասնակցութեամբ հետեւեալ մասնաճիւղերու խումբերուն. Ֆիքս, Սինկրու, Գոքինիա, Լիբազմա, Գանտիա,

Ռեթիմնօ, ինչպէս նաեւ Քսանթի եւ Սելանիկ մասնաճիւղերէն անհատ մարզիկներու: Ֆիքսի Հ.Մ.Ը.Մ.ի նորակառոյց մարզադաշտին վրայ կազմակերպուած այս Ողիմպիական խաղերը կատարեալ յաջողութեամբ պսակուեցան եւ նոր հորիզոններ բացին Յունաստանի մասնաճիւղերու գործունէութեանց առջեւ:

Դժբախտաբար, 1930ի Յունաստանի Ռ. Ողիմպիականը տեղի չունեցաւ նախատեսուած թուականին: Յունաստանի Նիր Իսթ Բիլիֆի ծախսերու մասնակցութեան խոստումը չիրագործուեցաւ եւ Հ.Մ.Ը.Մ.-ն իր Իսթ Բիլիֆ գործակցութիւնը վերջ գտաւ 1930ի կիսուն:

Սկսուտական

Շրջանային գործունէութիւն

Յունաստանի մասնաճիւղերու սկսուտական գործունէութիւնը համադրուեցաւ, 1925էն սկսեալ, Շրջանային Վարչութեան ճիգերով: Առաջին հերթին, 1925ի ամրան Շրջանային Վարչութիւնը 150 ձեռք զգեստներ պատրաստեց եւ բաժնեց Աթէնքի եւ շրջակայքի չորս մասնաճիւղերու սկսուտներուն:

Միջ-մասնաճիւղային առաջին բանակումը կազմակերպուեցաւ 1925ի ամրան, չորս մասնաճիւղերու կազմերուն մասնակցութեամբ՝ դէպի Կեսարիանի: Բանակումը վարեց աւագ խմբապետ Հայկ Տէտէեան: Երկօրեայ այս բանակումին, հետիոտն երթ ու դարձի աւարտին, խումբերը ընդհանուր յաղթական տողանցքով մը կը վերադառնան իրենց մասնաճիւղերը, մեծապէս խանդավառելով հայ եւ յոյն բազմութիւնները:

Նոյն ձեւի ընդհանուր բանակում մը կազմակերպուեցաւ նաեւ 26 Մայիս, 1926ին, կրկին չորս մասնաճիւղերու մասնակցութեամբ, նոյն վայրին մէջ:

2-6 Յուլիս, 1926ին, յունական սկսուտական կեդրոնի կազմակերպած ընդհանուր

բանակումին կը մասնակցի նաեւ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերէն 80 հոգինոց պատուիրակութիւն մը: Սոյն ելոյթի պաշտօնական հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 4 Յուլիսին, Սթատիոմի մարզադաշտին վրայ, հովանաւորութեամբ հանրապետութեան նախագահ Զօրավար Բանկալայի: Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտները կ'արժանանան ընդհանուրի գնահատանքին:

13 Մարտ, 1927ին, Հ.Մ.Ը.Մ.ի չորս մասնաճիւղերը, միատեղուած Ֆիքսի մարզադաշտին մէջ, կ'ընդունին յոյն սկսուտներու ընդհանուր խմբապետ Պրիսիմիծաքիսի այցելութիւնը: Ընդհանուր խմբապետը, ընթացիկ քննութենէն ետք, կը խոստանայ ամէն աջակցութիւն ընծայել Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտական կազմերուն:

25 Մարտ, 1927ին, Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտները մասնակցեցան Յունաստանի անկախութեան տարեդարձի տօնակատարութեան հանդիսութեանց: Այս առթիւ, մարզական խաղերուն 80 մ. վազքի Բ. հանդիսացաւ Լիբազմայի մասնաճիւղէն Պիմէն Գպրըզլեան:

1927ի Յունիսին, տեղի կ'ունենայ աստիճանաւորական արշաւ մը դէպի Տաֆնի: Այս առթիւ, տեղի կ'ունենայ Բ. եւ Ա. կարգի գիտելիքներու ուսուցում՝ սկսուտական գիտելիքներու ընդհանուր գործադրութեամբ:

12 Յունիս, 1927ին, Կեսարիանիի բանակումին մասնակցեցան Ֆիքսի եւ Սինկրուի մասնաճիւղի սկսուտները:

17 Յուլիս, 1927ին, Տաֆնիի մէջ տեղի կ'ունենայ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտական ընդհանուր բանակում՝ Աթէնքի շրջանի չորս մասնաճիւղերու մասնակցութեամբ: Այս բանակումը կ'ըլլայ կատարեալ յաջողութիւն մը: Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտութիւնը իր թեքնիք յաջողութիւններով կրնար մրցիլ լաւագոյն կազմերուն դէմ — [ԻԳ. 25]:

1930ական թուականներու սկզբնաւորութեան, սկաուտական գործունէութիւնը զգալի նահանջ կ'արձանագրէ: Յոյն սկաուտական կեդրոնը կը փորձէ իր հակակշռին տակ առնել Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու կազմերը: Այս եւ ներքին այլ պատճառներ կ'արգելակեն սկաուտական շարժման բնականոն յառաջդիմութիւնը:

Զգալի դժուարութիւնները կ'ունենան յատկապէս՝ Գավալայի, Ռեթիմնայի եւ Լարիասի կազմերը, հայութեան գաղթին պատճառով:

1934էն սկսեալ սկաուտական շարժումը վերակազմութեան շրջան մը կը բոլորէ:

1937էն սկսեալ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գործունէութիւնը կը վստահուի սկաուտական վերին մարմինի մը, որու առաջին կազմին կը մասնակցին՝

Հայկ Տէտէեան՝ ատենապետ եւ սկաուտական ընդհանուր պետ

Դանիէլ Դանիէլեան՝ Շրջ. Վարչութեան ներկայացուցիչ

Կարօ Գասապեան՝ ատենադպիր

Եղ. Սափրիչեան, Լ. Գապեան եւ Եղիա Թոմպալեան՝ խորհրդականներ:

Սկաուտական շարքերը բոլոր մասնաճիւղերէն ներս կը վերսկսին աշխատանքի մինչեւ Բ. Աշխարհամարտի սկզբնաւորութիւն:

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

Յունաստանի Շրջանային Վարչութեան կարեւոր իրականացումներուն մաս կը կազմէ շրջանի պաշտօնաթերթ՝ «Նոր Սերունդ»ի հրատարակութիւնը:

Պոլսէն հասնող սերունդը, Հ.Մ.Ը.Մ.ի շարքերու կազմակերպութեան կողքին, կարիքը կը զգայ ունենալու յունահայ մարզական յատուկ մամուլ:

Պաշտօնաթերթը լոյս կը տեսնէ 1926ի Մայիսէն սկսեալ, արտօնատիրութեամբ

Առաքել Պետրոսեանի եւ տնօրէնութեամբ Ստեփան Տամլամայեանի: Երկուքն ալ Շրջանային Վարչութեան կազմէն: Տամլամայեան այս իրականացման համար կը տրամադրէ նաեւ նիւթական օժանդակութիւն: Թերթին խմբագրութիւնը կը վարէ Ա.Ա. Յակոբեան: Առաջին տարին, թերթը լոյս կը տեսնէ 16 էջ բովանդակութեամբ, 10 ամսական թիւերով եւ վերջին՝ զոյգ թիւով (11-12): Տպարանն է «Կիւթեմպերկ», սեփականատէր՝ Կ.Ն. Մազասըճեան, գին՝ 5 տրախմի: Բ. տարին կը սկսի Մայիս-Յունիս 1927 միացեալ թիւով եւ միամսեայ 8 թիւերէ ետք, կ'աւարտի Նոյեմբեր-Դեկտեմբեր միացեալ թիւով՝ ընդհանուր 168 էջ բովանդակութեամբ:

«Նոր Սերունդ»ի տարածումը կ'ըլլայ շատ արագ: Բացի Յունաստանի զանազան շրջաններէ՝ առաջին թիւերէն սկսեալ թերթը կը վաճառուի արտասահմանի հայաշատ կեդրոններուն մէջ՝ Կիպրոս, Պոլիս, Միլանօ, Աղեքսանդրիա, Մարսէյ, Նիւ Եորք, Ֆիլատելֆիա, Մեքսիքօ, Գահիրէ, Փարիզ, Պուէնոս Այրէս, Գորտոպա, Լոնտոն, Պէյրութ, Եթովպիա, Թորոնթօ, Պաղտատ, Հնդկաստան, Ճավա: Թերթի մնայուն խմբագրական կազմի կողքին կ'աշխատակցին հետեւեալները.

Յովհաննէս Հինդլեան՝ սկաուտական շարժման օգտակարութիւն, մարզանքի ֆիզիքական եւ բարոյական օգուտները:

Ս. Շիթունի՝ բարոյագիտական

Արմենակ Տէր Յակոբեան՝ յուշեր պոլսական մարզական կեանքէն, սկաուտական թեքնիք ուսուցում

Դէտ՝ թարգմանական

Սկաուտ՝ սկաուտական շարժում

Մկրտիչ Մալումեան՝ մարզական թեքնիք ուսուցում

Տօքթ. Վ. Մարտիկեան՝ մարզանքի օգուտները, զգուշացում մոլութիւններէ

Մ.Յ. Աղասեան

Սկառու Տէտէ (Հայկ Տէտէեան)

Ս. Տամլամայեան՝ առողջապահական
Տօքթ. Գ.Օ. Գալուստեան՝ առողջապահական,
սննդագիտական, իգական մարզագիտութիւն

Վեր. Կ.Յ. Սթամպուլեան

Մ. Երկաթենց՝ Ֆրանսահայ թղթակցութիւն

Ռ. Եգիպտացի

Պատրիկ Սարգիսեան

Ալեքս՝ պոլսահայ թղթակցութիւն

Մոխրագոյն Գայլ, Հ. Փիրանեան՝
ռումանահայ թղթակցութիւն

Ս. Շմաւոնեան՝ ամերիկահայ թղթակցութիւն

Հրայր Պարթեւ՝ ծիծաղ

Օ. Եագմաճեան՝ բժշկական մարզանքներ

Սափրիչեան՝ յունահայ մարզական կեանքի տեղեկագրութիւն

Ողիմպոս՝ կիպրահայ թղթակցութիւն



Ս. Սրապեան՝ իտալահայ թղթակցութիւն

Խան՝ պարսկահայ թղթակցութիւն

Կ. Քոյունճեան՝ պելճիքահայ թղթակցութիւն

Ս. Բաբախեան՝ լիբանանահայ թղթակցութիւն:

«Նոր Սերունդ»ի հրատարակութիւնը
կը շարունակուի մինչեւ 1929 թուականը:



1.2.3.4.5. Տեսարաններ Յունասիայ Առաջին Ողիմպիական Խաղերէն: 6. Հ.Մ.Ը.Մ. Աթէնքի 1929ի ֆութպոլի առաջին խումբը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊԵԼՃԻՔԱ ԵՒ ԱՒՍՏՐԻԱ

- ՊՐԻՒՔՍԷԼ
- ՎԻԵՆՆԱ

ՊԵԼՃԻՔԱ

Հ.Մ.Ը.Մ.ի երեւումը Պելճիքայի մէջ առաջին անգամ տեղի ունեցաւ 1922ին, անուղակի կերպով, երբ Պոլսոյ կեդրոնին ուղղուած հրաւերին անսալով, Հ.Մ.Ը.Մ.ը սկստական ձեռնարկն աշխատանքներու կարեւոր թիւ մը ուղարկեց, ցուցադրուելու համար՝ 28 Մայիսէն 5 Յունիս Պրիւքսէլի մէջ կայանալիք Սկստական Միջազգային Յուցահանդէսին — [Դ. 296]:

ՊՐԻՒՔՍԷԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հ.Մ.Ը.Մ.ի Պրիւքսէլի մասնաճիւղը հիմնուեցաւ 1925ի սկիզբը, Գոյունեան Եղբայրներու եւ Գովանի նախաձեռնութեամբ:

Առաջին հերթին կը կազմուի Փուլպոլի խումբ մը, որ 1925ի եղանակէն սկսեալ կը միանայ Union Royale Belge des Sociétés de Football Association-ին եւ կը մասնակցի Պելճիքայի ախոյեանութեան մրցաշարքերուն՝ շարունակաբար չորս տարիներ:

1926ին, խումբը կը մասնակցի Groupement Corporatif de Barbaut-ի մրցաշարքին, ուր մասնակցող 12 խումբերու շարքին՝ միակը որպէս օտար խումբ՝ կը գրաւէ հինգերորդ պատուաւոր դիրքը: Յաղթական նոյն թափը կը շարունակուի 1927ի եղանակին: Սակայն, 1928-29 եղանակէն սկսեալ, խումբի լաւագոյն մարզիկներէն ոմանք լքելով Հ.Մ.Ը.Մ.ը կը միանան պելճիքական այլ ակումբներու կազմերուն, ինչ որ անկարելի կը դարձնէ նախկին յառաջդիմութիւններու ընթացքը: Փուլպոլի խումբի այս քառամեայ յաջողութիւններու կերտիչները եղան՝ խմբապետ Պաքրճեան, մարզիկներ՝ Մաճառեան, Մասէհեան եւ ուրիշներ: Անոնց ճիգերուն միացան վարչութեան ատենապետ Մուրատեանի, քարտուղար Կ. Գոյունճեանի եւ մատակարար Մ. Պալճեանի կազմակերպչական աշխատանք-

ները, ինչպէս նաեւ Մըսրեան եւ Չամբերթէն ընտանիքներու նիւթական օժանդակութիւնները: Այս յաջողութիւններուն հաղորդակից չեղաւ Պելճիքայի հայկական գաղութի զանգուածը եւ գործը ծանրացաւ մի քանիներու ուսին միայն: Պելճիքական մամուլը քաջալերական տողերով ներփողեց հայկական խումբի յաջողութիւնները — [ԻԳ. 112 եւ ԺԱ. 186]:

Հ.Մ.Ը.Մ.ի Պրիւքսէլի մասնաճիւղը, 1927էն սկսեալ, մշակեց նաեւ թենիսի ճիւղը: Այս աշխատանքը վարչութեան կողմէ վստահուեցաւ յատուկ յանձնախումբի մը: 1927ի Մայիս 25ին, Հ.Մ.Ը.Մ. իր դաշտին վրայ ընդունեց Անվերսի Հայ Երիտասարդական Միութեան թենիսի խումբը: Մրցումները վերջացան Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակով: Փոխվրէժի խաղերը կատարուեցան Յունիս 19ին, Անվերսի մէջ, եւ կրկին վերջացան Հ.Մ.Ը.Մ.ի թենիսմէներու յաղթանակով — [ԻԳ. 27]: Թենիսի ճիւղի այս յաջողութիւններու շարքը շուտով կանգ առաւ: Հազիւ երկու եղանակի գործունէութենէ ետք, յանձնախումբը ցրուեցաւ եւ վարչութիւնը նորը կազմելու կարելիութիւնները չունեցաւ:

Հ.Մ.Ը.Մ.ի Պրիւքսէլի մասնաճիւղի սկստական գործունէութիւնը կը սկսի աւելի ուշ եւ վերոյիշեալ պատճառներով կ'ըլլայ կարճատեւ: Այս մասին յատուկ տեղեկութիւններ կը պակսին:

Երկրորդ Ընդհանուր Պատերազմի սկիզբէն առաջ արդէն Պրիւքսէլի մասնաճիւղը կազմալուծ վիճակ մը կը ներկայացնէր:

ԱՒՍՏՐԻԱ

ՎԻԵՆՆԱ

Աւստրիոյ մայրաքաղաք Վիեննայի Հ.Մ.Ը.Մ.ի մասին մեր ունեցած միակ արձանագրութիւնը՝ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի

պաշտօնաթերթ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ Բ. Տարի
թիւ 4-ի մէջ՝ հետեւեալն է.

«Եղանակի վերջաւորութեան առթիւ, Հ.Մ.
Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղը իր ֆուլթայուիստ-
ներուն եւ համակիրներուն թէյասեղան մը տուած
է Հայ Լսարանին մէջ» — [ԻԳ. 44]:

Այս արձանագրութիւնէն ի յայտ կու

գայ, թէ 1927էն առաջ, Վիեննայի մէջ հիմ-
նրւած է Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ, որ մը-
շակած է մարզական ֆուլթայուի ճիւղը:

Դժբախտաբար, Վիեննայի Հ.Մ.Ը.Մ.ի
մասնաճիւղի գործունէութեան տարողու-
թեան եւ ժամանակաշրջանի մասին այլ ար-
ձանագրութիւններ չունինք:

ԼԻՔԱՆԱՆ

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԼԻՔԱՆԱՆ

- ՊԵՅՐՈՒԹ
- ԶԱՀԼԵ
- ԹՐԻՓՈԼԻ
- ՊԱԱԼՊԵՔ
- ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ
- ՌԱՅԱՔ



ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ

ԾՈՎ

Քրիստի

Լ Ի Ք Ա Ն Ա Ն

Պուրճ Համուտ

ՊէՅՐՈՒԹ

Զահլէ

ՊՈՒՆՏՈՒՄ
ՅԱՆՏՈՒՄ
ՎԵՐՄԵՆԻԱ
ՊԵՐՍԻԱ
ՍԻՆԻԱ
ՄԵՍՍՈՒՄ
ՊՈՒՆՏՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանի կազմութեան ընթացքը ուղղակիօրէն կապուած է Սուրիոյ շրջանի կազմութեան ընթացքին, իրականացած՝ 1926-1930 տարիներու ժամանակամիջոցին:

Աւելի ուշ, շրջանային նոյն կառոյցին մաս կազմած են Պաղեստինի եւ Յորդանանի մասնաճիւղերը: Այսպէս, ուրեմն, Շրջանը նախ կոչուած է Սուրիոյ եւ Լիբանանի Շրջան, ապա Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջան, յետոյ՝ Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Շրջան, ի վերջոյ կոչուելու համար՝ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջան: Երբ, 1971-ին, Հ.Մ.Ը.Մ.ի 19րդ Պատգամաւորական ժողովը նկատի առաւ նոյն շրջանին նաեւ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մասնաճիւղերուն մասնակցութիւնը, «Մերձաւոր Արեւելք»-ի կոչումը իրական պատկերը ներկայացնելէ դադրեցաւ, Շրջանային Վարչութիւնը կոչուեցաւ, պարզապէս՝ «Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւն», առանց յիշելու ենթակայ երկիրներու անունները:

1974ին, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցի կազմութենէն ետք միայն, Լիբանանի Շրջանը իրողապէս դարձաւ Լիբանանի մէջ գործող մասնաճիւղերու իւրայատուկ շրջան: Հետեւաբար, վերոյիշեալ անուանակոչումներուն տակ իրականացած շրջաններու կազմութեան եւ շրջանային գործունէութեանց մասին պիտի խօսինք ներկայ հատորի Դ. մասի «ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆԻՍԻՍԻՆ» Դ. գլուխին տակ, իսկ ներկայ գլուխին տակ պիտի ներկայացընենք Լիբանանի մասնաճիւղերու կազմութիւնն ու գործունէութիւնը՝ սկիզբէն մինչեւ 1939 թուականը:

ՊԷՅՐՈՒԹ

Հիմնադրութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի կազմութիւնը մտայղացումն ու իրականացումն է՝ 1922էն սկսեալ Պոլիսէն Պէյրութ գաղթած նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներու, որոնց ժամադրաւորը դարձած էր Մաարատի քովնտի փողոցի մը մէջ հայկական ճաշարան մը:

Այսպէս, 1924ի սկիզբը, Սամաթիոյ մասնաճիւղէն Ալպէր Յակոբեան Պէյրութի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնելու իր գաղափարը կը յայտնէ Բերա Շիշլի մասնաճիւղի մարզիկ Յարութիւն Պէօյիւքեանին, որ ծրագիրը կ'երկրորդէ: Այս ծրագրին կը միանան ժիրայր Ճիէրճեան, Սանթիկ Փուռեան, Ստեփան Գապարաճեան, ժիրայր Պալեան, Յակոբ Հայրապետեան, Հայկ եւ Կարապետ Պուտաքեան եղբայները: Վերջիններու շապկագործի աշխատանոցը առաջին խմորումներու հաւաքավայրը կը դառնայ: Այս խմբակը իր ծրագիրը ընդհանրացնելու նպատակով «Փիւնիկ» (հետագային՝ «Ազդակ») օրաթերթի միջոցաւ ծանուցում մը կը հրատարակէ եւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը կազմութեան համար անդամակցութեան կը հրաւիրէ հայ երիտասարդութիւնը — [Խ. 161-165]:

Շուտով, ծրագիրը կը զարգանայ եւ նորակազմ միութեան շարքերուն կը միանան Հ.Յ.Դ. պատանեկան միութեան ֆուլպոլի խումբի անդամներ՝ գլխաւորութեամբ Կարապետ Պետիկեանի եւ Ճիպէյլի «Թուչնոց Բոյն» որբանոցի նախկին սաներ՝ գլխաւորութեամբ Յովհաննէս Շահինեանի: 1924ի Օգոստոսին, Սբ. Նշան Ազգ. վարժարանի սրահին մէջ կը կայանայ անդ-

րանիկ անդամական ընդհանուր ժողովը, մասնակցութեամբ շուրջ 25 անդամներու*։ Անոնք, լսելէ ետք Պոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիր-կանոնագրի յօդուածներու տրամադրութիւնները, միաձայնութեամբ կ'որդեգրեն զայն եւ կ'ընտրեն առաջին վարչութիւնը՝ որ իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Ալպէր Յակոբեան
 Ատենադպիր՝ Կարապետ Պետիկեան
 Գանձապահ՝ Հայկ Պուտաքեան

Խորհրդականներ՝ Յարութիւն Պէօյիւքեան, Յովհաննէս Շահինեան, Ժիրայր Պալեան:

Վարչութիւնը իր ժողովները կը գումարէ Կարապետ Պետիկեանի բնակարանին մէջ, կամ Ամերիկեան համալսարանի սրահներէն մէկուն անկիւնը:

1925ին, վարչութիւնը յասուկ գրութեամբ կը դիմէ Կիլիկիոյ Սբ. Աթոռի հայրապետ Սահակ Բ. Կաթողիկոսին՝ հայցելով անոր օրհնութիւնն ու բարոյական օժանդակութիւնը: Նոյնիմաստ դիմումներ կը կատարուին Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական համայնքներու պետերուն:

Այնուհետեւ, Մերձաւոր Արեւելքի անդրանիկ մասնաճիւղի գործունէութիւնը օրէօր յաւելեալ թափ կը ստանայ, արձանագրելով նորանոր յաջողութիւններ եւ արմատացնելով կազմակերպչական, մարզական թէ սկստական իւրաքանչիւր նախաձեռնութիւն:

Կազմակերպչական գործունէութիւն

Ազգային թէ պետական վաւերացումները կը յաջորդեն Պէյրութի մասնաճիւղի կազմութեան առաջին քայլերուն: 1924ի անդրանիկ անդամական ընդհանուր ժողովէն ետք, մասնաճիւղը իւրաքանչիւր տարի

կը կազմակերպէ անդամական ընդհանուր ժողովներ՝ զանազան հարցերու քննութեան, զեկուցական կամ նոր աշխատանքներու նախաձեռնութեանց օրակարգերով: Վարչութեանց գործունէութեան ժամանակաշրջանի աւարտին կը կազմակերպուին նաեւ տարեկան անդամական ընդհանուր ժողովներ՝ քննելու համար վարչութեան գործունէութիւնը, ծրագրելու համար յաջորդ տարեշրջանի գործունէութեան նախագիծ եւ ընտրելու մասնաճիւղի նոր վարչութիւն:

Տարեկան անդամական ընդհանուր ժողովներէն կ'ընտրուին հետեւեալ վարչական կազմերը:

1924՝ ատենապետ՝ Ալպէր Յակոբեան
 Ատենադպիր՝ Կարապետ Պետիկեան
 Գանձապահ՝ Հայկ Պուտաքեան

Անդամներ՝ Յարութիւն Պէօյիւքեան, Յովհաննէս Շահինեան եւ Ժիրայր Պալեան:

1927, Մարտէն Հոկտեմբեր՝ ատենապետ՝ Ժիրայր Պալեան

Փոխ-ատենապետ՝ Վահան Մչիկեան
 Ատենադպիր՝ Պօղոս Եղիայեան
 Փոխ-ատենադպիր՝ Եփրեմ Էլլէզեան
 Գանձապահ՝ Արամ Քեհեայեան
 Գոյքապահ՝ Օշին Քեչիչեան

Խորհրդականներ՝ Յակոբ Հայրապետեան, Ալպէր Յակոբեան եւ Յակոբ Գասապեան — [ԻԲ. 11.7]:

1927-1928՝ ատենապետ՝ Ալպէր Յակոբեան

Ատենադպիր՝ Յակոբ Հայրապետեան
 Գանձապահ՝ Մարտիկ Պէյլէրեան

Անդամներ՝ Ժիրայր Պալեան, Արամ Քէհեայեան, Հայկ Պուտաքեան, Տօքթ. Ատոմ Գարազաչեան:

1928-1929՝ ատենապետ՝ Արամ Քիւրտեան

* Ըստ Կարապետ Պետիկեանի 1973ին գրի առած նօթերուն, այս ժողովը գումարուած է 1924ի գարնան, Հայկ Պուտաքեանի շապկագործարանին մէջ [ԽԸ/ 10.11. 1976]:

Ատենադպիրներ՝ Վահան Թորոսեան, եւ
Կարօ Պուտահասեան

Գանձապահ եւ սկաուտական նուագա-
խումբի ներկայացուցիչ՝ Մարտիկ Պէյլէր-
եան:

1929-1930՝ ատենապետ՝ Արամ Բիւրտ-
եան

Ատենադպիր՝ Կարօ Պուտահասեան
Գանձապահ՝ Օննիկ Պէօճէքեան
Խորհրդականներ՝ Վահան Ղազէրեան
Աթլեթիզմ՝ Օննիկ Փիլիկեան
Խորհրդական՝ Թադէոս Գարագալբաք-
եան

Ֆուլթպոլ՝ Շաւարշ Պեքեարեան:
1930, Յոլլիս/Օգոստոս՝ ատենապետ՝
Ռուբէն Աւետիսեան

Փոխ-ատենապետ՝ Պերճ Աւետիսեան
Ատենադպիր՝ Թադէ Գարագալբաքեան
Գանձապահ՝ Գառնիկ Ազիրեան
Ֆուլթպոլ՝ Կարօ Պատուհասեան
Աթլեթիզմ՝ Պօղոս Շահինեան:
Սկաուտական խմբապետ՝ Յովհաննէս
Սերոբեան:

1930 Օգոստոս — 1931՝ ատենապետ՝
Օննիկ Պէօճէքեան

Գանձապահ՝ Պերճ Աւետիսեան: Հիմ-
նական դիւանի կազմը վերակազմութեան
կ'ենթարկուի Գառնիկ Ազիրեանի հրաժա-
րումով:

1931-32՝ ատենապետ՝ Յակոբ Աճեմ-
եան

Ատենադպիր՝ Թադէ Գարագալբաքեան
Գանձապահ՝ Մարտիրոս Ճամպուլեան
Ֆուլթպոլ՝ Վահրամ Զոքքարեան
Աթլեթիզմ՝ Կարօ Պատուհասեան
Սկաուտական՝ Պատրիկ Տէրպապեան
Գոյքապահ՝ Ֆերտինան Քէհեայեան:
1933-34*

1934-35՝ ատենապետ՝ Մանուկ Տէօվլէ-
թեան

Ատենադպիր՝ Հայկազ Աֆարեան:
1935-1936 Յոլլիս՝

Ատենապետ՝ Օննիկ Պէօճէքեան
Ատենադպիր՝ Ս. Աֆարեան
Գանձապահ՝ Պօղոս Շահինեան
Մարզական պատասխանատու՝ Բիւզանդ
Մխսաւետիքեան

Գոյքապահ՝ Պարգեւ Շամլեան
Ֆետերասիոնի ներկայացուցիչ՝ Մար-
տիրոս Ճամպուլեան

Սկաուտ խմբապետ՝ Լեւոն Արգարեան:
1936-37՝ ատենապետ՝ Յովհաննէս Շա-
հինեան

Ատենադպիր՝ Պօղոս Ժամկոչեան
Գանձապահ՝ Ֆէրտինան Քէհեայեան
Մարզական պատասխանատու՝ Սամուէլ
Գալուստեան

Ֆետերասիոնի ներկայացուցիչ՝ Մար-
տիրոս Ճամպուլեան

Գոյքապահ՝ Պարգեւ Շամլեան
Խորհրդական՝ Հայկազ Աֆարեան:

1938-39՝ ատենապետ՝ Վահրամ Կիւրճ-
եան

Ատենադպիր՝ Վահան Մչիկեան
Անդամներ՝ Հայկազ Զէօփճեան, Վահ-
րամ Ս. Փափազեան, Օննիկ Պասմաճեան,
Հայկազ Աֆարեան, Լուիսֆիկ Կէօնճեան եւ
Զոհրապ: 1938ի կիսուն, Վահրամ Ս. Փա-
փազեանը կը փոխարինուի Սեպուհ Եղ-
բայրեանով:

Անդամական վիճակ

Անդամական թիւի աճը ուղիղ կը հա-
մեմատի ժամանակի ընթացքին հետ: Ստո-
րեւ, կարգ մը տարիներու անդամական ընդ-
հանուր պատկերը:

* Հակառակ մեր պրպտումներուն կարելի չեղաւ 1933-34 տարեշրջանի վարչական անդամներու անուանացանկը
ապահովել:

1924՝ 25 անդամ.

1930՝ 190 անդամ, որոնցմէ 60 սկա-
ուտներ.

1932՝ 167 անդամ, որոնցմէ 52 սկա-
ուտներ եւ 115 մարզիկ եւ օժանդակ

1934՝ 210 անդամ, որոնցմէ 60 սկուտ
եւ 150 մարզիկ եւ օժանդակ

1935՝ 150 գործօն անդամ, առաւել
մարզիկներ եւ սկաուտներ

1937՝ 256 գործօն, առաւել մարզիկներ
եւ սկաուտներ

1939՝ 367 անդամ:

Իւրաքանչիւր անդամի կը տրուի յա-
տուկ անդամատետր՝ իր նկարով եւ անդա-
մատուրքերու վճարման արձանագրութեամբ,
վաւերացուած վարչութեան դիւանին կող-
մէ:

Երբեմն, անդամական վիճակը կը հան-
դիպի դժուարութիւններու, յատկապէս ֆուլ-
պոլիստներու փոխանակութեան ընթաց-
քին, երբ պայքար կը բացուի Հ.Մ.Ը.Մ.ի
դէմ, օրինակ՝ 1927ին «Սիսուան» ֆուլպոլի
խումբի կողմէ բացուած պայքարը:

Օժանդակ յանձնարումքեր

Վարչութեան օժանդակ յանձնարում-
քերու կազմութիւնն ու գործունէութիւնը
նոյնանման չէ եղած տարիներու ընթաց-
քին: Վարչութիւններ՝ համաձայն օրուան
կարիքներուն, նշանակած են սկաուտական
խորհուրդներ, մարզական, ընկերային եւ
ակումբի յանձնարումքեր, ինչպէս նաեւ
զանազան ձեռնարկներու առիթներով՝ յա-
ռաջացուած յատուկ յանձնարումքեր:

Սկաուտական խորհուրդներու կազ-
մերէն կարելի է արձանագրել հետեւեալ-
ները.

1934 Յունիսէն Հոկտեմբեր՝ ատենա-
պետ՝ Վահրամ Փափազեան

Փոխ-ատենապետ՝ Տօքթ. Երուանդ Ճի-
տեճեան

Ատենադպիր՝ Պէյլէրեան
Գանձապահ՝ Օննիկ Պասմաճեան
Գոյքապահ՝ Բիւզանդ Մխսաւետիքեան
Խորհրդական՝ Կարապետ Մեծօրուք-
եան եւ Արսէնեան: Յուլիսին Մխսաւետիք-
եան եւ Մեծօրուքեան կը դադրին մաս
կազմելէ: Նոր անդամ կը նշանակուի Լու-
տեր Սանտունի:

1934 Հոկտեմբեր - 1935 Յունիս՝
ատենապետ՝ Վահրամ Փափազեան
Փոխ-ատենապետ՝ Տօքթ. Երուանդ Ճի-
տեճեան

Ատենադպիր՝ Հայկազ Թերզեան
Գանձապահ՝ Թադէ Գարագալբաքեան
Սկաուտ խմբապետ՝ Լեւոն Աբգարեան:
1936՝ ատենապետ՝ Լուսիկ Կէօնճեան
Ատենադպիր՝ Տիգրան Ոսկերիչեան
Անդամ՝ Թադէ Գարագալբաքեան: Վեր-
ջինս շրջանի աւարտէն առաջ կը հրաժարի:

1937՝ նախագահ՝ Սիմոն Թերճանեան
(Շրջ. սկ. խմբապետ)

Ատենապետ՝ Թադէ Գարագալբաքեան
Փոխ-ատենապետ՝ Լուսիկ Կէօնճեան
Ատենադպիր՝ Տիգրան Ոսկերիչեան
Գոյքապահ՝ Կարապետ Մեծօրուքեան:
1938՝ ատենապետ՝ Մանուկ Տէօվլէթ-
եան

Քարտուղար՝ Վահրամ Ս. Փափազեան
Գոյքապահ՝ Զաւէն Փեհլիվանեան
Ընդհանուր խմբապետ՝ Լեւոն Աբգար-
եան

Վարչութեան ներկայացուցիչ՝ Յովհան-
նէս Ժամկոչեան:

Ակումբներ եւ մարզադաշտեր

Մասնաճիւղի վարչութիւնները սկիզբը
իրենց հաւաքոյթները ունեցան վարչական
անդամներու գործատեղիներու կամ բնա-
կարաններուն մէջ: 1929ի վերջաւորութենէն
սկսեալ, վարչութիւնը իր նիստերը գու-
մարեց Սբ. Նշան Ազգային վարժարանի

սենեակներէն մէկուն մէջ: 1930ին միայն կարելի եղաւ ունենալ իւրայատուկ ակումբ՝ Սբ. Նշան եկեղեցւոյ շրջանակէն ոչ հեռու, Պէյրուսի ներկայ կեդրոնական նամակատան եւ ներքին նախարարութեան պալատին միջեւ վայր մը, հայ ընտանիքի մը բնակարանին մէկ բաժնին մէջ՝ որպէս պաշտօնական վարձակալ: Ակումբի բացումը տեղի ունեցաւ 27 Նոյեմբեր, 1930ին:

Սահմանափակ տարածութեամբ այս ակումբը ծառայեց մինչեւ 1937 թուականը, երբ վարձուեցաւ Մար Իլիաս թաղի ակումբը:

Մարզադաշտերու հարցը մեծ մտահոգութիւն էր վարչութեան համար: Առաջին խաղերն ու փորձերը տեղի կ'ունենային Քարանթինայի բաց հողամասերուն վրայ: Ողիմպիական խաղերու եւ հրապարակային մարզական ելոյթներու թատր ծառայեց Ֆրանսական բանակի հարիւրապետ Լավոյի բարեացակամութեամբ տրամադրուած Ռաս Պէյրուսի դաշտը, իր կազմածներով միասին:

Մարզադաշտերու սկիզբի դժուարութիւնները յաղթահարելու համար, 1927ի վերջաւորութեան վարչութիւնը կը յաջողի վարձել ֆուլթայլի ընդարձակ դաշտ մը, ուր միութեան գործօն անդամները կը հաւաքուին եւ խումբերը կը կատարեն իրենց փորձերը: Դաշտը, որ կը գտնուէր Ֆրըրըն Շպէքի շրջանին մէջ, կը հարթուի վարչութեան կողմէ:

1935ին, կը վարձուի երկրորդ ֆուլթայլի դաշտը Գարագօլ Տրիւզի շրջանին մէջ: Մարզադաշտի հարթումին եւ թրիպիւնի շինութեան պիւտճէն կը հայթայթուի փոխառութիւններով եւ, 1936ին, տեղի կ'ունենայ դաշտի բացումը: Այս դաշտը պիտի ծառայէր մինչեւ 1942 թուականը: Այդ թուականին Ֆրանսական գինուորական ուժերը դաշտը ինքնաշարժներու կայանի կը վերածեն:

1937ին, կը վարձուի նաեւ Մար Իլիասի թաղի մէջ գտնուող Tennis Club-ի դաշտը իր պարտէզով եւ հաւաքավայր սրահով: Թենիսի դաշտի վերակառուցումէն ետք պարտէզի բաժնին մէջ կը շինուի նաեւ պասքեթպոլի դաշտը: Խնամքով բարեզարդուած, այս կեդրոնական դիրք գրաւող ակումբը լայնօրէն պիտի ծառայէր մասնաճիւղի բոլոր տեսակի կարիքներուն՝ մարզական, ընկերային, սկաուտական թէ կազմակերպչական գետիններու վրայ:

Նիւրակաս

Մասնաճիւղի նիւթական միջոցները սկիզբը կ'ըլլան շատ համեստ:

Անդամներու կողմէ վճարուած անդամատուրքերու գումարը մասնաճիւղի գործունէութեան կարիքներու փոքր տոկոսը միայն կը ծածկէ: Յաջորդական վարչութիւնները կը կազմակերպեն հասուլթաբեր զանազան ձեռնարկներ, որոնք, նիւթականի կողքին, բարոյական յաղթանակներու կը վերածուին, ծառայելով մասնաճիւղի լայն ծանօթացման: Համակիրներու եւ քաջալերողներու զանգուածներ կը հաւաքուին միութեան շուրջ: Արձանագրութեան արժանի են 1928ին 1սդ. արժէքով վիճակահանութեան տոմսերու սպառումը, որմէ՝ միայն էչրէֆիէի թաղամասին մէջ՝ Միսաք Սիմոնեան իր ընկերներով կը յաջողի սպառել 1460 տոմս:

Մասնաճիւղի անդամներ Նոր Տարուան եւ Սբ. Մննդեան առթիւ կը շրջին տունէ-տուն եւ ժապաւինեալ տետրի մը մէջ կ'արձանագրեն հայ ընտանիքներու կողմէ քաջալերական նուիրատուութիւնները, օժանդակելու համար մասնաճիւղի ծախսերուն:

Նման ձեռնարկներ կը ծառայեն մասնաճիւղի գանձի ուճացման եւ պիւտճէական բացերը գոցելու: Այս շարքին մէջ յատուկ տեղ կը գրաւեն, 1936էն սկսեալ,



ՀԱՅ. ՄԱՐՄ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹ.

ՊԵՅՐՈՒԹԻ Մ. ՃԻՒՂ

Դ. ՏԱՐԵԿԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ



3 ՆՈՅՄԵՐԵՐ 1929 ԿԻՐԱԿԻ Կ. Վ. ԺԱՄԸ ԶԻՆ

ՐԱՍ — ՊԵՅՐՈՒԹ ՖՐԱՆՄԱԿԱՆ ՄԱՐԶԱՐԱՆԻՆ ՄԷՋ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՈՐԲ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԻ

ԾԱՆՈԹ :— Պապ—Իսարիա Քաբիւսիներու եկեղեցիին առ-
ջեւէն անձ գլուխ 7 Ս. Դ. օթօմօպիլներ ժողովուրդը կը փոխա-
դրեն մարգաղաշտ:

Տպարան ԱԶԴԱԿ Ի Պէյրուք

Պէյրուքի Հ.Մ.Ը.Մ.-ի տարեկան Դ. ողիմպիական խաղերու յայտագիրը

տարեկան քերմէսները, որոնք 1937 եւ 1938 տարիներուն կը կազմակերպուին Պէյրուսի հանրային պարտէզի գեղատեսիլ շրջանակին մէջ, իսկ 1939ին՝ նոր վարձուած ակումբի պարտէզին մէջ:

Նիւթական հաշիւները կը ներկայացընեն հետեւեալ պատկերը.

1934ի պիւտճէն է՝ շուրջ 500 լիբ. ոսկի [2. 126]:

1937-38՝ մուտք՝ 1796,23 լ.ո., ելք՝ 1727,71:

1938ի քերմէս գուտ շահ՝ 560 լ.ո.:

1939՝ մուտք՝ 3471,88 լ.ո., ելք՝ 3220,24 լ.ո.:

Ողիմպիական խաղեր եւ արեւթիզմ

Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան կարեւորագոյն խթանը հանդիսացաւ մասնաճիւղի կազմակերպած առաջին ողիմպիական խաղերը: Այս խաղերը, որպէս հրապարակային անդրանիկ ձեռնարկ, եկան փաստելու, թէ Հ.Մ.Ը.Մ.ը կարեւոր դեր ունի կատարելիք նոր զարգացող պէյրուսի թահայ կեանքէն ներս:

Ողիմպիական առաջին խաղերը տեղի ունեցան 1925ի գարնան՝ Մայիսի 17ին, մասնակցութեամբ Անթիլիասի Նիր Իսթ Րիլիֆ որբանոցի նուագախումբին եւ հայ կաթողիկէ որբանոցի սկաուտական խմբակին: Պէյրուսի թահայութեան ընտրանիին կողքին, խաղերուն ներկայ գտնուած է հայ թէօտար հետաքրքիր բազմութիւն մը: Ընդհանուր տողանցքէն ետք տեղի ունեցած են աթլետիք մրցումներ, որմէ ետք, Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին եւ երկրորդ կազմերը ֆուտպոլի մրցում մը ունեցած են, 3-1 Ա. կազմի յաղթանակով — [ԻԵ/7.8]:

Օրուան ախոյեան կը հանդիսանայ Յովհաննէս Շահինեան:

Այս ելոյթի յաջողութենէն քաջալերուած, մասնաճիւղը կը կազմակերպէ տա-

րեկան ողիմպիական խաղեր, Ռաս Պէյրուսի զինուորական DIM-ի մարզադաշտին վրայ՝ տարուէ տարի աւելի կազմակերպուած եւ բազմանդամ մասնակցութեամբ:

Տարեկան Բ. ողիմպիական խաղերը տեղի կ'ունենան 3 Հոկտեմբեր, 1926ին. օրուան ախոյեան՝ Յովհաննէս Շահինեան:

Տարեկան Գ. ողիմպիական խաղերը տեղի կ'ունենան 1927ին. օրուան ախոյեան՝ հաւասարապէս՝ Հայկազ Տէր Մանուէլեան եւ Արմէն Գուլումճեան:

Տարեկան Դ. ողիմպիական խաղերը տեղի կ'ունենան 3 Նոյեմբեր, 1929ին:

Այս խաղերու կազմակերպումին առընթեր կը զարգանան նաեւ մասնաճիւղի աթլետներու թեքնիք արդիւնքները: 1932-33 տարեշրջանին բազմաթիւ մրցանիշներ կը բարելաւուին:

Մասնաճիւղի աթլետներէն Օննիկ Փիլիկեան՝ 110մ. արգելարշաւի, Արսէնեան՝ 200մ. վազքի եւ Յակոբ Գատեան՝ 1500մ. վազքի Սուրիոյ եւ Լիբանանի միջազգային ախոյեաններն են:

Ընդհանրութեան մէջ աթլետիզմի ճիւղը սահմանափակ ձեւով կիրարկուած է մասնաճիւղի մարզիկներուն կողմէ՝ յատուկ դաշտի եւ սարքաւորումներու պակասին պատճառով: Համալսարանական շրջանակներու մէջ, անհատական ճիգերով մարզուած անդամներն են միայն, որ խօսիլ տրուած են իրենց մասին:

Պէտք էր սպասել քառասունական թրւականները, որպէսզի ծրագրուած ձեւով կիրարկուէր աթլետիզմի ճիւղը, մասնաճիւղի անդամներուն կողմէ:

Մարմնամարզ (ճիմնասրիք եւ մարմնամշակում)

Որպէս փակ սրահի մէջ կիրարկուող մարզաճիւղ, մարմնամարզի ճիւղը բազմաթիւ հետեւորդներ կ'ունենայ Պէյրուսի

մասնաճիւղէն ներս: Ճիմնասթիքի հետեւողներու թիւը իր բարձրագոյնին կը հասնի 1938-39 տարեշրջաններուն, ղեկավարութեամբ մասնագէտ եւ ակտիւ մարզիկ ծորճ Մանուկեանի, որուն շուրջ կը բոլորուին աւելի քան 40 մարզիկներ: Մարմնամարզի ճիւղին հետեւող մարզիկներու ելոյթները բացառիկ փայլ կու տան Պէյրուսի մասնաճիւղի հրապարակային ելոյթներուն: Ծորճ Մանուկեանի բացառիկ յաջողութիւնները առիթ կը ստեղծեն, որ ենթական, վարչութեան քաջալերանքով, 1939ին մասնակցի Ֆրանսայի մէջ միջազգային մարմնի գեղեցկութեան մրցումին, ուր ան կը յաջողի գրաւել երրորդ խիստ պատուաբեր դիրքը:

Ֆուտպոլ

Պէյրուսի մասնաճիւղի հիմնադրութեան առընթեր, առաջին գործնական քայլը

պիտի ըլլար ֆուտպոլի խումբի կազմութիւնը: Հիմնադիրները ֆուտպոլի սիրահարներ էին:

1925ի ֆուտպոլի առաջին խումբին մաս կը կազմեն՝ Ժիրայր Ճիէրճեան, Եզնիկ Քէշիշեան, Կիւպէնկ Կիւպէնկեան, Օննիկ Փիլիկեան, Պօղոս Շահինեան, Արսէն Գրիգորեան, Յովհաննէս Շահինեան, Յակոբ Աճեմեան, Վահրամ Զոքքարեան, Աւետիս եւ Հայկ Պուտաքեաններ: Այս խումբը շուտով խօսիլ կու տայ իր մասին, մասնակցելով միջ-ակումբային եւ միջ-զինուորական խումբերու մրցաշարքերուն եւ ակտիւանական մրցումներուն:

1926ի կազմը կը յաջողի պարտութեան մատնել «Իւնիոն Սբորթիվ»ի Լիբանանի ակտիւան կազմը: Հ.Մ.Ը.Մ.ի խումբը կը բաղկանայ հետեւեալներէն. բերդապահ՝ Մուրատ Մուրատեան, յետսապահներ՝ Հայկ եւ Կարապետ Պուտաքեաններ, միջնապահ-



Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի առաջին խումբը 1931-ին:
Կեդրոնը ծունկի՝ Օճնիկ Կէպրէկեան անոր ձախիճ՝ Օճնիկ Փիլիկեան

ներ՝ Յակոբ Աճեմեան, Արսէն Գրիգորեան եւ Յովհաննէս Շահինեան, յառաջապահներ՝ Կ. Ճապատեան, Ե. Իստամեան, Ժիրայր Ճիէրճեան, Պողոս Շահինեան, Օննիկ Փիլիկեան, խմբապետ՝ Յովհաննէս Ժամկոչեան — [Ի/7.14]:

1927ի ախոյեանական մրցումներուն, ուր կը մասնակցին 15 ակումբներ, Հ.Մ. Ը.Մ.ը կը գրաւէ երկրորդ դիրքը — [ԻԳ. 133]: Նոյն տարուան Չատկուան տօներուն առթիւ, ֆութպոլի խումբը կը մեկնի Հալէպ տեղւոյն մասնաճիւղի կազմին դէմ մըրցելու: Խանդավառ մթնոլորտի մէջ կայացած այս մրցումը վերջ կը գտնէ 1-0 արդիւնքով եւ Պէյրուսի կազմի յաղթանակով: Խումբը կը տիրանայ «Ազդակ» օրաթերթի տրամադրած յաղթանակի բաժակին:

Պէյրուսէն Հալէպ այս տեղափոխութիւնը հիմը պիտի ըլլար հետագային աւանդութիւն դարձած Չատկական միջ-մասնաճիւղային խաղերուն:

Խումբին մաս կը կազմեն՝ բերդապահ՝ Կարպիս Մերտինեան, յետսապահներ՝ Հայկ Պուտաքեան եւ Յարուսթիւն Օղլաքեան, միջնապահներ՝ Արսէն Գրիգորեան, Ստեփան Ոսկանեան եւ Յակոբ Աճեմեան, յառաջապահներ՝ Պողոս Շահինեան, Օննիկ Փիլիկեան, Վահան Մչիկեան, Եփրեմ Էլլէզեան եւ Յովհաննէս Շահինեան — [Խ. 178]: Վարչութիւնը Ա. խումբի կողքին կը կազմակերպէ նաեւ պահեստի եւ Բ. դասակարգի խումբեր, որոնք շտեմարանը պիտի դառնան յաջորդող տարիներու Ա. խումբի կազմերուն:

1930ի պահեստի խումբի անդամներն էին՝ Յարուսթիւն Պզտիկեան, Լեւոն Էքմէքճեան, Հրանդ Տոսթումեան, Հայկազ Տէր Մանուէլեան, Շմաւոն Պապիկեան, Համբարձում Յակոբեան, Խաչատուր Պոյաճեան, Արմենակ Անթիքաճեան, Հրաչ Աչճեան, Հայկազ Զէօփճեան եւ Ներսէս Գա-

զեզեան: Ֆութպոլի խումբերու ընդհանուր խմբապետ՝ Վ. Ղազէրեան:

1931ի առաջին խումբի անդամներն են՝ Արսէն Գրիգորեան, Կարպիս Մերտինեան Յարուսթիւն Զեմքերթէնեան, Հայկազ Տէր Մանուէլեան, Շաւարշ Պեքարեան, Յակոբ Աճեմեան, Օննիկ Փիլիկեան, Եփրեմ Էլլէզեան, Օննիկ Կէվրէկեան, Հրաչ Եանըքեան եւ Ներսէս Գազեզեան:

1932-33 տարեշրջանին մասնաճիւղը ունի ֆութպոլի երեք կազմեր. Ա. խումբ, պահեստ եւ Բ. խումբ: Այս խումբերը բարեկամական մրցումներ կ'ունենան տեղական խումբերու դէմ, ինչպէս նաեւ՝ Դամասկոսի, Չահլէի եւ Թրիփոլիի մասնաճիւղերու խումբերուն դէմ: Ա. խումբը կը մասնակցի նաեւ միջ-մասնաճիւղային հինգերորդ խաղերուն՝ Հալէպ: Սակայն, Ա. խումբի խաղացողներէն կարեւոր ուժերու Դամասկոս մեկնումին պատճառով, ախոյեանական մրցումներուն խումբը պարտութիւններ կ'արձանագրէ եւ կը վտանգուի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին դասակարգի մէջ մնալու իրաւունքը: Այս առթիւ է որ միութեան կը միանան Չափահաս Որբերու «Վահագն» եւ Լիկայի «Աստղ» խումբի մարզիկները, ընդառաջելով վարչութեան հրաւերին:

Պէյրուսի կազմը այս ձեւով, աւելի քան երեք, կը զօրանայ եւ նոր օղակներ կ'աւելցընէ յաղթանակներու իր շղթային: «Վահագն»ի կազմէն Հ.Մ.Ը.Մ.ի կը միանան՝ Գեղամ Բարսեղեան, Լուտեր Եարտրմեան, Արմենակ Թիւֆենքճեան, Ոսկան Օհանեան, Խորէն Աւետիքեան, Հրանդ Տոսթումեան եւ Պետրոս Սետեֆեան, իսկ «Աստղ»էն՝ Սարգիս Պուտաքեան, Սամուէլ Անդրանիկեան, Փայլակ Թիթոյեան, Պատրիկ Ճնկրեան եւ Սարգիս Տէվէլեան: Յաջորդող տարիները առիթ կը ստեղծեն այս միացեալ ուժերու ներդաշնակ խաղարկութեան:

1937ի առաջին խումբի կազմն է՝

Պետրոս Սետեֆեան, Սարգիս Տէվէլեան, Պետրոս Անտոնեան, Հրանդ Տոսթումեան, Միհրան Էօրէճեան, Լուսէր Եարտմեան, Վահան Գրոշեան, Սարգիս Պատագեան, Սմբատ Մկրտիչեան, Սամուէլ Անդրանիկեան, Արմենակ Թիւֆէնքճեան, Գեղամ Բարսեղեան եւ Փայլակ Թիթոյեան:

Բ. խումբը կը կոչուի «ՄՈՒՐԱՏ»: խմբապետն է Յովհաննէս Ժամկոչեան: Խումբի մարզիչն է սկիզբը Եղիշէ Մանուկեան, ապա անոր Հայֆա մեկնումէն ետք Հրանդ Տոսթումեան:

Գ. խումբը կը կոչուի «ՆԵՏ»:

Պասքեթպոլ

1937էն սկսեալ, Պէյրուսի մասնաճիւղը պասքեթպոլի ճիւղը պաշտօնապէս կ'որդեգրէ որպէս մարզական նոր ճիւղ, ֆուտպոլի եւ աթլետիկայի կողքին: Այս նպատակով կը նշանակուի պասքեթպոլի յատուկ յանձնախումբ:

Մասնաճիւղի անդրանիկ խումբին մաս կը կազմեն՝ Նուպար եւ Յովսէփ Խաչատուրեան եղբայրներ, Խաչիկ Խաչատուրեան, Յակոբ Գեղունի եւ Վահրամ Պագամճեան:

Նոր հիմնուած այս խումբին՝ 1939ին կը միանայ Համազգայինի ձեմարանի աշակերտներէն բաղկացած «Կամք» խումբը՝ իր զօրաւոր խաղացողներով:

Նոյնպէս, 1939ին, խումբի ղեկավարութիւնը կը ստանձնէ Յակոբ Գատեան, որպէս փորձառու մարզիկ եւ մարզիչ: Նորակազմ այս խումբի յաջողութիւնները երկար ժամանակ խօսիլ պիտի տային իր մասին:

Յակոբ Գատեանի յաջող ղեկավարութեան ներքեւ, նոյն օրերուն պիտի կազմուէր Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի աղջկանց խումբը:

(Այս ճիւղի զարգացման մասին տեսնել Բ. հատորը):

Թենիս

1935էն սկսեալ, մասնաճիւղի մարզիկները հետաքրքրութիւն ցոյց կուտան թենիսի հանդէպ — [ԽԶ/26 Ապրիլ, 1935]:

1937ին, Մար Իլիաս Թաղի «Թենիս Քլիւպ» մարզավայրի ձեռքբերումը այդ հետաքրքրութեան գոհացում կու տար: Վարչութիւնը անմիջապէս կը նշանակէ թենիսի յանձնախումբ մը:

Յանձնախումբի առաջին գործը կ'ըլլայ թենիսի դաշտի նորոգութիւնը եւ թենիսի կիրարկման փորձերու ժամերու դասաւորումը: Հետաքրքիր անդամներու հոյլ մը կը բոլորուի այս ճիւղին շուրջ: Իաշտը ժամադրավայր կը դառնայ նաեւ ոչ-Հ.Մ. Ը.Մ.ական թենիսմէններու: Թենիսի ճիւղը օրէ-օր կը զարգանայ: Յանձնախումբը կը կազմակերպէ ներքին եւ միջ-ակումբային մրցաշարքեր:

1939ի միջ-մասնաճիւղային խաղերուն առթիւ, որոնք այդ տարուայ Սբ. Զատկըւայ առթիւ Պէյրուսի մէջ տեղի կ'ունենային, թենիսի խումբը կը մասնակցի Շրջանային Վարչութեան կազմակերպած մրցաշարքին:

Հեծելարշաւ

Հեծելարշաւի ճիւղը Պէյրուսի մասնաճիւղի առաջին մշակուած մարզական ճիւղերէն եղաւ: Արդարեւ, 1931էն սկսեալ, կը հանդիպինք մասնաճիւղի ձեռք բերած յաջողութիւններուն՝ Պէյրուս-Ռայաք գծին վրայ կազմակերպուած մրցումներու ընթացքին:

Այս ճիւղի զարգացման կը նպաստէ, առաջին հերթին, Ռայաքէն՝ Յակոբ Պալլքճեանը, որ 1931-1937 կը մնայ Լիբանանի անպարտելի ախոյեանը: Յակոբ Պալլքճեանին կը յաջորդէ իր կրտսեր եղբայրը՝ Օննիկ, որու յաղթական արդիւնքները

A-1-37 Համձուներ

Հարձակ

Այ. Օրսուրյան Ինժ. Գրասենյակ

Հասցե: Բ. Մ. Գ. Մ. Ի. Բնակարան

Արմավիր

Կրթ. Ինժ.

Մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի համար:

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին -

Գ. Մ. Գ. Մ. Ի. Բնակարանի մասին:

Մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին:

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին -

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին:

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին -

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին:

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին -

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին:

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին -

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին:

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին -

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին:

Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին և մասնագիտ. Կրթ. Ինժ. Գրասենյակի մասին -

Հրատարակչի Գրասենյակ
Արմավիր

պատճառ կը դառնան որ 1939ին ենթական հրաւիրուի Ֆրանսա, մասնակցելու միջազգային մրցումներու: Դժբախտաբար, Համաշխարհային Բ. Պատերազմի ծագումով Օննիկ չի կրնար իրականացնել այս ճամբորդութիւնը: Սակայն, այդ թուականէն սկսեալ Օննիկի շուրջ կը հաւաքուին նորեկ մարզիկներ, որոնք ապագային Պէյրուսի մասնաճիւղի հռչակաւոր հեծիկի խումբերը պիտի կազմէին — [Խ. 229]:

Յոյց տալու համար Հ.Մ.Ը.Մ.ականի գաղափարապաշտ ոգին, հոս տեղին է վերարտադրել Եգիպտոսի 1930ական թուականներու անպարտելի ախոյեան Հ.Մ.Ը.Մ.ական Յակոբ Ղազարեանի նամակը՝ ուղղուած Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի վարչութեան:

4-1-1937 Համմանա

«Յարգելի

Պ. Գասպար Իփէկեան

Նախագահ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին

Պէյրուս»

«Ազնի Տէ՛ր,

«Գրութեանս հետ կը ստանաք եռագոյն շապիկ մը: Ատիկա կը դրկեմ ձեզի այն խրհորանքով որ բարի ըլլաք յանձնելու Հ.Մ.Ը.Մ.ի հեծելանիւթի ախոյեանին:

«Մօտաւորապէս չորս (4) տարի, ես արդար հպարտութիւնը ունեցայ կրելու զայն եւ անոր պատիւը բարձր բռնելու Եգիպտոսի միջազգային հեծելանիւթի մրցումներուն:

«Այսօր դժբախտ պարագայ մը կը հարկադրէ զիս, միանգամընդմիջտ ետ կենալէ մրցման մասնակցելէ: Բայց կը խորհիմ որ եթէ դրօշակիրը ինձայ, ուրիշ մը անմիջապէս անոր կը յաջորդէ: Այս իսկ պատճառով չափազանց ուրախ պիտի ըլլայի մասնաճիւղի ախոյեանին եռագոյնով յաղթանակը տեսնելով: Չէ՞ որ ատիկա իմ գործիս շարունակութիւնը պիտի ըլլար:

«Ատիկա թող ըլլայ իմ Նոր Տարուան Աուէրս յաջողութեան մաղթանքներով:

«Կը խնդրեմ որ Հանիք ընդունիլ խորին յարգանքներս:

Յակոբ Ղազարեան

Սանաթորիոմ Համմանա»

Փրոփականտ, ընկերային գործունէութիւն, հասութաբեր ձեռնարկներ

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի տարուէ-տարի յառաջդիմութիւնը ստեղծեց ընկերային մթնոլորտ մը, միութեան զանազան ճիւղերուն մէջ գործող անդամներուն միջեւ: Ընտանեկան մտերմիկ առիթներ եւս օժանդակեցին այս մթնոլորտի զարգացման: Անդամներու յատուկ դասախօսական շարքերը, յատկապէս առողջապահական նիւթերու շուրջ, նպաստեցին ենթականերու դաստիարակութեան: Մարզական եւ սկաուտական գործունէութեանց կողքին, մասնաճիւղը զարգացուց նաեւ ընկերային ձեռնարկներ: Խումբերու յատուկ մասնակի ելոյթներու կողքին, տեղի ունեցան նաեւ անդամական ընդհանուր պտոյտներ, պարանցիկներ, խրախճանքներ, թէյասեղան՝ ազգային կամ եկեղեցական տօնակատարութեանց առիթներով: Այս ելոյթները լայնօրէն ծառայեցին միութեան փրփականտին եւ ժողովրդական լայն խաւեր ներգրաւեցին անոր շարքերէն ներս: 1928ին, մասնաճիւղի իրականացումներու շարքին պէտք է յիշել «Քնար» նուագախումբի կազմութիւնը: Վարչութիւնը, այս նպատակին համար, Եւրոպայէն ապսպրեց նուագախումբի գործիքներ: Յատուկ կանոնագրութիւն մը մշակուեցաւ նուագախումբի գործունէութեան համար: Նուագախումբի գործունէութեան հսկիչ յանձնախումբի անդամներ ընտրուեցան 9 Օգոստոս, 1928ին կայացած անդամական յատուկ ընդհանուր ժողովով մը: Յանձնախումբի անդամներ ընտրուեցան՝ Արամ Քիւրտեան, Վահան

Թորոսեան, Ա. Այվազեան, Գ. Թերզեան, Սոյոզեան, վարչական ներկայացուցիչ՝ Մարտիկ Պէյլէրեան եւ խմբավար՝ Գ. Յակոբեան:

Այս իմաստով բեղուն եղաւ 1936ի եղանակը, երբ կազմակերպուեցան անդամական ընդհանուր արշաւ դէպի Պարուք, սինեմայի երեկոյթ, թէյասեղան՝ ուր ներկայ եղան Դամասկոսի ֆուլթպոլի խումբի անդամներ եւ Պուրճ Համուտի քաղաքապետ Հայր Արիս քաջալերական խօսքերով ելոյթ ունեցաւ:

7 Նոյեմբեր, 1936ին, «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուան տօնակատարութիւն:

Յատուկ յիշատակութեան արժանի են 1937ին սկսուած եւ աւանդութիւն դարձած քերմէսներու շարքերը: Անոնց առաջինը տեղի ունեցաւ Պէյրութի հանրային պատէզի դալարագեղ շրջափակին մէջ: Անոր յաջորդեցին՝ ամէն տարի Յունիսին տեղի ունեցող քերմէսները, բարոյական եւ նիւթական կարեւոր յաջողութիւններ ապահովելով մասնաճիւղին:

Սկաուտական գործունէութիւն

Պէյրութի մասնաճիւղի սկաուտական ճիւղի կազմութիւնը հիմնադիրներու առաջին մտահոգութիւններէն պիտի ըլլար: Սակայն, գործնական քայլերը կարելի դարձան 1926էն սկսեալ, երբ սկաուտ խմբապետ Ժիրայր Պալեանին կը վստահուի սկաուտական շարժումի ղեկավարութիւնը: Վերջինս ճիշդ չի խնայեր որպէսզի սկաուտութիւնը հիմնական դասաւորումներով օժտուի: Մասնաճիւղի գործունէութեան շուրջ ստեղծուած ժողովրդական հետաքրքրութիւնը, իր կարգին, կը նպաստէ յաջողութեան եւ շուտով կը կազմուի Պէյրութ քաղաքի սկաուտական խումբը: Անոր կը յաջորդէ Էշրէֆիէ թաղամասի սկաուտական խումբի կազմութիւնը:

Զոյգ խումբերու սկաուտական գործունէութիւնը կը բաժնուի գլխաւոր երկու գլուխներու. առաջին՝ սկաուտական թեքնիք եւ հայեցի դաստիարակութիւն, արշաւներ եւ բանակումներ, երկրորդ՝ ազգային կեանքի եւ հրապարակային ելոյթներու մասնակցութիւն (Ապրիլ 24ի սգատօներ, եւայլըն): Սկաուտական խորհուրդը կը վարէ մասնաճիւղի սկաուտական շարժումը: Սկաուտ ղեկավարներու գլխաւոր մտահոգութիւնը կ'ըլլայ աստիճանաւորական ցանցի մը կազմութիւնը, որով կարելի պիտի ըլլար ապահովել շարժումի շարունակականութիւնը:

Սկաուտական շարքերու կազմակերպութեան իբրեւ հետեւանք, 1930ի Ապրիլի 20ին, Սբ. Նշան եկեղեցոյ շրջափակին մէջ, Սբ. Պատարագէն ետք տեղի կ'ունենայ հանգիստաւոր երգման արարողութիւն, հովանաւորութեամբ Շրջանային Վարչութեան եւ ներկայութեամբ տեղացի սկաուտական խումբերու պատուիրակութիւններու, ինչպէս նաեւ խումբերամբ բազմութեան մը: Այս հանդիսութեան խօսք կ'առնեն լիբանանցի Սկաուտապետ Պրն. Հանի, Շըրջանային խմբապետ Սիմոն Թերճանեան եւ Վ. Գէորգեան: Շուրջ 50 սկաուտներ այս առթիւ կու տան իրենց սկաուտական երգումը:

Ժիրայր Պալեանի սկսած սկաուտական շարժումը, իր մեկնումէն ետք՝ մինչեւ 1930ի կէսերը, կը ղեկավարուի Յակոբ Աւագեանի կողմէ: 1930ին, Հայկ Դաւիթեանին կը վստահուի որակաւոր աստիճանաւորական ցանցի մը պատրաստութիւնը: Այնուհետեւ, մինչեւ 1939 թուականը, ընդհանուր խմբապետի պաշտօնը կը վարեն յաջորդաբար՝ Լեւոն Աբգարեան, Արտաւազդ Հաճեան եւ Յովհաննէս Ժամկոչեան:

1934ին, մասնաճիւղի երեք խումբերը կը գործէին հետեւեալ դասաւորումներով. Պէյրութ քաղաքի սկաուտներ, ֆուլթպոլի դաշտ, խմբապետ՝ Ժիրայր Պէյլէրեան:

Էշրէֆիէի սկառտներ, կաթողիկէներու դաշտ, խմբապետ՝ Օննիկ Պասմաճեան: Պուրճ Համուտ, Չափահաս Որբերու դաշտ, խմբապետ՝ Բիւզանդ Մխսաւետիքեան: Սկառտական շարքերը օրէ-օր թուական եւ որակական զգալի աճ կ'արձանագրեն՝ արժանանալով հայ հասարակութեան գնահատանքին: Հայ ծնողներ անվերապահ կերպով մասնաճիւղի այս դաստիարակչական ճիւղին կը վստահին իրենց զաւակները: Սկառտական խումբերը հետզհետէ կ'ամբողջացնեն իրենց գործունէութեան անհրաժեշտ գոյքերը: Սկառտական շարքերը կ'ենթարկուին բժշկական քննութեանց:

1937ին, Ա. խումբի (քաղաք) խմբապետն է Կարապետ Մեծօրուքեան: Բ. խումբ (Էշրէֆիէ)՝ Տիգրան Ոսկերիչեան, ապա՝ Յակոբ Գույումճեան: Էշրէֆիէի խումբի գործունէութեան գլխաւոր առանցքը նուագախումբն է: Այս եղանակին, Էշրէֆիէի խումբէն մաս մը սկառտներ, որոնք Պուրճ Համուտ կը բնակէին, Շրջանային Վարչութեան որոշումով կ'անջատուին՝ մասնակցելու համար Պուրճ Համուտի մասնաճիւղի սկառտական կազմին, խմբապետութեամբ Չաւէն Փեհլիվանեանի: Նոյն առթիւ սկառտական խումբերու անդամները գտումի կ'ենթարկուին: Թուական այս նուագումը, սակայն, աւելի կը զօրացնէ մնացեալ անդամներով գործող սկառտական խումբերը:

1938էն սկսեալ, սկառտական գոյքերու ամբողջական ապահովումով կը սկսին աւելի կազմակերպուած սկառտական բանակումները:

1939ի Յուլիսի 2ին, նոր ակումբի մէջ տեղի կ'ունենայ սկառտական երգման արարողութիւն եւ աստիճաններու տուչութիւն: Այս եղանակին Էշրէֆիէի խումբը առժամաբար լուծուած է: Կարգ մը սկառտներ մաս կը կազմեն քաղաքի խումբին:

Հ.Մ.Ը.Մ.ի սկառտները կը նպաստեն Սանճաքէն տեղահանուած հայերու տեղաւորումին: Մասնաճիւղի վերակազմուած սկառտական շարքերու ընդհանուր թիւն է՝ 39 սկառտ եւ 24 գայլիկ:

ԶԱՀԼԷ

Չահլէի մասնաճիւղը հիմնուած է 1927ին, Տօքթ. Յակոբ Պերպէրեանի հրաւերով՝ իր բնակարանին մէջ կայացած խորհրդակցութեան մը ընթացքին: Խորհրդակցութեան ներկայ գտնուած են, ի միջի այլոց՝ Ներսէս Գազազեան, Կիրակոս Թապաքեան եւ Ս. Ունճեան, որոնց յարատեւ ճիգերով մասնաճիւղի գոյութիւնը ապահով կը դառնայ:

Այս հիմնադրութեան հետեւած են մասնաճիւղի զանազան ելոյթները, որոնք պարբերաբար խանդավառութիւն ստեղծած են իրենց շուրջ: Սակայն, կազմակերպչական մեքենան եղած է թոյլ, եւ անդամալոյծ վիճակ մը պարզած է մինչեւ 1931 թուականը:

1931ի վերջերը, նոր խանդավառութեան մը հետեւանքով, 6 հոգինոց վարչութիւն մը վճռական քայլերու կը դիմէ մասնաճիւղը վերկանգնելու եւ զօրաւոր հիմերու վրայ դնելու համար: Նախ՝ կ'ապահովուի սեփական ակումբ, որուն շուրջ կը հաւաքուին 27 անդամներ եւ անդամական 29 ժողովներով եւ վարչական 7 նիստերով կը յաջողին բացառիկ յաջողութիւններ արձանագրել, ակումբը դարձնելով մարմնակրթական եւ հայրենասիրական սնունդ ջամբող կեդրոնի մը: Մինչեւ 1935 տարին, մարզական գետնի վրայ, մասնաճիւղի ֆուտպոլի խումբը կ'ունենայ 23 հանդիպումներ. Պէյրութի մէջ 2, Դամասկոս՝ 1, Ռայաք՝ 5 եւ Չահլէի մէջ 18: Այս մրցումները կ'աւարտին 11 յաղթանակով, 5 հաւասարութեամբ եւ 7 պարտութեամբ: Վարչութիւնը

կը կազմակերպէ նաեւ 2 դասախօսական հաւաքոյթներ, 5 լեռնագնացութիւն: Նիւթական միջոցները զօրացնելով, Ֆուլթպոլի Ա. եւ Բ. խումբերը կ'ունենան իրենց տարազները եւ յարակից գոյքեր: Մարզիկներէն ոմանք կը մասնակցին նաեւ ամբիթիզմի փորձերու: Մասնաճիւղը կը փորձէ աւելի սերտ կապ հաստատել Պէյրութի կեդրոնին հետ եւ կը հրաւիրէ զիրենք որ գործիչով մը յաճախ այցելութիւններ կատարեն Չահլէի մասնաճիւղին:

1933 Յունիսին, վարչութեան դիւանին մաս կը կազմեն, ատենապետ՝ Հրանդ Լամպաճեան եւ ատենադպիր՝ Կիրակոս Թապաքեան:



Չահլէի Հ.Մ.Ը.Մ.-ի 1934 տարուայ
ֆութպոլի կազմը

1934ին, նոր ընտրութեամբ, վարչութեան մաս կը կազմեն՝

- Ատենապետ՝ Կիրակոս Թապաքեան
- Ատենադպիր՝ Ս. Կարապետեան
- Գանձապահ՝ Կ. Մանուկեան
- Ֆուլթպոլի պատասխանատու՝ Յ. Տէր Մելքոնեան
- Գոյքապահ՝ Լ. Սարգիսեան
- Սկաուտական խորհուրդին մաս կը կազ-

մեն՝ Տօքթ. Հ. Արշակունի, Յարութիւն Ներնեկլեան, Կ. Միքայէլեան: Նոյն տարին կը կազմուի սկաուտական խումբը՝ խմբապետութեամբ Կ. Ալեքսանեանի: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 38ի, որոնցմէ 14-ը սկաուտներ: Ֆուլթպոլի Ա. եւ Բ. խումբերը յաջող ելոյթներ կ'ունենան: Ապրիլ ծին, Չահլէի մէջ կայացած՝ հազար մեթր հեծելարշաւին արտոյեան կը հանդիսանայ Յակոբ Պալըքճեան, յաղթելէ ետք հայ թէ օտար բոլոր մրցակիցներուն:

1935ին, մասնաճիւղը ունի սկաուտական 2 խմբակներ եւ գայլիկներ. ընդհանուր թիւ՝ 17: Մասնաճիւղը կը կազմակերպէ իր հիմնադրութեան ծրագրաբարձի հանդիսութիւն, որու ընթացքին խօսք կ'առնէ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Գէորգ Սազճեան:

1936 տարին կրկին անգործունէութեան շրջան մը կ'ըլլայ:

1937ին, վարչութիւնը՝ ատենապետութեամբ Կիրակոս Թապաքեանի՝ ճիգ չխնայեր վերականգնելու համար մասնաճիւղի գործունէութիւնը: Սկաուտական խմբակները կարող խմբապետ մը չունին: Չատկըլան միջ-մասնաճիւղային խաղերը առիթ կ'ըլլան որ վերակազմուի Ֆուլթպոլի խումբը՝ խմբապետութեամբ Կարօ Մանուկեանի: Խումբին մաս կը կազմեն՝ Պատիա Պատրեան, Հայկ Կարապետեան, Յակոբ Տէր Մելքոնեան, Մկրտիչ Տէր Մելքոնեան, Մարտիրոս Հաճընեան, Յարութիւն Փողհարեան, Վահան Պապոյեան, Վահէ Կարապետեան, Յակոբ Տէյիրմէնճեան, Խալիլ Ռահանի, Յարութիւն Ապաճեան եւ Կարօ Միքայէլեան:

1939ը կրկին վերակազմակերպման շրջան մը պիտի ըլլար, դեկավարութեամբ՝ առժամեայ վարչութեան մը:

1939ի 30 Ապրիլին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն.

- Ատենապետ՝ Արամ Տէր Մարուքեան

Ատենադպիր՝ Յովհաննէս Միքայէլեան
 Գանձապահ՝ Պօղոս Գիգիրեան
 Գոյքապահ՝ Յակոբ Միքայէլեան
 Մարզական վարիչ՝ Կիրակոս Թապաքեան:

Մասնաճիւղը ունի 44 անդամ, որոնցմէ 17ը սկառուտական շարքերէն: Մասնաճիւղը կը թեւակոխէ խոստմնալից տարեշրջան մը:

ԹՐԻՓՈՒԼԻ

Մասնաճիւղի կազմութիւն

Թրիփոլիի հայկական գաղութի կազմութիւնն ու զարգացումը տեղի կ'ունենան 1920ական թուականներէն սկսեալ, հայ վարժարանի եւ եկեղեցիի հաստատումով: Ընդհանրապէս արհեստաւոր դասակարգէ կազմը աւելցնելով զայս գաղութը, 1926էն սկսեալ, կ'ունենայ նաեւ մարզական գործունէութիւն՝ «Հրազդան» մարզական միութեան կազմութեամբ: Հայկազ Աթմաճեանի գլխաւորութեամբ՝ «Հրազդան»ը կ'ունենայ ֆուտպոլի զոյգ խումբեր: Իր անդամները կը մասնակցին նաեւ մարմնակրթանքի ու ակումբի խաղերու: Թրիփոլիին, այդ թուականներուն, անձանօթ էր մարզական կազմակերպուած շարժումը: «Հրազդան»ը ձեւով մը նախակարապետը պիտի դառնար Թրիփոլիի մէջ մարզական գործունէութեան ծանօթացման՝ տեղացի խումբերու կազմութեամբ: «Հրազդան»ի անդամները կ'օժանդակեն Ազգային վարժարանի ամսվերջի հանդէսի յաջողութեան: Ի նպաստ վարժարանին հանգանակութիւն կը կազմակերպեն եւ իրենց սեփական ակումբին մէջ կը պատրաստեն թատերական ներկայացումներ: Միութիւնը կը ստանայ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ՝ «Նոր Սերունդ»ը: Գրադարանի կազմութեան համար կը դիմեն

հետեւեալ թերթերուն. «Յուսաբեր», «Արեւ», «Երկունք», «Բուժանք», «Հայրենիք», «Ապագայ» եւ «Ասպարէզ»: Կը հրատարակեն նաեւ պատանեկան «Վիտօշ» շաբաթաթերթը: Յստակ է որ «Հրազդան»ը մարզականին կողքին ունի մշակութային կարեւոր գործունէութիւն եւ մեծապէս կը նպաստէ օրուան գլխաւոր մտահոգութեան՝ հայապահպանման:

1929էն սկսեալ, «Հրազդան»ի պատասխանատուները իրենց սկսած աշխատանքը աւելի զօրաւոր հիմերու վրայ դնելու մտահոգութեամբ, 22 Փետրուար, 1929 թուակիր նամակով կը դիմեն Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին, որպէսզի իրենք ալ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ դառնան: Պէյրութի վարչութիւնը կ'ողջունէ այս դիմումը, սակայն կը յայտնէ, թէ ինք Շրջանային վարչութիւն չէ, հետեւաբար, որպէս շրջանի աւագ մասնաճիւղ՝ կրնայ միայն ցուցմունքներ կատարել: 27 Մարտ, 1929ին, Պէյրութի վարչութիւնը նամակ կը գրէ «Հրազդան» մարզական միութեան, յայտնելով, որ 30 Մարտին, Սուրիոյ եւ Լիբանանի մասնաճիւղերը Պատգամաւորական ժողով պիտի գումարեն եւ ընտրեն նոր Շրջանային վարչութիւն: Առ այդ, կը յանձնարարեն, որ «Հրազդան»ը ներկայացուցիչ ղրկէ այս ժողովին: «Հրազդան»ը կապ կը հաստատէ նորընտիր Շրջ. վարչութեան հետ: Վերջինս, 1929ի Յունիսին, պաշտօնապէս կը ճանչնայ «Հրազդան»ը որպէս Թրիփոլիի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ եւ կը վաւերացնէ օրուան վարչական կազմը՝ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Միսաք Լիպարիտեան
 Ատենադպիր՝ Իսահակ Գարաճեան
 Գանձապահ՝ Վահան Գազանճեան
 Բ. ատենադպիր՝ Արիս Աթմաճեան
 Մարզական պատասխանատու՝ Յովսէփ Առաքելեան:

Մարզական, սկսուտական ու կազմակերպչական գործունեություն

Որպես Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին նոր անդամ, մասնաճիւղի գործունէութիւնը կ'ունենայ յաւելեալ ժողովրդականութիւն, իր մասնակցութիւնը բերելով մարզականի կողքին նաեւ ազգային ձեռնարկներու յաջողութեան: Թաղականութիւնը, իր կարգին, կը նպաստէ մասնաճիւղի զարգացման, վարժարանի շրջափակէն ներս անոր տրամադրելով հաւաքավայր սենեակ մը:

1930ին, թաղականութեան ատենապետ Մինաս Արծրունին կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի նախագահութիւնը: Վարչական կազմի միւս անդամներն են.

- Ատենապետ՝ Գէորգ Փափազեան
- Փոխ-ատենապետ՝ Արիս Աթմաճեան
- Ատենադպիր՝ Յովհաննէս Քէօշկէրեան
- Փոխ-ատենադպիր՝ Յովհաննէս Աքըլեան
- Գանձապահ՝ Յովհաննէս Առաքելեան
- Ոորհրդականներ՝ Վահան Գազանճեան եւ Հայկազ Ճիրեան:

Անդամներու թիւը շուտով կը բարձրանայ 60ի եւ տեղի կարիքի պատճառով տարեկան կէս օսմանեան ոսկիով կը վարձուին Ազգ. վարժարանի վերնայարկի գոյգ սենեակները: Վարչութիւնը կը կազմակերպէ երաժշտական խումբ՝ ղեկավարութեամբ Հմայեակ Մաթէոսեանի: Ազգ. վարժարանէն ներս կը կազմակերպուի լսարանական դասընթացք: Նոյն թուականին կը սկսի սկսուտական խումբի կազմութիւնը: Շրջանային Վարչութենէն կը ստանան 2 փող եւ 1 թմբուկ: Քելեկեան որբանոցի տնօրէն Ղազարոս Ղալիկեան սկսուտներուն կը տրամադրէ սուլիչ, սուլիչակապ, փողկապ եւ սկսուտական գօտիներ: 11 Մայիս, 1930ի անդամական ընդհ. ժողովին ներկայ կ'ըլլան 23 անդամներ: Կ'ընտրուի նոր վարչութիւն. ատենապետ՝ Մինաս Արծրունի, ատենադպիր՝ Արիս Աթ-

մաճեան, գանձապահ՝ Վահան Գազանճեան, փոխ-գանձապահ՝ Յովհաննէս Աքըլեան, ֆուլթպոլի խմբապետ՝ Յովհաննէս Առաքելեան, սկսուտական պետ՝ Գէորգ Փափազեան, գոյգապահ՝ Գ. Զուլֆայեան: Անդամներուն կը տրուի անդամատետրեր՝ Շրջանային Վարչութեան վաւերացումով: Դասախօսական լսարանը կը շարունակուի նոյն թափով: Դասախօսներուն շարքին է Թրիփոլիի հոգեւոր հովիւ Տէր Յուսիկ Քհն. Նախնիքեան: Անդամներուն համար կը կազմակերպուին նաեւ հայերէնի, ֆրանսերէնի եւ թուաբանութեան՝ գիշերային դասընթացքներ:

Սկսուտական խումբի տարազները կ'ամբողջացուին եւ կը տրուին սկսուտական գաւազաններ:

Մեծ թափով սկսուած այս գործունէութիւնը, դժբախտաբար, պահ մը կանգ պիտի առնէր ներքին անհասկացողութիւններու պատճառով: Անդամներ՝ մամուլով պայքար կը բանան մասնաճիւղի վարչութեան դէմ:

Շրջանային Վարչութիւնը կը լուծէ վարչութիւնը եւ 1930, Դեկտեմբեր 22ին, կը նշանակէ առժամեայ եռանդամ վարչութիւն մը. ատենապետ՝ Տ. Զալեան, ատենադպիր՝ Տ. Օհանեան, գանձապահ՝ Կ. Պոյաճեան:

1931ի սկիզբը, վարչութիւնը կը թողու Ազգ. վարժարանի շրջափակէն ներս իր նստավայրը եւ կը փոխադրուի առժամեայ վայր մը: Կը վարձուի ֆուլթպոլի նոր դաշտ մը: Մարզական գործունէութեան գլխաւոր առանցքը կը մնայ ֆուլթպոլը՝ տեղական խումբերու դէմ կազմակերպուած մրցումներով:

29 Մարտ, 1931ին, անդամական ընդհանուր ժողովը կ'որոշէ մասնաճիւղի մասնակցութիւնը ֆուլթպոլի միջ-մասնաճիւղային Զատկական խաղերուն, Պէյրութի մէջ: Երթեւեկի ծախսերը կը հոգան խաղացողները:

24 Մայիս, 1931ին, անդամական ընդհ. ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Հայկազ Աթմաճեան
 Ատենադպիր՝ Ի. Գարաճեան
 Գանձապահ՝ Մ. Զալեան
 Ֆուլթպոլ՝ Ա. Զուլխատարեան
 Հաշուապահ՝ Տ. Օհանեան
 Գոյքապահ՝ Ա. Տէմիրճեան
 Խորհրդական՝ Յ. Պալեան:

Մասնաճիւղը նիւթական դժուարութիւններու կը բախի: Ակումբի վարձքը կը հոգան երեք վարչականներէ եղած փոխատրուութեամբ: Կը կազմակերպուի 200 տոմսերով վիճակահանութիւն:

Լսարանի ձեռնարկը կը շարունակուի՝ նպաստելով մասնաճիւղի փրոփականտին եւ անդամներու իմացական զարգացման: Դա-

սախօսներն են Գ. Գաբրիէլեան եւ Ա. Աթմաճեան:

29 Նոյեմբեր, 1931ին, ակումբին մէջ կը տօնակատարուի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տասներեքերորդ տարեդարձը:

Ֆուլթպոլի խումբը կը շարունակէ իր յառաջխաղացքը:

Սկաուտական կազմը իր կարգին կը մնայ կանգուն, բայց յառաջդիմութեան յոյսերը հետզհետէ կը պակսին, կարող խմբապետի բացակայութեան պատճառով:

Թրիփոլիի մասնաճիւղի գործունէութեան շրջանը պիտի ըլլար կարճատեւ: Արդարեւ, 1934ի պետական հրամանագրով կը լուծուէին բոլոր մարզական միութիւնները: Թրիփոլիի Հ.Մ.Ը.Մ.ն ալ փակեց իր դռները՝ ցնոր պետական նոր արտօնագրի ստացում: Այս աշխատանքին համար Թրի-



Թրիփոլիի Հ.Մ.Ը.Մ.-ի 1933 տարուայ վարչական կազմը

փոլիի մասնաճիւղը չորս երկար տարիներու կարիքը ունեցաւ: Երեւելի հայեր չօժանդակեցին այս արտօնագրի ստացման: Ի վերջոյ, 1938ին, Թրիփոլին վերագտաւ իր գործունէութեան ծիրը՝ պետական արտօնագրի ստացումով: Միջանկեալ Շրջանային նախկին սկաուտական խմբապետ Սիմոն Թերճանեան եւ Լաթաքիոյ մասնաճիւղէն Չպուքճեան եղբայրներ, Թրիփոլի հաստատուելով, յաջողեցան նոր թափ տալ քառամեայ լռութեան մատնուած Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան, մասնաճիւղի շուրջ վերահաւաքելով մօտ 40 անդամներ:

ՊԱԱԼՊԵՔ

Սուրիոյ եւ Լիբանանի՝ 1931ի Բ. Շրջանային Ընդհ. Ժողովի ատենագրութեան համաձայն, 1930էն սկսեալ գործած է Պաալպէքի մասնաճիւղը եւ մասնակցած է վերոյիշեալ ժողովին՝ մէկ պատգամաւորով (23 անդամ):

Դժբախտաբար, Պաալպէքի մասնաճիւղի գործունէութեան մասին տեղեկութիւններ կը պակսին մեզի: Շրջանի՝ 1933ի Գ. Շրջ. Ընդհ. Ժողովի ատենագրութեան մէջ, Պաալպէքի մասնաճիւղի մասին յիշատակութիւն չկայ, ո՛չ որպէս ներկայ, ո՛չ ալ որպէս բացակայ մասնաճիւղ: Հետեւաբար, կը թուի թէ մասնաճիւղի կեանքը շատ կարճ է եղած, հազիւ երկու տարի, ղեկավարութեամբ շրջանային սկաուտ խմբապետ եւ Շրջանային Վարչութեան անդամ Սիմոն Թերճանեանի, որ այդ թուականներուն Պաալպէք կը բնակէր:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

Հիմնադրութիւն եւ կազմակերպչական գործունէութիւն

1932էն սկսեալ, Պուրճ Համուտ աւանի թաղամասերու կազմաւորման հետ եւ ազ-

գային այլ կառոյցներու կազմակերպութեան կողքին, նոր հաստատուող հայ ժողովուրդը կ'ունենայ նաեւ Ֆութպոլի թաղային բազմաթիւ խումբեր:

Այս խումբերը, նախնական պայմաններու մէջ գործելով հանդերձ, մեծ խանդավառութիւն կը ստեղծեն իրենց շուրջ՝ իրարու դէմ մրցումներ կազմակերպելով: Ահա՛ այս խումբերու վարիչները, որոնց կարգին նախկին Կիլիկիոյ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ականներ, հետզհետէ կարիքը կը զգան այս խումբերու գործունէութիւնը կեդրոնացնել միացեալ ղեկավարութեան մը շուրջ եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ: Այս նպատակով ալ կը դիմեն Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան, յայտնելով իրենց ծրագիրը:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւնը նախապատրաստական աշխատանքներուն հետեւելու համար իր գոյգ ներկայացուցիչները, յանձին Օննիկ Պէօճէքեանի եւ Սիմոն Թերճանեանի, կը լիազօրէ հետեւելու Ֆութպոլի կազմերու գործունէութեան եւ անոնց միացեալ խմբաւորման ծրագրի իրականացման: Արդարեւ, 1934ի Զատկին, Հալէպի մէջ կայացած միջ-մասնաճիւղային Ֆութպոլի մրցաշարքին Պուրճ Համուտը կը ներկայանայ առանձին կազմով՝ որպէս Բ. դասակարգի խումբ — [2.62]:

1935ին, Արշակունի Ռաֆայէլեանի բնակարանը հաւաքուելով, մարզական այս խումբերու վարիչները հիմնուած կը յայտարարեն Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղը: Այս հաւաքոյթին ներկայ կ'ըլլան, յատկապէս, Արշակունի Ռաֆայէլեանի կողքին, Բենիամին Մինասեան, Հայկ Նարկիզեան, Ահարոն Մկրտիչեան, Յակոբ Մինասեան, որոնք կը կազմեն մասնաճիւղի հիմնադիր վարչական կազմը, եւ մասնաճիւղը կը ստանայ Շրջանային Վարչութեան վաւերացումը — [Խ.243]:

Հիմնադիր վարչութեան առաջին գոր-

ծերէն մին կ'ըլլայ բազմաթիւ ֆուլթպոլի խումբերէն՝ ընտրել Պուրճ Համուտի մասնաճիւղի ֆուլթպոլի առաջին կազմը, որուն կը մասնակցին, ի միջի այլոց, Հայկ Նարկիզեան, Պետրոս Մանուկեան, Սարգիս Ֆրստըքճեան, Երուանդ Ֆրստըքճեան, Յարութիւն Կիւլոյեան, Ահարոն Մկրտիչեան, Յարութիւն Էկիւլեան, Յակոբ Մինասեան, Յարութիւն Ապունայեան, Մանուէլ Սարգիսեան, Մանուէլ Մարգարեան, Խաչեր Ճլլըզեան, Աբրահամ Աբգարեան, Հրանդ Վասիլեան

1936ի սկիզբը, վերոյիշեալ վարչութեան կը յաջորդէ Շրջանային Վարչութեան կողմէ նշանակեալ կազմ մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլար կազմակերպել անդամական ընդհ. ժողով: Նշանակովի այս կազմի ատենապետն է Յովնան Ոսկերիչեան եւ ատենադպիրը՝ Հրաչ Տատեան: Նոյն օրերուն, տեղի կ'ունենայ Հայ Մարզական «Հերոս» Միութեան միացումը Պուրճ Համուտի Հ.Մ.Ը.Մ.ին: Նշանակեալ այս կազմին վրայ կ'աւելնան «Հերոս»ի վարչականներէն՝ Լուտեր Հաւունճեան եւ Իսկենտէր Սարգիսեան:

Մասնաճիւղի անդամներու թիւը շուտով կը հասնի 51ի: Նշանակեալ մարմինը կը կազմակերպէ անդամական ընդհանուր ժողով, որմէ կը բխի մասնաճիւղի առաջին ընտրեալ վարչութիւնը՝ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Սարգիս Գուլայեան
 Ատենադպիր՝ Պետրոս Մանուկեան
 Գանձապահ՝ Յովնան Ոսկերիչեան

Մարզական ընդհ. խմբապետ՝ Միսաք Ճենանեան

Խորհրդական՝ Գէորգ Գասապեան:

Սկաուտական խումբի կազմութիւնը կը վստահուի Յունաստանէն նոր ժամանած Մարտիրոս Տաշճեանին: Ժողովները կը գումարուին ատենապետին բնակարանին մէջ: Մասնաճիւղը չունի յատուկ նստավայր

եւ մարզադաշտ: Կը փորձեն ապահովել Tir Aux Pigeons-ի վայրը, որ զոյգ մտահոգութիւնները պիտի հարթէ:

1937ին, կ'ընտրուի նոր վարչութիւն՝ ատենապետութեամբ Ա. Մարգարեանի եւ ատենադպրութեամբ Անդրանիկ Ղուպիկեանի: Այս թուականին մասնաճիւղը կը ստանայ պետական ճանաչում: 1937ին, ֆուլթպոլի խումբը կը մասնակցի Զատիկական միջ-մասնաճիւղային խաղերուն: Ֆուլթպոլի առաջին խումբին կը մասնակցին՝ Պետրոս Մանուկեան, Այգեվարդ Խաչենցեան, Միսաք Ճենանեան, Խորէն Աւետիքեան, Յարութիւն Սարգիսեան, Սարգիս Ունճեան, Արտաշէս Էօրէճեան, Լեւոն Աճեմեան, Սարգիս Ճիգմէճեան, Լուտեր Սանդունի, Գէորգ Բանջարճեան եւ Հրանդ Վայիլեան:

Ֆուլթպոլի խումբերու կողքին կը զարգանայ սկաուտական գործունէութիւնը, մինչեւ 1938-39 տարեշրջանի աւարտը:

2 Ապրիլ, 1939ին, կը կայանայ անդամական ընդհանուր ժողով: Նոր վարչութեան ընտրութիւնը դժուարութիւններու կը հանդիպի: Առ այդ, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Մանուկ Տէօվլէթեան կը յառաջացնէ նշանակովի վարչական կազմ՝ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Յակոբ Պապուշեան
 Ատենադպիր՝ Մուշեղ Գուտուլեան
 Գանձապահ՝ Սարգիս Գուլայեան

Խորհրդականներ՝ Արշակունի Ռաֆայէլեան եւ Յարութիւն Տէր Բարսեղեան:

Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ նաեւ սկաուտական խորհուրդ՝ ատենապետ՝ Յովհաննէս Քէչէճեան

Ատենադպիր՝ Գալուստ Թոփալեան

Անդամներ՝ Հրաչ Տատեան Արամ Պոյունճեան եւ Գրիգոր Գազանճեան: Վերջինս տեղւոյն վրայ կը հրաժարի այս կազմին մասնակցելէ:

ՌԱՅԱՔ

Ռայաքի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութենէն առաջ շրջանին մէջ կը գործէր «Ասօսիասիոն Սբօրթիվ Տը Լա Պեքաա» անունով ֆուլթպոլի խումբը, բաղկացած՝ գաղութի ֆրանսացի, հայ եւ տեղացի խաղացողներէ: 1934-35 տարիներուն, հետըհետէ բազմացող հայ ընտանիքներու անդամ Հ.Մ. Ը.Մ.ականներ գաղափարը կը յղանան Հ.Մ. Ը.Մ.ի առանձին մասնաճիւղ մը կազմելու Ռայաքի մէջ: Այս ծրագրին միացողներէն են, ի միջի այլոց, Յակոբ եւ Օննիկ Պալըքճեան եղբայրներ, Արսէն Շալեան, Միսաք Մահտէսեան, Յարութիւն Օհանեան, Նուպար Երէցեան, Տիգրան Էմիրխանեան եւ Յակոբ Զըղըլեան: Ահա թէ ի՛նչ կը վկայէ այս ծրագրի մասին Օննիկ Պալըքճեան. «Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային խաղերը Սբ. Զատիկուան առիթներուն Հալէպի մէջ մեզի համար խայծ մը դարձաւ եւ մտածեցինք որ Ռայաքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը կազմութեամբ առիթ պիտի ունենայինք մենք եւս մասնակցելու այդ խաղերուն: Մտածումէն գործնականի անցնելով կազմեցինք զուտ հայերէ կազմուած ֆուլթպոլի խումբ մը եւ որպէս Ռայաքի մասնաճիւղ առիթը ունեցանք մասնակցելու Հալէպի մէջ միջ-մասնաճիւղային ֆուլթպոլի մրցաշարքերուն ի պահանջեալ հարկին տեղացի խաղացողներ եւս մեր խումբին միացնելով հայացուած անուններու տակ կամ Հալէպի նոր Գիւղի խումբէն փոխ առնելով մեր խումբին պակասող անդամներ»:

1935ին, վերոյիշեալ ծրագրի գործադրութեամբ տեղի կ'ունենայ վարչական ընտրութիւն: Վարչութեան ատենապետն է Տօքթ. Ներսէս Քիւփէլեան իսկ մարզական


բաժնի պատասխանատուն՝ Սերժան Շէֆ Մանուէլ Պեքարեան:

Յակոբ եւ Օննիկ Պալըքճեանները, իբրեւ երեսունական թուականներու Լիբանանի հեծելանիւի անպարտելի ախոյեաններ, բազմաթիւ յաղթանակներ արձանագրած էին իրենց հաշտոյն, Պէյրութի մասնաճիւղի անունով: Հետեւաբար, Ռայաքի մասնաճիւղի գործունէութեանց առանցքը պիտի կազմէին ֆուլթպոլն ու հեծելարշաւը:

1937ին, մասնաճիւղի ատենապետութիւնը կը վարէ Միսաք Մահտէսեան, իսկ ատենադպիրն է Արսէն Շալեան: Ֆուլթպոլի խումբը կը մասնակցի Հալէպի միջ-մասնաճիւղային ֆուլթպոլի մրցաշարքին՝ որպէս Բ. դասակարգի խումբ, եւ կը գրաւէ մրցաշարքի աւարտական մրցումին մասնակցողի դիրքը: Ֆուլթպոլի խումբը կը բաղկանայ հետեւեալներէն. Սարգիս Սեդրակեան, Արսէն Շալեան, Միսակ Մահտէսեան, Օննիկ Պալըքճեան, Տիգրան Էմիրխանեան, Յարութիւն Օհանեան, Միքայէլ Արզումանեան, Կարապետ Մանուկեան, Յարութիւն Տէմիրճեան, Աբրահամ Տէրեան, Հրայր Խաչերեան, Նուպար Երէցեան եւ Գրիգոր Պարտիզպանեան:

1939ին, մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Միսաք Մահտէսեան, իսկ ատենադպիրը՝ Օննիկ Պալըքճեան:

Վրայ կը հասնի Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմը: Հայ ընտանիքներ ժամանակի ընթացքին մեկնած ըլլալով Ռայաքէն, անդամներու թիւի պակասը պատճառ կը դառնայ որ մասնաճիւղը գործնապէս գոյութիւն ունենալէ դադրի՝ կարճ ժամանակի մը համար յաջող գործունէութիւն արձանագրելէ ետք:




1.2. Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի սկստական խումբեր 1928-1929ին: 3. Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի սկստական խումբը Անթիլիասի ակին մօտակայ քառայրին առջեւ: Արշաի պահումն կը դասախօսէ խմբապետ Աւագեան: 4. Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի եւ տեղացի սկստական խումբերը Արայայի արշաւէն վերադարձին 1929: 5.6.7. Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի սկստական խումբերը 1930ին:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՍՈՒՐԻԱ

- ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ
- ԴԱՄԱՍԿՈՍ
- ՀԱԼԵՊ
- ԼԱԹԱՔԻԱ
- ՀՈՄՍ
- ԳԱՄԻՇԼԻ
- ՔՐԸՔ ԽԱՆ
- ԱԼԵՔՍԱՆՏՐԷԹ
- ԱՆՏԻՈՔ

- ՌԱՍ ԻԻԼ ԱՅՆ
- ՀԱՍԻՉԷ
- ՃԱՐԱՊԼՈՒՍ
- ԱԶԷԶ
- ԱՐԱԲ ԲՈՒՆԱՐ
- ՏԷՐՊԷՍԻԷ
- ՏԷՐԻՔ
- ՏԷՐ ԶՕՐ
- ԱՅՆ ՏԻՈՒԱՐ



Սուրիոյ Շրջանի կազմութեան մասին տեսանք նախապէս, թէ ան կապուած էր Լիբանանի Շրջանի կազմութեան: 1929էն սկսեալ, երկու երկիրներու մասնաճիւղերու մասնակցութեամբ, Շրջանային Վարչութիւն մը արդէն կեանքի էր կոչուած: Զոյգ երկիրներու Շրջանային գործունէութեան մասին պիտի խօսինք ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՍԻՆ յատուկ գլուխին տակ:

Ներկայ գլուխին տակ պիտի տանք՝ 1925էն սկսեալ մինչեւ 1939՝ Սուրիոյ մէջ գործած Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու պատմութիւնը: Այս գլուխին տակ պիտի հանդիպինք նաեւ Սանճաքի Շրջանի մասնաճիւղերուն մասին, նկատի ունենալով որ մինչեւ 1939, այդ շրջանը եւս կը պատկանէր Սուրիոյ:

Ստորեւ, Սուրիոյ մասնաճիւղերու ցանկը՝ իրենց հիմնադրութեան թուականներով.

Դամասկոս	Օգոստոս, 1925
Հալէպ	Նոյեմբեր, 1925
Լաթաքիա	1926
Հոմս	1930-32
Գամիշլի	1931-33
Քրըք Սան	1931
Ալեքսանտրէթ	1931-32
Անտիոք	1932
Ռաս Իւլ Այն	1933-37
Հասիչէ	1934
Ճարապլուս	1934
Ազէզ	1934-36
Արաբ Բունար	1935
Տէրպէսիէ	1936
Տէր Զօր	1937
Տէրիք	1938
Այն Տիուար	

Վերոյիշեալ մասնաճիւղերէն կարելորագոյնները ունին լայն արձանագրութիւն, ինչպէս՝ Հալէպ եւ Դամասկոս: Ուրիշներու մասին եթէ տուած ենք շատ կարճ պատ-

մական տեղեկութիւններ, պատճառը մեր տրամադրութեան տակ գտնուող արխիւներու սահմանափակ ըլլալն է:

ԴԱՄԱՍԿՈՍ

Հիմնադրութիւն, կազմակերպչական ու մարզական գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղի հիմնադրութենէն առաջ տեղւոյն վրայ կը գործէին Վահագն պատանեկան միութիւնն ու Շանթ, Արծիւ եւ Մասիս ֆութպոլի խումբերը, որոնք, 1924ին, միասնաբար կը կազմակերպեն ողիմպիական խաղերու (աթլետիք) հրապարակային ելոյթ մը, հայ եւ օտար բազմութիւններու հետաքրքրութեան առարկան դառնալով: Անմիջապէս յետոյ կը կազմակերպուին նաեւ՝ Դրօ, Կայծակ եւ Տալուրիկ մարզական խումբերը: Ֆութպոլի մրցումները կը կատարուին Մերճէթ էլ Հաշիշի դաշտին վրայ:

1925էն սկսեալ, Վահագնի պատասխանատուները կը մտածեն մէկ ակումբի մէջ միացնել վերոյիշեալ բոլոր կազմերը՝ ունենալու համար գլխաւոր մէկ զօրաւոր ֆութպոլի կազմ, եւ հրաւէր կ'ուղղեն անոնց՝ յայտնելով իրենց միացման ծրագիրը:

1925ի Օգոստոսին, Վահագն, Շանթ, Արծիւ, Մասիս, Դրօ եւ Կայծակ խումբերը՝ առաջնոյն հրաւէրով, ի մի կը հաւաքուին եւ կ'որոշեն հիմը դնել Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղին: Այդ շրջանին Դամասկոս կը ղրկուի Լեւոն Աբգարեան, որ նորակազմ միութեան վարչութեան կողքին գործելով, զօրաւոր հիմերու վրայ կը դնէ մասնաճիւղի միացեալ խումբերու կազմութիւնը ու կը վերադառնայ Հալէպ:

Եռանդով սկսած այս գործունէութիւնը, դժբախտաբար, ակամայ կանգ պիտի առնէր Հ.Մ.Ը.Մ.ի դէմ տարուած պայ-

քարին պատճառով: Հայեր կը խուսափին միութեան շուրջ բոլորուելէ:

1928ի գարունէն սկսեալ, մասնաճիւղի վարիչները նոր թափով կը վերսկսին աշխատանքի, եւ առաջին առթիւ Ֆութպոլի բարեկամական հանդիպում մը կ'ունենան Ձինուորական Վարժարանի խումբին դէմ՝ արձանագրելով պատուաբեր յաղթանակ: Այս յաղթանակը մեկնակէտը պիտի դառնար նոր յառաջդիմութիւններու:

1928ի Ապրիլին, Դամասկոս կ'այցելէ Պէյրութի մասնաճիւղի Ֆութպոլի կազմը: Չոյգ մասնաճիւղերու եղբայրական այս հանդիպումը աննախընթաց խանդավառութիւն կը ստեղծէ: Մասնաճիւղը վերանորոգ ճիգերով կը փարի աշխատանքի: Ֆութպոլի յաջորդական կազմերու յաջողութիւններուն մեծապէս կը նպաստեն զինուորական (Չերքէզ) կազմէն խաղացող Հ.Մ.Ը.Մ.ական Ֆութպոլիստներ՝ գլխաւորութեամբ Օննիկ Կէվրէկեանի: Տարիներու վերելքը անպարտելիի համբաւը կ'ապահովէ մասնաճիւղի Ֆութպոլի կազմին:

1929ին, վարչութեան ատենապետութիւնը կը ստանձնէ Անանիա Տագէսեան, իսկ ատենադպրութիւնը՝ Յ. Պարոնեան: Մարզական գործունէութիւնը կը շարունակուի նոյն թափով: Անդամներու թիւը հետզհետէ կ'աճի: Ֆութպոլի խումբը կը սկսի իր մասնակցութիւնը բերել Չատկական միջ-մասնաճիւղային մրցաշարքերուն:

1932ին, վարչութեան ատենապետութիւնը կը ստանձնէ Վահան Տօնապետեան, այս պաշտօնին վրայ մնալու համար երկար տարիներ: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 115ի: Ֆութպոլի առաջին կազմի կողքին կը գործէ նաեւ պահեստի Բ. խումբը: Ա. խումբը այս եղանակին ունեցած է 15 մրցում, որոնցմէ 10ն վերջացած են իր յաղթանակով, չորսը՝ հաւասարութեամբ եւ 1ը՝ պարտութեամբ: Խումբը կը

տիրանայ միջ-մասնաճիւղային Չատկոսան հանդիպումներու ախոյեանութեան, ինչպէս նաեւ՝ Սուրիոյ առաջնակարգ խումբերուն միջեւ կազմակերպուած Coupe de challenge du Levant-ի մրցաշարքի ախոյեանութեան: Վարչութեան նիւթական գործառնութեան պատկերն է. մուտք՝ 36494 ս. դահեկան, ելք՝ 39753ս. դահեկան: Վարչութիւնը չի վարանիր փոխառութիւններ կատարելու մասնաճիւղի յառաջդիմութեան համար:

1934ին, Վահան Տօնապետեանի ատենապետութեան կողքին կը գործէ Յ. Թոքաթլեան՝ ատենադպիր: Ֆութպոլի խումբին համբաւը Մերձաւոր Արեւելքի սահմանները կ'անցնի երբ կը հրաւիրուի Լիբանանի Ֆութպոլի Ֆետերասիոնի միջոցաւ՝ մաս կազմելու Միջագոյին Ֆութպոլի Ֆետերասիոնին: Նոյն տարուան գարնան, խումբը 7-1 արդիւնքով կը յաղթէ Լիբանանի ախոյեան՝ Ռընեսանսին — [2.12]: Իսկ 2-1ով Պաղեստինէն Հափօէլ հրէական խումբին — [2.79]:

1935ին, Տօնապետեանի կողքին են փոխ ատենապետ՝ Կարապետ Սաաթճեան եւ ատենադպիր՝ Մեսրոպ Յուլակեան: Վարչութիւնը կը զարգացնէ ընկերային գործունէութիւն կազմակերպելով ընտանեկան խրախճանքի երեկոյթներ: 1 Դեկտեմբեր, 1935ին, կը կազմակերպուի Հ.Մ.Ը.Մ.ի Օրուան տօնակատարութիւն: Օրուան դասախօսն է Հալէպէն, Յակոբ Սիմոնի-Տասնապետեան:

1935ի Չատկոսան միջ-մասնաճիւղային խաղերուն, Ֆութպոլի խումբի խաղացողներու մեծամասնութիւնը զբաղուած է Ձինուորական խումբի խաղերով, հետեւաբար մասնաճիւղը կը մասնակցի իր Բ. խումբով: Դամասկոսի Պարատա խումբի նախաձեռնութեան ընդառաջելով, մասնաճիւղը կը մասնակցի Սուրիոյ Ֆութպոլի Ֆետերասիոնի կազմութեան:

6 Յունիս, 1936ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան կազմն է.

- Ատենապետ՝ Վահան Տօնապետեան
- Բ. ատենապետ՝ Յովհաննէս Պոյաճեան
- Ատենադպիր՝ Արտաշէս Աթթարեան
- Բ. ատենադպիր՝ Սեզար Թերճիմանեան
- Գանձապահ՝ Չաւէն Տամլամայեան

Մարզական պատասխանատու՝ Կարապետ Սաաթճեան

Սկաուտական պետ՝ Գրիգոր Գազանճեան:

1936-1937 տարեշրջանը կազմակերպչական եւ հիմնական հաստատումներու տարեշրջանն է: Տարեշրջանի ընթացքին վարչութիւնը 23 նիստեր կ'ունենայ եւ կը կազմակերպէ անդամական ընդհանուր ժողովներ: Անդամներու թիւը 32էն կը բարձրանայ 92ի: Մասնաճիւղը կը նշէ Ապրիլ 24ի սգատօնը, յատուկ հանդիսութեամբ: Բոլոր անդամներուն կը տրուի անդամատետրեր՝ Շրջանային Վարչութեան վաւերացումով եւ յատուկ թուագրումով: Ուշագրաւ են վարչութեան կարգապահական միջոցառումները՝ անդամներու ու յատկապէս ֆուլպուլի խումբերու անդամներուն հանդէպ: Ֆուլպուլի առաջին խումբին մաս կը կազմեն. բերդապահ՝ Տիգրան Արապեան, յետսապահներ՝ Կարապետ Սաաթճեան եւ Տըրդատ, միջնապահներ՝ Չաւէն Չորպաճեան, Օննիկ Կէվրէկեան եւ Կիրակոս Գալայճեան, յառաջապահներ՝ Ֆերտին Արսլանեան, Արմէն Աբգարեան, Գեղամ, Մասոնի եւ Կարապետ Մելիքօֆ Արսլանեան: Եղանակի ընթացքին խումբը կ'ունենայ 17 մըրցումներ, որոնցմէ 11ը կը վերջացնէ յաղթանակով, 3ը՝ հաւասարութեամբ եւ 3ը՝ պարտութեամբ: Խումբը կը մասնակցի միջմասնաճիւղային ֆուլպուլի մրցաշարքին:

Ֆուլպուլի արդիւնաւէտ եղանակին դիմաց՝ մասնաճիւղը աթլետիզմի ճիւղը չէ զարգացուցած, եւ Մայիս 1937ի միջմաս-

նաճիւղային աթլետիք մրցումներէն բացակայ է:

1938ին, վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Վահան Տօնապետեան
- Բ. ատենապետ՝ Մարտիրոս Փիրանեան
- Ատենադպիր՝ Սարգիս Պապիկեան
- Բ. ատենադպիր՝ Սեզար Թերճիմանեան

Սկուտական խմբապետ՝ Տիգրան Ոսկերիչեան

Խորհրդականներ՝ Չաւէն Տամլամայեան եւ Ֆրէտ Արսլանեան:

Մասնաճիւղը նոյն թափով կը շարունակէ նախորդ տարեշրջանի գործունէութիւնը:

1939 տարեշրջանին, մասնաճիւղը վարչական ընտրութիւնը յաջողցնելու դժուարութիւններ կ'ունենայ: Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ առժամեայ վարչութիւն մը.

- Ատենապետ՝ Վահան Տօնապետեան
- Ատենադպիր՝ Նշան Սէֆէրեան
- Գանձապահ՝ Արտաշէս Աթթարեան:

Չանազան մեկնումներու պատճառով կը տկարանայ նաեւ ֆուլպուլի խումբը: Առանց Կարապետ Սաաթճեանի եւ Կիրակոս Գալայճեանի՝ խումբը նախկին հմայքը կը սկսի կորսնցնել:

Սկաուտական գործունէութիւն

Դամասկոսի մասնաճիւղի հիմնադրութեան օրերէն սկսեալ կը ծրագրուի սկաուտական խումբի կազմակերպումը: Ծրագիրը շուտով կ'իրականանայ եւ Դամասկոսի մասնաճիւղը կ'ունենայ սկաուտական խումբ մը: Գլխաւոր դժուարութիւնը կը հանդիսանայ կարող խմբապետի մը չգոյութիւնը: Այս դժուարութեանց որպէս դարման՝ Լեւոն Աբգարեան մէջ ընդ մէջ կ'այցելէ Դամասկոս:

1932ին, սկաուտական խումբի անդամ-

ներուն թիւը կը բարձրանայ 45ի: Սակայն, 1935ին, խումբին թիւը կրկին տեղատը-
ւութիւն կ'արձանագրէ. ընդհանուր թիւ 25,
որոնցմէ ութը աստիճանաւորներ են: Կարճ
ժամանակի մը համար խմբապետն է Բեն-
իամին Թուրեան, իսկ սկաուտական խոր-
հուրդը կը վարէ Արտաշէս Աթթարեան:

1936ին, Պէյրուսիէն Դամասկոս կը փո-
խադրուի Տիգրան Ոսկերիչեան փոխ-խմբա-
պետի աստիճանով: Սկաուտական շարժումը
նոր շունչ մը կը ստանայ անոր գալուս-
տով: Վարչութիւնը կը նշանակէ սկաուտա-
կան խորհուրդ, մասնակցութեամբ հետեւե-
լաներուն. Ա. Սիմոնեան, Սարգիս Պա-
պիկեան, Յ. Գալայճեան եւ Լ. Եէրիկեան,
խմբապետ՝ Բ. Կիտիչեան, փոխ-խմբապետ՝
Տիգրան Ոսկերիչեան:

1937էն սկսեալ, Սուրիոյ սկաուտական
շարժումի վերակազմակերպումին առիթով,
Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներն ալ կրեցին միո-
րինակ տարազ եւ մաս կազմեցին սուր-
իական նորակազմ Ֆետերասիոնին: Միա-
ժամանակ՝ դիմեցին Շրջանային Վարչու-
թեան, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ը ունենայ այ-
ցելու կարող սկաուտ մասնագէտ գործիչ
մը, որուն պարտականութիւնը ըլլայ շրջիլ
բոլոր մասնաճիւղերը եւ պատրաստել գո-
յութիւն ունեցող սկաուտական կազմերը:

1938ին, խումբին թիւը կը հասնի իր
առաւելագոյնին՝ շուրջ 70 հոգի՝ սկաուտ
եւ գայլիկ բաժիններով: Խումբը կը շա-
րունակէ իր յառաջդիմութիւնը ղեկավա-
րութեամբ խմբապետ Տիգրան Ոսկերիչե-
անի:

ՀԱԼԷՊ

Հիմնադրութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի հիմ-
նադրութենէն առաջ, 1910ական թուական-
ներուն, հոն գործած են ֆուլթպոլի հայկա-

կան խումբեր: Այս խումբերը, որոնք նաեւ
Սուրիոյ մարզական շարժումի ռահվի-
րաները դարձան, ունեցած են՝ մարզանքի
տարածման իմաստով՝ լայն գործունէու-
թիւն վարժարաններէ ներս թէ դուրս:

Այսպէս, «Պարթեւ» մարզական ակում-
բը, հիմնուած՝ 1911ին, գործած է մինչեւ
1914: Պատերազմի դադարէն ետք, ան
1920ին, կրկին կեանքի է կոչուած «Պարթեւ
Միութիւն» անունով: Նոյնպէս, 1911էն
սկսեալ, Հալէպի մէջ գործած է «Աղբիւր»
պատանեկան միութիւնը: Այս գոյգ միու-
թիւնները ունեցած են ֆուլթպոլի խումբեր
եւ աթլետիկ միջոցներ: Անոնք
ունեցած են ազգային հանդիսութեանց
մասնակցութիւն: «Պարթեւ» ունեցած է
նաեւ նուագախումբ, իսկ «Աղբիւր»՝ 1912էն
1914՝ ունեցած է իր խմորատիպ թերթը եւ
գրադարան:

Համաշխարհային Առաջին Պատերազ-
մէն ետք, Թրքահայաստանէն տեղահան-
ուած հայութեան զանգուածներ հետզհետէ
կը հասնին Հալէպ: Աննկարագրելի դժուա-
րութիւններով Հալէպ հասնող հայութիւնը
իր հետ կը բերէ նաեւ Թուրքիոյ հայաբնակ
քաղաքներու մարզական միութիւններու
անդամներ: Այս կարգին կը պատկանի,
յատկապէս, Այնթապ քաղաքի «Համազասպ»
մարզական միութիւնը, որուն վարիչները
իրենց հետ Հալէպ կը բերեն նաեւ միու-
թեան գոյքերն ու արխիւները, եւ 1922ին,
Հալէպի մէջ կը վերսկսին «Համազասպ»ի
գործունէութեան, աննախընթաց հետաքըր-
քութիւն ստեղծելով իրենց շուրջ:

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի նորակազմ մաս-
նաճիւղը իր 23 Հոկտեմբեր 1925 թուակա-
նակիր նամակով, կը թելադրէ Տօքթ. Ատուր
Գապագեանին, որ Հալէպի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի
մասնաճիւղ մը հիմնելու աշխատանք տանի:

Տօքթ. Գապագեան, այս թելադրանքէն
քաջալերուած, իր բնակարանին մէջ խոր-
հրդակցութեան կը հրաւիրէ Հալէպի մէջ



Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան մասնակից «Համազասպ» Ակումբի մարզիկներու խմբանկար:
Զախին՝ Մարգիշ Լեւոն Արգարեան, Ակարուած 1919ին

գործող բոլոր հայ մարզական միութիւններն ու խումբերը՝ «Համազասպ», «Ուսումնասիրաց», «Կայծակ», «Տալուրիկ» եւ «Արարատ»: Ասոնցմէ առաջին չորսը ներկայ կ'ըլլան իրենց ներկայացուցիչներով: Տօքթ. Գապագեան, բացատրելէ ետք համադրեալ գործունէութեան մը առաւելութիւնները, կ'առաջարկէ բոլոր խումբերը լուծել եւ հիմնել Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղը, նոյնպէս՝ ծանօթացնելով այս մեծ կազմակերպութեան ազգօգուտ նպատակները: Ներկայացուցիչները առաջարկը ընդունելով կը մեկնին անջատ խորհրդակցութեան՝ ժամադրուելով կրկին հաւաքուիլ

Կիրակի 1 Նոյեմբեր 1925ին, նոյն վայրը՝ վերջնական որոշումի համար:

Որոշուած թուականին ժողովի կը ներկայանան «Համազասպ», «Կայծակ» եւ «Տալուրիկ» միութիւններու լիազօր ներկայացուցիչները, որոնք, տեղւոյն վրայ, լուծուած կը յայտարարեն իրենց խումբերը, եւ առժամեայ մարմինի մը կը յանձնեն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը հիմնադրութեան աշխատանքները:

Երեքշաբթի, 17 Նոյեմբեր 1925ին, վերոյիշեալ երեք միութիւններու 48 անդամները ընդհ. ժողով կը գումարեն եւ լսելէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր Ծրագիր

Կանոնագրի տրամադրութիւնները, բոլորն ալ Հ.Մ.Ը.Մ.ի անդամ կ'արձանագրուին եւ կ'ընտրեն Հալէպի մասնաճիւղի անդրանիկ վարչութիւնը, գլխաւորութեամբ՝ Լուտեր Մասպանաճեանի եւ մասնակցութեամբ հետեւեալներուն. Սահակ Խաչատուրեան, Տիգրան Աղճայեան, Լեւոն Մուրատեան, Միհրան Կարապետեան, Լեւոն Արգարեան, Լեւոն Պապիկեան եւ Շաւարշ Պեքեարեան:

Կազմակերպչական եւ մարզական գործունէութիւն

Մասնաճիւղի անդրանիկ վարչութեան գործը կ'ըլլայ միութիւնը զօրաւոր հիմերով վրայ դնել: Դիմում կը կատարուի պետութեան եւ 26 Յունիս, 1926 թուականակիր թիւ 432 հրամանագրով կը ստացուի պետական ճանաչում: Մասնաճիւղի ֆուլպուրի Ա. խումբը մրցումներ կ'ունենայ տեղական զանազան խումբերու դէմ: Յաստակ յիշատակութեան արժանի է Թերա Սանթա գոլէճի խումբին դէմ Հ.Մ.Ը.Մ.ի տարած յաղթանակը: Թերա Սանթան, նախորդ եղանակին, Հալէպի ախոյեան խումբն էր: Կը կազմուին նաեւ պահեստի երկրորդական խումբեր եւ մարմնամարզի այլ ճիւղերու մասնակցող խումբեր, ինչպէս՝ շուէտական մարզանք եւ աթլետիզմ: Պէյրութի մասնաճիւղի միջոցաւ կ'ապահովուին աթլետիզմի գոյքեր՝ գունտ, նիզակ, սկաւառակ եւայլն:

10 Օգոստոս, 1926ին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով Ազգային վարժարանի սրահին մէջ:

Այս ժողովէն կ'ընտրուի հետեւեալ վարչական կազմը.

Ատենապետ՝ Կոպեռնիկ Մանսուրեան
 Ատենդպիր՝ Միհրան Կարապետեան
 Գանձապահ՝ Սահակ Խաչատուրեան
 Հաշուապահ՝ Լուտեր Մասպանաճեան
 Գոյքապահ՝ Անդրանիկ Գաբլանեան
 Մարզիչ եւ սկաուտական պատասխանատու՝ Լ. Արգարեան:

7 Սեպտեմբեր, 1926ի նիստին իրար միջեւ պաշտօններու փոխանակում կը կատարեն Լուտեր Մասպանաճեան եւ Կոպեռնիկ Մանսուրեան: Այսպէսով, վարչական կազմի պատկերն է. Ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան, հաշուապահ՝ Կոպեռնիկ Մանսուրեան, իսկ մնացեալ պաշտօնները կը մնան անփոփոխ: Ֆուլպուրի յանձնարարութիւններն են՝ Շաւարշ Պեքեարեան (ընդհ. խմբապետ), Փանոս Խաչքըզեան, Արամ Կըրկրեան, Բարգէն Վահրամեան եւ Գրիգոր Մեշեֆէճեան: Ա. խումբին մաս կը կազմեն՝ Վոսա Դերձակեան՝ բերդապահ, Շաւարշ Պեքեարեան եւ Անդրանիկ Գաբլանեան՝ յետսապահներ, Լեւոն Մուրատեան, Լ. Հիմիտեան եւ Մ. Մանուկեան՝ միջնապահներ, Լեւոն Պապիկեան՝ խմբապետ, Կ. Աքելեան, Ս. Խաչատուրեան, Փանոս Խաչքըզեան, Ճիճօ Մղապէր՝ յառաջապահներ, Յարութիւն Մաթոսեան եւ Մեշեֆէճեան՝ պահեստիներ — [ԻԲ/10.6]:

Վարչութիւնը որպէս ակումբ նկատի կ'ունենայ Չարսանձաքցիներու վարժարանի սենեակներէն մէկը, տարեկան 5 Օսմ. ոսկի վարձքով, սակայն փորձով անյարմարութիւններ կը յայտնուին, հետեւաբար՝ կ'ապահովուի Երուսաղէմի հայոց վանքին պատկանող հոգետան մէջ գրադարաններու սենեակը, գիշերները օգտագործուելու պայմանով, եւ տարեկան 5 Օսմ. ոսկի վարձքով: Սենեակը կը զարդարուի մարզական նկարներով: Հ.Մ.Ը.Մ.ը կ'ունենայ իրեն յատուկ պահարանը: Միաժամանակ, պրպտումներ կ'ըլլան ապահովելու համար վարձու մարզադաշտ մը, եւ Հ.Մ.Ը.Մ.ին կը տրամադրուի դաշտ մը՝ Սիւլէյմանիէ թաղին մէջ:

14 Նոյեմբեր, 1926ին, Թերա Սանթա գոլէճի մարզադաշտին վրայ մասնաճիւղը կը կազմակերպէ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ ողիմպիական խաղերու հանդիսութիւն՝ նախագահութեամբ Արտաւազդ Մ.

Վրդ. Սիւրմէյեանի: Անձրեւը պատճառ կ'ըլլայ, որ այս խաղերը մէկ շաբաթով յետաձգուին: 21 Նոյեմբեր, 1926ին, անոնք տեղի կ'ունենան՝ 65 մարզիկներու եւ 35 սկաուտներու մասնակցութեամբ: Օրուան դատական կազմին կը մասնակցին՝ Սուրէն Գալենտէրեան, Գեղամ Աքկիւլեան, Սուրէն Ճեմիլեան, Լուի Հեքիմեան, Ֆերտինան Սահակեան, Ճան Մելիտոնեան, Բիւզանդ Թիւֆէնքճեան, Գէորգ Փափազեան, Օննիկ Ասատուրեան, Վահէ Սէթեան: Օրուան բժիշկըն է՝ Տօքթ. Թորոս Պասմաճեան:

Ժողովուրդը մեծ հետաքրքրութեամբ կը հետեւի այս խաղերուն, քաջալերելով Հ.Մ.Ը.Մ.ի նորակազմ մասնաճիւղի մարզիկները: Առաջնութիւն շահողները կը ստանան Ֆրանսայէն ապսպրուած մետալներ, երկրորդ հանդիսացողները՝ Հ.Մ.Ը.Մ.ի պէճով ժապաւէններ, իսկ երրորդները՝ տըպուած ժապաւէններ: Օրուան ակոյեան կը հանդիսանայ Յարութիւն Մաթոսեան:

Վարչութիւնը կը կազմակերպէ, Հալէպի մէջ առաջին անգամ ըլլալով, Ֆուլպոլի մրցաշարք մը՝ «Լիկ-Մաչ», որուն իր խումբը կը մասնակցի հալէպահայ Ֆուլպոլի խումբերու հետ միացեալ զօրացուած կազմով: Հայկական խառն խումբին մաս կը կազմեն՝ բերդապահ՝ Ժան Մելիտոնեան, յետսապահներ՝ Շաւարշ Պեքեարեան եւ Անդրանիկ Գաբլանեան, միջնապահներ՝ Պետրոս Մելիտոնեան, Մկրտիչ Գաբլանեան եւ Ամիեան, յառաջապահներ՝ Վաղենակ Ճենապեան, Սուրէն Պայրնտրեան, Փանոս Խաչքըզեան, Ճորճ Միսիրեան, Գէորգ Տէր Մըկըրտիչեան: Անոնք կու գան Հ.Մ.Ը.Մ., Ուսումնասիրաց, Արարատ եւ Նուպար խումբերէն:

Մրցաշարքին կը մասնակցին նաեւ՝ Ֆրանսական զինուորական խումբը, Իւնիլըն Սթօրթիվ Տ'Ալէք, Սուլթանիէ եւ Թերա Սանթա կազմերը:

1926ի վերջաւորութեան, վարչական

կազմէն ներս Բարգէն Վահրամեանը կը փոխարինէ Լեւոն Արգարեանը՝ որպէս սկաուտ խմբապետ, իսկ Շաւարշ Պեքեարեանը կը փոխարինէ Եզեկիէլ Մինասեանը:

Վարչութեան վերջին հրապարակային ելոյթը կ'ըլլայ մասնաճիւղի հիմնադրութեան առաջին տարեդարձի տօնակատարութիւնը՝ 16 Յունուար, 1927ին:

23 Յունուար, 1927ին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով՝ հետեւեալ օրակարգերով.

1.— Վեցամսեայ գործունէութեան տեղեկագրի ընթերցում եւ հաշուետուութիւն

2.— Հին եւ նոր անդամատուրքերու գանձում

3.— Տեղեկութիւններ արտասահմանի Հ.Մ.Ը.Մ.ներու գործունէութեանց մասին

4.— Փարիզի կեդրոնէն եկած շրջաբերականներու ընթերցում. նիւթերն են՝ միութեան տասնամեակի առթիւ գիրքի տըպագրութիւն եւ Հայաստանի մէջ սթատիոն մը կառուցանելու ծրագիր

5.— «Լիկ Մաչ»ի խաղերու մասին զեկուցում:

1 Նոյեմբեր 1925էն մինչեւ 25 Յունուար 1927 երկարող ժամանակաշրջանին մէջ մասնաճիւղը ունեցած է՝ ընդհանուր մուտք՝ 19657 սուրիական դահեկան, ընդհ. ելք՝ 20689 սուր. դահեկան. սնտուկին բացն է՝ 1032 սուր. դահեկան:

Անդամներու թիւը օրէ-օր կ'աճի: Անդամական ցանկերու վերստուգումէն ի յայտ կու գայ, թէ մասնաճիւղը ունի 85 գործօն անդամ՝ անդամատուրքերու լրիւ վճարումով, իսկ 53 անդամներ, կէս համեմատութեամբ անդամատուրք կը վճարեն: Ակումբի սենեակի սահմանները նեղ կու գան թուական այս աճին դիմաց: Սենեակը կ'օժտուի համեստ կահաւորումով, կը մըշակուի ակումբի ներքին կանոնագրութիւն:

18 Ապրիլ, 1927ին, Պէյրուսի, մասնա-
ճիւղի ֆուտպոլի խումբը Չատկուան սո-
ներուն առիթով կ'այցելէ Հալէպ: Չոյգ մաս-
նաճիւղերու խումբերը կ'ունենան իրենց
առաջին հանդիպումը: Մրցումի բաժակը
տրամադրած է «Ազդակ» օրաթերթը: Մըր-
ցումը կը հովանաւորէ Տօքթ. էրնեսթ Ալ-
թունեան, օրուան իրաւարարն է Գեղամ
Աքիլիւեան: Մրցումը կը վերջանայ Պէյ-
րուսի յաղթանակով՝ 1-0 արդիւնքով: Այս
այցելութիւնը հիմը պիտի դնէր հետագային
կազմակերպուելիք՝ Չատկական միջ-մաս-
նաճիւղային խաղերուն:

29 Մայիսին, այս անգամ Սէրքի տը Լա
ժէօնէս Կաթուղի-ի գործակցութեամբ,
մասնաճիւղը կը կազմակերպէ հրապարա-
կային մարզահանդէս:

8 Օգոստոս, 1927ին, տեղի կ'ունենայ
անդամական ընդհանուր ժողով: Շրջանա-
ւարտ վարչութեան տեղեկագրութենէն ի
յայտ կու գայ, որ մասնաճիւղի նիւթական
կացութիւնը բարելաւուած է. մուտքերու
ընդհանուր գումար՝ 25736 ս. դահեկան եւ
ելք՝ 25476 ս.դ., պատրաստ գումար՝ 260
ս.դ. (մեծիտը նկատի առնուած է 20 ս.դ.
սակով):

Նոյն օրը կ'ընտրուի 7 հոգիէ բաղ-
կացած վարչութիւն մը, որոնցմէ 4-ը՝
յաջորդ օրն իսկ՝ բանաւոր պատճառներով
կը հրաժարին վարչութեան մասնակցելէ:
Հետեւաբար, 21 Օգոստոսին, կրկին ընտ-
րութիւն կը կատարուի եւ նոր վարչական
կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան
Փոխ-ատենապետ եւ սկաուտական ներ-
կայացուցիչ՝ Կոպեռնիկ Մանսուրեան
Ատենադպիր՝ Միհրան Կարապետեան
Գանձապահ՝ Կարապետ Փոլատեան
Հաշուապահ՝ Փիլիպոս Դերձակեան
Գոյքապահ՝ Մաթոս Մանուկեան

Մարզական պատասխանատու՝ Զարեհ
Պզտիկեան:

Ֆուտպոլի Ա. խումբի վերակազմու-
թեան համար 28 թեկնածուներ կը ներ-
կայանան, որոնք երկու խումբի բաժնուե-
լով՝ 2 անգամ իրար դէմ կը մրցին: Այս
մրցումներուն արդիւնքներուն լոյսին տակ,
դատական կազմ մը՝ բաղկացած Գեղամ
Աքիլիւեանէ, Լուի Հեքիմիանէ, եւ Ֆրան-
սացի սպայէ մը, կը կատարէ Ա. եւ Բ.
խումբերու խաղացողներու ցանկի ճշդումը:
Ա. խումբին մաս կը կազմեն՝ Վոամ Դեր-
ձակեան, Անդրանիկ Գաբլանեան, Անդ-
րանիկ Աթթարեան, Շաւարշ Պեքեարեան,
Մկրտիչ Գաբլանեան, Մաթոս Մանուկեան,
Յակոբ Քաջագործեան, Փանոս Խաչգըզ-
եան, Կարապետ Փոլատեան, Ազատ Շու-
կայեան, Վաղենակ Ճենապեան, Գառնիկ
Վարժապետեան, Արիստակէս Պարսամեան:

Վարչութիւնը, երկրորդ տարին ըլլա-
լով, կը կազմակերպէ միջ-ակմբային ֆուտ-
պոլի մրցաշարք՝ «Լիկ Մաչ»՝ Հալէպի ֆուտ-
պոլի խումբերու մասնակցութեամբ: Այս
ձեռնարկը աւանդութիւն մը պիտի դառնար՝
կրկնուելով իւրաքանչիւր տարեշրջանին:

Նոյեմբեր 13ին, տեղի կ'ունենայ Հ.Մ.
Ը.Մ.ի հիմնադրութեան Զրդ տարեդարձի
սոնակատարութիւն՝ Ազգային վարժա-
րանի մանկապարտէզի սրահին մէջ, հո-
վանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին:
Օրուան բանախօսներն են՝ Կարապետ Իւ-
լիպէյեան եւ Յակոբ Տասնապետեան: Յայ-
տագրին մաս կը կազմեն գեղարուեստա-
կան բաժին եւ 15 սկաուտներու կատարած
երգումը:

Ակումբային կեանքը աւելի կը զար-
գանայ, Զորեքշաբթի երեկոները աւումբը
բաց է ընթերցանութեան համար՝ երեկոյ-
եան ժամը 6-9: Մասնաճիւղը կը ստանայ
Յունաստանի Շրջանային Վարչութեան պաշ-
տոնաթերթ՝ «Նոր Սերունդ»էն 15 օրինակ-
ներ, որոնք կը սպառէ անդամներուն մօտ:

1928 տարուան վարչութեան անդամներն են.

Ատենապետ՝ Կոպեռնիկ Մանսուրեան
Փոխ-ատենապետ՝ Գառնիկ Ազիրեան
Ատենադպիր՝ Խորէն Հելվաճեան
Փոխ-ատենադպիր՝ Լուտեր Մասպանաճեան

Մարզական պատասխանատու՝ Սահակ Խաչատուրեան

Գանձապահ՝ Փիլիպոս Դերձակեան
Հաշուապահ՝ Տիգրան Յովակիմեան:

Այս վարչութեան գործունէութեան մաս կը կազմէ, որպէս նոր ճիւղ, պասքեթպոլի խումբի կազմակերպումը: Միաժամանակ զարկ կը տրուի աթլետիզմի ճիւղին:

Կը կազմակերպուի տարեկան միջակումբային մրցաշարք, մասնակցութեամբ հետեւեալ ակումբներուն. Սուլթանիէ, Իւնիօն Սթորթիվ, Ուսումնասիրաց, Նուպարեան, Արարատ եւ Հ.Մ.Ը.Մ.:

Ֆութպոլի սեփական դաշտի չգոյութիւնը կը դժուարացնէ այս ճիւղի զարգացումը: Վարչութիւնը կը ծրագրէ նոր դաշտ մը վարձել Սեպիլի շրջանին մէջ:

1928 տարեշրջանի վարչական կազմին անդամներն են.

Ատենապետ՝ Սուրէն Քալենտէրեան
Ատենադպիր՝ Միհրան Կարապետեան
Հաշուապահ՝ Բիւզանդ Թիւֆէնքճեան
Գանձապահ՝ Խորէն Հելվաճեան
Մարզական պատասխանատու՝ Ֆերտինան Սահակեան

Սկաուտական խմբապետ՝ Լուտեր Մասպանճեան

Ֆութպոլի խմբապետ՝ Գեղամ Աքիլիւեան:

Տարուան ընթացքին հաշուապահութեան պաշտօնը կը փոխանձուի Միսաք Եավէրեանին, իսկ Մարզական Պատասխանատուի պաշտօնը՝ Ճորճ Միսիրեանին:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տասնամեակի տօնակատարութեան թուական կը

նախատեսուի 19 Յունուար, 1929: Սակայն, յետաձգումէ ետք, հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 10 Փետրուար, 1929ին:

1929ը նոր անդամակցութեանց տարին է: Ֆութպոլի առաջին խումբին խմբապետն է Զարեհ Ճերահեան. խումբին մաս կը կազմեն՝ Վոսմշապուհ Դերձակեան, Անդրանիկ Ասլանեան, Անդրանիկ Գաբլանեան, Անդրանիկ Աթթարեան, Խորէն Նազարեան, Եագուպ Իշխանեան, Ճորճ Միսիրեան, Փանոս Խաչքըզեան, Ազատ Շուկայեան, Վաղինակ Ճենապեան, Կարապետ Թորոսեան:

Պահեստի խումբի խմբապետն է Վահրամ Պայրնտրեան. խումբին մաս կը կազմեն՝ Ռուբէն Յովնանեան, Հայկ Մինասեան, Տրդատ Մանուկեան, Մկրտիչ Գաբլանեան, Զաւէն Զորպաճեան, Յակոբ Քաջագործեան, Գրիգոր Մեսրոպեան, Արիս Պարսամեան, Վահրամ Վարժապետեան, Արմենակ Գէորգեան, Աւետիս Գաբլանեան:

19 Մայիսին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով եւ նոր վարչութեան ընտրութիւն՝ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Սուրէն Գալենտէրեան
Փոխ-ատենապետ եւ սկաուտական խմբապետ՝ Լուտեր Մասպանաճեան
Ատենադպիր՝ Միհրան Կարապետեան
Փոխ-ատենադպիր, գանձապահ եւ գոյքապահ՝ Փիլիպոս Դերձակեան
Հաշուապահ՝ Տիգրան Յովակիմեան
Մարզական պատասխանատու՝ Ճորճ Միսիրեան

Ֆութպոլի ընդհանուր խմբապետ՝ Գեղամ Աքիլիւեան:

7 Յուլիսին, զինուորական դաշտին վրայ վարչութիւնը կը կազմակերպէ հալէպահայ ողիմպիական խաղեր: Դատաւորներն են՝ Գաբիթէն Էրնեսթ Ալթունեան, Արամ Շորվողլեան, Լուի Հեքիմեան, Սուրէն Գալենտէրեան, Գեղամ Աքիլիւեան,

Տերտինան Սահակեան, Չարեհ Պզտիկեան եւ Վահէ Սեթեան:

Հոկտեմբերին, վարչութիւնը կը յաջողի ձէպէլ Նահրի շրջանին մէջ, Քուէյք գետին մօտակայ դաշտ մը վարձել՝ 3 տարուան համար, տարեկան 19 օսմ. ոսկի վարձքով: Դաշտի յարդարման աշխատանքին կը լծուին մասնաճիւղին անդամները:

Վերոյիշեալ վարչութիւնը կը գործէ մինչեւ 16 Փետրուար, 1930, երբ տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով եւ կ'ընտրուի 1930 տարուան վարչութեան կազմը հետեւեալ կերպով.

Ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան
Ատենադպիր՝ Միհրան Կարապետեան
Փոխ-ատենադպիր՝ Փիլիպոս Դերձակեան

Գանձապահ՝ Կարապետ Չիչէքեան
Հաշուապահ՝ Տիգրան Յովակիմեան
Գոյքապահ՝ Խորէն Հէլվաճեան

Մարզական պատասխանատու՝ Չարեհ Ճերահեան:

Վարչութեան առաջին գործը կ'ըլլայ՝ նորահարթ ֆուլթպոլի դաշտին կողքին՝ սարքել նաեւ պասքեթպոլի, թենիսի դաշտ եւ մարզական կազմածներ՝ պարֆիֆս եւ պար փարալէլ:

Այս վարչութեան կեանքը պիտի ըլլար կարճ եւ պիտի տեւէր միայն վեց ամիս: 17 Օգոստոս, 1930ին, նոր վարչութեան ընտրութեամբ կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան
Ատենադպիր՝ Միհրան Կարապետեան
Գանձապահ եւ գոյքապահ՝ Խորէն Հէլվաճեան

Հաշուապահ՝ Միսաք Ապաճեան (փոխարինուած՝ Վազգէն Սելեանով)

Մարզական պատասխանատու՝ Ճորճ Միսիրեան

Սկստական պատասխանատու՝ Ալպէր Չաքարեան (փոխարինուած՝ Նշան Թիւյսիւզեանով)

Խորհրդական՝ Անդրանիկ Աթթարեան:

Այս շրջանին կը զարգանայ թենիսի ճիւղը: Վարչութեան կողմէ նշանակուած յատուկ յանձնախումբը՝ բաղկացած Միսաք Պժեանէ, Ճորճ Միսիրեանէ, Վազգէն Պալեանէ, Չարեհ Ճերահեանէ եւ Վազգէն Մուրատեանէ, կը պատրաստէ թենիսի ճիւղի ներքին կանոնադրութիւն մը:

Ֆուլթպոլի այս տարուան խումբերու կազմը հետեւեալ պատկերը կը ներկայացնէ.

Ա. խումբ՝ Ռուբէն Յովնանեան, Անդրանիկ Աթթարեան, Կարապետ Թորոսեան, Կարապետ Սաթճեան, Մկրտիչ Գաբլանեան, Գրիգոր Մեսրոպեան, Ճորճ Միսիրեան, Անդրանիկ Գաբլանեան, Չարեհ Ճերահեան, Փանոս Խաչգըզեան եւ Վահրամ Վարժապետեան:

Բ. խումբ՝ Բիւզանդ Միսիրեան, Ասպետ Գասպարեան, Յովհաննէս Սիմիթեան, Արմենակ Գէորգեան, Սուրէն Մինասեան, Հայկ Մինասեան, Արմէն Աբգարեան, Անդրանիկ Շուկայեան, Վահան Դոբանճեան եւ Կարապետ Աքիւլեան:

Գ. խումբ՝ Անդրանիկ Կիւրիւնլեան, Քերոբ Պասմաճեան, Հազարապետեան, Սարգիս Ահարոնեան, Յարութիւն Եագուպեան, Հայկ Կուտիկեան, Վահան Չարֆոսեան, Արսէն Տաղլեան, Յակոբ Միւլահեան, Լեւոն Չամիչեան, Արամ Տէր Ղուկասեան եւ Յակոբ Թոփալեան:

Վարչութիւնը կը կազմակերպէ աւանդութիւն դարձած Լիկ Մաչի խաղերը: 1931ի Չատկուան, միջ-մասնաճիւղային խաղերը տեղի կ'ունենան Պէյրութի մէջ: Տեղափոխութեան համար, վարչութիւնը նիւթական փոխառութեան կը դիմէ: Ֆուլթպոլի խումբը կը մասնակցի հետեւեալ կազմով. բերդապահ՝ Բիւզանդ Միսիրեան, յետսապահներ՝



Հալեպի Հ.Ս.Ղ.Ս.Ի Բ. դասակարգի ֆուտբոլի խումբը 1930-ին

Անդրանիկ Աթթարեան, Սարգիս Ասատուրեան, Կարապետ Սաաթճեան, միջնապահներ՝ Զաւէն Զորպաճեան, Փանոս Խաչազըզեան եւ Կարապետ Թորոսեան, յարձակողներ՝ Վահրամ Վարժապետեան, Սարգիս Գ. Օղլանեան, Վահան Մչիկեան, Ճորճ Միսիրեան եւ Վաղենակ Ճենապեան: Պէյրուսի մէջ խումբը կը մրցի նաեւ ԷՅ. ԻՈՒ.ՊԻ-ի եւ Ռընեսանսի կազմերուն դէմ:

Ֆիզիքականի կողքին, վարչութիւնը մտահոգ է անդամներու բարոյական դաստիարակութեամբ: Ահաւասիկ օրուան վարչական ժողովներու մէկ օրակարգի լուծումը. «Պահապանը հրահանգ առնելով մէկտեղ արգիլելու բախտախաղերը, ամսոյս 27ին, Պրն. Նշան Թիւսիւզեան ականատես կ'ըլլայ

խումբ մը տղոց եւ անմանաւանդ պահապանի բախտախաղի մասնակցութեան: Որոշուեցաւ պահապանին ամսականէն 1 սուրիական ոսկի կտրել որպէս տուգանք, իսկ մասնակցող տղոց կախակաշել իրենց անունները իմանալէն վերջ»:

3 Մայիս, 1931ին, կը կայանայ անդամական ընդհանուր ժողով: Տեղեկագրի ընթերցումէն ետք տեղի կ'ունենայ նոր վարչութեան ընտրութիւն, խտացեալ հինգ հոգինոց կազմով մը, որոնցմէ մէկը տեղւոյն վրայ կը հրաժարի: Առ այդ, անդամական ընդհանուր ժողովի ղեւանի որոշումով, մնացեալ չորս անդամները առժամաբար կը ստանձնեն մասնաճիւղի վարչական աշխատանքները հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան
 Ատենադպիր՝ Միհրան Կարապետեան
 Գանձապահ՝ Նշան Թիւլսիւզեան
 Խորհրդական՝ Մեսրոպ Երկաթունի:
 Յունիսին, կրկին վարչական ընտրու-
 թիւն տեղի կ'ունենայ: Նորընտիր վարչու-
 թիւնը աշխատանքները կը բաժնէ հետեւեալ
 ձեւով.

Ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան
 Ատենադպիր՝ Միհրան Կարապետեան
 Գանձապահ եւ գոյքապահ՝ Աշոտ Եսայ-
 եան

Հաշուապահ՝ Վազգէն Սելեան
 Ֆուլթպոլի ներկայացուցիչ՝ Մեսրոպ Եր-
 կաթունի

Մարզական՝ Վահան Մչիկեան, սկա-
 ուտական՝ Նշան Թիւլսիւզեան:

Այս կազմը, իր կողքին կը նշանակէ
 խորհրդատու մարմին մը՝ բաղկացած հե-
 տեւեալներէն. Միսաք Պժեան, Տօքթ. Գա-
 սապեան, Սուրէն Գալենտէր, Կոպեռնիկ
 Մանսուրեան եւ Գեղամ Աքիլիւեան:

Նոյնպէս, կը նշանակուի ողիմպիական
 խաղեր կազմակերպող օժանդակ յանձնա-
 խումբ մը, մասնակցութեամբ՝ վարչական-
 ներ Երկաթունիի եւ Մչիկեանի կողքին՝ Յա-
 կոբ Մաթոսեանի, Կարապետ Աղճայեանի եւ
 Անդրանիկ Աթթարեանի:

Սկաուտական խորհուրդին մաս կը
 կազմեն՝ Նշան Թիւլսիւզեան, Մեսրոպ Եր-
 կաթունի, Միսաք Պժեան եւ Կոպեռնիկ
 Մանսուրեան:

Վարչութիւնը մասնաճիւղի գրադարա-
 նին համար Յովհաննէս Արգոյեանէն կը
 ստանայ 10 հատոր գիրք:

Մարզական եւ սկաուտական գործու-
 նէութիւնները հետզհետէ կը զարգանան
 աւելի տարածուն եւ հաստատ կերպով:

Մասնաճիւղի 21րդ անդամական ընդ-
 հանուր ժողովը կը կայանայ 31 Յունուար,
 1932ին: Նորակազմ վարչութեան մաս կը
 կազմեն.

Ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան
 Ատենադպիր՝ Միհրան Կարապետեան
 Գանձապահ՝ Խորէն Հելվաճեան
 Հաշուապահ՝ Վազգէն Սելեան (որուն
 մերժումով զինք կը փոխարինէ Յակոբ Սիւ-
 լահեան)

Սկաուտական ներկայացուցիչ՝ Նշան
 Թիւլսիւզեան

Ֆուլթպոլի ներկայացուցիչ՝ Յարու-
 թիւն Խաչատուրեան

Գոյքապահ եւ մարզականի ներկայա-
 ցուցիչ՝ Անդրանիկ Աթթարեան:

Այս վարչութիւնը կը գործէ միայն վեց
 ամիս:

12 Յուլիս, 1932ին, Շրջանային Վար-
 չութիւնը կը յառաջացնէ վարչական նշա-
 նակովի կազմ մը՝ բաղկացած հետեւեալ-
 ներէն.

Ատենապետ՝ Տօքթ. Յակոբ Գասապեան
 Փոխ-ատենապետ՝ Տօքթ. Ատուր Գա-
 պաքեան

Ատենադպիր՝ Միսաք Պժեան
 Գանձապահ՝ Վարդան Ազիրեան
 Հաշուապահ՝ Կարապետ Աղճայեան
 Ֆուլթպոլի պատասխանատու՝ Լեւոն Մու-
 րատեան

Գոյքապահ՝ Յարութիւն Խաչատուրեան:

Վերջինս կը մերժէ մասնակցիլ վար-
 չութեան՝ քաղաքէն իր մեկնումին պատճա-
 ռով, եւ կը փոխարինուի Կոպեռնիկ Ման-
 սուրեանով:

Նշանակեալ վարչութիւնը իր կողքին
 կը կազմէ ֆուլթպոլի, թենիսի, սկաու-
 տական եւ դաշտի յանձնախումբեր, եւ կը
 պատրաստէ ներքին կանոնադրութեան նա-
 խագիծ մը:

Ֆուլթպոլի բաժինը կը կազմէ Ա. խումբ
 եւ սկաուտական խումբ:

Թենիսի յանձնախումբին մաս կը կազ-
 մեն՝ Վազգէն Մուրատեան, Վազգէն Սել-
 եան, Անդրանիկ Գաբլանեան, Խորէն Հել-
 վաճեան եւ Յակոբ Սիւլահեան:

Աթլեթիզմի պատասխանատուները կը յանձնուի Անդրանիկ Աթթարեանին: Միջազգային տնտեսական տագնապը իր անդրադարձը կ'ունենայ նաեւ մասնաճիւղի գործունէութեան վրայ: Անդամատուրքերու գանձումով կարելի կը դառնայ 1932ի նախահաշիւ պիւտճէն հաւասարակշռել: Սակայն, կը մնայ նախորդ շրջանէն եկող բացը, որուն համար վարչութիւնը հրապարակ կը հանէ 2 ս. ոսկինոց պատուոյ տոմսեր, ի զօրու մէկ տարուան՝ բոլոր խաղերուն ազատ մուտքի: Դժբախտաբար, այս փորձն ալ կը ձախողի. միայն մի քանի նման տոմսեր կը սպառին:

Տարեկան մուտքերու ընդհանուր գումարն է 39311 ս. դահեկան, ելքերունը՝ 61482 ս.դ., այսպէսով՝ վարչութեան գանձը 22171 ս. դահեկանի բաց մը կը ներկայացնէ:

Մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւն է 233, որոնցմէ 79ը՝ օժանդակ, 59ը՝ մարզիկ եւ 95ը՝ սկաուտ:

Վերոյիշեալ կազմի գործունէութեան շրջանը կ'աւարտի 1933ի Յունիս ամսուն:

1933ի Օգոստոսին, կը կազմուի նոր վարչութիւն հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Միսաք Պժեան
- Փոխ-ատենապետ եւ գանձապահ՝ Տօքթ. Ատուր Գապաքեան
- Ատենադպիր՝ Կոպերնիկ Մանսուրեան
- Հաշուապահ՝ Յարութիւն Պազարպաշեան
- Սկաուտական խմբապետ՝ Լեւոն Արգարեան

Ֆուլթայոլ եւ աթլեթիզմ՝ Յ. Ուաչատուրեան

Սկաուտ փոխ-խմբապետ եւ գոյքապահ՝ Նշան Թիւյսիւզեան:

Թենիսի յանձնախումբի անդամներն են՝ Կարապետ Աղճայեան, Կ. Մելիքեան, Ուաչիկ Յարութիւնեան եւ Հ. Անտոնեան:

Վարչութիւնը կը փորձէ ֆուլթայոլի

բարեկամական հանդիպումներ յաճախակի դարձնել՝ նիւթական եկամուտներու ազնուակալութեամբ: Արդարեւ, այս տարեշրջանին ելեւմտական կացութիւնը կը բարելաւուի: Շրջանի աւարտին, մուտքերու ընդհանուր գումարն է 1568,05 ս. ոսկի, իսկ ելքերունը՝ 1353,85 ս. ոսկի: Նախորդ տարեշրջանի սնտուկին բացը այս ձեւով փակուած կ'ըլլայ:

Տարեվերջին կը կազմուի «իգական սեռի յանձնախումբ», որուն ատենապետուհին է Ա. Պեքեարեան, ատենադպրուհին՝ Ե. Արգարեան, իսկ վարչութեան կողմէ յանձնախումբի նիստերուն կը մասնակցի Միսաք Պժեան, որ յանձնախումբին կը ծանօթացնէ Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագիրը: Յանձնախումբի առաջին գործունէութիւնը կը կեդրոնանայ թենիսի փորձերու դասաւորման վրայ: Կը ծրագրեն հետագային մշակել նաեւ այլ ճիւղեր, ինչպէս՝ պասքեթպոլ եւ վոլիպոլ:

10 Յունուար, 1934ին, իգական յանձնախումբը վերակազմուելով կը ստանայ հետեւեալ պատկերը. ատենապետուհի՝ Ա. Պեքեարեան, փոխ-ատենապետուհի՝ Ս. Գասապեան, ատենադպրուհի՝ Ե. Արգարեան, փոխ-ատենադպրուհի՝ Ե. Եաւերեան: Դիւանը կ'ունենայ յատուկ նամակի թուղթ եւ կնիք: Իգական բաժնի համար կը մշակուի յատուկ ներքին կանոնագրութիւն: Կը ձեռնարկուի անդամարշաւի, եւ Փետրուարի կիսուն անդամուհիներու թիւը կը բարձրանայ 27ի: Անդամատուրք կը ճշդուի ամսական 2 ֆրանք: Մարզական բաժնի զարգացման կ'օժանդակէ մարզիչ Լեւոն Արգարեան:

11 Մարտ, 1934ին, կը գումարուի իգական սեռի անդամներու ընդհանուր ժողով, ուր կ'ընտրուի պասքեթպոլի յանձնախումբ՝ հետեւեալներէն. օրիորդներ՝ Ուաչատուրեան, Միլլէթպաշեան, Արքանուշ Արծրունի, Մ. Զոպեան եւ Մ. Հազարչահ-

եան, ինչպէս նաեւ կայտերու կազմակերպման յանձնախումբ՝ բաղկացած հետեւեալներէն. Էլիզա Տէր Գաբրիէլեան, Արքանուշ Արծրունի, Արշալոյս Թագուորեան, Արմենուհի Ազատեան եւ Անահիտ Թիւյսիւզեան: Կայտերու սկստական խորհուրդին մաս կը կազմեն տիկիններ՝ ատենապետուհի՝ Ա. Եաւերեան, ատենադպրուհի՝ Հ. Աղամեան, գանձապահուհի՝ Ա. Աթանասեան, վարիչ՝ Ե. Աբգարեան եւ հաշուապահուհի՝ օր. Հ. Ազատեան:

Յունիսին, յանձնախումբը վարչութեան գործակցութեամբ կը կազմակերպէ պարահանդէս, որուն եկամուտով կ'ապահովուի կայտերու տարագաւորումը:

29 Յուլիս, 1934ին, մասնաճիւղի 28րդ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն: Ընտրեալ վարչական կազմը, որոշ փոփոխութիւններէ ետք, կը ստանայ հետեւեալ պատկերը.

- Ատենապետ՝ Խաչիկ Եաւերեան
- Ատենադպիր՝ Մելանքթիոն Արսլանեան
- Գանձապահ՝ Տօքթ. Յակոբ Գասապեան
- Հաշուապահ՝ Յարութիւն Պազարպաշեան
- Գոյքապահ՝ Նշան Թիւյսիւզեան
- Մարզական պատասխանատու՝ Կարապետ Աղճայեան
- Խորհրդական՝ Միսաք Պժեան:

Վարչութիւնը իր կողքին կը նշանակէ սկստական խորհուրդ՝ բաղկացած հետեւեալ անդամներէն. Միսաք Պժեան, Կոպեռնիկ Մանսուրեան, Տիգրան Յովակիմեան, Նշան Թիւյսիւզեան եւ Գրիգոր Իւլիւպէեան: Կը նշանակուի նաեւ մարզական յանձնախումբ՝ բաղկացած հետեւեալներէն.

- Ատենապետ՝ Գառնիկ Ազիրեան
- Ատենադպիր՝ Խ. Հելվաճեան
- Անդամներ՝ Ե. Թիւթիւնճեան, Օննիկ Մելիքսեթեան եւ Կարապետ Աղճայեան:

Այս տարեշրջանը կ'ըլլայ նոր նուաճումներու տարեշրջան մը: Իգական բաժնի

յանձնախումբի գործունէութիւնը հետըզհետէ կը զարգանայ:

Տարեվերջին, մասնաճիւղը կը ստանայ պետական վաւերացում՝ 27 Նոյ. 1934 թուականակիր թիւ 9244 արտօնագրով:

Ֆուլթոնի առաջին խումբի անդամներն են՝ Ջարեհ Ճերահեան, Վահրամ Վարժապետեան, Օհաննէս Կիւլէսէրեան, Արսէն Տէր Ղուկասեան, Մուշեղ Մարութեան, Կարապետ Թորոսեան, Յարութիւն Խաչատուրեան, Չոհրապ Տէր Ղազարեան, Օհաննէս Առաքելեան, Ճեմիլ Պերպէրեան, Տիգրան Քիւրքճեան, Հրանդ Տէր Մանուէլեան, Սուրէն Պերպէրեան, Գէորգ Թոսունեան եւ Էդուարդ Ճեմճեմեան:

Վարչութիւնը հետզհետէ իր տեղը կը գրաւէ Սուրիոյ շրջանի մասնաճիւղերուն եւ Շրջանային Վարչութեան միջեւ, որպէս հաղորդակցութեանց միջոց: Շրջանային Վարչութեան, միջ-մասնաճիւղային յաջորդ խաղերը Պէյրութի մէջ կայացնելու ծրագրին՝ վարչութիւնը դէմ կ'արտայայտուի, առարկելով որ Սուրիոյ հեռաւոր մասնաճիւղերը Պէյրութ պիտի չկարենան տեղափոխուիլ, եւ թէ Պէյրութի մէջ կարելի չէ նոյն թիւով հանդիսականներ ապահովել:

1935-36 տարեշրջանի վարչութեան մաս կը կազմեն՝ Միսաք Պժեան եւ Յարութիւն Պազարպաշեան, աթլետիզմի պատասխանատուն է Կարապետ Աղճայեան:

Այս տարեշրջանի նիւթական գործառնութիւնը հետեւեալ պատկերը կը ներկայացնէ. ընդհ. մուտք՝ 73600 ս.դ. ընդհ. ելք՝ 73346 ս.դ.:

Մասնաճիւղի գործունէութիւնը ալ աւելի կը ծաւալի մարզական նոր ճիւղերու յաւելումով: Մարզիկները կը կատարեն հեծելարշաւի, կռիւմարտի, գօտեմարտի եւ ծանրաբարձութեան փորձեր: Հեծիկի բաժնի պատասխանատուն է Հրանդ Տէտէեան:

Ֆուլթոնի դաշտը կը շրջապատուի թիթեղեայ ցանկապատով, եւ կը սարքուի 250

հոգինոց տախտակէ թրիպիւն: Դաշտի պատասխանատուն է Նշան Նաճարեան:

21 Յունիս, 1936ին, կը կազմակերպուի ողիմպիական դաշտահանդէս, գործակցութեամբ սկաուտական խորհուրդին: Մարզիկները կը բաժնուին 2 դասակարգի, ըստ իրենց տարիքին: Դատական կազմի անդամներն են՝ Սուրէն Գալենտէրեան, Գրիգոր Թնկրեան, Գեղամ Աքկիւլեան, Միսաք Պժեան, Գառնիկ Ազիրեան, Միսաք Եաւերեան, Վարդան Ազիրեան, Զարեհ Պըզտիկեան, Յարութիւն Մոմճեան:

Օրուան Թագուհին է Տիկին Մովսէս Տէր Գալուստեան: Օրուան ախոյեան կը հանդիսանայ Օննիկ Ինճէյեան: 100 մ. վազքի մասնաճիւղի մրցանիշը կը բարելաւէ Մուշեղ Մարութեան՝ 11" 2/10ով:

15 Օգոստոսին, Մասնաճիւղի տարեկան բանակումը տեղի կ'ունենայ Պիթիասի մէջ:

2 Օգոստոս, 1936ին, մասնաճիւղի 32րդ անդամական ընդհանուր ժողովը վարչութեան անդամ ընտրեց հետեւեալները.

Ատենապետ՝ Միսաք Պժեան

Ատենադպիր՝ Յարութիւն Պազարպաշեան

Գանձապահ՝ Տօքթ. Յակոբ Գասապեան
Հաշուապահ՝ Յովհաննէս Փափազեան
Ֆուլթպոլի եւ ամբիթիզմի պատասխանատու՝ Լուտեր Մասպանաճեան

Գոյքապահ եւ դաշտի պատասխանատու՝ Օննիկ Մելիքսեթեան

Թենիս՝ Գառնիկ Ազիրեան:

Սոյն վարչութիւնը պիտի գործէր մինչեւ 1937ի Յուլիս ամիսը: Անդամներու ընդհանուր թիւը 575 է: Մասնաճիւղի ծաւալուն գործունէութեան կը լծուին յատուկ յանձնախումբեր:

Դաշտի յանձնախումբ՝ Օննիկ Մելիքսեթեան, Եղուարդ Ճինոյեան, Գրիգոր Տուզտապանեան: Հ.Մ.Ը.Մ.ի դաշտէն կ'օգտուին նաեւ Հալէպի մարզական այլ միու-

թիւններ, ինչպէս՝ «Իւնիոն Սբորթիվ», «Սէրբլ Կաթուիկ» եւայլն:

Թենիսի ճիւղի յանձնախումբի անդամներն են՝ Գառնիկ Ազիրեան, Կարպիս Զիչէքեան եւ Օննիկ Մելիքսեթեան: Թենիսի դաշտը այս տարեշրջանին կը հարթուի ասֆալթապատ: Սակայն, այս ձեւը ձախողելուն կրկին անգամ կը հարթուի պեթոնով:

Թենիսի ճիւղը արագօրէն կը զարգանայ: Մասնաճիւղը կ'ունենայ շուրջ 20 թենիսմէններ, որոնցմէ ներքին մրցաշարքի մը կը մասնակցին Օննիկ Ինճէյեան, Երջանիկ Տնկիկեան, Սարգիս Զոպեան, Ա. Շամլեան, Գ. Տագէսեան, Գէորգ Զաղլասեան, Յարութիւն Մարութեան, Ն. Պասմաճեան, Վազգէն Տէր Ղուկասեան, Տարագճեան, Կիւլէսէրեան, Խաչիսաչեան, Առաքելեան, Դանիէլեան: Խումբը կը հրաւիրուի իր մասնակցութիւնը բերելու Լիբանանի մէջ՝ Պրումանայի միջազգային մրցաշարքին: Սոյն տարեշրջանի ֆուլթպոլի յանձնախումբի անդամներն են՝ Լուտեր Մասպանաճեան, Խ. Խաչատուրեան եւ Տ. Ղազարեան: Վերջինս կը փոխարինուի Վ. Վարժապետեանով: Ֆուլթպոլի ճիւղը բացառիկ յաջողութիւններու շրջան մը կը բոլորէ: Մասնաճիւղը ունի զանազան դասակարգի 9 խումբեր: Ներքին մրցաշարքի ախոյեան կը հանդիսանայ սկաուտական Ա. խումբը: Զատկուան միջ-մասնաճիւղային 10րդ խաղերուն, քաղաքի խումբը կը մասնակցի Ա. դասակարգի խումբերու մրցաշարքին՝ հետեւեալ կազմով. Տիգրան Քիւրքճեան, Յարութիւն Խաչատուրեան, Խաչիկ Խաչատուրեան, Մանուէլ Քաթրճեան, Ճեմիլ Սարգիսեան, Սուրէն Պերպէրեան, Վահրամ Վարժապետեան, Վազգէն Տէր Ղուկասեան, Անդրանիկ Երէցեան, Հրանդ Տէր Մանուէլեան, Ամետէ Կոկիկեան, Անդրանիկ Կիրակոսեան, Անդրանիկ Զոլաքեան, Երուանդ Յովհաննէսեան, Լեւոն Սարգիսեան, Արսէն Դանիէլեան:



Հալեպի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի 1937-ի կազմը, ձախեւն աջ՝ ոտքի՝ Գառնիկ Ազիրեան եւ Ծեմիլ Սարգիսեան, Երուանդ Յովհաննէսեան, Խաչիկ, Լեւոն Սարգիսեան, Անդրանիկ Երէցեան, Մանուէլ Գաթրճեան, Լուտեր Մասպանճեան. նստած՝ Ասկէր Այրանճի, Յարութիւն Մարութեան, Վազգէն Տէր Ղուկասեան, Վահրամ Վարժապետեան, Ստեփան Մելիքսեթեան եւ Սուրէն:

Բ. դասակարգի խումբերու մրցաշարքին կը մասնակցի Նոր Գիւղի խումբը՝ հետեւեալ կազմով. Երուանդ Նիւյճիւքեան, Գէորգ Շարայեան, Յովհաննէս Առաքելեան, Գրիգոր Տէօքմէճեան, Ասատուր Շամրլեան, Միհրան Պետիրեան, Եղիա Պեքեարեան, Անդրանիկ Հինտոյեան, Եղուարդ Ճեմճեմեան, Պետրոս Քելլեկեան, Գէորգ Զավուչեան, Անդրանիկ Երկաթունի, Անդրանիկ Գալայճեան, Եղիա Գալայճեան, Զաւէն Գուլումճեան, Յակոբ Բանոյեան:

Հ.Մ.Ը.Մ.ի առաջին խումբը կը տեղափոխուի Պէյրուժ եւ Դամասկոս, ուր մրցումներ կ'ունենայ տեղական խումբերուն դէմ: Երկրորդական խումբերը կ'այցելեն Ալեքսանտրէթ, Լաթաքիա, Ազէզ, Քրըք Խան՝

մեծ խանդավառութիւն ստեղծելով այդ մասնաճիւղերու շրջանակներէն ներս:

Բարեկամական մրցումներու փոխադարձ այցելութիւններ կ'ընդունուին Հալեպ, օրինակ՝ Դամասկոսի Փայհան: Իսկ տեղացի ակումբներու դէմ մրցումները կը շարունակուին ամբողջ եղանակի ընթացքին: Այս մասին, հետեւեալ ուշագրաւ տեղեկագրութեան կը հանդիպինք. «Վասպուրական միութեան հետ մեր բարեկամական կապերը աւելի սերտացան այս տարի եւ վերջերս իրենց հետ ունեցանք ֆուտպոլի բարեկամական մրցում մը որ առանց միջադէպի վերջացաւ»: Այս արձանագրութենէն կը հետեւցուի, թէ առհասարակ ֆուտպոլի մրցումները միջադէպերով կը «համեմուէին»:

Սկառուտական խորհուրդի անդամներ նշանակուած են՝ Լուտեր Մասպանաճեան, Տիգրան Յովակիմեան, Յովհաննէս Փափազեան եւ ընդհանուր խմբապետ՝ Լեւոն Պապուզեան: Այս տարեշրջանին, քաղաքի մէջ կը գործեն սկառուտական 8 խումբեր եւ գայլկիկներու 6 խումբեր, Նոր Գիւղի մէջ սկառուտական 8 խումբեր եւ գայլկիկներու 12 խումբեր:

Վարչութեան հրատարակած եւ մասնաճիւղի հիմնադրութեան նուիրուած յատուկ ալպոմ մը, 1937ի տարեգլուխին առթիւ հրապարակ կը հանուի, որմէ սկառուտները 600 օրինակ կը ցրուեն, նիւթաբարոյական մեծ յաջողութիւն արձանագրելով:

Նոր Գիւղի շրջանի արագ զարգացումը դիմագրաւելու համար, վարչութիւնը կը նշանակէ յատուկ յանձնախումբ մը՝ բաղկացած հետեւեալներէն. Հրանդ Մուրատեան, Խաչիկ Խաչատուրեան, Անդրանիկ Երկաթունի, Յակոբ Ճրճեան եւ Յարութիւն Տուզճեան: Միաժամանակ, Շրջանային Վարչութիւնը Հալէպի վարչութեան կը յանձնէ հիւսիսային Սուրիոյ մէջ բազմացող մասնաճիւղերու հսկողութիւնը: Վարչութիւնը սկառուտական տարազներ կը դրկէ նաեւ Երուսաղէմի մասնաճիւղին:

Մասնաճիւղի նիւթական վիճակը բարելաւելու նպատակով, Վարչութիւնը կը կազմակերպէ հասութաբեր զանազան ձեռնարկներ՝ սինեմայի երեկոյթ եւ վիճակահանութիւն: Ֆութպոլի եւ թենիսի դաշտերը վարժարաններու խումբերուն վարձու կը տրուին:

Կը կազմակերպուի նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Օրուան տօնակատարութիւն. օրուան բանախօսներն են՝ Սուրէն Բաբախեան եւ Միհրան Հերարտեան:

5 Յունիս, 1937ին, կը կազմակերպուի պարահանդէս Club d'Alep-ի սրահին մէջ. պարահանդէսի յանձնախումբի անդամներն են՝ Միսաք Եաւերեան, Զարեհ Պզտիկեան

եւ Գառնիկ Ազիրեան:

1937ի Օգոստոսէն սկսեալ, նորընտիր վարչութեան մաս կը կազմեն՝

Ատենապետ՝ Գառնիկ Ազիրեան

Ատենադպիր՝ Յարութիւն Պազարպաշեան

Գանձապահ՝ տօքթ. Յակոբ Գասապեան
Հաշուապահ՝ Յովհաննէս Փափազեան

Խորհրդականներ՝ Նշան Թիւյսիւզեան, Լուտեր Մասպանաճեան, Օննիկ Մելիքսեթեան:

Սոյն վարչութիւնը կը գործէ մինչեւ 1938ի Հոկտեմբեր ամիսը: Տարեկան պիւտճէի նախահաշիւը կը բարձրանայ 730 ս. ոսկիի:

Ակումբի սահմանները շատ նեղ կու գան մասնաճիւղի կարիքներուն, սակայն նիւթական պայմանները չեն ներեր անմիջական բարելաւում ունենալու: Ակումբի տարեկան վարձքն է 33 ս. ոսկի:

Ֆութպոլի դաշտի թիթեղեայ ցանկապատի եւ թրիպիւնի նորոգութիւնները կ'արժեն 445 ս. ոսկի:

Թենիսի դաշտը կը գործէ կանոնաւորութեամբ: Թենիսի յանձնախումբի անդամներն են՝ Գառնիկ Ազիրեան, Միսաք Եաւերեան, Օննիկ Մելիքսեթեան, Վազգէն Մուրատեան եւ Լեւոն Պապիկեան:

21 Նոյեմբերին, վարչութիւնը կը կազմակերպէ ըմբշամարտի երեկոյթ մը: Օրուան աստղն է՝ Միացեալ Նահանգներէն՝ Զարլի Մանուկեան, որուն ուժի ցուցադրութիւնները կը հմայէ Հալէպի բոլոր մարգասէրները:

23 Հոկտեմբեր, 1938ին, մասնաճիւղի 35րդ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն, որուն մաս կը կազմեն նախորդ վարչութեան վեց անդամները: Միայն հաշուապահ Յովհաննէս Փափազեանը կը փոխարինուի Կարապետ Աղճայեանով:

Մասնաճիւղի կիրարկած մարզական բոլոր ճիւղերը հաւասարապէս կը զարգանան:

Ֆուտպոլի ճիւղը ունի 14 խումբեր, որոնք կը ղեկավարուին խմբապետներու ժողովով մը, մասնակցութեամբ՝ վարչականներ՝ Կարապետ Աղճայեանի եւ Լուտեր Մասպանաճեանի: Քաղաքի մէջ կը գործեն Ա. խումբ, պահեստի խումբ եւ Նաւասարդ:

Առաջին խումբի խմբապետն է Մանուէլ Գաթրճեան: Պահեստի խումբի խմբապետն է Յ. Առաքելեան:

Նոր Գիւղի մէջ կը գործեն հետեւեալ խումբերը. Ա. խումբ, Անդրանիկ, Արծիւ, Շանթ, Վրէժ, Վահագն:

Տավուտիէ թաղին մէջ՝ Համազասպ խումբը:

Սկաուտները ունին Ա. եւ Բ. խումբեր եւ 2 երկրորդական խումբ:

Թենիսի յանձնախումբին այս տարեշրջանին կ'օժանդակէ իգական սեռի թենիսի յանձնախումբը՝ բաղկացած հետեւեալներէն. Օրդ. Արուսեակ Թնկրեան, Սուզան Թոսպաթ, Անահիտ Թոքաթլեան եւ Վարսենիկ Պետիկեան:

Թենիսի դաշտը քաղաքի ամենակազմակերպ եւ լաւագոյն դաշտն է:

Ֆուտպոլի դաշտը, նոյնպէս, կազմակերպուած է եւ միութիւններու ու վարժարաններու վարձու կը տրուի:

Անդամներու ընդհանուր թիւը հետեւեալ պատկերը կը ներկայացնէ. գործօն անդամներ՝ 75, մարզիկներ՝ 150, սկաուտներ՝ 170, գայլիկներ՝ 75: Անդամատուրքերու գանձումը տկար է: Ակումբի տարեկան վարձքն է 35 ս.ո., ֆուտպոլի դաշտինը՝ 204 ս. ոսկի:

5 Յունուար, 1939ին, մասնաճիւղը կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի 20-ամեակի տօնակատարութեան հանդիսութիւն, սինեմա Օրիանթալի մէջ, հովանաւորութեամբ՝ Ար-

տաւազդ Արք. Սիւրմէյեանի: Օրուան բանախօսներն են՝ Պէյրութէն՝ Սուրէն Բաբախեան եւ Մանուկ Արսլանեան: Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը կը բերեն «Նայիրի» երգչախումբը եւ նուագախումբը: Հանդիսութիւնը մեծ յաջողութիւն կ'արձանագրէ:

6 Օգոստոս, 1939ին, կը կազմակերպուի ողիմպիական խաղերու (աթլետիկ) դաշտահանդէս: Սուրիոյ եւ Լիբանանի սկաւառակ նետելու մրցանիշը կը բարելաւուի այս խաղերու ընթացքին՝ 26, 97 մետր արձակումով: Օրուան ախոյեան կը հանդիսանայ Անդրանիկ Երէցեան:

Նոյն տարուան ամրան, շրջանը կ'ապրի քաղաքական տագնապալի օրեր: Մանճաքի շրջանը Սուրիայէն անջատուելով կը կապուի Թուրքիոյ: Հայ գաղթականներ երկար կարաւաններով կը դիմեն Հալէպ: Մասնաճիւղի բոլոր անդամներն ու սկաուտները կ'օժանդակեն հայ գաղթականներու տեղաւորման գործին:

Նոյն օրերուն նախատեսուած էր Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Պատգամաւորական ժողով: Հալէպի վարչութիւնը կը յայտնէ, թէ օրուան պայմաններուն բերումով, մասնաճիւղի պատգամաւորները չեն կրնար ժողովին մասնակցիլ: Առ այդ, Շրջանային Վարչութիւնը մէկ տարիով իր պաշտօնավարութեան շրջանը կ'երկարաձգէ: Հալէպի վարչութիւնը, ըստ առաջնոյն, յարաբերութիւն կը մշակէ եւ բարոյապէս կ'օժանդակէ հիւսիսային Սուրիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն՝ Ազէզ, Արաբ Բունար, Հասիչէ, Տէրիք, Գամըշի:

Ահա այս տագնապալի օրերու մթնոլորտին մէջ կը փակուի շրջանի ամենակենսունակ մասնաճիւղի՝ Հ.Մ.Ը.Մ.— Հալէպի այս ժամանակաշրջանի գործունէութիւնը: 1939 Սեպտեմբերին, կը ծագի Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմը:



Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ Աստիճանատրական կազմը: Ծանօթ են ձախէն աջ՝ Ա. շարք առաջին Լեւոն Պայրամեան, Չրդ Նշան Թիւյսիւզեան, Յրդ Լեւոն Արգարեան Բ. շարք՝ Յրդ Նորայր Տէր Պետրոսեան, Գ. շարք՝ Չրդ Արսէն Դանիէլեան, Յրդ Յարութիւն Տէրվիշեան

Սկաուտական գործունէութիւն

Մասնաճիւղի սկաուտական գործունէութիւնը կը սկսի իր հիմնադրութեամբ: Խմբապետ Լեւոն Արգարեան վարչական կազմէն ներս կը ներկայացնէ սկաուտական ճիւղը:

1927ին, վարչութիւնը կը կազմէ սկաուտական յանձնախումբ մը, անոր պաշտօն յանձնելով վերաշխուժացնել սկաուտական տկարացած կազմը: Յանձնախումբին մաս կը կազմեն՝ Կոպեռնիկ Մանսուրեան, Լուսեր Մասպանաճեան եւ Բարգէն Վահրամեան:

Լեւոն Արգարեան, որ Մելքոնեան վարժարան մարզիչի պաշտօնով Նիկոսիա կը

գտնուի, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ը կը ներկայացնէ սկաուտական միջ-մասնաճիւղային ճէմպօրիին:

1928ին, սկաուտ առաջնորդ Լուսեր Մասպանաճեանին կ'օժանդակեն գանձիչներ Անդրանիկ Ասլանեան, Խորէն Նազարեան, Գառնիկ Ճոզիկեան եւ Կարապետ Քաղցրունի: Այս թուականէն սկսեալ, սկաուտական շարքերէն ներս ուժ կը տրուի մարզական գործունէութեան, որպէս հետագայի զանազան մարզաճիւղերուն անդամներու պատրաստութիւն:

Այսպէս, ֆուլթպոլի սկաուտական Ա. խումբը կը բաղկանայ հետեւեալներէն. Թադէոս Թիւթեյեան, Նշան Թիւյսիւզեան, Յովհաննէս Առաքելեան, Յակոբ Ծիերճ-

եան, Յարուժիւն Տերվիչեան, Ալիշան Աճեմեան, Եղուարդ Ճեմճեմեան, Նուպար Աչճեան, Պարգեւ Միսիրեան, Լուսթֆի Գասապեան, Պետրոս Թաքելեան: Իսկ սկառտական խումբին մաս կը կազմեն՝ Ճեմիլ Սարգիսեան, Օննիկ Մելիքսեթեան, Անդրանիկ Սթամպուլեան, Լեւոն Պայրամեան, Նշան Նաճարեան, Անդրանիկ Մարգարեան, Գրիգոր Վարդենիկեան, Նշան Մանուկեան, Նազար Գուչուկեան, Սարգիս Նալչայեան, Եղուարդ Կիրակոսեան, Շիրին Գուլումճեան:

Սկառտները կը մասնակցին նաեւ 5-6 քմ. տարածութեան վրայ հեծելարչաւի մըրցումներուն:

1929էն սկսեալ, սկառտները կը կազմակերպեն տարեկան բանակումներ:

1930ի բանակումը տեղի կ'ունենայ Օգոստոս ամսուան ընթացքին, Պիթիասի մէջ:

Տարուէ-տարի զարգացող սկառտական շարժումը, 1932ին, կը պարզէ հետեւեալ պատկերը. 130 հոգիէ բաղկացող լաւ մարզըւած եւ տարազաւորուած սկառտական խումբեր, որոնք սկառտական աշխատանքներուն առընթեր կը կազմակերպեն նաեւ աթլետիք մըրցումներ, կը մասնակցին ազգային եւ եկեղեցական պաշտօնական հանդիսութեանց: 1933ին, սկառտները ներկայ են Մէյտանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ օժման արարողութեան: Տարեկան բանակումը կը կայանայ Սօուք-Օլուքի եւ Աթըքի մէջ, ուր սկառտներ, Ալեքսանտրէթի մասնաճիւղի գործակցութեամբ, ներկայացում մը կը սարքեն: 1934ի Նոյեմբերէն սկսեալ, սկառտական խորհուրդի անդամ կը նշանակուին՝

Ատենապետ՝ Տօքթ. Յակոբ Գասապեան

Ատենադպիր՝ Ա. Անսրլեան

Փոխ-ատենադպիր՝ Գրիգոր Իւլիպէյեան

Գանձապահ՝ Յովհաննէս Փափագեան

Հաշուապահ՝ Տիգրան Յովակիմեան:

Սկառտ խորհուրդը կը կազմակերպէ

սկառտական տարազներու մթերանոց, տարազներու միօրինականացման եւ նպաստաւոր գիներու ապահովման մտահոգութեամբ: Սկառտական նուագախումբի հին գործիքները կը փոխարինուին 18 նորերով: Խորհուրդը կը կազմակերպէ նաեւ 2 դաշտահանդէսներ եւ դասախօսական ելոյթներ: Սկառտներ գիշերային վարժարան կը ղրկուին գրել-կարդալ սորվելու համար:

Նոր Գիւղի (Մէյտան) սկառտները եւս կը կազմակերպեն հրապարակային ելոյթներ, շրջանին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի տարածման հեռանկարով: Նոր Գիւղի Ս.Օ. Խաչի մասնաճիւղը 28 ձեռք սկառտական զգեստ եւ 2 դրօշակ կը պատրաստէ ու կը նուիրէ սկառտական խորհուրդի մթերանոցին:

1935-36 տարեշրջանի սկառտական խորհուրդի անդամներն են. ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան, ատենադպիր՝ Օննիկ Մելիքսեթեան, գանձապահ՝ Յովհաննէս Փափագեան, հաշուապահ՝ Տիգրան Յովակիմեան, խմբապետներ՝ Նշան Թիւյսիւզեան եւ Լեւոն Պապուզեան: Սկառտական շարքերու ընդհանուր թիւը կը բարձրանայ 255ի՝ հետեւեալ ենթաբաժանումներով. սկառտներ՝ 4 խումբ, իւրաքանչիւրը 4 խմբակ, կայտեր՝ 1 խումբ, գայլիկներ՝ 2 վոհմակ: Իսկ աստիճանաւորական կազմին պատկերն է. խմբապետներ՝ Նշան Թիւյսիւզեան եւ Լեւոն Պապուզեան, փոխ-խմբապետներ՝ Լեւոն Պայրամեան եւ Յակոբ Ճըրճեան, աքելլաներ՝ Թադէոս Թիւթելեան եւ Անդրանիկ Մարգարեան, վարիչ առաջնորդներ՝ Արսէն Դանիէլեան, Պետրոս Թաքելեան, Զոհրապ Տէր Ղազարեան եւ Յովհաննէս Առաքելեան: Առաջնորդներ՝ Թորոս Զոքարեան, Մովսէս Շաքարեան, Եղուարդ Ճինոյեան, Յարուժիւն Բարսեղեան, Յարուժիւն Տերվիչեան, Նորայր Տիւպերեան, Լեւոն Պաքալեան, Գէորգ Զաղլասեան: Փոխ-առաջնորդներ՝ Գէորգ Շարոյեան, Կարպիս Պարիկեան,

Անդրանիկ Չոլաքեան, Գէորգ Բանճարճեան, Մանուէլ Գաթրճեան, Յակոբ Բանոյեան, Սեպուհ Սիսեռեան, Սահակ Մեսրոպ Տէր Ղազարեան, Յարութիւն Տէր Գրիգորեան, Սիսակ Չպուքճեան, Յովհաննէս Մակարեան, Չարեհ Երկաթունի, Վազգէն Տէր Ղուկասեան, Արծիւ Մշիկեան եւ Յարութիւն Տուզճեան:

Սկսած սկսած շարքերը կը հետեւին թեքնիք կանոնաւոր պատրաստութեան եւ կ'անցնեն իրենց քննութիւնները: Ունին 110 նորընծայ, 25 Բ. կարգ, 10 Ա. կարգ, 9 կայտ եւ 60 գայլիկ: Կը կազմակերպուի սկսածներու յատուկ դասախօսութիւններ:

Նոյեմբերին կը սկսին նուազախումբի կանոնաւոր փորձերուն: Ուսուցիչն է Յարութիւն Ժամկոչեան. ունին 4 թմբուկ եւ 12 փող:

Խորհուրդը կը կազմակերպէ սկսած սկսած ճիւղը, որ Սուրիոյ լաւագոյն կազմը կը համարուի, եւ Սուրիոյ ներկայացուցիչին միջոցաւ կը փորձեն միջազգային ճանաչում ստանալ:

21 Յունիս, 1936ին, սկսած խորհուրդը յաջող կերպով կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան ողիմպիական դաշտահանդէսը (աթլետիք մրցումներ):

4 Նոյեմբերին, նոր նշանակեալ սկսած սկսած խորհուրդը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան

Ատենադպիր՝ Տիգրան Յովակիմեան

Գանձապահ՝ Յովհաննէս Փափագեան

Խմբապետ եւ հաշուապահ՝ Լեւոն Պապլուզեան:

Սկսած սկսած շարքերու թիւը կը բազմանայ: Խորհուրդը կը կատարէ աստիճանաւորներու անձնակազմի վերադասարում եւ աստիճաններու տուչութիւն:

Նոր Գիւղը ունի 6 խմբակ նորընծայ եւ 1 վոհմակ: Քաղաքը ունի 5 խմբակ նորընծայ եւ 1 վոհմակ:

Կը կազմակերպեն արշաւ դէպի Ազէզ գիւղը:

1937ի տարեմուտին, խորհուրդը կը կազմակերպէ Նոր Տարուան երեկոյթ:

Շրջանային խմբապետ Սիմոն Թերճանեան կը կատարէ սկսած սկսած աստիճաններու տուչութիւն: Սբ. Ծննդեան տօնին առթիւ կը կազմակերպեն նուիրահաւաք:

Արշաւներն ու բանակումները աւելի յաճախակի եւ կազմակերպուած ձեւով կ'իրականան: Ժողովրդային մեծ հետաքրքրութիւն կը ստեղծուի սկսած սկսած շարժումին շուրջ:

21 Օգոստոսին, սկսած սկսած ընդհանուր բանակումը կը կատարուի Աթլէի մէջ:

Շրջանային Վարչութիւնը Սուրիոյ համար կը նշանակէ սկսած սկսած վերին մարմին՝ բաղկացած Հալէպի մասնաճիւղի անդամներէն՝ Տօթթ. Յ. Գասպեանէ, Լուտեր Մասպանաճեանէ, Օննիկ Մելիքսեթեանէ, Նշան Թիւսիւզեանէ եւ Լեւոն Պապլուզեանէ:

Մասնաճիւղի սկսած սկսած խորհուրդին մաս կը կազմեն՝ Նշան Թիւսիւզեան, Լեւոն Պապլուզեան, Տիգրան Յովակիմեան, Յովհաննէս Փափագեան, Արսէն Դանիէլեան, Լեւոն Պայրամեան, Յովհաննէս Առաքելեան եւ Թադէոս Թիւթեւեան:

Սկսած սկսած խորհուրդի այս կազմը կը շարունակէ իր գործունէութիւնը նաեւ 1938-39 տարեշրջանի համար:

Սկսած սկսած շարքերը կը վերակազմակերպուին: 65 նորագիրներ կը մտնեն անոր շարքերէն ներս, մինչ 50 անդամներ մեկնումի կամ տարիքի բերմամբ կը դադարին սկսած սկսած գործունէութեան մասնակցելէ:

Քաղաքը ունի 60 սկսած եւ 30 գայլիկ:

Նոր Գիւղը ունի 110 սկսած եւ 45 գայլիկ:

Աստիճանաւորներու ընդհանուր թիւն է 41:

Սկաուտական մթերանոցը ունի ճոխ պահեստ եւ կը գործէ յաջողութեամբ:

1939ի աշնան սկիզբի՝ վերոյիշեալ վիճակագրութեամբ կը փակենք Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գործունէութեան այս ամփոփ պատկերը:

ԼԱԹԱՔԻԱ

Կիլիկիոյ պարպումի թուականէն սկսեալ (1922), Սուրիոյ ծովեզերեայ քաղաք՝ Լաթաքիա հաստատուող հայեր հետզհետէ կը կազմակերպեն հայկական գաղութը: Առաջին հերթին կը հիմնուի Ազգային Սբ. Յակոբեանց վարժարանը, որուն կից կը կազմակերպուի Կրթասիրաց Մշակութային Միութիւնը: Կրթասիրացի երիտասարդ անդամներէն՝ Պետրոս Ուղուրլեան եւ Գրիգոր Զպուքճեան կը մտածեն նաեւ մարզական շարժում ստեղծել Լաթաքիոյ մէջ:

Արդարեւ, 1926ին, Պետրոս եւ Կարապետ Ուղուրլեաններ, Գրիգոր Զպուքճեան, Հայկ Ղազարեան, Յարութիւն Գուլումճեան, Միսաք Շիրոյեան եւ Միսակ Լիթոնեան միասնաբար կը հիմնեն Լաթաքիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը եւ կը կազմեն անդրանիկ վարչութիւնը, հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Միսակ Շիրոյեան

Ատենադպիր՝ Յարութիւն Գուլումճեան

Գանձապահ՝ Կարապետ Ուղուրլեան

Գոյքապահ՝ Հայկ Ղազարեան

Աթլեթիք պատասխանատու՝ Գրիգոր Զպուքճեան

Ֆուլթպոլի պատասխանատու՝ Պետրոս Ուղուրլեան:

Նորակազմ մասնաճիւղին կ'անդամագրուին Կրթասիրացի մարզասէր երիտասարդները — [Խ. 345]: Հիմնադրութեան այս աքթին կը հետեւի յառաջդիմութեան

դանդաղ շրջան մը, մինչեւ որ 7 Յունուար, 1928ին, հիմնադրութիւնը կը դառնայ վաւերական: Արդարեւ, 8 Յունուար, 1928, թուականակիր նամակով՝ ատենապետ Միսակ Շիրոյեան եւ ատենադպիր Գարեգին Կէօչերեան Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան հետեւեալը կը գրեն.

«Պատուարժան Ատենապետ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին.

Տեղոյս մէջ Հ.Մ.Ը.Մ.իութեան մասնաճիւղ մը կազմելու ջանադրութեամբ, փափաքող երիտասարդաց մասնաւոր հրաւեր ուղղած էինք հիմնադրական ժողով գումարելու 7 Յունուար 1928 Շաբաթ օր Կրթասիրաց Միութեան ընթերցարանին մէջ: 25 անդամաց ներկայութեան կայացաւ ժողովը, որուն մէջ մեծամասնութեան ձայնով վարչութեան անդամ ընտրուեցան հետեւեալները. ատենապետ՝ Միսակ Շիրոյեան, ատենադպիր՝ Գարեգին Կէօչերեան, գանձապահ՝ Կարապետ Ուղուրլեան, համարակալ՝ Ալեքսան Բաշայեան, գոյքապահ՝ Յարութիւն Գրիգորեան, խմբապետներ՝ Գրիգոր Զպուքճեան եւ Պետրոս Ուղուրլեան:

Նորակազմ մասնաճիւղին կողմէ կու գանք խնդրել ձեզմէ որ բարեհաճիք ընել մեզ հարկ եղած ցուցմունքներ եւ ձեւակերպութիւններ մասնաճիւղիս համար»:

Այս գրութեան պատասխանին մէջ Պէյրութի մասնաճիւղը հետեւեալ թելադրանքը կը կատարէ. «Աւելորդ չենք նկատեր թելադրել ձեզ, որ ձեր յաջողութեան մեծագոյն երաշխիքներէն մին պէտք է փրճտուէք մասնաճիւղի չէզոք հողի վրայ դրուելուն մէջ, եւ պէտք է ջանաք հեռու մնալ ձեր չէզոքութիւնը կասկածի տակ դնող բոլոր երեւոյթներէն»:

1931էն սկսեալ, Լաթաքիոյ մասնաճիւղը աւելի կայուն վիճակ մը կը ստանայ: Անդամներու ընդհանուր թիւն է 32: Վարչութիւնը յաճախակի անդամական ընդհանուր ժողովներ կը կազմակերպէ, որոնց ընթացքին դասախօսական ելոյթներու առիթ կը տրուի: Հաւաքոյթները տեղի կ'ունենան

Ազգային վարժարանի սրահին մէջ: Մարգական ճիւղը ֆուլթայուն է:

Տարեկան պիւտճէն է. մուտք՝ 16929 ս.դ., ելք՝ 15439 ս.դ.:

1932ին, գործունէութիւնը կը շարունակուի նոյն ձեւով: Կը կազմակերպուին թատերական հասութարեր ձեռնարկներ: Ֆուլթայունի խումբը աւելի յաճախակի մրցումներ կ'ունենայ տեղական կազմերուն դէմ: Այս մրցումներէն մէկուն եկամուտը կը տրամադրուի Պէյրութ քաղաքի հայաբնակ հրկիզեալ հիւղաւանի մը աղէտահարներուն:

Ֆուլթայունի դաշտը տրամադրուած է պետութեան կողմէ: Մասնաճիւղը անոր յանձանձման կը մասնակցի մէկ երրորդով, տեղական այլ խումբերու կողմէ ամբողջացուած: Տնտեսական տագնապի հետեւանքով տարեկան պիւտճէն կը նուազի. մուտք՝ 6909 ս.դ., ելք՝ 7005 ս.դ.:

1933ին, կը կազմուի մասնաճիւղի 15 հոգինոց սկաուտական խումբը՝ խմբապետութեամբ Միսաք Ալապոզանեանին: Պէյրութէն, Սանամիրեան եղբայրներ այս նպատակի յաջողութեան համար 150 կանգուն տարազի կերպաս կը տրամադրեն մասնաճիւղին: Սկաուտական շարժումի որդեգրումով անդամներու ընդհանուր թիւն ալ զգալի յաւելում կը կրէ: Ունի 8 պատուոյ եւ 49 գործօն անդամ: Վարչութեան ատենապետն է Միսակ Շիրոյեան, ատենադպիր՝ Միսաք Ալապոզանեան, որ նաեւ սկաուտական խումբի պատասխանատունն է:

Մինչեւ Յունիս ամիսը, մուտքերու ընդհանուր գումարն է 2008 ս.դ., ելքերունը՝ 1474 ս.դ.: Անդամական ընդհանուր ժողովը կը վարեն նախագահ՝ Կ. Սերայտարեան, քարտուղար՝ Ալեքսանեան:

1934ին, մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Պետրոս Ուղուրլեան, ատենադպիրը՝ Գ. Շիրտմեան, վարչական անդամներէն կը յիշուի Հ. Ղազարեան: Տա-

րեշրջանի աւարտին ատենադպրութիւնը կը փոխանցուի Ս. Մարաշլեանին:

Ձատկուան միջ-մասնաճիւղային խաղերուն, Հալէպի մէջ, ֆուլթայունի խումբին կողքին կը մասնակցին նաեւ 28 սկաուտներ:

1935ին, վարչութիւնը կը մտածէ Ազգային վարժարանին ապահովել ուսուցիչ մը, որ միաժամանակ Հ.Մ.Ը.Մ.ի խումբին մարզիչը դառնայ, եւ կ'առաջարկեն Դամասկոսէն հրաւիրել Եղիշէ Մանուկեանը:

Օրուան վարչութեան ատենապետն է Կարապետ Ուղուրլեան, ատենադպիր՝ Մարգիսեան, վարչութեան անդամ է նաեւ սկաուտական խումբի փոխ խմբապետ՝ Հայկազ Մեսումեան: Մասնաճիւղի 25 սկաուտները եւ ֆուլթայունի խումբը կը մասնակցին միջ-մասնաճիւղային Ձատկական խաղերուն: Ֆուլթայունի խումբին մաս կը կազմեն Սարգիս Մարաշլեան, Միսաք Ալապոզանեան, Գրիգոր Զպուքճեան, Գ. Ասլանեան, Թ. Թորոսեան, Սաչեր Յակոբեան, Մ. Սոստեղեան, Ս. Մկրտիչեան, Ա. Սահակեան, Գ. Նաճարեան, Գ. Շիրտմեան, Ա. Զենագեան եւ Յ. Գալուստեան:

Մասնաճիւղը իր պատգամաւորներով կը մասնակցի Շրջանային Պատգամաւորական ժողովին: Անդամները միութենական գործունէութեան կողքին գործնապէս կը մասնակցին ազգային կեանքին: Մասնաճիւղը Փարիզէն կը ստանայ «Հայ Սկաուտ» պաշտօնաթերթը:

1936ին, կը դիմեն Շրջանային Վարչութեան, խնդրելով սկաուտական թեքնիք գիրքեր՝ հետզհետէ խտացող սկաուտական շարքերու դաստիարակութեան համար: Սկաուտական խումբը 38 հոգիէ կը բաղկանայ եւ բաժնուած է չորս խմբակներու. Աղուէս, Առիւծ, Կատու եւ Բու:

Նոյեմբերին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն՝ 1936-37 տարեշրջանին համար: Վարչութեան ատե-

նապետն է Տօքթ. Յակոբ Պերպէրեան, ատենադպիրը՝ Պ. Միսիրեան: 1937ին, անդամներու թիւը կը բարձրանայ 70ի: Անդամներուն կը տրուի յատուկ անդամատետեր:

Մասնաճիւղի պատգամաւորներ՝ Տօքթ. Յակոբ Պերպէրեան եւ Հայկազ Մեսուժեան կը մասնակցին պատգամաւորական ժողովին:

Սուրիական սկաուտութեան նոր դասաւորումներու առթիւ մասնաճիւղի սկաուտներուն եւ սկաուտական կեդրոնին միջեւ կը ճշդուին գործակցութեան պայմաններ: Խումբին կը տրուի իւրայատուկ տարազներու գործածութեան իրաւունք, ներքին յատուկ կանոնադրութեան մշակում, ինչպէս նաեւ՝ Ազգային հանդիսութեանց առթիւ պետական եւ ազգային դրօշակներու գործածութեան արտօնութիւն:

1938 տարեշրջանը տկարացման շրջան մը պիտի ըլլար: Մասնաճիւղը դժուարութիւններ ունի Շրջանային Վարչութեան հետ: Այսուհանդերձ, սկաուտական գործունէութիւնը կը զարգանայ տիպար խումբի մը բոլոր տուեալներով: Խումբը բաժնուած է չորս խմբակներու՝ Աղուէս, Գայլ, Առիւծ եւ Արծիւ: Սկաուտները կը հետեւին հերթական դասախօսութիւններու եւ շուէտական մարզանքի: Խումբը կը կազմակերպէ արշաւներ եւ բանակումներ եւ իր մասնակցութիւնը կը բերէ ազգային բոլոր հանդիսութիւններուն — [ԼԲ. 40]:

15 Յունուար, 1939ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական զօրաւոր կազմ՝ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Եղուարդ Պարսումեան

Ատենադպիր՝ Հայկազ Մեսուժեան

Գանձապահ՝ Հայկ Ղազարեան

Գոյքապահ՝ Սմբատ Փանոսեան

Խորհրդական՝ Սուրէն Բաբախեան:

Հակառակ այս կազմի ճիգերուն, մասնաճիւղը նիւթական անձուկ վիճակ մը կը պարզէ եւ ֆուլթպոլի խումբի տկարացման

պատճառով մասնաճիւղը կը բացակայի Զատիկական միջ-մասնաճիւղային խաղերէն:

ՀՈՄՍ

1930ին, Սուրիոյ Հոմս քաղաքի մասնաճիւղին հիմը կը դրուի Պէյրութի եւ Դամասկոսի մասնաճիւղերէն՝ գործի բերմամբ Հոմս հաստատուած Հ.Մ.Ը.Մ.ականներու կողմէ: Առաջին շրջանի կազմակերպչական աշխատանքները յանձն կ'առնեն Պետրոս Դուրեան, Օհաննէս Թնճուկեան եւ Հրանդ Թաշճեան:

Մասնաճիւղի անդամները, որոնց զբաղումները գլխաւորաբար նաւթային ընկերութեան ծառայութեան ծիրին մէջ կը կայանային, յաճախակի տեղափոխութեանց պատճառով, սկիզբը չեն յաջողիր հաստատ յառաջդիմութիւններ արձանագրել:

Առաջին օրերու կազմակերպուած ֆուլթպոլի խումբը, ակումբի եւ դաշտի չգոյութեան պատճառով չի յաջողիր զգալիօրէն զարգանալ եւ կը բաւարարուի՝ փորձերու եւ հազուադէպ մրցումներու կազմակերպութեամբ: Մասնաճիւղի անդամներէն շուրջ 10 ամիւթներ մարզաճիւղի զանազան փորձեր կը կատարեն, շատ համեստ արդիւնքներով: Միաժամանակ կը սկսի կազմուիլ սկաուտական խումբին կորիզը:

6 Յունիս, 1932ին, նորընտիր վարչութիւնը պաշտօնապէս կը դիմէ Շրջանային Վարչութեան՝ ընդունուելու Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքէն ներս — [Խ. 363]: Այդ թուականին մասնաճիւղը կը հաշուէ 20 գործօն անդամ եւ նոյնքան մը սկաուտ:

1935ին միայն, մասնաճիւղի վարչութիւնը՝ ատենապետութեամբ Հրանդ Թաշճեանի եւ ատենադպրութեամբ Հ. Երկաթունիի, կը յաջողի կազմակերպուած ֆուլթպոլի կազմ մը ոտքի կանգնել: Խումբին մաս կը կազմեն՝ Խ. Գնունի, Մեսրոպ Երկաթ, Հ. Երկաթ, Ս. Լիթոնեան, Կոստիեան, Ազատ Թումաճեան, Սարգիս Հազա-

րապետեան, Միհրան Աղիկեան, Մարտիրոս, Յարութիւնեան, Զիլինկիրեան, Աղամեան եւ Աբրահամ Գըլըճեան: Միաժամանակ, Շրջանային Վարչութենէն կը խնդրեն անդամակցութեան դիմումնագրեր եւ պետական արտօնագրի ստացման համար պէտք եղած ձեւակերպութիւններու մասին տեղեկութիւններ:

Նոյն տարուան Զատիկական միջ-մասնաճիւղային ֆուլթպուլի մրցաշարքին մասնակցելու համար զտուժի մրցումը՝ Թրիփուլիի եւ Հոմսի մասնաճիւղերու խումբերուն միջեւ, ո՛չ Հոմսի մէջ, ո՛չ ալ Թրիփուլիի մէջ կարելի կ'ըլլայ կայացնել:

1936ին, ի վերջոյ, մասնաճիւղի վարչութիւնը կը յաջողի ակումբ մը վարձել: Օրուան վարչութեան ատենապետն է Համազասպ Հեքիմեան, իսկ ատենադպիրը՝ Պետրոս Դուրեան: Ֆուլթպուլի խումբը, այս թուականէն սկսեալ, աւելի կազմակերպ երեւոյթ մը կը պարզէ:

1937ի վարչական կազմը հետեւեալն է.
Ատենապետ՝ Լեւոն Թոքաճեան
Ատենադպիր՝ Համազասպ Հեքիմեան
Գանձապահ՝ Սարգիս Հազարապետեան
Խորհրդականներ՝ Աբրահամ Գըլըճեան եւ Անդրանիկ Կեպենլեան:

Հոմսի Հ.Մ.Ը.Մ.ը միջ-մասնաճիւղային մրցումներուն կը մասնակցի որպէս ֆուլթպուլի Բ. դասակարգի խումբ՝ հետեւեալ կազմով. Գուրգէն Գնունի, Սարգիս Հազարապետեան, Լեւոն Թոքաճեան, Գեղամ Մուրատեան, Վազգէն Փաշապէզեան, Աբրահամ Գըլըճեան, Ստեփան Գըլըճեան, Անդրանիկ Կեպենլեան, Յովհաննէս Գազեզեան, Կարապետ Ոսկերիչեան, Մարտիրոս Յարութիւնեան եւ Գարեգին Գրէշեան:

Մասնաճիւղը կը կիրարկէ նաեւ փինկփոնկի ճիւղը:

21 Փետրուար, 1939ին, անդամական ընդհանուր ժողովը հետեւեալ վարչական կազմը կեանքի կը կոչէ.

Ատենապետ՝ Պետրոս Թուխանեան
Ատենադպիր՝ Գրիգոր Թաշճեան
Գանձապահ՝ Անդրանիկ Կեպենլեան
Խորհրդական՝ Մարտիրոս Յարութիւնեան եւ Սարգիս Հազարապետեան:

Վերոյիշեալ վարչութիւնը, 4 Մարտ, 1939ին, կը կազմակերպէ մասնաճիւղի ակումբի բացման հանդիսութիւն եւ Հ.Մ.Ը.Մ.ի 20-ամեակի տօնակատարութիւն: Ակումբի բացումը առիթ մը կ'ըլլայ որ Հոմսի հայութիւնը աւելի սերտօրէն բոլորուի Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ: Ակումբը կը ծառայէ նաեւ որպէս հայ ընտանիքներու ժամադրավայր:

1939ի ֆուլթպուլի խումբին նախորդ կազմին վրայ կ'աւելնան՝ Գուրգէն Պաղտասարեան, Գրիգոր Թաշճեան, Կարպիս Գարայակոբեան, Օննիկ Գարայակոբեան, Պետրոս Էօքընճեան, Ստեփան Ազարեան եւ Ազատ Թումաճեան՝ փոխարինելու համար նախորդ կազմէն բացակայող խաղացողները:

ԳԱՄԻՇԼԻ

Հիւսիսային Սուրիոյ երկրագործական կեդրոններէն մէկն է Գամիշլի քաղաքը, որու զարգացման մեծապէս օգտակար եղած է՝ Համաշխարհային Առաջին Ընդհանուր Պատերազմի օրերուն Թուրքիոյ զանազան քաղաքներէն հոն հաստատուած հայութիւնը: Քաղաքը իր հայաշատ դիմագիծով եւ ժամանակի ընթացքին կազմաւորուած ազգային կառոյցով՝ եկեղեցի եւ դպրոց, յարմար վայր մը կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան:

Արդարեւ, 1933ին, Ներսէս Պոյաճեանի եւ Գաբրիէլ Սարգիսեանի նախաձեռնութեամբ հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին, որուն շուրջ կը բոլորուի քաղաքի մարզասէր հայ երիտասարդութիւնը:

Անմիջապէս կը ձեռնարկուի ֆուլթպուլի

هو متين - الجمعية الارمنية للالعاب الرياضية والكشاف
 معترف بها من قبل الحكومة

HOMENETMEN

UNION GÉN. ARMÉNIENNE
 DE CULTURE PHYSIQUE ET SCOUTISME
 (Reconnue par l'Etat)



CARTE D'IDENTITÉ

POUR L'ANNÉE 1935

No 42

Nom *Hovhanness*

Prénom *Kouyoumdjian*

Section *Kirik-Khan*

Président

Arakmian

Հ. Մ. Ը. Մ. Ի

ՀԱՅ ՄԱՐՄԿՐԹ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՏՈՍՍ

(ՄԻԱՅՆ 1935 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ)

Թիւ 42

Անուն

Մականուն

Մասնաճիւղ

ԱՆԴԱՄԱՎՃԱՐ

Ա. ԵՌԱՄՍԵՍ	Թիւ ստացագրի
Բ. ԵՌԱՄՍԵՍ	Թիւ ստացագրի
Գ. ԵՌԱՄՍԵՍ	Թիւ ստացագրի
Դ. ԵՌԱՄՍԵՍ	Թիւ ստացագրի

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Սկաուտ

Խմբագրու

Ս. գլխի

Ս. պետ

Kouyoumdjian

Beyroussian

Arakmian

Քրըք-Խանի մասնաճիւղի 1935 տարուայ անդամատեւորի անուշ մը

խումբի մը կազմութեան, որու փորձերը կ'արդիւնաւորուին շուտով: 1934ին, տեղական խումբերու միջեւ կազմակերպուած ֆուլթպուլի մրցաշարքին Հ.Մ.Ը.Մ.ի խումբը յաղթական դուրս կու գայ եւ կը տիրանայ Banque de Syrie-ի տրամադրած բաժակին: Այսպէսով, Գամիշլիի խումբը կը նկատուի իր նահանգի ախոյեանը եւ մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէ իր շուրջ, ընդհանուր քաջալերանքի արժանանալով:

Մասնաճիւղը կը կազմակերպէ նաեւ սկաուտական ճիւղը, իր շուրջ հաւաքելով հայ ընտանիքներու զաւակները:

1935ին, վարչութիւնը կը դիմէ Շրջանային Վարչութեան որպէսզի ստանայ անոր վաւերացումը՝ որպէս Հ.Մ.Ը.Մ.ի կառույցին մաս կազմող միութիւն: Միաժամանակ խնդրելով նիւթական օժանդակութիւն, Շրջ-

ջանային Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի այլ մասնաճիւղերու կողմէ, որպէսզի ապահովէ դաշտի բարեզարդում, սկաուտական շարքերուն համար տարազ, ինչպէս նաեւ մասնագէտ մարզիչի մը գործակցութիւն:

ՔՐԸՔ ԽԱՆ

Քրըք Խան, Սանճաքի հայաբնակ գիւղերէն է:

Տեղւոյն մասնաճիւղը կը հիմնուի 1931ին, տասնեակ մը անդամներու մասնակցութեամբ: Այս թիւը շուտով կ'եռապատկուի: Մասնաճիւղը կը դիմէ Հալէպի մասնաճիւղին, խնդրելով կնիք եւ գրեւորական պիտոյքներ: Հալէպը, իր կարգին, տեղեակ կը պահէ Շրջանային Վարչութիւնը Քրըք Խանի Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան մասին:

Մասնաճիւղի առաջին գործունէութիւնը կը կեդրոնանայ Ֆոլթպոլի շուրջ: Կունենան սեփական ֆոլթպոլի դաշտ:

1934ին, վարչութեան ատենապետն է Արամ Մինասեան, ատենադպիր՝ Մովսէս Կարոյեան: Այս թուականէն սկսեալ կը կազմուի սկաուտական խումբ: Սկաուտական խորհուրդի անդամներն են.

Ատենապետ՝ սկաուտական խմբապետը
Ատենադպիր՝ Գրիգոր Տուգտապանեան
Գանձապահ՝ Հրաչեայ Մեծատուրեան
Գանձիչ՝ Յովհաննէս Կակոսեան:

1935էն սկսեալ, սկաուտական խումբի շուրջ կը բոլորուին գիւղի պատանիներու մեծամասնութիւնը, սկաուտներուն եւ գործօն անդամներուն կը տրուի ինքնութեան տոմս 1935 տարուան համար, վաւերացուած վարչութեան դիւանին եւ սկաուտական խմբապետի կողմէ: Մասնաճիւղը Զատկըւան Ցրդ միջ-մասնաճիւղային խաղերուն առթիւ ընդհանուր տողանցքին կը մասնակցի 65 սկաուտներով: Նոյն թուականին գործօն անդամներու թիւն է 32 — [Զ.140]: Սկաուտական աստիճանաւորական կազմը հետեւեալ պատկերը կը ներկայացնէ. խումբապետ՝ Արամ Պոյաճեան, վարիչ-առաջնորդ՝ Երջանիկ Զեքմէեան, առաջնորդներ՝ Յովհաննէս Զենեան, Վարդան Մկրտիչեան, Ներսէս Պերպէրեան, Յովհաննէս Արոշեան, Անդրանիկ Խարմանտայեան, Յովհաննէս Կակոսեան, դրօշակակիր՝ Աւետիս Սամուէլեան, թմբկահարներ՝ Առաքել Արիստակէսեան եւ Եղիա Կարապետեան, փողահար՝ Հրաչեայ Մեծատուրեան, Մելիքօֆ Մելիքսեթեան:

Սկաուտական խորհուրդը կը վարէ խմբապետ Արամ Պոյաճեան, ատենադպրութեամբ Յովհաննէս Կակոսեանի:

1936ին, վարչական կազմին անդամներն են.

Ատենապետ՝ Մովսէս Պետրոսեան
Ատենադպիր՝ Երուանդ Համալեան
Գանձապահ՝ Մելիքօֆ Մելիքսեթեան

Պասքեթի պատասխանատու՝ Կարապետ Տուգտապանեան

Սկաուտական խմբապետ՝ Յովհաննէս Գարակէօզեան

Խորհրդականներ՝ Յովհաննէս Մարգարեան եւ Կարապետ Քեչիչեան

Ակումբի պատասխանատու՝ Ներսէս Պերպէրեան:

Աշխատանքներու բաժանման համար վարչութիւնը իր կողքին կը նշանակէ օժանդակ ենթավարչութիւն, որուն անդամներն են՝ Յովհաննէս Արոշեան, Յովհաննէս Զենեան, Կարապետ Կիւլիւզեան, Երջանիկ Զեքմէեան եւ Ներսէս Պերպէրեան՝ վարչութեան ներկայացուցիչ:

Տարեշրջանի ընթացքին գործօն անդամներու թիւը կը բարձրանայ 72ի:

Ֆոլթպոլի կողքին, մասնաճիւղը կը կիրարկէ պասքեթպոլ եւ հեծելարշաւ:

Մարզական գործունէութեան կողքին մասնաճիւղը կ'ունենայ ազգային գործունէութիւն, կը կազմակերպէ թատերական ելոյթներ՝ «Սեւ Հողերը» փիէսով: 8 Դեկտեմբեր, 1935ին, կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի Օրուան տօնակատարութիւն, ազգային վարժարանի սրահին մէջ:

Վարչութիւնը հետզհետէ զօրաւոր հիմերու վրայ կը դնէ մասնաճիւղը, յատկապէս կազմակերպչական տեսակէտէ: Անդամական ընդհանուր ժողովները կ'ըլլան յաճախակի եւ առանց բանաւոր պատճառի բացակայող անդամները, ըստ կանոնագրի տրամադրութեան, կը պատժուին:

1936ին, սկաուտական խումբը կ'օժտուի նուագախումբով: Գործիքներու գնման համար կը կատարեն յատուկ հանգանակութիւն:

Պասքեթպոլի դաշտի սիւները կը շինուին:

Անդամներու թիւը կը հասնի 85ի:

8 Նոյեմբեր, 1936ին, անդամական ընդհանուր ժողովը 1936-37 տարեշրջանին համար կ'ընտրէ նոր վարչութիւն:

Վարչական կազմի անդամներն են.
Ատենապետ՝ Արամ Մինասեան
Ատենադպիր՝ Երուանդ Համալեան
Գանձապահ՝ Մելիքօֆ Մելիքսեթեան
Սկաուտական խմբապետ՝ Արամ Պո-
յաճեան

Մարզական պատասխանատու՝ Յովհան-
նէս Գարակէօզեան

Խորհրդականներ՝ Մովսէս Կարոյեան եւ
Մովսէս Պետրոսեան:

Դժբախտաբար, Սանճաքի քաղաքական
հորիզոնը կը սկսի մթազնիլ:

Մարզական եւ սկաուտական գործու-
նէութիւնները, նախորդին բաղադրամաս
կը նուազին: Փոխարէնը՝ ուժ կը տրուի
ներքին գործունէութեան, գիշերային դաս-
ընթացք հայերէն եւ ֆրանսերէն լեզուներու
եւ գրադարան ազգային դաստիարակու-
թեան նպատակով:

Այսուհանդերձ, 28 Մայիս, 1937ին, կը
կազմակերպեն դաշտահանդէս՝ չափական
մարզանք, աթլետիք եւ զանազան խաղե-
րով:

Վարչութեան մտահոգութիւնները կը
կեդրոնանան նաեւ անդամներու բարո-
յական դաստիարակութեան վրայ (թրքախօ-
սութիւն, ալքոլամոլութիւն): Այս նպատա-
կով կը կազմակերպուին բազմաթիւ դասա-
խօսութիւններ: Մասնաճիւղը բացակայ է
Չատկուան միջ-մասնաճիւղային հանդի-
պումներէն:

1937ին, անդամներու թիւը կը բարձ-
րանայ 105ի:

Մուտքերու ընդհանուր գումարն է
15019 ս.դ., ելքերը՝ 12188 ս.դ.:

14 Նոյեմբերին կայացած անդամական
ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վար-
չութիւն՝ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Երուանդ Համալեան
Ատենադպիր՝ Յովհաննէս Գարակէօզ-
եան
Գանձապահ՝ Արամ Պոյաճեան

Սկաուտական խմբապետ՝ Մովսէս Պետ-
րոսեան

Խորհրդական՝ Մովսէս Կարոյեան եւ
Հայզաւակ Սարեան:

Սակայն, մասնաճիւղը, քաղաքական կա-
ցութեան պատճառով, զգուշաւոր գոյու-
թիւն մը կը պահէ եւ հետզհետէ կը լուծուի:

ԱԼԵՔՍԱՆՏՐԷԹ

Սուրիոյ Սանճաքի շրջանի երկրորդ
մասնաճիւղն է Ալեքսանտրէթը:

Ծովափեայ այս քաղաքի մասնաճիւղը
հիմնուած է 9 Յունիս, 1931ին գումար-
ուած ժողովով մը, որուն մասնակցած են
39 հայ երիտասարդներ, որոնք կ'ընտրեն
դիւան մը՝ ատենապետութեամբ Յակոբ Քէ-
չիչեանի եւ ատենադպրութեամբ Մանուկ
Պալեանի: Այս թիւը անմիջապէս պիտի
բարձրանար 72ի, եւ 14 Յունիս թուակա-
նակիր նամակով դիւանը կապ կը հաստատէ
Հալէպի մասնաճիւղին հետ՝ տեղեակ պա-
հելով հիմնադրութեան մասին եւ խընդ-
րելով բարոյական օժանդակութիւն:

26 Յունիս թուականակիր երկրորդ
նամակով մը դիւանը կապ կը հաստատէ
Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վար-
չութեան հետ՝ ներկայացնելով վարչու-
թեան ցանկը եւ խնդրելով մասնաճիւղի
վաւերացումը: Վարչութեան կազմը կը
ներկայանայ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Յակոբ Քէչիչեան
Ատենադպիր՝ Մանուկ Պալեան
Գանձապետ՝ Պարգեւ Շամլեան
Համարակալ՝ Լուիսֆիկ Շամլեան
Գոյքապահ՝ Արմենակ Յ. Պալեան
Սկաուտական խմբապետ եւ շուէտականի
խմբապետ՝ Արմենակ Հ. Պալեան

Աթլետիզմի եւ ֆուլթպոլի պատասխա-
նատու՝ Լուիսֆիկ:

Անդամներու ընդհանուր թիւն է 78:

Կենսունակ այս մասնաճիւղը արագորէն կը յառաջդիմէ, կազմակերպելով մարզական եւ սկաուտական խումբեր: Մասնաճիւղին կը պակսի հաւաքավայր մը: Թաղական խորհուրդը սրահ մը տրամադրելու խնդրանքը կը մերժէ:

1932ի Չատկի նախօրեակին Ֆուլպոլի խումբը կը մասնակցի Շրջանային Վարչութեան կողմէ Սանճաքի երեք մասնաճիւղերուն միջեւ կազմակերպուած Ֆուլպոլի գտումի մրցաշարքին: Քրքը Խանի մասնաճիւղը մերժելով մասնակցիլ այս գտումին, մրցումը կը կայանայ Ալեքսանտրէթի եւ Անտիոքի մասնաճիւղերուն միջեւ: Ալեքսանտրէթը 1-0 արդիւնքով յաղթական կը հանդիսանայ եւ կը մասնակցի Հալէպի միջ-մասնաճիւղային 5-րդ խաղերուն: Ֆուլպոլի կազմին անդամներն են. Հայկազուն Աբրահամեան, Երուանդ Խչիկեան, Հրաչեայ Գառնիկեան, Յարութիւն Քիւրտօղլեան, Միսաք Թոփալեան, Համբարձում Թադէոսեան, Գրիգոր Թոփալեան, Բաֆֆի Շամլեան, Յակոբ Նաճարեան, Պետրոս Փելթեքեան եւ Արմենակ Պալեան: Նոյն տարուան վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Պարգեւ Շամլեան, իսկ ատենադպրութիւնը՝ Յակոբ Աշգարեան:

14 Մարտ, 1933ին, ինքնավար Սանճաքի Մութասարիֆութեան միջոցաւ դիմում կը կատարուի սուրիական պետութեան, որպէսզի Պէյրութի, Հալէպի եւ Դամասկոսի նման՝ Ալեքսանտրէթի Հ.Մ.Ը.Մ.ին ալ պետական արտօնագիր շնորհուի: 14 Ապրիլ, 1933ին, պետական արտօնագիր կը տրուի՝ վաւերացուած ֆրանսական Haut commissariat-ի խորհրդական Բ. Տարօ-ի կողմէ: Արտօնատէրերն են՝ Տօքթ. Ներսէս Մաճարեան, Լութֆիկ Շամլեան, Յակոբ Քէչիչեան, Մանուկ Պալեան, Յակոբ Յարութիւնեան, Չարմայր Մինասեան, Մանուէլ Ստեփանեան, Չարեհ Գիլինճեան, Արմենակ Պալեան, Լեւոն Շամլեան:

Բայց 1933 տարին մասնաճիւղին համար դժուարին տարի մը պիտի ըլլար, նիւթական թէ բարոյական զոյգ գետիններու վրայ: Հ.Մ.Ը.Մ.ի դէմ բացուած պայքար մը նախկին յառաջդիմութեան թափը կը կասեցնէ: 27 Ապրիլին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով, որմէ կ'ընտրուի նոր վարչութիւն՝ ատենապետութեամբ Զ. Գլըճեանի, ատենդպրութեամբ Հ. Պալեանի: Նորընտիր վարչութիւնը կը ծրագրէ սեփական ազուրակ մը իրականացումը, առ այդ, կը կազմակերպէ վիճակահանութիւն, որուն յաջողութեան համար կը դիմէ Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր մասնաճիւղերուն, խընդրելով անոնց աջակցութիւնը: Այս դիմումը սպասուած արդիւնքը չապահովէր:

9 Յունիս, 1933ին, կը տօնեն մասնաճիւղի հիմնադրութեան Բ. տարեդարձը, դասախօս՝ Գէորգ Սազճեան:

2 Յուլիս, 1933ին, մասնաճիւղի պատգամաւոր Պարգեւ Շամլեանը կը մասնակցի Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային պատգամաւորական Գ. ժողովին:

1934ը աւելի բախտաւոր տարի մը պիտի ըլլար: 13 Մարտի անդամական ընդհանուր ժողովի ընթացքին, Հալէպէն Յակոբ Սիմոնի դասախօսութիւն մը կու տայ, նիւթ՝ Հ.Մ.Ը.Մ., խանդավառելով եւ քաջալերելով մասնաճիւղի աշխատանքները: Մասնաճիւղի պատուոյ նախագահ կը նշանակուի Հայկ Պալեան:

Ֆուլպոլի խումբի յառաջդիմութիւնները աւելի զգալի կը դառնան իր թեքնիք յաջողութիւններու եւ յաղթանակներու միջոցաւ: Խումբի խմբապետն է Գրիգոր Սիմոնեան, խաղացողներ՝ Յովհաննէս Շէխա, Հայրապետ Ասատուրեան, Պետրոս Փելթեքեան, Յովհաննէս Ասատուրեան, Սարգիս Քէչիչեան, Յակոբ Տէր Յակոբեան, Երուանդ Վասիլեան, Մարտիրոս Պալըքճեան,

Դանիել Գիլէճեան, Կարպիս Փեշտիմալճեան, Հրաչ Աշճեան եւ Սիրական Եաղուպեան:

Սկաուտական գործունէութիւնն ալ իր կարգին կը զարգանայ: 30 սկաուտներու տարագաւորումը կ'ամբողջանայ:

Մասնաճիւղը պաշտօնապէս կը կազմակերպէ Մայիս 28ի տօնակատարութիւն: Առ այդ, կը հրաւիրէ Հալէպի մասնաճիւղի նուագախումբը, եւ տեղի կ'ունենայ տողանցք՝ մասնակցութեամբ Քրըք Խանի եւ Անտիոքի մասնաճիւղերու սկաուտական ֆուլպուլի խումբերուն: Այս ելոյթը աննախընթաց խանդավառութիւն կը ստեղծէ մասնաճիւղի գործունէութեան շուրջ:

Բայց խոչընդոտները չեն պակսիր, նոյնանման ձեռնարկ մը 1935 տարուան Մայիսի 27ին, վերջին պահուն կը բախի պետական արգելքի:

Առանց յուսախարուելու, Ալեքսանտրէթի Հ.Մ.Ը.Մ.ը կը շարունակէ իր կազմակերպչական գործունէութիւնը: Առաւել՝ անդամներու հանդէպ կարգապահման միջոցառումները կը զօրանան եւ բարոյական ուժ կ'ապահովեն մասնաճիւղին: 16 Փետրուար 1936ին, դատական յանձնախումբ մը՝ գլխաւորութեամբ Լուիսֆիկ Տիգրան Շամլեանի, յետ քննութեան երեք անդամներու դէմ վճիռը կ'արձակէ. «Ենթակաւոր պէտք է գրաւոր կերպով ներողութիւն խնդրեն վարչութեան, յաջորդ անդամական ընդհանուր ժողովին ողջագործին եւ հաւատարմութիւն յայտնեն խմբապետին եւ մէկական ֆրանք տուգանք վճարեն մասնաճիւղի գոյքերու գանձին»: Այս վճիռը տառացիօրէն կը գործադրուի, սակայն նկատելի է որ պատիժները կանոնադրային հիմունքներ չեն օգտագործէր: Կարելի է եզրակացնել, թէ միութեան կանոնադրութիւնները պատժական միջոցառումներու մասին տակաւին յստակ տրամադրութիւններ չունին:

10 Ապրիլ, 1936ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր

վարչութիւն՝ ատենապետութեամբ Պարգեւ Շամլեանի եւ ատենադպրութեամբ Յակոբ Աշգարեանի: Այս վարչութիւնը պիտի գործէր միայն 7 ամիս: Տարեշրջանի ընթացքին Ալեքսանտրէթի Հ.Մ.Ը.Մ.ը կը կազմէ վոլիպուլի խումբ մը՝ խմբապետութեամբ Գրիգոր Սիմոնեանի: Մասնաճիւղը կ'ունենայ նաեւ գրադարան:

11 Նոյեմբեր, 1936ին, անդամական ընդհանուր ժողովը հետեւեալ վարչութիւնը կեանքի կը կոչէ.

Ատենապետ՝ Պարգեւ Շամլեան
 Ատենադպիր՝ Գալուստ Թոփալեան
 Գանձապահ՝ Ն. Թաշճեան, գրապահ՝ Բ. Յովհաննէսեան
 Գոյքապահ՝ Յակոբ Աշգարեան
 Աթլէթիզմի խմբապետ՝ Կ. Ստեփանեան:

Սկաուտական շարքերը կը բազմանան: Զգալի կը դառնայ կարող խմբապետի մը բացակայութիւնը: Կը խնդրեն Շրջանային Վարչութեան՝ սկաուտական կանոնագիր: Նոյն օրերուն, իր թիւ 16 շրջաբերականով, Շրջանային Վարչութիւնը կը թելադրէ Նոյեմբերի կամ Դեկտեմբերի ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Օրուան տօնակատարութիւն կազմակերպել եւ հանդիսութեան նկարագրութիւնը յղել իրենց կամ «Ազդակ» օրաթերթին:

Մինչ այդ, քաղաքական հորիզոնը արդէն սկսած է մթազնիլ՝ թրքական շարժումներու պատճառով: Շրջանային Վարչութեան հետ կապերը աւելի քան օրինական են ու սիրալիր: Շրջանային Վարչութեան ուղղած նամակով մասնաճիւղը հետեւեալը կը գրէ. «Վտանգուած է մեր եւ մեր ժողովուրդի գոյութիւնը ու անհրաժեշտ է որ այդ ուղղութեամբ մենք ալ ըլլանք արթուն եւ աշխուրջ»:

Այսուհանդերձ, 1937ի միջ-մասնաճիւղային խաղերուն, մասնաճիւղը իր սկաուտներու շարքին Հալէպ կ'ուղարկէ նորա-

կազմ նուազախումբը, որուն մասնակցութիւնը կ'արժանանայ ընդհանուրի հիացմունքին ու քաջալերութեան:

1938ին, շրջանի հայութիւնը ճակատագրական օրեր կ'ապրի:

1939ին, Սանճաքը Սուրիայէն բաժնըւելով կը դառնայ թրքական հողամաս: Հայութիւնը գաղթականի ցուպը ձեռք կ'առնէ՝ հաստատուելու համար Սուրիոյ եւ Լիբանանի խաղաղ շրջաններուն մէջ:

ԱՆՏԻՈՔ

Սուրիոյ Սանճաք նահանգի Հ.Մ.Ը.Մ.ի երրորդ մասնաճիւղն է Անտիոքի մասնաճիւղը:

1932ին, 15 անդամներու մասնակցութեամբ հիմը կը դրուի Անտիոքի մասնաճիւղին: Ներկաները կ'ընտրեն առժամեայ մարմին մը, որուն պարտականութիւն կը յանձնուի՝ անդամներու թիւը օրինական 25 թիւին հասցնել եւ դիմել Շրջանային Վարչութեան, որպէս մասնաճիւղ ստանալու համար անոր վաւերացումը: Առժամեայ մարմինը իր պարտականութիւնը շուտով կ'իրականացնէ եւ մասնաճիւղը հաւատքով կը փարի իր Ֆութպոլի խումբի աշխատանքներուն, կազմակերպելով բարեկամական մրցումներ տեղական խումբերու դէմ:

1933ին, ընտրեալ վարչութեան ատենապետն է Վ. Իզմիրլեան, ատենադպիր՝ Ս. Գուլումճեան, գանձապահ՝ Գէորգ Թոփճեան: Զատկին, մասնաճիւղը կը մասնակցի միջ-մասնաճիւղային ֆութպոլի մրցաշարքին, ուր կը հանդիսանայ Բ. դասակարգի խումբերու ախոյեան:

Նոյն թուականներուն կը կազմուի նաեւ սկաուտական խումբը:

Մասնաճիւղը կ'ունենայ իր սեփական աղումբը, որ կը դառնայ շրջանի հայ երիտասարդութեան ընտրուած ժամադրավայրը: Կը կազմակերպուին դասախօսական երե-

կոներ՝ առողջապահական, մարզական եւ ազգային նիւթերու շուրջ:

1936ին ընտրուած վարչութեան մաս կը կազմեն.

Ատենապետ՝ Փայլակ Աղապալեան

Ատենադպիր՝ Գէորգ Թոփճեան

Գանձապահ՝ Յովհաննէս Գազանճեան

Աթլետիզմի եւ ֆութպոլի պատասխանատու՝ Պատուելի Երուանդ Վասիլեան

Կարգապահութեան ընդհանուր հսկիչ՝ Խաչեր Մարգարեան:

Այս կազմին գործը կ'ըլլայ՝ զօրաւոր հիմերու վրայ դնել մասնաճիւղը եւ ապահովել պետական վաւերացում: Անդամներու ընդհանուր թիւը արդէն բարձրացած է 45ի: Մարզական եւ սկաուտական գործունէութեան կողքին մասնաճիւղը թատերական ելոյթներ կը կազմակերպէ՝ ի նըպաստ տեղւոյն ազգային վարժարանի ֆոնտին: Կը կազմակերպուի Խանասորի Արշալանքի տօնակատարութիւն: Մասնաճիւղի գործունէութիւնը ջլատող շարժում մը զգալի է շրջանէն ներս, սակայն արթուն Հ.Մ.Ը.Մ.-ականներ կը յաջողին այդ շարժումը կասեցնել:

Յուլիսին, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Սուրէն Բաբախեան Անտիոքի մասնաճիւղին այցելութիւն մը կու տայ: Վարչութեան կազմը նշանակովի վերատեսութեան կ'ենթարկուի՝ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Գէորգ Թոփճեան

Ատենադպիր՝ Փայլակ Աղապալեան

Գանձապահ՝ Գասպար Ֆերմանեան

Սկաուտական պատասխանատու՝ Միսաք Ալապոզանեան

Մարզական պատասխանատու՝ Պատուելի Երուանդ Վասիլեան:

Անտիոքն ալ, Սանճաքի միւս մասնաճիւղերուն նման, այնուհետեւ սահմանափակ գործունէութիւն մը պիտի ունենար: Քաղաքական կացութիւնը զգուշաւոր ընթացքի կը մատնէ Անտիոքի Հ.Մ.Ը.Մ.ը:

ՌԱՍ ԻՒԼ ԱՅՆ

Հիւսիսային Սուրիոյ սահմաններուն մօտակայ գիւղաքաղաք մըն է Ռաս Իւլ Այնը, ուր հայեր կայք հաստատած են Ա. Ընդհանուր Պատերազմէն ետք: Երեսունական թուականներու կէսերուն, Ռաս Իւլ Այնի մէջ հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին: Սակայն, այս հիմնադրութիւնը անմիջապէս գործնական արդիւնքի չի հասնիր:

1937էն ետք է, որ մասնաճիւղի գործունէութիւնը զգալի յառաջդիմութիւն կը սկսի արձանագրել: Մասնաճիւղը կ'ունենայ տարեկան 4 անդամական ընդհանուր ժողով:

Ֆուլթոնի խումբին կողքին կան աթլէթիզմի եւ շուէտական մարզանքի մասնակցող անդամներ: Սկսուտական խումբը, որ անդամներու մեծամասնութիւնը կը կազմէ,

այդ թուականէն սկսեալ կը սկսի գործել աւելի կենսունակ: Վարչութիւնը սկսուտական թեքնիք նիւթերու շուրջ դասախօսութիւններ կը կազմակերպէ:

1938-39 տարեշրջանին, կ'ընտրուի նոր վարչութիւն՝ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Յովհաննէս Տապպաղեան
Ատենադպիր՝ Յովհաննէս Յովհաննէսեան

Գանձապահ՝ Արամ Պողոսեան (հետագային փոխարինուած՝ Յակոբ Ղազարեանով)
Խորհրդականներ՝ Գէորգ Ասլանեան
Մկրտիչ Սարգիսեան

Ֆուլթոնի խումբին մարզիչն է Զոհրապ: Նորակազմ վարչութիւնը նոր թափով կը փարի աշխատանքի, օրէ-օր նոր յաջողութիւններու արձանագրութեամբ: Նիւթականի ապահովման համար կը կազմակերպէ վիճակահանութիւն:



Անտիոքի մասնաճիւղի սկսուտական կազմը 1932-ին: Զախիճ՝ իմբրապետ Գասպար Ֆերմանեան

Բ. Ընդհանուր Պատերազմը պատճառ պիտի ըլլար այս յաջողութիւններու շարքին առժամեայ սառեցման:

ՀԱՍԻՉԷ

Տարագիր հայուլթեան բեկորներէն մնացած հայ գաղութ մը կը կազմուի Սուրիոյ հիւսիսային սահմաններուն մօտակայ Հասիչէ քաղաքին մէջ, ուր երկրագործական աշխատանքներու լայն հրապարակ մը գոյութիւն ունի: Հաստատուելէ ետք, տեղւոյն հայուլթեան առաջին մտահոգութիւնը կը դառնայ՝ ունենալ դպրոց ու եկեղեցի: Այս հաստատութիւններու կողքին, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը ունենալու գաղափարը, 1934էն սկսեալ, կը փորձուի իրականացնել: Դժբախտաբար, քաղաքական դժուարին կացութիւնը կ'արգելէ փորձի յաջողութիւնը եւ Հասիչէի Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարը կը մնայ իր սաղմին մէջ՝ մինչեւ 1939ի սկիզբը:

1939ի գարնան, կրկին գործնական կեանքի կոչուելով, Հասիչէի մասնաճիւղի հիմնադրութեան աքթը կ'իրականանայ Մայիսի 28ին: Առաջին հերթին կը կազմուի սկաուտական խումբ մը, շուրջ 30 անդամներով: Սկաուտական կազմին պիտի յաջորդէր ֆութպոլի խումբի կազմութիւնը:

Քանի մը ամսուան կեանքը հազիւ վարած, 1939ի աշնան կը պայթի Համաշխարհային Երկրորդ Պատերազմը եւ Հասիչէի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի գործունէութիւնը անգամ մը եւս կանգ կ'առնէ: Անգամ մը եւս միութեան գաղափարը կը մնայ հայ երիտասարդութեան հոգիին մէջ պահ դըրուած՝ աւելի ուշ իրականութիւն դառնալու ապահովութեամբ:

ՃԱՐԱՊԼՈՒՍ

1934ի Յունուարին, Սուրիոյ Հիւսիսային սահմաններուն մօտակայ երկրագործական այս գիւղաքաղաքին մէջ հայ երիտասարդներ հիմը կը դնեն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին: Շրջանային վարչութեան անդամ Սուրէն Բաբախեանին ուղղուած եւ 24 Յունուար 1934 թուականակիր իրենց նամակով՝ մասնաճիւղի նախագահ Ն. Ներսէսեան, ատենադպիր Յ. Հեքիմեան եւ սկաուտ խմբապետ Ե. Թաթարեան փափաք կը յայտնեն Շրջանային վարչութեան վաւերացումով մաս կազմել Միութեան կառոյցին:

17 Սեպտեմբեր, 1936ին, Հալէպի հիւսիսը գտնուող Ազէզ գիւղաքաղաքին մէջ 21 երիտասարդներ հաւաքուելով հիմը կը դնեն տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին եւ կը դիմեն Շրջանային վարչութեան՝ խընդրելով մասնաճիւղի վաւերացումը:

ԱԶԷԶ

Միութեան անդրանիկ վարչութեան մաս կը կազմեն. Ատենապետ՝ Ա. Արմատունի Ատենադպիր՝ Կ. Յովհաննէսեան Գանձապահ՝ Յովհաննէս Պչաքճեան Գոյքապահ՝ Ղ. Կարապետեան Խորհրդական՝ Գ. Ուզունեան: Վերջինս կը փոխարինուի Հ. Թաթարեանով:

Շրջանային վարչութիւնը, 28 Նոյեմբեր, 1936 թուականակիր նամակով կը վաւերացնէ Ազէզի մասնաճիւղը: Մինչ այդ, 11 Հոկտեմբերին, Հալէպի Նոր Գիւղի շրջանի Համազասպ ֆութպոլի խումբը կ'այցելէ Ազէզ, եղբայրական հանդիպում մը ունենալու տեղւոյն խումբին դէմ: Վերջինս՝ 5-2 արդիւնքով յաղթական դուրս կու գայ այս հանդիպումէն, մեծ խանդավառութիւն ստեղծելով իր շուրջը:

20 Դեկտեմբեր, 1936ին, մասնաճիւղը կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի Օրուան տօնակատարութիւն: 1937ի Յունուար 13ին, ֆութպոլի խումբը կ'այցելէ Հալէպ, ուր կը մրցի սկա-

ուտական Բ. խումբին դէմ՝ 1-1 հաւասար արդիւնքով:

1937ի Մարտին, կը սկսի գործել սկաուտական խումբը՝ շուրջ 25 անդամներով:

Սկաուտներու երդման արարողութիւնը տեղի կ'ունենայ 23 Մայիսին, Ազգային Վարժարանի սրահին մէջ: Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան ներկայացուցիչը բանախօսութեամբ մը կը մասնակցի այս հանդիսութեան: Այս թուականին մասնաճիւղը ունի արդէն պետական ճանաչում:

6 Յունիսին, Ֆուլթոնի խումբը Քրք Խանի դաշտին վրայ հանդիպում մը կ'ունենայ Ալեքսանտրէթի Հ.Մ.Ը.Մ.ի խումբին հետ:

Շուրջ մէկ տարուան այս գործունէութենէն ետք, մասնաճիւղը ունի ֆուլթոնի 3 խումբեր. Ա. եւ Բ. խումբեր եւ սկաուտական ֆուլթոնի խումբ:

24 Յունիս, 1937ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Ղ. Կարապետեան

Ատենադպիր՝ Յ. Ակիլեան

Գանձապահ՝ Յ. Քէահքէճեան

Հաշուապահ՝ Ս. Աթթարեան

Գոյքապահ՝ Յ. Քէչիշեան

Խորհրդականներ՝ Ա. Թաթարեան եւ Ս.

Մինասեան:

ԱՐԱԲ ԲՈՒՆԱՐ

Հիւսիսային Սուրիոյ սահմանին մօտիկ երկրագործական մէկ այլ գիւղաքաղաք մըն է Արաբ Բունարը (Այն էլ Արապ), ուր հայեր կանուխէն հաստատուելով, զարգացուցած են արհեստ եւ երկրագործութիւն:

1929էն սկսեալ, կը ծրագրուի տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութիւնը: Առ այդ, Հալէպի մասնաճիւղը շրջանի պատասխանատուներուն կ'ուղարկէ Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագրի մէկ օրինակը:

Ծրագրուող այս միտքը, 1935ին միայն իրականութիւն կը դառնայ, եւ մասնաճիւղը կը սկսի գործել մարզական եւ սկաուտական զոյգ ճիւղերով:

Մարզական գլխաւոր ճիւղն է ֆուլթոնի:

ՏԵՐՊԷՍԻԷ

Տէրպէսիէի մասնաճիւղը հիմնուած է 1936ին, միաժամանակ կազմակերպելով ֆուլթոնի խումբ եւ սկաուտական շարժում:

Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի հետ, մասնաճիւղը դժուարութիւններու կը մատնուի, աւելի ուշ մասնակցելու համար Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն:

ՏԵՐԻՔ

Հիւսիսային Սուրիոյ Տէրիք գիւղաքաղաքին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի ծրագիրը 1935էն սկսեալ ծնունդ կ'առնէ: Արդարեւ, 21 Օգոստոս, 1935 թուականակիր նամակով մը, Պէյրութի մասնաճիւղի վարչութիւնը Տէրիք գտնուող Հ.Մ.Ը.Մ.ականներու կը թելադրէ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան սկսիլ: Դժբախտաբար, տեղւոյն քաղաքական պայմանները թոյլատու չեն ըլլար:

1938ի Օգոստոսին միայն կարելի կը դառնայ պաշտօնապէս հիմը դնել Տէրիքի մասնաճիւղին, որ ֆուլթոնի խումբով մը կը սկսի գործունէութեան: Կապ կը հաստատեն Հալէպի մասնաճիւղին հետ: Հոս ալ, ինչպէս ամէն երկրագործական վայրերու մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը ճրմրան եւ գարնան ընթացքին կը զարգանան: Ամառն ու աշունը վերապահուած են հողագործութեան, երբ անդամներու մեծամասնութիւնը բացակայ է:

1939ի սկիզբը, մասնաճիւղը կրկին կը ձեռնարկէ աշխատանքի՝ Ֆուլթոնի խումբով եւ գալիկներու խմբակներով: Այդ տարեշրջանի վարչութեան ատենապետն է Պողոս Նազըլեան, իսկ ատենադպիրը՝ Միհրան Տէր Սահակեան: Անդամներու ընդհ. թիւն է 32:

10 Օգոստոս, 1939 թուականակիր նամակով մասնաճիւղը կը տեղեկացնէ Շրջանային Վարչութեան, թէ վարչական անդամ Ռուբէն Քենտիրեանի մեկնումին պատճառով զինք փոխարինած է Պետրոս Հալէպեանով: Վարչութեան ատենապետն է Միքայէլ Յովսէփեան, իսկ ատենադպիրը՝ Կ. Մելքոնեան: Շրջանային Վարչութիւնէն կը խնդրեն «Ազդակ» օրաթերթ ուղարկել Տէրիք:

Տէր ԶՕՐ

Հիւսիսային Սուրիոյ անապատային Տէր Զօր գիւղաքաղաքի հայկական գաղութի կազմութիւնը ուղղակիօրէն կապուած է 1915ի Եղեռնի տեղեկանութեան հետ: Հոս, Եփրատ գետի եզերքին, բախտի բերմամբ ջարդէն փրկուած հայու բեկորներ, կորսւնցներով իրենց հայկական ինքնութիւնը, մնացած են տեղւոյն վրայ՝ ոչինչէն ստեղծելու համար ապրուստի պայմաններ: Հետագային, այս շրջանը փոխադրուած են Սուրիոյ այլ շրջաններէն, յատկապէս Հալէպ քաղաքէն կարգ մը հայեր եւ կազմած են Տէր Զօրի հայկական գաղութը:

Տէր Զօրի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը հիմնուի 1937ին:

Հալէպի մասնաճիւղի սկաուտներէն՝ Տօթթ. Գասպար Գասպարեան Տէր Զօրի մասնաճիւղի կազմութեան նախաձեռնողներէն եղած է: Հիմնադիր անդամները Հ.Մ.

Ը.Մ.ի մասնաճիւղի մը կազմութեան առաջադրանքով նամակ մը կը յղեն Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան, յայտնելով իրենց նպատակը եւ Շրջանային Վարչութենէն կը խնդրեն՝ Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագիր, նամակաթուղթ, զինանշան, Ֆուլթոնի խաղի օրինագիրք եւայլն:

Իրենց պահանջին գոհացում կը տրուի եւ 1939ի Փետրուարին, 25 անդամներով կը կազմակերպուի անդամական ընդհանուր ժողով: Այս թիւը երկու ամիս ետք՝ Ապրիլին պիտի բարձրանար 35ի:

Նոյն տարուան վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Խ. Լուսարարեան, իսկ ատենադպրութիւնը՝ Ա. Շահինեան: Մասնաճիւղը կ'ունենայ իր Ֆուլթոնի խումբը: Հետագային կը կազմուին նաեւ սկաուտական եւ աթլետիք խումբեր:

Տէր Զօրի մասնաճիւղի գործունէութեան մասին պիտի լսենք աւելի ուշ՝ յատկապէս անոր խումբերու մասնակցութեամբ Հալէպի մէջ կայացող Զատկական հանդիպումներուն առթիւ, ուր Տէր Զօրի մարգիկներու եւ սկաուտներու տողանցքները վերածնած հայութեան կենսունակութեան հաւաստիքը բերին, փաստելու համար, որ ջարդարարները իրենց նպատակին չէին հասած: Հայը կը վերապրէր սերունդ մը ետք, ջարդի մոխիրներէն վերածնած:

ԱՅՆ ՏԻՈՒԱՐ

Փակելէ առաջ Սուրիոյ մասնաճիւղերու պատմութիւնը, յիշենք թէ այս ժամանակամիջոցին Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջանին մէջ գործած է նաեւ Այն Տիուարի մասնաճիւղը: Դժբախտաբար, այս մասնաճիւղի գործունէութեան մասին ըստույգ տեղեկութիւններ կը պակսին:



1. Հալէպի մասնաճիւղի ֆութպոլի 1926-ի Ա. կազմը: 2. Հալէպի ֆութպոլի Բ. խումբը մրցումէն առաջ: 3. Հալէպի 1928-29 Եղանակի ֆութպոլի Ա. կազմը: 4 եւ 6. Հալէպի մարզիկները բարձրու կազմութեան պահուն 1926: 5. Միջ-մասնաճիւղային խաղերու առթիւ տողանցքը առաջնորդող դրօշակակիրներ:

ԿԻՊՐՈՍ

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԿԻՊՐՈՍ

- ԼԱՌՆԱԳԱ
- ՆԻԿՈՍԻԱ



Կիպրոսը կիլիկեան թագաւորութեան ժամանակաշրջանէն սկսեալ ունեցած է հայկական կարեւոր գաղութ մը:

Որպէս անգլիական գաղթավայր, քսաներորդ դարու սկզբնաւորութեան, մարզական զարթոնքը իր ազդեցութիւնը կ'ունենայ նաեւ Կիպրոսի զանազան կրթական հաստատութիւններէն ներս:

Հայկական գաղութի այս կարգի նուաճումը կ'իրականանայ Մելքոնեան Կրթական Հաստատութեան միջոցով: 1926ին, հիմնուած որպէս ազգային կրթական օճախ, Մելքոնեանի մարզական եւ սկաուտական գործունէութիւնը իր հիմնական դերը ունեցած է կղզիի հայաշատ զոյգ կեդրոններուն՝ Լառնազայի եւ Նիկոսիոյ մէջ:

1922ին, Կիլիկիոյ պարպումին հետեւանքով, վերոյիշեալ քաղաքներուն մէջ հաստատուեցան նաեւ Ատանայէն սկաուտ աստիճանաւորներ, որոնք, Ռուբէն Տէր Առաքելեանի գլխաւորութեամբ, Լառնազայի մէջ սկաուտական շարժում յառաջացուցին:

ԼԱՌՆԱԳԱ

23 Յունուար, 1927ին, Լառնազայի Հայ Ազգային Վարժարանին մէջ տեղի կ'ունենայ քաղաքի հայ պատանիներու ընդհանուր հաւաքոյթ մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնելու նպատակով:

Այս առթիւ, Սարգիս Գազանճեան կը կարդայ Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագիրը: Տեղւոյն վրայ 27 անդամներ կ'արձանագրուին եւ կը նշանակուի 7 հոգինոց վարչութիւն մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութիւնը օրինականացնելու նպատակով — [ԻԲ/10.10]:

Թղթակից Գ. Խոհարար վերոյիշեալ տեղեկութիւնները կը յղէ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Նոր Սերունդ»ին, աւելցնելով, թէ կը յուսան շուտով Ազգային Վարժարանի սկաուտներն ալ միացընել Հ.Մ.Ը.Մ.ին:

Հիմնադիր ժողովէն յառաջացած անդրանիկ վարչութեան մաս կը կազմեն.

Ատենապետ՝ Օննիկ Պատիկեան

Ատենադպիր՝ Սարգիս Գազանճեան

Համարակալ՝ Արամ Ազիրեան

Գանձապահ՝ Գրիգոր Աշճեան

Գոյքապահ՝ Ժիրայր Պետրոսեան

Մարզական պատասխանատու՝ Ռ. Տէր Առաքելեան

Ֆութպոլի խմբապետ՝ Երուանդ Պոյաճեան — [ԻԲ/11.10]:

Նորակազմ մասնաճիւղը, մարզականի կողքին, կը կազմակերպէ ազգային ձեռնարկներ:

24 Փետրուար, 1927ի երեկոյեան, Ազգային Վարժարանի սրահին մէջ Հ.Մ.Ը.Մ.ը կը սարքէ Վարդանանցի տօնակատարութիւն՝ ղեկավարութեամբ Նուպար Ստեփանեանի: Գեղարուեստական եւ թատերական զանազան ելոյթներու շարքին՝ հանդիսութիւնը առիթ մը կ'ըլլայ հայ հասարակութեան ներկայացնելու Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը եւ մասնաճիւղի գործունէութիւնը: Այս ուղղութեամբ խօսք կ'առնէ վարչութեան ատենադպիր Սարգիս Գազանճեանը:

Ֆութպոլի խումբը յաճախակի մրցումներ կը կազմակերպէ տեղական խումբերուն, ինչպէս նաեւ Նիկոսիոյ Հ.Մ.Ը.Մ.ի կազմին դէմ: 1 Յունուար, 1928ին, զոյգ մասնաճիւղերու միջեւ կատարուած մրցումը կը վերջանայ 4-0 արդիւնքով՝ ի նպաստ Լառնազայի Հ.Մ.Ը.Մ.ին: 29 Յունուար, 1928ին, Լառնազա-Նիկոսիա մասնաճիւղերու հաւաքականը կը մրցի Նիկոսիոյ թրքական խումբին դէմ՝ 1-1 հաւասար արդիւնքով: 5 Փետրուարին, աւելի զօրացուած հաւաքական մը կը մրցի յունական առաջին խումբին դէմ, արդիւնք՝ 1-1:

Նորակազմ մասնաճիւղերու խումբերուն ձեռք բերած այս արդիւնքները ժողովրդական վարկի եւ քաջալերանքի կ'արժանանան:

18 Ապրիլին, Լառնագայի մէջ կրկին կը ճակատին զոյգ մասնաճիւղերու Ֆուլթպոլի խումբերը: Շատ հետաքրքրական մրցումէ մը ետք, Լառնագայի Հ.Մ.Ը.Մ.ը յաղթական կը հանդիսանայ՝ 3-1 արդիւնքով: Խաղէն ետք, թէյասեղանի ընթացքին, խօսք կ'առնէ Կիպրոսի Առաջնորդ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատուոյ Նախագահ Տ. Եղիշէ Եպիսկոպոս Կարօեան:

1928-29 տարեշրջանի վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալներէն.

- Ատենապետ՝ Գէորգ Քէշիշեան
- Ատենաղպիր՝ Յովսէփ Պչաքճեան
- Գանձապահ՝ Միսիա Օհանեան
- Գոյքապահ՝ Բ. Թիւթիւնճեան
- Ֆուլթպոլի պատասխանատու՝ Կարապետ Ատալեան

Սկաուտ պատասխանատու՝ Ռ. Տէր Առաքելեան:

Մարզական եւ սկաուտական գործունէութեան կողքին, մասնաճիւղը կը շարունակէ վարել մշակութային եւ ազգային գործունէութիւն:

21 Մայիս, 1928ին կազմակերպուած երեկոյթի ընթացքին խօսք կ'առնէ Օննիկ Եազմաճեան՝ ներկաները մղելով Հ.Մ.Ը.Մ.ական աշխատանքի:

Մայիս 28ին, Ազգային Վարժարանի բակին մէջ սկաուտները կը տողանցեն եւ Եռագոյն դրօշակի արարողութիւնը կը կատարեն ներկայութեամբ Եղիշէ Եպիսկոպոս Կարօեանի, որ ազգային շունչով ճառ մը կը խօսի ներկաներուն:

Հ.Մ.Ը.Մ.ականներ, վարժարաններէ



Լառնագայի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կազմը 1927-ին:

ներս թէ դուրս, կը մասնակցին նաեւ կիպրական մարզական ակումբներու այն ճիւղերուն, որ Հ.Մ.Ը.Մ.ը չի կիրարկեր, օրինակ՝ հոքէյ, ծովային մարզախաղեր, եւն.։ Այս առիթները լաւապէս կը կազմաւորեն Հ.Մ.Ը.Մ.ականներու ֆիզիքական կարողութիւնները։ Զգալի է, ընդհանրապէս, կըղզիին մէջ տիրող անգլիական տիսիփլինը ու մարզանքին տրուած կարեւորութեան արդիւնքները։

Լառնաֆայի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի գործունէութիւնը կը շարունակուի մինչեւ 1930ական թուականներու կէսերը։

Ժամանակի ընթացքին, շատ մը Հ.Մ.Ը.Մ.ականներ կը շարունակեն գործակցիլ Միութեան գաղափարակից՝ Հայ Երիտասարդաց Միութեան խումբերուն, եւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, որպէս այդպիսին, հետըզհետէ կը դադրի գործելէ։

ՆԻԿՈՍԻԱ

1927ին, Նիկոսիոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը կազմութեան նախաձեռնողը կ'ըլլայ Օննիկ Եազմաճեանը։

Հիմնադրութեան անմիջապէս կը հետեւի գործունէութեան բեղուն շրջան մը՝ հանդէսներու եւ թատերական ելոյթներու կազմակերպութեամբ։ Անդամներու թիւը շուտով կը հասնի 75ի, սկառտական եւ մարզական բաժիններով — [ԻԲ/6.15]։

Հիմնադիր վարչութեան կարծատեւ գործունէութիւնէն ետք, 1927ի Մարտին՝ ընտրեալ վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Հայկ Արմաղանեան
- Ատենադպիր՝ Մակարոս Սինանեան
- Գանձապահ՝ Երուանդ Դուրեան
- Գոյքապահ՝ Զաւէն Մաքսուտեան
- Մարզական պատասխանատու՝ Երուանդ Նիկողոսեան
- Ֆուլթպոլի խմբապետ՝ Պենոն Սալլաքեան

Սկառտական խորհուրդի ներկայացուցիչ՝ Յակոբ Ալթըզօզալեան — [ԻԲ/11.10]։

Օննիկ Եազմաճեան կը մնայ մասնաճիւղի գործունէութիւնը զսպանակող անձը՝ մարզական եւ յատկապէս սկառտական ճիւղերուն մէջ, ուր ան կը վարէ սկառտ խմբապետի պաշտօնը։ Սկառտական խմբակներու առաջնորդներն են՝ Արամ Երկաթեան, Օննիկ Թոքաթլեան, Սարգիս Սուլթանեան, Պօղոս Էմիրեան, աքելլա՝ Լեւոն Խաչատուրեան։ Նիկոսիոյ շուրջ կազմակերպուող բանակումները եւ արշաւները ազգային ու թեքնիք յառաջդիմութիւններու առիթներ կը ստեղծեն խումբին համար — [ԻԳ. 43]։

Ֆուլթպոլի խումբին նշանաւոր խաղացողները կ'ըլլան՝ Պենոն Սալլաքեան, Գէւորգ Սաատէթեան, Վահէ Տիգրանեան եւ Ալպէր Թերզեան — [ԻԳ. 109-141]։ Խումբը, յաճախակի մրցումներով, օրէ-օր կը յառաջդիմէ։

Վարչութիւնը կը սարքէ նաեւ գիշերային դասընթացքներ, անդամներու ընդհանուր զարգացման համար։ Կը կազմակերպուին վիճաբանական ասուլիսներ եւ ազգային դաստիարակութեան նիւթերով դասախօսութիւններ։

Միամեայ գործունէութիւնէն ետք, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը, 21 Յունուար, 1928ին, կ'ընտրէ հետեւեալ վարչական կազմը.

- Ատենապետ՝ Մրկտիչ Տէր Մկրտիչեան
- Ատենադպիր՝ Գէորգ Սալլաքեան
- Գանձապահ՝ Խորէն Խորէնեան
- Գոյքապահ՝ Լեւոն Աբգարեան
- Համարակալ՝ Նշան Արազլինջեան
- Մարզիչ՝ Օննիկ Եազմաճեան
- Ֆուլթպոլի խմբապետ՝ Պենոն Սալլաքեան

Մասնաճիւղի պատուակալ նախագահ կը նշանակուի Հայկ Արմաղանեան։

Սկառտական եւ մարզական ճիւղերը



Նիկոսիոյ Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտական առաջին խումբը
 Զախէն աջ նստած՝ 2րդ Լեւոն Արգարեան, 3րդ Զախէն Սինանեան, 4րդ Երուանդ Նիկողոսեան,
 գետինը նստած՝ Օննիկ Եազմաճեան:

կը գործեն ըստ առաջնոյն: Սակայն Հ.Մ.Ը.Մ.ի դէմ բացուած պայքարը հետեզհետէ կը դանդաղեցնէ աշխատանքներու թափը: Նիկոսիոյ Հ.Մ.Ը.Մ.ը, այս ձեւով, գործունէութեան եւ դադարի բազմաթիւ փուլերէ կ'անցնի — [ԺԱ.246]:

Վարչութիւնը ճիգ չի խնայեր պահելու համար մասնաճիւղի գոյութիւնը եւ շարունակելու համար անոր գործունէութիւնը: Մարզականի կողքին, իբր հասոյթի աղբիւր, մասնաճիւղը թատերական ներկայացումներ կը սարքէ:

22 Մայիս, 1928ին, յունական մեծ մարզադաշտին վրայ, մասնակցութեամբ Լառնազայի մասնաճիւղին, տեղի կ'ունենայ մարզահանդէս: Օրուայ նախագահն է

Նիկոսիոյ քաղաքապետ Ճորճ Մարդիտիսի: Հանդէսի աւարտին օրուայ նախագահը գովեստով կ'արտայայտուի կատարուած աշխատանքին եւ յաջող ելոյթի մասին, հրապարակաւ կոչ կ'ուղղէ յունական խումբերուն նոյնօրինակ գործունէութիւն ցուցաբերել — [ԺԱ.247]:

Սանդաժառ գործունէութեան այս շրջանին մասնաճիւղի անդամներու թիւը կը հասնի մինչեւ 180ի: 1930-ական թուականներէն սկսեալ Նիկոսիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներն ալ, Լառնազայի նման, հետեզհետէ կը ներգրաւուին գաղափարակից Հ.Ն.Մ.-ի շրջանակին կողմէ, եւ մասնաճիւղը կը դադրի Հ.Մ.Ը.Մ.-ական առաքելութեան ծառայելէ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

- ԱՐԺԱՆԹԻՆ
- ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ
- ԳՈՐՏՈՊԱ
- ՊՐԱԶԻԼ
- ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

20րդ դարու համաշխարհային գոյգ պատերազմներու պատճառով, հայ զանգր-
լածներ, ժամանակի ընթացքին, փոխա-
դրուած են Հարաւային Ամերիկայի զանա-
զան երկիրները՝ գաղթելով Թուրքիոյ ներ-
քին նահանգներէն, Կիլիկիայէն, Յունաս-
տանէն եւ Մերձաւոր Արեւելքի այլ եր-
կիրներէն:

Այս գաղութներու կարեւորագոյնները
կը կազմեն Արժանթինը, Պրագիլը եւ Ու-
րուկուէյը:

ԱՐԺԱՆԹԻՆ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ

Արժանթինի մայրաքաղաք՝ Պուէնոս
Այրէսը Հարաւային Ամերիկայի հայկական
գաղութներու կարեւորագոյն կեդրոնն է:

Դարասկիզբէն սկսեալ, Պուէնոս Այ-
րէսի գաղութը հետզհետէ կազմակերպուած
է ունենալով ազգային բեղուն գործու-
նէութիւն:

11 Սեպտեմբեր, 1927ին, Թաղէոս Մե-
ծասուրեանի նախաձեռնութեան ընդառա-
ջելով, խումբ մը մարզասէրներ Հ.Մ.Ը.Մ.ի
Պուէնոս Այրէսի մասնաճիւղը հիմնելով՝
իրենց շուրջ կը հաւաքեն 25 անդամներ,
ամբողջացնելով մասնաճիւղի կազմութեան
պայման թիւը:

1927, Նոյեմբեր 5ին, մասնաճիւղը
հրապարակային իր անդրանիկ ելոյթը կ'ու-
նենայ՝ Հայ Կեդրոնի սրահին մէջ տրուած
Թէյասեղան-երեկոյթով: Օրուան նախագահ
Ղազարոս Փափագեան երեկոյթի ընթացքին
կը պարզէ Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիրները եւ
տեղւոյն վրայ 35 նոր անդամներ կ'ար-
ձանագրուին: Թէյասեղան-երեկոյթի նիւ-
թաբարոյական յաջողութիւնը նոր հաւա-
քոյթներու ճամբան կը բանայ: Մասնա-
ճիւղը կ'ունենայ ամսական անդամական
ընդհանուր ժողով, ուր կը նշանակուի հե-
տեւեալ վարչութիւնը:

Ատենապետ՝ Ղազարոս Փափագեան
Ատենադպիր՝ Յովհաննէս Ասլանեան
Գանձապահ՝ Գրիգոր Թարագճեան
Խորհրդականներ՝ Գրիգոր Սարուրեան
եւ Վազգէն Արթինեան

Ֆուլթպոլի փոխ-խմբապետ՝ Մանուկ Աս-
լանեան — [ԻԳ.108]:

Նորակազմ մասնաճիւղը իր շարքերուն
մէջ արդէն ունի ութ կուսամարտիկներ եւ
երկու ֆուլթպոլի խումբեր, որոնք կը զգես-
տաւորուին Թէյասեղան-երեկոյթէն գոյա-
ցած գումարներով: Սակայն կը պակսի հա-
ւաքավայր ապուստոյն: Այս կարիքը գո-
հացնելու համար, 1928ին, թատերական
երեկոյթ-պարահանդէսի մը եկամուտով
սենեակ մը եւ բակ մը կը վարձուի Խուֆրէ
փողոցի թիւ 38 շէնքին մէջ — [ԺԸ.98]:

1929ին, Հայ Կեդրոնի նոր գնած Ասե-
ւեաօ փողոցի հողամասին վրայ վարչու-
թիւնը կը հարթէ փոքր մարզադաշտ մը,
մինչեւ Հայ Կեդրոնի շէնքի շինութիւն: Այս
դաշտին վրայ կը կատարուէին շաբաթա-
վերջի մարզական փորձերը, ֆուլթպոլի
խումբերու տակաւ զարգացումով: Այս կա-
ցութիւնը պիտի շարունակուէր շուրջ չորս
տարի: 1930ին, նորահարթ այդ դաշտին
վրայ կը կայանայ մասնաճիւղի մարզական
առաջին ասոյեանական հանդիպումը: Մաս-
նաճիւղը, այդ թուականին, ունի ֆուլթ-
պոլի, պասքեթպոլի եւ աթլետիկ մի խումբեր
— [Ե.202]:

1930ին, կը ծրագրուի սկաուտական բաժ-
նի կազմակերպումը: Մասնաճիւղը «Հայ
Սկաուտ»ի միջոցաւ կապի մէջ է Ֆրանսայի
հետ:

1931ին, Պուէնոս Այրէս կ'այցելէ Ու-
րուկուէյէն՝ Մոնթէվիտէոյի Հ.Մ.Ը.Մ.ի
ֆուլթպոլի խումբը, եղբայրական հանդիպու-
մի մը համար տեղւոյն մասնաճիւղի խումբ-
բին դէմ: Այս այցելութիւնը մեծ խանդա-
վառութիւն կը ստեղծէ Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ:

Նոյն տարին, Պուէնոս Այրէսի մաս-
նաճիւղը, Փարիզէն Ն. Սերոբեանը կը նը-

շանակէ որպէս պատգամաւոր՝ Փարիզի մէջ կայացող Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին: Այս ձեւով մասնաճիւղը պաշտօնապէս կապուած կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կեդրոնին հետ՝ ի Փարիզ:

Մասնաճիւղի Ֆուլթպոլի եւ պասքեթպոլի խումբերը հետզհետէ կը զարգանան եւ յաջող արդիւնքներով մրցումներ կը կազմակերպեն տեղական խումբերու դէմ, արժանանալով ընդհանուր գնահատանքի: Մարզիչի եւ իրաւարարի պաշտօններ վարած է, ի միջի այլոց, Սարգիս Մինասեանը:

1933ին, անդամներու թիւը կը բարձրանայ ինիսունի: Մինչ այդ, ակումբի սենեակը կը փոխադրուի Հայ Կեդրոնի նորաւարտ շէնքին մէջ: Այս թուականին կը փորձուի նաեւ սկստական խումբի կազմութիւնը իրականացնել: Սկստական շարժումը սկսելու ծրագիրը անգամ մը եւս կ'ուսումնասիրուի, 1934ին: Ղեկավարութիւնը վերապահ է՝ նկատի առած արժանութիւնեան պետական պայմանները, ըստ որուն՝ սկստական բոլոր աշխատանքները, դասախօսութիւններու գրաւոր արձանագրութիւնները պէտք է ըլլան միայն սպաներէն լեզուով: Այսուհանդերձ, Հայ Կեդրոնի քարտուղար Թադէոս Մեծատուրեան եւ Պուքրէշի մասնաճիւղէն նոր ժամանած Լեւոն Գամեան կը նախաձեռնեն սկստական շարժումին: Արմէն Պերկամալի կը տրամադրէ սկստական տարազներ: Կը կազմուի սկստական մարմին մը՝ բաղկացած հետեւեալներէն. Սուրէն Պետեան, Գալուստ Տէր Մարտիրոսեան, Լուսինի Թահթաճեան, Օննիկ Խաչերեան եւ Մանուկ Սարը Գույումճեան: Արշաւներ եւ սկստական ձեռնարկներ կը կազմակերպուին: Սակայն, Թադէոս Մեծատուրեանի Փարիզ մեկնումը եւ որակաւոր աստիճանաւորներու պակասը վերջ կը դնեն սկստական բաժնի հազիւ երկամեայ գործունէութեան — [ԺԸ.106-109]:

Միջանկեալ, զարկ կը տրուի մարզա-

կան գործունէութեան, Ֆուլթպոլի եւ ըմբշամարտի ճիւղերուն մէջ:

Հայ Կեդրոնի շէնքի շինութենէն ետք, փոքր մարզադաշտը շատ նեղ կու գայ Հ.Մ.Ը.Մ.ի կարիքներուն: Հետեւաբար, կը վարձուի Բուրուշակա փողոցի թիւ 1700ի փոքր հողամասը, որ կը վերածուի մարզադաշտի՝ ծառայելով քառամեակ մը եւս:

Զգալի է, որ մարզադաշտերու փոքր տարածութիւնները կը սահմանափակեն մասնաճիւղի մարզական գործունէութեան զարգացումը:

1938ին, կը դիմուի Պագրճեան հաստատութեան՝ խնդրելով իրենցմէ Հ.Մ.Ը.Մ.ին տրամադրել Օլիվոսի մէջ գտնուող իրենց պաշտօնէութեան յատկացուած մարզադաշտը՝ իր պասքեթպոլի, վոլիպոլի եւ պոչայի խաղերու սարքաւորումներով: Պագրճեան հաստատութիւնը սիրայօժար կը տրամադրէ դաշտը ու վարչութիւնը մեծ թափով գործի կը ձեռնարկէ եւ արագօրէն կը կազմակերպէ զայն: Այսպէսով, մասնաճիւղի մարզական բոլոր կարիքներուն գոհացում կը տրուի:

Նոր մարզադաշտի կարելիութիւնները առիթ կը ստեղծեն նաեւ որ Հ.Մ.Ը.Մ.ը հոն կազմակերպէ իր անդրանիկ Ողիմպիականը՝ ղեկավարութեամբ Կարօ Շահինեանի: Մարզական այս հանդիսութիւնը կը խանդավառէ հայ երիտասարդութիւնը: Անդամներու թիւը, 1939ին, կը բարձրանայ 260ի, որոնց շարքին՝ 40 անդամուհիներ:

Հ.Մ.Ը.Մ.ը պաշտօնապէս կը վարձէ Պագրճեան մարզադաշտը, ու մարզական ճիւղերը արագօրէն կը բազմանան ու կը զարգանան: Ֆուլթպոլի եւ ըմբշամարտի կողքին, արդէն կը կիրարկուին պասքեթպոլ, թենիս եւ աթլետիզմ: Հ.Մ.Ը.Մ.ական խումբերու թեքնիք կարողութիւնները որակով կը բարձրանան: Պասքեթպոլի խումբը բազմաթիւ յաղթանակներ կ'ապահովէ տեղական խումբերուն դէմ՝ ստանալով յաղթանակի բաժակներ:

Դժբախտաբար, 1939ին, Ռիօ Տէ Լա Բլաթա գետի յորդումը պատճառ կը դառնայ որ մարզադաշտն ու յարակից շէնքը ամբողջութեամբ աւերուին: Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւնն ու անդամները ամէն զոհողութիւն յանձն առնելով կը ցուցաբերեն հայու շինարար ոգին եւ մարզադաշտը կրկին կեանքի կը կոչուի:

Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը նորանոր նուաճումներու սեմին կը գտնուի — [ԺԸ.101]:

ՄՈՆԹԷՎԻՏԵՕ

Ուրուկուէյի մայրաքաղաք՝ Մոնթէվիտէոյի մէջ, 1927ի ամրան, հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին: Հիմնադրութեան ժողովին կը մասնակցին 30ի մօտ մարզասէր երիտասարդներ — [ԻԳ.44]:

Մասնաճիւղի մարզական գործունէութեան առանցքը կը կազմէ ֆուլթպոլի ճիւղը: Բացի տեղական խումբերու դէմ իր ունեցած բարեկամական մրցումներէն, մասնաճիւղի խումբը կը յաջողի 1931ին այցելութիւն մը տալ Պուէնոս Այրէս, տեղւոյն մասնաճիւղի խումբին դէմ մրցումի մը համար: Այս այցելութիւնը քաջալերական կ'ըլլայ Մոնթէվիտէոյի մասնաճիւղի զարգացման համար: Սակայն, մասնաճիւղի կապերը Փարիզի կեդրոնին հետ լաւապէս չեն հաստատուիր եւ Մոնթէվիտէոյի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը հետզհետէ սկաւրանալով կը դադրի:

ՍԱՆ ՓԱՈՒԼՕ

Պրագիլիոյ մայրաքաղաք՝ Սան Փաուլոյի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութեան աշխատանքներուն կը ձեռնարկուի 1929ի Օգոստոսին: Մասնաճիւղի ծանօթացման համար, առաջին հերթին, կը կազմակերպուի բացման հանդիսութիւն մը, ուր հայկական գաղութի անդամներուն կը յայտնուի Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը: Այս

հանդիսութեան կը հետեւի անդամներու արձանագրութեան արշաւ մը:

1930ի սկիզբը, անդամներու ընդհանուր թիւը կը հասնի 45ի:

Մասնաճիւղը կը կազմէ իր անդրանիկ ֆուլթպոլի խումբը, որու սկզբնական փորձերու շրջանին կը հետեւին տեղացի խումբերուն դէմ կազմակերպուած մրցումներ: Միաժամանակ, կը կազմուի սկաուտական խումբի մը կորիզը:

Մարզական եւ սկաուտական գործունէութեան զուգընթաց, մասնաճիւղը կը ձեռնարկէ ազգային գործունէութեան: Այսպէս, 1930ի Ապրիլին, կը կազմակերպուի Ապրիլ 24ի սգահանդէս: Նոյնպէս, մասնաճիւղը գեղարուեստական եւ թատերական ելոյթներով իր կարեւոր դերը կը յաջողի ունենալ՝ արժանանալով հայկական գաղութի անվերապահ գնահատանքին — [Ե.22]:

1930ի Օգոստոսին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով, որմէ կ'ընտրուի հետեւեալ վարչական կազմը.

Ատենապետ՝ Ս. Խաչատուրեան
Քարտուղար՝ Մ. Գասարճեան
Գանձապահ՝ Ս. Չերքէզեան
Սկաուտ ներկ.՝ Ս. Թադէոսեան
Նորհրդականներ՝ Ա. Գալուստեան,
Յ. Չորպաճեան, Յ. Լաբոյեան:

Նոյն տարին, ֆուլթպոլի խումբերու թիւը կը բարձրանայ երկուքի: Չոյզ դասակարգի այս խումբերը շաբաթական մրցումներ կը կազմակերպեն իրենց համապատասխան տեղական խումբերու դէմ:

Մասնաճիւղի գործունէութիւնը կը շարունակէ զարգանալ ապահով քայլերով, մինչեւ 1934 թուականը:

1934էն սկսեալ, Սան Փաուլօ կը հաստատուի Պոլսոյ նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներէն՝ Անդրանիկ Քէօթէնճեան: Ան կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական բաժնի ընդհանուր պատասխանատուութիւնը: Այսպէսով, շարժումը նոր եւ յատուկ թափ կը ստանայ:



Հիմնված 1918

Հ. Մ. Ը. Մ.

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀՈՅ ԱՎՈՐՑՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՂ Ս. ԲԱՆՈՒԸ

ՊՐԱՅԻՆ

Ա. Գ. Ա.

União Geral Armentia de
Educação Physica e
de Escotismo



Fundada em 1918

Rua.....

Filial: SÃO PAULO - 1929
BRASIL

Sao Paulo, de de 193.....

Illmo. Snr.

[Handwritten Armenian text, likely a letter or report]

[Handwritten signature and name]



Սան Փաուլոյի մասնաճիւղի Ամսակի թուղթը եւ վարչութեան կնիքը:

1934 տարուայ վարչութեան ատենապետն է Սեպուհ Չէրքէզեան, իսկ փոխատենապետի պաշտօնը կը վարէ Վահան Զորպաճեան: Վարչութեան անդամներէն՝ Գարեգին Թիւֆէնքճեան տարածման աշխատանքի կողքին, կ'աշխատակցի Փարիզի «ՀԱՅ ՍԿԱՌԻՏ» պաշտօնաթերթին՝ մասնա-



Սան-Փաուլոյի մասնաճիւղի Ֆութպոլի առաջին խումբը, 1930-ին

ճիւղի գործունէութիւնը արձանագրող թրջթակցութեամբ: Մասնաճիւղը քաջալերական գրութեամբ կը շնորհակորէ պաշտօնաթերթի վերերեւումը, հաստատելով անոր դերը համագաղութային կապերու զարգացման համար — [2.46]:

1934ին, մասնաճիւղի վերաշխուժացման առընթեր, վարչութիւնը կը յաջողի սեփական մարզադաշտ մը ապահովել եւ զարկ տալ նաեւ ամբլեթիզմի ճիւղին: Սկաուտական բաժինը, նոյնպէս, բացառիկ յաջողութիւններ կ'արձանագրէ: Սկաուտական խումբը կը մասնակցի Պրագիլիոյ միջմիութենական ընդհանուր բանակումին՝ գրաւելով երկրորդ խիստ պատուաբեր դիրքը: Մասնաճիւղի գործունէութեանց զարգացումը կ'ապահովուի՝ հակառակ տնտեսական շատ դժուարին պայմաններուն, եւ Սան Փաուլոյի Հ.Մ.Ը.Մ.ը իր գոյութիւնը կը յաջողի պահել մինչեւ Բ. Ընդհանուր Պատերազմի նախօրեակը:

Դժբախտաբար, Մոնթէվիտոյի եւ Սան Փաուլոյի մասնաճիւղերու գործունէութեանց մասին ժամանակագրական կարգով աւելի մանրամասն տեղեկութիւններ կը պակսին մեզի: Ծանօթ է, որ անոնց մարզական գործունէութիւնը Ֆուլթպոլի շուրջ կը դառնար, իրենց երկիրներու մակարդակին բաղդատած՝ համեստ արդիւնքներով: Հաւանական է այն ենթադրութիւնը, թէ Հարաւային Ամերիկայի նման Ֆուլթպոլի երկրպագու երկիրներու մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական յաջողակ մարզիկներ ներգրաւուած ըլլան տեղական արհեստավարժ խումբերու կողմէ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

— ՄԵՔՍԻՔԱ

ՄԵՔՍԻՔՕ

Մեքսիքայի մայրաքաղաք՝ Մեքսիքոյի մէջ, 19 Յուլիս, 1925ին հիմը կը դրուի տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին:

Այս մասին, Գասպար Առաքելեան տեղեկութիւններ կ'ուղարկէ Պուլկարիոյ եւ Ռուժանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ՝ «Հ.Մ.Ը.Մ.»ին — [Ի/7.13]:

Մեքսիքոյի մասնաճիւղը, հակառակ նիւթական անձուկ կացութեան, իր 25 անդամներով կը յաջողի կազմել ֆուլպուլի խումբ մը եւ սկստաներու խմբակ մը: Ժամանակի ընթացքին կ'ունենայ նաեւ հաւաքատեղի մը, ուր ընթերցանութեան պահեր եւ կուփամարտի փորձեր կը կատարուին: Սակայն, խանդավառութեամբ սկսուած այս նախաձեռնութիւնը երկար չի տուար:


1930ին, Փարիզ հրատարակուող «Հայ Սկսուտ» պաշտօնաթերթի Օգոստոս-Սեպտեմբեր՝ 9-10 միացեալ թիւին էջ 169ին մէջ կը կարդանք հետեւեալը.

«Թերթիս արտօնատէր Պ. Տիրան Բերչեմլեան, գործօն ու եռանդուն Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ կը գտնուի Մեքսիքո ձեռնարկած է կազմակերպել տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, ֆուլպուլի եւ սկստական ճիւղերով եւ արդէն այս ուղղութեամբ սկսած է նախապատրաստական լուրջ աշխատանքի: Վստահ ենք թէ մօտ ատենէն Մեքսիքոն եւս պիտի ունենայ իր ֆուլպուլի եւ երկսեռ սկստական խումբերը»:

Այս արձանագրութիւնէն հետեւցնելով կ'եզրակացնենք, թէ Մեքսիքոյի մասնաճիւղը կ'ունենայ վերակազմութեան չըջան մը: Դժբախտաբար, փոքրաթիւ հայ գաղութի պայմանները անբաւարար կ'ըլլան գործը ընդլայնելու: Վրայ կը հասնին Մեքսիքայի քաղաքական դժուարին տարիները՝ 1933-34՝ երբ պետական արգելքներու հիման վրայ, ինչպէս բոլոր նմանօրինակ կազմակերպութիւններու պարագային, նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը կը դադրի — [Խ.122]:

Հ. Մ. Ը. Մ.

13



Հ. Մ. Ը. Մ.-Ը ՄԵՔՍԻՔՕՅԻ ՄԷՋ

Սիրելի բնակիչներ,
Գրեթէ երեք ամիս առաջ, Յուլիս 19ին, նոս կազմուեցաւ Հ. Մ. Ը. Մ.ը:
Առաջին ներթիւն բաւական եռանդով գործի փութեցաւ երիտասարդութիւնը, բայց, ինչպէս ամէն տեղ, նոս ալ նիւթական պայմանները մեր ամէն ձեռնարկները ամլութեան դատարարուեցին դժբախտաբար: Տեղւոյս գաղութին ալ 300 հոգին չանցնիր որ, անոր վրայ կը թնամ արգելք մը յառաջ քերէինք:
Բայց նակառակ այս դժուարութեան, լսկ անդամավճարներով քոնանալով յարատեւեցինք գործը: Հիմա ունինք 25 մարդիկ անդամներ եւ արիներու խմբակ մը, որոնք չաքաթը երկու անգամ մարզավայր կ'երթան ու շուէտական ութմիք մարզանքներ եւ այլ խաղեր կը կատարեն:
Ունինք ֆուլպուլի Ա. թիւ մը, որ բաւական զօրաւոր է, բայց կանոնաւոր կօշիկներ չունենալուն դեռ չենք նամարձակիր տեղական խումբերու նետ մրցելու:

Գօտին: Մօտ օրէն կը յուսանք որ նորէն մրցի: Արգէն Պօքսի ընկերութիւնը վաւերացուց զինք, բայց խեղճ աղան չի կրնար կանոնաւոր փորձեր ընել գործի պատճառաւ, քանզի այս երկիրներուն մէջ եթէ օր մը չաշխատիս՝ նետեալ օրը անօթի ես:
Մեր ելլալը բարեւեալը Ռուժանա՛յն եւ Պուլկարա՛յն արի ելլալըներուն, ինչպէս նաեւ ուրիշ երկիրներու բոլոր հայ արիներուն: Շատ ուրախ պիտի ըլլայինք եթէ մեզ նետ յարաբերութեան մը նայիք, եւ մարզական եւ սղատական թերթերէն զրկէիք: Դժբախտաբար ոեւէ մասնաճիւղի հասցէն չունինք որ թղթակցինք: Եթէ կարելի է կամ զրկեցէք ձեր դիտցած հասցէները՝ օտար թէ հայ, եւ կամ ձեր թերթին մէջ մեր հասցէն տպեցէք որ թղթակցինք:
Տեղւոյն աթլէթի եւ սպորտ խմբակներ
ԳԱՍՊԱՐ ԱՌԱԲԷԼՍԱՆ
Յ. Գ.— Մեր հասցէն է.— Գ. Առաքելեան
Բալիէ Բօրկոնսոր — Մեքսիքո Տ. Ֆ.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ

ՊԱՂԵՍՏԻՆ

- ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ
- ԵՐՈՒՍԱՂԷՄ
- ՀԱՅՖԱ
- ԵԱՖԱ
- ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻՋԵՐԿ ԲԱԿԱՆ

ԾՈՎ

Հալֆա

Եաֆա

Ամման

Երոտսարես

Պարեսին

ՅՈՐԴԱՆԱՆ



ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Պաղեստինի շրջանի կազմութեան նախորդած է հայկական որբանոցներու շարունակութիւնը հանդիսացող «Արծիւ» ֆոլթպոլի խումբի գործունէութիւնը: «Արծիւ» խումբը 1930-31ի տարեշրջանին կը մասնակցի Երուսաղէմի Բ. դասակարգի ֆոլթպոլի միջազգային մրցումներուն՝ պատուաբեր յաղթանակներ ապահովելով անգլիացի, յոյն եւ հրեայ խումբերու դէմ:

«Արծիւ»ի այս յաջողութիւնները կը քաջալերեն խումբ մը երիտասարդներ, գլխաւորութեամբ Կարօ Հրաչի եւ Պօղոս Պետրոսեանի, հիմնելու Պաղեստինի Հայ Մարմնակրթական Միութիւնը՝ հովանաւորութեամբ Կիւրեղ Վրդ. Իսրայէլեանի, Տօթ. Վ. Գալպեանի, Լեւոն Գէորգեանի, Յակոբ Մելիքեանի եւ Պ. Պլաշֆօրտի (Հայկական որբանոցներու տնօրէն): Անոնք կը դիմեն հայոց վանքի պատասխանատուներուն, խնդրելով որ տեղ տրուի իրենց գործունէութեան՝ վանքի շրջափակէն ներս: Կարօ Հրաչ կը ծրագրէ նաեւ միութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին միացնել, սակայն վանքի իշխանութիւնները կը մերժեն այս ծրագիրը, ու Պաղեստինի «Հայ Մարմնակրթական Միութիւն»ը կը շարունակէ իր գործունէութիւնը նոյն անուան տակ: Ֆոլթպոլի կողքին, միութիւնը կը կիրարկէր նաեւ պասքեթպոլը — [ԺԱ.234]:

Նոյն օրերուն, Ն. Պէտէվեան եւ իր ընկերները կը ծրագրեն սկստական շարժումին ծնունդ տալ հայ պատանեկութեան շարքերուն մէջ: Անոնք, 1930ի Յունուարին, կը դիմեն Փարիզի կեդրոնին՝ խնդրելով Հ.Մ.Ը.Մ.ի սկստութեան կանոնագիրը, անոր հիման վրայ սկսելու համար սկստական աշխատանքներուն — [Ե.82]:

Մարզական եւ սկստական այս գործունէութիւններու ընթացքը կը շարունակուի մինչեւ 1935 թուականը, երբ վերջապէս կը յաջողի զանոնք մէկ դրօշի տակ միա-

ցընելու ծրագիրը: Արդարեւ, 5 Մայիս, 1935ին, Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան նպատակով հայ երիտասարդութիւնը կը հրաւիրուի խորհրդակցութեան: Պէյրութէն այս նպատակով Երուսաղէմ կը հասնի նաեւ Յովհաննէս Շահինեան: Խորհրդակցական այս հաւաքոյթի որոշումով ծրագիրը կը յաջողի եւ 43 անդամներով հիմը կը դրուի Պաղեստինի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ մասնաճիւղին՝ Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ին: Մասնաճիւղը կը ստանայ Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան վաւերացումը: Այս աքթով, Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան սահմանները կ'ընդարձակուին: Հետագային, Շրջանային Վարչութիւնը պիտի դառնար՝ Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութիւն:

Պաղեստինի Հ.Մ.Ը.Մ.ի շրջանային գործունէութեան մասին պիտի տեղեկանանք ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆԻԹԻՒՆՆԵՐ յատուկ գլուխին տակ:

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր ժողովը 5 Մայիս, 1935ին, ընտրեց մասնաճիւղի անդրանիկ վարչութիւնը՝ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Վահան Ղազարեան
 Ատենադպիր՝ Երուանդ Տարաքճեան
 Գանձապահ՝ Վահէ Քալէմքեարեան
 Օգն. գանձ.՝ Առաքել Բախիսարեան
 Ֆոլթպոլի եւ աթլետիզմի ներկայացուցիչ՝ Պօղոս Պետրոսեան.

Գանձապահ Վահէ Քալէմքեարեանի, երկու ժողով ետք հրաժարումովը՝ տեղը նշանակուեցաւ Յակոբ Պետրոսեան: Տարուան ընթացքին անդամներու թիւը շուտով բարձրացաւ 90ի:

Վարչութեան առաջին մտահոգութիւնը եղաւ մասնաճիւղի կարիքները ապահովող ազգային մը ունենալ: Քաղաքի կեդրոնական

դիրքի վրայ վարձուեցաւ 2 սենեակնոց յարկաբաժին մը: Բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Նոյեմբեր 11ին: Տեղւոյն վրայ եղած նուիրատուութիւններէն գոյացաւ 7150 միլ:

Ֆուլթոնի Ա. եւ Բ. խումբերը սկսան գործել՝ տեղական խումբերու դէմ փայլուն արդիւնքներ արձանագրելով: Պասքեթբոլի խումբը իր կարգին յաջող ելոյթներ ունեցաւ:

Վարչութեան ծրագրած աշխատանքները, դժբախտաբար ամբողջութեամբ չիրականացան, նկատի ունենալով երկրի քաղաքական կացութիւնը: Վեցամսեայ երկարատեւ գործադուլի շրջանը դժուարացուց աշխատանքները:

Վարչութեան միամեայ գործունէութեան նիւթական բաժինը ունեցաւ 7397 միլ մուտք եւ 7122 միլ ելք:

1936, Հոկտեմբեր 25ին կայացաւ անդամական ընդհ. ժողով: Այս ժողովէն ընտրուեցաւ նոր վարչական կազմ՝ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Երուանդ Տարագճեան
- Փոխ-ատենապետ՝ Վահան Ղազարեան
- Ատենադպիր՝ Կարապետ Յակոբեան
- Փոխ-ատենադպիր՝ Պօղոս Պետրոսեան
- Գանձապահ՝ Անդրանիկ Դարբինեան
- Սկաուտական պետ՝ Կարօ Մարտիրոսեան

Աթլետիք պետ՝ Հրայր Երկաթունի:

Այս վարչութեան գլխաւոր աշխատանքը եղաւ մասնաճիւղի ներքին կազմակերպութիւնը: Հիմնադրութեան օրերէն ծրագրուած սկաուտական բաժինը, ի վերջոյ, իրականացաւ՝ արժանանալով յատուկ խնամքի: 21 սկաուտներէ բաղկացած սկաուտական խումբը, այս տարեշրջանին, ըստացաւ պետական վաւերացում՝ որպէս Երուսաղէմի 30րդ սկաուտական խումբ: Սկաուտական թեքնիք պատրաստութեան աւարտին, մասնաճիւղը 1 Մայիս, 1937ին, կազմակերպեց սկաուտական երդման արա-

րողութիւն: Խումբը բաժնուած էր 3 խումբակներու.

- «Առիւծ» առաջնորդ՝ Յ. Մահսէրէճեան
 - «Վագր» առաջնորդ՝ Գ. Հայրապետեան
 - «Արծիւ» առաջնորդ՝ Յ. Ստեփանեան:
- Այս տարեշրջանին, վարչութիւնը զգալով մասնաճիւղի հետզհետէ բազմացող մարզական կարիքները, յատկապէս մարզադաշտի պակասը, կը ծրագրէ նաեւ ֆուլթոնի եւ պասքեթբոլի դաշտերու ապահովումը:

1 Նոյեմբեր, 1937ին, անդամական ընդհանուր ժողովէն կ'ընտրուի մասնաճիւղի նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով. Ատենապետ՝ Վահան Ղազարեան, Փոխ-ատենապետ՝ Արամ Այվազեան, Ատենադպիր՝ Լեւոն Քէչիշեան, Գանձապահ՝ Յովհաննէս Պերպէրեան, Խորհրդական՝ Կարապետ Յակոբեան: Ընդհանուր ժողովը կ'ընտրէ նաեւ մարզական ընդհանուր խմբապետ՝ Թորոս Տէր Թորոսեանը եւ սկաուտական խմբապետ՝ Կարապետ Մարտիրոսեանը, որոնք ի պաշտօնէ մաս կը կազմեն վարչութեան:

Նորընտիր վարչութիւնը, իր կարգին, կը նշանակէ մարզական հետեւեալ յանձնախումբը՝ մարզական բոլոր ճիւղերուն համար. Թորոս Տէր Թորոսեան՝ ֆուլթոնի մարզիչ, Վահէ Ղազէրեան՝ պասքեթբոլի մարզիչ, Հրայր Երկաթեան՝ աթլետիզմի մարզիչ, Կարապետ Յակոբեան եւ Յովհաննէս Պերպէրեան՝ օգնականներ — [ԼԲ./1.4]:

Նորընտիր վարչութեան առաջին եւ գլխաւոր գործը կ'ըլլայ մարզական դաշտի մը ապահովումը, ֆուլթոնի եւ պասքեթբոլի յատուկ բաժիններով: Դաշտի յարդարման ծախսերը կը հոգան անդամները վարչական եւ ղեկավար անդամներու առջնորդող ֆոնտին մասնակցելով:

Դաշտի գոյութիւնը կը դիւրացնէ ֆուլթոնի առաջին խումբի փորձերու եւ մրցումներու կազմակերպումը: Ա. խումբի կողքին

կը գործեն յաջորդական դասակարգի չորս խումբեր: Առաջին խումբը մրցում մը կ'ունենայ Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի եւ Եաֆայի «Կամք» խումբի հաւաքականին դէմ: Միջմասնաճիւղային այս եղբայրական հանդիպումը մեծ խանդավառութիւն կը ստեղծէ Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ:

Սկառուտական կազմը կ'ունենայ իր արչաները եւ կը զօրացնէ սկառուտներու թեքնիք պատրաստութիւնը՝ կարգերու եւ աստիճաններու քննութեանց նախատեսութեամբ: Սկառուտներու տարազաւորման նպատակով, մասնաճիւղը կը դիմէ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ին, խնդրելով 30 ձեռք տարազ եւ սկառուտական թեքնիք հրատարակութիւններ՝ հայերէն:

Վարչութեան երկրորդ գլխաւոր գործը կ'ըլլայ մասնաճիւղի օրկան՝ «Ամսօրեայ Շրջաբերական»ի հրատարակութիւնը: Իր Յունուար, 1938ի առաջին թիւի առաջնորդող յօդուածին մէջ կը կարգանք «Մեր նպատակը» վերնագրով գրութիւնը:

«Անդամներու մէջ աւելի հետաքրքրութիւն եւ եռանդ արթնցնելու, ինչպէս նաեւ Միութեան գործունէութեան եւ առաջադրած ձեռնարկներուն շուրջ զանոնք տեղեակ պահելու նպատակաւ, Մասնաճիւղի Վարչութիւնը որոշած է պատրաստել — ամիսը անգամ մը — անդամներու շրջաբերականներ, որոնք առ այժմ պիտի մատուցուին երկսիւն չորս էջերով եւ պիտի բովանդակեն ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ.ի եւ մասնատրապէս Մասնաճիւղի մարզական եւ սկառուտական կեանքին վերաբերեալ գրութիւններ, վարչական հրահանգներ, թելադրութիւններ եւ նոյնիսկ ամփոփ յօդուածներ»:

«Սոյն ձեռնարկը օգտաշատ եւ քաջալերելի նկատուած պարագային՝ ծրագրուած է ընդարձակել «Շրջաբերական»ի ծաւալն ու բովանդակութիւնը»:

Չորս էջերէ բաղկացած այս թերթիկին կը յաջորդէ 8 էջնոց երկրորդ թիւը, ուր արդէն ի յայտ կու գայ, թէ թերթը իր ծիրը

ընդլայնելով՝ երրորդ թիւէն սկսեալ պիտի ըլլայ Երուսաղէմի եւ Հայֆայի զոյգ մասնաճիւղերու օրկանը: Երրորդ թիւը կը բաղկանայ 4 էջերէ: Հ.Մ.Ը.Մ.ի քսանամեակին առթիւ «Ամսօրեայ Շրջաբերականը» կը հրատարակէ նաեւ «Սկառուտ»ը վերտառութեամբ իր 48 էջերէ բաղկացած թիւ 1 բացառիկը՝ խմբագրութեամբ Հրայր Երկաթեանի, Լեւոն Քէշիշեանի եւ Մեսրոպ Երկաթեանի: Բացառիկ այս թիւին իրենց աշխատակցութիւնը կը բերեն՝ Պէյրութէն՝ Վահրամ Ս. Փափազեան, Օննիկ Փիլիկեան, Գահիրէէն՝ Ն.Օ. Խանճեան, ՍԵՊ եւ Ն.Օ. Խ., Պուրկազէն (Պուլկարիա)՝ Գ. Փոստաճեան, Փարիզէն՝ Վազգէն Անդրէասեան, Ամմանէն՝ Յովիկ Նայիրեան, Երուսաղէմէն՝ Մերացած Պաղերա: Պատկերազարդ այս հրատարակութիւնը կը պարունակէ հիմնադիրներու կենսագրութիւններ եւ Հ.Մ.Ը.Մ.ի գրեթէ բոլոր մասնաճիւղերու մասին ամփոփ տեղեկութիւններ: Քսանամեակի առթիւ յաջող հրատարակութիւն մը, արդարեւ — [ԼԲ/ 1938 բացառիկ]:

1938ին, մասնաճիւղի անդամներուն առաջին անգամ ըլլալով կը տրուի անդամատետրեր: Գործօն անդամներու ընդհանուր թիւն է 115: Մասնաճիւղի կապերը՝ Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութեան հետ կը դառնան աւելի յաճախակի: Մասնաճիւղը կը ստանայ Փարիզի մէջ հրատարակուող «Հայ Սկառուտ» օրկանը:

Կազմակերպչական, մարզական, սկառուտական ու հրատարակչական այս լայն գործունէութիւններու կողքին, Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ը կ'ունենայ նաեւ գեղարուեստական եւ ազգային գործունէութիւն: Մասնաճիւղը կը կազմէ երգչախումբ եւ նուագախումբ, որոնք զանազան առիթներով հրապարակ կու գան յաջող ելոյթներով: 1938ին, կը տօնակատարուի Ապրիլ 24, Մայիս 28:

4 Սեպտեմբեր, 1938ին, կ'ընտրուի

ՀԱՅՅԱ

մասնաճիւղի նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Մեսրոպ Երկաթեան
Փոխ-ատենապետ՝ Վահան Ղազարեան
Ատենադպիր՝ Սարգիս Սեմէրճեան
Փոխ-ատենադպիր՝ Լեւոն Քէչիշեան
Գանձապահ՝ Հրայր Երկաթեան
Մարզական պատասխանատու՝ Վահէ
Ղազէրեան

Սկսուտական խմբապետ՝ Կարապետ Մարտիրոսեան:

Նորընտիր վարչութիւնը մեծ թափով կը ձեռնարկէ նախորդ տարիներու յաջող գործունէութիւններու շարունակման: Դժբախտաբար, քաղաքական պայմանները հետըզհետէ կը դժուարացնեն գործունէութեան դիւրասահ ընթացքը:

3 Դեկտեմբեր, 1938 թուակիր իր նամակով վարչութիւնը կը տեղեկացնէ Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութեան, թէ ի վիճակի չէ Միութեան հիմնադրութեան 20 ամեակին նուիրուած հանդիսութիւնը իրականացնելու:

Երուսաղէմ քաղաքի արաբ եւ հրեայ զոյգ բաժիններու թշնամական դիրքորոշումներն ու քաղաքացիական կռիւները անկարելի կը դարձնեն Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւններու ընդլայնումը: Դժուարին օրեր կը յաջորդեն արդիւնաւէտ ժամանակաշրջանին: Բազմաթիւ անդամներու քաղաքէն հեռանալը պատճառ կը դառնայ որ մասնաճիւղը 1939 տարին դիմագրաւէ բացառիկ զգուշաւորութեամբ եւ հետզհետէ ամփոփուի իր պատեանին մէջ:

Այսուհանդերձ, 10 Ապրիլ, 1939ին, վարչութիւնը կը յաջողի պասքեթպոլի խումբը ղրկել Գահիրէ, ուր ան մրցումներ կ'ունենայ տեղւոյն հայկական խումբերուն դէմ: Արդիւնքները կ'ըլլան շատ համեստ, սակայն տեղափոխութիւնը կը ծառայէ համագործակցութեան եւ փոխադարձ ծանօթացման:

Պաղեստինի Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ մասնաճիւղն է Միջերկրականի ծովեզերեայ Հայֆա քաղաքի մասնաճիւղը:

1933, Օգոստոսի 10ին, 22 երիտասարդներ ի մի հաւաքուելով կ'ընտրեն մասնաճիւղի անդրանիկ վարչութիւնը՝ բաղկացած հետեւեալներէն.

Ատենապետ՝ Արամ Մահսերէճեան
Փոխ-ատենապետ՝ Խաչիկ Թաշճեան
Ատենադպիր՝ Արամ Գարաբաշեան
Գանձապահ՝ Թորոս Փիւրանեան
Խորհրդական՝ Ղուկաս Խաչատուրեան
Ֆութպոլի պատասխանատու՝ Իլէաս Պէնեան

Աթլետիզմի պատասխանատու՝ Դաւիթ Գրիգորեան:

Դժբախտաբար, այս կազմը ներքին անհասկացողութիւններու պատճառով, անգործունէութեան կը մատնուի: Գաղութի հայութիւնն ալ, վերապահութեամբ, պէտք եղած քաջալերանքին չարժանացնելով, սկսած գործը շուտով կը մարի:

Սակայն, մարզասէր երիտասարդներ իրենց հոգւոյն մէջ արթուն կը պահեն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութեան ծրագիրը:

1937ի սկիզբին է, որ 18 Հ.Մ.Ը.Մ.ականներ, որոնց կարգին՝ Յարութիւն Պէօյիւքեան, Արամ Այվազեան, Տիրան Պալպալեան, Շաւարշ Պալպալեան եւ Թաշճեան եղբայրներ, կը յաջողին վերակազմել Հայֆայի մասնաճիւղը: Այս յաջողութեան կը նպաստեն նաեւ Եղիշէ Մանուկեան եւ Ներսէս Գեւորեան:

Առժամեայ վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Խաչիկ Թաշճեան, իսկ ատենադպրութիւնը՝ Յակոբ Պետրոսեան: Այս վերակազմութեան յաջորդ օրն իսկ գործի ձեռնարկելով, մասնաճիւղը կը յաջողի հրապարակային ձեռնարկներով ներգրաւել քաղաքի հայութեան համակրանքը:

Յատուկ զգուշութեամբ եւ գտումով կ'ըլլան նոր անդամներու արձանագրութիւնները, խուսափելու համար հետագայ դժուարութիւններէ:

Ընտրեալ առաջին վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Եղիշէ Մանուկեան, իսկ ատենադպրութիւնը՝ Յակոբ Պետրոսեան: Տարեշրջանի ընթացքին այս կազմը վերատեսուցեան կ'ենթարկուի եւ կ'ամբողջանայ Մկրտիչ Տիշոյեանով: Այս փոփոխութիւնները կը տեղեկացուին Շրջանային Վարչութեան՝ 2 Դեկտեմբեր, 1937ի նամակով:

Մասնաճիւղի մարզական գործունէութեան առանցքը կը հանդիսանայ Փութպուրը եւ ակումբէն ներս կիրարկուող փինկփոնկը: Տարին չբոլորած, անդամներու սկզբնական թիւը կը բարձրանայ 75ի՝ ընդհանուր խանդավառութիւն ստեղծելով մասնաճիւղի շուրջ:

9 Փետրուար, 1938ին, անդամական ընդհանուր ժողովը կը լսէ վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, որմէ ի յայտ կու գայ բեղուն գործունէութեան մը իրականացումը:

Նորընտիր վարչութեան կ'անդամակցին՝ ի միջի այլոց՝ Հայկազ Աֆարեան (ատենադպիր), Վահէ Սարգիսեան եւ Մկրտիչ Գուլումճեան: Ատենապետութիւնը կրկին կը վստահուի Եղիշէ Մանուկեանին: Այս վարչութիւնը, կարճ ժամանակի մէջ, կը յաջողի լայն գործունէութիւն արձանագրել կազմակերպչական եւ մարզական գետիններու վրայ: Մինչեւ 20 Նոյեմբեր, 1938, նիւթական գործունէութեան պատկերն է. մուտք՝ 105, 948 պաղեստինեան ոսկի, ելք՝ 120, 579, սնտուկի բաց՝ 14,631 ոսկի:

1938ի վերջաւորութեան, Պաղեստինի քաղաքական ներքին պայմանները կը պարտադրեն զգոյշ գործունէութիւն: 20 Նոյեմբերի, 1938ին, կ'ընտրուի նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Յովհաննէս Պետրոսեան
 Ատենադպիր՝ Բիւզանդ Պիւպիւլեան
 Գանձապահ՝ Ստեփան Մարգարեան
 Մարզական պատասխանատու՝ Սուրէն Աւետիքեան

Խորհրդականներ՝ Շաւարշ Պալպալեան, Մկրտիչ Գուլումճեան, Խաչիկ Ճէվահիրճեան:

Տարեշրջանի ընթացքին Մկրտիչ Գուլումճեանը կը փոխարինուի Յակոբ Պետրոսեանով:

Այս վարչութիւնը կը յաջողի իրականացնել մարզական եւ սկաուտական լայն գործունէութիւն: Կիրարկուող մարզական ճիւղերն են՝ Փութպուր, պասքեթպուր, փինկփոնկ եւ ճիմնասթիք: Այս վերջին ճիւղի մարզիչն է Մ. Փոքրաչեան:

Սկաուտական շարժումը թափ կը ստանայ: Մասնաճիւղը ունի 30 գայլիկ: Խըմբապետներն են՝ Յովհաննէս Պետրոսեան եւ Յակոբ Մահսերէճեան: Սկաուտական թեքնիք դասախօսութիւններով կը պատրաստուին սկաուտական շարքերը:

Զարկ կը տրուի նաեւ ակումբի ներքին գործունէութեան: Ակումբին մէջ կը կազմակերպուի գրադարան՝ 300 հատոր գիրքերով: Յատուկ նամակներով վարչութիւնը կը դիմէ անհատներու եւ հրատարակչական հաստատութիւններու, որպէսզի աւելի ճոխացուի գրադարանի գիրքերու ցանկը: Գրադարանի կողքին, մասնաճիւղը կը ստանայ հայկական մամուլ՝ «Յուսաբեր», «Ազդակ», «Մեղու», «Հայրենիք» եւ «Հայ Բոյժ»: Ակումբի ընդարձակ եւ ներկայանալի դասաւորումները կը քաջալերեն ազգայիններն ու երիտասարդութիւնը՝ ընտրուած ժամադրավայրի մը վերածելու գայն: Նկատելի է վարչութեան խիստ կեցուածքը՝ կարգապահական տնօրինումներով:

Այս վարչութեան պարտականութիւնն էր նաեւ իրականացնել միութեան հիմնադ-

րութեան քսանամեակի տօնակատարութիւնը: Սակայն, քաղաքական պայմանները կ'արգելակեն այդ հանդիսութեան կազմակերպումը: Ծրագիրը կը մնայ իրագործելի:

19 Մարտ, 1939ին, կը կայանայ անդամական ընդհ. ժողով՝ հետեւեալ օրակարգերով.

- 1.— Օրուան դիւանի ընտրութիւն
- 2.— Նիւթական եւ բարոյական գործունէութեան տեղեկագիրներու ընթերցում
- 3.— Նիւթական կացութեան քննութիւն
- 4.— Գրադարան եւ ընթերցասրահ
- 5.— Հրապարակային թատերական ելոյթ
- 6.— Անդամատուրքեր
- 7.— Ակումբ յաճախելու հարց
- 8.— Ազգէն ուժացած պատանիներու հարց

9.— Սկսուտական:

Օրուան դիւանի անդամներն են. Նախագահ՝ Եղիշէ Մանուկեան Բարտուղար՝ Մկրտիչ Տիշոյեան: Վարչութեան գործունէութեան տեղեկագիրը կը կարդայ Բիւզանդ Պիւլպիւլեանը: Վարչութեան գործունէութեան քննութենէն ետք, ժողովը կը քուէարկէ հետեւեալ բանաձեւը. «Քաղաքական ներկայ պայմաններու տակ գործունէութիւնը չափազանց գնահատելի է»:

Վարչութեան նիւթական բացին համար, տեղւոյն վրայ եղած նուիրահաւաքով գո-

յացած գումարը կը յանձնուի վարչութեան:

Անդամական այս ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան գործունէութիւնը կ'երկարի մինչեւ 1940 թուականը: Օրէ-օր, զարգացող քաղաքական պայմանները հետըզհետէ աւելի պիտի դժուարացնէին մասնաճիւղի գործունէութեանց կարելիութիւնները:

ԵԱՖԱ

Եաֆան ծովեզերեայ քաղաք մըն է, ուր հայկական փոքր գաղութ մը կազմուած է ժամանակի ընթացքին:

1928ին, Յունաստանէն Եաֆա փոխադրուելով՝ Յովհաննէս Պերպէրեան, եաֆայաբնակ Գազանճեանի գործակցութեամբ, հիմը կը դնէ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին: Ֆուլպոլի գանազան խումբերու խաղացողներ կը միանան այս նպատակին, անդամներու թիւը հասցնելով 30ի:

Շուտով, կը ձեռնարկուի ֆուլպոլի խումբի կազմութեան եւ կը կազմակերպեն բարեկամական մրցումներ: Կը կազմակերպեն նաեւ դասախօսական ելոյթներ:

Դժբախտաբար, սկսած գործը շատ կարճ կեանք մը կ'ունենայ եւ 1930ի ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը դադրի Եաֆայի մէջ գործելէ:

ՅՈՐԴԱՆԱՆ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՅՈՐԴԱՆԱՆ

— ԱՄՄԱՆ

ԱՄՄԱՆ

Որպէս Երուսաղէմի մօտակայ եւ անոր ենթամասնաճիւղ՝ Յորդանանի մայրաքաղաք Ամմանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը հիմնուի 1937ի Նոյեմբերին սկիզբը, մասնակցութեամբ շուրջ 20 նորագիրներու:

21 Նոյեմբեր, 1937ին, կ'ընտրուի մասնաճիւղի անդրանիկ վարչութիւնը՝ մասնակցութեամբ հետեւեալ անդամներուն.

Հրաչ Սարգիսեան, Յակոբ Գույումճեան, Միհրան Գասապեան, Գէորգ Գէորգեան, Օննիկ Գէորգեան, Բիւզանդ Տէքէճեան եւ Ալեքսանդր Խըլաքեան:

Մեծ խանդավառութեամբ սկսուած այս շարժումը շատ կարճ կեանք մը պիտի ունենար, քաղաքէն վերջնականապէս մեկնումներու պատճառով: Բ. Համաշխարհային Ընդհանուր Պատերազմի նախօրեակին մասնաճիւղը դադրած էր գործելէ: Անոր վերակազմութեան մասին պիտի տեղեկանանք Բ. հատորի իր գլուխին տակ:

<p>Հ. Մ. Ը. Մ. ՀԱՅ ՄԱՐՄՆ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐ ————— ԱՄՄԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ ————— ՓՈՍՏԱՐԿՂ 179</p>		<p>HOMENETMEN ARMENIAN GENERAL UNION OF PHYSICAL CULTURE AND SCOUTISM ————— AMMAN BRANCH ————— P. O. B. 179</p>	<p>FOUNDED 1918 AT CONSTANTINOPLE</p>	<p>هومتمن الجمعية الارمنية الكبرى للالعاب الرياضية والكشافة فرع عمان ————— صندوق البريد ١٧٩</p>
---	--	---	--	---

ԻՐԱՔ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԶՈՐՐՈՐԴ

ԻՐԱՔ

— ՄՈՒՍՈՒԼ

Իրաքի մէջ հայ մարզական շարժումին մասին շատ հին ժամանակէն արձագանգներ կը լսուին: Արդարեւ, 1876ին, Պաղտատի Սբ. Թարգմանչաց Վարժարանի տնօրէնի պաշտօնին կը հրաւիրուի Միհրան Սվաճեան: Վերջինս, եկեղեցւոյ շրջափակին մէջ յատուկ մարզարան մը կը սարքէ, ուր աշակերտներ իրենց ամենօրեայ մարզական փորձերը կը կատարեն — [ԺԱ.239]:

սկառուտական բարձր որակի ծանօթութեամբ — [Դ.117]:

Հայկական որբանոցի փակումէն ետք հայ սկառուտներու գործունէութիւնը Պաղտատի մէջ կը դադրի:

ՄՈՒՍՈՒԼ

Միջազգային սկառուտութեան հիմնադրութեան առընթեր, Իրաքն ալ, որպէս անգլիական գաղթավայր, 1917էն սկսեալ ըսկառուտական շարժումը կ'որդեգրէ՝ զանազան ազգութեանց յատուկ սկառուտական խումբերով: Այս խումբերու շարքին է նաեւ հայ գաղթական պատանիներու եւ հայկական որբանոցի սաներու մասնակցութեամբ կազմուած սկառուտական խումբը: 1918ին՝ 25 հոգիներով սկսուած այս խումբի թիւը 1919ին կը բարձրանայ 43ի: Հայ սկառուտներու այս խումբը, 1919ի մրցահանդէսին Պաղտատի սկառուտական 21 խումբերուն մէջ չորրորդ դիրքը կը գրաւէ: Այս յաջողութեան իրենց բաժինը բերած են՝ ի միջի այլոց՝ Աւետիս Վարդանեան, Լեւոն Մելքոնեան եւ Հրանդ Սաչեան, իրենց

Մուսուլի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի գործունէութեան մասին՝ մեր արխիւներէն ի յայտ կու գայ, թէ 1930ական թուականներուն, Մուսուլի մէջ գործած է Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղը, Իրաքի դրացի երկիրներու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու նմանողութեամբ:

Դժբախտաբար, այդ ժամանակաշրջանի՝ Մուսուլի, Պաղտատի թէ այլ հայաշատ կեդրոններու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու գործունէութեան մասին տեղեկութիւններ կը պակսին:

Աւելի ուշ, մարզական թէ սկառուտական գործունէութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի եւ շրջակայքի մասնաճիւղերուն մէջ, ստացած է կարեւոր ծաւալ եւ ունեցած է զգալի յառաջդիմութիւն — [Խ.159]:

هو منتمان * الجمعية الارمنية للالعاب الرياضية

Հ. Մ. Ը. Մ.

ՀԱՅ ՄՍՐՄ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

և

ՀԱՅ ՍԿՍՈՒՏՆԵՐ

ՄՈՒՍՈՒԼԻ ՄՍՍԵՍՏՆԻԿ



Հիմնուած 1918

HOMENETMEN
ARMENIAN GENERAL UNION OF
PHYSICAL CULTURE
and
SCOUTISM
MOUSUL BRANCH



Founded 1918

Mousul 193

Մուսուլի մասնաճիւղի ամսակի թուղթին գլուխը

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

- ԹԱԻՐԻԶ
- ԹԵՀՐԱՆ

Պարսկահայ հնագոյն գաղութի հայաշատ կեդրոններէն՝ Նոր Զուղայի (Սպահան) մէջ, 1914էն սկսեալ, Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանի սկսուածներէն Եղիա Վէլիճանեանի ճիգերով ծնունդ առած սկսուտական շարժումը կարճ ժամանակ ետք կը դադրի գործելէ պետական արգելքներու պատճառով:

1919ին, կրկին Կալկաթայի սկսուածներէն՝ հայ վարժարաններու ուսուցիչ Յովսէփ Աբգարեանի ղեկավարութեամբ, Նոր Զուղայի մէջ կը սկսի հայ մարզական շարժում եւ յաջող գործունէութիւն կ'արձանագրէ մինչեւ 1920ական թուականներու սկիզբը՝ «Զուլֆա Պոյ Սկսուտ» անունով [Ծ/101-102.48]:

Նոյնպէս, Թաւրիզի եւ Թեհրանի մէջ հայ մարզական շարժումը 1920ական թուականներէն սկսեալ գոյութիւն ունեցած է, յատկապէս՝ օտար վարժարաններ յաճախող հայ աշակերտներու ձեռք բերած յաջող արդիւնքներով:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Պարսկաստան հաստատուած հայ քաղաքական դէմքեր նոր շունջ կը բերեն պարսկահայ գաղութին: 1920ական թուականներու վերջաւորութիւնէն սկսեալ, պարսկահայ ուսումնական եւ մշակութային նոր զարթոնքի կարգին, ի յայտ կու գայ նաեւ մարզական ուրոյն կազմակերպուածութեան կարիքը: Այս թուականներուն է, որ մարզական խումբերու միացումով կը ծրարագրուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու կազմութիւն՝ յատկապէս Հայաստանի սահմանամերձ Թաւրիզի եւ մայրաքաղաք Թեհրանի մէջ:

1931ին, կրկին կը վերսկսի Նոր Զուղայի սկսուտական շարժումը, այս անգամ Պարգեւ Մանկասարեանի ղեկավարութեամբ եւ կը ստանայ ծաւալ մինչեւ 1936 թուականին վարժարաններու պետականացումը:

Յաճախակի սկզբնաւորութիւններով եւ դադարներով իրականացած այս գործու-

նէութիւններու մասին մեր տեղեկութիւնները կը մնան համեստ: Այսուհանդերձ, զանոնք կ'արձանագրենք՝ յաջորդող հատորներու ժամանակաշրջաններուն վերաբերող հարուստ գործունէութիւններուն իբրեւ ծրնունդ:

Մեր արձանագրութիւններուն հիմք ծառայած են Հ.Մ.Ը.Մ.ականներ Սեւակ Սագինեանի եւ Արտաւազդ Հաճեանի վկայութիւնները: Անոնք վկաներ են եղած Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւններուն՝ Պարսկաստանի զանազան քաղաքներուն մէջ:

ԹԱԻՐԻԶ

1925ին, Թաւրիզի Թեմական Վարժարանի ուսուցիչներէն Արամ Ալջուճեան ըսկսուտական շարժում ստեղծելու նպատակով վարժարանի աշակերտներէն մօտ 25 պատանիներ կը պատրաստէ՝ որպէս սկսուտ աստիճանաւորներ: Այս շարժումը կը կրէ «Հայոց Կուլտուրական Միութեան Սկսուտական Կազմակերպութիւն» անունը եւ կը գործէ մինչեւ 1929 թուականը:

1929ի Հոկտեմբերին, կը հիմնուի Հ.Մ.Ը.Մ.ի Թաւրիզի մասնաճիւղը: Հիմնադիր ժողովը վեց ամսուայ ժամանակամիջոցի մը համար կ'ընտրէ վարչական կազմ մը՝ նախագահութեամբ Արամ Ալջուճեանի: Այս կազմի նախնական աշխատանքներուն կը յաջորդէ մասնաճիւղի անդամական երկրորդ ընդհանուր ժողովը, որ տեղի կ'ունենայ 1930ի գարնան: Սոյն ժողովէն ընտրուած վարչութիւնը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Խաչիկ Թովմասեան
- Քարտուղար՝ Բաբգէն Յարութիւնեան
- Գանձապահ՝ Ստեփան Թունեան
- Մարզական պատասխանատու՝ Էսպերօ Յովհաննէսեան
- Հրահանգիչ եւ պասքեթպոլի վարիչ՝ Երուանդ Յովսէփեան

Ֆուլթպուլի պատասխանատու՝ Լեւոն Բարայեան:

Վարչութեան ժողովներուն կը մասնակցի նաեւ Արամ Ալջուճեանը՝ խորհրդակցական ճայնով — [Ե.171]:

Թաւրիզի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գործունէութեանց առաջին ճիւղերը կ'ըլլան պասքեթպուլը, ֆուլթպուլը եւ աթլետիքը: Ձմեռնային եղանակին փակ սրահի մէջ մասնաճիւղի մարզիկները կիրարկած են մարմնամարզ, իսկ գարնանային օրերու առաւօտեան ժամերուն կը սկսին աթլետիք խաղերու փորձերը՝ Լիլաւայի Հայկազեան-Թամարեան Վարժարանի դաշտին վրայ, ղեկավարութեամբ Էսպերօ Յովհաննէսեանի: Միաժամանակ, ֆուլթպուլի խումբերը կը մարզուին, ղեկավարութեամբ Լեւոն Բարայեանի:

1933ին, Հ.Մ.Ը.Մ.ին կը միանան Թաւրիզի Հայ Արիներու Կազմակերպութեան սկաուտական եւ արենուշական շարքերը՝ շուրջ 400 անդամներով: Մասնաճիւղի ըսկաուտական թէ մարզական գործունէութիւնները յարատեւ յառաջդիմութեան մէջ են եւ զգալիօրէն կը տիրապետեն գաղութի ազգային կեանքի զանազան մարզերուն:

Գործունէութեան այս թափը կը շարունակուի կանոնաւորութեամբ եւ ծաւալումի մէջն տուեալներով մինչեւ 1936 թուականը, երբ պետական օրէնսդրութեան հետեւանքով, վարժարանային եւ միութենա-

կան ամէն ճեւի նախաձեռնութիւն կը սառեցուի՝ պետականացած կարգերով շարունակուելու ծրագրով:

ԹԵՀՐԱՆ

Թաւրիզի հիմնադրութեան առընթեր, Թեհրանի մէջ ալ Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնը կ'իրականացուի նոյն թուականներուն՝ նախաձեռնութեամբ Բաբկէն Եղիազարեանի:

Հայ թէ օտար վարժարաններու աշակերտութիւնը, ինչպէս նաեւ ՄԱՍԻՍ երկսեռ Մարզական Ակումբի մարզական եւ ընդհանուր զարգացման յաջողութիւնները, հիմ կը ծառայեն Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպուած աշխատանքներու նախաձեռնութիւններուն: Ֆուլթպուլի խումբի բազմամեայ յաջողութիւնները ամէն յոյս կը ներշնչեն ապագայի ծրագիրներու իրականացման: Դժբախտաբար, տնտեսական դժուարին կացութիւնը, ինչպէս նաեւ պետական անթոյլատու պայմանները շատ կը սահմանափակեն մասնաճիւղի զարգացման հեռանկարները:

Թեհրանի մէջ ալ, 1936ին, կը դադրի անկախ մարզական որեւէ շարժում, եւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները ակամայ ցրուելով կը ստիպուին իրենց գործունէութիւնը շարունակել, անջատաբար, պետական կառոյց ունեցող զանազան հաստատութիւններու մէջ:

ԵԳԻՊՏՈՍ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

ԵԳԻՊՏՈՍ

- ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻԻՆ
- ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ
- ԳԱՀԻՐԷ
- ՀԵԼԻՈՊՈԼԻՍ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻԻՆ

ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Քսաներորդ դարու սկզբնաւորութեան միջազգային մարզական զարթոնքը, Եգիպտոսի մէջ, յատկապէս Եգիպտոսի վարժարաններէն ներս, մարզանքի հանդէպ յատուկ հետաքրքրութիւն ստեղծեց: Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հայ վարժարաններն ալ մարզանքը որդեգրեցին իրենց ուսումնական ծրագիրներու շարքին եւ կարեւորութեամբ տեղ տուին անոր:

Այս իմաստով հիմնական աշխատանք տարած են Աղեքսանդրիոյ Պօղոսեան վարժարանէն՝ փրօֆէսէօր Արթին Էլմաս եւ իրեն աշակերտ եւ ապագայի գործակից՝ Ստեփան Սանճեան: Գահիրէի մէջ, Ազգ. Գալուստեան վարժարանի տնօրէնութիւնը Հինգշաբթի յետմիջօրէնները յատկացուցած է աշակերտական մարզախաղերու: Մարզական ծրագրի զարգացումի նպատակով կազմուած է Մարզասիրաց անունով ընկերութիւն մը, որ տարեկան մարզահանդէսներով, Չատկական օրերու նախօրեակին, հրապարակային աշակերտական ելոյթներ կը սարքէ — [Բ.277]:

Վարժարաններու մէջ զարգացող այս շարժումները խթան կը հանդիսանան, որպէսզի զոյգ քաղաքներուն մէջ հայ երիտասարդութիւնը հետաքրքրուի մարզանքով եւ հետամուտ ըլլայ մարզական ակումբներու կազմակերպութեան: Այսպէս, 1912ին, Աղեքսանդրիոյ մէջ կը կազմուի «Կամք» մարմնամարզական ակումբը — [Բ.279]: Իսկ Գահիրէի մէջ, 1914ին, կը կազմուի «Արարատ» մարմնամարզական ակումբը: Երկու ակումբներն ալ մարզական իրենց ծրագիրները իրագործած են աթլետիզմի, ֆութպոլի եւ պասքեթպոլի կիրարկումով: Հետագային, այս ճիւղերուն վրայ պիտի աւելնար սկաուտական հետազօտիչ խմբակցութիւններու գործունէութիւնը:

Ժամանակի ընթացքին, գլխաւոր այս

ակումբներու կողքին կամ անոնցմէ բաժնուելով՝ հետզհետէ կազմուած են Տորք ֆութպոլի միութիւնը (Աղեքսանդրիա), Ջանք հայ մարմնամարզական միութիւնը (Հելիոպոլիս), Մասիս ֆութպոլի խումբը, Հ.Յ.Դ. պատանեկան միութեան ֆութպոլի խումբը, Արածանի մարմնամարզական միութիւնը, Կայծակ մարմնամարզական միութիւնը եւ Հայ Երիտասարդաց Քրիստոնէական ընկերակցութիւնը (Գահիրէ) — [ԺԱ.83]:

1922էն սկսեալ, Եգիպտոս նոր հաստատուող հայերու մտքին մէջ կը կազմուի միացեալ զօրաւոր ակումբ մը ստեղծելու ծրագիրը:

1926ին, Արարատ մարմնամարզական ակումբի սրահին մէջ կը գումարուի ժողով մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի ծրագրով միացեալ ակումբ մը կազմելու նպատակով: Ժողովը կը ձախողի իրագործելու իր նպատակը, որը «անկարելի» կ'որակուի — [ԺԱ.249]:

Հ.Մ.Ը.Մ. անունով անջատ միութիւններ կը կազմուին Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ:

Միացման առաջին փորձի ձախողութենէն ետք, 1927ի Ապրիլին, Գահիրէի Հելիոպոլիս արուարձանին մէջ նոր նախաձեռնութեամբ կը կազմուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը եւս: Այս մասնաճիւղը հիմը պիտի դառնար Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի շրջանի կազմութեան:

Արդարեւ, նոյն տարուան Մայիսին տեղի ունեցաւ Շրջանային անդրանիկ ժողով, մասնակցութեամբ Գահիրէի Արարատին, Հելիոպոլիսոյ Հ.Մ.Ը.Մ.ին եւ Աղեքսանդրիոյ Կամքին: Այս ժողովէն ընտրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի անդրանիկ Շրջանային Վարչութիւնը: Շրջանային Վարչութեան գործը եղաւ մասնաճիւղերու ներքին գործունէութեանց համագործում, կազմակերպչական եւ մարզական գործունէութեանց զօրացում եւ Սփիւռքի Հ.Մ.Ը.Մ.ներու այլ Շրջանային Վարչութիւններու հետ կապերու հաստատում — [ԺԱ.249]:

ժամանակի ընթացքին Եգիպտոսի Շրջանային Վարչութիւնը իր նստավայրը տեղափոխած է՝ մերթ Գահիրէի եւ մերթ Աղեքսանդրիոյ մէջ հաստատուելով:

Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի Շրջանը նոյնութեամբ կ'որդեգրէ Հ.Մ.Ը.Մ.ի Պոլսոյ կեդրոնի Երազիր-Կանոնագիրը՝ որպէս հիմնական ուղեգիծ իր գործունէութեան: 27 Սեպտեմբեր, 1929ին, Շրջանային Վարչութիւնը վերոյիշեալ կանոնագրութեան կը կցէ յաւելուած մը, շրջանի կարիքներուն կամ ժամանակի պարտադրանքներուն պատշաճեցնելով յօդուածներ 4, 24, 36 եւ 62ի տրամադրութիւնները՝ առժամեայ հանգամանքով եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական ժողովին վաւերացման ենթարկելու նպատակով — [ԿԹ]:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՒԱ-Հ.Մ.Ը.Մ. ԿԱՄՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Աղեքսանդրիոյ «Կամք» մասնաճիւղը հիմնուած է 1912ի ամրան՝ «Կամք Մարմնամարզական Ակումբ» անունով:

Շաւարշ Քրիսեան, որ ամառնային արձակուրդի նպատակով այդ օրերուն Աղեքսանդրիա կը ճամբորդէր, իր ժամանման օրն իսկ ներկայ կը գտնուի տեղւոյն Պողոսեան Ազգային վարժարանի ամավերջի հանդէսին: Ան հիացումով կ'արտայայտուի հանդէսին մարզական ծրագրին եւ յաջող գործադրութեան մասին — [Բ.248]: Քրիսեանի այդ բարեգէպ ներկայութիւնը «Կամք»ի հիմնադրութեան համար վճռական պիտի ըլլար: Արդարեւ, «Կամք»ի հիմնադրութեան համար գումարուած խորհրդակցական հանդիպումին ներկայ կը գտնուին Շաւարշ Քրիսեան եւ Տօքթ. Մ. Ժամկոչեան, որոնք խօսք կ'առնեն՝ քաջալերելով նախաձեռնութիւնը: Զոյգ բանախօսները շեշտը կը դնեն մարզանքի եւ մարզական ազումքներու անհրաժեշտութեան վրայ: Խորհրդակցութենէն գործնականի անցնելով,

տեղւոյն վրայ, շուրջ 40 ներկաներ անդամ կ'արձանագրուին «Կամք»ին — [Բ.279]:

18 Օգոստոսին, «Կամք»ի կազմակերպութեամբ, Տօքթ. Մ. Ժամկոչեան մարզանքի կարեւորութեան մասին հրապարակային դասախօսութիւն մը կու տայ, մեծապէս խանդավառելով ներկաները մարզական շարժումին մասնակցութեան: Հիմնադրութեան խորհրդակցական հաւաքոյթէն ամիս մը ետք, «Կամք»ի գործօն անդամներուն թիւը կը բարձրանայ 50ի — [Բ.298]:

«Կամք»ի կազմութեան գլխաւոր կերտիչները կ'ըլլան՝ Ազգ. Պողոսեան վարժարանի մարզանքի ուսուցիչ Ստեփան Խանճեան, որ Ֆրանսայի Լիոն քաղաքի մարզական ազգեմիայէն վկայուելէ ետք հրաւիրուած էր վարժարանի մարզանքի դասերը ստանձնելու, ինչպէս նաեւ՝ Բարսեղ Օհանեան, որ նիւթապէս եւ բարոյապէս կ'օժանդակէ այս նպատակին:

«Կամք»ի գործունէութեան առանցքը կը կազմեն աթլետիզմը, պասքեթպոլը, ֆուլթպոլը եւ լողորդութիւնը:

Եգիպտոսի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանի կազմութենէն սկսեալ մասնաճիւղի գործունէութիւնը կը ներդաշնակուի քոյր մասնաճիւղերու գործունէութեան հետ:

Աղեքսանդրիոյ «Կամք»ը կ'ունենայ իր սեփական մարզադաշտը, որուն գոյութիւնը հաստատ կուտան մը պիտի հանդիսանար մասնաճիւղի գոյատեւման: Այս իրագործումներուն նիւթապէս եւ բարոյապէս օժանդակած է «Կամք»ի պատուակալ ատենապետ՝ Մանուկ Մանուկեան:

1926ին, մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Թոմաս Բողիկեան: 1926, Նոյեմբեր 28ին, Աղեքսանդրիոյ ֆուլթպոլի խումբը յաղթանակ մը կը տանի Գահիրէի Արարատին դէմ՝ 5-1 արդիւնքով, ինչ որ իր դիրքը կ'ամրապնդէ եգիպտահայ մարզական բեմին վրայ:

Պասքեթպոլի ճիւղը, իր կարգին, քաջալերական արդիւնքներ կ'արձանագրէ՝ 1927ի եղանակին յաղթանակներ ապահովելով Աղեքսանդրիոյ բոլոր կարեւոր խումբերուն դէմ: 10 Դեկտեմբեր, 1927ին, խումբը պարտութեան կը մատնէ նաեւ Գահիրէի ախոյեան՝ ամերիկեան համալսարանի խումբը: Պասքեթպոլի լաւագոյն մարզիկներէն է եղած Ն. Եղուշեան:

Միութեան՝ հետզհետէ զարգացող գործունէութիւնը իր մարզական խումբերու եւ մարզիկներու մակարդակը կը բարձրացնէ: «Կամք»ի խումբերը կը մասնակցին եգիպտական եւ միջազգային խումբերու դէմ մրցումներու՝ ապահովելով պատուաբեր արդիւնքներ: Յիշատակութեան արժանի են, 9 Սեպտեմբեր, 1928ին, Աղեքսանդրիոյ «Սթատ»ի մէջ կայացած միջազգային աթլետիք մրցումներուն առթիւ «Կամք»ի աթլետներուն ձեռք բերած թեքնիք արդիւնքները:

17 Մայիս, 1930ին, նոյն մարզադաշտին վրայ, Եգիպտոսի թագաւորին ներկայութեամբ եւ հովանաւորութեամբ տեղի կ'ունենան միջազգային աթլետիք մրցումներ: Այս մրցումներուն «Կամք»ի մարզիկներէն Գէորգ Տէր Սիմոնեան՝ 12,78 մեթր արձակումով Եգիպտոսի գունտ նետելու ախոյեան կը հանդիսանայ:

Ժամանակի ընթացքին «Կամք»ի գործունէութեան շուրջ կը բոլորուին շուրջ 120 գործօն եւ համակիր անդամներ, զօրացնելով միութեան բոլոր նախաձեռնութիւնները — [ԺԱ.249]:

Սկաուտական գործունէութիւն

Աղեքսանդրիոյ մէջ ալ, հետեւողութեամբ Գահիրէի, 1915ին կը հիմնուի հայ հետազօտիչներու շարժումը: Այս շարժման հետազօտիչներու շարժումը: Այս շարժման մղիչ ուժերը հանդիսացան Բարսեղ Օհանեան եւ Կարօ Աշըքեան: Հետազօտիչներու

շարքերը շատ արագօրէն կը խտանան, պահ մը հասնելով 130 թիւին: Խումբի առաջին խմբապետն է Ստեփան Խանճեան: Գործունէութեան սկզբնաւորութենէն եռամսեայ մը ետք, խումբը կ'ունենայ հրապարակային իր առաջին ելոյթը: Մեծ յաջողութիւն ունեցող այս ելոյթէն ետք, Ստեփան Խանճեան կը հրաժարի իր խմբապետութեան պաշտօնէն եւ կը փոխարինուի Գ. Զօպանեանով:

Գ. Զօպանեան խմբապետութեան պաշտօնը ստանձնելէ ետք կը լծուի խումբի կազմակերպութեան հիմնական աշխատանքին, կազմելով աստիճանաւորական ցանցը՝ հետեւեալ ձեւով.

Ընդհ. խմբապետ՝ Գ. Զօպանեան

Փոխ-խմբապետ՝ Մ. Թապագեան

Կարմիր խաչի խմբապետ՝ Յ. Ամատունի

Բաժիններու խմբապետներ՝ Ս. Սիրաքեան, Լ. Արփիարեան, Տ. Սեֆէրեան, Ս. Շալճեան:

Սակայն, հետազօտիչներու թուական աճը նոյն թափով չի զարգանար. յաճախակի մեկնումներն ու նորեկներու ժամանումը անհաստատ կացութեան կը մատնեն խումբը: Այսուհանդերձ, մնացեալներու թեքնիք զարգացումը առիթ կ'ըլլայ որ Աղեքսանդրիոյ հայ հետազօտիչները արժանանան անգլիացի եւ աւստրալիացի խմբապետներու գնահատանքին: Անոնք, 15 օրեայ հիւանդանոցային ծառայութիւն կը մատուցանեն անգլիական 15րդ կեդրոնական հիւանդանոցէն ներս, արժանանալով բժշկապետի շնորհակալական գրութեան — [Գ.172]:

Հակառակ բոլոր դժուարութիւններուն, հայ հետազօտիչներու շարժումը կը մնայ կանգուն՝ մերթ ընդ մերթ հրապարակային յաջող ելոյթներ ներկայացնելով:

ԳԱՀԻՐԷ

Կազմակերպչական եւ մարզական գործունեութիւն

Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէի Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղը հիմնուած է 1914-ին՝ Արարատ Մարմնամարզական Ակումբ անունով:

«Արարատ»ի հիմնադրութենէն առաջ, Գահիրէի Ազգ. Գալուստեան վարժարանի սաներու «Մարզասիրաց Ընկերութիւնը» աշակերտութեան մէջ մարզական խաղերու եւ մրցումներու հանդէպ հետաքրքրութեան դուռը պիտի բանար: Վարժարանի տնօրէն Մինաս Մալեան եւ մարզանքի ուսուցիչ Հայկ Նալճեան նախաձեռնողներն ու քաջալերողները եղան Մարզասիրացի յաջողութիւններուն: Վարժարանային այս խումբաւորումներէն դուրս, մինչեւ 1912 թուականը, հայ երիտասարդութիւնը կը մարզըւէր Գահիրէի օտար ակումբներու մէջ: 1912ին, կը կազմուին «Հայկական Փութպոլի Տորք Քլիւպ» ու «Հայկական Մարզական Ակումբ» անունով խմբաւորումներ, չափով մը հայկական մթնոլորտի մէջ փոխադրելով մարզական շարժումը: Սակայն, այս խումբաւորումներու գործունէութիւնը անբաւարար էր ամբողջութեամբ գոհացնելու Գահիրէի հայ երիտասարդութեան մարզական կարիքները, յատկապէս՝ իրենց յատուկ արդիական մարզարաններու չգոյութեան պատճառով: Այս իմաստով, Ստեփան Ամիրայեան «Մարմնամարզ»ի սիւնակներով հայկական մարմնամարզարանի մը կազմակերպութեան կարեւորութիւնը կը շեշտէ, զգուշացնելով հայ երիտասարդութիւնը օտար ակումբներու մէջ մարզուելու հետեւանքներէն — [Բ. 374]:

Այս մտահոգութիւններէն մղուած եւ մարզական ուրոյն գործունէութեան նպատակով, 1914ին, տասնեակ մը երիտասարդ-

ներ, Ազգ. Գալուստեան վարժարանի պարտէզը որպէս հաւաքավայր ունենալով, հիմը կը դնեն «Արարատ Հայ Մարմնամարզական Ակումբ»ին, նիւթական շատ սեղմ պայմաններու մէջ: Հիմնադիր անդամներու յառաջդիմութեան գլխաւոր դրամագլուխը, սակայն, իրենց զօրաւոր կամքը պիտի հանդիսանար, որպէսզի նախաձեռնութիւնը յաջողութեամբ պսակուէր: Արդարեւ, մի քանի հրապարակային հանդէսներու եկամուտով ակումբը ունեցաւ իր մարզական գոյքերը, որոնք ծառայեցին՝ շարժումին շուրջ բոլորուած՝ աւելի քան 50 անդամներուն:

Առաջին վարչութիւններու գործը եղաւ նաեւ յատուկ հողաչերտ մը վարձել, որուն վրայ անդամներու անվերապահ աշխատանքով ամայի այդ դաշտը կը վերածուի մարզիկներու կարիքներուն գոհացում տուող մարզարանի՝ իր թենիսի դաշտով, հանդերձարանով, ելեկտրական սարքաւորումով եւ կահաւորումով: Այս իրագործումներուն համար յաջորդական վարչութիւնները կը յատկացնեն շուրջ 500 եգիպտական ոսկի:

Հաստատ այս յաջողութիւնները Արարատի շուրջ կը հաւաքեն նաեւ համակիրներու կարեւոր թիւ մը, որ նիւթական օժանդակութիւններով կը մասնակցի միութեան գործունէութեան: 1920ին, գործօն եւ համակիր այս անդամներու թիւը կը հասնի 130-ի:

Բացի Կիրակի օրերէն, երբ երկսեռ մարզիկներ ամբողջ օրը կը գրաւեն թենիսի դաշտը՝ լիովին օգտագործելու համար անոր ընծայած դիւրութիւնները, շաբթուան կարգ մը գիշերները եւս կը ծառայեն անդամներու մարզական փորձերուն: Այս փորձերու արդիւնքով Արարատ կը յաջողի տարեկան քանի մը ելոյթներ ունենալ՝ մրցումներ կազմակերպելով իր անդամներուն միջեւ: Մարզական յայտագիրներուն մաս կը կազմեն, բացի թենիսէն՝ չափական եւ այլ մարզանքներ, աթլետիզմի կարգ մը մրցումներ, ինչպէս նաեւ Փութպոլ: Ֆութ-



Գանհիրէի Արարատի ֆութպոլի առաջին կազմը:



Եգիպտոսի երկար վազքերու ախոյեան Անտոն Յովսէփեան



Գահիրէի «Արարատ»ի վարչական կազմը 1934-ին, ձախէն աջ նստած՝ Բարգէն Քէհեայեան, Գրիգոր Չաքրթեան, Ստեփան Ամիրայեան, Սարգիս Միքայէլեան Ուոքի՝ Գարեգին Ծամլեան, Թորոս Խաչատուրեան, Վարդան Գազանճեան, Ա. Պէրպէրեան, Փայլակ Ծահրոզեան

պոլի խումբի զարգացումը, սակայն, կը մնայ սահմանափակ, յատուկ դաշտի մը չզոյւթեան պատճառով:

Աթլետիզմի բաժնին մէջ բացառիկ յաջողութիւններ կ'արձանագրէ մարաթոն վազքի մասնագէտ Անտոն Յովսէփեան, որ երկար տարիներ այս ճիւղի Եգիպտոսի ախոյեանութեան կը տիրանայ: Յովսէփեանի կողքին, աթլետիզմի ճիւղի վաստակաւոր մարզիկներէն յիշատակութեան արժանի են Թումիկ Սետէֆճեան եւ իր եղբայրը՝ Սիմոն, որոնց ձեռք բերած բազմաթիւ յաղթանակները աթլետիզմի ծանօթացման դուռը կը բանան Արարատի անդամներուն առջեւ, միաժամանակ սատարելով մարզական ոգիի տարածման՝ աթլետներու միջեւ — [Գ.181]:

Հրապարակային ելոյթներու շարքին յատուկ յիշատակութեան արժանի է 1916ին, Heliopolis Stadium-ի մէջ Արարատի մարզիկներու կազմակերպած տարեկան հանդէսը՝ ղեկավարութեամբ մարզանքի ուսուցիչ Ստեփան Խանճեանի — [Գ.180]:

Առաջին տարիներու յաջողութիւններու կերտիչներէն կարելի է յիշել՝ Արարատի պատուոյ նախագահ եւ բարերար անդամ Յարութիւն Ամիրայեանը, ինչպէս նաեւ՝ Գրիգոր Չաքրճեան, Բարգէն Քէհեայեան, Սարգիս Միքայէլեան, Թումիկ եւ Սիմոն Սետէֆճեան եղբայրներ, Յակոբ Սեմերճեան, Ստեփան Ամիրայեան, Ստեփան Խանճեան, Ծամլեան եղբայրներ եւ բազմաթիւ ուրիշներ, որոնք, հաւատքի ու զոհողութեան անսահման նուիրումով,

վերջնականապէս հաստատ հիմերու վրայ կը դնեն Արարատ մարմնամարզական ակումբը:

1934-ին, անդամական ընդհանուր ժողովի կողմէ ընտրուած վարչութեան մաս կը կազմեն՝ Ստեփան Ամիրայեանի ատենապետութեամբ՝ Բարգէն Քեհեայեան, Գրիգոր Զաքրճեան, Սարգիս Միքայէլեան, Գարեգին Շամլեան, Թորոս Սաչատուրեան, Վարդան Գազանճեան, Փայլակ Շահրոզեան եւ Ա. Պերպէրեան:

Գահիրէի Արարատի տարեկան մարզահանդէսներու աւանդութիւնը մեծապէս կը քաջալերուի հայ թէօտար, տեղացի թէ անգլիական գաղութի պաշտօնական անձնաւորութիւններու կողմէ: Մասնաճիւղի մարզական խումբերը կը մասնակցին նաեւ յաջորդական մարզադաշտերու բացման հանդիսութիւններուն: Ազգային Գալուստեան վարժարանի դաշտէն բացի՝ մասնաճիւղը ելոյթներ կ'ունենայ Տաուավինի մարզարանին մէջ՝ 1918ին, Շուպրայի Թերա էլ Պուլաքիէի մարզարանին մէջ՝ 1926ին: Մասնաճիւղի մարզիկները կը մասնակցին գանազան մարզադաշտերու բացման հանդիսութեանց. Աղեքսանդրիոյ Սթատի հանդիսութիւն՝ 1929ին, Գահիրէի Կարապետեան դաշտի բացման հանդիսութիւն՝ 1930ին, Հելիոպոլսոյ սեփական դաշտի բացման հանդիսութիւն՝ 1936ին:

Կուսամարտի ճիւղին մէջ Արարատի մարզիկները բացառիկ յաջողութիւններ կ'արձանագրեն, յաղթական ելոյթներով խանդավառելով իրենց համակիրները: Այս ճիւղի մարզիկներէն կարելի է յիշել՝ Հայկ Ասատուրեան, Թորոս Սաչատուրեան, Լեւոն Գարաճեան, Տիգրան Յովսէփեան, Արշակ Տէրմէնճեան, որոնցմէ ոմանք՝ իրենց ծանրութեան՝ Եգիպտոսի ախոյեանութեան տիրացած են:

Ըմբշամարտի ճիւղի ռահվիրան կը հանդիսանայ միութեան հիմնադիրներէն Յա-

կոբ Սեմէրճեան՝ երկար տարիներու իր ճիւղի մարզիչ եւ ախոյեան — [ԼԴ]:

Ֆուլպոլը, հիմնադրութեան օրէն սկսեալ, կարեւոր ճիւղը կը կազմէ մասնաճիւղի մարզական գործունէութեան իր ամենածաւալուն գործունէութիւնը ունենալով 1927ին, գանազան դասակարգի բազմաթիւ խումբերով: Սակայն, եգիպտական ֆուլպոլի անհամեմատ յառաջդիմութեան դիմաց՝ Արարատի ֆուլպոլի ճիւղը հետզհետէ կը տկարանայ, ի վերջոյ առժամապէս դադրելու համար 1938ին:

Հեծելարչաւի ճիւղը, թուականօրէն նըւազ տարածուն ըլլալով հանդերձ, աւելի արդիւնաւէտ պիտի ըլլար: Այս ճիւղի ռահվիրաներէն կը հանդիսանան՝ Արթին Յակոբեան, Յարութիւն Օհանեան, Կարպիս Օհանեան, որոնց կը հետեւին տարուէ տարի յառաջդիմող հեծելանորդներ՝ ապահովելով միջազգային մրցումներու մէջ առաջնակարգ դիրքեր եւ Եգիպտոսի ախոյեանութիւններ: Սկզբնական օրերու յաջողութեան նպաստած է Աղեքսանդրիա-Գահիրէ՝ 235 քմ. տարածութեան վրայ կազմակերպուած մրցումը, ուր Անտոն Յովսէփեան, իր եղբայրը՝ Լեւոն եւ Կարապետ Օհանեան յաջորդաբար առաջին երեք դիրքերը կը գրաւեն:

Այս յաջողութիւններու կերտիչներէն կ'ըլլայ Յակոբ Ղազարեան, որ 1930ական թուականներուն՝ տարիներով կը մնայ Եգիպտոսի անպարտելի ախոյեանը, տիրանալով բազմաթիւ բաժակներու եւ հպարտանքի առիթներ ստեղծելով Արարատի վարիչներուն եւ հայ համակիրներու բազմութեան:

Թենիսի ճիւղը Արարատի մարզիկներուն կողմէ կիրարկուած է սկզբնական շրջաններէն սկսեալ: Սակայն, այս ճիւղը արդիւնաւէտ վիճակի կը հասնի ժամանակի ընթացքին:

Երկու սեռի մարզիկներ, ամենօրեայ կանոնաւոր փորձերու հետեւելով, թենիսի

խումբերը հասցուցած են որոշ մակարդակի: Բարեկամական բազմաթիւ ելոյթներով, անոնք հանդիպումներ ունեցած են եգիպտացի, անգլիացի եւ հայ խումբերու մարզիկներուն դէմ՝ ապահովելով պատուաբեր արդիւնքներ:

Գահիրէի Արարատի կիրարկած մարզական ճիւղերու նորագոյնը կ'ըլլայ պասքեթպոլը: 1930ական թուականներէն սկըսեալ, մասնաճիւղի տղոց եւ աղջկանց պասքեթպոլի խումբերը խօսիլ կու տան իրենց մասին:

Միջ-ակումբային եւ միջ-մասնաճիւղային բարեկամական կամ մրցաշարքերու խաղերուն մասնակցութեամբ, ժամանակի ընթացքին, պասքեթպոլը պիտի դառնար Արարատի մարզական գլխաւոր ճիւղը՝ փայլուն արդիւնքներու արձանագրութեամբ: Այս իմաստով, իր կարեւոր նպաստը կը բերէ պասքեթպոլի սեփական դաշտի ապահովումը:

Սկաուտական գործունէութիւն

Գահիրէի մէջ հայ սկաուտական շարժումը ծնունդ առած է 1913-ին՝ «Հայ Հետազօտիչներու Ընկերութիւն» անուան տակ: Միջազգային արագ զարգացում ունեցող սկաուտական շարժման նման, հայ հետազօտիչներու թիւը տարիներու ընթացքին կը հասնի մինչեւ 140-ի: Ընկերութեան գործունէութիւնը կը բաժնուի զանազան ենթաբաժանումներու՝ դրօշախօսներ, կարմիր խաչ, ռահվիրաներ, հեծելանաւորներ, նուագախումբ եւ նորեկներ — [Գ. 170]:

Հայ հետազօտիչներու ընկերակցութիւնը, իր հիմնադրութենէն մինչեւ 1930-ական թուականներու կէսերը, որպէս Արարատի Արիներ կը գործէ վարչութեան հովանիին տակ: 1930ին, Արարատի գայլիկները կը հրատարակեն «Գայլիկ» խմորատիպը: Այդ թուականներուն, սկաուտական շարժումը

կազմակերպչական իմաստով կը կապուի Փարիզի Հայ Արիներու կազմակերպութեան, մնալով հանդերձ Արարատի հաւաքավայրէն ներս՝ որպէս նստավայր:

ՀԵԼԻՈՊՈԼԻՍ

Եգիպտոսի մէջ, Գահիրէի արուարձան՝ Հելիոպոլսոյ մասնաճիւղը հիմնուած է 1927ի Ապրիլին: Այս հիմնադրութիւնը կը զուգահեռի Եգիպտոսի մասնաճիւղերու միացումով՝ Շրջանային կառոյցի կազմութեան եւ Շրջանային անդրանիկ Վարչութեան ընտրութեան:

Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ի հաստատ յաջողութեան ազդակ կը հանդիսանայ իր սեփական մարզադաշտի ապահովումը: Արդարեւ, ի գին գերմարդկային զոհողութիւններու, մասնաճիւղի հիմնադիր անդամները կը յաջողին իրականացնել այս երազը, հետըզհետէ հարթելով եւ բարեզարդելով մարզադաշտը, իր յարակից մասերով՝ հանդերձարան, թրիպիւն, հաւաքավայր սրահ եւլն.:

Մասնաճիւղի գործունէութեան առանցքը կազմած են, գլխաւորաբար՝ աթլետիկամը, թենիսը եւ պասքեթպոլը:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ




Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի շրջանային կազմակերպումը նոր թափով կը զարգացնէ միջ-մասնաճիւղային մարզական հանդիպումներն ու հրապարակային ելոյթները: Կիրակի, 16 Սեպտեմբեր, 1929ին, տեղի կ'ունենայ եգիպտահայ առաջին մարզահանդէսը՝ մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Հելիոպոլսոյ եւ Գահիրէի մասնաճիւղերուն եւ նախագահութեամբ Ազգ. վարժարանի տնօրէն Գարեգին Տիւրկէրեանի: Մարզահանդէսի բացման տողանցքէն ետք, օրուան յայտագրին մաս կը կազմեն.

Աթլեթիք մրցումներ՝ 100 մ., 400 մ.,
800 մ. եւ 1500 մ. վազքեր
Փոքրերու 50 եւ 80 մ. վազքեր
Գունդի եւ սկաւառակի արձակումներ
Բարձրութեան եւ երկայնքի ոստումներ
Մարզախաղեր՝ պարկարշաւ, անակնկալ
վազք, խոչընդոտաւոր վազք, կալանաւոր
վազք, հագուստներու փոթորիկ եւ պարա-
նաձգութիւն:

Դատական մարմինին կը մասնակցին՝
Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Հայկ Ճիզ-
մէճեանի կողքին՝ Տօքթ. Արոյեան, Սարգիս
Պօղիկեան, Յակոբ Գալէմքիարեան, Վահէ
Շահրիման, Արարատ Քրիսեան, Արմենակ
Շահինեան, Նորայր Կեվրէկեան, Սարաֆ-
եան եւ Յարութ Մարգարեան — [Ե.64]
1930ի Սեպտեմբեր 28ին, Գահիրէի եւ

Հելիոպոլսոյ մասնաճիւղերը կը կազմա-
կերպեն իրենց տարեկան Գ. մարզահան-
դէսը, Հելիոպոլսոյ մասնաճիւղի սեփական
դաշտին վրայ: Օրուան նախագահութիւնը
կը ստանձնէ, կրկին, Ազգ. վարժարանի
տնօրէն Գարեգին Տիւրկէրեանը: Խաղերու
դատական մարմինն անդամ կը նշանակ-
ուին՝ Տօքթ. Արոյեան, Հրաչեայ Գալֆայ-
եան, Հայկ Ճիզմէճեան, Յարութիւն Մար-
գարեան, Տիգրան Մերճանեան, Արմենակ
Շահինեան, Վահէ Շահրիման, Սիմոն Սէ-
տէֆճեան եւ Արարատ Քրիսեան:

Տարեկան այս մրցահանդէսին, որու
նախորդներուն մասնակցած էին նաեւ փոք-
րերու դասակարգը, ելոյթ կ'ունենայ Հայկ
Ճիզմէճեան՝ քաջալերական խօսքերով շը-
նորհաւորելով կազմակերպիչները, մաս-
նակցողները եւ ներկաները — [Ե. 191]:



1. Արարատի մարզիկներու խումբը՝ 1916: 2. Մարզահանդես Տաուսի մարզարան՝ 1918: 3. Մարզահանդես թերա Պուլաքի մարզարան, 1926: 4. Կուխամարտի ակտյեաններ՝ Լեւոն Գարանեան, Տիգրան Յովսէփեան, Արշակ Տէյիրմէնեան: 5. Եգիպտոսի ակտյեան հեծելանորդ Յակոբ Ղազարեան: 6. Արարատի պասքեթպոլի աղջկանց անդրանիկ կազմը, 1936: 7. Արարատի տղոց պասքեթպոլի խումբը, 1938: 8. Արարատի ֆութպոլի խումբը՝ 1917:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՕԹԵՐՈՐԴ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՏԱՐԱԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

- ՎՐԱՍՏԱՆ — ԹԻՖԼԻՍ
- ԻՆՏՈՆԵԶԻԱ — ՍՈՒՐԱՊԱՅԱ
- ԶՈՒԻՑԵՐԻԱ — ԺԸՆԵԻ
- ԻՏԱԼԻԱ — ՎԵՆԵՏԻԿ
- ՀՆԴԿԱՆՏԱՆ — ԿԱԼԿԱԹԱ

Հ.Մ.Ը.Մ.Ի՝ Պոլսոյ կեդրոնէն մեկնող եւ աշխարհի չորս ծագերը տարածուող մասնաճիւղերու գործունէութեան առընթեր, գտնուած են ժամանակակից մարզական շարժումներ՝ գանազան երկիրներու մէջ, ուր հայ օճախներ գտնուած են, գուցէ կարճ ժամանակաշրջանի մը համար: Այդ գաղթօճախները, սակայն, իրենց սկառուտական կամ մարզական գործունէութեամբ՝ հայ ժողովուրդը ու անոր առաքինութիւնները ծանօթացնող կարեւոր դեր խաղացած են եւ ազգային հպարտառիթ իրականացումներ նշող էջեր արձանագրած են լոկ:

Այս կարգի շարժումներ գտնուած են՝ Վրաստանի Թիֆլիս, Չուրիցերիոյ Ժընեւ, Իտալիոյ Վենետիկ եւ Ինտոնեզիոյ Սուրապայա քաղաքներու հայ գաղութներէն ներս: Այլ վայրեր, հայ մարզիկներ օտար աղումներու մէջ փայլուն յաղթանակներ ապահոված են, ինչպէս՝ Հնդկաստանի Կալկաթա քաղաքին մէջ:

Հետեւեալ էջերով կուտանք Հ.Մ.Ը.Մ.Ի տարածման ժամանակակից այդ հայ մարզական եւ սկառուտական շարժումներու մասին ամփոփ պատկեր մը:

ՎՐԱՍՏԱՆ-ԹԻՖԼԻՍ

1920ի Յուլիսին, Ս. Մատոյեանի, Ռ. Չաւախեանի եւ անոնց ընկերներու նախաձեռնութեամբ, Թիֆլիսի Յովնանեան դպրոցին մէջ հիմը կը դրուի «Վահագն» սկառուտական կազմակերպութեան: Այս կազմակերպութեան կ'անդամակցին Թիֆլիսի մէջ ցիրուցան գործող բոլոր հայ սկառուտական խմբաւորումները:

«Վահագն»ի հաւատոյ հանգանակը կը դառնան գուտ սկառուտական սկզբունքները, ինչպէս որ բնորոշուած է հիմնադիր Պէյտըն Փաուրլի կողմէ:

Հակառակ բոլոր դժուարութիւններուն եւ նիւթական շատ նեղ պայմաններուն,

«Վահագն»ի դեկավարութիւնը գործնական միջոցներ, արշաւներ եւ բանակումներ կիրարկելով կը յաջողի հետաքրքրութիւն ստեղծել իր շարժումին շուրջ: Կարճ ժամանակի ընթացքին «Վահագն»ի սկառուտներու ընդհանուր թիւը կը հասնի 150ի:

Սկառուտներու ծնողները, որոնք հաւատքով իրենց զաւակները կը յանձնեն «Վահագն»ի խնամքին, շուտով կ'անդրադառնան անոնց ձեռք բերած յառաջդիմութիւններուն: Արդարեւ, գործնականօրէն ճկուն, ճարպիկ, աշխոյժ, չարքաշ ու քաջ սերունդի մը խոստմնալից ընթացքը աւելի եւս կը խորացնէ ծնողներու հաւատքը դէպի շարժումը: «Վահագն»ի հիմնադրութեան հետ կը կազմուի նաեւ ծնողական խորհուրդը, որուն պարտականութիւնը կ'ըլլայ տընտեսապէս օգնել գործի յաջողութեան:

Եռամսեայ գործունէութենէն ետք տեղի կ'ունենայ «Վահագն»ի սկառուտներու երդման արարողութիւնը:

Թիֆլիսի հայ սկառուտական շարժումը, այս ձեւով, վերջնականապէս կը դրուի իր հունին մէջ:

Ուումբի աշխատանքներուն մաս կը կազմէ՝ Բեհբութեան փողոցի վրայ՝ Գայեանեան ապագայ դպրոցի հողամասի յարդարումը: Այս խաղաղայրը «Վահագն»ի սկառուտներուն գործունէութեան որպէս պաշտօնական հաւաքավայր կը ծառայէ: Ուղավայրին մօտ կը նախատեսուի աւազանի մը կառուցումը: Նաեւ սենեակ մը՝ ուր գործիքներ զետեղելու կարելիութիւնը պիտի օգտագործուի:

«Վահագն»ի գործունէութիւնը, դժբախտաբար, շատ սահմանափակ պիտի ըլլար՝ 1920ի վերջաւորութեան Վրաստանի խորհրդայնացման պատճառով:

ԻՆՏՈՆԵԶԻԱ — ՍՈՒՐԱՊԱՅԱ

23 Յուլիս, 1922ին, հոլանտական գաղթավայր՝ Ինտոնեզիոյ Ճավա կղզիի Սու-

րապայա քաղաքին մէջ, 24 մարգասէրներու մասնակցութեամբ կը հիմնուի Հայ Մարգական Ակումբը: Հիմնադրութեան այս ժողովին կը նախագահէ Սարգիս Յ. Էտֆարեան:

Մարգական այս շարժումին շուրջ կը բոլորուի գաղութի համայն հայութիւնը:

Շուտով, անդամներու թիւը կը բարձրանայ 73ի: Մարգական այս երկսեռ միութեան անդրանիկ վարչութեան ատենապետն է Ոսկան Ոսկանեան: Հայկական ակումբի այս արագ կազմակերպումը եւ մարգական խաղերու մշակումով հրապարակ գալը ուշագրաւ կը դառնայ տեղացի եւ օտար պաշտօնական անձնաւորութիւններուն: Մամուլը գովեստով կ'արտայայտուի այս գեղեցիկ նախաձեռնութեան եւ անոր յաջողութեան մասին — [ԻԱ/4.6]:

Երկամսեայ գործունէութեան աւարտին միութիւնը կը հրատարակէ 28 էջոց պատկերազարդ գրքոյկ մը, ուր մանրամասն կը տեղեկագրուին հիմնադրութենէն ի վեր միութեան մարգական գործունէութիւնը:

1925-26 տարեշրջանի վարչութեան կազմը հետեւեալ պատկերը կը ներկայացընէ.

Նախագահ՝ Մկրտիչ Տէր Յակոբեան
Փոխ նախագահ՝ Գառնիկ Յ. Յորդանեան

Գանձապահ՝ Գրիգոր Խ. Առաքելեան
Բարտուղար՝ Հ.Կ. Դաւիթեան
Խմբապետ՝ Արա Յ. Սարգսեան

Գործադիր մարմին՝ Յ.Բ. Գալուստեան եւ Մկրտիչ Ալավերտեան:

1925ին, միութեան ռըկպիի խումբը իր առաջին մրցումը կ'ունենայ հոլանտացիներու խումբին դէմ:

Իր գործունէութիւնը ընդարձակելու նպատակով՝ միութիւնը կը ծրագրէ Սուրապայայի կեդրոնական թաղին մէջ գնել 67.000 քառակուսի մեթր տարածութեամբ հողամաս մը — [Ի/7.29]:

Վերոյիշեալ տեղեկութիւնները, գաղութի քահանայ Տէր Յովակիմ Բարսեղեանի կողմէ կը հաղորդուի Պուլկարիոյ եւ Ռումանիոյ շրջաններու օրկան՝ «Հ.Մ.Ը.Մ.» պարբերականին:

ԶՈՒԻՅԵՐԻԱ-ԺՂՆԵԻ

1922ին, ժընեւի մօտակայ Պընեէն աւանին մէջ կը փոխադրուի հայոց բարեկամ՝ զուիցերիացիներու հովանաւորած «Հայ Դպրոց»ի նախակրթարանի բաժինը, որուն երկրորդական բաժինը՝ «Հայ Աշակերտներու Տուն»ը հաստատուած էր ժընեւի Շամբել թաղամասին մէջ:

Հոս էր, որ զուիցերիահայ մարգական եւ սկաուտական շարժումը սկիզբ մը կ'ունենայ. նախ՝ տիկին Ֆրանքլնի կողմէ կազմակերպուած գայլիկական խմբակով եւ աւելի ուշ՝ աւելի մեծ աշակերտներով կազմուած սկաուտական խումբով: Սկաուտական այս խումբի խմբապետութիւնը վարեց վարժարանի շրջանաւարտներէն Ազատ Սաֆրագեան:

1925ին, այս հաստատութեան կողքին, Չուիցերիոյ հայերը կազմեցին «Մաքուր Ապրինք» նշանաբանով՝ «Հայ Առողջապահիկ Մարզիկներու Միութիւն» մը, Գէորգ Սէմէրճեանի նախաձեռնութեամբ — [ԺԱ. 183]: Միութեան մարզիկները կիրարկած են անհատական մարզանքներ՝ ֆիզիքական պատրաստութեան նպատակով, եւ կազմակերպած են տարեկան ողիմպիական խաղեր՝ Աշակերտական Տան պարտէզին մէջ: Այս միութիւնը ունեցած է նաեւ ֆութպոլի խումբ մը՝ առանց պաշտօնական ելոյթներու:

1927ի Փետրուարին, տեղի կ'ունենան զուիցերիահայ առաջին ողիմպիական խաղերը՝ երկու կիրակիներու վրայ բաժնուած: Առաջին կիրակին՝ վազքերու մրցումները տեղի կ'ունենան Պուա Տը Մօնտի մարզարանի վազքողիներուն վրան: Յա-

ըորդ Կիրակին, պաշտօնական անձնաւորութիւններու ներկայութեան, նախ՝ տեղի կ'ունենայ ընդհանուր տողանցք, ապա՝ բուրգ մը, երկայնք եւ բարձրութիւն ցատկել, ձողով բարձրութիւն, գունտ նետել եւ սկաւառակ արձակել: Օրուան ակոյեան հանդիսացաւ Գրիգոր Յարութիւնեան: Համբաւաւոր մարզիկ Պ. Պոեշպիւլի հսկողութեամբ կատարուած այս ողիմպիական խաղերու յաղթանակները ստացան կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն ժապաւէններ՝ վարժարանի տնօրէնի ձեռամբ: Հանդիսութեանց կազմակերպութեան եւ յաջող ելոյթին պատիւը կ'երթայ միութեան հիմնադիր Գէորգ Սեմէրճեանին:

Հայ Առողջապահիկ Մարզիկներու Միութեան հետագայ գործունէութեանց մասին մանրամասնութիւնները կը պակսին, սակայն հաստատ է, որ գուցեք իր հայ գաղութը քաջալերական կեցուածք ունեցած է այս շարժումին յաջողութեան նկատմամբ — [ԻԳ.7]:

ԻՏԱԼԻԱ-ՎԵՆԵՏԻԿ

Մարզական իւրայատուկ կազմակերպութիւններու բացակայութեան՝ իտալահայ գաղութի մարզական գործունէութիւնը կ'ամփոփուի Վենետիկի Մուրատ Ռաֆայէլեան վարժարանի պարբերական ելոյթներով՝ պատանիներու մարզական պետական ընկերակցութեան կազմակերպած միջ-վարժարանային մրցումներու ծիրին մէջ: 1938ի Մայիս 16-17ին, տեղի կ'ունենայ այս մրցահանդէսներու վերջին ելոյթներէն մին, Վենետիկի քաղաքապետարանի դաշտին վրայ, մասնակցութեամբ քաղաքի զանազան դասի վարժարաններուն: Իւրաքանչիւր վարժարան կը ներկայանար 18 հոգինոց՝ տարբեր տարիքներու բազմաթիւ խումբերու, հաւաքական եւ անհատական ելոյթներով: Մուրատ Ռաֆայէլեան վարժարանը կը յաջողի միջնակարգ վարժարաններու

շարքին այս մրցահանդէսի առաջնութիւնը ապահովել՝ տիրանալով ոսկիէ շքանշանին:

Վարժարանը մշակած է նաեւ պասքեթպոլ եւ թիավարութիւն:

Իտալահայ յաջող մարզիկներ մաս կը կազմեն տեղական զանազան մարզական ակումբերու:

ՀՆԴԿԱՍՏԱՆ-ԿԱԼԿԱԹԱ

1925ին, Հնդկաստանի Կալկաթա քաղաքին մէջ, հնդկական Ողիմպիական Կոմիտէի՝ 1928ի միջազգային ողիմպիական խաղերու պատրաստութեան ծիրին մէջ, Հնդկաստանը ներկայացնելու համար նկատի առնուած է աթլետ Մեսրոպ Միրզաբեգեանը: Միրզաբեգեան, իբրեւ երկար վազքերու ակոյեան, յաջողած է մեծ տարբերութեամբ պարտութեան մատնել Հնդկաստանի լաւագոյն վազողները: Այս առթիւ, Կալկաթայի անգլիական մամուլը գովեստով կ'արտայայտուի հայ մարզիկի յաջողութիւններու մասին — [ԻԵ/4.6]: Միրզաբեգեան իր այս յաջողութիւնը կը պարտի Հայոց Մարդասիրական Ճեմարանի աշակերտ ըլլալուն՝ ուր ան վայելած էր մարզական ու ֆիզիքական մասնագիտական պատրաստութիւն: Տասը մղոն վազքի՝ Միրզաբեգեանի մրցանիշն է 58 վայրկեան:

Արդարեւ, Հայոց Մարդասիրական Ճեմարանը իր սկզբնական շրջանէն սկսեալ մեծ կարեւորութիւն տուած է աշակերտներու ֆիզիքական զարգացման: Վարժարանի աշակերտութիւնը ունի ֆութպոլի ու քրիքեթի խումբեր, եւ միջ-վարժարանային ակոյեանութիւնը իրենց վիճակուած է երկար տարիներ:

Հայոց Մարդասիրական Ճեմարանի մեծագոյն յաջողութիւնը կ'արտայայտուի սկաուտական խումբերու գործունէութեամբ: Իբրեւ հնդկական չորրորդ խումբի սկաուտներ, ղեկավարութեամբ Կարապետ Գալըստեանի, անոնք տիրացած են առաջնութեան՝

իրենց կենսունակ ու տիպար ընթացքով: Խուճաբը այսպէսով արժանացած է «Արքունական դրօշ»ին: Սկսած խուճաբի աշխատանքները վարած են, յաջորդաբար՝ Հ. Նազարեան եւ Յ. Միքայէլեան: Հրնդկաստանի սկսած ստանական տարեկան ընդհանուր բանակումներուն, հայկական Եռագոյնի հովանիին տակ հայ պատանիները կը ստանան ազգասիրական դաստիարակութիւն: Անոնց հոգիներուն մէջ վառ կը մնայ հայրենիքի կարօտը՝ որքան ալ անոնք հեռու գտնուին մայրենի հողէն: Ճեմարանի աշակերտներէն 50 հոգի մասնակցած են տեղական կամաւորներու զինավարժութեան փորձերուն:

Մինչեւ 1939 թուականը, Կալկաթայի հնդկահայ մարզիկներ փայլուն յաջողու-

թիւններ ձեռք բերած են աթլէթիզմի, ֆութպոլի, հոքէյի եւ ռեկպիի ճիւղերուն մէջ: Յիշատակութեան արժանի են, մարզիկներ՝ Աւետիս Մագաթը եւ եղբայրը՝ Յովսէփ, որոնք նաեւ թենիսի ճիւղի ախոյեանութիւններ ապահոված են: Երկար վազքերու մէջ՝ Մեսրոպ Միրզաբեգեանին յաջորդած է Վրթանէս Նազարեանը: Կոփամարտի ճիւղին մէջ փայլուն արդիւնքներ արձանագրած են Բենկալի նահանգի ախոյեան Արսէն Սարգիսեան, Լեւոն Պաղտասարեան, Բ. Յարութիւնեան, Կարօ Մինասեան եւ Անդրանիկ Յովհաննէսեան: Ինքնաշարժի մրցումներուն մէջ ախոյեանութիւն ապահոված է Մարգար Նաչիկեանը, իսկ հոքէյի խուճաբի աստղերէն յիշատակելի է Մարտիրոս Մանուկեանը — [ԺԱ. 242]:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- ԵՌԱՆԴԱՄ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ
- ԱՐՄԱՇԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՄԵԿՆՈՒՄԸ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ
- ՈՐԲ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան կառուցային կազմաւորումը կը սկսի իր ընդհանուր կանոնադրի մշակումով եւ անոր տառին ու ոգիին գործադրութեամբ: Միութեան կառուցային զարգացումը կը շարունակուի յաջորդական ընդհանուր ժողովներու շղթայով:

Հիմնական այս դրութեան կողքին, Հ.Մ.Ը.Մ.Ի կառուցային կազմաւորման մաս կազմած են նաեւ իր պաշտօնական առաքելութիւնները՝ հետեւեալ շարքով.

Եռանդամ առաքելութիւն դէպի նորանկախ հայրենիք՝ 1920ի Յուլիսին, Արմաշի գիւղատնտեսական վարժարանի սկառուներու մեկնում դէպի Հայաստան՝ 1920ի Օգոստոսին եւ Պոլսոյ Որբանոցներու աշակերտութեան եւ գաղթականներու փոխադրութիւն դէպի Յունաստան՝ 1922ի Հոկտեմբեր 7ին:

ԵՌԱՆԴԱՄ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ
ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

1918ի Մայիս 28ին, Հայաստանի անկախութեան հաստատումով, կառավարութիւնը զանազան իրագործումներու շարքին՝ կրթական (լուսաւորութեան) եւ մարմնամարզական ճիւղերը յատուկ խնամքի արժանացուց: Կրթական գետնի վրայ հիմնըւեցաւ պետական համալսարան՝ իր զանազան բաժիններով:

Այդ օրերուն, Հայաստան կը գտնուէր Պոլսոյ մարզական շարժումի ռազմիրներէն Եզնիկ Քաջունին: Ան կուգար Վանէն, Հայրենիքի մէջ մարզական շարժում ստեղծելու համար: Քաջունին կը գործէր Երեւանի մէջ եւ հոն յաջողեցաւ համոզել պետական շրջանակները՝ Պոլիսէն հրաւիրելու մասնագէտ մարզիչներ եւ սկառու խմբապետներ՝ տարածելու եւ արդիականացնելու համար մարզական շարժումը Մայր Հայրենիքի մէջ:

«Հայ Սկառու» պաշտօնաթերթի հրատարակման առթիւ, 15 Նոյեմբեր, 1919 թուականակիր իր նամակին մէջ, ի միջի այլոց, Եզնիկ Քաջունի հետեւեալը կը գրէ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան. «Անսահման հրճուանքով կարդացի ի հարկէ վերոյիշելով բոլոր անցեալի քաղցր օրերը, այն խանդավառութիւնը որ ստեղծուած էր նախ քան պատերազմը ֆիզիքական շարժման շուրջ, այն առոյգ տրամադրութիւնները մեր նոր սերունդի շարքերուն մէջ, այն խանդավառ երագները ապագայ Հայաստանի մը գաղափարին ի նպաստ, գօտեպնդուած ու յուսալից թոհչքները որոնց շնորհիւ է միայն որ թէւ կոտորակուած, կ'ապրինք մենք, կ'ապրի Հայաստանը, հայ ժողովուրդը: Ներկան՝ ուր իրական է ազատութիւնը որ հիմնաւորուած է ալ հիմա: Իսկ ետուզերը որ ծայր է տուեր հիմա ձեր ջանքերով անհամեմատ աւելի ուժեղ է եւ աւելի բարձր քան նախկինը... Ձեր մարզած սերունդն է որ պիտի կազմէ ռահվիրան եւ դրօշակիրը հայ ժողովուրդի գնացքին մէջ՝ միջակութիւնները դէպի բարձունքներ, դէպի լուսաշող քաղաքակրթութիւնը:

«Երեսանի մէջ ինչպէս նաեւ Հայաստանի բոլոր միւս կեդրոնները պիտի աշխատինք ծաւալելու այդ նոր գաղափարը գործով եւ որը վստահ ենք իրապէս պիտի ունենայ մեր հոգիներուն վրայ՝ մոգական գաւազանի ազդեցութիւն:

«Կրթական նախարարութիւնը անսահման խոստումներ ունի, եւ կարելի է ըսել որ արդէն գործի սկսած ենք» — [Գ.72]:

Եզնիկ Քաջունիի առաջարկը կրթական նախարարութեան կողմէ որդեգրուելէ ետք, Երեւանէն Պոլիս կը վերադառնայ նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ Գրիգոր Մերճանօֆ: Վերջինս ալ «Հայ Սկառու»ի 1 Յունուար, 1920ի թիւին մէջ, գեկուցելով Հայաստանի մէջ մարզական շարժումի մասին, կը հաստատէ, թէ Թիֆլիսի մէջ անձամբ տեսակցելով Հայաստանի կրթական նախարար Նիկոլ Աղբալեանի հետ՝ միասնաբար համաձայն գտնուած են

որ Հ.Մ.Ը.Մ.ի աջակցութեամբ զարկ տրուի Հայաստանի մարզական շարժումին — [Գ. 75]:

Վերոյիշեալ տրամադրութիւնները կը պաշտօնականան 27 Ապրիլ, 1920 թուականակիր՝ Հայաստանի հանրային կրթութեան եւ արուեստի բժշկա-առողջապահական բաժնի վարիչ՝ բժ. Վ. Արծրունիի կողմէ Կ. Պոլսոյ Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական միասիային ուղղուած նամակով, հետեւեալ բովանդակութեամբ.

«Ի լրումն Միհաստր Աղբալեանի հետագրի, որով խնդրում է երկու մասնագէտ սկսուտ պետեր յղել Երեւան, պատի ունիմ տեղեկացնելու, որ միհաստրութեան ծրագիրն է Հայաստանի մէջ ամենալայն չափով տարածել սկսուտութիւնը, բայց դրան արգելք է հանդիսանում հմուտ մասնագէտների բացակայութիւնը: Ուստի եթէ տակաւին չէք դրկած մարզիչներ, խնդրում եմ բարեհաճեցէք առանց յապաղելու կատարել Պ. Միհաստրի խնդիրքը, որովհետեւ ժամանակն անցնում է եւ կարիքը ահագին է» — [Գ. 249]:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, իր 31 Մայիս, 1920ի նիստի ընթացքին, լսելէ ետք իր ատենապետին՝ Տօքթ. Կ. Մուրթաթեանին փոխանցուած՝ Հայաստանի կրթական նախարարութեան կողմէ եղած խնդրանքը, կ'որոշէ կարելի չափով աջակցիլ հայրենիքի պահանջին:

Կեդրոնական Վարչութեան շարքերուն փոխանցուած այս որոշումը անյապաղ իր արձագանգը պիտի գտնէր եւ 26 Յուլիս, 1920ին, Պոլսէն դէպի Հայաստան ճամբայ կ'ելլէ եռանդամ պատուիրակութիւն մը՝ բաղկացած հետեւեալ անդամներէն. Վահան Չերազ, Տիգրան Խոյեան եւ Օննիկ Եազմաճեան: Եռանդամ պատուիրակութիւնը իր հետ կը փոխադրէր սկսուտական եւ մարզական գործունէութեանց յատուկ զանազան պիտոյքներ:

Սեւ ծովու վրայով՝ հինգ օրուան ճամբորդութենէ ետք, պատուիրակութիւնը 30 Յուլիսին կը հասնի Պաթում, ուր կը մնայ

մինչեւ 7 Օգոստոս: Այս կեցութեան ընթացքին պատուիրակութեան անդամները կը ծանօթանան տեղւոյն սկսուտական շարժումին: Անոնք կը թելադրեն հայ սկսուտներուն՝ բաժնուելով ուրս եւ հրեայ սկսուտներէն, հայ ազգային դրոշմով առանձին կազմակերպուիլ եւ դառնալ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ: Այս նպատակին կը խոստանայ նպաստել Պաթումի ազգային միութեան նախագահ Մնտոյեանը, եւ 20 սկսուտներով կորիզը կը կազմուի տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ական սկսուտութեան: Պատուիրակութեան անդամները ուրսերէն հրահանգները կը հայացնեն եւ անհրաժեշտ տեղեկութիւնները կը փոխանցեն սկսուտներուն: Այս մասին անոնք կը տեղեկագրեն նաեւ Պոլսոյ կեդրոնին — [Գ. 90]:

10 Օգոստոսին, պատուիրակութիւնը շոգեկառքով Պաթումէն կը հասնի Թիֆլիս: Թիֆլիսի մէջ պատուիրակութիւնը կը ծանօթանայ տեղւոյն հայ սկսուտներու կազմակերպութեան՝ ղեկավարութեամբ Մատոյեանի:

11 Օգոստոսին, առաքելութիւնը Թիֆլիսէն կը մեկնի Հայաստան: Չորս օրուան ճամբորդութենէ ետք, 15 Օգոստոսին, Վահան Չերազ, Օննիկ Եազմաճեան եւ Տիգրան Խոյեան կը հասնին Երեւան եւ անմիջապէս կապ կը հաստատեն Եզնիկ Քաջունիի հետ, որուն հետ նաեւ պիտի գործակցին: Անոնք այցելութիւններ կու տան կրթական, պատերազմական եւ ներքին նախարարներուն, որոնց կը ներկայացնեն իրենց ծրագրեալ գործունէութեանց նախագիծերը: Պետական պաշտօնատուները առաքելութեան անդամներուն գործնական ամէն աջակցութիւն կը խոստանան: Դժբախտաբար, անոնց նիւթական կարելիութիւնները շատ սահմանափակ են:

Աշխատանքերու բաժանումը կը կատարուի հետեւեալ ձեւով. Եզնիկ Քաջունին եւ Եազմաճեանը կը ստանձնեն Երեւանի շրջանը, իսկ Չերազն ու Խոյեանը՝ Ալեք-

սանդրապուլը, ուր գոյգ որբանոցներու մէջ աւելի քան 20.000 որբեր ապաստանած են:

Նախապատրաստական աշխատանքները եւ ծանօթացումները կ'երկարին մինչեւ Սեպտեմբերի կէսերը: Առաքելութեան անդամները բազմաթիւ այցելութիւններ կու տան Երեւանի շրջակայքի զանազան գիւղերն ու գիւղաքաղաքները, եւ կ'ուսումնասիրեն գործի ձեռնարկելու զանազան կարելիութիւնները:

Դժբախտաբար, քաղաքական միջնորդութիւնը կը սկսի մթազնիլ: Սեպտեմբերի վերջերուն լուրեր կը հասնին, թէ թուրքերը Սարըղամիշի ուղղութեամբ կը պատրաստուին յարձակում գործել հայկական ուժերուն դէմ:

Ալեքսանդրապուլ կը գտնուին Վահան Չերազն ու Տիգրան Խոյեանը: Եկած են ստանձնելու «Բուլիկոն» եւ «Կազաչի Բոստ» կոչուող՝ նախկին ռուսական բանակի կողմէ օգտագործուող զինուորական կայանները, որոնք ներկայիս «Նիր Իսթ Րիլիֆ» ամերիկեան բարեգործական ընկերակցութեան կողմէ՝ 20.000 հայ որբերու կայաններու վերածուած են:

Չերազ՝ մտահոգ քաղաքական կացութեամբ, Խոյեանին կը զգացնէ կռուի ճակատ մեկնելու իր մտածումը: Երեւանէն զինուորական ուժեր Ալեքսանդրապուլի վերայով կ'ուղղուին դէպի Կարսի ուղղութեամբ: Ալեքսանդրապուլը դարձած է հայ եւ թուրք՝ նոր պատերազմի հրամանատարական կեդրոն: Չերազն ու Եզնիկ Քաջունին պաշտօնապէս իրենց հրաժարականները կու տան կրթական նախարարութեան՝ մեկնելու համար ճակատ:

Երեւանէն՝ Օննիկ Եազմաճեան, 29 Հոկտեմբեր թուականով, կը գրէ Խոյեանին, թէ իր սկաուտական գործերը լաւ ճամբու մէջ են եւ կը խրարխուսէ զայն՝ Չերազի բացակայութեան ալ գործի լծուիլ: Խոյեան՝ որբանոցի ուսուցիչներէն խումբ մը, արդէն սկսած է մարզել: Անոնք, իրենց

կարգին, մարզանքի ուսուցիչներ պիտի դառնան որբանոցներէն ներս:

Որբ սկաուտներու տարազաւորման համար Խոյեան դժուարութիւններու կը հանդիպի, ի վերջոյ ձեռք ձգելու համար կարգ մը կարելիութիւններ, ամերիկեան նպաստամատոյցի պահեստէն:

Հոկտեմբերի մէջ Ալեքսանդրապուլ կը հասնի հայկական բանակի թնդանօթային բաժնի վերին հրամանատար՝ Զօրավար Արարատեան: Վերջինս կապ կը հաստատէ Խոյեանին հետ եւ 21 մեծ տարիքի սկաուտներ կ'ուզէ Ալեքսանդրապուլի բարձրունքներուն վրայ գետեղուած թնդանօթներու գործածութեան վարժութեան համար: Արարատեանի այս պահանջը անյապաղ կ'իրագործուի եւ մեծ սկաուտներ խանդավառութեամբ կը հետեւին թնդանօթներու գործածութեան փորձերուն՝ քաղաքի բերդին մէջ:

Կարսի պաշտպանութիւնը, դժբախտաբար, կը ձախողի՝ հայկական բանակի մէկ մասի սովետական գաղափարներու ծառայելուն եւ հրամանատարութեան հրահանգներուն չենթարկուելուն պատճառով: Կարսէն զինուորներ եւ ժողովուրդ խուճապահար կը վերադառնան Ալեքսանդրապուլ: Նահանգապետ Կարօ Սասունին այս կացութեան առջեւ ինքնապաշտպանութիւն կազմակերպելու հրաւէր կ'ուղղէ Ալեքսանդրապուլի ժողովուրդին: Նոր սկաուտներ, 31 Հոկտեմբերին, կը միանան պաշտպանութեան ուժերուն: Ճակատէն՝ Չերազ կը գրէ Խոյեանին որ պատրաստ ըլլան գաղթելու:

Նոյեմբերի սկիզբը, Խոյեան կը ստիպուի թողուլ Ալեքսանդրապուլը դժուարին պայմաններու տակ՝ Պաթումի ճամբով վերադառնալու համար Պոլիս: Աւելի ուշ, անոր կը հետեւի Օննիկ Եազմաճեան: Եռանդամ առաքելութենէն Հայաստան կը մնայ միայն Վահան Չերազը: Սակայն, պոլշեւիկեան լուծը հետզհետէ աւելի կը

ճնշէ: Եզնիկ Քաջունին կը ձերբակալուի եւ կը բանտարկուի: Սկաուտական շարժումը, իր անգլիական ծագումին պատճառով, պոլշեւիկներու կողմէ «իմբերիալիստական» կ'որակուի եւ կ'արգիլուի:

Վահան Չերազ, պահ մը հետքը կորսընցնելէ ետք, Փետրուարեան ապստամբութենէն ետք Երեւան կու գայ եւ կը յաջողի Ալեքսանդրապոլի «Կազաչի Բոստ»ի կայանին մէջ՝ որբանոցին որպէս հսկիչ պահակ պաշտօն մը ապահովել ամերիկեան նպաստամատոյցի պետ Միլթըն Պրաունի միջոցաւ:

Քաջունին, բանտէն ազատուելէ ետք կ'անցնի Պարսկաստան, իսկ Չերազը կը մնայ հայրենիք՝ Հ.Մ.Ը.Մ.ի այս առաքելութիւնը շարունակելու հեռանկարով, իբրեւ որբերուն սկաուտական դաստիարակութեան նուիրուած առաքեալ — [ԺԳ. 139]:

Եագմաճեանը կրկին կը վերադառնայ Երեւան՝ սկսուած գործը շարունակելու նպատակով, սակայն երկար չմնար եւ վերջնականապէս կը թողու Հայաստանը՝ պոլշեւիկեան հետապնդումներէն խուսափելով — [ԺԱ. 142]:

Չերազ գործը կը շարունակէ Ալեքսանդրապոլի մէջ՝ սահմանափակ իրագործումներով, եւ միշտ՝ ամերիկեան նպաստամատոյցի հովանիին տակ: Այսպէս է, որ 1923ի Յունիսէն սկսեալ, 100 որբ սկաուտներով Չերազ կը լծուի Սարգարապատի մօտ Արիաշէն անունով բնակեցութեան վայրի մը շինութեան: Ամերիկացիները այդ տափաստանին ուղղութեամբ ջրանցք մը կը բանան եւ ջուր կը հասցընեն: Անոնց կը տրամադրուի շինութեան յատուկ նիւթեր: Որբերուն շարքին կը սկսի նկատուիլ Չերազին ազգային գործելակերպին հակադրող՝ պոլշեւիկեան գաղափարաբանութեան նշոյլներ — [ԺԲ. 356]:

Այս նախաձեռնութիւնը նիւթ է դարձած Կոստան Չարեանի՝ «Բանկօօպը եւ Մա-

մութի Ոսկորները» վէպի էջ 16 եւ 17ի նկարագրութեան (Տպարան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1987), ուր հեղինակը կը գրէ.

«Առաստաղը նոր է, փայտերը ծածկուած են մեծ կոնդերով եւ՝ հազար անգամ հաշուել է՝ տասը եւ երկու գերաններ կան:

«Տղաքը նրա շարժումների վրայ ոչ մի ուշադրութիւն չէն դարձնում: Գիտեն նրա հոգեբանութիւնը: Ու խօս, աշակերտներ չեն, եկել են գիղ շինելու: Եթէ լոռում են՝ պարզապէս կարգապահութեան համար է»:

«Այդ հասուն, ոսկրոտ, անկիւնաւոր մարմիններով տղաները եկել են այստեղ նոր մի կեանք կառուցանելու համար:

«Նոր մի կեանք:

«Ամերիկեան Որբախման Կոմիտէի որոշումով հիմնուել է առաջին գիղը անապատի ծայրին»:

«Իսկ որբերի երեսները հողի գոյն են անել: Ամբողջ ձմեռը անապատը մլաւել է նրանց շուրջը եւ այժմ էլ, երբ մօտեցող գարունը նրանց արիւնի շրջանառութեան մէջ բոց է թաղել՝ կին չկայ:

«Կին չկայ, եւ խորհրդային իշխանութիւնն էլ այդ շինարարութեան վրայ ծուռ աչքով է նայում, որովհետեւ, ըստ իրենց, գիղից բողոքական պատուելիի, աստուածաշնչի եւ ազգասիրութեան հոտ է գալիս»:

Պոլշեւիկեան հսկողութիւնը կը շարունակէ տեւաբար հալածել Չերազը: Ան մէկ ու կէս տարի կ'աքսորուի Սիպերիա մինչեւ որ, 1927ի Դեկտեմբերին, սուտ զրպարտութեամբ կը նետուի Թիֆլիս՝ Մետէխի բանտը: Համայնապար վարչակարգին զոհ՝ իր ազգայնական հաւատամքին այս նուիրեալը վայրագօրէն կը գնդակահարուի 13 Յունուար, 1928ին:

Այսպէսով վերջ կը գտնէ Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնական առաջին առաքելութեան գործունէութիւնը:

Չերազի եւ ընկերներու ցանած սերմերը կը մնան հայրենիքի գաւակ որբերու

հոգիներուն մէջ՝ որպէս ապագայի յուսա-
տու ծիւղեր:

ԱՐՄԱՇԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԺԱ-
ՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՄԵԿՆՈՒՄԸ ԴԵՊԻ
ՀԱՅԱՍՏԱՆ

1919ի սկիզբը կը ծրագրուի Արմաշի
դպրեվանքը վերածել գիւղատնտեսական
վարժարանի: Արմաշի վանքը, Պոլսէն դէպի
արեւելք՝ Մարմարա ծովու ծոցի վրայ
գտնուող Իգմիթ քաղաքի մօտակայ վանք
մըն էր, մինչեւ 1915ի Եղեռնը:

Ծրագրուած գիւղատնտեսական վար-
ժարանի աշակերտները եղան Եղեռնէն
ազատած որբեր: Վարժարանի դասընթացքի
աւարտին, շրջանաւարտները պիտի փո-
խադրուէին Հայաստան՝ իրենց մասնա-
գիտութիւնը ի գործ դնելու հայրենիքի
մէջ: Այս ծրագիրը անմիջապէս իրակա-
նութիւն կը դառնայ, եւ Արմաշի աշա-
կերտները միաժամանակ իբր Հ.Մ.Ը.Մ.ի
սկաուտներ, իրենց գրադումներու կարգին
կը կիրարկեն սկաուտական շարժումը՝ իր
դաստիարակչական եւ կարգապահական բա-
ժիններով: Արմաշը կը դառնար Հ.Մ.
Ը.Մ.ի 24րդ մասնաճիւղը:

1920ի Օգոստոսին, երկամսեայ ծրա-
գիրը հազիւ աւարտած, Արմաշի գիւղա-
տնտեսութեան 126 աշակերտները, Հ.Մ.
Ը.Մ.ի եւ Ազգային վարչութեան գործակ-
ցութեամբ, Սեւ Ծովու վրայով կը փո-
խադրուին հայրենիք: Այս առաքելութիւնը
կը գլխաւորեն Հայկ Սերենկիւլեան եւ Կո-
պեռնիկ Թանտրճեան: Սկաուտ խմբապետն
էր Զաւէն Սարունին:

Հայաստանի կառավարութիւնը՝ Պա-
թումէն արդէն կը դիմաւորէ այս առա-
քելութիւնը: Երեւանի մէջ վարչապետ Համօ
Օհանջանեան ողջոյնի խանդավառ խօսքե-
րով կը շնորհաւորէ առաքելութիւնը եւ կը
խոստանայ ամէն աջակցութիւն հայրենիքի
կերտումին համար ժամանող այս առա-

քելութեան: Արմաշի աշակերտութիւնը կը
հաստատուի Զանգուի ափին՝ իրենց տրա-
մադրուած զօրանոցի մը մէջ, շուտով գոր-
ծի ձեռնարկելու ծրագրով:

Դժբախտաբար, հազիւ երկու ամիսը
աւարտած, թուրք-հայկական պատերազմը
եւ Կարսի անկումը կը տեղափոխեն առա-
քելութեան բուն նպատակին ծառայելու
հետաքրքրութեան կեդրոնը: Զափահաս գիւ-
ղատնտես որբերը մասամբ կը ցրուին հայ-
րենիքի զանազան կէտերուն վրայ, ոմանք՝
պատերազմական ճակատի օգնութեան, ու-
րիշներ՝ բարենպատակ եւ օժանդակ այլ
աշխատանքներու կը լծուին: 1920ի Նոյեմ-
բերին, խորհրդային վարչակարգը կը հաս-
տատուի հայրենիքէն ներս:

Այս առաքելութեան լուծարքն ալ,
նախորդին նման, պիտի ըլլար՝ հայրենիքի
ծառայութեան նպատակով տեղւոյն վրայ
մնալ եւ առանց նկատի առնելու խորհրդ-
դային վարչակարգի հաստատումը՝ նպաս-
տել Հայաստանի ծաղկումին:

ՈՐԲ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆ-
ՆԵՐՈՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան
նախաձեռնութեամբ, երրորդ պաշտօնական
առաքելութիւնը պիտի ըլլար՝ որբ սկա-
ուտներու եւ գաղթականներու բնակիչ-
ներէն մէկ մասի փոխադրութիւնը դէպի
Յունաստան:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.ի գործունէու-
թիւնը Թուրքիոյ սահմաններէն ներս լուծ-
ուած հռչակուեցաւ 16 Սեպտեմբեր, 1922ի՝
Կեդրոնական Վարչութեան վերջին նիս-
տով: Քեմալական յեղափոխութիւնը օրէ-օր
կը սպառնար Պոլսոյ մէջ գործող հայկական
հաստատութիւններու, գաղթականներու եւ
հայկական որբանոցներու ճակատագրին:
Առ այդ, համախորհուրդ՝ Հայրենիքի Օգ-
նութեան Մարմինին հետ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդ-
րոնական Վարչութիւնը կը ծրագրէ գաղ-

Թականներ եւ որբանոցներու աշակերտներ փոխադրել Յունաստան: Այս ծրագրի իրագործման համար կը նշանակուի մարմին մը՝ գլխավորութեամբ Կարօ Ուշագլեանի (կեդրոնի քարտուղար), Արշակ Յակոբեանի (սկ. ընդհ. փոխ-խմբապետ) եւ Մկրտիչ Մալումեանի (սկ. խմբապետ) եւ անդամակցութեամբ՝ որբանոցներու սկառու խմբապետներ՝ Ժիրայր Մինթանճեանի (Եսայեան որբանոց), Օննիկ Դարբինեանի (Գատը Գիւղի մասնաճիւղ), Միհրան Զարիֆեանի (Բերայի Մխիթարեան խումբ), Արա Տօմինեանի (Սամաթիոյ մասնաճիւղ):

Վերոյիշեալ մարմինը, տասը օրերու տքնաջան աշխատանքով, կը յաջողի կազմակերպել առաքելութեան ճամբորդութիւնը: Այսպէս՝ կը հաւաքուին հագուստեղէն, վրաններ, դեղօրայք, բանակեցման յատուկ գոյքեր, դրամ, եւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնին մէջ մնացած բոլոր գոյքերը կը յանձնուին առաքելութեան: Այս գործի յաջողութեան կը նպաստեն եւ առաքելութիւնը կը վաւերացնեն՝ Ազգերու Դաշնակցութեան Պոլսոյ ճիւղի պատուոյ նախագահուհի տիկին Ռըմպօլտ, հայրենիքի օգնութեան կոմիտէն, Պոլսոյ Պատրիարքարանն ու յունական դեսպանատունը: Առաքելութիւնը կը ստանայ անցագիր եւ Ազգերու Դաշնակցութեան Յունաստանի մասնաճիւղերուն ուղղուած յանձնարարագրեր: Կը վարձուի փոքր շոգենաւ մը:

7 Հոկտեմբեր, 1922ին, առաքելութիւնը ճամբայ կ'ելլէ Պոլիսէն դէպի հիւսիսային Յունաստանի ծովափները: 11 Հոկտեմբեր, 1922ին, դժուարին եւ վտանգաւոր պայմաններու մէջ նաւարկող շոգենաւը առաքելութեան անդամները, կը հասցընէ Ռոտոսթոյի (Տէտէ Աղաճ) նաւահանգիստը: Անմիջապէս կապ հաստատելով տեղւոյն խնամատարական մարմիններուն եւ պետական պաշտօնատարներուն հետ, առաքելութիւնը կը յաջողի տեղաւորուիլ հիւսիսային Յունաստանի ծովեզերեայ՝

Թրակիոյ եւ ներքին Սելանիկի շրջաններուն մէջ: Տեղական իշխանութիւնները լայն աջակցութիւն կը ցուցաբերեն առաքելութեան յաջողութեան, տրամադրելով գաղթականներու շինութեան՝ փայտ եւ սննդանիւթ եւ կարգ մը կեդրոններ՝ զինւորական նախկին բանակավայրեր:

Առաջին օրէն սկսեալ գաղթականները կ'ենթարկուին բժշկական դարմանումի, հիւանդութեանց դէմ պատուաստումի եւ համաճարակներու դէմ միջոցառումներու:

Առաքելութեան անդամները, գործերու բաժանման համար եւ տեղւոյն խնամատարական մարմիններու գործակցութեամբ, շրջանները կը բաժնուին հետեւեալ ձեւով:

Մինթանճեան եւ Զարիֆեան կը ըստանձնեն Կիւմիւլճինա, Տրամա եւ Սքէչէ քաղաքներու գաղթականները, Դարբինեան եւ Տօմինեան՝ Քավալայի եւ մօտակայ գիւղերու գաղթականները, իսկ Յակոբեան եւ Մալումեան՝ Սելանիկի շրջանի գաղթականները: Առաքելութեան անդամներու գործունէութեան շատ կարեւոր նպաստ կը բերեն եւ գործնապէս կ'աջակցին՝ Հայկ Սերենկիւլեան, Տօքթ. Տուտի, Հրանդ Քէօսէեան, Առաքել Պետրոսեան, Պատուելի Յ. Աճեմեան եւ ուրիշներ:

Կը կատարուի գաղթականներու մարդահամար: Կը կազմակերպուին Տէտէ Աղաճի եւ Սելանիկի շրջաններուն յատուկ՝ զոյգ խնամատարական մարմիններ, մասնակցութեամբ տեղւոյն խնամատարական մարմիններու եւ Փերտահճեան եպիսկոպոսի վերին հսկողութեամբ:

Առաքելութեան գործունէութեան համար նախատեսուած՝ մէկ ամսուան ժամանակաշրջանը կ'աւարտի: Օննիկ Դարբինեան եւ Ժիրայր Մինթանճեան, իբրեւ պաշտօնեաներ, կը մնան գործի գլուխ: Առաքելութեան մնացեալ անդամները կը մեկնին Յունաստանի զանազան կողմերը՝ միաժամանակ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու հիմնումի ծրագիրներ իրագործելով:

Վերոյիշեալ առաքելութեամբ եւ Յունաստանի զանազան շրջաններու եւ կղզիներու մէջ այլ որբերու տեղաւորումով, հետագային, առաքելութեան անդամներու

մղումով կը սկսին կազմուիլ եւ կազմակերպուիլ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի զանազան մասնաճիւղերը:



Պոլսէն Հայաստան մեկնող եռանդամ առաքելութեան անդամները նաւուն վրայ, ձախէն աջ՝ Օճնիկ Եազմաճեան, Վահան Չերազ, Տիգրան Խոյեան:

Դ. ՄԱՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԱՌՈՒՑԱՅԻՆ ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

- ՊՈԼԻՍ
- ՆԻԻ ԵՈՐՔ
- ՓԱՐԻԶ
- ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Պոլսոյ կեդրոնի փակումէն ետք, գաղութներու մէջ տարածուող շրջաններն ու մասնաճիւղերը՝ իրար հետ հաղորդակցութեան եւ ընդհանուր կեդրոնի մը ստեղծման կարիքները հետզհետէ աւելի հրամայական ձեւով զգացին:

Նիւ Եորքի մասնաճիւղի նախաձեռնութեան անյաջողութենէն ետք, հայեացքները կեդրոնացան Փարիզի վրայ՝ իբրեւ Կ. Վարչութեան մը նստավայր: Արդարեւ, հիմնադիրներ Գ. Յակոբեանի եւ Գարլօ Շահինեանի ներկայութիւնը Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ, ինչպէս նաեւ անոնց անմիջական գործակիցներ՝ Գրիգոր Մերձանօֆի եւ Կարօ Ուշագլեանի Փարիզ գլխունըւր, ամէն յոյս կը ներշնչէին որ Փարիզը կրնար լաւապէս կեդրոնի դերը ըստանձնել:

Այս իմաստով, 1925էն սկսեալ, յստակ առաջարկներ արձանագրուեցան Պուլկարիոյ, Ռումանիոյ եւ Նիւ Եորքի մասնաճիւղերէն ներս՝ որպէս օրակարգերու նիւթ: 1929ի Սեպտեմբերէն սկսեալ, «Հայ Սկաուտ» պաշտօնաթերթի վերահրատարակուիլը նաեւ լաւատեսութեան մղեց շրջանները, թէ՛ Փարիզը կրնար լիովին ստանձնել Կեդրոնական Վարչութեան դերը: Փարիզը, իր կարգին, չէր մերժեր ընդունիլ առաջարկները: Սակայն, նախաձեռնութիւնը կ'ուշանար:

Պէտք էր սպասել մինչեւ 1931, երբ կարելի եղաւ Փարիզի մէջ կայացնել արտասահմանի համագաղութային առաջին ընդհանուր ժողովը եւ ընտրել Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւն՝ ատենապետութեամբ Լ. Կիւմիւշկերտանի: Նոյնպէս, կազմուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտական Վերին Մարմին՝ ատենապետութեամբ Վահան Պաստըրմաճեանի:

Հետագայ էջերուն մէջ պիտի արձանագրենք հիմնադրութեան յաջորդող ժողովներէն սկսեալ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական կառոյցի հոլովոյթը, ընդհանուր ժո-

ղովներու կայացումով եւ այդ ժողովներէն ընտրեալ Կեդրոնական Վարչութիւններու գործունէութեամբ:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան պաշտօնական ԱՌԱՋԻՆ Ընդհանուր ժողովը գումարուեցաւ 16 Նոյեմբեր, 1919ին՝ Պոլսոյ մասնաճիւղերու ներկայացուցիչներու հաւաքով եւ Կեդրոնական Վարչութեան հրաւերով, համաձայն կանոնագրի 11րդ եւ 15րդ յօդուածներու տրամադրութիւններուն:

Մասնաճիւղերու ներկայացուցիչներու մեծամասնութիւնը ներկայ գտնուեցաւ այս ժողովին, որ կը ներկայացնէ Միութեան ՎԱԻԵՐԱԿԱՆ հիմնադրութեան ժողովը:

Ընդհանուր ժողովը, որպէս եզրակացութիւն, որոշեց՝ առաւելագոյնը մէկ ու կէս ամիս ետք կրկին Ընդհանուր ժողով մը գումարել, որուն իրաւասու ձայնով պիտի մասնակցէին իւրաքանչիւր մասնաճիւղէ գոյգ սկաուտ խմբապետներ՝ նշանակուած մասնաճիւղի վարչութեան կողմէ եւ գոյգ պատգամաւորներ՝ ընտրուած մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն [Գ.64]: Կեդրոնական Վարչութիւնը այս որոշումը շրջաբերականով փոխանցեց մասնաճիւղերուն:

Սակայն, Ընդհանուր ժողովի կայացումը նախատեսուած թուականէն աւելի ուշացաւ եւ Միութեան ԵՐԿՐՈՐԴ գերագոյն ժողովը տեղի ունեցաւ 9 Մայիս, 1920ին, Պոլսոյ Եսայեան վարժարանի սրահին մէջ՝ մասնակցութեամբ բոլոր մասնաճիւղերու երիտասարդ պատգամաւորներուն: Կը բացակայէին միայն Սան Ստեֆանոյի մասնաճիւղի պատգամաւորները — [Գ.232]:

Պատգամաւորական ԵՐԿՐՈՐԴ Ընդհանուր ժողովը ընտրեց Կեդրոնական Վար-

չութիւն՝ բաղկացած հետեւեալներէն. Արչակ Յակոբեան, Յովհաննէս Հինդլեան, Գրիգոր Յակոբեան, Ժիրայր Խորասանճեան, Գրիգոր Մերձանօֆ, Տօքթ. Կ. Մութաֆեան եւ Պօղոս Շապոյեան՝ որպէս ընտրեալ առաջին Կեդրոնական Վարչութիւն: Դիւանի կազմութեան նիստին կը կարգացուի Յովհաննէս Հինդլեանի՝ կազմէն հրաժարելու նամակը, իր բազմազբաղ վիճակին պատճառով: Ժողովը, հետեւաբար, իր կազմը ամբողջացուց յաջորդ առաւելագոյն քուէ ստացող՝ Եդուարդ Խաչատուրեանով — [Գ. 248]:

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական ԵՐՐՈՐԴ Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 20 Մարտ, 1921ին, Գարակէօզեան որբանոցի սրահին մէջ, 16 մասնաճիւղերու 45 լիազօր պատգամաւորներու ներկայութեամբ: Ժողովի օրակարգերն էին.

1.— Հաշուետուութիւն

2.— Տեղեկատուութիւն նախորդ շրջանի գործունէութեան (Մայիս 1920-Մարտ 1921)

3.— Նոր Կեդրոնի Վարչութեան ընտրութիւն

4.— Ծրագիր-կանոնագրի քննութիւն:

Առաջին նիստին ընտրուեցաւ ժողովի դիւան. նախագահ՝ Թորոս Մեծատուրեան, քարտուղար՝ Հայկ Աբէլեան:

Կեդրոնական Վարչութեան նիւթական գործունէութեան հաշուետուութիւնը կարգաց վարչութեան ատենապետ Պօղոս Շապոյեանը, որ նաեւ լուսաբանական հարցումներուն պատասխանները տուաւ:

Կեդրոնական Վարչութեան բարոյական գործունէութեան տեղակազիրը նաեւ կը ներփակէր մասնաճիւղերու գործունէութեան տեղեկագիրներէն ամփոփումներ:

Վերոյիշեալ գործունէութեանց քննութիւններէն ի յայտ եկաւ որ, հակառակ նիւթական անձուկ պայմաններու մէջ գործելուն, Միութիւնը յաջող արդիւնքներ արձանագրած է:

Երկրորդ նիստը կայացաւ նոյն օրը՝ կէսօրէ ետք: Նախ՝ տեղի ունեցաւ նոր Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն, հետեւեալ կազմով. Ժիրայր Խորասանճեան, Պօղոս Շապոյեան, Գարլօ Շահինեան, Վահրամ Փափազեան, Հայկ Ճիգմէճեան, Գրիգոր Յակոբեան: Վերջին երկուքի մերժումին վրայ՝ կազմը ամբողջացաւ Արարատ Քրիսեանի եւ Հրաչեայ Տէր Ներսէսեանի մասնակցութեամբ:

Վերջին օրակարգը՝ ծրագիր-կանոնագրի քննութիւնը, փոխանցուեցաւ քննիչ յանձնախումբի մը, որպէսզի յետ քննութեան՝ մասնաճիւղերու գրաւոր առաջարկները ղրկուին մինչեւ 20 Ապրիլ, 1921, եւ յանձնախումբի համադրումի աշխատանքէն ետք, մասնաճիւղերէն մէկական պատգամաւորներու ներկայութեամբ, յատուկ նիստով մը, վերջնականապէս վաւերացուի:

Պատգամաւորական ԶՈՐՐՈՐԴ Ընդհանուր ժողովը գումարուեցաւ 19 Յունիս, 1921ին, ուր վաւերացուեցաւ Միութեան առաջին ամբողջական Ծրագիր-Կանոնագիրը, որուն սկզբունքներն ու ոգին մնացած են անփոփոխ՝ մինչեւ մեր օրերը:

Պատգամաւորական չորրորդ Ընդհանուր ժողովէն ընտրուած Կեդրոնական Վարչութեան կեանքը եղաւ կարճատեւ՝ անդամներուն մեծամասնութեան հրաժարելուն պատճառով: 27 Նոյեմբեր, 1921ին, կայացաւ Հ.Մ.Ը.Մ.ի ՀԻՆԳԵՐՈՐԴ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը, Բերայի Ազգային Մատենադարանի սրահին մէջ՝ 27 լիազօր պատգամաւորներու ներկայութեամբ: Ժողովի ատենապետն էր Թորոս Մեծատուրեան, իսկ ատենադպիրը՝ Պօղոս Խորասանճեան:

Ժողովը տեղեկ եղաւ նախորդ Կեդրոնական Վարչութեան անդամներու մեծամասնութեան հրաժարման մասին, եւ անմիջապէս ձեռնարկեց նոր Կեդրոնական Վարչութեան ընտրութեան: Ընտրեալ անդամներն են՝ Խաչիկ Ալեանաքեան, Յակոբ

Անտոնեան, Չարեհ Խօրասանճեան, Արամ Կեսարեան, Հայկ Ճիգմէճեան, Թորոս Մեծատուրեան, Լեւոն Յակոբեան, Տօբթ. Ա. Սալբի եւ Քրիս Ֆենէրճեան:

Պատգամաւորական հինգերորդ Ընդհանուր ժողովը՝ Պոլսոյ մէջ կայացած ընդհանուր ժողովներու շարքին վերջինը պիտի ըլլար: Արդարեւ, 1921-ի Սեպտեմբեր 12ի նիստին, Կեդրոնական Վարչութիւնը պաշտօնապէս կը դադրեցնէր Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը Թուրքիոյ մէջ: Քեմալական շարժումի քաղաքական իրադարձութիւնները՝ իրենց խստութեամբ եւ հալածանքներով՝ անկարելի կը դարձնէին գործունէութեան շարունակութիւնը: Կեդրոնական Վարչութեան անդամներն ու մօտիկ գործակիցները ցրուելով՝ փոխադրուեցան եւրոպական երկրամասի զանազան երկիրները, ոմանք մինչեւ Ամերիկաները:

Հ.Մ.Ը.Մ.ի Պոլսոյ գործունէութեան դադրեցումէն ետք, Նիւ Եորքի մասնաճիւղը կ'որոշէ առժամեայ Կեդրոնական Վարչութեան դերը ստանձնել՝ կապեր հաստատելու համար արտասահմանի մէջ նոր հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն հետ: Այս նախաձեռնութիւնը կը ծրագրէր ապագայի մնայուն կեդրոնական վարչութեան մը ստեղծումը: Տիգրան Խոյեան կը ստանձնէ Առժամեայ Կեդրոնական Վարչութեան քարտուղարութիւնը:

Դժբախտաբար, Նիւ Եորքի մասնաճիւղը իր յանձնառութենէն շուտով պիտի հրաժարէր, թողնելով որ՝ Պալքանեան երկիրներէն մէկուն, Մերձաւոր Արեւելքի շրջանին կամ՝ նախընտրաբար, Ֆրանսայի Փարիզի շրջանին վստահուէր կեդրոն դառնալու պարտականութիւնը:

Փարիզ կը գտնուէին միութեան հիմնադիր անդամներէն Գրիգոր Յակոբեան, Գարլօ Շահինեան, անոնց անմիջական գործակիցը՝ Գրիգոր Մերձանօֆ, «Հայ Սկսուտ»ի խմբագիր եւ Պոլսոյ կեդրոնի քարտուղար՝ Կարօ Ուշագլեան եւ կեդրոնի հաշ-

ուապահ՝ Գառնիկ Շէհրիկեան: Սակայն, ակնկալուած նախաձեռնութիւնը կ'ուշանայ:

1925ին, տեղի կ'ունենայ Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ Շրջանային Վարչութեանց խորհրդաժողովը՝ 21-24 Նոյեմբերին, Ռուսչուքի մասնաճիւղի սրահին մէջ:

Խորհրդաժողովը կը զբաղի զոյգ շըրջանները հետաքրքրող զանազան հարցերով ու կ'առնէ համապատասխան որոշումներ: Խորհրդաժողովի նիւթերէն մին կը շօշափէ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնի մը կազմութեան հարցը, եւ ժողովը այս մասին կ'առնէ հետեւեալ որոշումը — [Ի/7.22]:

1.— Ստեղծել Առժամեայ Կեդրոնական Յանձնախումբ մը, որուն պաշտօնը ըլլայ՝ ընդհանուր կապ հանդիսանալ բոլոր շրջաններուն միջեւ, հոգ տանիլ նոր շրջաններու կազմակերպութեան, նոր մասնաճիւղերու կազմութեան եւ գետինը պատրաստել ընդհանուր պատգամաւորական ժողովի մը համար:

2.— Սոյն խորհրդաժողովի որոշումներով որոշուած աշխատանքներէն դուրս որեւէ կարեւոր հարց վճռելու համար Կեդր. Յանձնախումբը պարտաւոր է ստանալ առնուազն երեք շրջանի հաւանութիւնը:

3.— Առժամեայ կեդրոնը կազմել Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Շրջ. վարչութեանց երեքական անդամներէն, որոնք հաւաքական ճիստ կ'ունենան կարեւոր խնդիրներու առթիւ, եւ երկու շրջաններէն ընտրուած մէկական գործավարի կը թողուն ընթացիկ գործերու ղեկավարութիւնը:

4.— Երկու գործավարները աշխատանքները կը տանին՝ աշխատանքի բաժանում կատարելով կեդրոնական յանձնախումբին իրատարութեան յանձնուած պարտականութեանց մէջ, իրար տեղեակ պահելով կատարուած աշխատանքներէն:

5.— Ստանալ այդ մասին Յունաստանի եւ Ամերիկայի շրջաններուն ալ համամտութիւնը ու տեղեկութիւն հաղորդել շրջան չկազմող մասնաճիւղերուն:

6.— Առժամեայ Կեդրոնական Յանձնախումբը իրաւաստ է իր մնայուն եւ այլ ծախքերու բաշխումը կատարել շրջաններու վրայ»:

Այս մանրամասն ծրագրով նախատեսուած Առժամեայ Կեդրոնական Յանձնախումբի գործունէութեան արդիւնքներու մասին արձանագրութիւններ կը պակսին: Շրջաններու կողմէ ալ դրական արձանագրութիւններ չկան:

1929ին, Ռուսմանիոյ Շրջանային Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր շրջաններուն կը յղէ յատուկ շրջաբերական մը՝ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի մը գումարման եւ ընդհանուր Կեդրոնական Վարչութեան ընտրութեան ծրագրով:

Փարիզի մէջ «Հայ Սկաուտ»ի վերահրատարակումը նոր յոյսեր կը ներշնչէ կեդրոնի մը կազմութեան համար: Արդարեւ Փարիզէն՝ Ֆրանսայի Շրջանային Վարչութիւնը նախաձեռնութիւնը կ'ունենայ կազմակերպելու Պատգամաւորական Ընդհանուր Ժողով: Այս նպատակով, շրջաբերական մը կը դրկուի բոլոր շրջաններուն եւ ժողովի կայացման թուական կը ճշդուի 20 Դեկտեմբեր, 1930-ը, եթէ շրջանները համամիտ գտնուին: Շրջանները սկզբունքով համամիտ կը գտնուին, սակայն ժողովը կարելի կ'ըլլայ կայացնել 1931ի Փետրուար եւ Մարտ ամիսներու ընթացքին միայն:

Ժողովին մասնակցեցան հետեւեալ շրջանները. Սուրիա եւ Լիբանան, Պուկկարիա, Ռուսմանիա, Յունաստան, Հարաւային Ամերիկա, Հիւսիսային Ամերիկա, Եգիպտոս եւ Ֆրանսա:

Ժողովի օրակարգերուն կարեւորագոյնը եղաւ սկաուտական նոր Մրագիր-Կանոնագրի մշակումը, Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Կանոնագրութեան մէջ կարգ մը բարեփոխումներ, առաջարկներ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնի գործունէութեան ծրագրի մասին եւ ընտրութիւն Հ.Մ.Ը.Մ.ի արտասահմանի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան եւ

Սկաուտական Վերին Մարմինին — [ԺԱ. 164]:

Կեդրոնական Վարչութեան անդամ ընտրուեցան՝ Լեւոն Կիւմիւշկերտանի գլխաւորութեամբ՝ Լ. Բաշալեան, Տօքթ. Լ. Գրիգորեան, Զ. Խանգատեան, Ներսէս Օհանեան, Ն. Գարայեան եւ Ա. Զաքրեան:

Իսկ Սկաուտական Վերին Մարմինի անդամներ ընտրուեցան՝ Վահան Փաստրմաճեանի ատենապետութեամբ՝ Գրիգոր Յակոբեան, Օննիկ Եազմաճեան, Գառնիկ Յովհաննէսեան, Յովհաննէս Պապէսեան, Հայկազ Աբէլեան եւ Տիկին Էլէն Բիւզանդ:

Նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը, հազիւ տարի մը բոլորած, ցրուեցաւ եւ միայն անուանական գոյութիւն մը պահեց: Իրողապէս կեդրոնական յատուկ գործունէութիւն մը չկրցաւ արձանագրել: Շրջաններու հետ կապը գործնապէս չհաստատուեցաւ: Զանազան պատճառներ անկարելի դարձուցին կեդրոնական գործունէութիւնը: Համաշխարհային տնտեսական տագնապը աւելի դժուարացուց եւ անկարելիութեան մատնեց Կեդրոնական Վարչութեան աշխատանքները:

Սկաուտական Վերին Մարմինը համեմատաբար աւելի բախտաւոր պիտի ըլլար: Համագաղութային կապերու դժուարութեանց դիմաց՝ մարմինը յաջողեցաւ կազմակերպել Ֆրանսայի մասնաճիւղերու սկաուտական գործունէութիւնը՝ մինչեւ 1932-ի վերջաւորութիւնը — [ԺԱ. 165]:

1934ի սկիզբը, 1931ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի դիւանի նախագահ Ներսէս Օհանեանի եւ Ազգային Պետ Գրիգոր Յակոբեանի նախաձեռնութեամբ՝ Վազգէն Անդրէասեան կը լիազօրուի կազմելու Ֆրանսայի Շրջանային Վարչութիւն եւ Սկաուտական Վերին Մարմին (կեդրոնական): Սկաուտական Վերին Մարմինը կեանքի կոչուեցաւ հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Վազգէն Անդրէասեան

Ատենադպիր՝ Օննիկ Եազմաճեան
Գանձապահ՝ Միհրան Քիւրքճեան
Խորհրդական՝ Օննիկ Դարբինեան
Սկաուտական խմբապետ՝ Ժիրայր Մին-
թանճեան:

Այս մարմինին գործը եղաւ՝ կապ
հաստատել աշխարհի չորս ծագերուն գոր-
ծող Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններուն եւ մասնաճիւ-
ղերուն հետ, փորձելով համագաղութային
սկաուտական գործունէութեան համա-
դրումը: Անոր գլխաւոր գործը եղաւ նաեւ՝
«Հայ Սկաուտ»ի Ապրիլ, 1934էն սկսեալ
վերահրատարակումը, որպէս պաշտօնա-
թերթի հրատարակման Գ. շրջան: Պաշտօ-
նաթերթի վերահրատարակութիւնը շրջան-
ներու եւ Հ.Մ.Ը.Մ.ականներու կողմէ քա-
ջալերական արձագանգներու արժանացաւ
եւ կապ մը հաստատեց համագաղութային
տարողութեամբ — [ԺԱ.166]: Սակայն, Կեդ-
րոնական Վարչութիւնը, որուն հանգա-
մանօրէն պիտի պատկանէին վերոյիշեալ աշ-
խատանքները, իրողապէս գոյութիւն ունե-
նալէ դադրած էր:

1935ի սկիզբը, համար 405 նամակով,
Սկաուտական Վերին Մարմինը կը դիմէ
Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վար-
չութեան՝ խնդրելով որ վերջինս համաձայն
ըլլայ առժամեայ Կեդրոնական Վարչութեան
մը նշանակման Փարիզի մէջ: Այս նամակը
կը ստորագրեն Յովհաննէս Պապէսեան եւ
Գրիգոր Յակոբեան՝ որպէս Սկաուտական
Վերին Մարմնոյ ատենադպիր եւ ատե-
նապետ: Նամակը կը յայտնէ նաեւ, թէ այս
ծրագրին համաձայն են Հ.Մ.Ը.Մ.ի հիմ-
նադիրներէն՝ Հայկ Ճիգմէճեան, Գրիգոր
Յակոբեան, Գրիգոր Մերճանօֆ, Գարլօ
Շահինեան, Տիգրան Խոյեան, Պոլսոյ Կեդ-
րոնական Վարչութեան քարտուղար՝ Կարօ
Ուշագլեան եւ վերջին (1931) Պատգա-
մաւորական Ընդհանուր Ժողովի մայր դի-
ւանի նախագահ՝ Ներսէս Օհանեան:

Այս առաջարկի կարեւորութեան դի-
մաց՝ Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային

վարչութիւնը որեւէ նախաձեռնութիւն ունե-
նալէ առաջ կ'ուզէ ունենալ իր շրջանի 4րդ
Պատգամաւորական Ժողովին հաւանութիւ-
նը, որմէ ետք իր դրական պատասխանը կու
տայ եղած առաջարկին: Փարիզը իր վերջ-
նական կարգադրութիւնը չի հաղորդեր Սուր-
իոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչու-
թեան՝ մինչեւ 1937:

1937ի սկիզբը, Փարիզէն՝ Գրիգոր Յա-
կոբեան, Գառնիկ Յովհաննէսեան եւ Գրի-
գոր Մերճանօֆ՝ մտահոգ Հ.Մ.Ը.Մ.ի կեդ-
րոնի չգոյութեան անպատեհութիւններէն
եւ որպէս վերջին Կեդրոնական Վարչու-
թեան գործակից անդամներ՝ անգամ մը եւս
կը դիմեն Սուրիոյ եւ Լիբանանի Շրջա-
նային Վարչութեան, ի միջի այլոց գրելով.

«...Քանիցս մեր խորհրդակցութեան Գիրքը
եղած էր Սուրիոյ եւ Լիբանանի մէջ կազմել
Կեդրոնական Վարչութիւնը. Ապառի ունեւալով
հոն ձեր ունեցած կարելիութիւններ եւ հաւա-
քական կեանքը, որը պիտի դիրացներ եւ
յաջողութեամբ պիտի պսակեր կեդրոնական
մարմնոյ մը ձեռնարկը...»:

Եւ անմակը վերջացնելով՝ այսպէս.

«Կեցցէ՛ հայ ցեղը կեցցէ՛ մեր գաղա-
փարական պատանիները եւ յաւետ ապրեցէ՛ք
դուք Սուրիոյ եւ Լիբանանի վարիչ կտրիճներ որ
կրցաք բարձր տանիլ մեր դրօշը եւ մեր ոգին:
«Եղբայրական կարօտի համբոյրներով.
Ձերդ»

Կրկնակի ստիպողական՝ վերոյիշեալ
կացութեան առջեւ Սուրիոյ եւ Լիբանանի
Շրջանային Վարչութիւնը իր թիւ 26 եւ 25
Մայիս, 1937 թուականակիր շրջաբերակա-
նով կը դիմէ Հ.Մ. Ը.Մ.ի բոլոր շրջան-
ներուն՝ Կեդրոնական Վարչութեան մը կազ-
մութեան մասին համա-Հ.Մ.Ը.Մ.ական միաց-
եալ հաւանութիւն մը ստանալու նպատա-
կով: Շրջաբերականը կը վերջանայ հետեւ-
եալ պարբերութեամբ.

«Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի Ծրջա-
նային վարչութիւնս, իր կարգին թարգմանը

հանդիսանալով հանդերձ մեր վերերան եղբայրներուն փափաքին, մեծ յաւակնութիւններ չունի, այլ իր վրայ դրուած բարոյական պարտքը կատարելու գիտակցութիւնը, լաւագոյն կերպով ծառայած ըլլալու Հ.Մ.Ը.Մ.ի բարոյքման, զայն օժտուած տեսնելով Կեդրոնական մարմինով մը, որուն անկասկած վերապահուած է լրացնելու պակաս մը եւ այդ անշուշտ բոլոր շրջաններուն համար, որովհետեւ նման մարմին մը կոչուած է տեղեակ պահելու շրջանները Հ.Մ.Ը.Մ.ի կեանքով, ղեկավարելու զանոնք Հ.Մ.Ը.Մ.ի ուղեգծով»:

Շրջաբերականը ստորագրած են ատենապետ Տօքթ. Բենիամին Գուլագեան եւ ատենադպիր Սարգիս Բախտիկեան:

Այս շրջաբերականին տրամադրութիւններն ալ, նախորդներուն նման, գործնական քայլերու չեն առաջնորդեր:

Հ.Մ.Ը.Մ.ը տակաւին կը մնայ առանց Կեդրոնական Վարչութեան, հակառակ զանազան ստիպողական կացութիւններու, որոնցմէ՝ Փարիզի Հայ Արիներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարժումի միացման հարցը: Այս հարցէն մեկնելով, Պուլկարիոյ Շրջանային Սկաուտական Գործադիր Մարմինը, իր թիւ 31 եւ 7 Յունուար, 1938 թուականակիր նամակով կը գրէ Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութեան մանրամասն նամակ մը՝ եզրակացնելով հետեւեալ ձեւով.

«Այս դիմումին պարագան եւ ընդհանրապէս հայ նորահաս սերունդի պահպանման գործը ընդհանուր եւ ամուր հիմերու վրայ դնելու համար, տիրող տրամադրութիւնները պէտք է մղեն մեզ օր առաջ իրականացնելու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Մարմինը եւ մեր կազմակերպութեան վերստին տալու իր համահայկական բնոյթը եւ դերը:

«Այս առթիւ մեր շրջանի վարչութիւնը պէտք եղածը պիտի ընէ Մայիսին Փլովտիվի մէջ գումարելու Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Պատգամաւորական ժողովը, որուն կը յուսանք ձեր համաձայնութիւնը պիտի տաք»:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութիւնը, անդրադառնալով վերոյիշեալ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի կայացման նախաձեռնութեան՝ իր թիւ 48 եւ 6 Փետրուար, 1938 թուականակիր նամակով, ի միջի այլոց, հետեւեալը կը գրէ Ֆրանսայի Շրջանային Սկաուտական Խորհուրդին.

«Կը գնահատենք այսպիսի աշխատանքի մը նախաձեռնութիւնը եւ եթէ կարելի ըլլայ նուազագոյնը հինգ շրջան մասնակից դարձնել այդ ժողովին, թէեւ շատ մեծ զոհողութիւններու կը կարօտի Սուրիայէն Պուլկարիա պատգամաւոր դրկելը, սակայն շրջանս սիրով այդ զոհողութիւնը պիտի ընէ: Մասնաւորաբար անհրաժեշտ կը նկատենք Ֆրանսայի մասնակցութիւնը: Ուրեմն, եթէ Պուլկարիա, Ռումանիա, Յունաստան եւ Ֆրանսա մասնակցին, Սուրիան եւս պիտի մասնակցի այս ժողովին»:

Նամակը ստորագրած են ատենապետ Օննիկ Պէօճէքեան եւ ատենադպիր Թադէ Գարագալըագեան:

Վերոյիշեալ գրութեան՝ իր 16 Փետրուար, 1938 թուականակիր նամակով Ֆրանսայի շրջանի սկաուտ պետ Վազգէն Անդրէասեան կը պատասխանէ՝ գրելով.

«Ըլլայ նիւթական, ըլլայ տրամադրուելու անձի չգոյութեան պատճառով Պուլկարիոյ նախաձեռնած Սկաուտական Ընդհանուր Պատգամաւորականին պիտի մասնակցինք տեղոյն վրայ ներկայացուցիչ մը նշանակելով:

«Ուրեմն սկզբունքով համաձայն ենք եւ կը գովենք իրենց նախաձեռնութիւնը, միմիայն կը ցաւինք որ մեզմէ մէկը պիտի չկարենայ անձամբ հոն գտնուիլ»:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մը վերակազմութեան համար շրջաններու եւ պատասխանատուներու մտահոգութիւններն ու նախաձեռնութիւնները դրական արդիւնքի մը չպիտի յանգին:

Միութիւնը կը գտնուի Բ. Համաշխարհային Ընդհանուր Պատերազմի նա-

խորդող օրերու՝ քաղաքական եւ յատկապէս տնտեսական շատ դժուարին պայմաններուն մէջ:

1939ին, Փարիզի մէջ հրատարակուած «Քսանամեայ Յուշարձան» հատորին մէջ՝

այս մասին յօդուածագիրը հետեւեալ բառերով հարցը կ'եզրակացնէ.

«...Ու մինչեւ այսօր Հ.Մ.Ը.Մ.ը կը մնայ առանց Ընդհանուր Կեդրոնի» — [ԺԱ. 165]:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

- ՊՈԼԻՍ
- ՆԻՒ ԵՈՐՔ
- ՓԱՐԻԶ

Հ.Մ.Ը.Մ.ի տարողութեամբ համագ-
գային նպատակներով գործող միութիւն մը
անկասկած որ պիտի ունենար իր կեդրոնա-
կան կառոյցը, ինչպէս տեսանք նախորդ
գլուխին տակ: Իսկ կեդրոնական կառոյցը
կ'արդարանար կեդրոնական գործունէու-
թեամբ՝ իր կազմակերպական, մարզական,
սկաուտական եւ ազգային բաժիններով:

Ահա այս կարգի գործունէութեան
լծուեցան Հ.Մ.Ը.Մ.ի գանազան կեդրոնա-
կան Վարչութիւնները՝ միաժամանակ ծա-
ռայելով նոր մասնաճիւղերու հիմնումին,
միութեան լայնատարած ծանօթացման եւ
միջ-Հ.Մ.Ը.Մ.ական հաղորդակցութեան:

Հետագայ տողերուն մէջ պիտի հան-
դիպինք Պոլսոյ եւ արտասահմանի մէջ կեան-
քի կոչուած կեդրոնական վարչութիւններու
կազմերուն, եւ ամփոփ գիծերով, կեդրո-
նական գործունէութիւններուն:

ՊՈԼԻՍ

Հիմնադիր կեդրոնական Վարչու-
թիւնը, իր կազմակերպչական գործունէու-
թեան զարգացումով, միութեան վարչա-
մեքենայի կազմաւորումը հետապնդեց:

Այս հիմնական աշխատանքը համեմա-
տաբար երկար ժամանակ պիտի խլէր: Մաս-
նաճիւղերու կազմութիւնն ու առաջին գոր-
ծունէութիւնը ամբողջութեամբ զբաղեցու-
ցին կեդրոնականի եւ մասնաճիւղերու
վարչական անդամները:

9 Մայիս, 1920ի Պատգամաւորական
Երկրորդ Ընդհանուր Ժողովէն ընտրուած
Բ. կեդրոնական Վարչութիւնը կը բաղկա-
նար հետեւեալներէն.

- Տօքթ. Մուրաֆեան՝ ատենապետ
- Պօղոս Շապոյեան՝ ատենադպիր
- Ժիրայր Խօրասանճեան՝ փոխ-ատենա-
պետ եւ գանձապահ
- Արշակ Յակոբեան՝ փոխ-ատենադպիր
- Եղուարդ Խաչատուրեան, Գրիգոր

Մերձանօֆ եւ Գրիգոր Յակոբեան՝ անդամ-
ներ:

Այս կեդրոնական Վարչութիւնը կը
նշանակէ հետեւեալ յանձնախումբերը.

Սկաուտական՝ Գրիգոր Յակոբեան,
Հայկ Ճիգմէճեան եւ Արշակ Յակոբեան

Շուէտական մարզանքի՝ Գրիգոր Մեր-
ձանօֆ, Լեւոն Յակոբեան եւ Արարատ
Քրիսեան

Աթլետիկի՝ Վահրամ Փափագեան,
Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան եւ Գրիգոր
Յակոբեան

Փութպոլի՝ Օննիկ Ֆրէնկեան, Տիգրան
Խոյեան եւ Եղուարդ Խաչատուրեան

Փրօփականտի՝ Արամ Նիկողոսեան,
Լեւոն Թաշճեան, Արշակ Յակոբեան եւ
Կարօ Ուշագլեան

Միջազգային Սկաուտական Յանձնա-
խումբի անդամներ՝ Ժիրայր Խօրասանճե-
ան, Վահրամ Փափագեան, Գրիգոր Յա-
կոբեան

Որք սկաուտներու զգեստաւորման՝
Հայկ Ճիգմէճեան, Եղուարդ Խաչատուրեան
եւ Օննիկ Եագմաճեան:

Վերոյիշեալ կազմերը գործեցին մին-
չեւ 20 Մարտ, 1921, երբ նոր ընտրութեանց
արդիւնքով՝ Գ. կեդրոնական Վարչութիւ-
նը, 23 Մարտ, 1921ին, իր դիւանը կազմեց
հետեւեալ ձեւով.

Թադէոս Մեծատուրեան՝ ատենապետ
Գարլօ Շահինեան՝ ատենադպիր
Ժիրայր Խօրասանճեան՝ դրամապահ
Հրաչեայ Տէր Ներսէսեան, Վահրամ
Փափագեան, Պօղոս Շապոյեան եւ Արարատ
Քրիսեան՝ անդամներ:

Երրորդ կեդրոնական Վարչութեան
օժանդակեցին հետեւեալ յանձնախումբերը.

Սկաուտական՝ Յովհաննէս Հինդլեան,
Գրիգոր Յակոբեան, Հայկ Ճիգմէճեան,
Արշակ Յակոբեան եւ Յովհաննէս (Օննիկ)
Ֆրէնկեան

Շուէտական մարզանքի՝ Արարատ Քրիս-
եան եւ Պօղոս Շապոյեան

Աթլեթիք՝ Գարլօ Շահինեան, Գաբրիէլ Շիշմանեան եւ Վահրամ Թերզեան

Ֆուլթոն՝ Վարագ Փողարեան:

Կեդրոնական Վարչութեան նստա-
վայրն է՝ Նորասանճեան Խան, թիւ 26 —
[Դ. 16]:

27 Նոյեմբեր, 1921-ի Պատգամաւո-
րական Ե. Ընդհանուր ժողովէն ընտրուած
Կեդրոնական Վարչութիւնը իր դիւանը
կազմեց հետեւեալ ձեւով.

Զարեհ Նորասանճեան՝ ատենապետ

Խաչիկ Ալեանաքեան՝ ատենադպիր

Արամ Կեսարեան՝ գանձապահ

Յակոբ Անտոնեան, Հայկ Ճիգմէճեան,
Թադէոս Մեծատուրեան, Լեւոն Յակոբեան,
Տօքթ. Ա. Սալբի եւ Քրիս Ֆէնէրճեան՝
խորհրդականներ — [Դ.160]:

Աւելի ուշ, դիւանի այս կազմին միա-
ցաւ Որդիք Քէմհաճեան — [Դ.270]:

Այս վարչական կազմին օժանդակեցին
հետեւեալ յանձնախումբերը.

Սկաուտական Կեդրոնական Յանձնա-
խումբ՝

Ատենապետ՝ Հայկ Ճիգմէճեան

Ատենադպիր՝ Արշակ Յակոբեան

Անդամներ՝ Արտաշէս Ալահվէրտի,
Օննիկ Գովան, Օննիկ Ֆրէնկեան, Ժիրայր
Նորասանճեան եւ Արամ Նիկողոսեան

Սկաուտական ենթախանձնախումբ՝

Ատենապետ՝ Լեւոն Գազանճեան

Ատենադպիր՝ Լեւոն Սարուխան

Անդամներ՝ Արա Տօմինեան եւ Մկրտիչ
Մալումեան

Պոլսոյ Միջազգային Սկ. Խորհուրդի
մօտ ներկայացուցիչներ՝ Արամ Նիկողոս-
եան, Ժիրայր Նորասանճեան եւ Օննիկ Ֆը-
րէնկեան

Մարզական Կերդ. Յանձնախումբ՝ Լե-
ւոն Յակոբեան, Վահրամ Փափագեան, Գրի-
գոր Գլընճեան, Գրիգոր Ծօլօլեան եւ Գէորգ
Մակարեան

Մարզական ենթախանձնախումբ՝ Նու-
պար Արապեան, Հրաչեայ Գալֆայեան,

Վահրամ Թէրզեան, Յակոբ Չաղլասեան,
Գաբրիէլ Քէշիշեան

Փրօփականտի Յանձնախումբ՝ Տօքթ.
Ա. Սալբի, Անտոն Թելեան, Լեւոն Շիրին-
եան, Վահրամ Չերչեան

Մամուլի Յանձնախումբ՝ Հայր Յակո-
բոս Բօսպըլըքեան, Քրիս Ֆէնէրճեան, Մը-
կըրտիչ Պարսամեան, Ալեքս Սարուխան

Հայ Օգնութեան Մարմինի վարչու-
թեան մէջ ներկայացուցիչ՝ Քրիս Ֆէնէրճ-
եան:

Այս կազմի գլխաւոր իրականացում-
ներէն եղան՝ Իգմիրի Հայ Պօյ Սկաուտ-
ներու Միութեան եւ Սկիւտարի Հայ Մարմ-
նամարզարանի միացումները Հ.Մ.Ը.Մ.ին:
Զոյգ իրականացումներ, որոնք մեծապէս
նպաստեցին միութեան կառուցային հօ-
րացման:

Պոլսոյ շրջանի կեդրոնական գործու-
նէութեան մասին, մարզական եւ սկաու-
տական բաժիններով, լայն արձանագրու-
թիւն տուած էինք Բ. մասի երրորդ գլուխին
տակ, նկատի ունենալով որ միութեան հիմ-
նադրութենէն ետք Պոլսոյ մասնաճիւղերու
եւ կեդրոնի գործունէութիւնները սերտօրէն
համադրուած են եւ յաճախ կեդրոն մաս-
նաճիւղ գործակցութեամբ իրականացած են,
մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան դադ-
րիլը՝ 1922ի Սեպտեմբերին:

Այս կարգի ընթացիկ կամ յատուկ
նպատակներու ծառայող աշխատանքները
գործադրուեցան Կեդրոնական Վարչութիւն-
ներու ուղղակի հսկողութեամբ:

Այս բաժնին տակ կարելի է աւելցնել՝
Կեդրոնական Վարչութեան կազմակերպած՝
27 Յունիս, 1920-ի «Որբերու Օր»ուան հան-
գանակութիւնը, սկաուտական ընդհանուր
դրօշակի միօրինակ ձեւը, Հայաստանի Հան-
րապետութեան հռչակման երկրորդ տարե-
դարձին առթիւ վարչութեան կողմէ շնոր-
հաւորական գիրի մը ներկայացումը Պոլսոյ
մէջ Հայաստանի Հանրապետութեան ներ-
կայացուցիչ Պ. Թահթաճեանին, Կեդրոնի

կողմէ կազմակերպուած սկաուտական եւ մարզական գոյքերու վաճառքի կազմակերպութիւնը Հայկ Ճիզմէճեանի հսկողութեամբ, 1 Մայիս 1921-ի Չատուկուան Օրուան առթիւ սկաուտներու կողմէ կազմակերպուած գոգարտաբաշխութեան արշաւը, որմէ գոյացած գումարը՝ 2525 ոսկի եւ 78 ու կէս դրշ. յատկացուեցաւ որբ սկաուտներու տարազաւորման, աստիճանաւոր սկաուտներու կողմէ պատրաստուած ձեռային աշխատանքներու հաւաքը Հայաստան դըրկընելու համար, Հայրենիքի Օգնութեան Մարմինին յանձնուած 24 հակ հին հագուստներու եւ 2000 տուփ կաթի պահպանումը:

Պոլսոյ կեդրոնի գործունէութեան դադրեցումէն անմիջապէս ետք, Նիւ Եորքի մէջ, 1922-ի աշնան, Տիգրան Խոյեանի նախաձեռնութեամբ կազմուած առժամեայ կեդրոնական Վարչութիւնը շատ կարճ եւ անուանական կեանք մը միայն ունեցած է: Հետեւաբար, որպէս կեդրոնական գործունէութիւն որեւէ դրական արդիւնք չէ ունեցած:

ՓԱՐԻՉ

1931ին, Փարիզի մէջ կայացած համագաղութային Առաջին Պատգամաւորական ժողովէն ընտրուած կեդրոնական Վարչութիւնը կը ներկայանար հետեւեալ կազմով.

- Լեւոն Կիւմիւլչկերտան՝ ատենապետ
- Լ. Բաշալեան
- Տօքթ. Լ. Գրիգորեան
- Չ. Ռանգատեան
- Ներսէս Օհանեան
- Ն. Գարայեան
- Աւետիս Չաքրեան
- Ժողովը ընտրեց նաեւ սկաուտական վերին մարմին մը՝ հետեւեալ կազմով.
- Վահան Փաստրմաճեան՝ ատենապետ
- Գրիգոր Յակոբեան՝ ազգային պետ

Օննիկ Եազմաճեան
Գառնիկ Յովհաննէսեան
Յովհաննէս Պապէսեան
Տիկին Էլլէն Բիւզանդ
Հայկազ Աբէլեան՝ Շրջանային Սկաուտ խմբապետ:

Կեդրոնական Վարչութիւնը՝ համագաղութային Հ.Մ.Ը.Մ.ական կազմակերպչական, մարզական եւ սկաուտական գործունէութիւնը վարեց իր ընտրութենէն մինչեւ առաջին տարուան վերջաւորութիւնը:

Կեդրոնական Վարչութիւնը կապ հաստատեց սփիւռքի տարածքին գործող բոլոր շրջաններուն եւ մասնաճիւղերուն հետ՝ կանոնադրային բոլոր տրամադրութիւններու կատարեալ գործադրութեամբ: Յաջողագոյն կապեր հաստատուեցան յատկապէս պալքանեան երկիրներու եւ Մերձաւոր Արեւելքի շրջաններուն հետ:

Այս գործունէութեան յաջող ընթացքը, դժբախտաբար, կանգ պիտի առնէր միամեայ շրջանէ մը ետք: Չանազան պատճառներ՝ տնտեսական տագնապ եւ ներքին անհասկացողութիւններ վերջ դրին այս ընթացքին եւ կեդրոնական Վարչութիւնը դադրեցաւ գործելէ, ու անուանական գոյութիւն մը միայն պահեց:

Այսուհանդերձ, շրջաններէն ոմանք ժամանակ մը եւս շարունակեցին ընդունիլ Փարիզի կեդրոնական Վարչութեան հեղինակութիւնը, ինչպէս՝ Սուրիան եւ Լիբանանը, Արժանթինը, Պրագիլը, եւայլն: Ուրիշներ, անդրադառնալով կացութեան իրողութեան, ծրագրեցին նոր կեդրոնի կազմութիւն այլ վայրերու մէջ, ինչպէս՝ Պուլկարիան: Իսկ Միացեալ Նահանգներու մասնաճիւղերը, 1934-ի Յունիս 6-ի Շըրջանային Պատգամաւորական իրենց ժողովի ընթացքին, նիւթ դարձուցին վերոյիշեալ պարագան, եւ մերժելով ճանչնալ Փարիզի կեդրոնը, փորձեցին ձեռք առնել կեդրոնի դերը՝ անջատողական տրամադրութիւններով եւ կեդրոնը քաղաքական կուսակցու-

թիւններու հակամարտութեան որպէս թատրամբաստանելով:

Փորձը, բնականաբար, պիտի ձախողէր նկատի ունենալով, որ Ֆիլատելֆիայի նման կարեւոր մասնաճիւղ մը՝ գլխաւորութեամբ Տիգրան Սոյեանի՝ դէմ էր նման ծրագրի մը եւ մանաւանդ այն պատճառով, որ Միացեալ Նահանգներէն դուրս որեւէ շրջան կամ մասնաճիւղ նպաստաւոր կեցողածք չէր կրնար ունենալ նման ծրագրի մը հանդէպ:

Փարիզի Կեդրոնական Վարչութեան գործակից՝ Սկաուտական Վերին Մարմինը աւելի գործունէայ եղաւ եւ, յատկապէս սկաուտական ճիւղի վերաբերեալ հարցերու պարագային, շարունակեց իր կապերը շրջաններու հետ, երբեմն փոխարինելով Կեդրոնական Վարչութեան պատկանող իրաւասութիւններ:

Սկաուտական Վերին Մարմինի նիստերը շարունակուեցան կանոնաւորութեամբ: Մարմինը՝ 1932-ին հրատարակեց սկաուտական ընդհանուր կանոնագրութիւնը եւ յատկապէս շարունակեց հրատարակել միութեան պաշտօնաթերթ՝ «Հայ Սկաուտ»ը, որ հակառակ տնտեսական շատ դժուարին պայմաններուն, շրջաններուն միջեւ կապի մը դերը շարունակեց խաղալ՝ մինչեւ 1936 թուականը: Սկաուտական Վերին Մարմինը նաեւ իր վերապահ տեսակէտը պարզեց Հ.Մ.Ը.Մ.-Հայ Արի գործակցութեան նկատմամբ. Հայ Արիներու կազմակերպութիւնը ուղղակի կապեր հաստատելով մասնաճիւղերու հետ, կը փորձէր Հ.Մ.Ը.Մ.ի մարզական եւ սկաուտական ճիւղերու բաժանումը որդեգրել տալ շրջաններուն:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ
ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱ, ՖՐԱՆՍԱ
- ՊՈՒԼԿԱՐԻԱ
- ՌՈՒՄԱՆԻԱ
- ՅՈՒՆԱՍՏԱՆ
- ՍՈՒՐԻԱ, ԼԻԲԱՆԱՆ, ՊԱՂԵՍՏԻՆ ԵՒ ՅՈՐԴԱՆԱՆ
- ԵԳԻՊՏՈՍ

Եթէ Հ.Մ.Ը.Մ.ի կառուցային բուրգի կազմաւորման նիւթն ու շաղախը իր անդամներն ու մասնաճիւղերն են, ապա նոյն կառոյցի լծակը Շրջաններն են, իրենց Շրջանային Վարչութիւններով եւ շրջանային գործունէութեամբ: Շրջանային Վարչութիւններն են եղած անմիջական հսկիչը մասնաճիւղերու գործունէութեան եւ կանոնադրի անշեղ գործադրութեամբ՝ անոնց բարւոք ընթացքին: Շրջանային Վարչութիւններու միջոցով է, որ Հ.Մ.Ը.Մ. ականջանցը կը կապուի ընդհանուր Կեդրոնին՝ որպէս կառոյցի գերագոյն մարմին:

Այս իմաստով, իւրաքանչիւր երկրի Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններու մասին խօսելով թուեցինք անոնց շրջանային կազմաւորման եւ շրջանային գործունէութեան փուլերը: Ներկայ գլուխին տակ, անգամ մը եւս, ամփոփ ձեւով եւ ժամանակագրական շարքով կ'արձանագրենք Շրջանային Պատգամաւորական Ժողովներու ժապաւէնը եւ Շրջանային Վարչութիւններու կազմերու ցանկը:

Ինչ կը վերաբերի Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի միացեալ Շրջանի կազմութեան եւ Պատգամաւորական Ժողովներուն՝ այդ մասին մեր արձանագրութիւնները պիտի ըլլան աւելի մանրամասն, տրուած ըլլալով որ իւրաքանչիւր երկրի յատուկ բաժիններուն մէջ արձանագրութիւններ չունեցանք:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱ-ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ներու անդրանիկ Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ Փարիզի մէջ՝ 17 Սեպտեմբեր, 1927ին: Նկատի ունենալով, որ ժողովին հրահրուած էր նաեւ Պրիւքսելի Հ.Մ. Ը.Մ.ի մասնաճիւղը, սոյն ժողովը կոչուեցաւ Արեւմտեան Եւրոպայի Շրջանային Պատգամաւորական Ժողով, եւ ժողովէն ընտրեալ

վարչութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Եւրոպայի Վարչութիւն:

Ժողովին նախորդող գիշերը, Փարիզի եւ Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.ներու նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ նախապատրաստական հանդիպում մը, զոյգ մասնաճիւղերու եւ Հայ Օգնութեան Կոմիտէի (ՀՕԿ) 7 մարզական միութիւններու ներկայացուցիչներուն միջեւ: Վերջիններուն հետ արդէն սկզբունքային համաձայնութիւն մը գոյացած էր որպէսզի անոնք միանան Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին եւ այնուհետեւ գործեն որպէս Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր: Այս հանդիպումը եզրափակուեցաւ երկուստեք կազմուած բանաձեւով մը, որ ներկայացուեցաւ 17 Սեպտեմբերի Շրջանային Ժողովին: Նոյն ձեւով, Փարիզի Հայ Մարմնամարզականը միացաւ Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին:

Այս անդրանիկ Շրջանային Պատգամաւորական Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալ լիազօր պատգամաւորները.

Հ.Մ.Ը.Մ. Մարսէյ՝ Յ. Սաաթճեան, Մ. Տէրտէրեան, Մ. Մալումեան, Ժ. Եաղմուրեան, Ք. Ժպտունի, Հ. Աբէլեան եւ Աթթարեան

Հ.Մ.Ը.Մ. Փարիզ՝ Բօլ Համբարձումեան, Գ. Գնդունի եւ Յ. Պօղոսեան

Հ.Մ.Ը.Մ. Ռօնի Սու Պուա՝ Դարբինեան

Հ.Մ.Ը.Մ. Վիէն՝ Ա. Արեւեան

Հ.Մ.Ը.Մ. Ժուանվիլ՝ Տօքթ. Հանչեր եւ Կարօ Ուշագլեան

Հ.Մ.Ը.Մ. Պուա Գօլօմպ՝ Մ. Տէմիրճեան

Հ.Մ.Ը.Մ. Շաւիլ-Վիրօֆլէ՝ Տէր Ստեփանեան

ՀՕԿ Լիոն՝ Յ. Պօյաճեան

ՀՕԿ Պէլվիլ՝ Գ. Թահմազեան

ՀՕԿ Սէն Շամոն՝ Յ. Պօյաճեան

ՀՕԿ Բրիվա՝ Յ. Քարակիւլեան

ՀՕԿ Մարսէլ՝ Ս. Քարեան

ՀՕԿ Կանսէյ՝ Տէր Միքայէլեան:

Պատգամաւորական ժողովին դիւանի անդամներ ընտրուեցան՝ ատենապետ՝ Յ. Սաաթճեան եւ ատենադպիրներ՝ Քերովբէ Ժպտունի եւ Յ. Պոյաճեան:

Ժողովը յաջորդական երեք նիստերով քննեց օրակարգի նիւթերը, որմէ ետք ընտրեց Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Եւրոպայի անդրանիկ Շրջանային Վարչութիւնը՝ բաղկացած հետեւեալ անդամներէն. Հրանդ Ճէվահիրճեան, Բօլ Համբարձումեան, Սեդրակ Քարեան, Քերովբէ Ժպտունի, Կարօ Ուշագլեան, Հայկազն Աբէլեան եւ Մկրտիչ Մալումեան:

Վերոյիշեալ Շրջանային Վարչութիւնը իր յաջորդները չունեցաւ եւ փոխարինուեցաւ Փարիզի կամ Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ներու Շրջանային Վարչական կազմերով, ինչպէս տեսանք Գ. Մասի երկրորդ գլուխին տակ:

Փարիզի Շրջանային Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ 21-23 Դեկտեմբեր, 1929ին: Այս ժողովէն ընտրուած Փարիզի Շրջանային Վարչութիւնը կը բաղկանար հետեւեալներէն.

- Ատենապետ՝ Ներսէս Օհանեան
- Փոխ-ատենապետ՝ Գառլօ Պետրոսեան
- Քարտուղար՝ Հմայեակ Մատթէոսեան
- Գանձապահ՝ Համբարձում Զահրէճեան
- Հաշուեքննիչ՝ Սարգիս Ճէպպարեան
- Անդամներ՝ Գրիգոր Յակոբեան
- Գառնիկ Յովհաննէսեան
- Խաչիկ Գասպարեան
- Կարօ Ուշագլեան:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Շրջանի առաջին Պատգամաւորական Ժողովը տեղի կ'ունենայ 26 հոկտեմբեր, 1924ին, Բլովտիվի մէջ: Այս ժողովէն ընտրուած անդրանիկ վարչական կազմը կը բաղկանայ հետեւեալներէն.

Ատենապետ՝ Տօքթ. Թոմաս Թոմասեան
Ատենադպիր՝ Կարօ Ղազարոսեան
(Մեհեան)

Գանձապահ՝ Մինաս Միքայէլեան
Խորհրդական՝ Թագուր Թագուրեան,
Ներսէս Աստուածատուրեան, Կարապետ Ղ. Փափագեան եւ Հայկունի Քիրիշեան:

1930ի Յունուար 7ին, Շրջանային Պատգամաւորական Ժողովը տեղի կ'ունենայ Սոֆիայի մէջ: Շրջանային Վարչութիւններու յաջորդական կազմերուն ատենապետութեան պաշտօնը վարած են՝ Կարօ Ղազարոսեան, Յ. Մալխասեան եւ Ներսէս Աստուածատուրեան՝ մինչեւ 1936ի ամառը: 1936ի Յուլիսէն սկսեալ, Շրջանային Վարչութեան կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Տօքթ. Պերճ Հաճօլեան
Բ. ատենապետ՝ Արշակ Զագէեան
Ատենադպիր՝ Կարօ Զիվիճեան
Գանձապահ՝ Բարթող Մինասեան
Մարզական պատասխանատու՝ Յովսէփ Երեմեան — [ԺԱ. 193]:

ՌՈՒՄԱՆԻԱ

30 Սեպտեմբեր, 1923ին, Պուքրէշի մէջ տեղի կ'ունենայ Ռումանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու առաջին Շրջանային Ներկայացուցչական Ժողովը: Այս ժողովէն ընտրուած Շրջանային Վարչութիւնը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը.

Ատենապետ՝ Տօքթ. Ա. Սալբի
Ատենադպիր՝ Շ. Կիւրճեան
Գանձապահ՝ Վահէ Տիրատուրեան
Հաշուապահ՝ Յ. Գ. Աթանասեան
Խորհրդական՝ Յ. Ճ. Սիրունի:

Վերոյիշեալ վարչութիւնը կը գործէ մէկ տարի:

15-18 Օգոստոս, 1924ին, Գոնսթանցայի մէջ կը գումարուի Ռումանիոյ երկրորդ Շրջանային Ներկայացուցչական Ժո-

ՍՈՒՐԻԱ, ԼԻԲԱՆԱՆ,
ՊԱՂԵՍՏԻՆ ԵՒ ՅՈՐԴԱՆԱՆ

Սուրիոյ եւ Լիբանանի՝ հետզհետէ բազմացող մասնաճիւղերու գործունէութիւնը համադրելու նպատակով, 1927ին, Պէյրուսի մէջ կը կազմուի առժամեայ Շրջանային Յանձնախումբ մը՝ ատենապետութեամբ Յակոբ Հայրապետեանի եւ ատենադպրութեամբ Ժիրայր Պալեանի:

2 Մարտ, 1928 թուականակիր իր նամակով, Հալէպի վարչութիւնը Պէյրուսի մասնաճիւղին կ'առաջարկէ պատգամաւորական ժողով գումարել եւ կազմել շրջանային վարչութիւն: Պէյրուսը՝ իր 8 Մարտ, 1928 թուականակիր նամակով տակաւին կանխահաս կը համարէ այդ իրականացումը:

Տարի մը ետք, Դամասկոսի մասնաճիւղին ուղղուած, իր 9 Մարտ, 1929 թուակա-



Սուրիոյ եւ Լիբանանի Առաջին Պատգամաւորական Ժողովի անդամները Պէյրուս Ապրիլ 1929:
Զախէն-աջ նստած՝ Յակոբ Գասապեան, Յովհաննէս Պոյաճեան, Միհրան Կարապետեան,
Գրիգոր Գարայեան, Սուրէն Գալէնտէրեան եւ Օննիկ Պէօճեքեան.
Ոտքի՝ Ալպէր Յակոբեան, Իշխան Խաչատուրեան, Լուտեր Մասպանաճեան, Վահան Ղազէրեան,
Արամ Բիրտեան, Գեղամ Աքկիլեան, Վահրամ Չոքիարեան, Ներսէս Գազազեան,
Լեւոն Պապիկեան կամ Հայկ Ղազարեան:

նակիր նամակով, Պէյրուսի մասնաճիւղը Սբ. Չատուկայ առթիւ միջ-մասնաճիւղային ֆուլթայուլի մրցումներու կը հրաւիրէ Դամասկոսի խումբը, ինչպէս նաեւ Հալէպի խումբը, առաջարկելով որ մրցումներուն առընթեր խորհրդակցութիւն կատարուի Շրջանային վարչութեան մը կազմութեան մասին: Նոյնիմաստ հրաւէր մը կ'ուղղուի նաեւ Հալէպի մասնաճիւղին: 26 Մարտ, 1929 թուականակիր նամակով պատգամաւորական ժողովի կը հրաւիրէ նաեւ Լաթաքիոյ մասնաճիւղը, յայտնելով որ ժողովի թուական ճշդուած է 31 Մարտ, 1929ը:

Այս ձեւով Սուրիոյ եւ Լիբանանի անդրանիկ Պատգամաւորական ժողովը տեղի կ'ունենայ Պէյրուսի մէջ, 31 Մարտ եւ 1 Ապրիլ, 1929ին, մասնակցութեամբ՝ Պէյրուսի, Հալէպի, Դամասկոսի, Չահլէի եւ Լաթաքիոյ մասնաճիւղերու հետեւեալ պատգամաւորներուն.

Հալէպ՝ Լուտեր Մասպանաճեան, Տօքթ. Յակոբ Գասապեան, Միհրան Կարապետեան, Սուրէն Գալէնտէր, Գեղամ Ա. քիւլեան եւ Գրիգոր Գարայեան

Պէյրուս՝ Ալպէր Յակոբեան, Օննիկ Պէօճէքեան, Վահան Ղազէրեան, Արամ Քիւրտեան եւ Վահրամ Չոքկարեան

Դամասկոս՝ Յովհաննէս Պոյաճեան

Չահլէ՝ Ներսէս Գազազեան

Լաթաքիա՝ Հայկ Ղազարեան եւ Իշխան Պաշատուրեան:

Դժբախտաբար, այս Պատգամաւորական ժողովէն ընտրուած Շրջանային վարչութիւնը չկարողացաւ անմիջապէս գործի լծուիլ՝ Պատգամաւորական ժողովի դիւանին կողմէ առաջին նիստի մը հրաւէրին ուշացման, ընտրուած անդամներէն ոմանց քաղաքէն մեկնումին եւ այլ պատճառներով: Առ այդ, հարկ եղաւ վարչական անդամներու կազմը վերատեսուցեան ենթարկել եւ Շրջանային նորակազմ առաջին վարչութեան անդրանիկ նիստը կայացաւ 17

Յունուար, 1930ին, Տաճատ Սրապեանի բնակարանին մէջ: Կազմի անդամները ընտրեցին Շրջանային վարչութեան դիւանը՝ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Տօքթ. Ալեքսան Պէզճեան
Ատենադպիր՝ Վահան Թորոսեան
Գանձապահ՝ Տաճատ Սրապեան
Շուէտական մարզանքի եւ սկաուտ խմբապետ՝ Սիմոն Թերճանեան

Աթլեթիք խմբապետ՝ Խորէն Սուքիասեան, օգնական՝ Յակոբ Աւագեան

Խորհրդական՝ Տօքթ. Յակոբ Գասապեան:

Շրջանային Պատգամաւորական Բ. ժողովը տեղի կ'ունենայ 28 Յունիս, 1931ին, Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին մէջ, մասնակցութեամբ՝ Պէյրուսի, Հալէպի, Դամասկոսի, Թրիփոլիի, Պաալպէքի եւ Լաթաքիայի մասնաճիւղերու պատգամաւորներուն, ինչպէս նաեւ՝ Շրջանային վարչութեան ներկայացուցիչին, Շրջ. աթլեթիք խմբապետին եւ Շրջ. սկաուտ խմբապետին: Ընդհանուրը՝ 19 լիազօր պատգամաւորներով, եւ հետեւեալ բաժանումներով.

Հալէպ՝ Լուտեր Մասպանաճեան, Վահրամ Չոքկարեան, Ոսկան Պոյաճեան, եւ Ռուբէն Մովսիսազալեան

Դամասկոս՝ Յովհաննէս Պոյաճեան, Կարապետ Թոքաթլեան, Աւետիս Լոշխաճեան եւ Բիւզանդ Միսաւետիքեան

Լաթաքիա՝ Սուրէն Բարախեան

Թրիփոլի՝ Հայկազ Աթմաճեան

Պաալպէք՝ Պօղոս Շահինեան

Պէյրուս՝ Ալպէր Յակոբեան, Օննիկ Սերոբեան, Մանուկ Տէօվլէթեան, Կարապետ Պատուհասեան, Թադէոս Գարազալբաքեան

Շրջանային վարչութիւն՝ Տօքթ. Արմենակ Պէզճեան

Աթլեթիք շրջ. խմբապետ՝ Խորէն Սուքիասեան

Սկսուտ շրջ. խմբապետ՝ Սիմոն Թեր-
ճանեան:

Ժողովի օրակարգերն են՝

- Դիւանի ընտրութիւն
- Նախորդ Շրջանային Ժողովի ատե-
նագրութեան ընթերցում եւ վաւերացում
- Նախորդ շրջանի գործունէութեան
տեղեկագրի ընթերցում եւ քննութիւն
- Մասնաճիւղերու գործունէութեանց
ընթերցում
- Մեր կապը քոյր Շրջաններու հետ՝
Պաղեստին, Կիպրոս, Եգիպտոս եւ Յու-
նաստան
- Մեր վերաբերումը հայ վարժարան-
ներու հանդէպ

- Փրօփականտի հարց
- Մարզական եւ սկսուտական հարցեր
- Տարազի հարց
- Ազգային դրօշակի հարց
- Հ.Մ.Ը.Մ. ո՞ր տօներուն կրնայ
մասնակցիլ
- Հաշուեկշիռի քննութիւն
- Մեր դիրքը անջատ մարզական միու-
թիւններուն եւ Լիկային հանդէպ
- Կեդրոնական Վարչութեան կազմու-
թեան հարց
- Նախահաշիւ պիւտճէ
- Մասնագէտ վարիչներու հարց
- Տեղական ֆէտէրասիօնի հարց



Սուրիոյ եւ Լիբանանի Պատգամատրական Բ. Ժողովի անդամներ՝ Պէյրուի 28 Յունիս, 1931

- Սկսուա վարիչ մը բերելու հարց
- Հիմնադրամ
- Թրիփոլիի հարց
- Նոր մասնաճիւղերու հիմնադրութեան հարց:

- Պատուակալ նախագահ
- Նոր Շրջանային Վարչութեան ընտրութիւն:

Ժողովի դիւանի անդամներ ընտրուեցան՝

Նախագահ՝ Աւետիս Լոշխաճեան
 Քարտուղար՝ Սուրէն Բաբախեան:

Ժողովը՝ շրջանաւարտ վարչութեան գործունէութեան մասին քուէարկեց հետեւեալ բանաձեւը. «Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի եւ Սուրիոյ Երջանային Վարչութեան մէկու-կէս տարուայ գործունէութիւնը թէւ յուսացուած արդիւնքը չէ տուած, սակայն նկատի առնելով անոր նոր կազմուած ըլլալու հանգամանքը եւ նիւթական խիստ անձուկ կացութիւնը, Երջանային ժողովը անոր տարած աշխատանքը կը գտնէ բարար եւ գոհացուցիչ»:

Գաղտնի քուէարկութեամբ, նոր Շրջանային Վարչութեան անդամներ ընտրուեցան՝ Տօքթ. Ալեքսան Պէզճեան, Հայկ Գալենտէր, Խորէն Սուքիասեան, Սիմոն Թերճանեան, Գէորգ Սազճեան, Ալպէր Յակոբեան եւ Սուրէն Բաբախեան: Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանի պատուակալ նախագահ՝ Գասպար Իփէկեան:

Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Երրորդ Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ 2էն 4 Յուլիս, 1933ին, Պէյրութի Սբ. Նշան Ազգային Վարժարանի սրահին մէջ, մասնակցութեամբ՝ Պէյրութի, Հալէպի, Դամասկոսի, Լաթաքիոյ, Թրիփոլիի, Զահլէի, Անտիոքի եւ Ալեքսանտրէթի մասնաճիւղերու պատգամաւորներուն: Կը բացակայէին Հոմսի եւ Քրըք Պանի պատգամաւորները:

Լիազօր պատգամաւորներու ցանկը կը ներկայանար հետեւեալ ձեւով.

Շրջ. Վարչութեան ներկայացուցիչ՝
 Սուրէն Բաբախեան

Պէյրութ՝ Օննիկ Պէօճէքեան, Արտաւազդ Հաճեան, Թադէ Գարագալբաքեան, Վահան Թորոսեան

Հալէպ՝ Կարպիս Պետիկեան, Նշան Թիւլսիւզեան, Ատրուշան Իւլիւպէյեան՝ որ կը փոխարինէր հետեւեալ բացականերէն մին. Ատուր Գապագեան, Յակոբ Գասապեան, Միսաք Պըժեան

Դամասկոս՝ Անտոն Աւետեան, Կարապետ Թոքաթլեան, բացակայ՝ Յովհաննէս Թնճուկեան

Լաթաքիա՝ Միսաք Ալապօզանեան
 Թրիփոլի՝ Հայկազ Աթմաճեան
 Զահլէ՝ Հրանդ Լամբաճեան
 Անտիոք՝ Գէորգ Թոփճեան
 Ալեքսանտրէթ՝ Պարգեւ Շամլեան:

Շրջանային ժողովի դիւանի անդամներ ընտրուեցան՝

Նախագահներ՝ Օննիկ Պէօճէքեան եւ Թադէ Գարագալբաքեան

Քարտուղարներ՝ Կարապետ Թոքաթլեան եւ Վահան Թորոսեան:

Ժողովի օրակարգերուն մաս կը կազմէին՝

- Դիւանի ընտրութիւն եւ պատգամաւորներու լիազօրագրերու քննութիւն
- Անցնող շրջանի գործունէութիւն. գրաւոր տեղեկագիր Շրջ. Վարչութեան, գրաւոր տեղեկագիր մասնաճիւղերու
- Մեր կապը քոյր Շրջաններու հետ
- Մեր կապը ազգային եւ մասնաւոր վարժարաններու հետ
- Մեր դիրքը հանդէպ անջատ հայ մարզական միութիւններու
- Կեդրոնական Վարչութեան հարց
- Մասնաճիւղերու վճարելիք ցենզը Շրջանային Վարչութեան
- Պիւտճէ

- Ֆէտէրասիոններու մասնակցելու հարց:
 - Չանազաններ եւ մասնաճիւղերէ եկած առաջարկներ
 - Ընտրութիւն նոր Շրջանային Վարչութեան եւ քննիչ յանձնախումբի
 - Շրջանային Վարչութեան վայրը:
- Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Կրդ. Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ Պէյրութի մէջ, 13 Յուլիս, 1935ին, հետեւեալ օրակարգով.
- Լիազօրագրերու ստուգում
 - Դիւանի ընտրութիւն
 - Շրջ. Վարչութեան եւ մասնաճիւղերու տեղեկագրեր
 - Կապ քոյր մասնաճիւղերու հետ
 - Կապ Ազգային վարժարաններու հետ
 - Դիրք այլ մարզական միութիւններու հանդէպ
 - Մասնաճիւղերու դիրքը Շրջանային Վարչութեան հանդէպ
 - Պիւտճէ-ցեւեղեր
 - Փրօփականտ
 - Սկաուտական, մարզական եւ Ֆութպոլի հարցեր
 - Հիմնադրամ
 - Մասնագէտներու խնդիր
 - Հ.Մ.Ը.Մ.ի Օր
 - Շրջաններէ եկած օրակարգեր
 - Ընտրութիւն Շրջանային Վարչութեան:

Վերոյիշեալ ժողովէն՝ Շրջանային Վարչութեան անդամ կ'ընտրուին. Տօքթ. Բենիամին Գուլաքեան, Տօքթ. Արամ Պաղտասարեան, Խորէն Սուքիասեան, Սիմոն Թերճանեան, Օննիկ Պէօճէքեան, Գէորգ Սաբրճեան եւ Եղիշէ Մանուկեան:

Շրջանի Կրդ. Պատգամաւորական Ժողովը տեղի կ'ունենայ Պէյրութի մէջ, 10 Յուլիս, 1937ին:

- Ժողովի օրակարգերն են՝
- Լիազօրագրերու ստուգում
- Դիւանի ընտրութիւն
- Չեղուցումներ Շրջ. Վարչութեան եւ մասնաճիւղերու
- Փրօփականտ, բանաւոր եւ գրաւոր
- Կազմակերպչական՝ Ֆութպոլ, Աթլէթիզմ, Սկաուտիզմ
- Մասնաճիւղերու յարաբերութիւնը Շրջ. Վարչութեան հետ
- Կ. Վարչութեան հարց
- Մեր դիրքը ֆէտէրասիոններու հանդէպ
- Միջ-մասնաճիւղային ողիմպիական խաղեր
- Սկաուտական ճէմպօրի
- Մասնագէտներու հարց
- Շրջաններէն եկած առաջարկներ
- Պիւտճէ-ցեւեղեր
- Ընտրութիւն Շրջանային Վարչութեան:

Այս ժողովէն ընտրուած Շրջանային Վարչութեան մաս կազմած են՝ Ատենապետ՝ Օննիկ Պէօճէքեան
Ատենադպիր՝ Թադէ Գարազալբաքեան
Գանձապահ՝ Ալպէր Յակօբեան
Հաշուապահ՝ Խորէն Սուքիասեան:
Մարզ. պատասխանատու՝ Օննիկ Փիլիկեան:

17 Հոկտեմբեր, 1937ին, Հալէպի մէջ կը կայանայ Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային բացառիկ Պատգամաւորական Ժողով, միակ օրակարգ ունենալով՝ Հ.Մ.Ը.Մ.— Հայ Արի միացման հարցի քննութիւնը:

Այս ժողովը նախապատերազմեան շրջանի վերջինը պիտի ըլլար եւ մաս չկազմեց երկամեայ յաջորդականութեամբ պատգամաւորական ժողովներու ընթացիկ շարքին:

Յաջորդ՝ ճրգ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը պիտի կայանար Պէյրուսի մէջ, 1940ին:

ԵԳԻՊՏՈՍ

Աղեքսանդրիոյ մասնաճիւղի կազմութիւնէն ետք, Եգիպտոսի Շրջանի՝ Հելիոպոլիսի եւ Գահիրէի մասնաճիւղերու կազմութեան առընթեր, 13 Մայիս, 1927ին, կազմուեցաւ նաեւ Եգիպտոսի անդրանիկ

Շրջանային Վարչութիւնը՝ բաղկացած հետեւեալներէն.

Ատենապետ՝ Սարգիս Պողիկեան
Փոխ-ատենապետ՝ Վ. Սելեան
Ատենադպիր՝ Վ. Դերձակեան
Փոխ-ատենադպիր՝ Վահէ Շահրիման
Գանձապետ՝ Գ. Արեան

Ժամանակի ընթացքին, Եգիպտոսի Շրջանային Վարչութիւնը նստավայր ունեցած է մերթ Գահիրէն, ու մերթ Աղեքսանդրիան:

Դ. ՄԱՍ

ԶՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

- ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
- ՖՐԱՆՍԱ
- ՊՈՒԼԿԱՐԻԱ, ՌՈՒՄԱՆԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ
- ՍՈՒՐԻԱ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ
- ՊԱՂԵՍՏԻՆ

Ինչպէս նախորդ գլուխին տակ, ներկայ՝ չորրորդ գլուխի գլխաւոր նիւթը պիտի ըլլայ Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի շրջանային գործունէութեանց բաժինը, յատկապէս՝ Հալէպի եւ Պէյրութի մէջ կազմակերպուած Զատկական Միջ-մասնաճիւղային խաղերը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու շրջանային գործունէութեան առանցքը կը կազմեն Ամերիկահայ Ողիմպիական Խաղերը, որոնք նախաձեռնութիւնը պիտի ըլլային Նիւ Եորքի մասնաճիւղին, 1922ի Սեպտեմբերէն սկսեալ:

Յաջորդող տարիներուն, նոյն խաղերու շարքը կը շարունակուի տարեկան հերթականութեամբ, մինչեւ 1927, Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ՝ մինչեւ 5րդ տարին: Այս շարքի ակամայ դադարէն ետք, 1933ին, Ֆիլատելֆիոյ մասնաճիւղն է, որ կը նախաձեռնէ 6րդ. Ամերիկահայ Ողիմպիական Խաղերու կազմակերպութեան:

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի մէջ՝ Փարիզի եւ շրջաններու գործունէութեան առանցքը դարձան Ֆուլթպոլի մրցաշարքերն ու աթլետիք մըրցումները:

Միջ-մասնաճիւղային Ֆուլթպոլի առաջին մրցաշարքը տեղի ունեցաւ 1928ին, ութը մասնաճիւղերու խումբերուն մասնակցութեամբ: Ախոյեանութեան բաժակին տիրացաւ Իթալիի մասնաճիւղը:

1929ին, նոյն մրցաշարքին ախոյեան հանդիսացաւ Սարսէլի մասնաճիւղի խումբը:

1930ին, «Ապագայ» թերթի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Ֆրանսահայ

բաժակի մրցաշարք՝ մասնակցութեամբ Փարիզի, Մարսէյի, Վիէնի, Հ.Մ.Ը.Մ.ներուն եւ Տորք խումբին: Ախոյեանութեան բաժակին տիրացաւ Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի կազմը:

1931ին, միջ-մասնաճիւղային Ֆուլթպոլի մրցաշարքերու վերջին ելոյթը տեղի ունեցաւ:

Ֆուլթպոլի կողքին, աթլետիք մրցումներու շարքը տեւեց մինչեւ 1935 թուականը, երբ Փարիզի կամ Ֆրանսայի Շըրջանային Վարչութիւնն ալ հետզհետէ դադարեցաւ իրողապէս գոյութիւն ունենալէ:

ՊՈՒԼԿԱՐԻԱ, ՌՈՒՄԱՆԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Պալքանեան երկիրներու՝ Պուլկարիոյ, Ռումանիոյ եւ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ներու Շրջանային Վարչութիւններու գործունէութիւններու մասին, աղբիւրներու ներած չափով, արդէն անդրադարձած ենք ներկայ հաստորի Գ. Մասի մէջ՝ իւրաքանչիւրը իր գլուխին տակ (Բ., Գ. եւ Դ.):

ՍՈՒՐԻԱ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ

Սուրիոյ եւ Լիբանանի միջ-մասնաճիւղային խաղեր

Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանի կազմութիւնը, ինչպէս նախապէս արձանագրեցինք, կը սկսի Սուրիոյ եւ Լիբանանի մէջ գործող հինգ մասնաճիւղերու մասնակցութեամբ՝ գործունէութեան որպէս գլխաւոր առանցք ունենալով Հալէպի եւ Պէյրութի մէջ կազմակերպուող Զատկական միջ-մասնաճիւղային առաջին Ֆուլթպոլի մրցումները:

Այս հանդիպումներուն առաջինը տեղի ունեցաւ 1927ին, Հալէպի մէջ, Պէյրութի եւ Հալէպի մասնաճիւղերու խումբերուն մի-

ջեւ, Շրջանային Վարչութեան կազմութենէն ալ առաջ, եւ որ՝ ընդհանուր շարքին մաս չկազմեց: Մրցումը տեղի ունեցաւ «Պաղտատ» շոգեկառքի կայարանի դաշտին վրայ, 2000ի հասնող բազմութեան մը ներկայութեան: Պէյրութի խումբը՝ 1ի դէմ 0 կողով յաղթանակը տարաւ եւ արժանացաւ Պէյրութի ԱԶԴԱԿ եռօրեայ թերթի տրամադրած բաժակին: Բաժակի տուչութիւնը կատարեց Տօքթ. Էրնեստ Ալթունեան:

Չատկական միջ-մասնաճիւղային առաջին մրցաշարքը տեղի ունեցաւ 15 Ապրիլ, 1928ին, մասնակցութեամբ՝ Հալէպի, Դամասկոսի եւ Պէյրութի մասնաճիւղերու խումբերուն: Խաղերը տեղի ունեցան Պէյրութի մէջ՝ Հ.Մ.Ը.Մ.ի նորակառոյց Ֆրրն Շպէքի դաշտին վրայ, շուրջ 1500 հանդիսականներու ներկայութեան:

Մրցաշարքի գտումի մրցումին ճակատեցան Պէյրութի եւ Դամասկոսի կազմերը: Աւարտականի մրցումին հասաւ Պէյրութի խումբը՝ 3ի դէմ 2 կողով պարտութեան մատնելէ ետք Դամասկոսի կազմը: Աւարտական մրցումին ճակատեցան Հալէպի եւ Պէյրութի կազմերը: Պէյրութ կրկին յաղթանակը ապահովելով տիրացաւ Խաչատուր Շահէն հաստատութեան տրամադրած բաժակին, արդիւնք՝ 2-1: Բաժակի տուչութիւնը կատարեց Տիկին Արուսեակ Սրապեան, զայն յանձնելով Պէյրութի կազմի խմբապետ՝ Յ. Աճէմեանին:

30 եւ 31 Մարտ, 1929ին, կրկին Պէյրութի մէջ, տեղի ունեցան Չատկական երկրորդ միջ-մասնաճիւղային ֆութպոլի մրցաշարքի մրցումները Հալէպի, Դամասկոսի եւ Պէյրութի խումբերուն միջեւ: 31 Մարտի աւարտական մրցումին յաղթական հանդիսացաւ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի կազմը՝ տիրանալով ախոյեանութեան բաժակին:

Միջ-մասնաճիւղային Չատկական ֆութպոլի մրցաշարքերու Հալէպի մէջ կայացած առաջին ելոյթը եւ շարքին երրորդը տեղի ունեցաւ 1930ին:

*
* *

1931ի միջ-մասնաճիւղային ֆութպոլի մրցաշարքը կրկին վերադարձաւ՝ կայանալու համար Պէյրութի մէջ, ապրիլի 5ին եւ 6ին:

Մասնակցող մասնաճիւղերու խումբերը բաժնուած էին երկու դասակարգերու Ա. Դասակարգ՝ Պէյրութ, Հալէպ եւ Դամասկոս: Այս դասակարգին մէջ ախոյեանութեան տիրացաւ Պէյրութի մասնաճիւղի խումբը ստանալով Վ. Իւթիւճեանի կողմէ տրամադրուած բաժակը:

*
* *

27 եւ 28 Մարտ, 1932ին, Հալէպի մէջ տեղի ունեցան Սուրիոյ եւ Լիբանանի միջ-մասնաճիւղային 5րդ խաղերը: Աւանդութեան մէջ զօրացող այս խաղերուն իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալ մասնաճիւղերու ֆութպոլի խումբերը.

Ա. դասակարգ՝ Պէյրութ, Հալէպ եւ Դամասկոս:

Բ. Դասակարգ՝ Չահլէ, Պաալպէք, Ալեքսանտրէթ, Լաթաքիա եւ Թրիփոլի:

27 Մարտի՝ առաջին օրուայ գտումի մրցումները տուին հետեւեալ արդիւնքները.

- Դամասկոս յաղթեց Հալէպի՝ 2-1
- Չահլէ-Պաալպէք միացեալ եւ Ալեքսանտրէթ հաւասար մնացին՝ 0-0
- Լաթաքիա յաղթեց Թրիփոլիի՝ 4-1:
- 28 Մարտի աւարտական մրցումին Դամասկոս յաղթեց Պէյրութի՝ 3-0:

Չահլէ-Պաալպէք ընդէմ Ալեքսանտրէթի մրցումը կրկնուեցաւ եւ վերջ գտաւ առաջիններու յաղթանակով՝ 2-1:

Բ. դասակարգի աւարտական մրցումին Լաթաքիա յաղթեց Չահլէ-Պաալպէք հաւաքականին՝ 2-0 արդիւնքով:

Նաղերու վերջաւորութեան մրցումներու մասնակցող խումբերու 90 մարզիկներ տողանցեցին:

*
* *

Ա. դասակարգի ախոյեանութեան բաժակը Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի խմբապետին յանձնեց Տիկին Քալէնտէր, իսկ Բ. դասակարգի ախոյեանութեան բաժակը ստացաւ Լաթաքիայի խումբի խմբապետը, ձեռամբ Հալէպի մասնաճիւղի ատենադպիր՝ Միհրան Կարապետեանի:

1933ի միջ-մասնաճիւղային Չատկական խաղերուն՝ առաջին անգամ ըլլալով տողանցքի բաժնին մասնակցեցան նաեւ մասնաճիւղերու սկաուտական խումբերը:

Նաղերը տեղի ունեցան Հալէպի մէջ, 16 եւ 17 Ապրիլին: Ֆութպոլի մրցաշարքերուն մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի 10 մասնաճիւղերու կազմերը:

Առաջին օրուայ գտումի մրցումներուն, Բ. դասակարգի մէջ՝

- Անտիոք յաղթեց Թրիփոլիի՝ 1-0
- Ալեքսանտրէթ յաղթեց Չահլէի՝ 1-0
- Հոմս յաղթեց Քրըք Նանի՝ 1-0:
- Առաջին դասակարգի մէջ՝
- Դամասկոս յաղթեց Լաթաքիայի՝ 4-0
- Հալէպ յաղթեց Պէյրուսի՝ 5-0:

17 Ապրիլին, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի դաշտը նեղ կու գար 8000 հանդիսականներուն, որոնց կարգին՝ Հալէպի գինուորական եւ քաղաքային պաշտօնական անձնաւորութիւններ: Օրուայ թագուհին էր Տիկին Նաչատուր Շահէն, պատուոյ օրիորդներ՝ Երանիկ Ապաճեան եւ Մարի Լուիզ Յովակիմեան:

Ա. դասակարգի ախոյեանութեան տիրացաւ Դամասկոսի խումբը, որ 3-1 արդիւնքով յաղթեց Հալէպին եւ ստացաւ ախոյեանութեան բաժակը՝ տրամադրուած Տիկին Աթանասեանի կողմէ:

Աննախընթաց կերպով, ընդհանուր տողանցքին մասնակցեցան 300 մարզիկներ եւ սկաուտներ՝ ժողովրդական խանդավառութիւնը հասցնելով իր գագաթնակէտին:

1 եւ 2 Ապրիլ, 1934ին, Սբ. Չատկուայ տօներուն առթիւ, Հալէպի մէջ կազմակերպուեցան միջ-մասնաճիւղային ֆութպոլի մրցաշարքեր եւ ընդհանուր տողանցք՝ մասնակցութեամբ մարզիկներու եւ սկաուտական խումբերուն:

Ֆութպոլի մրցաշարքերուն մասնակցեցան Ա. դասակարգի՝ 4 եւ Բ. դասակարգի՝ 7 մասնաճիւղերու խումբեր: Չտումի մրցումները տուին հետեւեալ արդիւնքները.

- Ա. դասակարգ՝ Հալէպ յաղթեց Լաթաքիոյ՝ 6-1
- Դամասկոս յաղթեց Պէյրուսի՝ 10-0
- Բ. դասակարգ՝ Հոմս յաղթեց Ալեքսանտրէթի՝ 6-2
- Անտիոք յաղթեց Չահլէի՝ 4-2
- Թրիփոլի յաղթեց Քրըք Նանի՝ 1-0
- 2 Ապրիլի կիսաւարտականին, Պուրճ-Համուս յաղթեց Թրիփոլիի՝ 6-0
- Աւարտական մրցումներուն՝

- Ա. դասակարգ՝ Դամասկոս յաղթեց Հալէպի 4-1
- Բ. դասակարգ՝ Ալեքսանտրէթ յաղթեց Պուրճ-Համուսի՝ 1-0:

Ընդհանուր տողացնքէն ետք, որուն մասնակցեցան 145 մարզիկներ եւ 250 սկաուտներ, տեղի ունեցաւ բաժակներու տուչութիւն: Օրուայ թագուհի՝ Տիկին Աթանասեան Դամասկոսի խմբապետ Օննիկ Կէվրէկեանին յանձնեց Տիկին Նաչատուր Շահէնի տրամադրած բաժակը, մինչ Ալեքսանտրէթի խմբապետին կը յանձնուէր Տօքթ. Երուանդ Ծիտէճեանի տրամադրած բաժակը: Օրուայ պատուոյ օրիորդներն էին՝ Անահիտ Շահինեան, Երանիկ Ապաճեան, Մաքրուհի Չօպեան եւ Անի Թիւյսիւզեան:

*
* *

Միջ-մասնաճիւղին 8-րդ Չատկական հանդիպումները տեղի ունեցան Պէյրուսի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Ֆլորն Շպէքի մարզադաշտին վրայ, 21 եւ 22 Ապրիլ, 1935ին, հովանաւորութեամբ Լիբանանի Թեմի Կաթողիկոսական փոխանորդ Եղիշէ Արք. Կարոյեանի եւ ներկայութեամբ Երեսփոխան Վահրամ Լէյլէկեանի: Օրուայ թագուհին էր Տիկին Նարդուհի Մավիսաքալեան, պատուոյ օրիորդներ՝ Տիգրանուհի Շալվարճեան, Մելինէ Տէր Մելքոնեան եւ Նուարդ Տէմիրճեան:

Ա. օրուայ գտումի մրցումները տուին հետեւեալ արդիւնքները.

- Պէյրուսի եւ Հալէպի հաւասար՝ 2-2
- Դամասկոս յաղթեց Լաթաքիոյ՝ 9-0

Բ. օրուայ մրցումներուն Հալէպի մասնաճիւղը, աւելի հեռաւոր ըլլալուն, իբր աւարտական խումբ նկատի առնուեցաւ:

Ուղերը տուին հետեւեալ արդիւնքները.

Դամասկոս յաղթեց Հալէպին եւ տիրացաւ ախոյեանութեան բաժակին:

Յրդ դիրքին համար, Պէյրուսի յաղթեց Լաթաքիոյ՝ 4-1:

Ուղերու աւարտին տեղի ունեցաւ ընդհանուր տողանցք, ղեկավարութեամբ Շրջանային խմբապետ Սիմոն Թերճանեանի եւ մասնակցութեամբ 200 մարզիկներու եւ սկաուտներու, ինչպէս նաեւ Լիբանանի հեծիկի ախոյեաններ՝ Պալքճեան Եղբայրներու եւ Սէրայտարեանի:

1936ի Միջ-մասնաճիւղային 9րդ խաղերը տեղի ունեցան յատուկ դրութեամբ. միաժամանակ Պէյրուսի եւ Հալէպի մէջ՝ քաղաքական պատճառներու բերմամբ:

Այսպէս, Պէյրուսի մէջ Բ. դասակարգի մրցումը կատարուեցաւ Ռայաքի եւ

Պուրճ Համուտի խումբերուն միջեւ՝ վերջնոյս յաղթանակով, իսկ Ա. դասակարգի ախոյեանութեան համար մրցեցան Պէյրուսը եւ Դամասկոսը՝ վերջնոյս յաղթանակով:

Մինչդեռ, Հալէպի մէջ Բ. դասակարգի խումբերուն մրցաշարքը կատարուեցաւ Նոր Գիւղ, Քրք Խան եւ Անտիոք եռեակին միջեւ եւ ախոյեան հանդիսացաւ Նոր Գիւղի կազմը, իսկ Ա. դասակարգի ախոյեանութեան համար ճակատեցան Հալէպի, Լաթաքիոյ եւ Ալեքսանտրէթի կազմերը, եւ ախոյեան հանդիսացաւ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի խումբը:

Նախատեսուած էր որ զոյգ քաղաքներու Ա. դասի աւարտականներու յաղթականները իրար դէմ մրցին՝ վերջնական դասաւորման համար: Դժբախտաբար, հակառակ Շրջանային Վարչութեան բոլոր ճիգերուն, այս մրցումը Դամասկոսի եւ Հալէպի կազմերուն միջեւ՝ կարելի չըլլար իրականացնել մինչեւ 1938ի խաղերուն սկիզբը, երբ Շրջանային Վարչութեան որոշումով Հալէպի խումբը 1936ի ախոյեան կը հռչակուի եւ կը ստանայ յաղթանակի բաժակը:

*
* *

Չատկական միջ-մասնաճիւղային տասներորդ խաղերը տեղի ունեցան Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի դաշտին վրայ, 26 եւ 29 Մարտ, 1937ին: Փակման հանդիսութեան՝ օրուայ թագուհին էր Տիկին Միսաք Եավէրեան, պատուոյ օրիորդներ՝ Մաքրուհի Զօպեան եւ Մարլէն Մուրատեան: Շրջանային Վարչութիւնը, ելոյթի տասնամեակին առթիւ, յատուկ շուքով ուզեց կազմակերպել այս խաղերը: Տասներեք մասնաճիւղեր մասնակցեցան մրցումներուն:

Փութպոլի մրցաշարքերուն՝ 28 Մարտի գտումի մրցումներուն, Բ. դասակարգի մըր-

ցումները տուին հետեւեալ արդիւնքները՝
Նոր Գիւղ յաղթեց Պուրճ Համուտի՝ 4-1
Անտիոք յաղթեց Չահլէի՝ 4-1
Հոմս յաղթեց Ազէզի՝ 1-0
Ռայաք եւ Քրըք Սան հաւասար մնացին՝ 3-3

Ա. դասակարգի գտումներուն՝ Ալեքսանտրէթ եւ Լաթաքիա հաւասար մնացին՝ 2-2

Դամասկոս յաղթեց Պէյրուսի՝ 8-2
29 Մարտի կիսաւարտական մրցումներուն՝

Անտիոք յաղթեց Հոմսի՝ 5-1
Նոր Գիւղ եւ Ռայաք հաւասար մնացին՝ 3-3

Վիճակով՝ աւարտականի հասաւ Նոր Գիւղի խումբը:

Աւարտական մրցումին՝ Նոր Գիւղ յաղթեց Անտիոքի՝ 3-0

Ա. դասակարգի աւարտական մրցումին՝ Դամասկոս եւ Հալէպ հաւասար մնացին 3-3:

Աւելի քան 500 մարզիկներ եւ սկաուտներ մասնակցեցան փակման հանդիսութեան ընդհանուր տողանցքին՝ կազմելով աննախընթաց թիւ մը:

*
* *

17 եւ 18 ապրիլ, 1938ին, Հալէպի մէջ կայացան Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանի 11րդ միջ-մասնաճիւղային խաղերը՝ Ֆութպոլի զոյգ դասակարգերու մրցաշարքով:

17 Ապրիլին, Ա. դասակարգի գտումի մրցումներուն՝

Հալէպ յաղթեց Ալեքսանտրէթի՝ 4-0
Պէյրուս յաղթեց Նոր Գիւղի՝ 5-2
Բ. դասակարգի գտումներուն՝
Հոմս յաղթեց Անտիոքի՝ 3-2
Քրըք Սան յաղթեց Արաբ Բունարի՝ 5-2

Ռայաք յաղթեց Լաթաքիոյ՝ 7-0
Բ. դասակարգի գտումի մրցումները շարունակուեցան 18 Ապրիլին.

Ռայաք յաղթեց Ազէզի՝ 4-0
Քրըք Սան յաղթեց Հոմսի՝ 5-3
Աւարտական մրցումներուն՝
Բ. դասակարգի մէջ՝ Քրըք Սան յաղթեց Ռայաքի՝ 3-2

Ա. դասակարգի մէջ՝ Հալէպ եւ Պէյրուս հաւասար մնացին՝ 0-0

Հանդիսութեան օրուայ թագուհին էր Տիկին Հ. Ազիրեան: Պատուոյ օրհորդներ՝ Անահիտ Սիւրմէյեան, Ֆէթթէլեան եւ Տէրունեան:

*
* *

Բ. Աշխարհամարտի նախապատերազմեան՝ վերջին միջ-մասնաճիւղային խաղերը տեղի ունեցան Սբ. Չատկուայ առթիւ, Պէյրուսի քաղաքապետարանի դաշտին վըրայ, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի 10 մասնաճիւղերու:

Այս 12րդ միջ-մասնաճիւղային խաղերուն գլխաւոր նորութիւնը եղաւ պասքեթպոլի եւ թենիսի ճիւղերու յաւելումը՝ ֆութպոլի կողքին:

9 Ապրիլ, 1939ին, գտումի մրցումներուն,

Բ. դասակարգի մէջ՝
Ազէզ յաղթեց Հոմսի՝ 7-1
Ռայաք յաղթեց Պուրճ Համուտի՝ ի բացակայութեան:

Ա. դասակարգի մէջ՝
Դամասկոս յաղթեց Պէյրուսի՝ 4-0
Հալէպ յաղթեց Նոր Գիւղի՝ 3-1:

10 Ապրիլ, 1939ին, Բ. դասակարգի կիսաւարտականին՝
Ազէզ յաղթեց Թրիփոլիի՝ 5-4
Աւարտականին՝ Ռայաք յաղթեց Ազէզի՝ 2-1

Հալէպ յաղթեց Դամասկոսի:

Այս ձեռով, Բ. դասակարգի ակոյեան հանդիսացաւ Ռայաքի մասնաճիւղի խումբը, իսկ Ա. դասակարգի ակոյեանութեան տիրացաւ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի խումբը, ստանալով Ալֆա հաստատութեան տրամադրած բաժակը, ձեռամբ՝ օրուայ թագուհի՝ Տիկին Ռոզա Չէլէպիի: Պատուոյ օրիորդներն էին, Նուարդ Տէմիրճեան, Մելինէ Տէր Մելքոնեան, Նազենի Բարթողոմեան եւ Էօժէնի:

Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբի դաշտերուն վրայ տեղի ունեցան պասքեթպոլի եւ թենիսի մրցաշարքերը, ուր ճակատեցան Հալէպի, Դամասկոսի եւ Պէյրութի մասնաճիւղերու կազմերը:

Պէյրութի քաղաքապետարանի դաշտին վրայ, երկրորդ օրուայ մրցումներու աւարտին, ինչպէս ամէն տարուայ Չատկական խաղերուն առթիւ, այս անգամ Լիբանանահայութիւնը ծափահարեց մարզիկներու եւ սկաուտներու ընդհանուր տողանցքը՝ ազգային հպարտանքի եւ խանդավառութեան ալիքներու ապրումներով:

Անկախ՝ Չատկական Միջ-մասնաճիւղային խաղերէն, Սուրիոյ Լիբանանի եւ Պա-

ղեստինի Շրջանը, 1938էն սկսեալ, կազմակերպեց նաեւ աթլետիզմի միջ-մասնաճիւղային հանդիպումներ:

Այս նպատակով, Շրջանային Վարչութիւնը յատուկ շրջաբերականով՝ 1938ի գարնան, հրահանգեց մասնաճիւղերուն կազմակերպել ներքին զտումի մրցումներ, ընտրելու համար ընդհանուր Աթլետիք Սաղերուն մասնակցելու ատակ մարզիկները:

Այս նպատակով, 19 Յունիս 1938ին համար նախատեսուած՝ անդրանիկ հանդիպումները յետաձգուեցան աշնան՝ առանց ճշդելու յստակ թուական մը:

ՊԱՂԵՍՏԻՆ

1938ին, Պաղեստինի մասնաճիւղերու գործակցութեամբ կը կազմակերպուին միջ-մասնաճիւղային մարզական հանդիպումներ՝ անջատ Սուրիոյ եւ Լիբանանի միջ-մասնաճիւղային խաղերէն, որոնց՝ սկզբունքով պէտք էր մաս կազմէին: Գործնական դասաւորումներ պատճառ դարձան, որ այս հանդիպումները անջատաբար կայանան:

Ե. ՄԱՍ

Հ.Մ.Ը.Մ.-ԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
- ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԱԻԵՐԱՑՄԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
- ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան յաջորդող առաջին գործունէութիւններու արագ զարգացումը, ինչպէս նաեւ օրէ-օր աճող մասնաճիւղերու թիւը, անդրանիկ Կեդրոնական Վարչութեան կը պարտադրէ Միութիւնը գրաւոր Ծրագիր-Կանոնադրութեամբ մը օժտել:

Պէտք էր զօրաւոր հիմերու վրայ դնել մասնաճիւղեր-կեդրոն փոխյարաբերութիւնները եւ օրինականացնել նոր անդամներու մուտքը միութեան շարքերէն ներս: Այս նպատակով, հիմնադրութեան յաջորդ օրերուն, կազմուեցաւ եռանդամ յանձնախումբ մը՝ գլխաւորութեամբ Յ.Ճ. Սիրունիի եւ մասնակցութեամբ Գրիգոր Յակոբեանի եւ Տիգրան Խոյեանի: Յանձնախումբը հաւաքուեցաւ Գրիգոր Յակոբեանի բնակարանը եւ, եռօրեայ երկարաշունչ խորհրդակցութիւններէ ետք, յաջողեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի առաջին Ծրագիր-Կանոնագիրը խմբագրել: Այս աշխատանքին գլխաւոր բաժինը ստանձնեց Յ.Ճ. Սիրունին, որպէս փորձառու անհատ՝ դիւանային եւ ազգային հասարակական գործունէութեանց եւ խմբագիր «Ազատամարտ» օրաթերթի — [ԺԳ. 39]:

Այս առաջին կանոնադրութիւնը, փորձի շրջանի մը համար, անմիջապէս գործադրութեան պիտի դրուէր մինչեւ որ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի մը վաւերացման ենթարկուէր: Խմբագրական կազմը մեծ բաւարարութեամբ շեշտը կը դնէր կանոնադրութեան բարոյական բարձր ոգիին վրայ, որով կ'ուրուագծուէր ազգասէր Հ.Մ.Ը.Մ.ականի դիմագիծը: Միջազգային սկաուտական սկզբունքներն ու մարզական ոգիի ազնուագոյն տրամադրութիւնները՝ միաժամանակ պիտի արտացոլային այս անդրանիկ կանոնադրութեան մէջ:

ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԱԻԵՐԱՑՄԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Վերոյիշեալ Ծրագիր Կանոնադրութիւնը կը բաղկանար 66 յօդուածներէ, որ, յետ վերատեսութեան, վաւերացուեցաւ միութեան Դ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ, 19 Յունիս 1921ին:

Սոյն Ծրագիր-Կանոնագրին առընթեր մշակուեցաւ նաեւ հայ սկաուտներու Ծրագիր-Յայտագիր մը, բաղկացած 35 յօդուածներէ՝ սկաուտական շարքերու կազմութեան, կազմակերպութեան, գործելակերպի բաժիններով: Ծրագիր-Յայտագիրը կը պարունակէր նաեւ սկաուտական գիտելիքներու լայն բաժին մը:

ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այնուհետեւ, նոր կազմուող մասնաճիւղերը, որոնք Հ.Մ.Ը.Մ.-ի ծրագրով եւ կանոնագրով առաջնորդուեցան, նոյնութեամբ որդեգրեցին այս անդրանիկ կանոնադրութեան տառն ու ոգին, անփոփոխ պահելով անոր տրամադրութիւնները: Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղեր դառնալու հիմքն ալ արդէն կազմեցին սոյն կանոնադրութիւններուն տրամադրութիւնները՝ անոր «նպատակ»ի իւրացումով եւ պայմաններու յարգանքով:

Պոլսէն դուրս, արտասահմանի մէջ, Հ.Մ.Ը.Մ.-ի Ընդհանուր Կանոնադրութիւնը առաջին անգամ Ռուսաստանի շրջանի նախաձեռնութիւնը կ'ըլլայ: 1925ին, Պուքրէշի մէջ լոյս կը տեսնէ Հ.Մ.Ը.Մ.-ի Կանոնագիրը՝ հիմնապէս Միութեան անդրանիկ կանոնադրութեան վերարտադրութիւնը, որ ծառայեց նաեւ արտասահմանի բոլոր շրջաններու մասնաճիւղերուն:

1929ի Յունուարին, Փարիզի մէջ լոյս կը տեսնէ Փարիզի եւ Շրջանի ներքին կանոնագիրը: Գրքոյկին մէջ, 1921ին Պոլիս հրատարակուած Ծրագիր-Կանոնագրի 66

յօդուածներու արձանագրութենէն ետք, կը տրուի Փարիզի եւ Շրջանի յատուկ՝ ներքին կանոնագրի 42 յօդուածները:

Նոյնպէս, 1929-ի Սեպտեմբերին, Եգիպտոսի Շրջանային Վարչութիւնը կը հրատարակէ Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագիրը: Գրքոյկին մէջ, 1921-ին Պոլիս հրատարակուած Ծրագիր-Կանոնագրի 66 յօդուածներու շարունակութեան, արձանագրուած են յօդուածներ 4, 24, 36 եւ 62-ի մասին յաւելուածական չորս տրամադրութիւններ, առժամեայ հանգամանքով եւ Հ.Մ.Ը.Մ.ի յաջորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ վաւերացուելու պայմանով:

1931-ի Մարտին, տեղի ունեցաւ արտասահմանի առաջին Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը, որուն օրակարգերուն կարեւորագոյններէն եղաւ ընդհանուր կանոնագրութեան վերամշակումը: Այս ընդհ. ժողովէն վաւերացուած Սկաուտական Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը լոյս տեսաւ 1932-ին, Փարիզի մէջ: Գրքոյկը՝ սկիզբի 1էն 31 էջերուն վրայ ունի 123 յօդուածներ, ապա՝ 32-էն 49 էջերուն վրայ կը պարունակէ սկաուտական կարգերու, տարազներու, աստիճաններու, մասնագիտական պէճերու, երգման արարողութեան, դրօշներու, երէցներու եւ գայլիկներու բաժանմունքներու մասին մանրամասն արձանագրուած բաժին մը:


1933-ի, Յուլիս 2-4, Պէյրութի մէջ

գումարուած Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Պատգամաւորական Ժողովը կը մշակէ ու կը վաւերացնէ Շրջանի ներքին կանոնագիրը: Այս առթիւ հրատարակուած գրքոյկը, արձանագրելէ ետք միութեան ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի թիւ 1-2-4-12-13-14 եւ 46 յօդուածները (19 Յունիս 1921- Պոլիս), կը պարունակէ Սուրիոյ եւ Լիբանանի յատուկ՝ ներքին կանոնագրի 75 յօդուածները:

Յանկ Հ.Մ.Ը.Մ.-ի կանոնագրութիւններու՝ հրատարակուած Միութեան հիմնադրութենէն մինչեւ 1933 թուականը.

- Ընդհանուր Կանոնագրութիւն (1918, Պոլիս)
- Սկաուտական Կանոնագրութիւն (1919, Պոլիս)
- Ընդհանուր Կանոնագրութիւն (1921, Պոլիս)
- Ընդհանուր Կանոնագրութիւն (1925, Պոլսքրէշ)
- Ներքին Կանոնագրութիւն (1929, Փարիզ)
- Ներքին Կանոնագրութիւն (1929, Գահիրէ)
- Սկաուտական Կանոնագրութիւն (1932, Փարիզ)
- Ներքին Կանոնագրութիւն (1933, Պէյրութ)

ՀԱՅ ՄԱՐՄԱԿԻՐՔԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ



ՀԷՅ
ԱՐԿՈՒԴԱՆԵՐԻ
ՅԵՅՄԵԳԻՐՈՒԹՐԵԿԻՐ

Կ. ՊՈԼԻՒՍ
ՏՊԱՆՈՒԹՅԱՆ Թ. ԱՐՁՈՒՄԱՆ
1919


Հ. Մ. Ը. Մ.

ՀԱՅ ՄԱՐՄԱԿԻՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԻՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐ
ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՍՆԱՃՐԻՂ

UNION GÉNÉRALE
ARMÉNIENNE
DE CULTURE PHYSIQUE
ET DE SCOUTISME
SECTION DE MARSEILLE


ՏԵՂԵԿԱԳԻՐ
1924 — 1926 ՏԱՐԻՆՆԵՐՈՒ

Տ. Պ. Գ. Ս. ԵՐԷՅԵԱՆ
40, Rue de Souffrèrès
ՄԱՐՍԷՅԼԻ



ՀԻՄՆՈՒՄ
1918 ի Ն

ԹՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ
Հ. Մ. Ը. Մ. Ի
(Հայ Մարմնակրթական և հրահանուր Միություն)



Հ. Մ. Ը. Մ. Ի Եգիպտոսի Նոբան
1929



ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ. Մ. Ը. Մ. Ի

(ՀԱՅ ՄԱՐՄԵԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
ԵՒ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐ)



ՆԵՐՔԻՆ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՓԱՐԻՁԻ ԵՒ ՇՐՋԱՆԻ

Փ ա ղ ի զ
1 9 2 9

ԿԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԸՆԴ. ՄԻՈՒԹԻՒՆ



ԾՐԱԳԻՐ

ԿԱՆՈՆԱԳԻՐ



ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Բ.Մ.Ը.Մ. Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՒԻՆ ԿՈՂՄԵ

ՓԱՐԻՁ 1932

ԿԱՐՕ



Հ. Մ. Ը. Մ.

(ՀԱՅ ՄԱՐՄԵԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ)

ՆԵՐՔԻՆ - ԿԱՆՈՆԱԳԻՐ ՍԻՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻՆ

Ն ՅՈՒՂԻՍ 1933

ՊԵՏՐՈՒԹ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԵՐ

- ՄԱՐՄՆԱՄԱՐԶ
- ՀԱՅ ՍԿԱՈՒՏ (Ա. Շրջան)
- ՊԱՏՐԱՍՏ
- ԱՐԻ
- ՄԱՐԶԻԿ
- ՀԱՅ ՍԿԱՈՒՏ (Ռուսչուֆ)
- Հ.Մ.Ը.Մ.
- ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
- ՊԱՀԱԿ
- ՀԱՅ ՍԿԱՈՒՏ (Նոր Շրջան)
- ՏԵՂԵԿԱՏՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ի
- ԳԱՅԼԻԿ
- ՀԱՅ ՍԿԱՈՒՏ (Գ. Շրջան)
- ԱՐԻ
- ՀԱՅ ԱՐԻ
- ԱՄՍՕՐԵԱՅ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ական հրատարակութիւնները, յատկապէս պաշտօնաթերթերը, միութեան գաղափարականի ծանօթացման մեծագոյն ազդակները հանդիսացան՝ իրենց տարածումով, առանջնորդող խմբագրականներով, ազգային զարթոնքի մղող յօդուածներով, մարզաբարոյական նիւթերով եւ մարզական թէ սկաուտական թեքնիք ուսուցման բաժիններով: Պաշտօնաթերթերը եղան նաեւ աշխարհացրիւ մասնաճիւղերու գործունէութիւնները արձանագրող պատմաբանական աղբիւրներ, ինչպէս նաեւ՝ կեդրոններու, շրջաններու թէ մասնաճիւղերու ժողովական որոշումները արձանագրող հանդէսներ, շրջաններու միջեւ ծանօթացման ճամբով բարոյական կապ եւ ՄԻՈՒԹԻԻՆ ըլլալու գաղափարը հաստատող հրատարակութիւններ:

Այս իմաստով, հիմնադիր Շաւարշ Քրիսեանի 1911-ին նախաձեռնած «Մարմնամարզ»ի հրատարակութիւնը, պատերազմի պարտադրած հնգամեայ դադարէն ետք,

որպէս պաշտօնաթերթերու շարքի սկզբնաւորութիւն, մնայուն ներկայութիւն ունեցաւ: Պոլսոյ կեդրոնէն ետք, զանազան շրջաններ ունեցան իրենց պաշտօնաթերթերը՝ որոշ ժամանակաշրջանի վրայ երկարող հրատարակութեամբ, բայց ամէն անգամ որ շրջանի մը հրատարակութիւնը դադրեցաւ, այլ շրջան մը ինքնաբերաբար այդ պարտականութիւնը շարունակեց՝ այլ հրատարակութեամբ: Այս ձեւով, Հ.Մ.Ը.Մ.ի յատուկ մամլոյ ջահը անմար մնաց՝ սկիզբէն մինչեւ 1939 թուականը:

Շրջաններու եւ մասնաճիւղերու մասին մեր պատմական տեղեկութիւններու վերջաւորութեան, զանազան տարողութեամբ յատուկ բաժիններ տրամադրած ենք պաշտօնաթերթերուն: Ներկայ գլուխին տակ կ'արձանագրենք հրատարակուած թերթերու ընդհանուր ցանկը, երբեմն մանրամասնելով անոնց մասին տեղեկութիւններ՝ եթէ իրենց յատուկ շրջանին մէջ այդ մէկը չենք կատարած:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԹԵՐԹԵՐՈՒ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔՈՎ

<u>Անուն</u>	<u>Հրատարակման ժամանակաշրջան</u>	<u>վայր</u>	<u>վարիչ-խմբագիր կամ արտոնատէր</u>	<u>ըստ մեր մատենազրական ցանկի՝ թուագրում</u>
«Մարմնամարզ»	1911-1914	Պոլիս	Շաւարշ Քրիսեան	Ա.Բ.Թ.Ժ.
«Հայ Սկաուտ»	1919-1922	Պոլիս	Կարօ Ռւշաղլեան	Գ.Դ.
«Պատրաստ»	1921	Իզմիր		
«Արի»	1924-1925	Պուքրէշ	Յ.Ճ. Սիրունի	ԻԵ. ԻԶ.
«Մարզիկ»	1925	Փլովտիվ	Կարօ Ղազարոսեան	ԻԸ
«Հայ Սկաուտ»	1925-1926	Ռուսոճուք		
«Հ.Մ.Ը.Մ.»	1926-	Փլովտիվ	Կարօ Ղազարեան	Ի.
«Նոր Սերունդ»	1926-1929	Աթէնք	Ստեփան Տամլամայեան	ԻԲ. ԻԳ
«Պահակ»	1927-1936	Փլովտիվ		

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

«Հայ Սկսուտ»	1929	Փարիզ	Կարօ Ուշազլեան Տիրան Բէրէզեմլեան	Ե.
«Տեղեկատու Հ.Մ.Ը.Մ.ի»	1930	Սոֆիա		ԼԳ.
«Գայլիկ»	1930	Հէլիոպոլիս		
«Հայ Սկսուտ»	1934	Փարիզ	Վաղզէն Անդրէասեան	Զ.
«Արի»	1934	Պուքրէշ		
«Հայ Արի»	1938	Սլիվէն		
«Ամսօրեայ Շրջաբերական»	1938	Երուսաղէմ		ԼԲ.

Այս ցանկէն դուրս կը մնան մասնաճիւղերու ներքին նախաձեռնութիւն հանդիսացող խմորատիպ թերթեր, որոնց բովանդակութիւնն ալ ուղղուած է ներքին ընթերցողներուն, ինչպէս՝ Պուքրէշի «Մեր Թերթը», «Պետը», «Սլաք»:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Հ.Մ.Ը.Մ.ի առաջին պաշտօնաթերթը, Շաւարշ Քրիսեանի խմբագրութեամբ, 1911-էն սկսեալ լոյս տեսնող «ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»ը պիտի ըլլար: Միութիւնը տակաւին չէր հիմնուած սակայն Մարմնամարզի հիմնական նպատակն էր Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնը — [Ա. 66], [Ա. 290]:

Այս իմաստով լայնօրէն անդրադարձանք Ա. մասի առաջին գլուխին տակ:

ՀԱՅ ՍԿՍՈՒՏ (Ա. շրջան)

Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան հրատարակութեամբ՝ 1919-ի Հոկտեմբերէն սկըսեալ լոյս տեսնող պաշտօնաթերթը «ՀԱՅ ՍԿՍՈՒՏ»ը եղաւ:

«ՀԱՅ ՍԿՍՈՒՏ» իր առաջին թիւի «Մեր Գաղափարները» խմբագրականով կը յայտնէր միութեան նպատակը եւ անոր իրականացման համար օգտագործուելիք միջոցները: Պաշտօնաթերթի հրատարակման առաջին շրջանի մասին հանգամանօրէն անդրադարձանք Բ. մասի երկրորդ գլուխին տակ՝ «Հ.Մ.Ը.Մ.ը Պոլսոյ մէջ»:

ՊԱՏՐԱՍ

Օրկան Իզմիրի Հայ Պօյ Սկսուտներու Միութեան: Սկսուտիգմի եւ Միութեան գործունէութիւնը արձանագրող՝ կիսամսեայ թերթ: Գին՝ 5 դրշ., հասցէ՝ Պաքրճեան եղբայրներ, Իզմիր:


ԱՐԻ

Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի Ռումանիոյ Շրջանային Վարչութեան, խմբագրութեամբ Յ.Ճ. Սիրունիի (Յակոբ Ճօլեան): Առաջին թիւը լոյս կը տեսնէ 1924-ի Փետրուարէն սկսեալ՝ մինչեւ Օգոստոս: Երկրորդ տարին՝ 1924-ի Սեպտեմբերէն 1925 Օգոստոս: Երրորդ տարին՝ 1925-ի Օգոստոսէն 1925 Դեկտեմբեր:

1926-ի Յունուարէն սկսեալ «ԱՐԻ»ն կը միացուի Պուլկարիոյ Շրջ. Վարչութեան պաշտօնաթերթ «ՄԱՐԶԻԿ»ին՝ հրատարակուելու համար միացեալ՝ «Հ.Մ.Ը.Մ.» անունով, որպէս գոյգ շրջաններու պաշտօնաթերթ:

ՄԱՐԶԻԿ

Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ Շրջանային Վարչութեան, խմբագրութեամբ Կարօ Ղազարոսեանի (Կարօ Մեհեան): Լոյս կը տեսնէ 1925-ի Սեպտեմբերէն սկսեալ՝ մինչեւ 1925-ի Դեկտեմբերը 4 թիւ, երբ կը միանայ Ռումանիոյ «ԱՐԻ»ին, որպէս 5-6 միացեալ թիւ, հրատարակուելու համար Հ.Մ.Ը.Մ. անունով՝ 1926-ի Յունուարէն սկսեալ:



ՄԱՐԵԱՄԱՐԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

Ա. ՏԱՐԻ - ԹԻԻ 3 1911 ԱՊՐԻԼ

ՄԱՐՄԵԱՄԱՐԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ
ԵՒ

ՕՐԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՓԻՋՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ

Բ. ՏԱՐԻ - ԹԻԻ 1 © ԳԻՆ, 40 ՓՈՐՈՅՉ 1912 ՅՈՒՆՎԱՐ 1

ՀԱՅ ՍԿԱՈՒՏ (Ռուսչուք)

Պուլկարիոյ Ռուսչուք մասնաճիւղի նախաձեռնութեամբ հրատարակուող ներքին ամսաթերթը, 1925-էն սկսեալ:

«Հ.Մ.Ը.Մ.»

1925-ի նոյեմբերին, Պուլկարիոյ եւ Ռումանիոյ Շրջաններու խորհրդակցական ժողովի որոշումով եւ երկու շրջաններու պաշտօնաթերթերու «Մարզիկ»ի եւ «Արի»ի միացումով, «Հ.Մ.Ը.Մ.» պաշտօնաթերթը լոյս կը տեսնէ 1926-ի Յունուարէն սկսեալ: Արտօնատէրն է Տօքթ. Թ. Թումասեան, իսկ խմբագիրը՝ Կարօ Ղազարոսեան: Գին՝ 10 լէվա, ապա՝ 5 լէվա: Յունուարին, թերթը կը կրէ 5-6 միացեալ թիւը՝ 16 էջ բովանդակութեամբ: Յաջորդ թիւ, 7-ը Փետրուար-Մարտ 1926 թուականակիր՝ 32 էջերէ կը բաղկանայ: Թիւ 8 Ապրիլ-Մայիս 1926 թուականակիրը կրկին կը վերադառնայ 16 էջերու բովանդակութեան:

Հակառակ այս զանազանութեան, պաշտօնաթերթը կը պահէ իր ճոխ բովանդակութիւնը: Կարօ Ղազարոսեանի խմբագրականները, ընդհանրապէս, Միութեան ծրագիրն ու գործելակերպը քննող եւ պայմանաւորող ուսումնասիրութիւններն են.

- Ոգին ու ճամբան [Ի/5-6.1]
- Չափով քայլ նետենք [Ի/7.1]
- Մարմնակրթական թէ Մշակութային [Ի/8.1]

Անոնց կողքին թերթը ունի հետեւեալ բաժինները.

- Մարզական եւ սկստական թեքնիք ուսուցում
- Հ.Մ.Ը.Մ.ական դէմքեր
- Միութենական ներբողականներ
- Պատմութեամբ
- Նամականի
- Բժշկական

— Միջազգային լուրեր եւայլն:

Յօդուածներ ստորագրած են Պուլկարահայ գրիչներ՝ Հրահան, Յ. Մարթայեան, Ծեր Շուն, Գրիգոր Գուտուկեան, Արամ Խաչատուրեան, Տօքթ. Յովհ. Մանուկեան, Ն. Աստուածատուրեան, Հոքէ, Հայկ Պարտիզպանեան, Լիպարիտ, Գարախանեան, Սարգիս Ալթունեան եւ ուրիշներ: Արտասահմանի աշխատակից կամ թղթակիցներէն կարելի է յիշել՝ Տօքթ. Ռուբէն Զիլինկիրեան (Ռ. Սեւակ, Լոզան) Օննիկ Եազմածեան (Նիկոսիա), Ժ.Ն. եւ Գրիգոր Ճօլօլեան (Փարիզ), Տօքթ. Ս. Ուզունեան (Պուքրէշ), Գասպար Առաքելեան (Մեքսիքօ), Մ. Օտպաշեան (Պրիւքսէլ), Հին Առիւծ, Թռչող Մեղու, Յ. Ծխենց (Յունաստան) եւ ուրիշներ:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Յունաստանի շրջանի պաշտօնաթերթ: Լոյս կը տեսնէ 1926-ի Մայիս ամիսէն սկսեալ եւ կը շարունակուի մինչեւ 1929 թուականը: «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»ի տարածումը կ'ըլլայ շատ ընդհանուր շնորհիւ թերթին աշխատակցող եւ թերթը տարածող ցանցին, որ կ'ընդգրկէ իր ժամանակին՝ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր ունեցող բոլոր երկիրները անխտիր:

Այս մասին տեսնել ներկայ հատորի Գ. մասի 5րդ գլուխը:

ՊԱՀԱԿ

Պուլկարիոյ շրջանի Բլովտիվի մասնաճիւղի հրատարակութիւն:

ՀԱՅ ՍԿԱՈՒՏ (Նոր շրջան)

1922ին, Պոլսոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան դադրեցումով կը դադրի նաեւ «ՀԱՅ ՍԿԱՈՒՏ» պաշտօնաթերթի հրատարակութիւնը՝ երկամեայ ներկայութենէ ետք:




ՀԱՅ ՍԿԱՈՒՄ

Հ. Մ. Ը. Մ.

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ


Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 1 — 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1919

ՈՂԸՈՒՅՆ ՔԵԶ ԱԵՎ ՄԵՍԻՍ
 ԿՈՐՈՒԼԵԶԻՈՒ ԿՈՅՈՂԻ ՀԱՅԵԱՄԱՆՈՒ
 ՈՂԸՈՒՅՆ ՔԵԶ
 ԱԵՏԵԿԱՅԵՆՈՒՆԸ ՔԵՂԵՔԵԶՈՒԿ
 ՀԱՅՅՈՐԴԻՆԵՐԵԿ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՔՉՈՒՄԱՆ

Հայ Սկաուտ
 Պաշտօնաթերթի
 առաջին թիվի
 կողքը



ՀԱՅ ՍԿԱՈՒՄ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Կ.Մ.Ը.Մ.
Hai Scout Organe des SCOUTS ARMÉNIENS

ՀԱՍՅԵ - Խորասանձեան Խան, Թի. 26, Սիրֆեճի, Կ. Պոլիս
 ADRESSE - Khorassandjian Han 26, SirKédji, Constantinople

Հեռ. առ. հասցի ԱՔ. 2146

ԲԱԺՆԵԳԻՆ

Telephone թ. 2146

Պոլիս և Գալատա	Տրեք, շաբ. 120	16 ՓԵՏՐՎԱՐ 1922
Արասանձեան	Տր. 15	
Ամերիկա	Տր. 150	

F. ՏԱՐԻ, ԹԻԻ 14

Հայ Սկաուտ
 Պաշտօնաթերթի
 Բ. տարուայ
 գլուխը

1929ի Սեպտեմբերին, Փարիզի մէջ «ՀԱՅ ՍԿԱՌԻՏ»ի առաջին թիւի հրատարակութեան տասնամեակին հետ կը վերսկսի ամսաթերթին հրատարակութիւնը, որպէս Գ. տարուան առաջին թիւ՝ «Նոր շրջան» բացատրութեամբ: Թերթի արտոնատէրն է Տիրան Բերչէմլեան, խմբագիր՝ Քերոբէ ժպտունի: Թերթը կը տպուի նախ՝ տպարան Artistique-ի մէջ, ապա՝ տպարան Մասիս, ի վերջոյ՝ տպարան A. DER-ի մօտ: Հաստատվածառի գինն է 3 Ֆրանք:

Պաշտօնաթերթի բովանդակութիւնը բաժնուած է երկու բաժինի. պաշտօնական եւ սկաուտական բաժին՝ 16 էջով եւ «Մարմնակրթմանք»ի բաժին՝ 8 էջերով, ընդհանուրը՝ 24 էջ:

Թերթի առաջին բաժինին՝ Փարիզէն կ'աշխատակցին ժիրայր Մինթաճեան, Հայկազ Աբէլեան, Ծեր Աքլոր, Ծերուկ Էշ, Էլլէն Բիւզանդ, Խնդապետ, Ք. ժպտունի, Տ. Չիթունի, Տ. Ընքապապեան, Մշտաժպիտ եւ Տեղեկատու: Իսկ մարմնակրթմանքի բաժնին՝ Գնտահար, Պերճ Չաքրճեան, Մկրտիչ Մամուլեան, Ա. Տիգրանեան եւ ժիրայր Եաղմուրեան: Թերթը՝ իր լայն տարածումով, ըլլա՛յ Փարիզ, ըլլայ այլուր ունի թըղթակիցներու լայն ցանց մը՝ հետեւեալ շըրջանները ներկայացնող.

Գահիրէ՝ Պահակ, Պուրկազ՝ Գրիգորիկ, Գր, Չիլինկիրեան, Թաթար Պազարճըք՝ Հ. Հայրապետեան, Պուքրէշ՝ Արսէն Սայեան եւ Ներսէս Աստուածատուրեան, Սերեզ-Մակեդոնիա՝ Փիլիպոս Թոգատեան, Մարսէյ՝ Վարդան Քիւփէլեան եւ Անդրանիկ Այանեան, Պրագիլիա՝ Գրիգոր Թարաքճեան, Պէյրութ՝ Հայկ Ուղուրլեան եւ Վահան Թորոսեան, Չահլէ՝ Սարգիս Ունճեան, Գորտովա՝ Մ. Կոստանեան, Լիբազմա՝ Մկրտիչ, Ֆիլիպէ՝ Հրայր Արապեան, Ալֆորվիլ՝ Մ. Սահակեան եւ ուրիշներ:

Առաջնորդող յօդուածները յաճախ ստորագրուած են սկաուտ ազգային պետ՝ Գրիգոր Յակոբեանի կողմէ, ջատագովելով

սկաուտական շարժման օգտակարութիւնը: Խմբագրականները կը միտին զարկ տալ սկաուտութեան — [Ե.1], խմբուիլ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան շուրջ — [Ե.25], գանազան մարզական խումբերու գործունէութիւնը միացնել Մայր Միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին եւ զօրացնել զայն — [Ե.89-177] եւ առհասարակ զարգացնել Հ.Մ.Ը.Մ.ականին մօտ ազգային արժէքներու գիտակցութիւնը:

Հայ Սկաուտի Բ. շրջանի հրատարակութիւնը պիտի տեւէր մինչեւ 1930ի գարուն:

ՏԵՂԵԿԱՏՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ի

1930ին Սոֆիայի մէջ կը հրատարակուի Պուլկարիոյ շրջանի մասին «ՏԵՂԵԿԱՏՈՒ Հ.Մ.Ը.Մ.»ի ամսաթերթը: Խմբագիրն է Ներսէս Աստուածատուրեան: Մարզական եւ սկաուտական բովանդակութեամբ այս ամսաթերթը լոյս կը տեսնէ յաջորդական 11 թիւերով, ապա կը դադրի:

ԳԱՅԼԻԿ

Հելիոպոլսոյ մասնաճիւղի գայլիկական այս խմբատիպ ամսաթերթը հետաքրքրական եւ պատկերազարդ բովանդակութեամբ՝ լոյս կը տեսնէ 1930-ի գարունէն սկսեալ:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏ (Գ. Շրջան)

«ՀԱՅ ՍԿԱՌԻՏ» պաշտօնաթերթը, Բ. շրջանի հրատարակութեան դադրեցումէն ետք, վերստին կը սկսի լոյս տեսնել Փարիզի մէջ, 1934-ի Ապրիլ ամիսէն սկսեալ, որպէս կիսամսեայ հրատարակութիւն՝ պաշտօնաթերթ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան: Թերթի արտոնատէրն է Վազգէն Անդրէասեան: Թերթը կը տպուի Պահրի Եղբայրներու տպարանին մէջ: Գին՝ 1,25

ՀԱՅ ՍԿԱՍՈՒՏ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
Բ.Ս.Ը.Մ.Ի
ՀԻՄՆԵԱԼ 1918 ԻՆ



ORGANE
DES SCOUTS ARMÉNIENS
FONDE EN 1918

"HAÏ SCOUT"

Գ. ՏԱՐԻ (ՆՈՐ ՇՐՋԱՆ)

ԹԻԻ 1

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1929

ՀԱՅ ՍԿԱՍՈՒՏ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «Հ. Մ. Ը. Մ.»Ի ԿԵԴՐՈՆ ԱԿ ԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԵԱԼ 1918



HAÏ SCOUT

REVUE BI-MENSUELLE DES SCOUTS ARMÉNIENS
Fondée en 1918

Գ. ՇՐՋԱՆ — Ա. ՏԱՐԻ - ԹԻԻ 2 - (1-re année. Avril.) Ապրիլ, 15—30 1934



Հ. Մ. Ը. Մ.



ԵՐՈՒՍԱԴԷՄ — ՀԱՅՖԱ

Հայ Սկասուի Փարիզի
հրատարակություններ
1929 եւ 1934
Ամսօրեայ Շրջաբերական
Երուսաղէմ 1938

ԱՄՍՕՐԵԱՅ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԹԻԻ 2

ՓԵՏՐՈՒՍԻ

1938

Ֆրանք: 16 էջնոց բովանդակութեամբ՝ առաջնորդող յօդուածներու կողքին ան կը պարունակէ միութենական եւ միջազգային լուրերու բաժին, սկստական եւ մարզական թեքնիք ուսուցման բաժին, գեկուցում՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սկստական Վերին Մարմինի գործունէութեան մասին, հրահանգներ՝ շրջաններու եւ մասնաճիւղերու շարքերուն, վերջապէս՝ հետաքրքրական նիւթերու բաժին:

Թերթի մնայուն աշխատակիցներն են, իւրաքանչիւրը իր մասնագիտութեամբ, Յովհաննէս Պապէսեան՝ գիտութիւն, արհեստ եւ աշխարհագրութիւն: Գրիգոր Մերճանօֆ, Պ. Զաքրեան եւ Մկրտիչ Մալումեան՝ ընդհանուր մարմնակրթանք: Ժ. Եաղ մուրեան՝ միութենական եւ միջազգային մարզական կեանք: Գառնիկ Օհաննէսեան՝ Հ.Մ.Ը.Մ.ականութիւն:

Վազգէն Անդրէասեան՝ օդանաւորութիւն: Քերովբէ Ժպտունի՝ սկստութիւն:

Հայկազ Աբէլեան՝ բուսաբանութիւն եւ սկստութիւն: Ս. Պէրպէրեան՝ սկստութիւն:

Այս խումբի կողքին աշխատակցած են՝ Ժիրայր Մինթանճեան (Շրջահայեաց Եղջերու), Օննիկ Եազմաճեան, Վ. Ս. Փափազեան, Վահան Քէրեսթէճեան, Վանատուր, Տիրան Սէֆէրեան, Սիմոնիկ: Շըրջաններէն թղթակցութիւններ ուղարկած են՝ Գր. Զիլինկիրեան՝ Պուրկազ, Մ. Մինասեան՝ Թաթար Պազարճըք, Սամուէլ Շահալի՝ Լիբանան, Ս. Ծամճեան՝ Ֆիլիպէ:

Պաշտօնաթերթի խմբագրականներն են. գլխաւորաբար՝

- Կոչեր ազգային գիտակցութեան եւ ծառայման ընդէմ օտարացման

- Հրաւէր սկստական շարքերու խտացման եւ սկստական դաւանանքի հաւատարմութեան

- Հրաւէր հայրենքի, ազգի, բնութեան եւ միութեան հանդէպ սիրոյ եւ գործակցութեան:

Հայ Սկստութի Գ. շրջանի հրատարակութիւն կը տեւէ մինչեւ 1936:

ԱՐԻ

Պուքրէշի մէջ, 1924էն սկսեալ, շրջանի պաշտօնաթերթը՝ «ԱՐԻ»ն դադրեցաւ լոյս տեսնելէ միանալով Պուկարիոյ «ՄԱՐՁԻԿ»ին, որպէս միացեալ հրատարակութիւն՝ «Հ.Մ.Ը.Մ.» անուան տակ:

1934-ին, «ԱՐԻ»ն կրկին ի յայտ եկաւ Պուքրէշի մէջ, որպէս Ռուսմանիոյ Շրջանի ներքին հրատարակութիւն:

ՀԱՅ ԱՐԻ

1938-ին, Պուկարիոյ Սլիվէնի մասնաճիւղը, որպէս ներքին նախաձեռնութիւն, հրատարակեց «ՀԱՅ ԱՐԻ» խմորատիպ երկշաբաթերթը, կարճ ժամանակի մը համար՝ միայն 5 թիւ:

ԱՄՍՕՐԵԱՅ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Յունուար, 1938ին, Երուսաղէմի մասնաճիւղի նախաձեռնութեամբ կը սկսի լոյս տեսնել ներքին «ԱՄՍՕՐԵԱՅ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ»ը, չորս փոքրածաւալ էջերու վրայ: Երկրորդ թիւէն սկսեալ՝ «ԱՄՍՕՐԵԱՅ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ» թերթն է Երուսաղէմի եւ Հայֆայի մասնաճիւղերուն՝ էջերու կրկնապատկուած թիւով: Միութեան քսանամեակին առթիւ թերթը լոյս կ'ընծայէ բացառիկ մը՝ «Սկստ»ը անունով, աշխատակցութեամբ Լեւոն Քէշիշեանի, Հրայր եւ Մեսրոպ Երկաթեաններու:

Բացառիկը ունի ճոխ բովանդակութիւն եւ տեղեկութիւններ Հ.Մ.Ը.Մ.ի՝ իր օրերուն գործող գրեթէ բոլոր մասնաճիւղերու մասին, Փարիզի Հայ Արիներու մասին, հիմնադիր սերունդի ղեկավար դէմքերու կենսագրութիւններ, եւ ընդհանուր յօդուածներ:

«ԱՄՍՕՐԵԱՅ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ»ը կը դադրի լոյս տեսնելէ տարուան վերջաւորութենէն առաջ:

ԱՌԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի
ՌՈՒՄԱՆՈՅ ՇՐՋԱՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԹԻԻ 7
Հ.Մ.Ը.Մ.Ի ՑՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻՒ

Պուրէշ, 14 Նոյեմբեր 1926
Գին 20 Լէյ, 5 Ֆրանք

ՄԱՐԶԻԿ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՆԿ ՇՐՋԱՆԻ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ ՍԿԻԶԲԸ



Խմբագիր
ԿԱՐՈ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Արտատեսիչ
ՏՕԲԹ Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 2

ԳԻՆ 5 ԼԷՎԱ

1 ՀՈԿՏ. 1925



ՀԱՅ-ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ ՍԿԻԶԲԸ

Խմբագիր
ԿԱՐՈ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Արտատեսիչ
ՏՕԲԹ Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 7

ԳԻՆ 5 ԼԷՎԱ

1 ՄԱՐՏ 1926

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՄԱՆՏՈՒՄ ԹԵՐԻՐ

Հով. Մարմ. Ընդ. Միություն

Յուհասանի Շրջ. Կարգաբան



ՎՐԻՉ Ս. ՏՈՒՆՍՅԱՆ

ԱՐՏՈՆԱԵՐ Կ. ԳԵՏՐՈՅԱՆ


Ա. ՏԱՐԻ ԹԻՒ

ՄԱՅԻՍ 1926

ԳԻՆ 6 ՏՐԱԽՄԻ

ՆՈՐ

ՍԵՐՈՒՆԴ



ՕՐԿԱՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 2

ԳԻՆ 5 ՏՐԱԽՄԻ

1 ՅՈՒՆԻՍ 1926



Ա. ՏԵՐՅՈՒԿԵԱՆ

ԱՄՍԱԳԻՐ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 4

ԳԻՆ 5 ՏՐԱԽՄԻ

ՕԳՈՍՏՈՍ — 1927

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՅԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆՆԵՐ
 ԿՈԹՈՂ
 ՔՍԱՆԱՄԵԱՅ ՅՈՒՇԱՐՁԱՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ
 ԱՄԵՆՈՒՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԸ
 ՖՈՒԹՊՈԼԻ ՕՐԻՆԱԳԻՐՔ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
 ՊՕՅ ՍՔԱՈՒԴԸ ԵՒ ԻՐ ԿԵԱՆՔԻՆ ՆՊԱՏԱԿԸ, ՀԱՅ ՊՕՅ ՍՔԱՈՒԴՆԵՐ
 ՈՒՂԵՑՈՅՑ ԱՐԻԻՆ
 ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻՆ ՕՐԻՆԱԳԻՐՔԸ
 ԳԱՅԼԻԿԻՆ ԳԻՐՔԸ
 ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ԳՐՔՈՅԿ
- ԱՅԼՔ
 ՍԵՐՆԴԱԳՈՐԾՈՒՄ ԵՒ ՍԵՌԱՅԻՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ
- ՏԵՂԱԿԱԳՐԵՐ
- ԱԼՊՈՄՆԵՐ
- ՕՐԱՑՈՅՑՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան տարածման, նպատակներու ծանօթացման եւ գործունէութեան տեղեկատուական գլխաւոր ազդակները հանդիսացան Միութեան՝ կեդրոնական, շրջանային թէ մասնաճիւղային պաշտօնաթերթերը: Անոնց կողքին, այլ հրատարակութիւններ եկան ամբողջացնելու կազմակերպութեան հրատարակչական իրականացումները: Այս շարքին կը պատկանին՝ Յուշամատենները, սկստական թէ մարզական թեքնիք ուսուցման յատուկ գրքոյկները եւ այլ հրատարակութիւններ, թարգմանական թէ անջատ հեղինակութիւններ:

Ներկայ գլուխին տակ պիտի տանք այս նպատակին ծառայող՝ մեր տրամադրութեան տակ գտնուող, հրատարակութիւններու մասին ամփոփ տեղեկութիւններ:

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆՆԵՐ

«Կոթող» նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 10 ամեակին

«Քսանամեայ Յուշարձան» նուիրուած միութեան հիմնադրութեան 20 ամեակին

— Մարզական.

Ամենուն մարմնամարզը

Ֆուտբոլի օրինագիրքը

— Սկստական.

Պոյ Սքաուզը եւ իր կեանքին նպատակը

Ուղեցոյց Արիին

Հայ Սկստտին օրինագիրքը

Գայլիկին Գիրքը

Գայլիկներու գրքոյկ

— Առողջա-մարմնակրթական.

Սերնդագործում եւ Սեռային Առողջաբանութիւն

— Այլք.

Տեղեկագիրներ

Նկարագարդ Ալպոմներ

Օրացոյցներ:

«ԿՈՒՈՂ»*

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տասնամեակը եւ հայ մարզական շարժման քրտանամեակը նշելու նպատակով հրատարակութիւն՝ նախաձեռնութեամբ Ռումանիոյ Շրջանային վարչութեան եւ խմբագրութեամբ Յ. Մարթայեանի:

«ՔՍԱՆԱՄԵԱՅ ՅՈՒՇԱՐՁԱՆ»

Միութեան հիմնադրութեան քսանամեակին առթիւ հրատարակութիւն՝ նախաձեռնութեամբ Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ին, տպուած Փարիզ, 1939-ին: Հատորը կը ծրարագրէ պատմական ծանօթութիւններ տալ Հայ Մարմնակրթական Շարժման շուրջ: 304 էջերէ բաղկացած այս հատորը տպուած է Ա. Տէր Յակոբեան տպարանին մէջ: Յօդուածները խմբագրուած են հատորի խմբագրական կազմին կողմէ: Յատուկ գրութիւններ ունին յատկապէս՝ Հ.Վ. Հացունի, Գէորգ Կառվարենց, Հ.Ն. Պողոսեան, Զիթունի, Ն. Աստուածատրեան, Ա. Վռամեան, Մ. Մալումեան, Հ. Սէրէնկիւլեան:

Հատորը առաջնորդող՝ «Մեր ձեռնարկին նպատակը» յօդուածով խմբագրութիւնը ի միջի այլոց կը գրէ. «Հ.Մ.Ը.Մ.ը իր քսանամեակին առթիւ, այս հատորին հրատարակութեան ձեռնարկելով, նպատակ ունեցած է հայկական լայն շրջանակներու սեփականութիւնը դարձնել մարմնակրթական շարժման նուիրում բոլոր ճիգերը, սկիզբէն մինչեւ մեր օրերը...»: Իսկ հատորի վերջաւորութեան յայտարարութեամբ խմբագրութիւնը կ'եզրակացնէ. «...Ներկայ հատորով կարելի չեղաւ ամբողջական եւ մանրամասն համարատնութիւնն ընել Հ.Մ.Ը.Մ. այնքան ընդարձակ եւ բազմաճիւղ գործունէութեան»:

Աւելի յստակ գաղափար մը տալու համար «Քսանամեայ Յուշարձան»ի տարո-

* «Կոթող»ի մասին արձանագրութիւններ կան, որպէս ծրագրում, սակայն մեր փնտրութիւններով՝ հատորը անգտանելի մնաց — [Ե. 16 կողք]:

ղուծեան մասին, ստորեւ կու տանք հատորի «նիւթերու ցանկը».

- Մեր ձեռնարկին նպատակը
- Քայլերգ Արիներու
- Հանդիսական ուսմունք հայոց մէջ
- Հին հայոց Նաւասարդեան խաղերը
- Խաղն ու մարզանքը հայոց մէջ
- Հայ մարզական շարժումը (1900-1908)
- Մարզական միութիւնները (1900-1908)
- Հայ մարզական շարժումը (1908-1910)
- Մարզական միութիւններու ցանկը Գաւառներու մէջ
- Հայ սկաուտական շարժումը
- Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւնը
- 1919 Յուլիս 14ի մեծ ջահագնացութիւնը
- Միջազգային սկաուտական տողանցք
- Չանազան աշխատանքներ
- Ընդհ. մրցահանդէսներ եւ մրցանիշեր
- Ողջոյն Նաւասարդեան խաղերուն
- Բանակում ցուցահանդէս
- Հ.Մ.Ը.Մ.ը որբանոցներէն ներս
- Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը Հայաստան
- Սկաուտներու երթը
- Մարզիկներու առաքումը
- Գաւառները
- Հ.Մ.Ը.Մ.ի տեղահանումը
- Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը Յունաստան
- Գաղութներու մէջ
- Հիմնադիրներ եւ ռահվիրաներ
- Ախոյեաններ
- Մեր կորուստները
- Վարիչներ եւ գործիչներ
- Սկաուտ խմբապետներ
- Քսանամեակը
- Մեռեալներու յիշատակին
- Բարոյական բերդը (Ս.զդակ)
- Յայտարարութիւն:

Վերջին հաշտով՝ համապարփակ ու պատկերազարդ հրատարակութիւն մը, որ հետագայի պրպտումներու լայն հորիզոններ կը բանայ հետաքրքիր ընթերցողին առջեւ:

ԱՄԵՆՈՒՆ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԸ

Մարմնամարզ կիսամսեայ հանդէսի Բ. տարուայ թիւ 9-էն սկսեալ ծանուցուած հրատարակութիւն մը, որ կը խօսի տղայոց, կանանց եւ այրերու մարզանքներուն մասին, բացատրողական պատկերներով:

Հեղինակ՝ Լ.Ժ. Քիւլմիէն
Թարգմանիչ՝ Եգնիկ Քաջունի:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ՕՐԻՆԱԳԻՐՔ

Պոլսոյ կեդրոնական վարչութեան գործակից եւ ֆուտպոլի մասնագէտ Վարազ Փողհարեանի (Չուռնաճեան) խմբագրութեամբ՝ ֆուտպոլի խաղի օրէնքներու եւ խաղի ուսուցման յատուկ հրատարակութիւն մը որ օրին աննախընթաց հետաքրքրութիւն ստեղծեց հայ մարզիկներու յատկապէս ֆուտպոլի ճիւղը կիրարկողներուն մօտ:

ՊՕՅ ՍՔԱՈՒԴԸ ԵՒ ԻՐ ԿԵԱՆՔԻՆ ՆՊԱՏԱԿԸ, ՀԱՅ ՊՕՅ ՍՔԱՈՒԴՆԵՐ

Դաստիարակ Յովհաննէս Հինդլեանի խմբագրութեամբ՝ «ՄԱՐՄՆԱՄԱՐՁ»ի մէջ լոյս տեսած յօդուածաշարքի ամբողջութիւնը, հրատարակուած յատուկ գրքոյկի ձեւին տակ՝ Յ. Հինդլեանի եւ Շ. Քրիսեանի խմբագրութեամբ:

Գրքոյկը կը միտի հայ պատանիներուն ծանօթացնել սկաուտական շարժումն ու անոր օգուտները: Գրքոյկը որպէս նուէր կը բաժնուի «ՄԱՐՄՆԱՄԱՐՁ»ի բաժանորդներուն Գ. տարուան երկրորդ թիւին հետ:

ՈՒՂԵՑՈՅՑ ԱՐԻԻՆ

Այս անունով, եւ Ռուժանիոյ Շրջանային վարչութեան նախաձեռնութեամբ, 1926-ին կը տպուին գոյգ հատորներ՝ «Ուղեցոյց Արիին» Ա. հատոր նորընծայ սկաուտներու յատուկ գիտելիքներու գիրքը եւ «Ուղեցոյց Արիին» Բ. հատոր երկրորդ կարգի սկաուտներու յատուկ գիտելիքներու գիրքը:

ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻՆ ՕՐԻՆԱԳԻՐՔԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ հրատարակուած այս գրքոյկը կը պարունակէ սկաուտական շարժումի յայտագիր-ծրագիրը:

ԳԱՅԼԻԿԻՆ ԳԻՐՔԸ

Հրատարակութիւն Պուլկարիոյ Շրջանի տպուած՝ 1931-ին: Գայլիկութեան թեքնիք ուսուցման ծառայող այս գիրքը մեծ ընդունելութիւն կը գտնէ Պուլկարիոյ թէ արտասահմանի Հ.Մ.Ը.Մ.ներու բոլոր մասնաճիւղերուն մօտ:

ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ԳՐՔՈՅԿ

Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային վարչութեան կողմէ հրատարակուած գրքոյկ մը, որ կը ծանօթացնէ սկաուտական շարժումը եւ գիտելիքներու լայն պաշարով կ'օժանդակէ խմբապետներու եւ աքելաներու ճիգերուն գայլիկական շարժման ուսուցման համար:

Այս հրատարակութիւնը, օրին, Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր շրջաններու եւ մասնաճիւղերու կողմէ փնտռուած գրքոյկ մը պիտի ըլլար՝ իր գործնական հանգամանքով:

ՍԵՐՆԴԱԳՈՐԾՈՒՄ ԵՒ ՍԵՌԱՅԻՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեանի թարգմանութեամբ, ամերիկացի բժիշկ եւ ընկերաբան Մ. Վինֆիլտ Հօլլի այս կարեւոր հատորը կը հրատարակուի «ՄԱՐՄՆԱՄԱՐՁ»ի վարչութեան կողմէ՝ կանխիկ բաժանորդագրութեան դրութեամբ: Բաժանորդագրութեան վերջին ժամկէտ նշանակուած է 1913ի Յունուար ամսուան վերջը:

Գրքին մաս կը կազմեն հետեւեալ բաժինները. սերնդագործումը կենսաբանական տեսակէտէն, մէկ քանի ընդհանուր կենսաբանական սկզբունքներ, արբունքը արուններու մէջ, անդամազննութիւն եւ բնախօսութիւն արուին ծննդական գործարանաց, չափահաս արուին սեռային առողջաբանութիւնը, առողջապահութիւն, ներարգանդային աճում եւ զարգացում:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ, ԱԼՊՈՄՆԵՐ ԵՒ ՕՐԱՑՈՅՑՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի գանազան շրջաններն ու մասնաճիւղերը, գանազան առիթներով, հրատարակած են իրենց յատուկ տեղեկագիրներ, պատկերագարդ ալպոմներ եւ գլորպանի կամ պատի օրացոյցներ:

Երբեմն արուեստի նրբութիւնները օգտագործող այս հրատարակութիւնները լոյս տեսած են մասնաճիւղերու կամ միութեան հիմնադրութեան ամեակներու կամ այլ առիթներով: Դժուար է ամբողջական պատկերը տալ այս հրատարակութեանց: Թուենք օրինակներ.

— Հ.Մ.Ը.Մ.ի Մարսէյի Մասնաճիւղի Տեղեկագիր 1924-1926 Տարիներու:

— Օրացոյց 1930 թուականի: Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Ռուժանիոյ Շրջ. Վարչութեան:



Ռուսանիոյ շրջանի 1930-ի օրացոյցի կողքը

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ ՄԱՄՈՒԼ

- «ՀԱՅՐԵՆԻՔ» Պոսթոն
- «ԱԶԱՏԱՄԱՐՏ» Պոլիս
- «ՅԱՌԱՁ» Կարին
- «ԵՓՐԱՏ» Խարբերդ
- «ԿՌՈՒՆԿ» Նիւ Եորք
- «ՅԱՌԱՁ» Փարիզ
- «ԱԶԴԱԿ» Պէյրուս
- «ԵՌԱՆԴ» Սան Փաուլօ
- «ԱՐՄԵՆԻԱ» Պուէնոս Այրէս
- «ՅՈՒՍԱԲԵՐ» Գահիրէ
- «ԱԼԻՔ» Թէհրան
- «ԱՍՊԱՐԷՁ» Ճրէզնօ
- «ՓԻԻՆԻԿ» Պէյրուս
- «ՆՈՐ ՓԻԻՆԻԿ» Պէյրուս
- «ՆՈՐ ՕՐ» Աթէնք

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան առընթեր, հայ մամուլը ազգակ հանդիսացաւ մարմնակրթութեան գաղափարականի տարածման եւ օժանդակեց անոր ժողովրդականացման: Այս իմաստով, Պոլսոյ եւ Գաւառի հայ մամուլը եւ, աւելի ուշ, արտասահմանի գաղափարակից օրաթերթերն ու հանդէսները իրենց սիւնակները տրամադրեցին Հ.Մ.Ը.Մ.ին:

Թուելէ առաջ այն գլխաւոր ներկայացուցիչները, որոնք լայնօրէն իրենց սիւնակները դրին Հ.Մ.Ը.Մ.ի տրամադրութեան տակ, արձագանգելով անոր գործունէութեան մասին, հատուածաբար օրինակ մը՝ Պոլսոյ «ԱԶԱՏԱՄԱՐՏ» օրաթերթի 14 Յունիս 1914ի թիւով Ա. Վռամեանի ստորագրած յօդուածէն, գրուած հայկական 4րդ ողիմպիական խաղերուն առթիւ:

«ՀԱՅ ՄԱՐԶԻԿԸ ՈՂՁՈՒՆԵԼՈՒ Կ'ԵՐԹԱՄ ԱՅՍՕՐ» խորագրով:

«... Եւ աչքերուս առջեւ, անցեալի խորհրդաւոր մշուշի մէջէն դանդաղ ու հանդիսաւոր կը բարձրանայ տակաւ վարագոյրը երկու հազարամեայ հնութեան մը»:

... Հին հայը գիտեր ուրախանալ... դարեր անցան անկէ ետք, մեհեաններ անհետացան տաճարներու առջեւ, բայց ժողովուրդը չդրժեց իր հին աստուածներուն:

... Քսանը եօթը դարեր ետք, հայ ժողովուրդը մոռցած չէ իր նաւասարդը: ...Վարդավառին, հայ գուսանը եւ հայ ըմբիշը կը տնտղեն տակաւին մոխիրը հին, հին աւանդութիւններու: ... Բայց տունկը չի մեռնիր,— երբ ամուր եւ խոր է անոր արմատը — եւ ահա, ի յայտ կու գայ նորէն ցեղին խանդն ու կորովը:

Անհուն գորովով ու սիրով անքով է որ կուգամ ծափելու ձեզ, համբուրելու ձեր նակատը ով դուք բոլորդ, պատանհներ ու երիտասարդներ որ այսօր օտար աստիճանով կրայ ցեղին աւանդութիւններն է որ կու գաք վերականգնելու»:

«Որքան մեծ է ձեր բաժինը հայ վերակերտումի ծանրածանր բայց նուիրական գործին մէջ»:

«Յեղին ուժեղացումն է, ցեղին գեղեցկացումն է, ցեղին ազնուացումն է որ կը ձեւակերտէք դուք, տղաք,— յամառ ու պինդ քալեցէք ձեր նամբան»:

«Փառք, եւ ողջոյն նաւասարդեան խաղերուն»:

Ստորեւ, ժամանակագրական կարգով Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարակից եւ համակիր հայ մամուլի ներկայացուցիչներէն ցանկ մը:

ԹԵՐԹԻ ԱՆՈՒՆ	ԹՈՒԱԿԱՆ	ՎԱՅՐ
ՀԱՅՐԵՆԻՔ ՕՐԱԹԵՐԹ	1899-1915,	ՊՈՍԹԸՆ
ՍՍՊԱՐԷՁ	1908,	ՖՐԵՁՆՕ
ՅԱՌԱՋ	1909-1914,	ԿԱՐԻՆ
ԱԶԱՏԱՄԱՐՏ	1909-1915,	ՊՈԼԻՍ
ԵՓՐԱՏ		ԽԱՐԲԵՐԴ
ԿՈՒՆԿ		ՆԻԻ ԵՈՐՔ
ՓԻՆԻԿ	1924-1925,	ՊԵՅՐՈՒԹ
ՆՈՐ ՓԻՆԻԿ	1925-1927,	ՊԵՅՐՈՒԹ
ՆՈՐ ՕՐ	1924-1944,	ԱԹԷՆՔ
ՅԱՌԱՋ	1925,	ՓԱՐԻՁ
ՅՈՒՍԱՔԵՐ	1926,	ԳԱՀԻՐԷ
ԱԶԴԱԿ	1927,	ՊԵՅՐՈՒԹ
ԵՌԱՆԴ	1928-1931	ՍԱՆ
		ՓԱՌԻԼՕ
ԱԼԻՔ	1931,	ԹԷՀՐԱՆ
ԱՐՄԵՆԻԱ	1931,	ՊՈՒԷՆՈՍ
		ԱՅՐԷՍ

Վերոյիշեալ օրաթերթերը եւ շարք մը ամսաթերթեր կամ տարեգիրքեր, օրինակ՝ Թէոփիկի Ամենուն Տարեցոյցը, սկիզբէն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն եւ ծրագիրներուն ծանօթացումով, այլեւ Միութեան գործունէութիւնը արձագանգելով եւ անոր յաջողութիւններու ներբողանքով սատարեցին Հ.Մ.Ը.Մ.ի լայն ժողովրդականացման:

ՅԱԻԵԼՈՒԱԾԻ ՆԿԱՐՆԵՐ

ETAT DE SYRIE

SANJAK AUTONOME
D'ALEXANDRETTE

Secrétariat du Sandjak

N° 644/S/26

دولة سوريا

سنجق اسکندرونه المستقل

قلم اسرار السنجق

*

عدد

٦٤٤/٢٦

RECEPISSE

ظم و غیر

Nous soussigné, Moutassarif pui.

du Sandjak Autonome d'Alexandrette certifi-
fions avoir reçu la déclaration ainsi
que les statuts de l'Association dite
"HOMENETMEN" UNION ARMENIENNE DE CULTURE
PHYSIQUE" formée à Alexandrette en date
du 14 Mars 1933.

En foi de quoi le présent ré-
cépiassé a été délivré aux membres fon-
dateurs de la dite Association conformé-
ment à l'article VI de la loi ad-hoc.

مؤتمنه واقع املا اسکندرون
مجلسی مصرف و کلی ١٤ مارچ / ١٩٣٣
تاریخده اسکندرونده «هومنتین»
ترکیه بدنیه ارضی اتحادی تالی
آئینده مشتمل «همنتک بیاتنه» سی
ایله تمام داخلینسی تسلیم الدخیزی
تصدیق ایدرز *

بنا علیه اولیایده کی قانونک التصی
ماده سی استانیله توفیقاً مذکور همنتک
اتحادی مؤتمنه اشیر علم و غیر املا -
تصدیق

اسکندرون ١٤ نيسان / ١٩٣٣

مصرف و کلی

M. N. S.

Alexandrette, le 14 Avril 1933

Le Moutassarif pui.

وزراء اولیایدر

مردوب معاونتی

ب . دورنو

Visé:
Le Conseiller Adjoint du Ht. Crisat.
Délégué-Adjoint du H.C. à Alexette;



Հ. Մ. Ը. Մ.



ԱՆՆԱԽՐՆԹԱՑ ՓՐԱՆՍԱՀԱՅ ՄԻՋԽՄԲԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ

Հ. Մ. Ը. Մ. Ի ՓԱՐԻՋԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

29 Սեպտ. 1929, Կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին
Stade Petit-Jeanի սիրուն Մարգարանը (Porte de Picpus)

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ

ԵՒՐՈՊԱՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ԳԵՐ. Տ. Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆԻ

Օրուան Թագուհի.— ՏԻԿԻՆ Ա. ՀԱՄԲԱՐՑՈՒՄԵԱՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ Հ. Մ. Ը. Մ. Ի ՄԱՐՋԻԿՈՒՅԻՆԵՐՈՒՆ

ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ

ՓԱՐԻՋԷՆ ԵՒ ԳԱԻԱՌՆԵՐԷՆ

ՄՕՏ 200 ՄԱՐՋԻԿՈՒՅԻՆԵՐ, ՄԱՐՋԻԿՆԵՐ ԵՒ ՍԿԱՈՒՏՆԵՐ

ՄՐՑՈՒՄՆԵՐ

Ի Գ Ա Կ Ա Ն

60 — 200 — 600 մէթր վազք, Գոլնտ եւ Սկաւառակ նետել:

Ա Ր Ա Կ Ա Ն

100 — 200 — 400 — 800 — 1500 — 3000 մէթր վազք, 4 x 100 Դրօշարշաւ, Գոլնդ, Իիզակ եւ Սկաւառակ նետել, Բարձրութիւն, Հեռաւորութիւն եւ Ձողով ցատկել:

Համաչափ մարզանքներ 60 Մարզիկուհիներու կողմէ
առաջնորդութեամբ 50 հոգինոց Նուագախումբի:

ԲՈՒՆՈՐԴ ՀՈՆ, ԲՈՒՆՈՐԴ ՀՈՆ

ԾԱՓԱՀԱՐԵԼՈՒ ՀԱՅ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Հաղորդակցութիւն ճիջոցներ.— AY Gare du Nord - Porte de Picpus, AU Gare St. Lazare -
Porte de Picpus, 81 République - Porte de Picpus, Métro: Daumesnil.



Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտական կազմը 1935-1936-ին: Նկարին վրայ կ'երևին վարչականներ՝ Սարգիս Պապիկեան, Ասատուր, Յովհաննէս Թճնուկեան եւ Վահան Տօնապետեան: Աջէն Չրդ պոէր գլխարկ կրողը՝ Կիրակոս Թճնուկեան:

ԱՋԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ
Armenian National Relief Committee

ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՐԲԱՆՈՑԱՅԻՆ
 ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
 Հ. Մ. Ը. Մ. Ի ԿՈՂՄԷ
 Նախագահութեամբ
 ԱՄԵՆ. Ի. ՊԱՏՐԻԱՐԿ ՀՕԲ
 Տեղի կ'ունենայ Կիրակի
 10 Սեպտ. 1922

Armenian Interiorphanage
Annual Athletic Field Day

Organised by
A. U. P. C.
 Under the Presidency of His
 Beatitude
The Armenian Patriarch



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԵԼԱԴՐԱՆՔՆԵՐ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ներկայ հատորի խմբագրութեան համար օգտագործած ենք գլխավորաբար Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական արխիւները, կեդրոնի, շրջաններու կամ մասնաճիւղերու փոխադարձ նամակագրութիւնները, ինչպէս նաեւ կեդրոնական, շրջանային կամ մասնաճիւղային վարչութիւններու մաս կազմած անդամներու անհատական փոխադարձ թղթակցութիւնները: Օգտագործած ենք նաեւ ժողովի ատենագրութիւններ, անդամական ցանկեր, տեղեկագրութիւններ կամ հաշուելիչիւններ, որոնք վաւերական հանգամանք կը ներկայացնեն: Վերոյիշեալ պարագաներուն մեր պատմական հաստատումներու աղբիւրները յատուկ յիշատակութեան չենք ենթարկած:

Ասոնց կողքին, մեր վաւերական հաստատումներուն եւ տեղեկութիւններուն համար, օգտագործած ենք պաշտօնաթերթերու, պարբերաթերթերու, օրաթերթերու, յուշամատեաններու, յուշագրութիւններու աղբիւրներ, որոնց ընդհանուր ցանկը տուած ենք առանձին: Այս պարագային, ընթերցողի պրպտումներուն օժանդակելու համար, [] մէջ յիշած ենք աղբիւրներու մասին մեր մատենագրական ցանկի այբենական թուագրումները՝ հետեւեալ բաժանումներով.

Այբենական թուագրումով կը ճշդուի հրատարակութեան անունը:

[/]' նշանին հետեւող թուանշանը կը ճշդէ թերթի հրատարակութեան քանիերորդ թիւը ըլլալը:

[.]' միջակէտը կը նշանակէ հրատարակութեան էջաթիւը:

Կուտանք օրինակներ.

1.- Էջերու շարունակական թուագրումով հրատարակութիւններ.

[Ա.1] կը նշանակէ ՄԱՐՄՆԱՄԱՐՁ Ա. ՏԱՐԻ ԷՋ 1 (Տե՛ս ներկայ հատորի էջ 20ը)

2.- Մամուլի ընթացիկ թուագրումով հրատարակութիւններ

[Ի/ 2.14] կը նշանակէ Հ.Մ.Ը.Մ. պարբերաթերթ 1926 տարի, թիւ 2, էջ 14 (Տես ներկայ հատորի էջ 92ը)

3.- Հրատարակութեան շարունակական թիւով թերթեր.

[ԼԱ/ 18-19.22] կը նշանակէ ՆԱԽԱՍԱՐԴ Պաշտօնաթերթի թիւ 18-19, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1954ի, էջ 22ը. (Տե՛ս ներկայ հատորի էջ 67ը):

4.- Հրատարակութեան թուականի յիշատակումով թերթեր.

[ԽԶ/ 26.4. 1935] կը նշանակէ ԱԶԴԱԿ Օրաթերթի 1935 տարուայ Ապրիլ 26ի թիւը. (Տե՛ս ներկայ հատորի էջ 144ը):

5.- Անտիպ յուշագրութիւններ, վկայութիւններ կամ նօթեր.

[ՀԴ] կը նշանակէ Սիմոն Թերճանեանի նօթեր. (Տե՛ս ներկայ հատորի էջ 128ը)

[ՀԱ. 136] կը նշանակէ Շաւարշ Քհն. Մեհրապեանի յուշագրութեան ձեռագրի էջ 136-ը. (Տե՛ս ներկայ հատորի էջ 153ը)

Յատուկ անուններու ընդհանուր ցանկ չենք պատրաստած, նկատի ունենալով որ

այդ մէկը առանձին՝ վերջին հատորի նիւթը պիտի ըլլայ:

Ըստ կարելոյն, յատուկ անունները յիշած ենք ամբողջութեամբ՝ խուսափելով կրճատումներէ:

Յատուկ անուններու եւ հայատառ օտար բառերու ուղղագրութիւնը, աշխատած ենք պատշաճեցնել ներկայ արեւմտահայ ուղղագրութեան ընթացիկ ձեւին: Բացառութիւններու պարագային պահած ենք նիւթերու աղբիւրներու օգտագործած ձեւերը:

Բ.Թ.

ՅԱԻԵԼՈՒԱԾԻ ՆԿԱՐՆԵՐ

Յաւելուածի բաժնին մէջ գետնդած ենք փաստաթուղթեր եւ նկարներ, որոնք նախատեսուած էին հատորի իրենց յատուկ գլուխներուն համար: Սակայն միայն վերջին պահուն մեր տրամադրութեան տակ դրուելուն՝ կը հրատարակենք առանձնաբար:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

[Ա] ՄԱՐՄՆԱՄԱՐԶ, Ա. Տարի, Պոլիս, 1911. Արտոնատէր՝ Շաւարշ Քրիսեան, Տնօրէն՝ Կ. Ունճեան:

[Բ] ՄԱՐՄՆԱՄԱՐԶ, Բ. Տարի, Պոլիս, 1912. Օրկան Ազգային Ֆիզիքական վերածնութեան: Նոյնք:

[Գ] ՀԱՅ ՍԿԱՌԻՏ, Հ.Մ.Ը.Մ. Կիսամըսեայ Հանդէս, Պոլիս, 1919-1920. Արտոնատէր՝ Գառլօ Շահինեան:

[Դ] ՀԱՅ ՍԿԱՌԻՏ, Հ.Մ.Ը.Մ. Կիսամըսեայ Հանդէս, Պոլիս, 1920-1921: Նոյնք:

[Ե] ՀԱՅ ՍԿԱՌԻՏ, Պաշտօնաթերթ Հ.Մ.Ը.Մ.ի, Փարիզ, 1929-1930 .Տնօրէն՝ Տիրան Բերչեմլեան:

[Զ] ՀԱՅ ՍԿԱՌԻՏ, Կիսամսեայ Թերթ, Փարիզ, 1934. Տնօրէն Վազգէն Անդրէասեան:

[Է] ՀԱՅ ՍԿԱՌԻՏ, Նոյնք, 1935:

[Ը] Հ.Մ.Ը.Մ., ՀԱՅ ՍԿԱՌԻՏ, Փարիզ, 1946. Տնօրէն Քերովբէ Ժպտուհի:

[Թ] ՄԱՐՄՆԱՄԱՐԶ, Գ. ՏԱՐԻ, Պոլիս 1913. Արտոնատէր՝ Շաւարշ Քրիսեան:

[Ժ] ՄԱՐՄՆԱՄԱՐԶ Դ. ՏԱՐԻ, Նոյնք 1914:

[ԺԱ] Հ.Մ.Ը.Մ. ՔՍԱՆԱՄԵԱՅ ՅՈՒՇԱՐԶԱՆ, 1918-1938. Փարիզ, 1939. Հրատարակուիլեն Ֆրանսայի, Հ.Մ.Ը.Մ.ի: Տպարան՝ Ա. Տէր Յակոբեան:

[ԺԲ] ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶ ԵՒ ԻՐ ՎԷՐՔՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, Պէյրուիթ, 1977, Հեղինակ՝ Վազգէն Անդրէասեան, Տպ. Սեւան:

[ԺԳ] ՆԱՀԱՏԱԿ ՅԵՂԻ ԱՆՄԱՀՆԵՐ Պէյրուիթ, 1983: Հեղինակ՝ Տիգրան Քհն. Խոյեան, խմբագիր՝ Յ. Գեղարդ:

[ԺԴ] ՍԷՐ, ՍԷՐ, ՍԷՐ, Պէյրուիթ 1962: Հեղինակ՝ Վահրամ Փափազեան, Տպ. Սեւան:

[ԺԵ] ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ, Փարիզ, 1946: Հեղինակ՝ Վազգէն Անդրէասեան, Տպ. Արաքս:

[ԺԶ] ՀԱԶԱՐԻԱՊԱՏՈՒՄ, Ա. Հատոր, Պէյրուժ, 1985: Հեղինակ՝ Վազգէն Անդրեասեան, Տպ. Կ. Տօնիկեան եւ Որդիք:

[ԺԷ] ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Պէյրուժ, 1958: Հեղինակ՝ Սիմոն Վրացեան:

[ԺԸ] ԱՐԻԱԿԱՆ ՀՈՒՆՁՔ, Պուլէնոս Այրէս, 1960: Հեղինակ՝ Կարպիս Տէր Մեսրոպեան: Հրատարակութիւն՝ Պուլէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի:

[ԺԹ] ՀԱԶԱՐԻԱՊԱՏՈՒՄ, Բ. Հատոր, Պէյրուժ 1984: Հեղինակ՝ Վազգէն Անդրեասեան, Տպ. Կ. Տօնիկեան եւ որդիք:

[Ի] Հ.Մ.Ը.Մ. Պարբերական Պաշտօնաթերթ Պուլկարիոյ եւ Ռուժանիոյ Շրջ. Վարչութեան Բլոկտիվ 1926: Արտօնատէր՝ Թ. Թոմասեան, Խմբագիր՝ Կարօ Ղազարոսեան:

[ԻԱ] ԱՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ Հ.Մ.Ը.Մ.ի Ռուժանիոյ Շրջանի Պուլքրէշ 1923-1925:

[ԻԲ] ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ Ա. Տարի Պաշտօնաթերթ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան 1926: Արտօնատէր՝ Ա. Պետրոսեան, Վարիչ՝ Ա. Տամլամայեան:

[ԻԳ] ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ Բ. Տարի Նոյնք 1927:

[ԻԴ] ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ Գ. Տարի Նոյնք 1928:

[ԻԵ] ԱՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ Բ. Տարի Պաշտօնաթերթ Ռուժանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի 1924-25:

[ԻԶ] ԱՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ Գ. Տարի Նոյնք 1925:

[ԻԷ] ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ Պուլիս:

[ԻԸ] ՄԱՐԶԻԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ Շրջանի Հոկտ. 1925 Դեկտ. 1925: Խմբագիր Կարօ Ղազարոսեան:

[ԻԹ] ՄԱՐՄԵՆԱՄԱՐԶ Աթէնք 1946:

[Լ] ԱԶԴԱԿ ՄԱՐԶԱԿԱՆ Պէյրուժ 1952-1958 Շաբաթօրեայ Մարզական Հրատարակութիւն Ազգակ Օրաթերթի Խմբագիր՝ Տիգրան Ոսկունի:

[ԼԱ] ՆԱԻԱՍԱՐԴ Պաշտօնաթերթ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլէնոս Այրէսի մասնաճիւղի ԽՐՄբագիր՝ Ռէն Վարդանեան Արտօնատէր՝ Րաֆֆի Միրաքեան Յունիս 1953-1957 Հիմնադիր Խմբ.՝ Շ.Քհն. Մեհրապեան:

[ԼԲ] Հ.Մ.Ը.Մ. ԵՐՈՒՍԱՂԷՄ-ԱՄՍՕՐԵԱՅ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ, Երուսաղէմ 1938էն սկսեալ

ՍԿԱՌԻՏԸ, Բացառիկ Ամսօրեայ Շրջաբերականի Երուսաղէմ 1938 խմբ. Լեւոն Քէշիշեան:

[ԼԳ] Հ.Մ.Ը.Մ. ՏԵՂԵԿԱՏՈՒ Պուլկարիոյ Շրջանի Սօֆիա 1930 Յունուարէն սկսեալ:

[ԼԴ] ՅՈՒՇԱՐԶԱՆ, ԱՐԱՐԱՏԻ 30 ԱՄԵԱԿ Գահիրէ 1932:

[ԼԵ] ԱԶԱՏԱՄԱՐՏ ՕՐԱԹԵՐԹ Պուլիս 1909-1915 Արտօնատէր Խմբագիր՝ Ռուբէն Զարդարեան:

[ԼԶ] ԲԱՆԿՕՕՊԸ ԵՒ ՄԱՄՈՒԹԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ Կոստան Զարեան:

[ԼԷ] ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼՊՈՄ Եգիպտոսի 14րդ Ախոյեանական Մրցումներու նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի Քառասնամեակին Տպ. Յուսարեր Գահիրէ 1961:

[ԼԸ] ԱԼԻՔ ՕՐԱԹԵՐԹ, Թէհրան:

[ԼԹ] ՅՈՒՍԱԲԵՐ ՕՐԱԹԵՐԹ, Գահիրէ:

[Խ] ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ 1918-1958, Պէյրուս 1958 Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Շըրջանային Վարչութեան: Աշխատասիրութիւն՝ Ներսէս Աբեղայ Բախտիկեանի:

[ԽԱ] ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Մ.Ը.Մ.ի ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԻ, 1948-1949 Տարուան Գործունէութեան, ՓԱՐԻՉ 1949:

[ԽԲ] ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմ 1988: Խմբագիր՝ Կարօ Հէքիմեան

[ԽԳ] ՏՕՆԱԿԱՆ ԹԻԻ Հ.Մ.Ը.Մ.ի Պուքրէշի Մասնաճիւղի Տասնամեակին Առթիւ, 1922-1932

[ԽԴ] Հ.Մ.Ը.Մ.ի Մարսէյի Մասնաճիւղի Տեղեկագիր 1924-1926

[ԽԵ] ԱԶԱՏ ՕՐ, օրաթերթ, Աթէնք

[ԽԶ] ԱԶԴԱԿ, օրաթերթ, Պէյրուս

[ԽԷ] ԱՐՄԷՆԻԱ, օրաթերթ, Պուլէնոս Այրէս:

[ԽԸ] ՀԱՅՐԵՆԻՔ, օրաթերթ, Պոսթըն:

[ԽԹ] ԱՍՊԱՐԷՉ, օրաթերթ, Լոս Անձէլըս:

[Մ] ՄԱՐԶԻԿ, ամսաթերթ, Պաշտօնաթերթ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Պէյրուս 1980էն սկսեալ, Արտօնատէր՝ Վարդգէս Տէր Կարապետեան, խմբագիրներ՝ Յ. Գեղարդ, Երուանդ Տէմիրճեան, Վարուժան Մուրատեան, Զաւէն Թորիկեան:

[ՄԱ] ՅԱՌԱՋ, օրաթերթ, Փարիզ:

[ՄԲ] ԱՐԵԻԵԼՔ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ, Ա. Տարի, Հալէպ 1957, Շաբաթաթերթ:

[ՄԳ] ԱՐԵԻԵԼՔ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ, Շաբաթաթերթ Բ. Տարի, 1958:

[ՄԴ] ԱՐԵԻԵԼՔ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ, Շաբաթաթերթ, Գ. Տարի, 1959:

[ՄԵ] ԱՐԵԻԵԼՔ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ, Շաբաթաթերթ, Դ. Տարի, 1960:

[ՄԶ] ԱՐԵԻԵԼՔ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ, Շաբաթաթերթ, Ե. Տարի, 1961:

[ՄԷ] ԳՐՈՂ Մարգարթերթ Գահիրէ 1978, խմբ. Իվան Թորոսեան, Տպ. Յուսարեր:

[ՄԸ] ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ Հ.Ե.Մ.ի Յիսնամեակի-Անանիա Մահտեսեան, Նիկոսիա 1987:

[ՄԹ] ՄԱՐԶԱՇԽԱՐՀ Մարգահան, Գեղարուեստական, Գիտական Պարբերաթերթ Փարիզ 1968, Ա. Տարի Թիւ 1:

[Կ] Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Արխիւներ:

[ԿԱ] Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Ատենագրութիւններ:

[4Բ] Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան Գործունէութեանց Տեղեկագրեր:

[4Գ] Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ժողովներու ատենագրութիւններ:

[4Դ] 1915 ԹՈՒԱԿԱՆԸ, Վենետիկ 1949, Հեղինակ՝ Վահան Մինախորեան:

[4Ե] ԱՅԱՇԻ ԲԱՆՏԸ, Պէյրութ 1978, Հեղինակ՝ Տոքթ. Ա. Նազգաչեան Հրատ. Ավօ Թումանեանի Բ. Տպագրութիւն:

[4Զ] Հ.Մ.Ը.Մ.ական Շարժումը Յունաստանի մէջ 1922-1928, Պէյրութ 1968, Հեղինակ՝ Ն. Մանուկեան:

[4Է] Ռուսմանիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Օրացոյց Պուքրէշ 1930

[4Ը] ԱՐԻ Օրկան Հ.Մ.Ը.Մ.ի Ռուսմանիոյ Շրջանի, Յունիս 1934, նոր Շրջան:

[4Թ] Հ.Մ.Ը.Մ.ի ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐՆԵՐ:

[Հ] Պատկան Երկիրներու Ֆէտէրասիոններու Արխիւներ:

[ՀԱ] ԸՆԾԱՅՈՒՄՆ Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Բաժին, անտիպ Հեղինակ՝ Շաւարշ Քհն. Մեհրապեան:

[ՀԲ] Ընծայումն Հ.Մ.Ը.Մ.ի Բ. Բաժին, անտիպ, Հեղինակ՝ Շաւարշ Քհն. Մեհրապեան:

[ՀԳ] Ինքնակենսագրութիւն Ռոպէրթ Եսայեանի, անտիպ:

[ՀԴ] ՆՕԹԵՐ՝ Սիմոն Թերճանեան:

[ՀԵ] ՎԱԶԳԷՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆԻ Արխիւներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վկայախօսք Յառաջարան	Կեդրոնական Վարչություն	3 5
Ա. ՄԱՍ Հայկական Զարթոնքէն Մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի Հիմնադրութիւն		
Գլուխ Առաջին	Նախա-Հ.Մ.Ը.Մ.-ական Շրջան	9
Գլուխ Երկրորդ	Հ.Մ.Ը.Մ.ը Իր Սաղմին Մէջ	29
Գլուխ Երրորդ	Հ.Մ.Ը.Մ.ի Հիմնադրութիւն	35
Բ. ՄԱՍ Սկզբնական Գործունէութիւն Մինչեւ Առաջին Պատգամաւորական Փողով		
Գլուխ Առաջին	Հիմնադիր Կեդրոնական Վարչութիւն	41
Գլուխ Երկրորդ	Հ.Մ.Ը.Մ. Պոլսոյ մէջ	45
Գլուխ Երրորդ	Հ.Մ.Ը.Մ.ը Թուրքիոյ Այլ շրջաններուն Մէջ	73
Գ. ՄԱՍ Հ.Մ.Ը.Մ.ի Տարածումն ու Գործունէութիւնը Հիմնումէն Մինչեւ Երկրորդ Աշխարհամարտ		
Ներածական		83
Գլուխ Առաջին	Ամերիկայի Միացեալ Նահանգներ	87
Գլուխ Երկրորդ	Ֆրանսա	93
Գլուխ Երրորդ	Պուլկարիա	117
Գլուխ Զորրորդ	Ռումանիա	135

Գլուխ Հինգերորդ	Յուճաստան	149
Գլուխ Վեցերորդ	Պելնիֆա եւ Աւստրիա	167
Գլուխ Եօթներորդ	Լիբանան	171
Գլուխ Ութերորդ	Սուրիա	195
Գլուխ Իններորդ	Կիպրոս	233
Գլուխ Տասներորդ	Հարաւային Ամերիկա	239
Գլուխ Տասնմէկերորդ	Կեդրոնական Ամերիկա	247
Գլուխ Տասներկրորդ	Պաղեստին	251
Գլուխ Տասներեքերորդ	Յորդանան	259
Գլուխ Տասնըջորրորդ	Իրաք	263
Գլուխ Տասնըհինգերորդ	Պարսկաստան	267
Գլուխ Տասնվեցերորդ	Եգիպտոս	273
Գլուխ Տասնեօթներորդ	Հ.Մ.Ը.Մ.ի Տարածման Ժամանակակից Շարժումներ	285
Գլուխ Տասնութերորդ	Հ.Մ.Ը.Մ.ի Պաշտօնական Առաքելութիւնները	291

Դ. ՄԱՍ Հ.Մ.Ը.Մ.-ի Կառուցային Կազմաւորում

Գլուխ Առաջին	Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներ	301
Գլուխ Երկրորդ	Կեդրոնական Վարչութիւններ եւ Կեդրոնական Գործունէութիւն	311
Գլուխ Երրորդ	Շրջանային Պատգամաւորական Ժողովներ եւ Շրջանային Վարչութիւններ	317
Գլուխ Չորրորդ	Շրջանային Գործունէութիւն	329

Ե. ՄԱՍ Հ.Մ.Ը.Մ.-ական Մամուլ

Գլուխ Առաջին	Կանոնագրութիւններ	337
Գլուխ Երկրորդ	Պաշտօնաթերթեր	343
Գլուխ Երրորդ	Այլ հրատարակութիւններ	355
Գլուխ Չորրորդ	Գաղափարակից Մամուլ	361

Յաւելուած	364
Գործնական Թելադրանքներ ընթերցողին	368
Մատենագրութիւն	370